1915.info

ԳՐԻԳՈՐ
ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Հանգրվան

Վիպակ
պատմվածքներ

«Սովետական գրող»
հրատարակչություն
Երևան • 1981

Ар 2 ԻՆԴԵՔՍ ԳՄԴ 84.7
Բ 202

թվագրել է 1915. ոչՏՕ կայքէ

Բալասանյան, Գ. Գ.։

202 Բ Ո՞վ հանգցրեց լույսը։ Վիպակ և պատմվածքներ.— Եր.։ Սովետ. գրող, 1980.— 372 էջ։

Ժողովածուն ընդգրկում է համանուն վիպակը և պատմվածքներ։ Վիպակում ընտանիքի և սիրո հարցերն են շոշափվում։

Պատմվածքների նյութը մարդն է ու մարդկայինը, մեծ հայրենականից հաղթանակով տուն դարձած զինվորի խոհերն ու մտորումները, ինչպես և՝ մեր կյանքի ստվերոտ կողմերի ձաղկումը։

Բ $\frac{4702080200}{705\ (01)\ 81}$ 81. Տ

Ар 2
ԳՄԴ 84.7

© «Սովետական գրող», հրատարակչություն, 1981

Ամենայն

Հայոց

Կանցարան

(վրան)

1.

Կանգնել է բաց պատուհանի առաջ ու շնչում է վաղորդյան թարմ օդը։ Դիմացը, մինչև երկրորդ հարկ ձգված բարդու կատարին, վաղ արթնացած ծտերն են ծլվլում, բնի շուրջ, ամբողջ ընտանիքով, ծնողներ, զավակներ...

Երկու քայլի վրա կինն է պառկած մահճակալին. քնած է դեռ. հոլանի թևերը գլխի տակ, ասես քնած էլ ժպտում է։ Նկարներում է լինում այսպիսի կատարելություն. գուցե իրեն թվո՞ւմ է միայն, սիրող ամուսնու աչքո՞վ է նայում... Բայց ոչ, լավն է. ոչինչ չի խնայել բնությունը։ Մի բանից բացի, մի շատ սովորական, բայց պարտադիր ու ցանկալի բանից... Ինչո՞ւ այդպես միանգամից փակվեց բացվող դուռը. եթե մնար, հիմա երեք տարեկան կլիներ։ Անխիղճ բախտ... իսկ պրոֆեսորը դեռ հույս է տալիս. կստացվի, համբերություն է պետք, այո։ Թե՞ այսպես էլ պետք է շարունակվի։

Իսկ ծտերը շարունակում են իրենց վաղորդյան համերգը։ Մայրը գգվում է ձագերին, հայրը նախաճաշ է մատուցում սիրով։

— Ահ, ի՜նչ հաճելի առավոտ է,— կինը ձգվեց անկողնում,— ինչ լավ են երգում ծտերը։ Հրանտ, դու վաղո՞ւց ես արթնացել։

— Մի ժամից ավելի է ոտքի վրա եմ։ Ինչ-որ վատ եմ քնել գիշերը, չգիտեմ ինչու, գլուխս էլ ցավում է։

— Վատ հո չե՞ս զգում քեզ,— անհանգստացավ կինը,— երեկոյան գարեջուր խմեցիր, ասացի պետք չէ, չլսեցիր։

— Դե, երկու բաժակ գարեջուրն ի՞նչ կարող է անել։

— Հապա ի՞նչ է պատահել, Հրանտ,— ու ձգվեց Նվարդը, ձեռքերը մեկնեց ամուսնուն,— գուցե կբարեհաճեիր ինձ մո՞տ գալ։

— Ինքդ արի, այստեղ ավելի լավ է, այնքան մաքուր օդ է, և ծառերի համերգն է հաճելի։

Նվարդի սլացիկ մարմինն արագ դուրս սահեց վերմակի տակից ու նետվեց ամուսնու գիրկը։ Փաթաթվել են, ասես մի հոգի, մի մարմին։ Ու լուռ են, բարդու կատարին ծառերն են խոսում նրանց փոխարեն... Հրանտը կոկորդում ինչ-որ խեղդոց է զգում, այդպես է, երբ Նվարդն իր գրկումն է, լցվում է քնքշանքով, ափերից թափվող երջանկությամբ։ Ամբողջ կյանքում կարող է այսպես պահել նրան, տանել աշխարհից աշխարհ, առանց ձանձրույթի ու հոգնության։ Ամենաթանկագին ու հաճելի բեռը։ Բայց ինչո՞ւ բնությունն այդքան դաժան է գտնվել, ինչո՞ւ փակ է թողել լիակատար երջանկության դռներից մեկը...

— Մտահոգ ես երևում, սիրելիս, ու ոչինչ չես ասում։

— Դե, բան չկա, ազնիվ խոսք, քեզ պարզապես թվում է։

— Ընդհանրապես վերջերս մի տեսակ ես, գուցե ինչ-որ ցա՞վ է կրծում սիրտդ, մի՞թե ես իրավունք չունեմ իմանալու։

— Նվարդ, դու պարզապես կասկածամիտն ես դարձել վերջերս։ Ոչ մի ցավ էլ չունեմ։ Գործարանում աշխատանքս լավ, տանը՝ ավելի լավ դժվար է երազել անգամ։

— Եթե չպակասեր մի բան։

— Կարիք չկա, սիրելիս, ամեն ինչ լավ կլինի. պրոֆեսորը հույս է տալիս, հավատանք նրան ու սպասենք։

— Քանի տարի է, հույսով ենք ապրում։ Նայի՛ր, ինչպես են գգվում, մի ծառի երջանկություն էլ չունենք,— ու Նվարդը փլվեց ամուսնու գրկում։

— Դե՛, կարիք չկա, հոգիս, դու իզուր ես հուզվում,— ու իր թաշկինակով կնոջ աչքերն է սրբում,— երևի մի օր բախտը մեզ էլ կժպտա։ Իսկ եթե ոչ, ինչ արած, ոչ առաջինն ենք, ոչ վերջինը... Դե՛, հանգստացիր, Նվարդ, օդը սառն է, կմրսես,— ու թեթևաքայլ տարավ կնոջը դեպի մահճակալը։

Պատուհանի տակ շարունակվում էր ծառերի համերգը։

Մայրը նրան դիմավորեց միջանցքում ու միանգամից վրա տվեց.

— Հրանտ, մեր Սրբուհին էր եկել գյուղից. նստեց, երկար սպասեց, ոչ դու եկար, ոչ Նվարդը։

— Գործարանում օտար հյուրեր ունեինք։ Իսկ Նվա՞րդն ինչի է ուշացել։

— Նա էլ զանգահարեց, թե ժողով ունի, ձեր ժողովներին վերջ կա՞...

— Իսկ ինչո՞ւ մեզ մոտ չմնաց մորաքույրս, վաղուց նրան չեմ տեսել, կարոտել եմ։

— Ինքն էլ շատ էր ուզում քեզ տեսնել, ինչ-որ բան էլ պիտի խնդրեր քեզնից, կարծեմ կոլխոզի համար։ Աղջկա տուն գնաց. խոստացավ կիրակի օրը մեզ մոտ անցկացնել։

— Ինչպե՞ս են, ի՞նչ է պատմում,— Հրանտը և՛ փոխում էր շորերը, և՛ խոսում մոր հետ։

— Փառք աստծո, վատ չեն, հիվանդ չունեն, գործերն էլ լավ են։ Տղային բրիգադիր են նշանակել կոլխոզում։ Հարսը, դու գիտես, մի տղա էլ է բերել. ղոշաղ է, ապրի.— ու մի վախվորած հայացք նետեց տղայի կողմը։

Հրանտը լուռ է, ասես չի լսել մոր վերջին խոսքը։ Իսկ մայրը վերաբերմունքի է սպասում։ Երկար սպասելուց հետո ստիպված շարունակում է քրոջ խոսքը։

— Ասում է, բա սրա վերջը ո՞նց է լինելու,— ու չի կարողանում տղայի կողմը նայել։

— Ինչի՞ վերջը։

— Դե՛, ես ինչ գիտեմ, ասում է, էլի...

— Բայց ի՞նչ է ասում, չհասկացա։

— Ես հասկանո՞ւմ եմ... Ասում է... չգիտե՞ս նրա խասյաթը։

Հրանտը զարմացած մորն է նայում. նա դեռ այդքան չէր ծամծմել խոսքը, ի՞նչ է պատահել։

— Մորաքրոջս բավական լավ գիտեմ, մամ, բայց թե ի՞նչ է ասել քեզ, այդ չգիտեմ, դու էլ բան չես ասում, որ հասկանամ։

— Չէ, չէ, մի՛ վախեցիր, բան չկա... դե, խոսք է, էլի,

չգիտե՞ս, մեր հարսի մասին է... բա առանց երեխայի, ասում է, ո՞նց պիտի լինի։

Հրանտի չփակված վերքի մեջ ասես աղ լցրին։ Նոր ծխախոտ վառեց. գնաց պատուհանի մոտ, ետ դարձավ ու, առանց մորը նայելու, խոսեց փրխված ձայնով.

— Հետո՞, ի՞նչ է առաջարկում սիրելի մորաքույրս,— Հրանտի ձայնում նկատելի շորություն կար արդեն ու նաև մի թեթև հեգնանք։

— Դե, եսիմ... եթե, ասում է, էն հարսը չբուժվի, վերջը, ասում է, հո էդպես չի՞ կարելի, պետք է, ասում է, Հրանտին հասկացնես... Դե, ճիշտ է, հարսդ լավն է, ինքն էլ մեղք չունի. երեխա պիտի ունենար, իրա քոռ բախտից, ասում է, չստացվեց, բայց մեկ է, էսպես շարունակել չի կարելի... Առանց երեխայի տուն չի լինի, ասում է...

Հրանտը կտրուկ շրջվեց մոր կողմը։

— Մա՛մ, գիտե՞ս ինչ, ես Սրբուհի մորաքրոջը շատ հարգում եմ, դու այդ գիտես, բայց եթե նա մեկ էլ այդպիսի խոսք է մեջտեղ բերել, ես նրա հետ այլևս չեմ խոսի, ավելին, ես նրան տեսնել այլևս չեմ ուզի. ա՛յ, զգուշացնում եմ, և խնդրում եմ անպայման հայտնես իրեն։ Կիրակի օրն էլ նրա մեր տուն գալու կարիքը չկա այլևս...

Հրանտը ծանր էր շնչում, և այդ մորից աննկատ չէր կարող մնալ։

— Դե՛, դու բանի տեղ մի դիր, Հրանտ, խոսք էր, ասաց, հո չարություն չկա՞ր նրա մտքում։

— Դրանից մեծ չարություն ես չեմ պատկերացնում, դու այդ պետք է լավ իմանաս։ Վերջապես ինչո՞վ է մեղավոր այդ աղջիկը. երեխա պետք է ունենար, վիժեց, գրողը տանի... Կարող է ընդհանրապես չունենալ. քչե՞ր կան. մի՞թե դրա համար... Դու չպետք է քեզ թույլ տաս, մամ, կրկնել այդպիսի անմիտ խոսքեր։ Դուցե քո սրտից է՞լ է խոսում քույրդ, ի՞նչ իմանաս...

— Ինչե՞ր ես ասում, Հրանտ, բա ամոթ չի՞, բա ես... — ու միանգամից փլվեց, տղայի խոսքի՞ համար, թե՞...

— Դե՛, լավ, էլ չխոսենք այս մասին. վե՛րջ. լսո՞ւմ ես, մայրիկ, այլևս ոչ մի խոսք, ես խնդրում եմ,— ու Հրանտը ծանրաքայլ դուրս եկավ պատշգամբ։

Մայրն արձանացել էր նույն տեղում... «Ես խնդրում եմ», բայց այդպես միայն հրամայում են...

3.

Կոլեկտիվի ժողով է գործարանում. արհկոմն է հրավիրել։ Քննում են մանկապարտեզ-մսուրների հարցը։ Գործող օբյեկտները չեն բավարարում, ուշանում է նոր շենքի շինարարությունը, իսկ կանանցից շատերն աշխատանքի դուրս գալ չեն կարող՝ երեխաներին խնամող չունենալու պատճառով։

— Առաջարկում եմ ստեղծել մի խելոք հանձնաժողով,— կես-լուրջ, կես-կատակ հայտարարում է տեղկոմի նախագահ Զավենը։

Հրանտի համակուրսեցիներից է. ինստիտուտում էլ հասարակական աշխատանքի ջիղ ուներ, ակտիվ էր ու լավ սովորող։

Ու թեկնածուներ են առաջադրում հանձնաժողովի համար։ Հանկարծ վերջին շարքերից մեկը՝

— Մեր ինժեներ Հրանտ Ստեփանյանին։ Նա խղճով մարդ է, լավ կհետևի։

Եվ ուզում էր Հրանտը, և վախենում էր։ Իսկ ինչո՞ւ, ո՞ր մեղքի համար։

— Մեր կոմսոմոլների կողմից առաջարկում եմ Աշխենի թեկնածությունը, նա բարեխիղճ աղջիկ է, լավ կաշխատի։

— Երիտասարդ մասնագետ է,— լրացնում է մի ուրիշը։

Ո՞վ է Աշխենը, Հրանտը նրան չի ճանաչում։ Դե՛, գործարանը՝ մեծ, հազարից ավելի աշխատող, ամեն օր նոր մարդիկ են գալիս, ի՞նչ իմանաս։

— Ո՞վ է, մենք չենք ճանաչում, թող գոնե ոտքի կանգնի, տեսնենք,— վարպետի օգնական Սմբատն է, որ, ինչպես ասում են, ոսկե ձեռքեր ունի ու սուր լեզու։

— Էդ լավ է, որ դու չես ճանաչում, վարպետացու Սմբատ,— Զավենն է իր հեղինակավոր խոսքով,— միայն շատ չի՞ ջահել, ընկերներ, ախր նա ի՞նչ գիտի երեխայի հոգսն ու դարդը, ինքը նոր է դուրս եկել էդ տարիքից...

Աղմուկ կոմսոմոլների թաղամասում։ Մեկը հուզված ոտքի կանգնեց.

— Երեխայի ղաղրը միայն երեխա ունեցողները չէ, որ պիտի իմանան, ընկեր Զավեն, սխալ տեսակետ եք զարգացնում,— ու նստեց՝ մազերի փունջը ճակատից ետ շպրտելով։

— Սա՛ էր մեր Աշխենը, տեսա՞ք,— աղջկա ձայն էր։

— Սիրուն է, համ էլ համարձակ, կարելի է,— Սմբատի թաղամասից էր։

Հրանտն ասես վառած թոնրի կողքի էր կանգնած. ոտքի ելավ, դուրս գնալ էր ուզում, անհարմար զգաց, նստեց նորից ու քրտնած ճակատն էր սրբում։

«Երեխա ունեցողը միայն կիմանա երեխայի ղաղրը»։ Իր թակնածությյան ժամանակ ինչո՞ւ չասացին այդ խոսքը. խըղճացի՞ն, թե՞ մոռացել էին, գուցե և չգիտեն, որ ինքն էլ... Իսկ ո՞րն էր այդ Աշխենը, ոտքի էր կանգնել, բայց ինքը նրան տեսնել չկարողացավ։ Եվ ինչ կարևոր է դա։

Միասին պիտի աշխատեն, նույն հանձնաժողովում, ամուսնանալու ու երեխաներ ունենալու հույսերով լի Աշխենը և ինքը՝ ամուսնացած, բայց դեռ հույսերով ապրող... Հույսը... Իսկապես որ հնարավոր չէ ապրել առանց հույսի։

— Հանձնաժողովի նախագահ եմ առաջարկում Հրանտ Ստեփանյանին։— Ա՜խ այդ Զավենը։ Այս ի՞նչ է, ծափահարո՞ւմ են, դե եկ ու մի արդարացրու սրանց հույսերը...

— Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները դնում ենք Աշխեն Մարգարյանի վրա։

4.

— Ընկեր ինժեներ, կարելի՞ է,— դուռը լայն բացել և արդեն ներս է մտել սիրունատես մի աղջիկ։

— Իհարկե, կարելի է, խնդրեմ։

Ծանոթ դեմք է, ասես տեսել է մի տեղ, ո՞վ է, որտե՞ղ են հանդիպել, թե՞ թվում է միայն։

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, լսում եմ։

Աղջիկը և զարմացած է, և մի քիչ էլ վիրավորված։ «Ինչով կարող եմ օգտակար լինել»... Չի էլ հիշում ու չէր էլ սպասում, իհարկե, չնայած ինքն է կանչել. այս ինչ անուշադիր տղամարդ է։

— Ես Աշխենն եմ, ձեր գլխավորած հանձնաժողովի քարտուղարուհին, թույլ կտա՞ք նստել.— ու նստեց խոսքի տոնին համապատասխան՝ ընդգծված սառնությամբ, խռոված երեխայի նման։

Հրանտը զարմացած իր զրուցակցին էր նայում, հետո ծիծաղեց, իր համար էլ անսպասելի. իսկապես որ համարձակն է երևում և լավիկն է, ոչինչ չես ասի... Աթոռը մոտ քաշեց, նստեց աղջկա դիմաց ու, ձեռքը նրան մեկնելով, ասաց.

— Ներեցեք, խնդրում եմ, միտքս ուրիշ տեղ էր, ծանոթանանք կարգին, Հրանտ Ստեփանյան։

— Գիտեմ, ես այդքան անուշադիր չեմ... Աշխեն Մարգարյան. գուցե կգրեիք մի թղթի վրա, չմոռանաք նորից,— ու մի հեգնախառն ժպիտ կախվեց նրա խիտ հոնքերից։

— Ոչ, դրա կարիքը չկա, ընկեր Մարգարյան, այս անգամ բավարարվենք բանավոր ծանոթությամբ... խոստանում եմ Աշխենի անունը չմոռանալ։ Եվ, հետո, ձեզ նման լավ աղջկան դժվար է չհիշել։

— Ես հաճոյախոսություններ չեմ ընդունում։

— Հավատացնում եմ, որ զուրկ եմ այդպիսի շնորհքից։

— Ավելի լավ։ Ինչ-որ է, մեր անելիքից խոսենք։

— Գործնական աղջիկ եք երևում, Աշխեն։

— Ջուր ծեծել չեմ սիրում, ընկեր Ստեփանյան։

— Հրաշալի է. ուրեմն ընդհանուր շատ բան կա մեր մեջ, և մենք իրար հեշտ կհասկանանք։

— Գուցե, թեև կասկածում եմ...

Հրանտն անցավ գործնական խոսակցության.

— Եվ այսպես, հանձնաժողովի ընկեր քարտուղարուհի, տեղկոմի նախագահ Զավեն Օհանյանից վերցնում եք մեր մանկական օբյեկտների ցուցակը, գործող ու կառուցվող, անհրաժեշտ բոլոր տվյալներով, հասցե, կարողություն, վիճակ և այլն։

— Հասկանալի է։

— Ահա հանձնաժողովի անդամների ցուցակը. կհայտնեք բոլորին, որ վաղը ժամը չորսին հավաքվում ենք ինձ մոտ, եղա՞վ։

— Լսում եմ, ընկեր հանձնաժողովի նախագահ, թույլ կտա՞ք գնալ։

— Աշխեն, դուք հո բանակում չե՞ք ծառայել. այդքան ջահել...

— Բանակ գնալու միտք էլ չունեմ, բայց սիրում եմ նրանց կարգ ու կանոնը։ Ցտեսություն։— Ու շարժվեց դեպի դուռը։

— Մինչև վաղը։ Ցուցակը մոռացաք, Աշխեն։

— Չմոռացա, ուղղակի պետք չէ, անգիր գիտեմ,— և գնաց՝ դուռը ետևից զգույշ փակելով։

Հրանտը երկար ժամանակ մնացել էր նույն դիրքում կանգնած։ Ինչքան ազատ է իրեն պահում այդ ջահել աղջիկը. այնուամենայնիվ ինքը նրանից մեծ կլինի մի հինգ, գուցե և տասը տարով. որտեղի՞ց է նրա մոտ այդքան համարձակություն. գուցե դաստիարակության պակա՞ս է։ Իսկ ինչո՞ւ պակաս, սեփական կարծիք ունենալն ու արտահայտելը հանցա՞նք է, թե՞ սովորել ենք ամոթխած ու չխոսկան աղջիկներին, ու հիմա խորթ է թվում նրա ինքնավստահությունը։ Բայց և այնպես շատ էր չոր, պաշտոնական, այդ տարիքում չի սազում։ Ու լավիկն է անպիտանը. գուցե շատ սիրուն չէ, բայց ինչ-որ անբացատրելի մի հմայք ունի։ Մանավանդ խիտ հոնքերն ու արտահայտիչ աչքերը, ասես լուսարձակներ լինեն։ Իսկ բարեձև կառուցվածքը, իսկ հաճելի ընդգծված կուրծքը... դու արդեն անամոթ բաներ ես մտածում։ Դե՛, մարդ ես, վերջապես, և միշտ չէ, որ աչքդ ենթարկվում է քեզ, նա էլ իր չգրված օրենքներն ունի... Է՛հ, տերը նրա հետ, լավն է, թե վատն է, Մոլլա Նասրեդինի ասած՝ ի՞նձ ինչ... Բայց, երևի, դժվար կլինի նրա հետ։ Իսկ ինչո՞ւ, ի՞նչ ունենք կիսելու։ Ահ, սատանան տանի, երբեմն հիմար մտքեր են ներխուժում մարդու գլուխը և դրանից դժվար է լինում ազատվել...

Աշխատանքը վերջացել է. տուն է գնում գլխավոր ինժեների մեքենայով։ Մի շենքում են ապրում և ինքը հաճախ է օգտվում այդ արտոնությունից։ Ու մտադրվում դեռ Աշխենն է կանգնած՝ իր բարձր հասակով, լայն ճակատով, խոշոր ու սև աչքերով։ Հետաքրքիր աղջիկ էր։ Կնոջը կպատմի անպայման, թե ինչպես այդ ջահել կոմսոմոլկան շշպռեց իր ինժեներ ամուսնուն... Իսկ ինչո՞ւ պատմել, կարիք կա՞։ Այո, կա, ինչո՞ւ խախտել լավ սովորությունը՝ օրվա հետաքրքիր անցու-

դարձերի մասին տեղյակ պահել միմյանց։ Իսկ ինչո՞վ էր սա հետաքրքիր, և Նվարդին կհետաքրքրի՞ այդ։ Ահ, սատանան տանի, իսկապես որ երբեմն մարդու գլխում անհամ մտքեր են ծնվում։

5.

Պատմեց, չէր կարող լռել, մանավանդ, երբ Նվարդը, իր ղրնգուն ծիծաղը զսպելով, պատմեց իր մի խենթ այցելուի մասին։

— Տիկին Նվարդ,— ասում է,— դուք կադրերի բաժնի վարիչ եք և ինձ աշխատանքի տեղավորել չեք կարողանում. չեմ նեղանում,— ասում է,— ազնիվ խոսք, նույնիսկ ուրախ եմ, որովհետև ավելի շատ առիթ կունենամ ձեզ մոտ գալու, ձեզ տեսնելու, ինձ մի զրկեք,— ասում է,— այդ բավականությունից... Հասկանո՞ւմ ես այդ խենթին։

— Իսկ ինչո՞ւ անպայման խենթ, դե՛, մարդ է, գուցե սիրահարվել է, և, հետո, ես որքան տեսնում եմ, ճաշակ ունեցող մարդ է երևում...

— Չհամարձակվես, արգելում եմ,— ու Նվարդը մատներով ծածկեց ամուսնու բերանը։

— Լսում եմ, չհամարձակվել,— Հրանտը համբուրեց կնոջ ձեռքերը։ Ու հանկարծ ծիծաղը բռնեց, այնպես էր քրքջում։

— Ի՞նչ պատահեց, այ մարդ, խենթացա՞ր, խանդի հոգի վրա չլինի՞ հանկարծ...

— Խա՞նդս որն է, էդ էր պակաս. իսկական սիրո կողքին խանդն անելիք չունի... Մեր գործարանից մի հետաքրքիր աղջկա հիշեցի, հենց մի բան էի ասում՝ լսում եմ, ընկեր ինժեներ, իսկական սալդաթ։

— Աղջիկ-սալդաթներին չեմ սիրում, չնայած կռվի ժամանակ մեծ գործեր են արել։ Ախր դա իսկի աղջկա գործ չէ։

— Չէ՛, սա լավ սալդաթ է, սրան կարելի է սիրել։

— Դե՛, ուրեմն սիրիր, քեզ ո՞վ է խանգարում։

— Դո՛ւ, գեներալ... — ու կնոջն իրեն քաշելով՝ համբուրում էր այտերը, աչքերը,— դո՛ւ, դո՛ւ...

Հանձնաժողովի նիստն ուշ ավարտվեց։ Աշխատանքի բաժանում կատարեցին, որոշվեց՝ ով, երբ, ինչ է անելու։ Եվ այդ բոլորը մանրամասն շարադրում էր Աշխենը։

— Ընկեր Ստեփանյան, խնդրում եմ նշանակեք հանձնաժողովի հաջորդ նիստի օրն ու ժամը։

— Այո՛, գործնական աղջիկ է երևում մեր Աշխենը։

Զպատասխանեց, «խոսքի տակ» մնաց այս անգամ։

Ու հիմա միասին դուրս են եկել փողոց, մեքենայի են սպասում։ Առատ լույսերից կկոցած աչքեր ունի փողոցը, որ թարթում է մեքենաների հոսանքին համաչափ, ու երանգներն են փոխվում, կարմիր, դեղին, կանաչ։ Կանաչ ճանապարհ, մտածում է Հրանտը, ահա վառվեց կանաչ լույսը, և ճանապարհն ազատ է, մեքենաների հոսանքն առաջ մղվեց։ Կանաչ ճանապարհ տալ այսինչ գործին, թող կանաչ լինի քո անցնելիք ուղին... Իսկ ինչու կանաչ և ոչ թե, ասենք, կարմիր կամ դեղին... կանաչի մեջ կյանք կա, գարուն կա, քաղցր երազների երջանիկ իրականացում կա։ Իրականացո՞ւմ. համենայնդեպս, սպասում գոնե, իրականացման հույս...

— Աշխե՛ն, դուք հեռո՞ւ եք ապրում։

— Նոր թաղամասում, Կիևյան կամրջից այն կողմ։

— Օ՜, հեռու եք, քաղաքի մի ծայրից մյուսը. չե՞ք դժվարանում։

— Հեշտ չէ։

— Իսկ, ներեցեք, ո՞ւմ հետ եք ապրում, ո՞վ ունեք տանը, եթե կարելի է, իհարկե։

— Մենակ եմ ես... Մայրս անցյալ տարի մահացավ, իսկ հայրս տուն չի եկել ռազմաճակատից... Մորաքրոջս մոտ եմ ապրում։

Լռեցին. ասելու ոչ բան կար, ոչ պատասխանի անհրաժեշտություն։

— Թույլ կտա՞ք ձեզ տուն ուղեկցել,— մի տեսակ քաշվելով հարցրեց Հրանտը։

— Որքան ինձ հայտնի է՝ հանձնաժողովի նախագահի պարտականության մեջ դա չի մտնում։

— Իսկ ես իմ նախագահի իրավունքները չէ, որ ուզում եմ օգտագործել։

— Ջենտլմենությո՞ն... Եթե ձեզի համար շասվեց այդ խոսքը, և դա շատ տխուր պարտականություն չէ ձեզ համար, խնդրեմ, միասին գնանք։

Աղջատ տաքսի էր անցնում. նստեցին։ Ու մինչև Կիևյան կամուրջը լուռ էին։ Ինչ խոսեին, ինչի մասին, և՝ անծանոթ վարորդի ներկայությամբ։ Անծանոթ, կարծես իրենք կարգին ծանոթներ են...

Կամրջի վրա իջան մեքենայից ու մնացած ճանապարհը շարունակեցին ոտքով։

— Սիրում եմ քայլել, մանավանդ գիշերային Երևանի փողոցներով.— ասես ինքն իրեն խոսեց Աշխենը։— Եթե նաև աստղազարդ գիշեր է, ուրեմն ամեն ինչ կարգին է։

— Ընկերոջ հետ, իհարկե, մենակ տխուր ու անհետաքրքիր կլինի։

— Վատ ընկերոջից մենակությունն ավելի լավ է։

— Հուսամ, որ...

— Խոսքը ներկաների մասին չէ։

— Լավ աղջիկ եք դուք, Աշխեն, ազնիվ խոսք։

— Պետք չէ, ընկեր Ստեփանյան։

— Ո՛չ, ես ուրիշ բան եմ ասում... լավն եք, այո, բայց ինչո՞ւ այդպես,— ինչպես արտահայտվեմ, որ վիրավորական չլինի...

— Չար եք ու նաև՝ կոշտ,— Հրանտի խոսքը լրացրեց աղջիկը։

— Այո, մոտավորապես։ Գուցե շատ խիստ ասվեց։

— Թեկուզև խիստ, բայց ճշմարիտ է, դժբախտաբար... Մենակ եմ ես մեծացել, տխուր են անցել իմ մանկության ու պատանեկության տարիները։ Դժվար ենք ապրել...

Լռեց, ու երկար քայլում էին լուռ։ Հետո աղջիկը շարունակեց իր կիսատ խոսքը.

— Ծնողներս իրար հանդիպել են Ռոստովում։ Հայրս բանակում ծառայելիս հիվանդացել է դեղնախտով, տեղափոխել են Ռոստովի զինվորական հոսպիտալը։ Այստեղ որպես բուժքույր է աշխատել մայրս, նախիջևանցի մի համեստ ու ամոթխած աղջիկ։ Ծանոթացել են, մտերմացել։ Հայրս

զորացրվել է, և ամուսնացել են նրանք։ Ես հորս շատ աղոտ եմ հիշում, չորս թե հինգ տարեկան եմ եղել, երբ սկսվել է պատերազմը։ Ու հորս տարել են բանակ։ Մայրս հաճախ էր պատմում նրա մասին, գովում էր, չնայած հարևաններից լսել էի, որ խմիչքի նկատմամբ թուլություն է ունեցել... Երևի մայրս սիրում էր նրան։ Դե, պատերազմից տուն չէր եկել, պակասությունները մոռացել էր, կամ ասել չէր ուզում... Պահում եմ հորս նկարը, զինվորական հագուստով, միակ նկարը։ Սերժանտ է եղել, հերոսական գործեր է կատարել, զորամասից մորս գրել էին այդ մասին։ Օր չկար, որ մայրս չկարդար այդ նամակը ու արցունքով լիքը աչքերով չնայեր ամուսնու խունացած նկարին... Զարմանալի է մարդս. ընդամենը հինգ տարի են միասին ապրել, և արդեն քսան տարուց ավելի չկար նա, բայց չէր մոռանում, նրա հուշերով էր ապրում։ Ես մորս ավելի շատ սիրում էի այդ զարմանալի նվիրվածության համար։ Խնդրում եմ չմեղադրեք ինձ թեթևսոլիկության մեջ. այն ժամանակ ես մտածում էի, ոչ, երազում էի նման մի վիճակ ինձ համար, մի անսահման նվիրվածություն արտահայտելու հնարավորություն, իհարկե, ոչ գնացածի, այլ ապրող ու սիրող մարդու համար։ Ինքս ինձ երդվում էի ետ չմնալ մորիցս։ Զստացվեց, այդ երջանիկ առիթը չունեցա...

Լռեց։ Հրանտն ուզում էր բան հարցնել, բայց որոշեց չխանգարել. աղջիկը դեռ ասելու բան ունի, երևի կշարունակի։

— Ինստիտուտում մի ընկեր ունեի, պտտվում էր շուրջս, ես էլ, հիմարս, կարծում էի, թե սա՛ է, որ կա իսկական սերը։ Բայց ուշացումով գլխի ընկա, որ այդ անամոթը միաժամանակ սեր է խաղում մեր կուրսեցի մի ուրիշ աղջկա հետ... Եվ ժամանակից շուտ հիասթափվեցի մարդկանցից, ծերացա ասես... Երևի այստեղից էլ՝ իմ չորությունն ու կոշտությունը։

Կանգնել էին կամրջի կեսում ու նայում էին ներքևի ձորին։ Այնտեղ, գիշերվա անձրևից վարարած Զանգուն իր պրղտոր ջրերն էր քշում՝ քարոտ ափերը լիզելով։ Աշխենի աչքերում արցունքներ էին լճացել։ Հրանտն այդ լճակները չէր տեսնում, բայց զգում էր աղջկա հոգեվիճակը։

— Ժամանակից շուտ ոչ ծերանալ է պետք, ոչ էլ հիասթափվել։ Ձեր կյանքը դեռ առջևում է, պետք է ապրել, ապրել։

— Եթե դուք փորձեք ինձ մխիթարել, ես շատ կվիրավորվեմ, իսկ եթե խղճաք ինձ, ես ձեզ հետ այլևս չեմ խոսի։

Հրանտը զարմացած էր և անմիջապես չէ, որ պատասխանեց, անհրաժեշտ էր հարմար խոսք գտնել։

— Ես ձեզ ոչ մխիթարում եմ, ոչ էլ խղճում, որովհետև դրա կարիքը դուք չունեք... Բայց ընկերոջ անկեղծ խոսքից նեղանալը լավ հատկություն չէ։

— Գիտեմ, բայց ի՜նչ անեմ, երբ բնավորությունս վատ է։

— Այնքան վատ չէ, որքան դուք աշխատում եք ներկայացնել։

— Դուք հիմա ինձ կեղծիքի մեջ կմեղադրեք։

Ու ծիծաղեցին երկուսով, առաջին անգամ, ամբողջ երեկոյի ընթացքում։ Եվ շարունակեցին քայլել։

— Ա՜յ, հիմա լավ է,— ասաց Հրանտը,— բաժանումն անգամ ծիծաղով պիտի լինի, ուրախ, անկաշկանդ։

— Լավ խոսքերի ու լավ տրամադրության համար շնորհակալություն եմ հայտնում երեխաների հոգսերով ապրող հանձնաժողովի նախագահին։

— Նախագահն էլ իր բարի քարտուղարուհուն խաղաղքուն է մաղթում ու քաղցր երազներ։

— Շնորհակալություն, ընկեր Ստեփանյան. ես վաղուց այսքան թեթև չեմ զգացել ինձ... Դուք լավ մարդ եք երևում, իզուր չէ, որ գործարանում ձեր մասին միայն լավն են ասում։

— Չգիտեմ ով ինչ է ասում, բայց անկեղծորեն կցանկանայի, որ դուք իմ մասին վատ կարծիք չկազմեիք։

— Կաշխատեմ... Կներեք, ձեզ տուն հրավիրել չեմ կարող. դե՛, ճիշտը որ ասենք, դեռ տուն էլ չունեմ։

— Հասկանում եմ, պետք չէ անհանգստանալ։ Բարի գիշեր, Աշխեն։

7.

Ու հիմա տուն է գնում Հրանտը։ Քայլում է, ինքն էլ չգիտի, թե ինչու, երբ ժամը տասն անց է արդեն, երբ թեթև

անցնում են իր կողքով տրոլեյբուսներն ու տաքսիները։ Քայլում է, ու հակասական մտքերը, հուզված մեղուների նման, բզզում են նրա գլուխ-փեթակում, զարմանալի, իրարամերժ, խելոք ու հիմար, լուրջ ու ծիծաղելի մտքեր։ Իսկ ո՞րն է դրանցից լուրջն ու խելոքը, ինչպե՞ս ջոկես, եթե ինքդ քեզ անհաջող քննությունն հանձնած աշակերտի ես նմանեցնում։ Եվ քննող-պրոֆեսորը անփորձ այդ աղջիկն է, բարի, խելոք, իր տարիքին ոչ այնքան համապատասխան զուսպ ու հավասարակշռված։ Իսկ ի՞նքը, ինքը՝ ի՞նչ. ի՞նչ վատ բան է արել, ոչինչ։ Ուրեմն ինչո՞ւմն է բանը. ինչո՞ւ այսպես դժվար է քայլում, ասես ետևից ձգող կա. ինչո՞ւ այսպես ծանր է շնչում, ասես սրտի ականջներից կշռաքարեր են կախել. ինչո՞ւ այսպես բզզոց կա գլխում. ո՞վ քանդեց մեղվի փեթակը... Իսկ ինչո՞ւ քանդեց. պարզապես ոտքի հանեց քնած մեղուներին, բայց ո՞ւմ դեմ, ինչո՞ւ...

Տուն է գնում, չորս տարվա մեջ առաջին անգամ՝ դժվարությամբ։ Ի՞նչ պիտի ասի Նվարդին, որտե՞ղ էր, ինչո՞ւ է ուշացել։ Դե՛, նա չի էլ հարցնի։ Իսկ ինքը, միևնույն է, կասի, չի կարող չասել։ Սուտ խոսելու փորձ չունի, և, տա աստված, որ երբեք չունենա...

Ու միտքը ետ թռավ, տարիների վրայից ոստոստալով հասավ այն երջանիկ երեկոյին, երբ ինքը ճաշի էր հրավիրված մորաքույր Սրբուհու մեծ աղջկա՝ Գոհարի տունը՝ երեխայի ծննդյան առիթով։ Եվ այդտեղ էլ ծանոթացավ Գոհարի ընկերուհու աղջկա, Նվարդի հետ։ Ինչպե՞ս պատահեց, որ կողք-կողքի նստեցին, չի հիշում, և Նվարդն ի՞նչ գործ ուներ Գոհարենց տանը, հետո՞ ինչ, որ նրա ընկերուհու աղջիկն է։ Եվ մայրն էլ չկար, ասացին գործուղման մեջ է։ Գուցե և կազմակերպած բան էր, չգիտի, և դա ինչ կարևոր է, մանավանդ երբ արդյունքից գոհ է... Միայն մինչև հիմա էլ ամոթով հիշում է իր անհարմար վիճակը։ Է՛, ինչ աներ խեղճ տղան, երբ կողքին նստեցրել էին մի այդքան սիրուն աղջկա, և դեռ ստիպում են «ուխաժիվատ» անել... Եթե մատնող մի բան կար, դա Գոհարի հորդորներն էին, «Հրանտ, հարևանուհուդ զբաղեցրու», «Հրանտ, էլի՞ մոռացար Նվարդին, աղջիկը կնեղանա, լավ չի...» ու ինքն զբաղեցնում էր, ինչքան կարող էր, ուտելիք էր առաջարկում, բաժակն էր լցնում. միայն

սարսափելին այն էր, որ լիմոնադի շիշը ձեռքին դողում էր... դե, լուռ «ուխաժիվատն» էլ մի բան չէր. պետք էր նաև խոսել, բայց ի՞նչ ասի, ինչի՞ մասին խոսի։ Ստիպված հարցեր էր տալիս, երևի բավական անհամ, նույնիսկ իր կարդացած մի գրքի բովանդակությունը պատմեց։ Աղջիկը խնդրեց այդ գիրքը, գուցե քաղաքավարական ժեստ էր։ Այդ հարցազրույցից իմացավ, որ Նվարդը ծնողների միակ աղջիկն է, սովորում է համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում։ Հիշում է, նույնիսկ զարմացավ, որ այդքան լիրիկական մի աղջիկ այդ ֆակուլտետն է ընտրել։ Բայց երբ աղջիկն ասաց, որ հայրն այդ նույն ֆակուլտետում դասախոս է աշխատում, ամեն ինչ դարձավ հասկանալի։ Եվ զարմանալին այն էր, որ տնտեսագիտությունն այլևս նրան այնքան պրոզայիկ չէր թվում, ինչպես առաջ...

Երեկոյի վերջում պարեցին միասին։ Լավ էր ստացվում պարը, մանավանդ տանգոն ու վալսը։ Գոհարն իր անառարկելի գնահատականը տվեց.

— Հրաշալի զույգ է, մրցանակի արժանի...

Իսկ ինչո՞ւ զույգ, ա՜խ այդ մեծերը. հաճախ այնքան միամիտ խորամանկ են, և ինչ հաճելի է նրանց այդ խորամանկությունը, գոնե այս դեպքում։

Գոհարի առաջարկությամբ Նվարդին տուն ուղեկցեց. այդ մեկն արդեն իր սրտով էր։ Նվարդը հենց առաջին հայացքից մտել էր նրա սիրտը, չնայած վերջնականապես համոզված չէր։

Կիսամութ փողոցներով երկար քայլեցին. խոսեցին, խոսեցին. զարմանք բան, ինչպես էլ նյութ էին գտնում, մանավանդ գիտեր և հետո էլ համոզվել էր, որ ոչ ինքը և ոչ էլ Նվարդը շատախոս չեն...

Կիսատ մնաց խոսքը. որոշեցին շարունակել հաջորդ օրը։ Հետո՝ նորից հաջորդ օրը։ Հանդիպումները կրկնվեցին, բազմապատկվեցին Նվարդենց տանը, ապա իրենց տանը։ Առանձնապես չի մոռանում մոր առաջին տպավորությունն ու խանդաղատալից կարծիքը,— «նախշուն աղջիկ է, անուշ հարս կլինի...»։

Անուշ հա՞րս։ Մայրը հիմա էլ մնում է նույն կարծիքին,

բայց ինքն զգում է, որ այդ քաղցրության մեջ մի հատիկ դառնություն կա, մի մորմոքող վերք...

8.

Հանձնաժողովի հերթական նիստում, ստուգման արդյունքներն ամփոփելու համար, Հրանտը որոշեց գնալ շինարարների մոտ, գործարանից ոչ շատ հեռու կառուցվող մսուր-մանկապարտեզի շինարարություն։

Օրը կիրակի էր, արև ու զով քամի։ Ընդմիջման ժամ էր, երբ Հրանտը տեղ հասավ։ Բանվորները, մի ծառի տակ խմբված, նախաճաշում էին։ Հրանտն իջավ տաքսիից ու, ձեռքին մի կապոց, մոտեցավ նրանց։

— Բարև ձեզ, վարպետներ.— նստեց մի ազատ քարի։

— Հազար բարով,— պատասխանեց ամենատարեց բանվորը, երևի ավագն էր կամ բրիգադիրը։

— Հո էս զավոդի դիրեկտորը չե՞ս, ախպերս.— հարցրեց հաղթանդամ ու սիրունատես մի տղա։ Երևում էր, որ սրանց մեջ ամենահամարձակն է։

— Չէ՛, ախպերս, դիրեկտորի հետ գործ չունեմ։ Շարքային ինժեներ եմ. Ստեփանյան Հրանտ է ազգանունս։

— Հենց է՞ս զավոդի ինժեներն ես, ընկեր Ստեփանյան։

— Այո, այս զավոդի։

— Լավ է, ես իմ հոգին, որ շարքային ես, իրար հետ հեշտ լեզու կգտնենք։

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա, ախպոր տղա.— նորից տարեց բանվորն է հարցնում։

— Ոչինչ, քեռի։

— Սամսոն է անունս. էս կոտրած գդալի նման մեջ ընկնողն էլ Հարությունն է։

— Այո, քեռի Սամսոն, եկել եմ ձեզ հետ նախաճաշելու, եթե թույլ կտաք, մի քիչ էլ օգնելու։ Կարելի՞ է։

— Ինչու չէ, համեցեք, մոտ նստիր, էս ա երշիկ կա, սոխ կա, անուշ արա։

Ու տեղ տվին Հրանտին։

— Մի քիչ բան-ման կա էս տոպրակի մեջ, որ խառնեմ ձերին, հո չե՞ք առարկի,— ու, առանց պատասխանի սպասե-

լու, քանդեց տոպրակի կապը, հանեց մի կույտ լավաշ, պանիր, երկու խաշած հավ, երկու շիշ օղի, բողկ, կանաչի։

— Էս հո քեֆ ենք անելու,— ձայնեց Հարությունը։

— Էս ի՞նչ բան է, ընկեր Ստեփանյան,— քեռի Սամսոնը փոքր-ինչ թերահավատ նայեց նորեկին։

— Վատ բան չմտածեք, խնդրում եմ։ Մորս ասացի՝ գնում եմ շինարարություն, տեսնեմ ինչպես են գնում գործերը, նա էլ թե՝ բա ամոթ չի՞ աշխատող մարդկանց մոտ դատարկ գնաս. մի բան տար, լավ չի։ Ու հավաքեց, ինչ ձեռքն ընկավ, ահա՛։

— Այ օրհնվի մոր ձեռքը,— ձգեց քեռի Սամսոնը.— դե՛, որ էդպես է, կերեք, տղերք, ամենահալալ ապրանքն է։ Միայն էս արաղը...

— Հո չի՞ խանգարի, վարպետ։ Ճիշտն ասած էդ ես ճանապարհին վերցրի։

— Քանի՞ հոգի ենք՝ տասներկո՞ւ, ոչինչ, չի վնասի, միմի բաժակը հալա կօգնի գործին։ Ավետիս, լցրո՛ւ։

Ու նախաճաշն աշխուժացավ, տաքացավ։

— Ախպոր տղա, ես մենակ չհասկացա, թե դու ինչո՞ւ որոշեցիր գալ մեզ մոտ, շինարարություն, էն էլ կիրակի օրով, դե ոչ դիրեկտոր ես, ոչ գլխավոր ինժեներ, իսկի նրանք չեն գալիս։

— Այս գործն ստուգող հանձնաժողովի նախագահ են ընտրել ինձ. ես էլ եկա, որ...

— Ախ, հանձնաժողով է, նոր հասկացա,— հիասթափված ձգեց Հարությունը։

— Դուք ինձ լավ չհասկացաք, ընկերներ, ես ձեր գործն ստուգող հանձնաժողով չեմ։

— Է, թեկուզ էդպես, ի՞նչ կա որ, ախպոր տղա, մենք պարզերես մարդիկ ենք,— քեռի Սամսոնն է խոսում։

— Ձեզ օգնել ենք ուզում, ուրիշ ոչինչ։ Ա՛յ, դուք ինձ կասեք, թե ձեզ ինչ է պետք շինարարությունն արագացնելու համար, ինչ է պակասում, ում պետք է դիմել, և ես, քարի տակից էլ լինի, կհանեմ անհրաժեշտ շինանյութերը, և գործն արագ կգնա։

— Սիրում եմ քարի տակից էլ բան հանող մարդկանց։

Իսկ էդքան վռա՞զ է, ախպոր տղա, դուք մի մանկապարտեզ էլ ունեք, չէ՞։

— Շատ է վռազ, քեռի Սամսոն, եղածը չի բավարարում, աշխատող ձեռքերի պակաս կա, կանայք էլ չեն կարողանում աշխատանքի դուրս գալ, ուղղակի խեղդվում ենք։

— Տես, է, իսկ մեզ էդ մասին բան չեն ասել. գոնե մի բերան ասեին, թե, այ ժողովուրդ, երեխեքն սպասում են, մի քիչ թափ առեք. բա մենք մարդ չե՞նք, բա մենք երեխա ու թոռ չունե՞նք։

— Ամեն դատարկ հարցով ժողով են անում, էս մասին բան չեն ասել. բա եղա՞վ։— Հարությունն է խոսքին միջամտում՝

— Ոչինչ, էլի ուշ չէ։ Դե, ձեզ տեսնեմ, տղաներ, մեր ինժեներին էլ մի հարմար գործ տվեք. ես տեսնում եմ, որ սա պարապ թամաշավորներից չի։

Ու աշխատանքը մտավ ծանոթ եռուզեռի մեջ։ Վաղուց այդպիսի հաճույքով ֆիզիկական աշխատանք չէր կատարել Հրանտը։ Քրտինքի մեջ մտած՝ նվացող մեջքով, բայց զարմանալի թեթև ու արագ, լցնում էր պատգարակը շաղախով, մի երիտասարդի հետ տանում թափում ու նորից, նորից։

Ու, հանկարծ, Աշխենը իր մի ընկերուհու հետ։ Կարծես թե սա էր, որ առաջարկեց Աշխենի թեկնածությունը հանձնաժողովի կազմում. ուրեմն սա էր, որ պատճառ դարձավ իրենց ծանոթության։ Եվ ինչ, լա՞վ էր այդ, թե՞ վատ... Բայց որտեղի՞ց հայտնվեցին սրանք, ի՞նչ գործ ունեն այստեղ։

— Բարև ձեզ, ընկերներ, օգնականի կարիք չունե՞ք,— Աշխենն է, իր համարձակ ու անկախ տոնով։

— Կընդունենք, աղջիկ ջան, օգնականից ո՞վ կհրաժարվի,— ու բրիգադիրը ինժեների կողմն է նայում։

— Մեր ակտիվ կոմսոմոլներից է, նույն գործով։

— Ահա, ուրեմն սա էլ հանձնաժողով է,— կես-կուրջ, կես-կատակ ասաց Հարությունը,— էլի է լինելո՞ւ, ընկեր ինժեներ, թե՞ սրանով պրծնում ենք։

— Չէ՛, էլ չկա. ու չմոռանամ ասել, որ էս բոլորը մի հանձնաժողով է։

— Էդքան քի՞չ,— կատակեց քեռի Սամսոնը,— ուրեմն էժան ենք պրծնում... — ու դարձավ նորեկներին,— աղջիկ-

ներ, ձեր օգնությունն էն կլինի, որ ինժեներին տանեք ձեզ հետ, խամ-խամ գործի տակ մտավ ու շատ աշխատեց, դեռ չգիտի, որ գիշերը մեջքը ցավելու է։ Թող, ինժեներ ջան, գնա գործիդ։ Ապրես, զորանաս։

Հարությունը երկար ժամանակ կանգնել ու նայում էր աղջիկներին. թե՞ միայն մեկն էր նրա տեսադաշտում։

— Չգիտեմ ինչու, մտքովս անցավ, որ դուք այստեղ կլինեք,— Աշխենը Հրանտի կոստյումի փոշին էր թափ տալիս ու խոսում միայն նրան լսելի ձայնով։

— Իսկ դուք ո՞ւր էիք գնացել և ինչպե՞ս թեքվեցիք այս կողմը,— Հրանտն աշխատում էր շուտ հեռանալ այդտեղից, աղջիկների ներկայությունը ճնշում էր նրան։

— Համար առաջին մանկապարտեզում շաբաթօրյակ էինք կազմակերպել. մենք էինք, աշխատողներից էլ էին եկել երեք հոգի, մի լավ մաքրեցինք, ծաղկամաններ դրեցինք, վարիչը լավ կին է, նրան պետք է օգնել։

— Այդ բոլորը՝ լավ, բայց ինչո՞ւ ինձ ոչինչ չէիք ասել ձեր մտադրությունների մասին. գաղտնիք հո չէ՞ր։

— Իսկ դուք ինձ հայտնե՞լ էիք այստեղ գալու ձեր որոշման մասին,— մարտահրավերի տոնով նետեց Աշխենը ու աչքով արեց ընկերուհուն։

— Դե՛, մի մոռացեք, որ հանձնաժողովի նախագահը պարտավոր չէ հաշիվ տալ իր քարտուղարուհուն, իսկ վերջինս...

— Հասկանալի է, ընդունում եմ իմ սխալը. կաշխատենք այլևս չկրկնել, ընկեր նախագահ, հիմա կարո՞ղ ենք գնալ։

— Ինժեներ, զգույշ կաց, պիստոնով աղջիկ է երևում,— կատակեց բրիգադիրը։

— Գրպանում վառոդ կա, կտրաքացնի,— ձայնակցեց Հարությունը։

— Ճիշտ եք ասում, ընկերներ, անարժան մարդուն պետք է տրաքացնել.— ու ծլնգաց Աշխենի արծաթ ծիծաղը։

— Դե՛, կնոջերք, տղաներ, մենք գնանք։ Այսօր ինձ համար շատ հաճելի էր, ազնիվ խոսք։ Քեռի Սամսոն...

— Գնա՛, Հրանտ ջան, ապրես, զորանաս։ Ինչ որ պետք է, կանենք, մենակ դու մեկ-մեկ երևա, անուշ մարդ ես։ Մորդ էլ շնորհակալություն հայտնիր մեր կողմից...

Երեքով քայլում էին լուռ, ինքնամփոփ։ Հետո Աշխենը դարձավ Հրանտին։

— Ընկերուհուս հետ կարծեմ ծանոթ չեք։ Թամար, միասին ենք աշխատում։

— Դեմքով գիտեմ, այն ժողովից։ Ուրախ եմ։

Նորից քայլեցին լուռ։ Խաչմերուկում Թամարը կանգնեց։

— Ես տուն հասա, համեցեք, գնանք մեզ մոտ։

— Շնորհակալություն, Թամար, հոգնած եմ ու փոշոտ, մի ուրիշ անգամ։ Այս ի՞նչ մոտ եք ապրում, կառուցվող մանկապարտեզի աշխղեկ չնշանակե՞նք, Աշխեն, առավոտերեկո կհանդիպի, կոգևորի շինարարներին։

— Դուք այսօր նրանց այնքան էիք ոգևորել, ընկեր Ստեփանյան, որ, կարծում եմ, իմ միջամտության կարիքը չկա... Իսկ ընկերուհուս տուն կուղեկցե՞ք, Հրանտ Արշակովիչ, նա հեռու է ապրում։

— Եթե վստահում եք, սիրով։

Ու հիմա երկուսով են քայլում։ Նորից լուռ են, մի՞թե ասելու բան չունեն այլևս։

— Մտահոգ եք երևում, Հրանտ Արշակովիչ, թե՞ հոգնած եք. կարիք կա՞ր այդքան ոգևորվելու։

— Առանձին բան չկա, Աշխեն, իսկ ոգևորվելը լավ հատկություն է, դե, այդ մասին ձեզ չէ, որ պիտի ասել...

— Գիտեմ, նաև քաղցած եք, բայց և այնպես ուզում եմ մի քիչ նստենք, ահա, այստեղ, զբոսայգու ծայրի նստարանին, չե՞ք առարկում։

— Սիրով, ես էլ կծխեմ։

Նստեցին, կողք-կողքի։ Հրանտը ծխախոտ վառեց։ Վառվեցին այգու լույսերը. այս ե՞րբ մթնեց։

— Հրանտ Արշակովիչ, ես ձեր մասին ոչինչ չգիտեմ, գուցե կծանոթացնե՞ք ինձ ձեզ հետ։

— Սիրով, ինչու չէ։ Ճիշտն ասած, պատմելու բան էլ չունեմ։ Ավարտել եմ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը. հինգերորդ տարին է աշխատում եմ մեր գործարանում։ Մայր ունեմ ու կին, իհարկե։

— Այդ մեկը ես գիտեի։

— Հո ձեր մտքով չի՞ անցել, թե ես կարող եմ թաքցնել իմ ամուսնացած լինելու փաստը։

— Աստված մի արասցե։

— Զգիտեմ որքան հարմար կհնչի, Աշխեն, բայց ուզում եմ դուք իմանաք, որ ես լավ ընտանիք ունեմ, լավ կին։ Տարօրինակ է, չէ՞, տղամարդն օտար աղջկա մոտ իր կնոջն է գովում։

Իսկ մտքում դատապարտում է իրեն այդ տափակ խոսակցության համար. ո՞ւմն է պետք, ինչո՞ւ այսպես ջրիկացավ։

— Ինչո՞ւ տարօրինակ, ընդհակառակը, հաճելի է. անկեղծ խոսքից լավ ինչ կարող է լինել։ Լավ է, որ լավ կին ունեք, և դուք սիրում եք իրար,— չի հարցնում, այլ արձանագրում է փաստը։

Մի փոքր լռություն։

— Ես ուրախ եմ ձեզ համար, Հրանտ Արշակովիչ։

— Շնորհակալություն, Աշխեն, դուք լավ սիրտ ունեք։ Ափսոս, որ եղբայր չունեմ, թե չէ ձեզ զոռով հարս կտանեի մեր տուն,— ու ծիծաղեց իր խոսքի վրա։

— Գուցե զոռով տանելու կարիք չէր լինի...

— Պատշաճ Հարությունը ձեզ շատ ուշադիր էր նայում, նկատեցի՞ք։

— Զարմանալի է, որ դուք էլ եք նկատել։

— Դեռ աչքերից բողոք չունեմ։

— Կույր լինելն էլ մի բան չէ...

— Հարությունը լավ տղա է երևում։

— Ափսոս, որ ձեր եղբայրը չի։

Ծիծաղեցին անկաշկանդ։

— Ես քեզ մեծ, շատ մեծ երջանկություն եմ ցանկանում, Աշխեն, և խնդրում եմ ինձ համարես քո լավ բարեկամը։

— Շնորհակալություն։ Սիրով։

— Բայց ես սկսեցի քեզ հետ դու-ով խոսել, Աշխեն, հա՞ չե՞ս նեղանում։

— Ամենևին, ընդհակառակը, հաճելի է... իսկ բարի ցանկությունների ու բարեկամության համար շնորհակալություն, Հրանտ Արշակովիչ,— ու Աշխենը սեղմեց Հրանտի ձեռքը։

Լռեցին մի պահ. նորից սպառվեց խոսելու նյութը։

— Ես խնդրում եմ մի առիթով ինձ ծանոթացնեք ձեր

կնոջ հետ, ես ուզում եմ նրան լավ խոսքեր ասել ձեր մասին. հո ինձ սխալ չի՞ հասկանա։

— Օ՜, ոչ, Նվարդն այնքան խելոք կին է, անմիտ նախապաշարմունքներից հեռու... Մենք իրար լրիվ հավատում ու վստահում ենք։

— Հրաշալի է։ Երանի կյանքում բոլորն իրար լավ հասկանային... Հոգնած եք, Հրանտ Արշակովիչ, տուն գնացեք. ձեզ սպասում են։ Բարի գիշեր։

Մինչև ուշքի կգար Հրանտը, Աշխենն արդեն կանգառից պոկված տրոլեյբուսի մեջ էր։

9.

Նվարդը դեռ տուն չի եկել։ Զանգահարել է, թե նորից ժողով ունեն, կուշանա։ Մի անգամ էլ զանգեց, երբ արդեն տանն էր Հրանտը։

— Բան վերե՞լ ես,— հարցրեց անհանգիստ,— երկրորդ օրն է միասին ճաշել չենք կարողանում, սա բանի նման չէ... Հետո, գիտե՞ս ինչ, Հրանտ, չծիծաղես միայն, խնդրում եմ. ախր քեզ ուղղակի կարոտել եմ, քանի ժամ է չեմ տեսել... Հիմա մտքումդ ասում ես՝ էս ինչ թեթևամիտ կին ունեմ. չես ասի, չէ՞, դե ես գիտեմ, դրա համար եմ ասում... Դե, լավ, մի քիչ էլ համբերիր, մի ժամի չափ, ու ես կգամ։ Ես դուրս եմ եկել, կողքի սենյակից եմ խոսում։ Իսկ դահլիճում ճառեր են ասում ոգևորված... Ախր երբեմն շատ են անհամ մեր ժողովները. խոսում են, խոսում։ Ինչո՞վ է օգնում գործին... Տեսնո՞ւմ ես, ես էլ ժողովում լռում եմ, հիմա հեռախոսով ելույթ եմ ունենում քեզ համար։ Եվ դու չես ժխտի, որ խելոք ու օգտակար ելույթ է... Չե՞ս ժխտում, ապրես։ Միայն չքնես, տես, մեկ է, կարթնացնեմ։

Եվ չի քնում Հրանտը, չի էլ ճաշել։ Սպասում է Նվարդին։ Միասին ճաշը մի տեսակ համով է, աստված վկա. մենակ կուլ չի գնում հացը։ Ճշմարիտ է նաև, որ մոր բացակայությունն էլ է խանգարում, քրոջ մոտ է գնացել, կարծես ոչ թե ճաշում, այլ պարտականություն ես կատարում։ Դե, ախր բոլորովին շատ չեն, ընդամենը երեք հոգի, իսկական եռատանի, մեկի պակասությունը խախուտ է դարձնում հենարա-

նը, ուր մնաց միոտանի մնալը... Իսկ եթե չորս լինեին, սեղանն ավելի ամուր չէ՞ր նստի գետնին։ Եթե չորս լինեին... Այդ ինչ է, դռան զա՞նգն է, ոչ, նորից հեռախոսն է, տեսնես հիմա՞ ով է։

Վարպետ Հարությունն է։ Որտեղի՞ց է իմացել տան համարը։ Բայց ուրախ է, քանի օր է չի գնացել շինարարություն, նորություններ կիմանա։

— Ընկեր Հրանտ, շինարարությունը վտանգի տակ է. ցեմենտ չկա։ Վաղը թե կարող ես, մի երկու մեքենա ցեմենտ ուղարկիր։ Ուրի՞շ. քեռի Սամսո՞նը, լավ է, բարևում է, տղաներն էլ։ Էս երկու օրը գալո՞ւ ես, լավ է, արի, կարոտել ենք, աստված վկա... թե կարող ես, էն չաշանակ աղջիկներին էլ բեր, լա՞վն են, դե, բան չեմ ասում... կամ էլ որ լավը չինեն, կասեմ բե՞ր... Ցեմենտը չմոռանաս, դրա համար եմ զանգել։ Դե, բարի գիշեր։

Հեռախոսափողը դրել է, բայց մտքով դեռ Հարությունի հետ է. «ցեմենտը չմոռանաս».— իսկապես ցեմենտի համա՞ր է զանգել, թե՞ մի ուրիշ տեսակի ցեմենտ կա՝ Աշխենի «պիստոնից» եկող, ինչ իմանաս... Դժվար է մարդուն ճանաչել, նրա հոգու ծոցքերը ներթափանցել, շատ է դժվար, ոչ մեկն այն չի բացում մինչև վերջ, չբացված գիրքն էլ ինչպե՞ս կարդաս... իսկ դու լրիվ բացո՞ւմ ես քո հոգու գիրքը, թեկուզ և Աշխենի առաջ։ Իսկ ինչո՞ւ Աշխենի, ինչո՞վ է ինքը պարտական նրան։ Կամ ասենք թե Հարությունը լուրջ մտադրություններ ունի Աշխենի նկատմամբ, դու ի՞նչ գիրք կբռնես... եղբայր, ես ով եմ, իմ ինչ գործն է, սատանան տանի, այս ինչ տարօրինակ էակ է մարդ արարածը...

Զա՞նգն է. վերջապես Նվարդս եկավ ու ինձ փրկեց հիմար մտքերից։ Բայց իսկապե՞ս փրկեց...

Ներս ընկավ աղմուկով, փաթաթվեց ամուսնուն ու համբուրում է խենթի նման, հետո Հրանտի գլուխը սեղմեց իր կրծքին ու շոյում է, փայփայում է։

— Խեղդում ես, Նվարդ, խիղճ ունեցիր։

— Եվ կխեղդեմ, և կխեղդվեմ, ահա, այսպես, այսպես ու նորից համբույրներ, գուրգուրանք։

Հետո աչքն ընկավ ճաշի համար պատրաստ ու ձեռք չտված սեղանին։

— Բան չի կերել, քոռանա՞մ ես...

— Պետք չէ, Նվարդ, մի քոռանա, խնդրում եմ, ափսոս են քո աչքերը։— Հիմա էլ ինքն սկսեց համբուրել նրա աչքերը, այտերը, ձեռքերը...

— Դե, լվացվիր, ճաշում ենք, քեզ համար մի շիշ սապերավի եմ բերել։

— Շնորհակալ եմ, Հրանտ, գիտես, որ սիրում եմ։ Տունն ասես դատարկ է առանց մայրիկի։ Եվ ինչո՞ւ գնաց գյուղ... Սրբուհի մորաքույրը մի տեսակ փոխվել է աչքիս, առաջվա նման չէ։ Դու չե՞ս նկատում, Հրանտ։

— Ոչինչ էլ չկա, քեզ պարզապես թվում է։

— Տա աստված, որ այդպես լինի... Թողնենք այս տհաճ խոսակցությունը։ Պատմիր, ի՞նչ կա քեզ մոտ, ինչպե՞ս է կոմսոմոլ Աշխենը, քեզ նոր դասեր չի՞ տվել, անմեղ աշակերտս...

— Չէ, նրան այլևս չեմ հանդիպել...

Երևի ականջները կարմրեցին. Նվարդը կարո՞ղ է այդ նկատել։

— Գուցե մի բան կուտեինք։

— Հա, իսկապես, ճաշը մնաց։ Իսկ կոմսոմոլ Աշխեննեերից դու, այնուամենայնիվ, զգուշացիր...

Իսկ ինքը մտածում էր, թե Նվարդը եկավ ու իրեն կփրկի հիմար մտքերից. ա՞յս էր փրկությունը...

10.

Քանի օր է՝ չեն հանդիպել։ Չորեքշաբթի՞ է, ուրեմն ընդամենը երեք օր։ Բայց ինչո՞ւ այսքան երկար է թվում։ Զզանդահարի՞, թե՞ անհարմար է։ Իսկ ինչո՞ւ է անհարմար, երկու օր հետո հանձնաժողովի նիստ ունեն, պետք է նախապատրաստել հարցերը։ Ո՞ր հարցերը...

Ու հիմա, աշխատանքից հետո, միասին եկել հասել են Կիևյանի կամրջին ու մայրամուտի շողերով ողողված ձորին են նայում։ Այդ ամբողջ ճանապարհը համարյա լուռ են անցել. ինչո՞ւ, ո՞վ փակ դրեց նրանց լեզվին։

— Հրանտ Արշակովիչ,— վերջապես խոսեց Աշխենը,— ինձ խենթի տեղ չդնեք, խնդրում եմ։

— Ինչե՞ր ես խոսում, Աշխեն։

— Որովհետև մի խենթ հարց պիտի տամ։ Ասացեք, խնդրում եմ, երջանի՞կ եք դուք ձեր ամուսնական կյանքում, և կարո՞ղ եմ ես համոզված լինել, թե կա մի ընտանիք, որը պետք է, որը կարող է օրինակ ծառայել։

— Դու խելոք աղջիկ ես, Աշխեն, և այդ հոռետեսությունը քեզ չի սազում։

— Ես, այնուամենայնիվ, ինձ հոռետես չեմ համարում։ Բայց դուք իմ հարցին չպատասխանեցիք։

— Այո, երջանիկ եմ, Աշխեն, հավատա, և սա որպես գեղեցիկ խոսք չէ, որ ասում եմ։

Լռեցին երկար։ Հետո Հրանտն ասես շարունակեց իր խոսքը.

— Միայն մի բան, լիակատար երջանկության ճանապարհին ընկած մի քար...

— Ահա, այնուամենայնիվ մի պակաս բան կա, տեսնո՞ւմ եք,— ոգևորվեց Աշխենը, բայց նրա ոգևորության մեջ չարախնդություն չկար, այլ իր տեսակետի հաստատման ապացույց։

— Այո՛, մի խանգարող բան կա, լուրջ բան... Կներես, Աշխեն, մեկն ասելուց հետո մյուսն էլ պիտի ասել.— համարյա հինգ տարվա ամուսիններ ենք, դեռ երեխա չունենք, ու չգիտեմ՝ կունենա՞նք...

— Երեխա՞,— ձգեց Աշխենը կոտրված ձայնով,— ափսո՞ս... Բայց ոչինչ, կլինի, աստված վկա, դեռ կունենաք, հուսահատվելու կարիք չկա։ Հանգուցյալ մայրս մի անգամ, հիշում եմ, սրտնեղված պահին ասաց՝ անիծված պատերազմը ոչ միայն հորդ տարավ. որ մնար, գուցե մի քույր կամ եղբայր կունենայիր, մենակ չէիր լինի այս աշխարհում։ Դեռ լավ է, ասում է, դու ծնվեցիր, բա որ դու էլ չլիներիր, իմ ճարը ո՞նց կլիներ։ Ես էլ կես լուրջ կես կատակ ասացի,— նորից կամուսնանայիր ու լավ-լավ երեխաներ կունենայիր... Ոնց լաց եղավ խեղճ մայրս, մոռանալ չեմ կարող։ Հետո հասկացա, որ սիրող կնոջ համար իմ ասածը շատ հիմար խոսք էր... Այո, դժվար է տունն առանց երեխայի։ Բայց ոչինչ, դուք դեռ կունենաք, պետք չէ հուսահատվել։

— Բժիշկների տված հույսով ենք ապրում, տեսնենք։

— Իսկ ձերո՞նք ինչ են ասում։

— Սղոցում են մեկ-մեկ, մանավանդ մորաքույրս։

— Իսկ ի՞նչ նրա գործն է, ինչո՞ւ է խառնվում։

— Չգիտեմ, երևի՝ հարազատի իրավունքով։

— Հրանտ Արշակովիչ, իսկ եթե, ասված մի արասցե... Դուք կարո՞ղ է լսեք նրանց։

Հրանտը չհասցրեց պատասխանել։

— Գիտե՞ք ինչ, եթե դուք այդ հողի վրա բաժանվեք ձեր սիրած կնոջից, ես ձեզ... ձեզ, կատեմ, ամենասարսափելի կերպով...

Ու Աշխենը փախավ գլխապատառ, առանց ետ նայելու...

11.

Երեք ավտոմեքենա ցեմենտ ուղարկելուց հետո միայն Հրանտը որոշեց գնալ շինարարություն։ Դժվարությամբ լուծվեց ցեմենտի հարցը. մինչև գործարանի դիրեկտորի մոտ հասավ, սա էլ զանգեց ում պետք էր, բողոքեց, խնդրեց, ու գործը գլուխ եկավ։ Այո, միայն խնդրելուց հետո, օրինական պահանջն ու բողոքը չօգնեցին։ Այդպես է, երբ պաշտոնական հողի վրա ես գնում խնդիրը, թեկուզ և իրավացի, դժվար է տեղից շարժվում, իսկ որ ասում ես՝ հանուն մեր ընկերության, կամ՝ երեխաների համար է, թե չէ էսքան չէի խնդրի, և մեքենա է ճարվում, և ցեմենտ։ Ինչո՞ւ է այսպես, և լա՞վ է սա, թե՞ վատ։ Հավանաբար և մեկը և մյուսը։ Եվ, այնուամենայնիվ, լավ կլիներ, որ վճռական ձայնը պատկաներ գործնական փոխհարաբերություններին, թե չէ մեր խնդրելով հավանաբար ձախողեցինք մի ուրիշ կազմակերպության գործ, որը գուցե և ավելի իրավունք ուներ ստանալու այդ ցեմենտը, որին գուցե և ավելի պետք էր այն, բայց որը հավանաբար բավարար չափով խնդրել չի կարողացել, կամ ընկերական կապն է թույլ գտնվել...

Գնաց շինարարություն, բայց տուն հանդիպել չկարողացավ. բուֆետում ինչ ձեռքն ընկավ, հավաքեց մի կապոցի մեջ, և Աշխենի ու Թամարի հետ պատահական մեքենայով տեղ հասան։

Օրը շաբաթ էր, աշխատանքի ամենաեռուն պահը։

— Բարև ձեզ, քեռի Սամսոն, Հարություն, տղաներ, ի՞նչ կա, ինչպե՞ս եք։

— Օրհնվեն քո ապուպապերը, Հրանտ ջան, որ ցեմենտը տեղ է հասել, ուրեմն ամեն ինչ կարգին է։

Քեռի Սամսոնն է, Հրանտի ձեռքն է թափահարում, և ի՞նչ ուժով։

— Բա որ ասում էի կարգին հանձնաժողով է, չէիք հավատում.— նրա կապույտ աչքերում մի անմեկնելի ժպիտ է թագ կացել։

— Էս շոգ օրն աղջիկների՞ն ինչի ես բերել։

— Շաքար չենք, քեռի Սամսոն, չենք հալվի։

— Աշխեն ջան, իսկ տղամարդիկ ուզում են, որ աղջիկները միշտ շաքար մնան։

— Տեսա՞ք ինչ ճաշակով քեռի ունենք. ասում են ջահել ժամանակ աղջիկները ճանապարհ չէին տալիս...

— Հարություն, կարգին խոսա, թե չէ ականջդ կքաշեմ, կամ հիմա ի՞նչ է դուրս գալիս, քո ասելով ես արդեն դավթարից ջնջվա՞ծ եմ։

— Դուք ամենաքաղցր տղամարդն եք այս բոլորի մեջ, քեռի Սամսոն, ազնիվ խոսք,— խոսակցությանը խառնվում է Թամարը։

— Շնորհակալ եմ, աղջիկ ջան, ամենաթթու բանն էլ իր լաղաթն ունի, քաղցրը հո մենակ շաքարը չի. ամեն համով բան քաղցր է։ Ես տեսնում եմ, որ Հրանտը ջերմուկ է բերել մեզ համար, հիմա սառը-սառը կխմենք, և դա կլինի ամենաքաղցր խմիչքը։ Էդպես է, ինչ սրտիդ դուր եկավ, քաղցր է, դուր չեկավ, ասուած հեռու տանի։

— Քեռի Սամսոն, չե՞ք նախաճաշում. թե՞ ուշացել ենք։

— Արդեն նախաճաշել ենք, Հրանտ ջան, թող մնա բերածդ, հետո կուտենք։ Բա արևի տակ ի՞նչ եք կանգնել։

— Ուզում ենք ձեզ օգնել, մեզ էլ գործ տվեք։

— Աղջիկներին է՞լ, էդ շորո՞վ։

— Խալաթ ենք բերել, քեռի Սամսոն, դուք միայն ասեք, թե ինչ սրտի անենք։

— Դե, որ էդպես է, ձեզ դնում եմ Հարությունի տրամադրության տակ.— ժպտաց քթի տակ.— ջահելներ, դուք

թվագրել է 1915, ուստ հայտ

էլ շաղախի գործին կացեք։ Հրանտ, դու քո տեղը գիտես, հագիր էդ կոմբինիզոնը։ Դե, անցանք գործի։

Ու լռեցին միանգամից. լարված աշխատանքը խոսք ու զրույց չի հանդուրժում։ Այսպես, ավելի քան երկու ժամ։

— Ա ջահելներ, դե մի տաս րոպե դասամիջոց արեք։— Քեռի Սամսոնն առաջինն ինքն իջավ պատից։

— Քեռի, հո դպրոցում չե՞նք, որ դասամիջոց անենք, ոչ էլ աշակերտ ենք։

— Մարդուս գործատեղին էլ դպրոց է, աշխատողներն էլ, վարպետ թե աշակերտ, աշակերտներ են, ամեն բանի մեջ կարգ ու կանոն պիտի լինի, քվոր տղա, դու խելքիդ զոռ մի տուր, աղջիկներին ջուր հասցրու։

— Իսկապես Սամսոն քեռին ձեր քեռի՞ն է,— հարցրեց Թամարը՝ ջրով լիքը բաժակը Հարությունի ձեռքից վերցնելով։

— Մորս հարազատ եղբայրն է. նա է ինձ գյուղից բերել, տեխնիկում տվել. հոր տեղ է ինձ համար.— վերջին խոսքը կամաց ասաց, որ քեռին չլսի, բայց նրա խոսքի մեջ և խանդաղատանք կա, և հպարտություն։ Դա Թամարի հարցի պատասխանն էր, բայց ավելի շատ ուղղված էր Աշխենին։ Եվ Աշխենն զգում էր այդ, ու նեղվում էր. ինչո՞ւ, ի՞նչ վատ բան կա դրանում։ Եվ, այնուամենայնիվ, Հարությունի տևական հայացքները դուր չէին գալիս Աշխենին. ինձ ո՞ւմ տեղ է դրել... իսկ ինչի՞ անպայման վատն եմ մտածում,— հակաճառում էր մի ներքին ձայն,— գուցե, ի՞նչ գուցե, չգիտեմ, միայն գուցե, իսկապես...

Դասամիջոցը վերջացավ. աշխատանքը նորից մտավ սովորական հունի մեջ։

— Վարպետ Հարություն, պատդ ծուռ է ստացվում,— խայթեց Աշխենը։

— Իսկապե՞ս,— զարմացավ Հարությունը,— ինձ մոտ այդպիսի բաներ չեն լինում, մի՞թե...

— Այդ նրանից է, որ փոխանակ գործիդ նայես, ավելի շատ...

Կատակով ասվեց, բայց սառը ճշմարտություն կար մեջը ու նաև՝ չորություն։

— Աշխեն, պետք չէ,— կամաց նետեց Թամարը.

Վարպետ Հարությունը կարմրեց մինչև ականջների ծայրը ու պարտությունից խուսափելու փորձի դիմեց։

— Եթե այդքան տհաճ է, կաշխատեմ չնայել...

Ու լռեցին... Այլևս ոչ մի խոսք։ Աշխատող ձեռքեր, շաղախ ու բարձրացող պատ, և ինչպես արագ է բարձրանում. աղջիկները հազիվ են հասցնում կատարել աշակերտի իրենց պարտականությունը։

Աշխենի սրտում ինչ-որ բան է ծանրացել, իսկապես իզուր նեղացրեց տղային, փորձեց կատակի տալ, մեղմել դրությունը։

— Եթե վարպետ Հարությունին ամեն օր կարողանանք չղայնացնել, շինարարության ժամկետը կիսով չափ կկրճատվի։

Թամարը ծիծաղեց, իսկ վարպետի կողմից ոչ մի վերաբերմունք։ Չէ, լուրջ է նեղացել տղան։ Ու որոշեց շարունակել հարձակումը։

— Խռովկան տղաներին չեմ սիրում։

— Իբր թե ոչ խռովկանները սիրվելու հեռանկար ունեն։— Վերջապես ժպտաց Հարությունը, ինչ էլ քաղցր ժպիտ ունի անիրավը, իսկական Տորք է, միայն գեղեցիկ տեսակի, Տորք Գեղեցիկ... է, ասենք թե այդպես, քե՞զ ինչ։ Իսկ եթե ինքդ առիթ տա՞ս, չի կարող, ինչո՞ւ, չգիտի, սազակա՞ն չէ քեզ, ոչ, ինչու, կարելի է և վիճել, գուցե ես նրան սազական չեմ։ Բա ինչո՞ւմն է բանը. բան չկա, ահա ամբողջը, պարզապես չի ձգում, ամեն լավ չէ, որ գրավիչ է, ամեն քաղցր չէ, որ շաքար է, ինչպես քեռի Սամսոնը կասեր։ Իսկ քեռի Սամսոնի հարսը լինել կարելի է, աստված վկա, լավ մարդ է, քրոջ տղային գյուղից բերել, կրթության է տվել, հիմա էլ մտածում է տուն-տեղ ստեղծելու մասին։ Եվ կստեղծի, համոզված է, նրանք երկուսն էլ արժանի են դրան։ Գուցե ինքը կնպաստեր այդ գործին, կդառնար ակտիվ մասնակի՞ց... Հիմար բաներ ես մտածում, այդ տղան քեզ նայելուց բացի ուրիշ ի՞նչ է արել, ոչինչ. ի՞նչ է ասել, ոչինչ, բա ո՞ւր ես բոբիկանում՝ ջրին չհասած... Իսկ եթե չբավարարվի նայելով, ավելի հեռուն գնա՞, առաջարկություն անի՞, ի՞նչ կպատասխանես, չգիտեմ։ Հավանաբար արձագանքել չկարողանամ։ Մինչև ե՞րբ։ Չգիտեմ, ինչն է ձգում ինձ, ով է ձգում,

չգիտեմ, միայն մի բան պարզ է, պղտորվել է տիրտ-լճակը, շատ է պղտորվել։ Ինչո՞ւ, ո՞վ պղտորեց, չգիտի, ոչինչ չգիտի, և սարսափելին հենց այս է...

12.

Օրերն անցնում են սովորական, հոգս-ուրախություններով գիրկընդխառն։ Մանկապարտեզի շինարարությունն ավարտին է մոտենում։ Գործարանում հիմնական աշխատանքը նորմալ ընթացքի մեջ է. նույնիսկ գլխավոր ինժեները, մի անգամ տուն գնալիս, ակնարկեց նրան առաջ քաշելու հնարավորության մասին։ Դե, ինքն այդպիսի ձգտում չունի, չի էլ մտածել այդ մասին։ Իսկ ինչո՞վ կխանգարի դա։

Նոր պաշտոն, ավելի բարձր աշխատավարձ, ու՝ նաև պատիվ։ Այդ ո՞վ է ասել, թե պաշտոնը լավ բան է։ Գուցե և ճիշտ է ասել, ո՞վ է պաշտոնից փախչում։ Համենայն դեպս իրենց գործն է, եթե հարմար կգտնեն, ինքը կարգապահ մարդ է, կարևորն այն է, որ գործը շահի դրանից։ Իսկ մի՞շտ են այս սկզբունքից ելնում, այսինքն առաջնությունը տալիս գործի շահին, թե՞... Սա էլ այն գործնական փոխհարաբերության փոխարեն խնդրելով, կամ խաթրով գործ կատարելու տարատեսակներից չէ։ Բայց ուզում է հավատալ, որ ինքը այդ կարգի թեկնածուներից չէ։ Եթե իմանա, որ ազնիվ միտումներ չեն ընկած այդ առաջարկության հիմքում, չի գնա, աստված վկա, չի համաձայնվի։ Բայց դու բավական թեթևսոլիկ մարդ դուրս եկար, Հրանտ Ստեփանյան, «չեմ գնա, չեմ համաձայնվի», ո՞ւր ես անտեղի առաջ վազում, քեզ առաջարկություն արե՞լ են... Մի խոսքով, եթե հարմար կգտնեն, իրենց գործն է։

Իսկ տա՞նը, նույն փոխհարաբերությունը, նույն ծանոթ լույսը, հույսն ու սպասումը։

Միայն Հրանտի սրտում ինչ-որ անհանգիստ լարեր են ծնգում, որտեղի՞ց ծնվեց այդ անհանգստությունը, և ի՞նչ է ուզում նա...

Ու Նվարդի սրտես աչքից չի վրիպում այդ։

— Տրամադրությունդ ընկած է վերջերս, ինչ-որ հոգս կրծում է քո սիրտը, և դու չես ասում ինձ։

— Առանձին բան չկա, այնպես, սովորական...

— Դու արդեն քո կնոջից թաքնվելու փորձեր ես անում, Հրանտ, լավ սկիզբ չէ,— ու Նվարդը լցված անցավ խոհանոց։

Իրար չհասկանալու առաջին դեպքը հինգ տարվա մեջ։ Ծանր է։ Հրանտն զգում է այդ, բայց և ելք գտնել չի կարող. ի՞նչ անի, ինչպե՞ս մխիթարի կնոջը։ Իսկ ի՞նչ է եղել, հարկ կա՞ մխիթարելու... բայց ինչո՞ւ նորից այդ ծանր կշռաքարերը կախվեցին սրտից ու ձգում են, ճնշում են։ Ո՞վ կախեց, ինչպե՞ս...

Վերջին ամսվա ընթացքում երկու թե երեք անգամ են հանդիպել, ու միշտ՝ ուրիշների ներկայությամբ։ Սովորական բարև ու ցտեսություն, ուրիշ ոչինչ։ Եվ ճիշտն այդ է, ապնիվ խոսք, այդպես էլ պետք է շարունակել։ Ուրիշ ոչ մի քայլ...

Բայց զարմանալի է մարդը, ինչո՞ւ միշտ չէ, որ հետևում է լավին ու շիտակին, ինչո՞ւ երբեմն շեղվում է ճանապարհից...

Ինչպե՞ս մենակ մնացին ծանոթ կանգառում։ Թամարն էլ թեքվեց մոտիկ խաչմերուկը։ Եվ տաքսին կանգնեց նրանց կողքին։ Նստեցին ու գնացին մինչև Աշխենենց տունը։ Կանգնեցին դռան մոտ։ Մութ էր արդեն, ամպամած երեկո, մանր անձրև։ Ցուրտ չէ, բայց մրսում են ասես։

Ու խոսք չեն գտնում իրար ասելու։ Երբեք այդ հարցում նրանք չեն դժվարացել. հիմա պապանձվել են, դատարկվել է ասես ուղեղը, սիրտը, մի՞թե նաև սիրտը...

Հրանտը հիշեց Հարությունի նամակը, իսկական փրկություն, խոտիր այդ մասին, ինչքան կարող ես։ Այն «լեզվակովի» օրվանից Աշխենն այլևս շինարարություն չի գնացել։ խուսափում է։ Ու Հրանտի միջոցով Հարությունը նամակ է ուղարկել Աշխենին։ Դժվար պարտականություն էր, նեղվելով հանձնեց նամակը։

— Ընկեր ինժեներ, ուզում եմ մի նեղություն տալ. կնեռեք... խնդրում եմ... Վերջերս Աշխենը չի երևում, դե, գուցե և լայաղ չի անում, իրա գործն է։ Էս նամակը, եթե կարելի է...

Հրանտը խունացած ծրարը մեկնեց աղջկան. երևում էր, որ վաղուց գրված նամակ է, գրպանում շատ է տրորվել։

— Իսկ ի՞նչ է գրել վարպետ Հարությունը,— մի քան ասած լինելու համար հարցրեց Աշխենը, բայց ձայնը մատնում էր հոգու խռովքը։

— Մի՞թե դու կարծում ես, թե կարդացել եմ այդ նամակը։

Աշխենը միայն ժպտաց քթի տակ։ Ծրարը մտավ պայուսակ ու մոռացվեց միանգամից։

Հիմա՞ ինչի մասին պիտի խոսեն։

Հանկարծ, իր համար էլ անսպասելի, Հրանտն ավելի մոտեցավ աղջկան։

— Գիտես ինչ, Աշխեն, այս քանի օր է ես լուսնոտի նման եմ դարձել. քեզ հանդիպելու, քեզ հետ խոսելու մի զարմանալի ցանկություն է պաշարել ինձ ու բաց չի թողնում, սա ինչ բան է.— Հրանտը բռնեց աղջկա ձեռքը։ Աշխենը չէր դիմադրում։

— Խոսիր, Աշխեն, այսպես շարունակել չի կարելի, ես չգիտեմ, թե ի՞նչ է կատարվում ինձ հետ։

— Ե՛ս էլ,— հազիվ շշնջաց աղջիկը։

— Դո՞ւ էլ, ասա, մի՞թե դու էլ։

— Այո, նույն հոգեվիճակը, նույն հաճելի, բայց հանցավոր մտքերը... ինչքան թուլամորթ է մարդը, Հրանտ։

— Թուլամորթ չէ, Աշխեն, զգացմունքներն են ուժեղ, ո՞չ զորեղ, ամենազոր...

Ու նրանց շուրթերը միացան իրար։ Խոնավ էր աղջկա այտը, անձրևի՞ց էր, թե՞ աչք-լճակից փախած արցունք էր ճանապարհին մնացել...

— Իսկ ձեր տանը լույս չկա, ո՞վ հանգցրեց քո լույսը, Աշխեն։

— Լույսը հանգցնելու համար նախ պետք է վառել այն, Հրանտ... Մորաքույրս աղջկա հետ երկու օրով գյուղ է գնացել. ես մենակ եմ տանը։

Ու, ասես վաղուց կնքված պայմանի համաձայն, բարձրացան աստիճաններով, բացեցին դուռը ու ներս մտան անաղմուկ։ Սենյակի միակ պատուհանը լուսավորվեց մի պահ ու հանգավ նորից...

Դրսում մութ էր ու խոնավ։ Երկինքն ասես արտասվում էր ծեծված երեխայի նման. թե՞ մարդկանց հոգիները լվանալ էր ուզում...

13.

Իսկ Հարությունն իր նամակում սեր էր խնդրում Աշխենից, առաջարկություն էր անում։

«...Ես այն օրը հասկացա, որ մենք օտար մարդիկ ենք. դու քարն անտրամադիր էիր ինձ տալիս, ես պատը ծուռ էի շարում, իսկ ինչ-ինչ, տան պատը պետք է ուղիղ շարվի... Երանի դու եկած չլիներիր շինարարություն ու մենք ծանոթացած չլինեինք։ Հանգիստ ապրում էի ինձ համար, ինչո՞ւ ներսս տակնուվրա արեցիր... Ու հիմա էլ չես երևում, իմ համբերությո՞ւնն ես փորձում։ Մի աղոտ հույս դեռ փայփայում եմ, էդ հույսն է ինձ թույլ տալիս էս նամակը գրելու։ Ախր դու չգիտես, թե ինչքան ես լավը։ Հորս անհայտ գերեզմանը վկա, մենք լավ ընտանիք կկազմենք, ես քեզ թագուհու նման կպահեմ... Հիմար բաներ եմ ասում, թագուհին ինչացո՞ւ է։ Գուցե հարմար չես գտնում իմ կրթության պատճառով։ Ես արդեն դիմել եմ հեռակա բաժին, քեզ համար ինստիտուտ չէ, ակադեմիա էլ կավարտեմ...

Մեր ինժեներ Հրանտն ասում են լավ ընտանիք ունի. ես էլ եմ ուզում մի էդպիսի ընտանիքի տեր դառնալ, եթե, իհարկե, դու համաձայնություն տաս։

Մի բան էլ խնդրեմ. պատասխանը կուզենայի կամ հա, կամ չէ. կիսատ-պռատ պատասխանն ու անորոշ վիճակն էլ մի բանի նման չէ»...

Աշխենը փուլ եկավ՝ նամակի ընթերցումը չավարտած, ու գլուխը բարձի մեջ թաղած լալիս էր երկար։ «Հրանտի օրինակելի ընտանիքը»... Փոխանակ քո տունը շինես, ուրիշինն ես քանդում, անխիղճ, անամոթ, դու ինչո՞վ ես արժանի Հարությունի այդ մաքուր առաջարկությանը։

Ու ժամեր հետո միայն նա կարողացավ գրել նամակի պատասխանը։ Կրկնակի անխղճություն կլիներ անպատասխան թողնել։

«Վարպետ Հարություն, դու լավ տղա ես, աստված վկա,

դու արժանի ես ավելի բարձր սիրո։ Բայց, կներես, ես զբաղված եմ... Եթե կարող ես, ներիր ինձ, խնդրում եմ»...

«Ես զբաղված եմ»։ Իսկ ո՞վ է քեզ զբաղեցրել, անամոթ աղջիկ... Հրանտի օրինակելի ընտանիքը. ծիծաղի՞, թե՞ լա...

Հիշում է, ինքը դեռ տաս-տասներկու տարեկան երեխա էր։ Մի օր հարևանուհին իրենց տուն մտավ ու ծնկներին խփելով պատմում էր իր տալի աղջկա արարքի մասին, իրենց տուն է բերել երկու երեխա ունեցող մի մարդու, իրենից էլ տասնհինգ տարով մեծ։ Ինչպես էր մայրը բորբոքվել, ո՞նց էր անիծում «էդ անամոթ լրբին», «էդ ուրիշի տունը քանդելով իր տունը շինողին»։ Բորբոքված գոռում էր,— ոնց չէ, կշինես, էնպես խաբվես որ, դեռ գլխիդ վայ կտաս. դու սպասիր... Հիշում է, ինքը միամիտ մեջ ընկավ, դե, մամ, ինչ կա էդտեղ սարսափելի, երևի սիրում են իրար։— Աղջի, ձենդ կտրիր.— վրա պրծավ մայրը, ամեն անամոթություն ուզում են ծածկել սիրո մասին դատարկ խոսակցություններով։ Հանցավոր սերը սեր չի, հասկացիր, աշխարհում ուրիշի ընտանիք քանդելուց մեծ հանցագործություն չկա. էդպիսի լրբերին պետք է հրեղեն ձիու պոչից կապես ու ձին բաց թողնես...

Որտե՞ղ ես հիմա, մայր, մի գայիր հրեղեն ձիու վրա նստած ու ինձ կապեիր դրա պոչից...

Բայց, աստված վկա, ես Հրանտի տունը քանդելու միտք չունեմ, ես ուղղակի սիրում եմ նրան, հավատա մայր, շատ եմ սիրում... դու, իհարկե, դատապարտում ես ինձ, ու ասում ես՝ կին ունեցող տղամարդուն ի՞նչ իրավունքով ես սիրում։ Ախր սերը ե՞րբ է իրավունք հարցնում։ Կասես՝ այդ դու չէի՞ր, որ Հրանտին սպառնում էիր՝ եթե քո կնոջից բաժանվես, ես քեզ կատեմ. հիմա՞ ինչ ես ասում, կամ ի՞նչ էիր մտածում, երբ նրա հետ պառկած էիր նույն անկողնում... Աստված վկա, ես նրա ընտանիքը քայքայելու միտք չունեմ. ես նրա կինը դառնալ չեմ կարող, ոչ մի դեպքում....ուղղակի ես նրան շա՜տ եմ սիրում, ես խելագարվում եմ նրա համար... Ա՜հ, երանի կարգին խելագարվեի ու միանգամից աղատվեի այս ահավոր տանջանքից։ Ի՞նչ է լինելու սրա վերջը. չգիտեմ, մայր, փրկիր ինձ, խնդրում եմ, բեր քո հրեղեն ձին ու ինձ կապիր պոչից, ուրիշ ոչ մի բանի ես արժա-

նի չեմ, իսկ որ լուրջ հետևանք էլ ունեցա՞վ այդ մերձեցումը։ Այդ օրը համարյա լույս չվառվեց իմ տանը, որ, հանկարծ, աստված մի արատցե... դա հո լույսի իսկական մարում կլինի։ Բայց ո՞ւմ լույսի։ Ախր, Հրանտն անընդհատ այդ մասին է երազում... Ահ, տեր աստված, գոնե աղոթել չգիտեմ, ասեմ՝ դու ինձ փրկես չարից-փորձանքից։ Ի՞նչ ասեմ, ի՞նչ անեմ։ Մայր, ո՞ւր է քո հրեղեն ձին։

14.

Երկու օր Հրանտը հիվանդ էր, անկողնից վեր կենալ չկարողացավ։ Ծեծված, ջարդված, երևի գիշերը տուն գալիս մրսեց. ամբողջ մարմինը նվում էր ցավից։ Ո՞վ նրան այդպես անխնա ծեծեց, թե՞ հոգին էր նվում...

Նվարդի անհանգստությանը սահման չկար, պտտվում էր ամուսնու շուրջը, հաբեր առաջարկում։ Հրանտը զոռով նրան աշխատանքի ուղարկեց։

— Անհարմար է, Նվարդ, ես հո երեխա չեմ, որ հիվանդապահ ունենամ, վերջապես մաման տանն է։ Գնա, կանցնի, պարզապես հոգնած եմ, երևի մի քիչ էլ մրսել եմ, վերջերս...

Արդեն՝ սուտ խոսել է սովորում, ո՞ւր կհասնի այսպես։ Մորն էլ շուկա ուղարկեց, իբր թե միրգ է ուզում սիրտը...

Հիմա մենակ է տանը։ Ինչու մարդ երբեմն այսպես մենակ մնալ է ուզում, ինքն իր հետ։ Բայց մենա՞կ է որ, ասես ուսերին Աշխենի ձեռքերի հպումն է զգում, այտերին՝ նրա խոնավ համբույրները։ Ինչպես էր լալիս ու արցունքների միջից դատապարտում իրեն։

— Ես ամենահետին աղջիկը դուրս եկա, ինչպես իջա, ընկա այս աստիճան։ Գայթակղել սիրած կին ունեցող ամուսնուն,— ահավո՞ր է, սարսափելի է. տեր աստված... Ու գալարվում էր անկողնում, մատներն էր ջարդում։

— Ո՛չ, Աշխեն, դու իրավացի չես, դու մեղավոր չես, ես եմ անպետքը, ես եմ անիրավը, տմարդի կերպով խաղալ անփորձ աղջկա պատվի հետ, ավելի մեծ հանցանք կարելի՞ է պատկերացնել։ Ինչպե՞ս եմ հաշվի նստելու իմ խղճի հետ, այս ի՞նչ աննամուսություն էր...

Աշխենը լալիս էր անօգնական։

— Բայց մենք մարդ ենք, վերջապես, և մարդկային թուլությունը մեզ էլ խորթ չէ,— ասես մխիթարանքի ելք էր փնտրում Հրանտը,— անսխալական մարդ չկա։

— Դա միամիտ արդարացում է, Հրանտ։

— Գուցե միամիտ, բայց բավարար հիմք ունի. այո, մարդ ենք վերջապես։

— Մարդ էինք, այո, բայց զգացմունքի զոհ դարձանք, ընկանք, ստորացանք...

Հրանտի մարմինը նվոում էր ցավերից, բայց ավելի շատ հոգին էր մղկտում...

15.

Ամբողջ երկու ամիս չհանդիպեցին, խուսափում էին, մի տեսակ ամաչում իրարից։ Այդ ընթացքում Հրանտն արձակուրդ գնաց կնոջ հետ, ծովափ։ Իսկ մտքում անընդհատ Աշխենն էր, նրա արցունքոտ լի աչքերը, նրա պիրկ մարմինը...

Ինչպես տտացվեց, ինչպես թույլ տվեց իրեն օգտվել անփորձ աղջկա անպաշտպան վիճակից, նրա վստահությունից։ Ու հիմա կնոջ հետ ծովափ է գնալ. ինչպիսի՜ ուշադիր ամուսին։ Գրողը տանի, ի՜նչ զզվելի է, երբ մարդ ընկնում է ինքն իր աչքում։ Քանի անգամ է որոշել ամեն ինչ պատմել Նվարդին, այդպես ավելի հեշտ կլինի, այս անորոշ ու մոլորյալ վիճակն սպանիչ է։ Որոշում է, բայց բացվել չի կարողանում, շատ է դժվար, ծանր է և՛ իր ստորությանն աստիճանը ցույց տալ, և՛ սիրող ու նվիրված կնոջն այդ աստիճան դառնացնել։

Չի կարողանում, համարձակությո՞ւնը չի ներում, թե՞ ազնվությունը. հավասարաբար և՛ մեկը, և՛ մյուսը։

Իսկ Նվարդը հա սղոցում է, միայն բոլորովին հակառակ կողմի վրա։ Չէ, Հրանտ, դու անպայման հիվանդ ես, կամ քեզ հետ մի լուրջ անախորժություն է կատարվել գործարանում և դու թաքցնում ես ինձնից։ Այսպես չի կարելի շարունակել, ես այլևս չեմ դիմանում։ Ժամերով նստում, մի խոսք չես ասում, աչքդ հառում ես մի կետի ու չես թարթում երկար ժամանակ. ասա, ի՞նչ է պատահել, թե՞ մեր հիմնա-

կան հոգսն է քեզ այդքան հանել հավասարակշռությունից. ասա, մի բան ասա, հանգստացրու ինձ, անխիղճ մի եղիր... կամ արի գնանք բժշկի մոտ, ամեն ինչ պատմենք, թող բուժում նշանակի։

Խե՜ղճ կին, բոլոր տեսակի կասկածներ՝ ուրիշ կնոջ մասնակցությունից բացի. նրա մտքով անգամ այդպիսի բան անցնել չի կարող, որովհետև հավատում, վստահում է իր Հրանտին, իսկ նա ահա դարձել է վերջին սրիկան...

Գոնե կարգին սուտ խոսել կարողանար, խելքին մոտ մի պատմություն հնարեր, հանգստացներ կնոջը։ Չի կարողանում, չի ստացվում։ Նույն չոր ու անհամոզիչ պատասխանը,— առանձին բան չկա, փղուր ես անհանգստանում, կանցնի։

Չանցավ։ Ծովն էլ չօգնեց։ Գիշերները վատ էր քնում, ժամերով մտածում էր Աշխենի մասին։ Մեկ-մեկ փորձում էր մեղադրել նրան, վերջապես ես տղամարդ եմ, կինը պետք է զուսպ լինի, թույլ չտա իրեն մոտենալ... Բայց դա ավելի շատ իրեն արդարացնելու, քան նրան մեղադրելու հույս էր։ Չէ որ նա սիրում է քեզ, անարժանիդ, սերը նրան թուլացրեց, այլապես դու նրանից մի կիսատ-պռատ համբույր անգամ չէիր ստանա...

Իսկ ուրիշ տղամարդի՞կ, քանիսին գիտես, հենց քո շրջապատում, ինչեր ասես, որ չեն անում, ո՞ւմ խիղճն է այսքան տանջամահ լինում։ Բայց դու միշտ դատապարտել ես այդ կարգի մարդկանց, հիմա ինչո՞ւ իջար նրանց մակարդակին։ Վերջապես ես էլ մարդ եմ, ինձ էլ խորթ չէ մարդկային թուլությունը... խաղը վերջացած աշուղի նեյնիմ-նեյնիմ է, ուրիշ ոչինչ...

Հավանաբար քո մեղքը քավելու միակ միջոցը Նվարդին պատմելն է, ամեն ինչ։ Բայց չես կարողանում, իբր թե նրան ես խղճում, իրականում քեզ ես պաշտպանում, քո անազնիվ գործն ես շարունակում, էգոիստ...

16.

Նոր էին վերադարձել, երկրորդ օրն էր, ինչ աշխատանքի էր դուրս եկել։ Ու հանկարծ գրասենյակի դուռը բացվեց և ներս մտավ Աշխենը։

— Կարելի՞ է։

Գունատ էր, նիհարած, մի տեսակ փոխվել էր մաշկի տեսքը, կոշտացել։

— Ինչպե՞ս ես, Աշխեն, ես այնքան եմ մտածել քո մասին։

— Ես եկել եմ քեզ հայտնելու, որ շուտով, այո... մի խոսքով, որոշել եմ պահել...

Տե՞ր աստված; երեխա պիտի ունենա Աշխենը, և դա նաև իր երեխան է։ Հրանտի լեզուն կապվել էր, ուզում էր ինչ-որ բան ասել, մի լավ, շատ լավ բան, ու չէր կարողանում։ Բռնեց աղջկա ձեռքը, թոթվեց բավական կոշտ ու սեղմեց իր շրթունքներին։ Եվ նորից լուռ էր։

Հաջորդ վայրկյանին հունի մեջ մտավ սառը դատողությունը. իսկ հետո՞, այս շամուսնացած աղջիկը ինչպե՞ս է երեխա ունենում, ո՞վ է նրա հայրը, չէ՞ որ այդ երեխան կարող է խայտառակել երկուսիս էլ։

— Աշխատանքից հետո սպասիր ինձ,— հապիվ շշնջաց նա։

— Պետք չէ, Հրանտ։

— Ո՛չ, պետք է, Աշխեն, պետք է խոսել, որոշել։

Ու հիմա միասին տուն են գնում։

— Այսօր ամբողջ օրը միտքս զբաղված էր այս հարցով. ի՞նչ պիտի անենք, Աշխեն։

— Միայնակ մայրեր շատ կան, ես էլ նրանցից մեկը։— զարմանալի հանգիստ է Աշխենի ձայնը, ասես վաղուց մտածված որոշում կա գրպանում։

— Քանչորս տարեկան աղջիկը՝ միայնակ մայր... Իսկ ե՞ս, իմ մասին մտածե՞լ ես դու։

— Քո մասին դու արդեն մտածել ես, բավական չէ՞։

— Իսկ ի՞նչ եմ մտածել։

— Ուզում էիր համոզվել, որ կարող ես երեխա ունենալ, համոզվեցիր, ուրիշ ի՞նչ է պետք։

— Աշխեն, անխիղճ բաներ մի ասա, խնդրում եմ, դու ինձ բոլորովին...

— Ես քեզ բոլորովին էլ չեմ մեղադրում, ազնիվ խոսքանխելքը ես եմ, ես էլ կկրեմ իմ լուծը... իսկ քո երեխային

ես անպայման կպահեմ, դա իմ առաջին, գուցե և վերջին սիրո պատուղն է...

— Եթե հնարավոր լիներ... — կես խոսքից լռեց Հրանտը, դժվար էր շարունակել։

— Ասա, Հրանտ, լսում եմ,— մի ինչ-որ լավ բան լսելու ակնկալությամբ Աշխենը կանգ առավ ու դարձավ իր խոսակցին։

— Եթե դու համաձայնեիր, Աշխեն,— նորից լռեց. իսկ աղջիկն սպասում էր խոսքի շարունակությանը։— Այդ երեխային ինձ տալ...

— Ինչպե՞ս թե, ես ոչինչ չեմ հասկանում։

— Ունենայիր ու մեզ տայիր... Մեր տանն այնքան խոսք է բացվել երեխա վերցնելու մասին։ Իմ երեխային վերցնեի...

— Դե, գիտես ինչ, ես քեզ այդքան անհոգի չէի պատկերացնում. դու պարզապես...

— Մտածիր այս մասին, Աշխեն, խնդրում եմ, աղաչում եմ քեզ։ Ճիշտ է, գուցե ես անմարդկային բան եմ առաջարկում, բայց չէ՞ որ դու էլ մենակ ես... դժվար կլինի քեզ համար, պատվի հարց կա վերջապես. միայնակ մայր...

— Պատվի մասին չխոսես, խնդրում եմ, ես դեռ ինձ պատվազուրկ մարդ չեմ համարում։

— Դե, մի՞թե ես...

17.

Ի՞նչ կարելի է անել, ո՞րն է ելքը։

Ամբողջ գիշեր Աշխենն աչք փակել չկարողացավ. մտածում էր, մտածում, իսկ ելքը չկար ու չկար։ Գուցե պետք չէ պահել, գնալ թժշկի մոտ, և վերջ, ոչ ոք չի իմանա, նույնիսկ մորաքույրը, որն աղոտ կասկածներ ունի միայն։ Անցավ, գնաց, ոչինչ չի եղել. չի՞ եղել... իսկ հետո՞, հետո ի՞նչ։ Իսկ Հրա՞նտը։ Նա իր ընտանիքն ունի, թող ապրի, թող երջանիկ լինի։ Բայց նա չի կարող երջանիկ լինել, որովհետև երեխա չունի, իսկ առանց երեխայի ի՞նչ երջանկություն։ Իսկ հիմա նա կարող է երեխա ունենալ, և դու ուզում ես սպանել նրան։ Մարդասպա՞ն պիտի դառնաս... իսկ ինչո՞վ է ինքը մեղավոր. վերջապես Հրանտի փ՞նջն է ինքը. նրա կի՞նը, ոչ,

քա՞ ի՞նչը. նրա երեխայի մայրը։ Տե՞ր աստված, այս ինչ պատիժ է, կին չէ, բայց երեխայի մայր է։ Եվ ի՞նչ կասեն մարդիկ, ինչ երեսով պիտի երևա ընկերների աչքին։ Ոչ, ոչ, ճիշտն այդ է, գնալ բժշկի մոտ, և վերջ. որոշված է։ Որոշվա՞ծ է, իսկ խղճիդ պատասխա՞նն ինչպես պիտի տաս. դու, որ ուզում ես սպանել վաղուց երազած ու սպասված երեխային, մարդասպա՞ն... Օ՜հ, այս ինչ անելանելի վիճակ է, և մեկի հետ խորհրդակցել, սիրտդ բացել չես կարող, ի՞նչ անել, ի՞նչ կարելի է անել...

Իսկ եթե Հրանտի խնդրանքը կատարի՞. ունենա ու տա նրան, որպեսզի լիակատար լինի նրա ընտանեկան երջանկո՞ւթյունը։ Կլինի՞ որ. կինը չի՞ իմանա, և ինքն ընդունա՞կ է այդպիսի մեծ զոհողության։ Եթե ուրիշն աներ այդ քայլը, ինքը հո կդատապարտե՞ր նրան և՝ ինչպե՞ս... իսկ քայլն արված է արդեն. ամենաճակատագրական քայլը, և դու կին չդարձած, մայրանալու վտանգի առաջ ես կանգնած։ Վտանգի՞, ինչո՞ւ վտանգի, սատանան տանի, սիրած մարդուց երեխա ունենալը ինչ մի հանցանք է... իսկ եթե այդ սիրած մարդը քոնը չէ, և քոնը լինել չի կարող։ Չի՞ կարող, այո, չի կարող, և դու չես թողնի, որովհետև անազնիվ ճանապարհով պիտի նա քեզ մոտ գա, իսկ դու անազնվությունը տանել չես կարող։ Չե՞ս կարող, իսկ քո արարքը մի՞թե ամենամեծ անազնվությունը չէ։ Ա՜հ, սատանան տանի...

Իսկ եթե ունենա ու պահի, ինքը պահի, միայնակ մոր իրավունքով։ Սիրով կկրի այդ ծանր խաչը, միայն թե թողնեն, միայն թե կարողանա։ Կգնա ուրիշ քաղաք, Հրանտից ու ծանոթներից հեռու, ու կմեծացնի իր բալիկին, կապրի նրա համար, և չի ամուսնանա, երբեք... Գուցե սա՞ է ելքը։

Երեք հնարավորություն, մեկը մյուսից ծանր, մեկը մյուսին հակասող—չունենալ, ունենալ ու պահել, ունենալ ու տալ նրանց։ Ո՞րն է ճիշտը. ինչպե՞ս որոշես, ինչպե՞ս հանգես խելոք եզրակացության, այն էլ այսպիսի անխելք քայլից հետո...

18.

Երբ հանդիպեցին նորից, երկուսն էլ գունատ էին, հիվանդի նման։ Հոգնած էին ու ջարդված։

— Աշխեն, եթե այսպես շարունակվի, ես կխելագարվեմ, աղնիվ խոսք։

— Գուցե խելագարվելու համար ավելի շատ հիմքեր ե՞ս ունեմ։

— Իսկ ի՞նչ ես որոշել, ի՞նչ պիտի անենք։

— Կգնամ բժշկի մոտ, և վերջ։

Հրանտը սարսափահար կանգ առավ. նա հավանաբար ավելի շատ դրանից էր վախենում։

— Դու այդ չես անի, Աշխեն։

— Իսկ ինչո՞ւ չեմ անի։

— Որովհետև դա ահավոր դաժանություն կլինի, իսկ դու ընդունակ չես այդպիսի քայլի։

— Ուրիշ ելք չկա, Հրանտ։

— Դու դրանով ինձ կսպանես, Աշխեն. ես, որ տարիներ շարունակ սպասել եմ երեխայի։

— Դու սրան չես սպասել։

— Միևնույն է, նա իմ երեխան է, Աշխեն, լավ մտածիր։

— Մտածիր, մտածիր... Երանի թե ես կորցրած լինեի մտածելու կարողությունս։ Խելագարվե՞լ կարելի է։

— Երևի երջանիկ մարդիկ են խելագարները...

— Դու իմ մասին բոլորովին չես մտածում, ես քեզ այդքան էգոիստ չէի կարծում։

— Անարդար ես, Աշխեն, հոգուդ մեղք ես գործում։

— Տա աստված, որ այդպես լինի։

Լռեցին, սպառվեց ասելիքը։ Հետո Աշխենը դանդաղ քայլեց դեպի տրոլեյբուսի կանգառը, իսկ Հրանտը մնաց կանգնած, հայացքը մի անորոշ կետի, ու ծխում էր, ծխում...

19.

Աշխենն անսպասելի սկսեց իրեն վատ զգալ, գլխապտույտ, սիրտխառնոց։ Թամարն ստիպված էր նրան տուն ուղեկցել, չնայած Աշխենն առարկում էր, չէր ուզում։

— Աղջի, զարմանալի մարդ ես, ինչ է, ձեր տուն գալն էդպես արգելվո՞ւմ է։

— Թամար ջան, դու ինձ սխալ հասկացար, պարզապես ուզում եմ նեղություն չտալ քեզ։

— Դու պարզապես փոխվել ես, վերջերս ուրիշ տեսակ մարդ ես դարձել, այս է տխուր ճշմարտությունը։

— Գուցե և ճիշտ ես դու, ինչ ասեմ, չգիտեմ...

— Ի՞նչ պիտի ասես, պատմիր քո դարդ ու ցավի մասին. ինչ-որ բան ես թաքցնում մտերիմ ընկերուհուցդ, բա ամոթ չէ՞, բա ես էդպիսի բան կանե՞մ։

— Ի՞նչ եմ թաքցնում։

— Քո վիճակը. էդ սիրտխառնոցն ի՞նչ բան է։

— Գուցե թունավորվե՞լ եմ...

— Ստում ես առանց ամաչելու, ինչ-որ կերել ենք, միասին ենք կերել, թունավորվելս ո՞րն է։

— Բա ի՞նչ է սա։

— Դու գիտես, դու պիտի ասես։

— Դե լավ, վերջ տուր։

— Մինչև չբացվես, ձեռք չեմ քաշի։ Դու դեռ ինձ լավ չգիտես։

— Դե՛, արդեն տեսնում ես, հասկանում ես, ի՞նչ ասեմ, հո երեխա չե՞ս...

Թամարը միանգամից գունատվեց, շունչը կտրվում էր, ոնց թե, ուրեմն Աշխենը... Չնայած ինքը լուրջ կասկածներ ուներ, բայց ինչ-որ տեղ փորձում էր չհավատալ, կուզենար, որ Աշխենը ժխտեր։ Հիմա որ ինքն է խոստովանում, այդ սարսափելի անակնկալ էր նրա համար։ Աշխենը երեխով... ումի՞ց, ո՞վ կսպասեր։ Իսկ ինչո՞ւ եմ խառնվել, գուցե սիրած տղա ունի, օրինական սեր է։

— Իսկ ինչո՞ւ էիր թաքցնում, կարծում էիր չե՞մ ուրախանա։

— Ուրախանալու բան չկա, չամուսնացած աղջիկը երեխայի է սպասում։

— Վա՜յ, ով գիտի զոռով կամ չցանկացած... Աղջի, էդ ումի՞ց է. կարգին պատմիր, հասկանամ։

— Այդ մեկը չեմ ասելու, չստիպես։

— Ես ճանաչո՞ւմ եմ նրան։

— Չես ճանաչում...

Թամարը թերահավատ ընկերուհուն էր նայում։

— Երկնքի՞ց իջավ էդ անամոթը։

— Կարգին խոսիր նրա մասին։

— Աղջի, գուցե իսկապես կարգին տղա է, դու անխելք քայլ կատարողներից չես, ամուսնացիր, վերջանա, ինչո՞ւ ես տանջվում։

— Հիմա հնարավոր չէ դա։— Թառերն ասես աքցանով են դուրս քաշվում Աշխենի բերանից։

— Պատճա՞ռը.

— Նա... այստեղ չի ապրում։

— Բա որտե՞ղ հանդիպեցիք։

— Հին ծանոթներ ենք... դե՛, լավ, Թամար, վերջ տուր հարցաքննությանդ։ Իմ վիճակն իմացար, բավական է, մնացածի տերը ես եմ։

— Աղջի, հո քեզ չե՞ն խաբել։— Ու մի լաց է բռնել Թամարին, իրեն պահել չի կարողանում։ Բայց, զարմանք բան, Աշխենի լացը չի գալիս, սա է նրան մխիթարում։

— Դե, մի զռա երեխայի նման, լսո՞ւմ ես, վերջ տուր, ասում եմ։

Աստիճանաբար խաղաղվեց Թամարը, դրան մեծ չափով նպաստեց Աշխենի զարմանալի հանգստությունը։

— Բա սրա վերջն ի՞նչ է լինելու,— հարցրեց Թամարը,— էդ տղան կգա՞։

— Չգիտեմ... խոստացել է. սպասում եմ...

— Դե, լավ է։ Գոնե լա՞վ տղա է, սիրո՞ւմ ես նրան։

— Շատ եմ սիրում, Թամար։

Ու ընկերուհիները նետվեցին իրար գիրկ, և հիմա լալիս էին միասին, ձայն ձայնի տված...

Հետո լրջացան. սրբեցին աչք ու երես։ Աշխենը փորձեց փոխել խոսակցության թեման։ Թամարը կանխեց նրան իր մի անսպասելի առաջարկությամբ։

— Աշխեն, հոգիս, խնդրում եմ, տուր նրա հասցեն և թող ես նրան մի նամակ գրեմ. մի վախեցիր, լավ կգրեմ, կտամ դու էլ կկարդաս։

Աշխենը չգիտեր ծիծաղել թե լալ։ Միայն կամաց, շատ կամաց ասաց.

— Պետք չէ, Թամար, նա հասցե չունի։

— Ուրեմն չես վստահում,— նեղացավ Թամարը։

— Հիմար բաներ ես խոսում, Թամար, այստեղ վստահության կամ չվստահելու հարց չկա... Թողնենք այդ խո-

սակցությունը, միևնույն է, դրանից ոչինչ չի փոխվի։ Ասա տեսնեմ գործերն ինչպե՞ս են շինարարությունում, երեք ամիս է, չեմ եղել։

— Ամեն ինչ կարգին է. ավարտելու վրա են։ Հարությունից չես հարցնում։

— Ի՞նչ հարցնեմ, մի տեսակ մեղավոր եմ զգում նրա առաջ, չնայած ոչ մի վատ բան չեմ արել։

— Մերժելուց էլ վատ բան կա՞... Նամակդ հանձնեցի։ Անհամբեր բացեց ծրարը, իմ ներկայությամբ կարդաց. գույն տվեց, գույն առավ։ Հետո թե՝ քույրիկ Թամար, գիտես, ինձ էդպես է կոչում, ես ուրիշ պատասխան չէի սպասում։ Շնորհակալ եմ անկեղծ խոսքի համար, էդպես էլ կասես իրեն։ Ես Աշխենին, ասում է, մեծ բախտավորություն եմ ցանկանում... ու շուտ եկավ, անշտապ գնաց իր գործին։

Աշխենի սրտում միաժամանակ մի քանի լար ծնգաց, դրանց մեջ և զղջում կար, և շնորհակալության ու կարոտի երանգներ, միայն որի՞ ձայնն էր ավելի բարձր հնչում, Աշխենն ինքն անգամ որոշել չէր կարողանում։

Մեկ էլ Թամարը թե՝

— Աղջի, արի Հրանտի օգնությանը դիմենք, կարգին մարդ է, նա քո էդ տղային կարգի կհրավիրի։

Աշխենի կոկորդն ասես առան աքցանի մեջ, խեղդվում էր։ Շտապ անցավ խոհանոց, իբր ջուր է ուզում խմել։ Բարեբախտաբար Թամարի աչքից վրիպեց և նրա գունատվելը և շնչառության արագանալը։

— Քեզ չխնդրեցի՞ այլևս այդ մասին չխոսել։

— Դե ես ինչ գիտեմ, մի հիմար կասկած մտել է սիրտս ու կրծում է, կրծում։

— Ի՞նչ կասկած։

— Այդ տղայի կարգին լինելու մասին։

Աշխենը նորից սիրտխառնոց ունեցավ, ու երկար ժամանակ չէր հանգստանում։

— Մի ձեռքս ընկներ էդ լակոտը, ես, տատիս ասած, նրա պորտը տեղը կդնեի...

Թամարի ձայնի մեջ ոչ այնքան ջղայնություն, որքան ներման պատրաստակամություն կա։

— Նրա պորտը տեղն է, անխելք, իմն է խախտվել...
Աշխենի դեմքին թառել է մի տխուր ու նիհար ժպիտ։

20.

Գործուղման գնաց Մոսկվա, Սվերդլովսկ, Գորկի, ամբողջ քսան օրով։ Խորհրդակցություն, գործարանին անհրաժեշտ պահեստամասերի հայթայթում, արտադրական ուսուցման համար մարդկանց ուղարկելու պայմանավորվածություն։

Վերադարձավ ու նույն օրը Թամարից իմացավ, որ Աշխենը հիվանդ է, տանը պառկած։ Երկար տատանվելուց հետո որոշեց այցելել նրան։ Գնաց ցերեկը, որպեսզի մենակ գտնի նրան։ Եվ մենակ էր։ Դեղնած, նիհարած։

Հրանտը մի մեղավոր ու վախվորած հայացքով նրան էր նայում, ասես ահավոր լուրի էր սպասում։ Բայց նրա հայացքի հետ նաև աղոտ մի հույս էր առկայծում։

— Տատանվում էի երկար, մինչև որ ուշացա. ասում են այլևս չի կարելի։

Հրանտը շոքեց աղջկա առաջ, համբուրում էր ձեռքերը, ծնկները։ Ու լաց եղավ Աշխենը։

— Դե հիմա գնա, խնդրում եմ։

— Ինձ դո՞ւրս ես անում։

— Ոչ դուրս անել կարող եմ, ոչ ներս հրավիրել. մորաքրոջս աղջկա դպրոցից գալու ժամն է, պետք չէ, որ քեզ այստեղ տեսնեն։

— Իսկ հետո՞։

— Չգիտեմ, հետոն որոշված չէ դեռ։ Եթե ամեն ինչ հաջող վերջանա, նոր կմտածենք։

— Տա աստված, որ հաջող վերջանա։

— Անհաջողությունն էլ բացառված չէ։ Տա աստված, որ հիվանդանոցից միայն նա վերադառնա...

— Աշխեն, անխի՜ղճ,— Հրանտի բողոքի մեջ կեղծ նոտա չկար։

— Խղճի մասին չխոսենք։ Վերջապես այդ մեկն արդեն մեր ցանկությամբ չէ, որ լինում է... գնա, խնդրում եմ և այլևս չգաս այստեղ։

— Մի՞թե այդքան տհաճ է քեզ համար իմ ներկայությունը։

— Այն չես ասում, Հրանտ, ինչ պետք է։ Գիտես, որ այդպես չէ, պարզապես հարմար չէ, որ մորաքույրս իմանա։

— Իսկ նա ոչինչ չգիտի՞ դեռ։

— Գիտի, այս վիճակը թաքցնել հնարավոր չէ. նա գիտի։ մեկ էլ թամարը, փասատը միայն և ոչ ավելին։

— Իսկ ե՞ս, իսկ ի՞նձ... Հրանտի շունչը կտրվում էր հուզմունքից։

— Քո մասին ոչինչ չգիտեն ու չեն իմանա։ Ինձ համար քո անունը, քո հեղինակությունը... Դու դեռ ինձ լավ չգիտես, Հրանտ,— գրկեց նրա գլուխը, սեղմեց կրծքին, համբուրեց ճակատը, աչքերը։

— Դե՛, գնա, խնդրում եմ։

— Աշխեն, սիրելի՛ս...

21.

Հրանտ Ստեփանյանի մոտ խորհրդակցություն է։ Նոր առաջադրանք են ստացել, արտադրանքի նոր տեսակ պիտի թողարկեն։ Խորհրդակցում են, վիճում, առարկում ու հաստատում։ Գլխավոր ինժեներին իրենց եզրակացությունը պիտի ներկայացնեն, և այն պետք է լինի կոնկրետ ու ռեալ։

Խոսում են ուրիշները։ Ստեփանյանը լսողի դերում է։ Բայց կարգին լսել չի կարողանում, միտքն ուրիշ տեղ է։ Աշխենի մոտից թռչում է Նվարդի գիրկը. այնտեղ էլ արցունքներ են, այստեղ էլ. ու երկու դեպքում էլ մեղավորն ինքն է, կրկնակի հանցագործ...

Նվարդն արդեն հոգեկան հիվանդի նման է, գիշերները վեր է թռչում մի քանի անգամ, թաքուն լաց է լինում։ Հիմա էլ մայրն է հիվանդացել, մրսել է սաստիկ, հազում է, տառապում է խեղճ կինը, և ինքը ոչնչով օգնել չի կարող։ Բժիշկներ է կանչել, անհրաժեշտ դեղեր է ճարել, բայց լուրջ բարելավում չկա։ Եվ ի՞նչ բարելավում, երբ ընտանիքի բոլոր անդամները հիվանդ են, իսկական հիվանդանոց, և նորից ամենամեծ հիվանդն ու հիվանդացնողը ինքն է։

— Ի՞նչ եք ասում, ընկեր Ստեփանյան, հիմա ինչպե՞ս ենք որոշում։

Տեղամասի պետերից է, Սեդրակը, մի կրակի կտոր տղա, որի կարծիքն առանձնապես հետաքրքրում էր իրեն, ափսոս, որ չի լսել։ Անհարմար բան է, իր ասելիքն էլ չգիտի։ Գտավ ելքը։

— Ընկերներ, մի հինգ-տաս րոպե ծխեցեք, մինչև ես կկարողանամ ձեր առաջարկությունները ի մի բերել։

Հավաքվածները դուրս եկան անտրամադիր. և զարմացած էին, և դժգոհ. հավաքել է խորհրդակցության և մարդկանց ասածը չի լսում, ի՞նչ է կատարվում այս մարդու հետ...

22.

Հևիհև ներս ընկավ դիրեկտորի քարտուղարուհին ու շուտասելուկի պես վրա տվեց.

— Ընկեր Հրանտ Արշակովիչ, ձեզ շտապ կանչում են մինիստրություն, ուղղակի մինիստրի մոտ, շտապեցեք, մեքենան սպասում է ձեզ։

— Այդ ի՞նչ է պատահել, Սվետլանա։

— Չգիտեմ, Հրանտ Արշակովիչ, մի ժամ առաջ դիրեկտորին կանչեցին, կես ժամ առաջ՝ գլխավոր ինժեներին, հիմա էլ՝ ձեզ, հո վատ բան չկա՞, հը, սա ի՞նչ բան է։

— Չգիտեմ, Սվետա, ես էլ բան չեմ հասկանում։ Բայց վատ ի՞նչ պիտի լինի, չեմ կարծում։ Ասում ես մեքենա՞ կա դրսում։

— Այո, դիրեկտորի մեքենան ձեզ է սպասում, հատուկ ուղարկել են, շտապեցեք։

— Հատուկ ուղարկե՞լ են, այ, դա հետաքրքիր է...

Մինիստրի առանձնասենյակում երկրորդ անգամն էր լինում. այն ժամանակ մենակ էր հսկայական դահլիճում, հիմա տասնհինգից ավելի մարդ կա, կոլեգիայի նիստ է։

Մնաց դռների մոտ կանգնած։

— Առաջ եկեք, ընկեր Ստեփանյան, և խնդրում եմ շնորհավորեք ձեր նախկին դիրեկտորին։

— Նախկի՞ն, ինչո՞ւ նախկին, Արտաշես Կարապովիչ։

— Դե, եթե այլևս դիրեկտոր չէ, ուրեմն նախկին է... Այո, այսօր Գեղամ Համայակովիչին նշանակեցին մինիստրի տեղակալ։

Հրանտը սիրով սեղմեց Սարգսյանի ձեռքը. նա շատ էր հարգում այդ նախկին զինվորականին, զարմանալի զոսպ ու հավասարակշռված ղեկավարին։

— Շատ ուրախ եմ, շնորհավորում եմ, Գեղամ Համայակովիչ, հաջողություն եմ ցանկանում։

— Իսկ չե՞ք ուզում շնորհավորել ձեր նախկին գլխավոր ինժեներին՝ Սուրեն Մարտիրոսովիչին,— ու խորամանկ ժպտում է մինիստրը։

— Այս ի՞նչ բան է, Արտաշես Կարպովիչ, այսօր բոլորը նախկի՞ն են դարձել։

— Այդ թվում և դուք։

— Ներեցեք, ես բան չեմ հասկանում։

— Գլխավոր ինժեներին դիրեկտոր ենք հաստատում, իսկ ձեզ՝ գլխավոր, ի՞նչ կասեք, ընկեր Ստեփանյան.— ու շթողեց, որ պատասխանի.— լավ է, չէ՞, գլխավոր։ Հիշում եմ, ես որ վարպետ էի աշխատում հենց ձեր գործարանում, պատերազմից առաջ էր դա. մի լավ գլխավոր ինժեներ ունեինք, խելոք, իր գործն իմացող, բայց խիստ, մի քիչ էլ շատ ինտելիգենտ։ Հենց որ երևում էր, իսկույն շշուկով իրար հաղորդում էին՝ գլխավորը եկավ, ինժեներ բառը մոռացվել էր, գործարանի գլխավորը... Մի սրամիտ էլ ընկեր ունեի, փոքրիկ գործարանում գլխավոր ինժեներ էր աշխատում։ Այդ ժամանակ ես էլ մինիստրի տեղակալ էի. սա մեկ-մեկ ինձ ձեռ էր առնում. «ես, ասում էր, գլխավոր եմ, է, քեզ նման կակոյ նիբուտ տեղակալ չեմ», համով մարդ էր։ Դժբախտաբար պատերազմից ետ չեկավ... Հիմա ի՞նչ եք ասում, ընկեր Ստեփանյան, գլխավոր դառնալու ցանկություն ունե՞ք, թե՞ ոչ։

Հրանտի համար այնքան անսպասելի էր այդ առաջարկությունը, որ անմիջապես պատասխանել չկարողացավ։

— Դե, ես ի՞նչ ասեմ, Արտաշես Կարպովիչ,— կմկմաց նա,— կկարողանա՞մ արդարացնել ձեր վստահությունը։

— Կկարողանաս, մենք համոզված ենք, ընկերները երաշխավորում են։

— Շնորհակալություն, կաշխատեմ...

Ու հիմա տուն է գնում խոշոր գործարանի գլխավոր ինժեներ Հրանտ Ստեփանյանը։ Մտքի տեսադաշտով ասես

ետ ու առաջ են վազում մեկ մինիստրի ընդարձակ առանձնասենյակն ու կոլեգիայի անդամների բարյացակամ հայացքները, մեկ Աշխենի գունատ դեմքն ու արցունքաթաց համբույրները...

Տուն է գնում նոր նշանակում ստացած։ Իսկ ինքն արժանի՞ էր այդ պաշտոնին. գուցե որպես մասնագետ՝ այո, իսկ որպես մա՞րդ, իր բարոյական կերպարով նա վաստակե՞լ է այդ վստահությունը... Բայց ով գիտի այդ մասին, Աշխենից բացի, նա էլ բերանը ջուր է առել։ Է, դու գիտե՞ս հոգ պարտադիր է, որ քեզ բռնեն հանցանքի վայրո՞ւմ, վեր կենայիր ու կոլեգիային պատմեիր քո արկածախնդրությունը, քո տմարդի արարքի մասին, տղամարդու նման ասեիր ամեն ինչ ու հրաժարվեիր նոր պաշտոնից, ասեիր՝ ես արժանի չեմ, ընկերներ... Իսկ հնարավո՞ր էր այդ. ինչպե՞ս պատմեր։ Չէր կարող, չէիր կարող, որովհետև վախկոտ ես ու էգոիստ, ճիշտ է ասում Աշխենը, եսասեր ես դու...

23.

Նորից ծանոթ բժշկուհու մոտ են եկել, ծննդատուն։ Քանի տարի է գնում-գալիս են, օգո՞ւտն ինչ։ Գուցե պետք չէ, գուցե ինքնահոսի թողնելու մեջ ավելի հույս կա...

— Ես դեռ հույս չեմ կորցրել. ախր խանգարող ոչինչ չկա, աստված վկա,— բժշկուհին խոսում է, բայց չի նայում նրանց կողմը, գլուխը կախ գրում է, հերթական դեղամիջոցներ է առաջարկում։— Բայց, գիտեք ինչ,— դարձավ Հրանտին,— այնուամենայնիվ ես ձեզ խորհուրդ կտայի երեխա վերցնել. համոզված եմ՝ դա կօգնի, կնպաստի, որ ունենաք ձերը, այդպես լինում է հաճախ...

— Հավանաբար այդպես էլ պետք է անենք,— խոսեց Հրանտը, ու իր հերթին կնոջ կողմը չէր նայում։

Իսկ Նվարդը զարմացած է, առաջին անգամն է ամուսինը համաձայնության խոսք ասում. քանի անգամ շոշափվել է այդ հարցը, ու միշտ դեմ է եղել։

— Սպասենք, տեսնենք, շտապելու ոչինչ չունենք...

Հավանաբար սպառվել է հույսը...

Դե, եթե որոշել են, ուրեմն պետք է արագացնել. էլ ինչի՞ են սպասում։ Իսկ Հրանտը դանդաղում է։

— Մի շտապիր, Նվարդ, պետք է հարմար թեկնածու ճարել, հո ամեն պատահական երեխայի չես վերցնի։

— Ուրիշ ի՞նչ կարող է լինել, միևնույն է, պատահական ընտրություն պիտի լինի, չէ՞,— առարկում է Նվարդը։

— Իսկ դու տղա՞ ես ուզում, թե՞... — խոսակցության ընթացքը փոխում է Հրանտը։

— Ոչ, աղջիկ։ Իսկ դո՞ւ։

— Ինձ համար միևնույն է, երևի։

— Թող այդպես լինի, մեր բախտից ինչ պատահի։ Միայն արագացրու, խնդրում եմ։

Արագացրու. հեշտ է ասելը, ինչպե՞ս արագացնես. ուրիշինը չի էլ պատկերացնում, միայն իրենը... իսկ ինչպիսի՞ն կլինի նրա լույս աշխարհ գալը, և կտա՞ մայրը... Վաղուց չեն հանդիպել. արդեն արձակուրդ է վերցրել, աշխատանքի չի գալիս։ Մեկ-մեկ աղոտ տեղեկություններ է ստանում լաբորատորիայի վարիչից, Թամարից։ Սրան կանչում է հանձնարարություն տալու ու ասես հարցնում է մի միջի այլոց Աշխենի մասին,— ինչպես է, ինչ է անում։

— Ես ուղղակի չեմ հասկանում այդ աղջկան, ընկեր Ստեփանյան,— մի անգամ դառնացած խոսում էր Թամարը,— հպարտ ու ինքնուրույն աղջիկ էր, ո՞ւմ հետ կապվեց, ո՞ր սրիկան խաբեց նրան, չգիտեմ։ Հարցնում ես, ոչինչ չի ասում, անիծում ես այդ դաժան ու վախկոտ հորը, չի թողնում, պաշտպանում է ատամներով։ Նա լավն է, ասում է, նրա հետ գործ չունես։ Դե, դուք ասացեք, ընկեր Ստեփանյան, ինչպե՞ս կարող է այդպիսի մարդը լավը լինել... Մի անգամ նույնիսկ առաջարկեցի ժողովում դնել նրա հարցը, ստիպել, որ ամուսնանա, տիրություն անի իր երեխային. տեսնեիք, թե ինչպես էր սարսափահար աղաչում,— եթե ուզում ես, ասում է, որ ես թույն չընդունեմ, այդ բանը գլխիցդ հանիր։ Նա մեր գործարանից չէ, ասում է, և գնացել է մեր քաղաքից։ Հետո էլ խոսքը փոխեց, թե ես օրինական ամուսնության մեջ եմ նրա հետ, շուտով գնալու եմ նրա մոտ։ Դե արի ու հասկացիր այդ աղջկան... Ի՞նչ անենք, ընկեր Ստեփանյան, ախր, մեղք է Աշխենը, մորաքույրն էլ

մյուս կողմից է հոգին ուտում, հոգեկան ծանր վիճակ է ապրում աղջիկը, իսկ այնքան լավն է նա։

Հրանտը ծխում էր անընդհատ ու չգիտեր, թե ինչ ասի, ինչպես դրսևորի իրեն։ Երևի անփորձ գողերն են այդ վիճակում լինում, երբ բռնվում են... Միայն կարողացավ շշնջալ.

— Ինչպես ինքն ուզում է, այնպես էլ արեք։

Թամարը ոտքի կանգնեց ու սառը նետեց.

— Կներեք, ես ձեզ ավելի սրտացավ մարդ էի կարծում, ընկեր գլխավոր ինժեներ...

Թե՞ գլխավոր սրիկա։

Ի՞նչ կարելի է անել, ինչպես վարվել։ Թամարին անգամ չի ասում, իր մոտ ընկերուհուն։ Իսկ եթե ինքն ասի, պատմի նրան, բացի իր սիրտը։ Որ ինչ, արդյո՞ւնքը, թողությո՞ւն պիտի հայցես Թամարից, թե՞ վճռական քայլի ես դիմելու։ Ինչպե՞ս վարվել։ Գոնե հնարավոր լիներ տեսնել, խոսել հետը։ Իսկ ի՞նչ պիտի ասես, ասենք թե հանդիպեցիր, ունեցածդ ինչ է, քո զանգակատնից եկող նույն առաջարկությունը. լսել է, դրա կարիքը չունի այլևս։ Իսկ եթե նամակ գրի՞։ Հարմար չէ դարձյալ, և գրելու էլ բան չունես... Գրողը տանի, այս ի՞նչ հիմար վիճակ է։ Ապուրն եփել ես, ոչ ուտել կարող ես, ոչ թափել...

24.

Հրանտի աշխատանքն ավելի բարդացավ։ Նոր պաշտոնն իր հետ բերել էր բազմաթիվ հոգսեր ու դժվարություններ։ Մի արտադրամասի փոխարեն պետք է կարողանաս ընդգրկել ամբողջ գործարանը՝ իր բոլոր մանրամասներով, պահանջների ու կատարած գործերի բազմազանությամբ, և ամենակարևորը, պետք է կազմակերպես այդ հսկա օրգանիզմի բոլոր մասերի փոխօգնությունն ու համագործակցությունը։

Ծանր էր Հրանտի վիճակը. գիշերը ցերեկ էր անում և զգում էր, որ լրիվ չի հասցնում։ Դեռ լավ է, որ նախկին գլխավոր ինժեներն ու այսօրվա դիրեկտորը օգնում էր նրան։ Երբեմն աշխատանքից հետո ժամերով մնում էին գործարանում, ու նա պատմում էր, բացատրում։

— Դե, ես ասում էի, Սուրեն Մարտիրոսովիչ, որ ինձ մոտ չի ստացվի, ո՞ւմ է պետք միջակ գործը,— անկեղծորեն բողոքում էր Հրանտը։

— Իսկ դու իզուր ես ժամանակից շուտ քիթդ կախում։ Կարծում ես ինձ համար հե՞շտ էր, որ եկա այստեղ. առաջին երկու ամիսը խելագարի նման էի, կարծում էի, թե չեմ դիմանա, նույնիսկ դիմում գրեցի ազատվելու մասին, բայց անհարմար էի զգում դիրեկտորին ներկայացնել, մեր Գեղամ Հմայակովիչն էր, հին ծանոթ էր, ոիսկ չարեցի։ Դիմումը մնաց գրպանումս, մաշվեց՝ ու պատռեցի մի օր։ Իսկ դու վատ չես սկսել, արևս վկա, խուճապի մի մատնվիր, մի տարի հետո դու իսկական գլխավոր ես դառնալու, քեզ բան եմ ասում։ Միայն մի խորհուրդ պիտի քեզ տամ, շատ շփվիր աշխատողների հետ, մոտիկից ճանաչիր նրանց, դա քեզ շատ կօգնի։ Դե, չկախես գլուխդ, չեմ սիրում թոնթորացողներին... Կինդ ինչպե՞ս է, մա՞յրդ, իմ բարևները հաղորդիր Լուսիկ մայրիկին ու տիկին Նվարդին...

Ընդմիջման ժամ էր։ Որոշեց անցնել տեղամասերով, տեսնել, թե ինչ են անում մարդիկ, ինչպես են կազմակերպում նախաճաշի գործը։ Բակում մի քանի հոգի վոլեյբոլ էին խաղում, ջրավազանում լողացողներ կային, չնայած եղանակն այնքան էլ բարենպաստ չէր։ Ճաշարանում սովորական եռուզեռ, այրված մսի հոտ։ Պետք է զգուշացնել խոհարարին, թող ուշադիր լինի, կարգին պատրաստի։ Իսկ դա իր իրավունքների ու պարտականությունների մեջ մտնո՞ւմ է. ճաշարանի հարցով զբաղվողներ կան։ Միևնույն է, ինչ վերաբերում է բանվորին, հավասար չափով վերաբերում է նաև գլխավոր ինժեներին։

— Ընկեր Ստեփանյան, համեցեք, միասին նաճախաշենք,— իր նախկին տեղամասի տղաներն են։

— Շնորհակալություն, Գուրգեն,— մոտեցավ,— իսկ ինչպե՞ս են պատրաստում, գո՞հ եք մեր այս նոր խոհարարից, տղաներ։

— Վատ չէ, չնայած ավելի լավ կարելի էր։ Գոնե մի բաժակ հանքային ջուր, Հրանտ Արշակովիչ։

— Կարելի է, իսկապես որ ծարավ եմ։

Ահա և լաբորատորիան։ Աղջիկների խումբը Թամարի

գլխավորությամբ նախաճաշում է տեղում, աշխատասեղանի վրա։ Բայց, զարմանալի բան, վարպետ Սմբատն էլ սրանց հետ է։

— Բարև ձեզ, բարի ախորժակ։ Սմբա՞տ, հո հավատափոխ չե՞ս եղել։

— Հրավիրեցին աղջիկները, ես էլ մերժել չկարողացա, ընկեր Ստեփանյան, հո վատ բան չե՞մ արել։

— Ինչո՞ւ, ընդհակառակը, հաճելի հրավերից ու հրավերը շնորհքով ընդունելուց էլ լավ բան կլինի՞։ Իսկ ի՞նչ ունեք, հապա տեսնեմ։

— Պանիր, սոխ, թթու վարունգ,— վրա տվեցին աղջիկները,— մի կտոր էլ խաշած միս ունեինք, ափսոս, պրծավ։

— Եթե թույլ կտաք, ես մի վարունգ կվերցնեմ։

— Խնդրեմ, համեցեք։

Հրանտի միտքը Սմբատի ու Թամարի շուրջն էր պտտվում, երևի բան կա սրանց մեջ։ Է, ինչ վատ է, թող լինի, շատ էլ հարմար զույգ է։ Միայն տղան մի քիչ թոռ-վռի է երևում, չխաբի՞ աղջկան... Տես ով է խոսում խաբելու մասին։ Բայց մի՞թե ես... Համենայնդեպս դու առայժմ ոչ մի հիմք չունես Սմբատի մասին այդպես մտածելու։ Նա լավ վարպետ է, գուցե և լավ ամուսին կլինի, գուցե և քեզնից լավը...

Ու վարունգը ծամելով շարունակեց քայլել։

«Խնդրեմ, համեցեք»,— եթե կյանքում ամեն ինչ այդպես հաճելի ու քաղցր ստացվեր, խնդրեմով։ Իսկ ե՞րբ կլինի այդպես. կլինի՞ երբևէ...

Իսկ Թամարը նկատելի սառն էր. ոչ մի խոսք չասաց։ Սառն էր երևի իր այն օրվա սառը վերաբերմունքի համար։ Իսկ եթե իմանար ամբողջ ճշմարտությո՞ւնը, այն ժամանակ «խնդրեմին» ու «համեցեքին» փոխարիներու կգային ավելի հարմար բառեր, իսկականը, ամենադիպուկը...

25.

Նվարդի գլխում ու սրտում ջրերն այնպես էին պղտորվել, որ պարզելու հեռանկար չէր մնացել։ Այո, նա պարզապես դաղարել է Հրանտին հասկանալուց, այն Հրանտին,

որին առաջ կես խոսքից էր հասկանում։ Առաջ, իսկ ինչքա՞ն ժամանակ է անցել, ընդամենը մի քանի ամիս է, որ այսպես խորթացել են իրարից, դարձել անուղղելի անհասկացող։ Ի՞նչ պատահեց։ Թե՞ երեխայի հոգսն է։ Բայց այդ հոգսը կար իրենց ամուսնության երկրորդ տարվանից։ Գուցե նոր պաշտոնը նրան հանել է հավասարակշռությունից, հոգսերի բեռը շատ է ծանրացել... Բայց այս զարմանալի փոփոխությունը նրա մեջ նկատելի դարձավ նոր պաշտոնից շատ առաջ։ Ի՞նչն է պատճառը։ Թվում է, թե հիվանդ էլ չէ։ Երանի չէր հիվանդ լիներ... պապանձվի լեզուս։ Ախր հիվանդությունը բուժել կլիներ, իսկ սա ինչի՞ նման է. ոչ առաջվա շոյանքն ու ուշադրությունը կա, ոչ մինչև անգամ սովորական ժպիտն ու քաղցր խոսքը։ Վերջին անգամ ե՞րբ է իրեն համբուրել, չի հիշում։ Գիշերները մոտ չի գալիս... ի՞նչ պատահեց, տեր աստված։

Ու հանկարծ, հինգ տարվա ընթացքում առաջին անգամ, Նվարդի գլխում առկայծեց ուրիշ կնոջ ներկայության կասկածը, առկայծեց ու անմիջապես մարեց։ Մարեց իր իսկ ջանքերով։ Անհնարին բան է այդ. Հրանտն ընդունակ չէ այդպիսի ստորության։ Ոչ, եթե աչքով տեսնի անգամ, չի հավատա, իր Հրանտը... իսկ հանգուցյալ տատն ասում էր՝ տղամարդը անպետք խասյաթ ունի, հենց որ կնոջ փեշ տեսավ, շոքերը կթուլանան... Բայց դա Հրանտին չի վերաբերում. նա չի կարող։ Իսկ ինչո՞ւ չի կարող, նա էլ մի սովորական տղամարդ է։ Ո՞չ, նա սովորական չէ, Հրանտը դավաճանել չի կարող, նա ընդունակ չէ ստոր քայլի։ Իսկ եթե, ասված մի արասցե, այդպիսի բան կա, Հրանտը չի թաքցնի, կասի։ Պայմանավորվել են, դեռ քանի տարի առաջ,— եթե մեզնից մեկը երբևէ հիասթափվի կամ հրապուրվի ուրիշով, աղնվորեն պետք է խոստովանի, և իրենք կբաժանվեն ու կմնան որպես լավ ընկերներ։ Կատակով տրված ու ջերմ համբույրով վավերացված երդում։ Հետո՞։ Ոչինչ. նա պարզապես Հրանտից այդպիսի բան չի սպասում։ Իսկ ո՞րն է պատճառը. չգիտի, չգիտի, գլուխը պայթում է հակասական մտքերից, վնճռոտ խնդիրը մնում է չլուծված։

Սկեսուրն էլ է նկատել, նա էլ է անհանգստացած։ Հար-

սի հետ մեկ-մեկ մտքեր են փոխանակում, լալիս են թաքուն...

Իսկ Հրանտի մոտ գնալով ասես խորանում է հիվանդությունը, և բուժման հնարավորությունը դառնում է աղոտ ու անհեռանկար։

26.

Թամարը ներս մտավ՝ առանց դուռը ծեծելու, առանց թույլտվություն խնդրելու։ Ուղղակի ներխուժեց առանձնասենյակ ու մի ծրար դրեց գլխավոր ինժեների առաջ։

— Աշխենին տարանք հիվանդանոց. խնդրեց ձեզ հանձնել։

Հրանտի ականջի տակ ասես ռումբ պայթեց։

— Հիվանդանո՞ց,— հաղիվ շշնջաց նա ու փլվեց աթոռին։

— Ի՞նչ պատահեց ձեզ, ընկեր Ստեփանյան, դուք նույնիսկ գունատվեցիք, երևի վատ բան անցավ ձեր մտքով. ոչինչ չկա,— աղջիկը և զարմացած էր, և մի քիչ էլ՝ վախեցած։ Ու բան չէր հասկանում։

— Ոչինչ, Թամար, հանկարծ, այո, վատ բան անցավ մտքովս, ախր, քույրս էլ հիվանդանոց պիտի գնար, իսկապես վախեցա,— թյու, սատանան տանի, խելքը գլխին սուտ հնարել էլ չի կարող... — Ախր Աշխենը լավ աղջիկ է, ես նրան շատ եմ հարգում։

— Դուք դեռ նրան լավ չգիտեք... Երեկ ինձ կանչել էր. երեկոյան գնացի։ Տեսա, որ ժամանակը մոտեցել է, գիշերը մնացի մոտը։

— Իսկ մորաքո՞ւյրը։

— Մորաքույրը հա սղոցում էր։ Զաչանակ կին է, չնայած նրան էլ չի կարելի մեղադրել։

— Հետո՞։

Հրանտին դժվարությամբ էր հաջողվում թաքցնել իր հոգու խռովքը։

— Լուսաբացին սկսվեց. շտապ օգնություն կանչեցի ու տարա ծննդատուն։ Առավոտյան դեռ ոչինչ չկար։

— Դեռ ոչինչ չկա, հա՞։

— Այո, աշխատանքի գալուց առաջ հանդիպեցի, ասացին մի երկու ժամից հետո... Այս նամակն էլ գրած էր, որ գնացի մոտը, ծրարը փակած. ասում է՝ սենյակի մասին է։ Մի բան արեք, ընկեր Ստեփանյան, շատ եմ խնդրում. պետք չէ, որ նա երեխայի հետ գնա մորաքրոջ տուն, նրան մի անկյուն է պետք։

— Այո, ճիշտ է, Թամար, ճիշտ է։

— Իսկ քաղաքից գնալուն, ամուսին կոչվածի մոտ տեղափոխվելուն չեմ հավատում. չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե նա էնպես, հնարեց այդ պատմությունը։

— Դե, ով գիտի, գուցե և ճիշտ է... իսկ տան համար մի բան կանենք, միայն ափսոս, որ հիմա չի լինի։ Գիտես, որ մեր բնակելի շենքը շահագործման կհանձնվի տարեվերջին. դեռ մի քանի ամիս կա։

— Ոչինչ, տուն կվարձենք, միայն թե այդ հույսը լինի։

— Այո, դու իրավացի ես, հույսը, այո...

Ցրված էր, անհամբեր, նամակը բացել էր ուզում, բայց Թամարի ներկայությունը խանգարում էր։ Գուցե զգաց աղջիկն այդ։

— Եթե պատասխան գրելու լինեք, ես կտանեմ։— Ու դուրս գնաց անաղմուկ։

Փակեց դուռը, ու վրա պրծավ նամակին։

«Գիտեմ, պատկերացնում ես, թե ինչքան եմ մտածել այս օրերին, եթե չեմ խելագարվել, ուրեմն անխելք գլուխ ունեմ։ Դե, դա նորություն չէ...

Հիմարս որոշեցի կատարել քո այս ցանկությունը ևս, այս անգամ էլ քեզ մերժել չկարողացա. իսկ կկարողանա՞մ երբևէ, չգիտեմ... Ծանոթ-բարեկամներիս կասեմ, թե անհաջող է անցել, երեխան, ձեռքս չի գրում... Դու քո ծանոթ բժշկի միջոցով կազմակերպիր. թող ձևակերպեն, իհարկե, եթե ամեն ինչ հաջող անցնի։ Միայն մորդ ուղարկիր, նրա միջոցով, թող կինդ չգա, խնդրում եմ»...

Ուրիշ ոչինչ։ Իսկ ուրիշ ի՞նչ էր պետք։

Հրանտը խելագարի նման դուրս փախավ առանձնասենյակից, նստեց մեքենան և ուղիղ ծննդատուն, ծանոթ պրոֆեսորի մոտ։ Նրա միջոցով իմացավ, որ երեխան լույս աշխարհ է եկել արդեն, տղա է ծնվել։

Այնպես լցված էր, եթե անհարմար չզգար, լաց կլիներ... Ամեն ինչ պատմեց բժշկին. մոտ մարդ էր, վստահել կարելի է։ Հավանաբար այդպես նախկինում հոգևոր հորն են պատմել իրենց մեղքերի մասին ու թողություն են խնդրել։ Մեղքը գործիր և թողություն խնդրիր. տարօրինակ է...

Հետո զանգահարեց իր մի ընկերոջը։ Վերցրեց նրան ու միասին քաղաքից դուրս գնացին։ Մի թաքուն խորտկարանում կերան, խմեցին։ Վաղուց նա այդքան շատ չէր խմել, և ոչինչ, չհարբեց։ Հետո քաղաք եկան, թափառեցին մինչև ուշ գիշեր, մի երկու անգամ ծննդատան կողքով անցան։ Կանգնում, նայում էր երկար լուսավոր պատուհաններին. ընկերը քաշում էր թևից, քայլել էր ուզում, իսկ նա համառում էր։

— Ախր դու ի՞նչ ես այսօր կպել այս հիվանդանոցից, ես ոչինչ չեմ հասկանում։

— Հենց ցավն էլ դրանում է, Սենո, որ դու բան չես հասկանում։ Սա հիվանդանոց չէ, իմացիր, այստեղ մարդ է ծնվում, դու գիտե՞ս այդ. մարդ է ծրն-վո՛ւմ։ Տեսնո՞ւմ ես, պատուհանների տակ ինչքան մարդ կա հավաքված, տես ինչ ուրախ լուրերի փոխանակ է, ահա, տես, տագնապահար ժամանողներ կան ու ժպտերես մեկնողներ և մեկնողը հարստացած է, ավելացած. դու հասկանո՞ւմ ես։

— Այսօր բանաստեղ ես դարձել։

— Ա՜խ, Սենո, դու ոչի՞նչ չես հասկանում...

Թափառում էին երկար, և զարմանալի բան, տուն գնալու ոչ մի տրամադրություն չուներ Հրանտը։

Մորն ու կնոջը պատմեց միայն հաջորդ օրը, հիվանդանոցից հայտնել են, որ հարմար երեխա կա, եթե ուզում եք...

«Եթե ուզում եք», մայրը թերահավատ տղային նայեց, Նվարդը շնչակտուր վրա տվեց.

— Իսկ դու ի՞նչ ասացիր, Հրանտ, գնո՞ւմ ենք, ի սեր աստծո...

— Դե, եթե չեք առարկում, ուրեմն հարցը լուծված է։

— Ի՞նչ առարկելու մասին է խոսքը, Հրանտ, խնդրում եմ առիթը բաց չթողնես։

Առիթը... Զարմանալի է, չէ՞, այս հարցում էլ իր ու Նվարդի կարծիքը համընկնում էր... Իսկ ուրախությունն ափերից թափվում էր։

Մայրը դեռ լրիվ չէր ապաքինվել, բայց և այնպես նրա միջոցով ուտելիք էր ուղարկում հիվանդանոց, և ընդունում էր Աշխենը։

— Աղջիկ ջան, իմացա, որ մայր չունես, հաշվիր, թե ես քո մայրն եմ.— ու լաց եղավ տիկին Լուսիկը, երբ առաջին անգամ տեսավ Աշխենին։ Ինչո՞ւ լաց եղավ, ինքն էլ չիմացավ։

— Շնորհակալ եմ, մայրիկ,— Աշխենն էլ լցված էր,— ես չգիտեմ...

— Ոչինչ, աղջիկ ջան, դու դեռ ջահել ես, ու լավն ես, քո բախտը կգտնես։ Միայն աշխատիր էլ չմխայվել։

Հիմա էլ Աշխենը փլվեց, լալիս էր, ուղղակի մղկտում էր։ Իսկ տիկին Լուսիկը նրան մխիթարում էր։

— Հանգստացիր, աղջիկս, քոռանա նրա աչքը, որ քեզ լավ չի տեսել։

— Մի՛ անիծիր, մայրիկ, պետք չէ,— արցունքների միջից աղաչում էր Աշխենը,— նա լա՞վն է...

— Լա՞վն է. բա ո՞ւր է հիմա... Դե, ասենք, գուցե մեր բախտն է... Հանգստացիր, աղջիկս, քոռանա՞մ ես։ Լավ սիրտ ունես։ Քո երեխային ես էնպես կպահեմ։ Մենակ խընդրում եմ մի քանի օր ավելի մնաս հիվանդանոցում, գլխավոր բժիշկը խոստացել է պահել, մինչև ուրիշ կերակրող ճարենք։

Լուսիկ մայրիկը խոսում էր, իսկ Աշխենը լալիս էր աղեկըտուր...

27.

Օրերն անցնում էին, իսկ Աշխենի հոգում գնալով փոթորիկը սաստկանում էր։

Ամեն անգամ, երբ երեխային բերում էին կերակրելու, մոռացվում էր շրջապատը, աշխարհը, ամեն ինչ, մնում էր իր փոքրիկ Հրանտը։ Իսկ ինչո՞ւ Հրանտ։ Այնպես է երազել իր արու զավակին հոր անունը տալու մասին, հիմա չի համարձակվում, մի տեսակ սրբապղծություն է թվում հեռուներում մնացած հոր անունը դնել այս ապօրինի զավակի վրա... Մի՞թե իսկապես ապօրինի է։ Իսկ ի՞նչ է հապա. օրինակա՞ն է, այդ դեպքում ինչո՞ւ ես թաքնվել, ինչո՞ւ ես թաքց-

նում։ Վերջապես խոստացել ես երեխային տալ նրան, թող իրենք էլ անուն դնեն, քե՞զ ինչ, նա այլևս քոնը չէ, դու միայն կերակրող ես, մի քանի օրվա ստնտու... Տեր աստված, ինչպե՞ս է ծծում մոր կաթը. աչքերը փակ են, բայց դա չի խանգարում, որ նա անսխալ գտնի մոր ստինքը։ Այս ի՞նչ անմեկնելի զգացում է, որ նրան կապում է այս մի բուռ նորածնի հետ։ Ինչո՞ւ օր-օրի վրա ավելի է հեռանում երեխային նրանց տալու միտքը. ավելի համառ է դառնում երեխային իր հոր անունը տալու որոշումը...

Վերջին անգամ Հրանտին հանդիպեց ծննդատուն գալուց մի ամիս առաջ։

Հրանտը խոստացել էր աղջկան չգնալ մոտը, բայց չկարողացավ, չդիմացավ։ Մի մառախլապատ երեկո, իր կամքից անկախ, ծեծեց նրա տան դուռը։

Աշխենը խենթի նման վեր թռավ տեղից. փաթաթվեց Հրանտի վզով ու համբուրում էր և լալիս, լալիս էր ու համբուրում։

— Ես չեմ դիմանա, Հրանտ, ասա, խորհուրդ տուր, ի՞նչ անեմ, ես գժվում եմ առանց քեզ, ասա,— ու համբուրում էր, նորից, նորից։

— Եթե կարողանայի խորհուրդ տալ, եթե մի խելոք խորհրդատու լիներ,— աղջկան գրկից բաց չթողնելով խոսում էր Հրանտը։— Ասա, խնդրում եմ, մարդ կարո՞ղ է միաժամանակ սիրել երկուսին, հավասարապես, առանց մնացորդի, խոսիր, Աշխեն, սիրելիս։

— Միաժամանակ երկուսի՞ն, չգիտեմ, երևի՝ ոչ։ Իսկ դա հնարավո՞ր բան է։

— Հապա ի՞նչ է իմ վիճակը,— Նվարդի հետ երջանիկ եմ զգում ինձ, բայց և կյանքը կիսով չափ կորցնում է իր իմաստը, երբ դու ինձ հետ չես, մանավանդ երբ սպասվող երեխային եմ նայում, ես ասես տեսնում եմ նրան, հավատո՞ւմ ես, և ամեն անգամ աչքիս առաջ դու ես, սա ինչ հանելուկ է. ինչպե՞ս ելք գտնեմ այս վիճակից։

— Ջարդել շարաբաստիկ եռոտանու մի ոտքը, փրկությունը սրա մեջ է։

— Ո՞րը, ինչպե՞ս։

— Հասկանալի է, ավելորդը ես եմ։

— Մի ասա, խնդրում եմ,— հիմա էլ Հրանտն էր խենթի պես համբուրում աղջկա այտերը, ձեռքերը,— որտեղի՞ց հայտնվեցիր դու իմ կյանքի ճանապարհին, իմ լավ, իմ խելոք, իմ անխիղճ բարեկամ. ապրում էի ինձ համար, ոչ դժբախտ, ոչ շատ երջանիկ։ Հիմա ո՞վ եմ ես, ինչի՞ նման է սա, ո՞ւր եմ գնում ես... Կարգին մարդ էի, պատիվ ու նամուս ունեի...

— Քեզ բոլորն էլ սիրում են, ի՞նչ է եղել քո անվանը, բոլորի աչքում էլ դու բարձր ես։

— Իսկ իմ աչքո՞ւմ, մարդ ամենից առաջ իր աչքում չպետք է ստորանա, թե չէ մարդիկ մեկը՝ տեսնում, տասը չեն նկատում, տասը՝ լսում, մեկին են հավատում։ Մարդու ամենաանաչառ դատավորն իր խիղճն է։

— Իսկ ի՞նչ ենք արել մենք խղճի դեմ, մի՞թե սիրելը հանցանք է, սիրած մարդու հետ լինելը՝ դժբախտություն։ Գոնե մի վատություն արա, Հրանտ, մի շատ վատ բան, հիասթափեցրու, գուցե դա կօգնի ինձ մի համարձակ որոշման հանգելու։

— Ավելի մեծ վատություն կարելի՞ է անել, քան այն, ինչ արդեն արել եմ ես։

— Դա քո հանցանքը չէ, Հրանտ, այլ դժբախտությունը, դու այդ չէիր ուզում, այդպես չէիր ուզում, համոզված եմ դրանում։ Բայց ստացվեց, քո կամքից էլ անկախ. դու մեղավոր չես, իսկական մեղավորը ես եմ։

— Նորի՞ց. ասված վկա, դու իզուր ես քեզ դատապարտում, Աշխեն, ախր իսկական մեղավորը, ոչ, հանցագործը ես եմ, ես քեզ, անփորձիդ, ճանապարհից հանեցի։

— Ճիշտ չէ, դու ինձ չհանեցիր, ես այդպես հեշտ դուրս եկողներից չեմ... Մենք միասին դուրս եկանք ճանապարհից, մեր սեփական կամքով, ու եթե մեղավոր ենք, ապա երկուսով, հավասարապես։

— Իսկ ինձ անընդհատ թվում է, թե մենք պարզապես անմեղ մեղավորներ ենք։

— Լավ անմեղ ենք։ Ու հիմա վայելում ենք այդ անմեղության պտուղը... Ինչ որ է, իզուր ենք կուրծք ծեծում, ուշացել ենք, անցածը ետ չես դարձնի։

— Հենց ամբողջ դժբախտությունն էլ դրանում է. կանդ-

նել ենք մի կախարդական փակուղու առաջ, ու ելքը չի երևվում։

— Իսկ դու մեղավոր ես փնտրում...

— Բայց դու մեղադրիր, դատապարտիր ինձ, Աշխեն, որպեսզի ես կարողանամ գոնե մի քիչ թեթև զգալ. ախր քո մեծ արտով դու սպանում ես ինձ.— Հրանտը լցվել էր ափեափ, թափվել կարող էր։

— Պետք չէ, սիրելիս, լսո՞ւմ ես, պետք չէ. և գուցե դեռ ամեն ինչ կորած չէ...

— Թույլ կտա՞ս մեկ-մեկ քեզ մոտ գալ,— երկար ընդմիջումից հետո հարցրեց Հրանտը։

— Իսկ դրա կարիքը կա՞։

— Եթե չլիներ, չէի ասի։

— Նոր սխալից եմ վախենում. գոնե հիմա խելոքանանք...

— Վատ բան չմտածես, խնդրում եմ։

— Այնուամենայնիվ ինձ թվում է, թե պետք չէ։ Չհանդիպելը գուցե կհեշտացնի հաշտվելու, համակերպվելու հնարավորությունը, իսկ հիմա կարևորը դա է։

— Լավ, կաշխատեմ չգալ... իսկ դու լավ եղիր, Աշխեն, աշխատիր լավ լինել, խնդրում եմ, քո վատ լինելը ես դժվար, շատ ծանր կտանեմ։ Իսկապես որ դժվել կարելի է...

28.

Հիվանդասենյակի քրոջ միջոցով ծննդատան գլխավոր բժշկից տեսակցության թույլտվություն խնդրեց։ Ու հիմա նստած է նրա առանձնասենյակում. ասես փշերի վրա է նստած։ Վաթսունին մոտ մարդ է, ճաղատ գլխով ու հաչա մորուքով։ Եվ այնքան շատ է ծխում, համարյա անընդմեջ։ Այսպես են այս բժիշկները, խելոք ու լուրջ խորհուրդներ կտան՝ այս չի կարելի, այն վտանգավոր է, իսկ իրենք, երևի իրենց ականջներին չեն հասնում այդ խորհուրդները... Բայց անխելքն ես, հա, անճար աղջիկ, ասես դրա համար ես եկել այս մոտ, ասելիքդ ասա, ի՞նչ ես կարկամել։

— Պրոֆեսոր,— դժվարությամբ սկսեց խոսքը— ես ձեզ մոտ եկել եմ մի ոչ սովորական խնդրով։

Շունչը կտրվում էր։ Ընդմիջեց, ուժեր էր հավաքում խոսքն իր ավարտին հասցնելու համար։

— Գիտեմ, պրոֆեսոր, ձեզ հայտնի է իմ պատմությունը։

— Դու Հրանտի... ընկերուհին չե՞ս։

— Այո։ Ուրեմն գիտեք։

— Գիտեմ, պատմել է ինձ։

— Եվ որոշել եք ձեր լուռ համաձայնությամբ օրինականացնել այդ ահավոր անարդարությունը։

Աշխենի ձայնը միանգամից կարծրացավ, կոշտ երանգ ստացավ։

— Դուք եկել եք ինձ մեղադրելո՞ւ.— պրոֆեսորը նկատելի զարմացած էր։

— Ես մեղադրելու իրավունք չունեմ, երևի, բայց ճշմարտությունը չասել չեմ կարող։

— Գիտեք ինչ, աղջիկս, մեղադրելը միշտ էլ հեշտ է, իսկ ամենաանմեղ մարդու համար անգամ պաշտպանվելը դժվար է... Ես ինչո՞վ եմ մեղավոր ձեր առաջ։

— Այ, դուք ինձ կոչում եք. «աղջիկս», ես շնորհակալ եմ այդ խոսքի համար... իսկ ձեր աղջիկը, հեռու իրենից, եթե իմ վիճակում լիներ, նրան թույլ կտայի՞ք այդ քայլին դիմելու։ Միայն խնդրում եմ ձեր անկեղծ խոսքը, պրոֆեսոր։

— Չէի թողնի, ոչ մի դեպքում։

— Հապա ինչո՞ւ չեք կանխում այս անարդար գործարքը։ Դուք, կարծեմ, մոտ եք այդ ընտանիքի հետ, ինչո՞ւ չեք արգելում։

Աշխենի աչքերում ասես կայծակներ էին բոցկլտում։

— Ներեցեք, ընկերուհի, ձեր հարցը ես համարում եմ անարդար ու անտեղի. որքան ինձ հայտնի է, այդ գործարքը կատարվում է ձեր համաձայնությամբ, դուք էլ արդեն անչափահաս չեք. ես ի՞նչ գործ ունեմ այստեղ։

— Ճիշտ է, դժբախտաբար, ես համաձայնություն տվել եմ ժամանակին։ Բայց, հավատացեք, ես ստիպված եմ եղել, վերջապես կարող էի և սխալվել, դուք ինչո՞ւ չեք փորձում ուղղել այդ ահավոր սխալը։

Ու չդիմացավ այլևս. լաց էր լինում։ Պրոֆեսորը ծխում էր լուռ։

— Գուցե և ինչ-որ տեղ դուք իրավացի եք, բայց, խնդրում եմ, ինձ էլ ճիշտ հասկացեք. Հրանտը իմ մոտ ընկերոջ տղան է, մի քանի տարի առաջ մահացավ հայրը։ Եվ ահա Հրանտը գալիս է ինձ մոտ ու ասում է, որ իրենց գործարանում մի ծանոթ աղջիկ երեխա պիտի ունենա, անհայր երեխա, և նա համաձայն է այդ երեխային իրենց տալ։ Ես ինչպե՞ս առարկեի, ի՞նչ հիմքով։

— Եվ չասա՞ց նա, թե դա ում երեխան է։

— Չասաց, և դա, ճիշտն ասած, ինձ չհետաքրքրեց էլ։

— Իզուր, պրոֆեսոր... Ամբողջ խնդիրը նրանում է, որ այդ երեխան իրենն է՝ Հրանտինը։

— Հրանտի՞նը, ես ոչինչ չեմ հասկանում։

— Ես սիրում եմ նրան, պրոֆեսոր, սիրում եմ ամենամաքուր սիրով. վատ բան չմտածեք, խնդրում եմ. ես դուրս ընկած աղջիկներից չեմ, հավատացեք... Գիտեմ նաև նրանց ընտանիքում երեխայի բացակայության մասին. այդ նուրբ հանգամանքն էր, որ ինձ խեղճացրեց, ստիպեց համաձայնվել... Հիմա չեմ կարող, հավատացեք, այս երկու շաբաթվա ընթացքում այնպես եմ կապվել այդ երեխայի հետ, որ նրանից ինձ միայն մահը կարող է բաժանել...

Աշխենի ձայնի մեջ այնպիսի վճռականություն կար, պրոֆեսորը չէր կասկածում մազաչափ անգամ, որ նա ընդունակ է ամենածայրահեղ քայլին։

— Չեմ տա իմ երեխային,— շարունակեց Աշխենը նույն վճռական շեշտով.— միայն Լուսիկ մայրիկին եմ խղճում. շա՞տ եմ խղճում, բայց, միևնույն է, տալ չեմ կարող։ Իմ երեխայի ու իմ դժբախտության գնով ուրիշի, եթե նույնիսկ այդ ուրիշը Հրանտն է, ընտանիքը բախտավորեցնել չեմ կարող. այդ արտակարգ վճռանձնությունն իմ ուժերից վեր է, չե՞մ կարող։

— Եվ ի՞նչ եք որոշել.— պրոֆեսորի ձայնի մեջ նորից տարակուսանքի շեշտեր կային։

— Որոշել եմ հեռանալ այս քաղաքից, փախչել բոլորից։

— Ինչպե՞ս,— պրոֆեսորի զարմանքը գագաթնակետին հասավ։

— Կվերցնեմ իմ բաժին Հրանտին ու կմեկնեմ այստեղից։

Առայժմ Մոսկվա, այնտեղ մոտ ընկերուհի ունեմ։ Հեռագրել եմ արդեն։ Այնտեղ չեմ մնա, իհարկե, կմեկնեմ անհայտ ուղղությամբ։ Կտեղավորվեմ մի տեղ, կաշխատեմ ու կմեծացնեմ տղային։ Ահա բոլորը։

— Իսկ այստե՞ղ,— հանկարծ պայթեց պրոֆեսորը,— այդ ձեր շատ սիրելի Հրանտի վիճա՞կն ինչ պիտի լինի. մտածե՞լ եք այս մասին։

— Շատ եմ մտածել, պրոֆեսոր, գլուխս պայթում է, հավատացեք։ Հրանտն էլ մեղք է, հասկանում եմ, բայց ուրիշ ելք չունեմ, չեմ տեսնում։ Թող ապրեն իրենց համար, օգնեցեք, թող երեխա վերցնեն։

— Նա իր երեխան էր ուզում ունենալ։

— Ես այստեղ ոչ մի մեղք չունեմ։ Թող ապրեն երջանիկ, ինչպես առաջ. ես մի թռուցիկ դեպք էի նրա կյանքում, եկա ու անցա...

— Շատ կդառնանան.— պրոֆեսորն ասես Աշխենին չէր դիմում, այլ ինքն իր հետ էր խոսում։

— Կդառնանան, ճիշտ է, բայց աստիճանաբար կհաշտվեն, կմոռանան։

— Եվ ձեր որոշումը վերջնակա՞ն է։

— Միանգամայն։ Ինքնաթիռի տոմսն արդեն գրպանումս է։

— Իսկ չե՞ք մտածում, որ կարող եք վտանգել երեխայի կյանքը. դեռ քսան օրական էլ չկա նա, և այդքան հեռու ճանապարհ։

— Մտածել եմ, բայց ուրիշ ելք չկա, որոշված է վերջնականապես։

— Այդ դեպքում իմ անելիքը ո՞րն է, ինչո՞ւ եք եկել ինձ մոտ, մի՞թե ձեր այդ որոշման մասին ինձ տեղյակ պահելու համար։

— Ոչ, իհարկե, դրա համար նեղություն չէի տա... Պրոֆեսոր, այսօր շաբաթ է, տիկին Լուսիկն արդեն եկել-գնացել է։ Ինձ դուրս են գրելու երկուշաբթի։ Խնդրում եմ կիրակի առավոտյան շուտ ինձ հնարավորություն տաք ուղիղ օդանավակայան գնալու։ Ընկերուհիս մեքենայով կգա իմ ետևից։ Ահա իմ միակ խնդրանքը։

Պրոֆեսորը լուռ էր երկար ժամանակ։ Քայլում էր առանձնասենյակում ու ծխում էր, ծխում էր։ Իսկ Աշխենն անհամբեր պատասխանի էր սպասում։

— Գիտեք ինչ, օրիորդ, թեկուզ և մայր եք արդեն... Երեսունհինգ տարվա բժիշկ եմ, դեռ այսպիսի անելանելի դրության առաջ չեմ կանգնել։ Դուք ինձ և ջղայնացնում, և միաժամանակ զինաթափ եք անում։

— Պրոֆեսոր, ես ուրիշ ելք չունեմ։

— Իսկ ես ի՞նչ պիտի ասեմ իմ ընկերոջ հարազատներին, մտածե՞լ եք այս մասին. դա դավաճանություն չի՞ դիտվի։

— Դավաճանությունը երեխային մորից բաժանելն է, պրոֆեսոր, դուք իզուր եք այդպես անհանգստանում։

— Իսկ երեխային հորից բաժանե՞լը, սա՞ ինչպես եք որակում։

— Այդ երեխան նրանց երջանկություն չի բերի, պրոֆեսոր, հավատացեք. ի վերջո կինը կիմանա, գժտություն, ընտանիքի քայքայում. պե՞տք է դա։

— Դուք այնպես հանգիստ եք խոսում, սատանան տանի։

— Այնքան ծանր ու թեթև եմ արել այս օրերին, իսկ այդ հանգստությունը...

Աշխենը ոտքի կանգնեց։

— Այդպես, այդպես։

— Ես համոզված եմ, պրոֆեսոր, որ դուք անհրաժեշտ կարգադրություն կանեք, և հետո, մինչև իմ մեկնելը նրանց ոչինչ...

— Լսեք, ընկերուհի, դուք ինձ ո՞ւմ տեղն եք դրել։— Վերջապես տրտնջալով ներկայացավ իր սրտի մաղձը թափելու,— գնացեք, ասված ձեզ հետ։ Երևի նրանք առանց ձեզ էլ կկարողանան ապրել...

— Շնորհակալություն, պրոֆեսոր։ Ջմեղադրեք ու չդատապարտեք ինձ, խնդրում եմ... Իսկ Հրանտին ես նամակ կգրեմ, նա կիմանա ինչ իրեն պետք է... ու խնդրում եմ նաև Լուսիկ մայրիկին իմ անունից ներողություն խնդրեցեք. ասացեք թույլ գտնվեցի, չկարողացա իմ խոսքի տերը լինել. նա մայր է, ինձ կհասկանա։

Եվ Աշխենը շտապ դուրս եկավ պրոֆեսորի առանձնասենյակից, ասես մեկն այնտեղ անհամբեր սպասում է իրեն՝ այլևս մի վայրկյան անգամ ուշանալ չի կարելի...

29.

Հիմա տաքսիով օդանավակայան են շտապում։ Թամարի ու Սմբատի հետ է։ Սրանք եկել են մեխակների մի մեծ փունջ ձեռքներին, իսկ իր սրտում ծաղիկի համար տեղ կա՞։

— Ի՞նչ եք լցրել այդ ճամպրուկների մեջ, Թամար, բեռս ծանրացրել եք։

— Քո իրերն են, այն, ինչ, իմ կարծիքով, քեզ պետք կլինի։ Մորաքրոջդ համոզեցի, որ տուն ենք վարձել քեզ համար, տեղափոխվում ես։ Մի քիչ թոնթորաց, կարծեմ լաց էլ եղավ...

— Իբր թե տուն չե՞նք վարձել.— Սմբատն է միջամտում խոսակցությանը։

— Իսկապես, այնքան արևոտ սենյակ է. ճիշտ է, մի քիչ ծայրամասում է, բայց պարտեզ կա առաջը, ափսոս, որ չես ապրելու։ Դե, ոչինչ, կգնանք, կհրաժարվենք, ինչ անենք, որ այսպես ստացվեց։

— Թամար, սիրելիս, ինչի՞ եք հրաժարվում այդ լավ սենյակից. ավելի ճիշտ չի՞ լինի, եթե Սմբատի հետ տեղափոխվեք այնտեղ, մինչև տուն կստանաք գործարանից։ Ընկեր Ստեփանյանը խոստացել էր...

Այս ազգանունն ասես այրեց շրթունքները, կանգնեց խոսքի կեսին, կարկամեց։ Սմբատն ու Թամարը ոչինչ չնկատեցին, նրանց միտքն ուրիշ տեղ էր...

— Մենք որպես ի՞նչ ենք գնում այդ սենյակը։

Թամարի հարցը հազիվ լսվեց։

— Որպես նորապսակներ... Սիրելիներս, ախր դուք սիրում եք իրար, ինչի՞ եք ուշացնում։ Ամուսնացեք, բախտավորվեցեք։ Ես, ամենամեծ մեղապարտս օրհնում եմ ձեր պսակը։

— Աշխեն քույրիկ, ինձ համար դու աշխարհի ամենաարդար ու մաքուր մարդն ես,— Սմբատը կարմրելով թոթվեց Աշխենի ձեռքը։

— Շնորհակալ եմ, Սմբատ։ Դե, տիրելիներս, պարեք երկար, ծլեք, ծաղկեք, մի բարձի ծերանաք։— Ու Աշխենը հերթով ձեռքը դրեց Սմբատի ու Թամարի գլխին։

— Եթե դեմ չեք, ընդունեցեք և իմ շնորհավորանքը,— տաքտու վարորդն էր, տարեց մի մարդ։

— Շնորհակալ ենք, հայրիկ։

Թամարի կոկորդում ինչ-որ բան դեմ է առել ու խոսել չի թողնում։ Երեխային վերցրեց Աշխենի գրկից ու երկար նայում էր հանգիստ քնած մանկանը։

— Ինչ խելոք երեխա է։ Աղջի, էս ինչ բան է, ուզում եմ մեկին նմանեցնել, ու չեմ կարողանում։

— Գիժ-գիժ մի խոսի, թող քնի երեխան, ու շտապ ծածկեց մանկան դեմքը։

Հետո օդանավակայանում ձևակերպեցին տոմսը, ճամպրուկները հանձնեցին։ Աշխենի գրկին միայն երեխան մնաց ու մի թեթև պայուսակ, ուտելեղեն էր, Թամարն էր պատրաստել։

— Իսկական գիժ, ի՞նչ պիտի անեմ էսքանը,— ու ընկավ ընկերուհու վզով, հազիվ պահեց արցունքները։

— Նամակ կգրես, այ, չմոռանաս, ու ծուլություն չանես։

— Թամար ջան, չնեղանաս, երևի չգրեմ...

— Ինչո՞ւ, ինչպե՞ս թե։

— Դե, տեսնենք, եթե ժամանակ եղավ...— Փոխեց խոսակցության թեման։— Զասացիր, թե լաբորատորիայում ի՞նչ կա, ի՞նչ են խոսում իմ մասին։

— Բանի տեղ մի դիր, համ նալին են խփում, համ մեխին, չգիտես, որ առանց վայրահաչության չի լինի, ո՞ր մեկին հասկացնես... իսկ գործերը լավ են, եռամսյակի պլանը գերակատարվել է, պարգև-հավելում են տվել, ահա, աշխատավարձիդ հետ միասին էլի մի բան է, պետք կգա։ Երեկ մի կերպ ստացա. ախ այդ տառակեր հաշվապահները...

— Շնորհակալ եմ, Թամար.— այս անգամ արցունքները զսպել չկարողացավ. երկար ժամանակ լալիս էր թաշկինակի մեջ։

Աշխենը դժվարությամբ բաժանվեց Թամարից ու Սմբատից։ Ծանր էր բարձրանում ինքնաթիռ. ոտքերը դժվար

էին քայլ կատարում. երեխան էր նրան տանում, թեկուզ և քնած էր...

Այս ո՞ւր է գնում, ի՞նչ է տանում, ո՞ւմն է թողնում, ինչպե՞ս...

30.

Խորհրդակցությունը երկար տևեց, ժողովականները ցրվում էին խոսելով, վիճելով։

Հրանտը բացեց պատուհանը ու ծխում էր ինքնամփոփ։ Դեռ ինչքան նրբություններ կան, որոնց խորքը չի թափանցել ինքը. շարքային բանվորն անգամ այնպիսի մտքեր է շոշափում, այնպիսի առաջարկություններով է հանդես գալիս, որ զարմանում ես, թե ինչպես է, որ ինքդ չես կռահել այդ։

Մի բան ճշմարիտ էր, այն, որ գլխավոր ինժեների աշխատանքը գործարանում կանոնավոր հունի մեջ էր մտնում։ Ու հեշտացել էր ասես, ավելի շատ բան էր անում, առանց ավելորդ վազվզոցի, առանց նյարդայնության։ Ինքը գոհ էր իր աշխատանքից, և այդ համարում էր բավարար ընթացք։ Եվ ոչ միայն ինքը։

— Դու արդեն իսկական գլխավոր ես, Հրանտ, ես ուրախ եմ քեզ համար,— մի անգամ ասաց դիրեկտորը։

— Շնորհակալ եմ, Սուրեն Մարտիրոսովիչ, ձեր օգնությամբ...

Քարտուղարուհին մոխրամաններն է հավաքում, աթոռները կարգի բերում։ Մեկ էլ Հրանտը շուռ եկավ, ու դռների մեջ Թամարն էր կանգնած։

— Կարելի՞ է,— և առաջ եկավ անվստահ։

— Խնդրեմ, ի՞նչ է պատահել.— Հրանտի քունքերակը կրկնակի արագություն վերցրեց։

— Այս նամակը... խնդրեցին ձեզ հանձնել.— մի գունատ ծրար դրեց սեղանին, երկար մի հայացքով նայեց Հրանտին ու թափով ետ դարձավ։

— Նամա՞կ,— ծրարի վրա ոչինչ չի գրված,— ի՞նչ նամակ է, ո՞վ խնդրեց։

Իսկ աղջիկն արդեն դուրս էր եկել առանձնասենյակից։

Մի ուրիշ խորհրդակցության պիտի գնար, դիրեկտորի

մոտ, իսկ անստորագիր ծրարն ասես գրպանից փախչել էր ուզում։

Վերջապես ժամանակ գտավ առանձնանալու և ծրարը բացելու համար։ Իզուր չէր, որ այն այրում էր գրպանը...

«Հրանտ, խնդրում եմ լսես ինձ ու չդատապարտես։ Արդեն քանի ամիս է ելք եմ փնտրում այս վիճակից։ Գտել եմ վերջապես։ Ճիշտ թե սխալ, այս է, ավելի խելոք որոշման հանգել չկարողացա...

Մենք միասին երջանիկ լինել չենք կարող, ավելի ճիշտ՝ միասին լինել չենք կարող, էլ ինչ երջանկության մասին է խոսքը։ Ես քեզ այնքան եմ սիրում, որ միայն քո լավը ցանկանալ կարող եմ, և այդ լավն ասում է ինձ, թելադրում է այս քայլը — հեռանալ Երևանից, քեզնից։ Ծանր է, բայց սա է ելքը. փրկություն չկա։ Դու կնոջդ լքել չես կարող, այդպիսի մարդ չես դու, և ես էլ չեմ թողնի։ Հիշո՞ւմ ես, մի անգամ ես քեզ սպառնացի՝ եթե երեխա չունենալու պատճառով դու բաժանվես քո կնոջից, ես քեզ կատեմ... Դու այդ չես անի, և ես այդ հնարավորությունը քեզ չեմ տա։ Ոչ թե նրա համար, որ ես չեմ ուզում, հազար անգամ ոչ, այլ որովհետև դու դրանով կդժբախտանաս միայն։ Դու ինձ մոտ չես կարող գալ, և, ոչ թե նրա համար, որ ես չեմ ուզում, հազար անգամ ուզում եմ, այլ որովհետև դու ինձ հետ երջանիկ լինել չես կարող, ոչ թե ինձ հետ, այլ՝ առանց քո ընտանիքի, այս է դառն իրողությունը, և փրկությունը միայն իմ հեռանալու մեջ է...

Եվ, ամենակարևորը, որոշեցի հեռանալ երեխայիս հետ, չկարողացա խոստմանս տերը լինել։ Ներիր ինձ, հազար անգամ մեղա եմ գալիս, մեղավոր եմ քո առաջ, մանավանդ՝ Լուսիկ մայրիկի... Այնպես եմ կապվել երեխայիս հետ, որ իմ կյանքն առանց նրան չեմ պատկերացնում։ Կամ ինքնասպան պիտի լինեի, կամ երեխայիս հետ հեռանայի Երևանից։ Առաջինի համար համարձակություն չներեց, և հիմար քայլ էի համարում դա։ Ընտրեցի երկրորդը։ Դատապարտիր ինձ ինչքան կարող ես, բայց և ներիր, խնդրում եմ...»։

Հրանտի շունչն ասես կտրվում էր, օդի պակասություն էր զգում. վեր կացավ պատուհանը բացելու, իսկ այն բաց

էր, ծխախոտ վառեց, բայց ծխել չկարողացավ, խեղվում էր անփորձ ծխողի նման։

«...Չկարծես, թե ես էժան նահատակ եմ ձևանում և հեշտ ու խաղաղ զոհում եմ իմ երջանկությունը, ոչ, ամենևին ոչ։ Եթե հնարավոր լիներ, եթե համոզված լինեի, ատամներով կպաշտպանեի իմ երջանկությունը, բայց ավա՜ղ, ոչ մի հեռանկար չկա։ Այստեղ մնալով ես երջանկություն չեմ ունենա, և ոչ թե նրա համար, որ դու այդ չես ուզում, ո՛չ։ Մնացի, պատճառ կդառնամ քո և քո ընտանիքի դժբախտության։ Մնացի, կհանդիպենք, դու ինձ մոտ չգալ չես կարող, ես առանց քեզ մնալ չեմ կարող. հետևանքը, հասկանալի է, կբացվի մի օր վարագույրը, ու կտեսնեն մարդիկ, ոտնատակ կգնա մեր մաքուր սերը, և, որ ամենասարսափելին է, կմոլորվի քո անունը, իսկ ես քեզ այնքան եմ սիրում, որ այդ ստորացման ճանապարհը բռնել չեմ կարող։ Հանուն այդ սիրո էլ ես պետք է հեռանամ...

Հիշո՞ւմ ես քեռի Սամսոնն ինչ ասաց, երբ առաջին անգամ հանդիպեցինք շինարարության վրա.— «պիստոնով աղջիկ է, զգույշ կաց»։ Վարպետ Հարությունն էլ (ես նրան նեղացրի, խիղճս հանգիստ չէ) ավելացրեց. «Երևում է գրպանում բարութ կա, կորաքացնի»... իսկապես որ պիստոն կար, ո՞ւր կորավ, իսկ կյանքում այնքան պետք է այն։ Վառոդն էլ խոնավ դուրս եկավ։ Եվ քանի լրիվ չի թացացել, գոնե ինձ «տրաքացնեմ»...

Հիշո՞ւմ ես, թե ինչպես այն օրը, երբ միասին գնացինք մինչև մեր դուռը (մորաքրոջս տուն), ճակատագրական օր... Դու զարմացած հարցրիր. «իսկ ինչո՞ւ մութ է ձեզ մոտ, ո՞վ է հանգցրել լույսը»։ Ես պատասխանեցի, թե լույսը հանգցնելու համար նախ պետք է վառել այն... Այդ օրը անսպասելի վառվեց իմ լույսը, և ի՜նչ հրաշալի լույս էր, բայց ավա՜ղ երկար ապրել չկարողացավ, հանգավ ատիճանաբար... Ես գնում եմ նոր լույս վառելու հույսով»...

Հրանտը նորից ընդմիջեց. ջուր խմեց, երկու բաժակ իրար ետևից. նորից ծխախոտ վառեց ու անցավ հաջորդ էջին.

«...Մի մոտ ընկերուհի ունեմ, ինստիտուտը միասին ենք ավարտել։ Հեռու, շատ հեռու մի տեղ է աշխատում։ Նամակագրական կապ ունեմ նրա հետ, քեզ չեմ ասել, ուրիթ չի

եղել։ Գրել եմ, պայմանավորվել ենք. նրա մոտ եմ գնում, Մոսկվայով։ Նոր է ամուսնացել, երեք սենյակ ունեն. մեկում կապրեմ, մինչև աշխատանքիս հարցն էլ լուծված է արդեն, տեղ կա։ Տեսնո՞ւմ ես, բավական լուրջ զբաղվել եմ այս հարցով. գոնե այս անգամ թռի-վռի գործ չեմ բռնում։ Կգնամ ու կաշխատեմ նոր կյանք սկսել։ Դժվար կլինի, բայց ով գիտի, գուցե և կհաջողվի։ Ժամանակն ու տարածությունը դաժան գործոններ են, նրանք կօգնեն ինձ...

Կարևորն այն է, որ ինձ հետ է փոքրիկ Հրանտս, նա թեվեր կտա ինձ, չի թողնի, որ կորչեմ։ Եվ համոզված եմ, նա կվառի իմ տան ճրագը։ Երանի՜ այդ օրվան...

Թե ուր եմ գնում, հասկանալի պատճառով չեմ ասի, և հասցես էլ քեզ թողնել չեմ կարող. կներես։

Եվ ինձ չփնտրես, խնդրում եմ, պետք չէ։ Սա իմ առաջին խնդրանքն է։

Ինձ բնակարան պիտի տայիք. հարցը համարյա դրական լուծման էր սպասում։ Այդ սենյակը տուր Թամարին, Սմբատի հետ նրանք շուտով պիտի ամուսնանան։ Սա իմ երկրորդ խնդիրքն է։

Իմ աղատման մասին դիմումը Թամարի միջոցով կհանձնվի լաբորատորիայի վարիչին։ Խանգարող ոչինչ չկա, ոչ էլ հանձնելու բան ունեմ, կձևակերպեն։ Թամարն էլ չգիտի, թե ուր եմ գնում. տեսնո՞ւմ ես ինչ գաղտնապահն եմ...

Իսկ քեզ հաջողություն եմ ցանկանում, ու մեծ, շատ մեծ երջանկություն։ Ես գնում եմ՝ սրտիս մեջ տանելով մի ջերմ ու քաղցր զգացում, և այդ զգացումն է ինձ կապում կյանքի հետ, նրա օգնությամբ է, որ ես պիտի փորձեմ նոր կյանք սկսել...

Մնա խաղաղությամբ. զավակներ ունեցիր ու երջանիկ եղիր...»։

Հրանտն ասես քարացել էր նստած տեղը. ոչ մի շարժում, ոչ մի զգացում. միայն բութ մի ցավ էր կրծում սիրտը, հոգեմաշ, տանջահար մի ցավ։ Ոչ միայն իր աշխատասենյակը, աշխարհն ասես դատարկվել էր, ոչ մի հենարան, ոչ մի փրկություն, միայն զարմանքի մի զգացում կես հարցականի նման կախվել էր նրա ուղեղում՝ ինչպես է, որ այս բոլորից

հետո շնչել եմ կարողանում, ինչպես է, որ աշխարհը շուտ չի գալիս գլխին...

Գնացել է, տարել է երեխային և հայտնի չէ, թե ուր, նա ինչպե՞ս կարող էր այդքան դաժան գտնվել...

Քարտուղարուհին ներս մտավ.

— Հրանտ Արշակովիչ, ձեզ սպասող կա։— Հետո միանգամից ճչաց սարսափահար.

— Վայ, ձեզ ի՞նչ է պատահել, Հրանտ Արշակովիչ, վա՞տ եք զգում, ձեր դեմքին գույն չկա։ Ջուր տա՞մ, ահա՛։

— Այո, վատ լուր եմ ստացել ընկերոջս մասին,— հազիվ կարողացավ նամակը վերցնել սեղանից ու գրպանը խոթել։— այո՛, շատ տխուր լուր...

31.

Մեռելատանն ավելի հեշտ է լինում շնչել, քան այդ երեկո Հրանտենց տանն էր։ Իրենք երեքով էին, ու եկել էր նաև ծննդատան գլխավոր բժիշկ Գարեգին Սավոյանը։

— Ախր կարգին աղջիկ էր երևում, էս ինչ օյին բերեց մեր գլուխը. անամոթ աղջիկ.— մղկտում էր Լուսիկ մայրիկը։

— Լուսիկ, դու նրան իզուր ես մեղադրում, մոր սիրտ է, երևի չի դիմացել։

Պրոֆեսորի ձայնն անվստահ էր հնչում։

— Գարեգին, դու այսօր աչքիս մի տեսակ ես երևում, ի՞նչ ես հա էդ աննամուսին պաշտպանում... Անամոթը խոստացավ տալ երեխային, հետո էլ վերցրեց թաքուն ու փախավ, բա սա մարդկությո՞ւն է։ Ով գիտի ում հետ էր լրբություն արել...

— Լուսիկ, էդպես չի կարելի, դու նրան կարգին չես ճանաչում։

— Երեխա է ունենում, հոր անունը չգիտի, ուրիշ ի՞նչ ես ուզում. մնացածն ինչի՞ս է պետք։

— Մայրն իր երեխային ուրիշի տալ չի կարողացել, և նրան դատապարտում է մի ուրիշ, ավելի մեծ կենսափորձ ունեցող մայր. բա եղա՞վ, սա բանի նմա՞ն է։

Հրանտը, որքան էլ անսպասելի հարվածից հավասարա-

կշռությունը կորցրած, բայց և այնպես զարմացած լսում էր պրոֆեսորի խոսքերը ի պաշտպանություն Աշխենի։ Ինքը նրան ոչինչ չի ասել, կարո՞ղ է Աշխենն է պատմել, գաղտնապահ Աշխենը կարո՞ղ էր նրա առաջ բացել իր սիրտը, սպասելու բան չէ։ Բայց պրոֆեսորի դիրքն իսկապես որ անհասկանալի է. մեղադրանքի և ոչ մի խոսք, մի՞թե ամենինչ գիտի, այդ հո խայտառակություն կլինի։ Եվ ինչո՞ւ ինքը ժամանակին չպատմեց նրան. մի՞թե դա ավելի ազնիվ ճանապարհը չէր։ Ազնվության մասին ես բարբաջում... Եվ ինչպես է, որ կիրակի առավոտյան այդքան շուտ նրան դուրս են գրել հիվանդանոցից, մի՞թե պրոֆեսորի մասնակցությունը կա այս գործում։

Ու երկար նայում է հոր մանկության ընկերոջը. պրոֆեսորը փախցրեց հայացքը. չդիմացա՞վ, թե իրեն թվաց միայն։

— Այդ աղջիկը գնալուց առաջ ինձ մոտ մտավ։

Պրոֆեսորն ասես Հրանտի չտված հարցին է պատասխանում։

— Ի՞նչ էր ուզում,— Լուսիկ մայրիկն է հարցնում։

— Դուրս գրվելու թույլտվություն էր խնդրում։

— Եվ դու չարգելեցի՞ր նրան։— Լուսիկի շունչը կտրվում էր։

— Չէի կարող, իմ ուժերից վեր էր։

— Ա՜հ, Գարեգին, դու ինձ բոլորովին...

— Չէի կարող, Լուսիկ, հասկացիր, իրավունք չունեի... Նա հատուկ խնդրեց քեզ իր ներողությունը հաղորդել։

— Ինձ շա՜տ պետք է։ Էդ անամոթը... Բայց վատ աղջիկ չէր, աստված վկա, ես նույնիսկ սկսել էի նրան սիրել։ Ի՞նչ արեց անխիղճը...

— Բա հիմա ի՞նչ պիտի անենք, այս ինչ դժբախտություն է.— մղկտում է Նվարդը ու մի աղոտ հույսով ամուսնու կողմն է նայում։

— Ողբերգություն սարքել պետք չէ. ուրիշ երեխա կճարենք.— պրոֆեսորի ձայնի մեջ մի զարմանալի ամուր շեշտ կա։— Ես անձամբ կզբաղվեմ այդ հարցով։ Մոռանանք այս բոլորը, պետք չէ նվնվալ։

— Իսկ հնարավո՞ր է մոռանալ,— հանկարծ պահի լարվածությանը չդիմացավ Հրանտը։

— Հնարավոր է, և դու պարտավոր ես՝ առաջին հերթին։

Ի՞նչ է ակնարկում պրոֆեսորը, և ինչո՞ւ հերթ սահմանեց ու հերթագրվածի առաջինի պատիվն իրեն տվեց, տե՞ր աստված, այս ինչ կասկածներ են, որ մտել են սրտի ծալքերը ու դուրս գալ չեն ուզում։ Եվ ինչպե՞ս կարող են դուրս գալ, քանի չեն պարզել ջրերը, չի անցել սրտի պղտորությունը։ Իսկ ե՞րբ են պարզելու, և իր պաշտպանական ճառով պրոֆեսոր Սավոյանն ավելի շպղտորե՞ց այն։ Ի՞նչ է լինելու սրա վերջը, տե՞ր աստված...

32.

Ամբողջ գիշեր Հրանտն աչք փակել չկարողացավ։ Իսկ մայրն ու կինը ավելի լավ վիճակո՞ւմ էին...

Ինչո՞ւ այսպես ստացվեց, այս ի՞նչ անսպասելի վախճան էր. վախճա՞ն է արդեն, վե՞րջ. մի՞թե փրկություն չկա։ Հրանտի սրտում մի ահավոր դատարկություն էր տիրում։ ի՞նչ կարելի է անել այլևս։ Պրոֆեսոր Սավոյանն առաջարկում է ուրիշ երեխա վերցնել, չի կարող, ոչ, դա անհնարին բան է։ Եվ իր երեխային տեսնել չկարողացավ, գոնե մի անգամ, թեկուզ աչքի պոչով։ Անարդար աշխարհ... իսկ պրոֆեսորը պաշտպանում է Աշխենին, ինչպե՞ս էր պաշտպանում, մի՞թե նա արժանի է դրան, նա, որ այդ աստիճան դաժան գտնվեց իր նկատմամբ... իսկ ինչո՞ւ է դաժան, և ո՞վ է ձեզնից դաժանը,— հակաճառել սկսեց մի ներքին ձայն.— և ո՞րն է դաժանությունը...

Հրանտը ցավով նկատում էր, որ գնալով կարոտն ահագնանում է իր մեջ, ոչ միայն երեխայի, այլ, գուցե ավելի շատ Աշխենի նկատմամբ։ Այնպես կուզենար հիմա տեսնել մայրացած Աշխենին՝ իր ոսկեվարս մանչուկը գրկին։ Իսկ ինչո՞ւ անպայման ոսկեվարս։ Ա՜հ, սատանան տանի, այսքան անխելք ու խառը մտքերից մարդ իսկապես որ կարող է խելագարվել...

Առաջին իսկ վայրկյաններին որոշեց անմիջապես թռչել Մոսկվա, նույնիսկ մեքենա կանչեց՝ օդանավակայան գնալու համար։ Բայց հետո գլուխ բարձրացրեց սառը դատողությունը. նա երեկ է թռել Մոսկվա, իր գրածի համաձայն այսօր

պետք է մեկնի անհայտ ուղղությամբ, ո՞ւր ես գնում, որտե՞ղ ես նրան փնտրելու, ո՞վ է նրա ընկերուհին, հասցե ունե՞ս։ Ու անօգնական փլվեց բազկաթոռին։ Հետո՞։ Ի՞նչ հետո, ուրեմն նոր հանդիպում չի՞ լինելու. գոնե հանդիպման հույս մնար, -ախր առանց այդ հույսի հնարավոր չի լինի ապրել...

Կողքի մահճակալին անօգնական շուռ ու մուռ էր գալիս Նվարդը։

— Հրանտ, ինչի՞ չես քնում. վաղը ո՞նց պիտի աշխատես։

— Իսկ դո՞ւ, ի՞նչ ես ախ ու վախ անում, վերջապես ի՞նչ է եղել,— իրենից անկախ ձայնը բարձրացավ։

— Կամաց, մաման կլսի. այնպես ես գոռում, կարծես... Ես ի՞նչ անեմ, գուցե պրոֆեսորի ասած մի ուրիշ երեխա...

— Այդ ուրիշի մասին այլևս խոսք չլինի, խնդրում եմ, գոնե մի որոշ ժամանակ, հասկանո՞ւմ ես, հիմա պետք չէ, հիմա հնարավոր չէ...

— Իսկ ինձ թվում էր, թե ավելի հեշտ կլիներ, եթե հիմա, արագ... Վերջ ի վերջո մեզ համար ի՞նչ տարբերություն. այդ մի ուրիշը գուցե ավելի բախտավոր երեխա կլիներ...

— Հնարավոր չէ, հասկացիր վերջապես։

— Դե որ ասում ես...

— Քնիր, քնիր։

— Փորձենք։ Քոռանա իմ բախտը, որ քոռացել է զույգ աչքով...

33.

Մինիստրությունից մասնագետներ են եկել, նոր արտադրանքի թողարկման ժամկետներն են ճշտում։ Ամեն ինչ չէ, որ կարգին է. ուշանում են, նախապատրաստական աշխատանքներում էլ թերություններ կան։ Եվ այս բոլորի մեջ, իհարկե, առաջին մեղավորն ինքն է, գործարանի գլխավոր ինժեները։ Գլխավոր, իսկ գործն ինչպես պետք է գլխավորել չի կարողանում։ Եվ ինչպե՞ս կգլխավորես, եթե գլխումդ անընդհատ խառը մտքեր են թափառում, եթե ժամերով ու օրերով մտածում ես Աշխենի ու նրա փախցրած երեխայի մասին։ Փախցրա՞ծ. այս անհամ հորը տեսեք, իր երեխային

ոչ միայն տեսնել չկարողացավ, այլ նրա տեղն անգամ չգիտի։ Իսկ դու ուրիշ ինչի՞ էիր արժանի...

Այդ անիրավ Թամարն էլ չի երևում, իսկ ինքը անհարմար է զգում նրան կանչել։ Իզուր, ի՞նչ կա որ, կանչիր, հարցրու, ի՞նչ, նրա բերած նամակի՞, թե՞ Աշխենի գնալու մասին ես հարցնելու, և մի՞թե նա ամեն ինչ գիտի։ Համենայն դեպս կիմանա, կասի, թե ուր ճանապարհեց աղջկան։ Բայց այդ դու էլ գիտես, նա գրել է նամակում. թե՞ կասկածում ես նրա գրածի վրա։ Հետո՞. գուցե Թամարը կիմանա՞ այդ հետոյի մասին։ Այո, պետք է խոսել Թամարի հետ։

Իսկ ինչո՞ւ այսպես ստացվեց։ Եվ մի՞թե ավելի լավ կլիներ, եթե Աշխենը չդիմեր իր խոսքը, այսինքն՝ երեխային թողներ ու ինքը մենակ գնար. հեռանար այս քաղաքից, որպեսզի չխանգարեր մեր ընտանեկան երջանկությանը։ Չխանգարեր... Անձնազոհություն ես պահանջում, իսկ ինքդ ընդունա՞կ ես այդպիսի քայլի։ Թող քո անձնազոհությունն էլ երեխայի կորուստը լինի. ոչ թե կորուստը, այլ քեզնից հեռանալը, ինչի՞ ես խուճապի մատնվել, ի՞նչ ես ուզում դու այդ աղջկանից, վերջապես ի՞նչ է քո տվածը... ինչպես թե, մի երեխա, մի ամբողջ աշխարհ։ Իսկ դա միայն քո՞նն է. ոչ, երկուսինդ է։ Ոչ, առաջին հերթին նրանն է, դու ավելորդ ես, հասկացիր, ա-վե՞լորդ...

Լաբորատորիայի հետ կապված մի նոր գործ կա. վարիչը գործուղման մեջ է. չկանչի՞ Թամարին, առիթ է, նաև կխոսի։ Սատանան տանի, դե ինչ մի դատապարտելի բան կա դրա մեջ, կանչիր, հարցրու, գուցե և մխիթարական մի բան կասի։

Ձեռքը տարավ զանգի կոճակին, բայց չհասցրեց սեղմել։ Ներս մտավ քարտուղարուհին՝ մի թուղթ ձեռքին։

— Հրանտ Արշակովիչ, հեռագիր է, Մոսկվայից։

Հրանտի գլխին ասես մուրճի հարված իջավ. շնչառությունն արագացավ միանգամից, գույնը դարձավ պատի ծեփ։

— Հեռագիր, Մոսկվայի՞ց,— հազիվ կարողացավ շշնջալ։

— Ի՞նչ պատահեց ձեզ, ընկեր Ստեփանյան,— նորից անհանգստացավ աղջիկը,— սովորական հեռագիր է, ձեզ կանչում են խորհրդակցության։

— Խորհրդակցությա՞ն,— Հրանտը, որ ոտքի էր կանգնել, հենվեց աթոռին։

Քարտուղարուհին շտապ ջուր տվեց նրան։

— Ի՞նչ եղավ, ընկեր Ստեփանյան։

— Սիրտս... սկսել է չարություն անել... ոչինչ, կանցնի... Տուր հեռագիրը։ Իսկ ինձ սպասող կա՞։

— Լաբորատորիայի Թամարն է։

— Վաղո՞ւց է սպասում... Ներս կանչիր։

Ու հիմա նստել են դեմ-դիմաց, չգիտեն ինչից սկսել, ինչի մասին խոսել։

— Նոր հաշվումներ են պետք. ես Ելակետային տվյալներ կտամ. շտապ պետք է կատարել, կհասցնե՞ք երկու օրում։

— Կանենք, ընկեր Ստեփանյան։

Հանկարծ հիշեց Աշխենի նամակի տողը. «Սա իմ առաջին խնդրանքն է»։ Գոնե մի բանով օգտակար եղիր նրան, այս մի խնդրանքը կատարիր։

— Թամար, Սմբատի հետ ե՞րբ եք լուծում ձեր ամուսնության հարցը,— փորձում էր ժպտալ, չէր ստացվում։

— Դրա համար էլ եկել եմ, ընկեր Ստեփանյան, ուզում եմ ձեզ հարսանիքի հրավիրել։

— Արդե՞ն, դա լավ է,— անկեղծորեն ուրախացավ Հրանտը,— սիրով կգամ։ Իսկ տան հա՞րցը ինչպես եղավ։

— Աշխենի համար տուն էինք վարձել. դե, որ նա գնաց, մենք կտեղափոխվենք այդ սենյակը, մինչև...

— Մինչև գործարանը ձեզ տուն կտա. «Սա իմ առաջին խնդրանքն է»... ես հաստատ խոստանում եմ, Թամար, և դա կլինի գործարանի հարսանյաց նվերը։

Ինքն էլ էր զարմացել, թե ինչպես է խոստանում, այն էլ առանց տատանվելու, երբ գիտի, որ այդ հարցի լուծումը միայն իրենից չի կախված։ Սմբատը և Թամարը մեր գործարանի լավագույն աշխատողներից են, նրանք արժանի են այդ ուշադրությանը.— ասես ոչ թե Թամարի հետ է նստած, այլ մտքով ելույթ է ունենում բնակարանային հանձնաժողովի նիստում։

— Շնորհակալ եմ, ընկեր Ստեփանյան, Սմբատն էլ շատ կուրախանա...

Լռեցին։ Սպառվե՞ց խոսակցության նյութը, իսկ հիմնա-

կանը, ինչ քեզ տանջո՞ւմ է։ Ախր Թամարն ինքն այդ առիթը տվեց.— Աշխենի համար սենյակ էինք վարձել։

— Ինչո՞ւ այդպես վարվեց քո ընկերուհին, Թամար, գուցե քեզ ասե՞լ է պատճառների մասին։

Եվ ինչպիսի՜ անհամբերությամբ է սպասում հարցի պատասխանին։

— Իբր թե ես գիտե՞մ, ընկեր Ստեփանյան։ Շատ փակ աղջիկ է, մինչև վերջ էլ չասաց, թե այդ ում երեխան է և ուր է գնում ինքը։ Երեխայի հայրն, ասում է, ուրիշ քաղաքում է, իսկ ես, մեղքս ինչ թաքցնեմ, չեմ հավատում։ Չէ, շատ փակ աղջիկ է։

— Գուցե քեզ դեռ նամակ կգրի։

— Դժվար թե։ Ես այնպես հասկացա, որ նա ուզում է իր նոր ապրելավայրը թաքցնել մեզնից։ Ասենք թե այդ երեխայի անամոթ հորից է փախչում, և չի ուզում, որ նա իմանա իր տեղը, ինձնի՞ց ինչու էր պահում, ոչինչ չեմ հասկանում։

— Գուցե և նա իրավացի է, Թամար, ի՞նչ գիտես... Արի նրան չմեղադրենք։ Բայց այ, որ իր տեղը նաև քեզնից է թաքցնում, իր մոտ ընկերուհուց, դա լավ չէ ու նաև հասկանալի չէ։

— Գուցե դեռ կգրի,— այնքան թերահավատ է Թամարի «գուցեն»։

— Եթե նամակ գրի, և դու պատասխանելու լինես, իմ կողմից էլ բարևներ հաղորդիր, այնուամենայնիվ մենք վատ ընկերներ չենք...

— Անպայման, ընկեր Ստեփանյան։ Ավելի ճիշտ, ես նրա հասցեն կտամ, դուք նամակ կգրեք. շատ կուրախանա, նա ձեզ շատ էր հարգում։

— Եթե, իհարկե, նամակ գրի Աշխենը։

— Այո, եթե գրի։

— Աշխենը գիտի չէ՞, որ ամուսնանում եք. մի՞թե գոնե հեռագրով չի շնորհավորի։

— Նա գնալու օրը մեզ շնորհավորեց, օրհնեց, ջերմ խոսքեր ասաց։

— Այո՞, հեռատես է եղել քո ընկերուհին...

Զարմանալի ճկունություն ունի մարդուս միտքը, ինքն իր

վրա զարմանում էր Հրանտը։ Ա՜յ, հիմա խոսում է Թամարի հետ, բայց միտքն ուրիշ հարցով է զբաղված։ Ժամանակին եկավ այս հեռագիրը։ Կգնա Մոսկվա, մի քանի օրով գոնե կհեռանա իրեն տանջող այս մթնոլորտից, մանավանդ՝ տնից, երեխա վերցնելու՝ այդ այժմ արդեն ահավոր խոսակցությունից, Աշխենի հասցեին շռայլվող մոր անեծքներից, Նվարդի քարացած դեմքից։ Կհեռանա մի քանի օրով։ Գուցե և կմոռանա՞ Աշխենին, կամ, նույնիսկ, կհանդիպի՞ նրան... փընտրելու ոչ մի հույս. այդ հսկայական քաղաքում ինչպե՞ս գտնես Աշխեն Մարգարյանին, ո՞ւմ հարցնես։ Իսկ նա Մոսկվայո՞ւմ է. չէ՞ որ գրել է։ Աշխենը սուտ չի ասի։ Պաշտպանում ես, երբ նա արժանի չէ դրան։ Սուտ չի ասի... բայց գաղտագողի փախչել կարող է, ո՞չ, փախցնել նաև, և այն էլ ո՞ւմ...

— Ընկեր Ստեփանյան, մի տեսակ ցրված եք երևում, հովատ չե՞ք զգում։

Սթափվեց։ Իսկապես, Թամարն իր խոսքին է սպասում, իսկ ինքն արդեն հասավ Մոսկվա։ Տիծաղելի է...

— Մի քիչ, այո... գործերը խառն են։ Մոսկվա պիտի գնամ, խորհրդակցության, ահա հեռագիրը։ Վաղը թռչում եմ։ Ափսոս, որ ձեր հարսանիքին մասնակցել չեմ կարող... Իսկ մի ներքին ձայն, հին սովորության համաձայն, ըմբոստանում է անարգել,—ստում ես, ոչ էլ ափսոսում ես, որ չես կարող։ Ընդհակառակը, ուրախ ես, որ հարգելի պատճառ կա հրաժարվելու։ Ինչո՞ւ, որովհետև չես գնա, չես կարող գնալ, ուրիշի ուրախությունը կիսելու համար էլ տրամադրություն է պետք։ Իսկ քո տրամադրության վրա սև ջուր են մաղել...

34.

Երկու ամսից ավելի է, ինչ Հրանտը չի եղել շինարարությունում։ Ինչո՞ւ։ Առաջ համարյա շաբաթը մեկ հանդիպում էր։ լսում էր բրիգադիրի ցանկություններն ու առաջարկությունները, օգնում էր, ինչով կարող էր։ Իսկ հիմա պատիվացել է, գլխավոր ինժեներ դառնալուց հետո միայն մի անգամ է գնացել։ Զարմանալի լավ ընդունեցին, մանավանդ քեռի Սամսոնն ու վարպետ Սարգիսը։ Շնորհավորեցին նոր պաշ-

տոնը, լավ-լավ հաջողություններ մաղթեցին։ Քեռի Սամսոնը կատակով ավելացրեց նաև.

— Ես հույս ունեմ, որ գլխավոր դառնալուց հետո մեզ չես մոռանա։

Աստված վկա, չի մոռացել, պարզապես ժամանակ չունի։ հիմա, մանավանդ, այնքան է զբաղված. դիրեկտորն էլ արձակուրդում է, ծանրությունը կրկնակի է դարձել. եթե աշխատանքային օրը քսան ժամ լիներ, նորից չէր բավականացնի։ Թե՞ չափազանցում է, իսկ ուրիշներն ինչպե՞ս են տեղը տեղին հասցնում...

Այսօր մի կերպ միջոց գտավ կես ժամով շինարարների մոտ լինելու։ Մոտենում էր մանկապարտեզի շենքը շահագործման հանձնելու ժամկետը, ուզում էր ստուգել, համոզվել։

Գնաց ընդմիջման ժամին։ Նախաճաշելու տրամադրություն չուներ, ընդհանրապես վերջերս ախորժակը շատ վատ է, անկանոն է սնվում. նիհարել է նկատելի։ Եվ տանը խոսակցության համար նոր դուռ է բացվել, Նվարդը սղոցում է, սղոցում է, առանց հասկանալու, որ իր այդ ափելորդ ուշադրությամբ միայն տհաճության տոկոսն է բարձրացնում։

Շինարարները մտերիմ ընկերոջ նման ընդունեցին։

— Մեր գլխավորն է եկել. այ բարով տեսանք, Հրանտ ջան, ինչպե՞ս ես, ոնց որ նիհարել ես, հո հիվանդ չե՞ս։

— Չէ, քեռի Սամսոն, լավ եմ, ուղղակի գործերս շատ են, չեմ կարողանում ձեզ մոտ գալ։

— Հասկանում եմ, ախպոր տղա. կատակ բան չէ գլխավոր լինելը։ Տնեցիներդ ինչպես են։

— Շնորհակալ եմ, վատ չեն։ Իսկ վարպետ Հարությո՞ւնն ուր է, ինչ-որ չի երևում։

— Գյուղ է գնացել, ախպոր տղա, մեր հեռու բարեկամներից մեկը մի լավ աղջիկ ունի, գնացել է տեսնի, գուցե ուզենք։

— Լավ է արել, Հարությունին մի հալալ կաթնակեր աղջիկ է սազում։

— Դե, էն ձեր Աշխենը որ քթին տվեց... Շատ է վառվել տղան, էնպես է կոտրվել։ Հետո որ իմացավ էդ աղջիկը երե-

խա է ունեցել, մի տեսակ թեթևացավ. կամ հավատաց, որ իսկապես ընկեր ընի նա, կամ էլ մտածեց, թե վատ վարքի տեր աղջիկ է, որ էդպիսի դալաթ է արել...

— Չէ, Աշխենը վատ աղջիկ չէ, միայն...

— Գյուղից նամակ էինք ստացել. քույրս էր գրել, այնինքն՝ Հարությունի մայրը. ասում է շատ լավ աղջիկ է, բաց թողնելու բան չի։ Մենակ զարմանալի է, որ դրա անունն էլ է Աշխեն... Գնաց Հարությունը. տեսնենք կհավանե՞ն իրար։ Ես, գուցե հին մարդ եմ, ախպոր տղա, բայց էլի մնում եմ էն կարծիքին, որ քո ճիպոտը քո քոլից պիտի կտրես։ Ձեր Աշխենը լավ աղջիկ էր, բան չունեմ ասելու, բայց մեր բանը չէր, մեր այգու ծաղիկը չէր, գուցե հենց դրա համար էլ...

Եվ հանկարծ՝ Թամարն ու Սմբատը։ Առաջին անգամն էր Հրանտը նրանց միասին տեսնում։ Ինչպես էլ սազում են իրար, չնայած Սմբատը շատ է հաղթանդամ ու կոշտամարմին, իսկ Թամարը՝ չափազանց նուրբ ու փափուկ։ Ասես մեկը մյուսին լրացնում է. եթե գումարես ու բաժանես երկուսի, ինչպես ընկերներից մեկն էր ասում, կստացվի երկու իսկական միավոր...

— Դե, սիրելի ջահելներ, մեկ անգամ ևս ընդունեցեք իմ շնորհավորանքները ձեր ամուսնության առթիվ, թող ձեր սերն ու հարգանքը անպակաս լինի։

— Շնորհակալ ենք, ընկեր Ստեփանյան, ստացել ենք Մոսկվայից ուղարկած ձեր հեռագիրը, շատ լավ էիք գրել, հենց ուրախության ժամանակ կարդացին բարձրաձայն։— Սմբատն է խոսում։ Թվում է թե մի քիչ երես առած տղա է, բայց տես, կարմրում է նաև։

— Իսկ գործարկոմի նախագահ ընկեր Զավենը հանդիսավոր պայմաններում մեզ հանձնեց բնակարանի բանալիները։ Ձեր օգնությամբ, ընկեր Ստեփանյան, շատ ենք շնորհակալ։

Թամարը և հուզված է, և շփոթված։

Մխիթարվեմ նրանով, որ Աշխենի առաջին խնդրանքն արդեն կատարված է,— ինքն իրեն մտմտում է Հրանտը։

Այս ո՞ւր գնաց քեռի Սամսոնը։ Ահա, գալիս է՝ ձեռքին օղու շիշ ու երկու բաժակ։

— Աղջիկ ջան, տղա ջան,— դարձավ նորապսակներին,—

ափսոս, որ իմանայի գալու եք, մի կարգին նվեր կբերեի հետս։ Ոչինչ, էս մեռոնի ջրով կօրհնենք ձեր պսակը,— լցրեց բաժակները,— ձեր կյանքի ճամփան միշտ կանաչ լինի, ձեր տոքի տակ ընկած քարը երկուսով հեռացնեք, իրարից չկրշտանաք, երկար ումբր ունենաք, լավ-լավ զավակներ ունենաք ու նրանց բարը վայելեք, ձեր երեխաները հերթով էս մանկապարտեզը գան, ամեն.— ու մի շնչով վուլ տվեց բաժակի պարունակությունը։

— Ես իմ ստորագրությունը սիրով դնում եմ քեռի Սամսոնի օրհնանքի տակ,— ու Հրանտը խմեց մյուս բաժակի օդին։

Քեռի Սամսոնը նորից լցրեց բաժակները ու մեկնեց ջահելներին.

— Դե, հիմա էլ դուք խմեցեք։

Թամարը մի կում արեց միայն, ու հազիվ էր թաքցնում տհաճությունը։

— Լավ արեցիր, աղջիկ ջան, սա կնիկարմատի գործ չի... Այ տղա, նկատել եք, հիմիկվա ջահել աղջիկները մեկ-մեկ էնպես են խմում։ Ծխում էլ են։ Չէ, ես չսիրեցի էդ բանը։ Կնիկ արմատն ինչ, խմիչքն ինչ։ Ես երևի հին մարդ եմ. «շատ ես ետ մնացել կյանքից, պապի», մեկ-մեկ թոռս ձեռ է առնում ինձ։ Իսկ իմ կարճ խելքով էսպես ետ մնալն ավելի լավ է, քանց անհամ առաջ վազելը։ Հը՞, ի՞նչ կասես, Թամար։

— Ճիշտ եք ասում, քեռի Սամսոն, ես ձեզ հետ լրիվ համաձայն եմ։

— Ապրես, զորանաս, աղջիկս... Դե, եկեք հիմա միասին նայենք մեր արած ու չարած գործերը։ Ահա, տանիքի աշխատանքները վերջացրել ենք, դուռ-լուսամուտ դրված է, սանտեխնիկան ավարտելու վրա ենք. կմնա սվաղն ու սպիտակեցումը, մեկ էլ մի քանի մանր գործեր։ Իմ հաշվով մի ամիս հետո շենքը պատրաստ կհանձնենք տիրոջը. երկու հարյուր հիսուն երեխա թող բարով գան իրենց օջախը։

— Լավ է, քեռի Սամսոն, գոհ ենք, շնորհակալ ենք։— Ու անմիջապես մտքի ծալքերում մի հաճելի լույս առկայծեց.— իսկ ինչո՞ւ չպարգևատրենք լավ աշխատողներին. կասեն մեր հաստիքային ցուցակում չկա, հետո՞ ինչ։ Իսկ մանկապարտեզի շենքը ո՞ւմ համար են կառուցում։ Պետք է գտնել ել-

քը, այդ ձևական հանգամանքը լավ մտահղացումը ձախողել չի կարող։ Կկանչենք գործարան և կոլեկտիվի ներկայությամբ...

Հրանտի մեքենայով միասին վերադարձան գործարան։

— Ընկեր Ստեփանյան, Մոսկվայում պատահաբար չհանդիպեցիք մեր Աշխենին,— հանկարծ հարցրեց Թամարը,— էդպես էլ նամակ չգրեց։

Հրանտն անակնկալի եկավ. ինչո՞ւ, սատանան տանի, ինչո՞ւ է ամեն անգամ նրա անունը լսելիս խուճապի մատնվում։

— Չհանդիպեցի, դժբախտաբար... իսկ նա Մոսկվայո՞ւմ է հիմա։

— Գիտե՞մ, որ ասեմ։ Բայց հավատում եմ, որ Մոսկվայում չէ... Ինչ գաղտնապահն է. անշնորհք գաղտնապահ։

— Դե, դե, Աշխենի մասին վատ բան չասես,— հանկարծ պաշտպանության անցավ Սմբատը,— նա լավ աղջիկ է, շատ լավը, միայն այդպես էլ չիմացանք, թե ով էր այդ սրիկան, որ նրան խաբեց...

Հրանտը նորից մոռացավ իր ասելիքը։

«Այդ սրիկան»,— ահա ճշմարիտ գնահատականը։ Էլ ասելու բան մնա՞ց որ...

35.

Գործարանում գործը սկիզբ ու վերջ չուներ. պլան, խորհրդակցություն, մատակարարման ու առաքման դժվարություններ, բանվորների կարիքների բավարարում, մեկը մյուսից բարդ ու ձանձրալի հաշվետվություններ, վերադասի ստուգումներ, ո՞ր մեկին հասնես, ինչպե՞ս ընդգրկես բոլորը, ինչպե՞ս մեկը չզոհես մյուսին։ Առայժմ գլխավոր ինժեներ Հրանտ Ստեփանյանն այդ բոլորն ի մի բերել չի կարողանում, համենայնդեպս ինքն իրենից գոհ չէ, չնայած դիրեկտորը դժգոհ չէ, նույնիսկ մեկ-մեկ գոհունակության խոսքեր է ասում։ Սակայն գործերի վիճակն այնքան էլ լավ չէ, և Ստեփանյանն այդ հարցում առաջին մեղավորն իրեն է համարում, այս է հարվածի ամենացավոտ կետը։ Ամբողջ օրը եռուզեռի մեջ է, իրեն չի խնայում, բայց և այնպես հաջ-

մարյա ամեն օր տուն է գնում ծանրացած սրտով, օրվա ընթացքում նախատեսած հարցերի մի մասը չլուծած։ Ճիշտ է, դրանց մի մասը հաճախ, այսպես կոչված, օբյեկտիվ պատճառների արդյունք են լինում, բայց և այնպես, գլխավորը դեռ գործը կարգին գլխավորել չի կարողանում, սա փաստ է, տխուր, դատապարտելի, բայց անառարկելի փաստ։

Իսկ երբ այդ ծանրացած սրտի վրա տանն էլ մի նոր բեռ են ավելացնում, շնչելը բոլորովին դառնում է անհնարին... Իսկ առաջ այդպես չէր, ընդհակառակը, տանը բեռնաթափվում էր, թեթևանում, շնչառությունը դառնում էր կանոնավոր, զարմանալի համաչափ։ Առաջ։ Այդ ե՞րբ էր, մի տարի առաջ. հիմա ի՞նչ պատահեց։ Մայրը ծերանում է արագ, օր ու մեջ հիվանդ է, Նվարդի ունքամեջը չի բացվում, համարյա չեն խոսում իրար հետ, ասես վաղուց սպառվել է ասելիքը, իսկ առաջ ինչո՞ւ անսպառ էր թվում...

Այսօր մորաքույր Սրբուհին է եկել իրենց տուն։ Օրը կիրակի է։ Բարեբախտաբար Նվարդը տանը չէ, մորը տեսության է գնացել։ Բարեբախտաբար, իսկ ինչո՞ւ, և միայն Հրանտի՞, թե՞ նաև՝ մոր ու մորաքրոջ կարծիքով... Իսկ մորաքույր Սրբուհին փակ դուռ չունի, և գործ չունի ավելորդ նրբանկատության հետ։ Ինչ մտածեց, այն էլ կասի. «ծուռ ու մուռ» քայլել չգիտի։ Ու միանգամից հարձակման անցավ։

— Հրանտ, դու իմ աչքում միշտ խելոք տղա ես եղել, ես պարծեցել եմ քեզնով, հիմա ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես խենթացել, թե՞ կարծում ես, որ պաշտոնդ բարձրացրին, ուրեմն խելքդ էլ շատացավ։ Սխալվում ես, տղա ջան։

— Մորաքույր, ի՞նչ ես ուզում ասել, քեզ լավ չեմ հասկանում։

— Ասեմ էնպես, որ հասկանաս, մարդուս խելքը առաջին հերթին իր տանը պիտի երևա, իր ընտանիքում. էդպես է, լամպն իր տակը որ լույս չտվեց, հեռու տեղը չի լուսավորի, չէ։ Չնեղանաս, ես քո էդ խելքն ու լույսը ինչ-որ չեմ տեսնում, էդ ո՞նց պիտի լինի։

— Իսկ ի՞նչ անեմ, որ տեսնես. կամ գուցե իսկապես անխե՞լք եմ.— Հրանտը փորձեց կատակի տալ։ Իսկ մորաքույր Սրբուհին կատակելու տրամադրություն չուներ։

— Առանց երեխայի տունն ինչի՞ է պետք։

— Դե, ուզում էինք երեխա վերցնել,— միջամտեց տիկին Լուսիկը,— էն էլ...

— Լուսիկ, դու տուս արա,— վրա պրծավ քրոջը,— ուզում էինք երեխա վերցնել, ինչի՞, ավելի լավ չէ՞ քո երեխան պահես։

— Իսկ որ չի լինում։— Հրանտն ինքն էլ ջղայնանում էր իր վրա, ախր ինչո՞ւ է մեղավորի նման պատասխանում, և ի՞նչ իրավունքով է մորաքույրը դատախազի դեր ստանձնել, հարցաքննում է, ո՞ր մեղքի համար։ Եվ առանձնապես զարմանալի էր այն, որ Հրանտը համոզված է, առաջ կառարկեր մորաքրոջը, կլռեցներ նրան, իսկ հիմա ինքն է պարտվողի դերում, և այդ դերը նույնիսկ դուր է գալիս իրեն...

— Չի լինում, ուրիշ կնիկ բեր, աշխարհը հո չի՞ քանդվել։

— Սրբուհի՛,— պաղատական տոն կար Լուսիկի բացականչության մեջ։

— Մի անխելքն էլ դու ես, քույրիկս, մեր ու տղա թրսթրսում եք, մեջտեղը ոչինչ չկա։

— Մորաքույր, ես խնդրում եմ.— Հրանտի ձայնը նկատելի կոշտացավ...

— Քո խնդրանքն ինձ բոլորովին էլ պետք չի, հասկացիր, Հրանտ, սա կյանքի հարց է, օջախի ծուխը ծխելու հարց է... Գիտեմ, Նվարդը լավ աղջիկ է, լավ հարս է, բայց ի՞նչ անենք, որ դժբախտ է, մենք է՞լ դժբախտանանք։ Մի անհաջող փորձից հետո էլ բան չկա, երևի չստացվի։ Հետո՞։ Գնա մի կարգին կնիկ բեր, երեխաներ ունեցիր, թող քույրս էլ մի քիչ ուրախանա։ Այ, թե ով է մեղք։

— Իսկ Նվարդը մեղք չէ՞ հա՞,— հանկարծ պայթեց Հրանտը,— այ թե անխիղճն ես եղել, մորաքույր, չգիտեի, աստված վկա, չէի սպասում, որ մայրն այդքան դաժան կարող է լինել։

Մորաքույր Սրբուհին հանկարծակիի եկավ. այդպիսի մեղադրանք չէր սպասում։ Բայց հավաքեց իրեն.

— Էդ ես եմ անխիղճը հա՞, լավ ես ասում, քվոր տղա, էդ հալա ինձ քիչ է։ Որ ուզում եմ կարգին տուն-տեղ դառնաք, մարդավարի ընտանիք լինեք, էդ է իմ անխղճությունը հա՞, շատ լավ ես ասում։— Ու վեր կացավ տեղից։

— Մորաքույր, դու իզուր ես նեղանում,— նահանջելու փորձ կատարեց Հրանտը,— և արի բարեկամաբար պայմանավորվենք, դու իմ ընտանեկան գործերին մի խառնվիր, շատ եմ խնդրում, ես երեխա չեմ, ինքս կդասավորեմ իմ կյանքը։

— Հա՞, լավ, դե, դասավորիր։ Համա որ ոտքդ նորից քարին առավ, ինձ մոտ չգաս, ես էլ քեզ խորհուրդ տվողը չեմ։

Ասաց, շտապ վերցրեց գլխաշորն ու առանց մնաք բարով ասելու դուրս գնաց տնից։

Թափով բացված և աղմուկով փակված դռան տակ ծվարեց մի ծանր լռություն...

36.

Առանձնապես անմխիթարական էր Նվարդի վիճակը։ Թվում էր, թե ոչինչ չի փոխվել, բայց իրականում ամեն ինչ տակն ու վրա էր եղել։ Կեսուրը ժամերով բերան չէր բացում։ Հրանտը հաճախ երեկոներն ուշ էր տուն գալիս։ Առաջ էլ պատահում էր, ժողով է, կամ ընկերների մոտ է, բայց անպայման կզանգահարեր, կզգուշացներ, որ չանհանգստանան։ Հիմա զանգ չկա, տուն գալուց հետո էլ չի ասի, թե որտեղ էր, ինչու ուշացավ։ Առաջվա նման օրվա անցուդարձից իրար չեն պատմում։ Մի խոսքով իրարով չեն ապրում, ինչո՞ւ։

Հարևաններից իմացավ, որ Հրանտի մորաքույրը կիրակի օրն իրենց տուն է եկել, իսկ կեսուրն ու Հրանտը՝ այդ մասին ոչ մի խոսք. մոռացե՞լ են, թե՞ կարևորություն չեն տալիս։ Ոչ մեկը, ոչ մյուսը։ Բացբերան կին է տիկին Սրբուհին, չնայած իր նկատմամբ միշտ լավ է եղել։ Բայց հիմա, այս լարված ու տխուր օրերին նրա գալը լավ բան ենթադրելու հիմք չի տալիս։ Ափսոս, որ ինքը տանը չի եղել, թե՞ լավ է, որ չեն հանդիպել...

Բայց այսպես շարունակել չի կարելի։ Հրանտի հետ պետք է լուրջ խոսել, վերջապես ի՞նչ է եղել, ինչո՞ւ այսպես սև հագավ պարզ օրը, ո՞ւմ մեղքով, մի՞թե միայն իր։ Եվ ո՞րն է իր մեղքը, երեխա չունենա՞լը։ Իսկ դա մե՞ղք է, թե՞

դժբախտություն... Սև լինի այն օրը, երբ ինքը վիժեց։ Նորմալ հղիություն ամուսնության առաջին տարում, ինչպիսի՞ հպարտությամբ ու հաճույքով էր կրում իր բեռը, և ինչքան զգույշ էր, Լուսիկ մայրիկն օրվա մեջ մի քանի անգամ այդ մասին էր հիշեցնում։ Եվ, հանկարծ, այդ ահավոր ողբերգությունը, մայրանալ չկարողացավ։ Պատճա՞ռը, այդպես էլ չպարզված մնաց։ Պրոֆեսոր Սավոյանի կարծիքով անզգույշ շարժման կամ ծանր բեռ բարձրացնելու արդյունք էր։ Իսկ ինքը չի հիշում այդպիսի դեպք, այդպիսի օր։ Բոլոր դեպքերում ձախողված էր երեխայի լույս աշխարհ գալու գործը, իսկ, ասում էին, տղա էր սպասվում... Քոռանա բախտ բաժանողի աչքը, ո՛ւմ էր մի վատություն արել, ինչո՞ւ իրեն զրկեցին մայրանալու հաճույքից, դաժան բնություն, և մի՞թե փակված դռներն այլևս չեն բացվելու. ախր դա կրկնակի դաժանություն է... Եվ փոխանակ իր այս վիճակում Հրանտը հոգեկան նեցուկ հանդիսանա, կնոջը ոտքի վրա պահի, ոտնատակ է տալիս նրա ինքնասիրությունը, այրվող սրտին նոր կրակ է ավելացնում։ Ե՞րբ է նա այդքան դաժան եղել, թե՞ նրան էլ հավասարակշռությունից հանել է այս նույն ձախորդությունը։ Իսկ ե՞ս ինչ եմ անում նրա հոգեկան հավասարակշռությունը պահպանելու համար, մի՞թե այսպիսի դեպքերում միայն պահանջում են, իսկ տալիք չկա՞։ Բայց և այնպես...

Այսօր Հրանտը տուն եկավ աշխատանքը վերջանալուց անմիջապես հետո։ Համարյա միաժամանակ տուն մտան։ Մայրը տանը չէր, ճաշը պատրաստել, գնացել էր աղջկա մոտ։ Երկուսով սեղան նստեցին, լուռ ճաշում էին։ Նվարդը գինի լցրեց Հրանտի բաժակը, սա հրաժարվեց։ Նվարդը չհամբերեց։

— Ինչո՞ւ, դու ճաշին սիրում ես մի բաժակ գինի խմել։

— Այսօր տրամադրություն չունեմ։

— Կարգին չես էլ ուտում, ի՞նչ է պատահել։

— Ոչինչ։ Գործարանում նախաճաշել եմ։

— Իսկ հիմա ճաշի ժամ է։

— Լավ, ինչի՞ համար է այս հարցաքննությունը։ ուտում եմ, ինչքան կարող եմ, ուրիշ ասելիք չունե՞ս։

— Ունեմ։ Եվ՝ մեծ ասելիք։

Հրանտը զարմացած չէր։ Պատառաքաղը ցած դրեց, ետ քաշվեց սեղանից։

— Ես լսում եմ քեզ։

— Նախ ինչո՞ւ ես ինձ հետ այդպես կոպիտ խոսում։

— Իսկ ո՞րն է իմ կոպտությունը։— Հրանտը գնալով դյուրագրգիռ էր դառնում։

— Հենց քո խոսելու տոնը, այն, որ երեսիս նայել անգամ չես ուզում։

— Դե, գիտես ինչ, դու բոլորովին...

— Այո, ճիշտ ես մտածում, ես բոլորովին գժվել եմ, կամ դու ինձ կհասցնես դրան։

— Նվարդ, դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ես ասում, թե՞ առանց մտածելու ես խոսում։

— Հրանտ, հասկացիր, այսպես շարունակել չի կարելի։

— Իսկ ի՞նչ է եղել, վերջապես...

— Առանձնապես ոչինչ։ Իսկապես որ լուրջ ոչինչ չի եղել, բայց ես զգում եմ, որ մեր ընտանիքը բռնել է քայքայման ճանապարհը։ Այո՛, այո՛, ես այլևս չեմ հավատում քո սուտ առարկությունները։

— Իսկ դու ինչո՞ւ ես ինձ վիրավորում։

— Ես տխուր ճշմարտությունն եմ արձանագրում։

— Ի՞նչ ես առաջարկում, վերջապես ի՞նչ ես ուզում. ես քո դժգոհության շարժառիթը չեմ հասկանում։

— Ես ուզում եմ մի շատ փոքր բան,— առաջվա նման լինենք շիտակ ու անկեղծ։

— Իսկ ո՞րն է մեր սուտն ու կեղծը։

— Մեր փոխհարաբերության ամեն մի բոպեն, առավոտյան ժամը յոթից սկսած մինչև մյուս օրվա յոթը։

— Ճիշտ չես, անարդար ես։

— Երանի այդպես լիներ։

— Դու ոչ մի հիմք չունես ինձ մեղադրելու։

— Հրանտ, մի ծանր հարց պիտի տամ քեզ, ծանր՝ ինձ համար, անհարմար զգալով եմ ասում, հավատա... Կարո՞ղ է այս գործին ուրիշ կնոջ մատ է խառը։

— Ի՞նչ կին։

— Չգիտեմ, այդ դու պիտի ասես։ Հետաքրքիր տղամարդ ես, սիրուհի դառնալու կանայք՝ անպակաս, գուցե...

— Հիմար բաներ ես մտածում, Նվարդ, վերջ տուր այս տհաճ խոսակցությանը,— ու թերթերի խուրձն առած անցավ մյուս սենյակը։

Նվարդը մնաց մենակ։ Բայց մի տեսակ թեթևություն իջավ վրան։ Հրանտը ժխտեց, ճիշտ է, ոչ շատ հաստատակամ, բայց ժխտեց. նա երբեք երկերեսանի չի եղել, որ կարողանա ստել։ Ուրեմն իր կասկածներն իզուր են... Բայց ինչո՞ւ մի տեսակ անվստահ էր այդ ժխտումը, «հիմար բաներ ես խոսում», ինչո՞ւ մի լավ չբարկացավ իր վրա, ափերից դուրս չեկավ. իրավունք ուներ վիրավորելու, դրանից ինքը թեթև կզգար, կասկածի որդը կդադարեր կրծելու իր սիրտը։ Ինչո՞ւ չգոռաց, իսկ նա ե՞րբ է գոռացել։ Այս անգամ դա շատ պետք էր, գոռգոռար, նույնիսկ հայհոյեր... Իսկ ինչո՞ւ խուսափեց շարունակել խոսակցությունը. թերթ կարդալն այդքան շտա՞պ էր...

Ախ այդ կասկածները, որ որդի նման սրտի ականջներին թույն կաթեցնել գիտեն...

37.

Մինիստրի տեղակալ Գեղամ Սարգսյանի մոտ խորհրդակցություն է. քննարկում են մեքենաշինական գործարանում նոր արտադրանքի թողարկումն ուշացնելու հանգամանքները։ Հրավիրված են գործարանի դիրեկտորը, գլխավոր ինժեները, արտադրամասի պետն ու կուսկազմակերպության քարտուղարը։

Մինիստրի տեղակալն այսօր զարմանալի շոր է ու մռայլ։ Ո՞ւր է փախել նրա ծանոթ ու հարազատ ժպիտը։

— Ես դիտմամբ ուրիշ մարդ չեմ կանչել,— իր խոսքն սկսեց Գեղամ Սարգսյանը,— բոլորս այդ մեծ կոլեկտիվի նախկին ու այսօրվա անդամներից ենք, և ուզում եմ ձեզ հետ խոսել ընտանիքի մեծի իրավունքով։ Եվ ստիպված եմ շատ խիստ խոսել, որովհետև ցավով մտածում եմ, թե գուցե անհրաժեշտ խստության պակասն է այս խայտառակ վիճակի պատճառը...

Մինիստրի տեղակալի առանձնասենյակում մի ճնշող լռություն էր թառել, և խոսելն էր ծանր, և լսելը։

— Անցել են նոր արտադրանքի թողարկման բոլոր ժամկետները, լրացուցիչ տասնհինգ օր խնդրեցիք, թույլ տվեցինք, նորից անարդյունք։ Հիմա՞ ինչ կասեք։ Վաղը ես Մոսկվային պետք է զեկուցեմ ստացված արդյունքների մասին, ի՞նչ ասեմ, ինչպե՞ս արդարանամ, ինչո՞ւ եք բոլորիս խայտառակում...

Հրանտի կոկորդն այնպես էր չորացել, որ թվում էր, եթե իրեն ձայն տան, ինքը պարզապես խոսել չի կարող։ Իսկ եթե կարողանա, ի՞նչ պիտի ասի։ Ինչքան ուզում ես օբյեկտիվ պատճառներ փնտրիր, մխիթարական բան չես գտնի. մեղավորն իրենք են, և առաջին հերթին՝ գործարանի գլխավոր ինժեները, այս է ճշմարտությունը։ Եվ հիմա ինքը վեր կկենա ու կասի ամեն ինչ, ամենայն անկեղծությամբ, թե չէ որ ուշացրեց իր խոսքը, դիրեկտորն իր վրա կվերցնի ամբողջ մեղքը, իսկ դա անարդար կլինի, խղճի դեմ մի բան։ Դիրեկտորն արձակուրդից նոր է վերադարձել, հիմնական պատասխանատուն ինքն է։

Անվստահ բարձրացրեց ձեռքը, բայց Գեղամ Հմայակովիչը չնկատեց, գուցե և չնկատելուն տվեց, ու դարձավ գործարանի դիրեկտորին.

— Ի՞նչ կասեք, Սուրեն Մարտիրոսովիչ, մինիստրության առջև առաջին պատասխանատուն դիրեկտորն է, ինչպե՞ս պիտի մարսենք այս խայտառակությունը։

— Արդարանալու տեղ չունենք, Գեղամ Հմայակովիչ, ի՞նչ ասեմ... Գրաֆիկ էինք կազմել, ամեն ինչ գնում էր նորմալ հունով, ինչո՞ւ այսպես ձախողվեց, ինքս էլ չեմ հասկանում։ Հավանաբար անբավարար էր պահանջվող վերահսկողությունը։ Մի խոսքով վրիպեցինք։ Բայց համոզված կարող եմ ասել, որ տաս օր հետո...

— Առայժմ խոսում ենք այսօրվա վիճակի մասին,— չոր ընդհատեց մինիստրի տեղակալը,— ինչո՞ւ ուշացանք, ո՞ւմ մեղքով, ե՞րբ պետք է մենք կարողանանք թացն ու չորը զանազանել։

— Իմ մեղքով,— տեղից պոռթկաց Հրանտ Ստեփանյա-

նը,— այո՛, իմ մեղքով, գործարանի գլխավոր ինժեները չկարողացավ գործը կազմակերպել այնպես, որ...

— Իսկ ինչո՞ւ չկարողացավ, գիտելիքների պակա՞սն էր մեղավոր, թե՞ գործը ղեկավարելու հմտությունը.— մինիստրի տեղակալի ձայնը գնալով կոշտանում էր։

— Հավասարաբար և՛ մեկը, և՛ մյուսը։

— Կուրծք ծեծելն էլ մի բան չէ, ընկեր Ստեփանյան, չնայած գնահատելի է անկեղծ խոստովանությունը... Գուցե ձեզ առաջ քաշելու հարցում մենք սխալվեցի՞նք, կամ շտապեցի՞նք...

Տիրեց մի ճնշող լռություն. այդպիսի հարցադրման ոչ ոք չէր սպասում։

Հրանտի ականջները տաքացան, հավանաբար կարմրեցին միանգամից. վիրավորանքի ու բողոքի մի ալիք բարձրացավ նրա հոգու ծալքերում, և նա շնչասպառ լինելով համարյա գոռաց.

— Ո՛չ, համաձայն չեմ, դուք իզուր եք ինձ այդպես վիրավորում. ես կարող եմ կատարել ինձ վրա դրված պարտականությունները...

— Հանգիստ, ընկեր Ստեփանյան, տաքանալը միշտ չէ, որ օգնում է գործին։

— Կարելի՞ է, Գեղամ Համայակովիչ,— ձայն խնդրեց կուսկազմակերպության քարտուղար Վահանյանը։— Ես գտնում եմ, որ ընկեր Ստեփանյանի խոսքը անկեղծ է ու ճշմարիտ։ Իսկապես ուշացման հիմնական պատասխանատուն գործարանի գլխավոր ինժեներն է։ Միայն պատճառը ոչ թե անճարակությունն է, այլ, ինչպես ասեմ, ընկեր Ստեփանյանի մեջ վերջերս կատարված մի զարմանալի փոփոխությունը... Մի տեսակ ցրված է դարձել, գործի նկատմամբ առաջվա սրտացավությունը չկա, այլևս չի խորհրդակցում ընկերների հետ, չի խորանում հարցերի մեջ, ասես մենակություն է փնտրում։ Ի՞նչ է պատահել, ես չգիտեմ, գուցե ընտանիքում... Գիտեք, շատերն են նկատել այդ, նույնիսկ ինձ հարցնողներ կան՝ հո հիվա՞նդ չէ գլխավոր ինժեները։ Իսկ ինքը ոչինչ չի ասում։

— Գուցե մեզ կվստահեի՞ք ձեր ցավը, Հրանտ Արշակո-

վիչ, հարցնում եմ քեզ աշխատանքային հին ընկերոջ փրա-
վունքով։

— Շնորհակալ եմ, Գեղամ Հմայակովիչ, պետք չէ փոր-
փորել... ընտանեկան անախորժություն է, կանցնի։ Ընկեր
Վահանյանը ճիշտ է նկատել։ Բայց հիմնական պատճառը
դա չէ։ Ես կաշխատեմ հաղթահարել այս ճգնաժամը... Եվ,
ամենակարևորը, Գեղամ Հմայակովիչ, ես կաշխատեմ ապա-
ցուցել, որ դուք իզուր չեք վստահել ինձ այս գործը... եթե
չկարողացա, ինքս կգամ ձեզ մոտ մի դիմում ձեռքիս, և
համոզված եմ, չեք ցանա մակագրել...

— Եվ, այնուամենայնիվ, կուզենայի քեզնից այդպիսի
դիմում չստանալ։

— Կաշխատեմ չգրել, այո՛, կաշխատեմ...

— Սուրեն Մարտիրոսովիչ, քիչ առաջ ի՞նչ ասացիր գոր-
ծի հեռանկարի մասին, տասն օր, ա՞յո։

— Այո, Գեղամ Հմայակովիչ, տաս օր հետո նոր արտա-
դրանքի թողարկումը կանոնավոր ընթացքի մեջ կընկնի, կա-
րող եք չկասկածել։

— Այդպես էլ որոշում ենք. տաս օր հետո ես սպասում
եմ ձեր հեռախոսագրին։

Երբ դուրս էին գալիս մինիստրի տեղակալի առանձնա-
սենյակից, Գեղամ Հմայակովիչը Ստեփանյանի ձեռքը քիչ
ավելի երկար պահեց իր ափի մեջ։

— Դե, Հրանտ, քիթդ չկախես, գիտես, որ չեմ սիրում
նվնվացողներին։— Ժպտաց բարի, առաջին ժպիտը ամբողջ
խորհրդակցության ընթացքում։

— Շնորհակալ եմ, Գեղամ Հմայակովիչ։

— Իսկ թե տանն ինչ է կատարվել, ես կուզենայի իմա-
նալ, և չեմ կարծում, թե դու կփորձես ինձնից թաքցնել ի-
կությունը։ Մի անգամ արի խոսենք. ուղղակի տուն արի։

— Շնորհակալ եմ... իսկ տուն, կներեք, առայժմ չեմ գա.
իմ ներսում չլուծված հարցեր կան, մի քիչ որ ջրերը պար-
զեն, կգամ։

— Իսկ գուցե մեր զրույցը կօգնի այդ ջրերի արագ պար-
զելո՞ւն։

— Հնարավոր է։ Այս ճակատագրական տաս օրն անցնի,
տեսնենք...

Ընդմիջման ժամին գործարանի դահլիճում հավաքվել էր հարյուրից ավելի մարդ՝ բանվորներ, վարպետներ, շինարարներ։ Հատկապես շատ էին կանայք, մայրերը, որոնք եկել էին իրենց գոհունակության խոսքն ասելու մանկապարտեզի շենքը կառուցողներին։

Հավաքը մի համառոտ խոսքով բացեց կուսկազմակերպության քարտուղար Վահանյանը։ Հետո ձայն տվեց գլխավոր-ինժեներ Հրանտ Ստեփանյանին։ Իրենից անկախ Հրանտի խոսքը մի քիչ վերամբարձ ստացվեց։

— Ընկերներ, բարեկամներ, այսօր մենք հավաքվել ենք այս դահլիճում մի շատ հաճելի առիթով- հավաքվել ենք մեր շնորհակալության խոսքն ասելու մի ուրիշ կոլեկտիվի՝ շինարարական տրեստի մի խումբ աշխատողների։ Նրանք մեր գործարանի բանվոր-ծառայողների համար կառուցել ու շահագործման են հանձնել մանկապարտեզի մի հիանալի շենք, որտեղ հաճախել, սովորել ու դաստիարակվել կարող են երկու հարյուր հիսուն երեխա։ Գործարանի ողջ կոլեկտիվի, մասնավորապես մեր մայրերի անունից շնորհակալություն ենք հայտնում մեր հրաշալի շինարարներին, բրիգադիր Սամսոն Բարսեղյանին, վարպետներ Հարություն Սեդրակյանին, Սարգիս Բաղեյանին, բանվորներ Սահակ Կիզոդյանին, Արգարին, Վարազդատին... Յոթ հոգի արժանացել են գործարանի պատվոգրի, հինգ հոգի դրամական պարգև են ստանում։ Մենք միաժամանակ նամակ ենք գրել տրեստի ղեկավարությանը՝ մի շարք ընկերների խրախուսելու համար։

Հուզված ամբիոն բարձրացավ քեռի Սամսոնը։

— Բարեկամներ, լավ մարդիկ. ինձ համար դժվար է խոսք ասելը, դե, ես ինչ ճառախոս եմ։ Ամա չեմ կարող չասել, իմ ու իմ ընկերների անունից, որ շատ գոհ ու շնորհակալ ենք ձեր այս վերաբերմունքից։ Լավ բան է, ասված չկա, երբ մարդու արած գործը գնահատվում է։ Իսկ մենք ի՞նչ ենք արել, մանկապարտեզ ենք կառուցել, ո՞ւմ համար, մեր երեխաների։ Բա սրանից էլ շնորհակալ գործ կլինի՞... Տա աստված, որ էդ շենքում երեխաներն առողջ ու խելոք մեծանան։ Ու նրանցից մի քանիսն էլ շինարար դառնան, նոր

շենքեր կառուցեն, որովհետև աշխարհում կառուցելուց ավելի լավ բան չկա։

Թռուցիկ հավաքը վերջացավ։ Հրանտն իր առանձնասենյակը տարավ Սամսոն քեռուն ու վարպետ Հարությունին, հյուրասիրեց մի-մի բաժակ կոնյակով, սուրճով։

— Դե, հիմա պատմեցեք Հարությունի գործերից, գյուղի էն լավ աղջկա մասին։

— Ընկեր Ստեփանյան, իսկապես որ լավ աղջիկ է. մայրս չի սխալվել։ Խոսք առանք, գարնանն ամուսնանում ենք։

— Ուրախ եմ քեզ համար, Հարություն, հաջողություն ու մեծ բախտավորություն եմ ցանկանում։

— Ախպոր տղա, էդ խոսքերի համար շնորհակալ ենք,— քեռի Սամսոնը խմեց կոնյակի իր բաժակը ու ոտքի կանգնեց.— համա որ Հարությիս հարսանիքին չես եկել՝ կնեղանամ, ասված վկա։

— Եթե հրավիրեք, սիրով կգամ.— Հրանտը փորձեց կատակի տալ։

— Հա, էդ լավ ես ասում, եթե հրավիրենք։ Դե, ուրեմն սպասիր իմ հրավերին։ Չէ, ինչու, ես ինքս կգամ քո ետևից, հարսանիքը գյուղում ենք անելու, մեծ ազգ ենք, մեծ բարեկամություն, էդքան մարդուն քաղաք կանչել չի լինի։ Համ էլ, մեղքս ինչ թաքցնեմ, ինձ միշտ թվում է, թե հարսանիքը գյուղի բան է, ղուռնա-դհոլ. քաղաքում մի տեսակ կաշկանդված ես...

— Իհարկե, գյուղում ավելի լավ է; յոթ օր, յոթ գիշեր. ինչպես հեքիաթներում։

— Այ, օղորմի քո պապին։ Գյուղ ենք գնալու միասին, հեռու չի, մի երկու ժամվա ճանապարհ է... Հա, էն Աշխենի՞ց ինչ խաբար կա. ասում են փախել է մեր քաղաքից, դրո՞ւստ է։

Քեռի Սամսոնի հարցի մեջ մի թունոտ ակնարկ կար, որ դուր չեկավ Հրանտին։

— Պարզապես գնացել է Երևանից, ուրիշ քաղաքում է ապրում։

— Էդ ի՞նչ ուրիշ քաղաք է, ախպոր տղա։

— Այդ մեկը չգիտեմ, չի հայտնել...

— Դե, ինչ ուզում ես ասա, մարդուն դժվար է ճանաչել։ Կարգին աղջիկ էր երևում... Երևի ամոթից է փախել, իր կեղտը թաքցնելու համար։

— Ի՞նչ կեղտ, քեռի Սամսոն։

— Երեխան սուրբ բան է, Հրանտ ջան, ապօրինի երեխան կեղտից էլ վատ է։ Դե, ինչ որ է, ասված նրա հետ, երևի ճիշտ են ասում, թե ճակատագիր է... Իսկ Հարութիս հարսանիքին հենց հիմա քեզ հրավիրում ենք ու կսպասենք։ Էնպիսի մի հարսանիք ենք անելու...

39.

Գործարանում վերջապես կարողացան տեղավորվել «տասնօրյա» շապիկի մեջ։ Նոր արտադրանքի ծնունդը բարեհաջող անցավ։ Այդ գործով զբաղվող մարդիկ ազատ շունչ քաշեցին ու թեթև ձեռքով հեռագիր հղեցին մինիստրություն։ Ինչ լավ է, երբ վերջապես քեզ հաջողվում է խոսքիդ տերը լինել, երբ գործը գլուխ է գալիս ժամանակին ու պահանջվող որակով։

Քաղցր խոսքի ժլատ դիրեկտորը մի խումբ աշխատողների իր առանձնասենյակը հրավիրեց. շնորհավորեց, շնորհակալություն հայտնեց նրանց. մի-մի բաժակ կոնյակով հյուրասիրեց, նույնիսկ ինքը խմեց։

— Երևի վերջին տաս տարվա մեջ առաջին անգամն եմ բերանս առնում։

— Գուցե պետք չէր, վնաս կտա։

— Գլուխը քարը, այսպիսի առիթով չեմ կարող, թեկուզ սպանի...

Հրանտի զարմանքը կրկնապատկվեց. տես ինչպիսի նշանակություն ուներ այդ հարցի լուծումը դիրեկտորի համար։ Իսկ ինքը՞, իսկ ի՞նչ համար։ Հարցի կարևորությունը այդպիսի խորությամբ ըմբռնել չասենք, համենայնդեպս այդքան սրտին մոտ ընդունե՞լ է ինքը։ Գուցե և այս լրացուցիչ տաս օրվա կարիքն այլևս չլիներ, եթե նույն չափով ու նույն սրտացավությամբ...

Իսկ ի՞նչ պատահեց իր սրտին, կորցրել է ցավ զգալու

կարողությունը, թե՞ ցավախեղդ է լինում, դրանից է բթացել, անզգայացել...

Երեխայի, ու չի կարող չխոստովանել, նաև նրա մոր կարոտը գնալով մեծ չափեր է ընդունում իր սրտում, հոգեկան վիճակի բարելավման, ջրերի պարզման ոչ մի հեռանկար։ Իսկ այսօր Գեղամ Հմայակովիչը զանգահարեց ու շնորհավորեց. վերջապես, ասաց, մեզ պարզերես արեցիք։ Ու տուն կանչեց նաև։

— Երեկոյան երևա մեր կողմերում, կզրուցենք. թե՞ ջրերդ դեռ չեն պարզել...

Ու հիմա նստած նրանց տանը զրուցում են։ Տիկին Արուսն էլ և տետրեր է ուղղում և մեկ-մեկ մասնակցում է նրանց զրույցին։ Դեռ գործարանի գործերից են խոսում, պլանի կատարում, նոր արտադրանքի թողարկում, մանկապարտեզի շենքի շահագործման հանձնում։ Եվ միևնույն է, Հրանտն ասես փշերի վրա է նստած, այս բոլորից հետո անպայման հարկ կլինի խոսել նաև իր մասին, իր ընտանեկան խառն գործերի մասին. խոստացել է պատմել։ Բայց, մանավանդ տիկին Արուսի ներկայությամբ... Չէ՛ որ ինքը խոստացել էր ջրերը պարզելուց հետո... Իսկ եթե չեն պարզում, ինչքա՞ն կարելի է սպասել. կամ Գեղամ Հմայակովիչն ի՞նչ պարտավոր է սպասել։ Իսկ մի՞թե նա պարտավոր է խառնվել այդ գործին, կամ իրավասո՞ւ է. նրան ինչո՞վ է վերաբերվում... ոչ, անարդար կլինի այդպես մտածելը. երբ մեծ ընկերոջդ տիրտը ցավում է քեզ համար, և նա քո հոգսը թեթևացնելու փորձեր է անում, ձեռք է մեկնում քեզ, դու բարոյական ի՞նչ իրավունքով պիտի վանես այդ ձեռքը...

Տիկին Արուսը թեյի հրավիրեց նրանց։ Գեղամ Հմայակովիչը հրաժարվեց ճաշասենյակ անցնել.

— Չէ, Արուս ջան, բարի եղիր մեզ այստեղ թեյ մատուցել, ու, եթե կարելի է, մեզ մենակ թող, խնդրում եմ, խոսելիք ունենք։

Հիմա մենակ են. իբր թե թեյ են խմում, իսկ թեյը սառչում է բաժակներում։

— Դե, Հրանտ, շարունակիր, ես քեզ լսում եմ։ Միայն չմոռանաս, որ ես մեծ ընկերոջ իրավունքով...

— Հասկանում եմ, և շնորհակալ եմ։

Ու պատմեց։ Ամբողջը։ Աշխենի հետ առաջին ծանոթությունից ու այն ճակատագրական երեկոյից մինչև նրա մեկնումն ու թողած նամակը։ Պատմեց դժվարությամբ, շնչակտուր լինելով։ Ու լռեց միանգամից։ Ասես դատարկվեց, ոչինչ չմնաց մեջը. մի՞թե այսքան աղքատ էր ինքը...

Տիրեց մի ճնշող լռություն։

Գեղամ Հմայակովիչը փորձեց թեյը խմել, չէր ստացվում. սառա՞ծ էր, բայց պատճառն այդ չէր, պարզապես դառն էր թեյը, չէր խմվում։

— Այո՛, իսկապես որ տխուր վիճակ է.— ասես ինքն իրեն էր խոսում Սարգսյանը.— և խորհուրդ տալն է դժվար, խոստովանում եմ։ Եվ գիտես, թե առանձնապես ինչն է դժվարացնում, կամ լավ է ասել՝ ինչն է խոչընդոտում իմ պատասխանի ճշտությանը, այն, որ ես Նվարդին գիտեմ, ծանոթ եմ հետը, վայելել եմ նրա մատուցած աղուհացը. հավատա խոսքիս անկեղծությանը՝ հարգարժան կին է։ Իսկ ահա այդ Աշխենին չեմ ճանաչում։

— Դուք նրան տեսել եք անպայման, պարզապես չեք հիշում, նա աշխատում էր գործարանի լաբորատորիայում, ձեր ժամանակ է ընդունվել աշխատանքի։

— Հնարավոր է, բայց չեմ կարողանում հիշել. երևի սա էլ ծերանալու նշաններից է... Եվ ահա ես վախենում եմ անաչառ չլինել, իսկ դա ամենամեծ հանցանքներից մեկն է։

— Ես ձեզ ճանաչում եմ որպես անաչառ մարդու։

— Իսկ եթե ես փորձեմ դատապարտել այդ Աշխենի թեթևսոլիկ քայլը և պաշտպանության տակ առնեմ Նվարդի՞ն, թե՞ դրանով հոգուս վրա մեղք կվերցնեմ։ Դժվար հարց է, աստված վկա։ Միայն առանց տատանվելու կարող եմ ասել, որ հիմնական մեղավորը դու ես, և դու չփորձես արդարանալ։

— Ընդհակառակը, ինչքան ուժեղ դատապարտեք, այնքան թեթև կլինի ինձ համար։ Դժբախտաբար ես արդարանալու տեղ չունեմ...

— Այո, ջահելություն ես արել, չնայած վաղուց արդեն այդ ջահելության իրավունքն ունեցող ջահելներից չես։

— Երևի ճիշտ են ասում, թե մարդս տխալական է։

— Չեմ ընդունում, դա թույլ մարդկանց ինքնապաշտպա-

նության խոցելի զրահն է։ Դալաթ անելուց հետո գոնե տղամարդավարի պետք է այն ընդունել, սա պետք է ամեն մի շիտակ մարդուն։ Իսկ ես, չեմ թաքցնում, գտնում եմ, որ այդ աղջիկը խելոք է վարվել, երևի միակ ճիշտ ճանապարհն էր դա։ Մնում է, որ դու կարողանաս մոռանալ նրան։

— Նրանց, խնդրում եմ։

— Այո՛, նրանց։ Դա անհրաժեշտ է։

— Իսկ եթե հնարավոր չէ այդ, եթե մոռանալ չեմ կարողանում։ Երկու ամիս է արդեն և կարոտը գնալով ահագնանում է...

— Դեռ նոր է, կանցնի, աստիճանաբար կմեղմանա ցավը. այդպես է կյանքը։ Եվ գիտե՞ս, դրան մեծ չափով կօգնի երեխա վերցնելը, արագացրու այդ հարցի լուծումը։

Հրանտը լուռ էր։ Սարգսյանն այդ համաձայնության նշա՞ն համարեց, թե՞ համոզված, որ նրան-լրիվ չհամոզեց, շարունակեց նույն հանգիստ տոնով։

— Նվարդը լավ աղջիկ է, անարդար կլինի նրան այդ աստիճան դառնացնելը։ Պատկերացնում եմ նաև մորդ վիճակը. ընտանիք քայքայելը սպանիչ կլինի նրանց համար։ Պետք է երեխա վերցնել և աստիճանաբար...

— Ներեցեք, Գեղամ Համայակովիչ, ինձ թվում է թե դուք չկարողացաք մնալ անաչառության դիրքերում. այդ ձևով բոլորովին ոտնահարվում են Աշխենի շահերը, դա էլ խղճի դեմ բան է։

— Իրավացի ես։ Դե ես ինքս խոստովանեցի, որ կարող է թեքեմ ճիպոտի ծայրը... Համենայնդեպս դու իրավունք չունես քայքայելու քո լավ ընտանիքը. դա անազնիվ քայլ կլինի։

— Իսկ մի՞թե այն աղջկան միայնակ մոր վիճակին մատնելը ազնիվ քայլ է, երեխային հորից զրկելը...

— Դա էլ ազնիվ չէ, ընդունում եմ; բայց ներելի է, ինչ որ չափով, իհարկե... Սատանան տանի, լավ ես խրվել, բոլորովին չէի սպասի քեզնից... Չգիտեմ, ինքդ որոշիր։ Հաշվի նստիր քո խղճի հետ ու որոշիր։

— Հենց այդ խիղճն է, Գեղամ Համայակովիչ, որ դժվարացնում է գործը. մնացել եմ փակուղու առաջ կանգնած։

— Դու իրավացի էիր այն անգամ, թե ջրերը պարզենք

նոր հանդիպենք։ Գուցե մեր այս զրույցն ինչ-որ չափով կօգնե՞ր դրան։ Բայց ես ցավով տեսնում եմ, որ դժվար են պարզելու ջրերը...

— Իմ ամբողջ դժբախտությունը դրա մեջ է։ Եվ Նվարդին եմ խղճում և Աշխենին, մեկին սիրում եմ, մյուսի նկատմամբ անտարբեր չեմ։ Մեկի մոտ մայրս է, մյուսի մոտ՝ իմ սպասած ու երազած երեխան։ Ի՞նչ անեմ. կորցրել եմ գլուխս, իսկ կորցրած գլխով ի՞նչ գլխավոր ինժեներ, կամ ի՞նչ մարդ...

40.

Առանձնապես տխուր օրեր էր ապրում Լուսիկ մայրիկը։ Խուճապի էր մատնվել մոր սիրտը։ Եվ չգիտեր ում մեղադրեր, ում կողմը անցներ։ Վերջապես ինքը մայր է, մինուճար տղայի մայր, կյանքում ուրիշ ոչ մեկին ու ոչինչ չունի, իր ուրախության ու կենսունակության միակ աղբյուրն է։ Եվ ինչպիսի տղա, ինչպիսի հարգանք ու պատիվ։ Ու հանկարծ այսպիսի անսպասելի փոփոխություն, այսքան կտրուկ շրջադարձ։ Ի՞նչ պատահեց, ո՞վ խառնեց այս հավասարակշռված տղայի ու սիրող ամուսնու մտքերը, ո՞վ պղտորեց նրա սրտի աղբյուրը։ Մի՞թե այն փախցրած երեխան, խելքի մոտ բան չէ։ Նա չէ, թող ուրիշը լինի, միևնույն է, իրենցը չէ։ Իսկ այն անամոթ կա՞յտն ինչու երեխային առավ ու փախավ. չէր ուզում, թող չտար, փախչե՞ն ինչ էր... բոլորովին անհասկանալի բաներ են կատարվում՝ իր մտքից ու խելքից շատ հեռու. թե՞ ինքն արդեն պառավել է ու վերջնականապես չի հասկանում ժամանակակից ջահելներին։ Հավատալ չի կարող, ախր մի քանի ամիս առաջ իր, տղայի ու հարսի միջև անհասկանալի ոչինչ չկար, ինչո՞ւ հանկարծ դարձավ այսքան անհասկացող։ Եվ ասենք թե ինքն է անխելքը, տղան ու հարսն ինչու իրար չեն հասկանում, նրա՞նց ինչ պատահեց։ Ամբողջ դժբախտությունը հենց սրա մեջ է, ինքը՝ գլուխը քարը. այսօր կա, վաղը չկա, իսկ նրա՞նք, նրանց վաղվա օ՞րն ինչ կլինի, ինքն ի՞նչ սրտով պիտի գնա այս աշխարհից... Գուցե իսկապես Նվարդն է մեղավոր. Սերբուհին իզուր չի կոկում, անիրավը որ մայր դառնալու շնորհք ունենար, այս պատմությունները չէին լինի, կապրեին մարդավարի։

Ու Լուսիկ մայրիկի առաջ շարվեշար անցան իր պատանեկության տարիները։ Հայրն ամուսնացրեց իրեն, երբ հազիվ տասնվեց տարեկան էր։ Ապագա ամուսնուն առաջին անգամ տեսավ ամուսնությունից մի շաբաթ առաջ։ Եվ ինչ լավ էր, հենց միանգամից տղան մտավ իր սիրտը, իր հաղթանդամ հասակով, անպատելի բեղ-մորուքով ու խոշոր, արտահայտիչ աչքերով։ Լավ ընտանիք կազմեցին Արշակի հետ, ապրում էին խաղաղ։ Բայց շուտով պղտորվեցին նրանց տան ջրերը, տարիներն անցնում էին, երեխան ուշանում էր։ Գուցե և չի՞ լինելու։ Գտնվեցին մարդիկ, որ ամուսնուն խորհուրդ էին տալիս բաժանվել, նոր կին առնել... Քանի՞ դիշեր է լացել թաքուն։ Բայց շնորհակալ է ու երախտապարտ, այդ խորհուրդներն Արշակին չշեղեցին ճանապարհից. նա մնաց հավատարիմ իր ընտանիքին։ Եվ վարձահատույց եղավ լիուլի, ամուսնության չորրորդ տարում ծնվեց Հրանտը, հետո էլ՝ աղջիկը։ Հիմա ինչո՞ւ է ինքը երբեմն ականջ կախում Սրբուհու խոսքին, խեղճանում, ասես համոզվում է։ Բայց ոչ, աստված վկա, ինքը Նվարդի դեմ ոչինչ չունի, միայն թոռնիկ է ուզում, թող վերցնովի լինի, համաձայն է, ուրիշ ոչինչ չի ուզում, թող իրենց տանն էլ երեխայի լաց լսվի։ Գուցե դեռ Նվարդն էլ կունենա, քի՞չ է պատահում։ Երանի՞ այդ օրվան...

41.

Հրանտենց տանը երեխա վերցնելու հարցը նորից մտավ օրակարգի մեջ. խոսում էին այդ մասին մայրը, կինը, մոտ բարեկամները։ Համարյա ամեն օր, ամեն առիթով։ Իսկ Հրանտը մի տեսակ դարձել էր անտարբեր, լսում էր ու չէր խառնվում այդ խոսակցություններին. ոչ այո, ոչ՝ ոչ։ Թող լինի, ինչ լինելու է։ Եվ նրա այդ լռությունը հույսի ինչ-որ շող էր արթնացնում մոր ու կնոջ սրտերում. ուրեմն հաշտվել է, համաձայն է, պետք է արագացնել։ Մի անգամ այդ խոսակցությանը մասնակից դարձրին նաև պրոֆեսոր Գարեգին Սավոյանին։ Շատ վճռական էր նրա խոսքը.

— Պետք է երեխա վերցնել, անպայման։

Հրանտը մի մեղապարտ հայացքով նայեց պրոֆեսորին.

ասես հարցնում էր՝ մի՞թե ետ չի գա իր երեխան, հույսի և ոչ մի շո՞ղ... Պրոֆեսորը ճիշտ հասկացավ նրան, ու կտրեց անխնա.

— Ամենախելոք ելքն այս է։ Իսկ Նվարդը թող շարունակի բուժումներ ընդունել. կունենա՞ երեխա, ավելի լավ։ Անպայման երեխա վերցրեք։

Ու Հրանտը ճիշտ հասկացավ պրոֆեսորին.— կորցրածը գտնելու հույս չկա, նա ոչ կվերադառնա, ոչ էլ իր տեղը քեզ կհայտնի, քո Աշխենին կարգին ճանաչիր վերջապես. քո երեխային դու այստեղ փնտրիր...

Հրանտի ուսերին ծանրացել էր նույն անտարբերության բեռը։ Հերն էլ անիծած, միևնույն է, ինչ լինելու է, թող լինի, եթե կորել է նրանց գտնելու հույսը...

— Ես ինքս կզբաղվեմ երեխայի հարցով.— պրոֆեսոր Սավոյանը ոտքի կանգնեց.— սպասեցեք իմ զանգին։

Պրոֆեսորին ուղեկցեցին տանտիկինների երախտապարտ հայացքները։ Իսկ Հրանտը շարունակում էր թպրտալ անտարբերության ճահճում. հերն անիծած, ինչ լինելու է, թող լինի, գուցե լավն այս է, և գուցե այդ անհոգի Աշխենին պատժելու միակ միջոցն է սա...

Ու շտապեց գործարան։ Այնտեղ ավելի թեթև էր զգում իրեն. տան հոգեմաշ մթնոլորտը չկար։ Շուտ էր գնում գործարան, ուշ էր տուն գալիս. աշխատանքային օրը նրա համար դարձել էր տաս-տասներկու ժամ։ Տանն էլ արդեն հաշտվել էին այդ իրողության հետ, այլևս չէին բողոքում։

Իսկ գործարանում գլխավոր ինժեների աշխատանքը կանոնավոր հունի մեջ էր մտել արդեն. համենայնդեպս ինքը գոհ էր իր վիճակից, ամենակարևորը՝ անտարբերության խեղդամահ անող շունչն այստեղ չկար, ընդհակառակը, գործին էր տրվել իր ամբողջ կարողությամբ, ջանքի ու եռանդի ոչ մի խնայում, անմոռաց ու անմնացորդ նվիրումն, դրա մեջ էր գտնում իր հոգեկան թեթևությունը։

42.

Քարտուղարուհին ներս մտավ անաղմուկ.

— Հրանտ Արշակովիչ, էն քեռի Սամսոնը ձեզ է խնդրում։

— Քեռի Սամսո՞նը.— Հրանտը անակնկալի եկավ.— ներս

խնդրիր։— Ու ընդառաջ գնաց այցելուին։

— Ուրախ եմ, որ քեզ առողջ եմ տեսնում, քեռի Սամսոն։

— Ես էլ, Հրանտ ջան.— ու կարոտած գրկախառնվեցին։

— Քանի ամիս է, չենք հանդիպել.

— Հա, Հրանտ ջան, հինգ ամիս կա։ Դե, պատմիր տեսնեմ ինչպես ես, կինդ, մայրդ։ Ինչ նորություն կա։

— Բոլորն էլ լավ են, շնորհակալ եմ։ Ձեզ մո՞տ ինչ կա, Հարությունն ամուսնացա՞վ։

— Հենց դրա համար էլ եկել եմ, Հրանտ ջան, էս շաբաթ օրը հարսանիքն է։ Գնում ենք միասին։

Հրանտը մտքում հրաժարվելու պատճառներ էր որոնում. ու համոզվեց, որ հիմնական պատճառը իր անտրամադիր լինելն է, իսկ դրանով ինչպե՞ս կհամոզես քեռի Սամսոնին։

— Էլ չեմ ու չում չանես, պայմանը վաղուց ենք կապել։ Կնոջդ էլ ես բերում։ Շաբաթ առավոտյան գալիս եմ ուղիղ ձեր դուռը։ Տղայիս համար մեքենա եմ առել, լավ էլ քշում է, նրանով ենք գնալու։ Եղա՞վ։

— Կինս երևի չի կարող գալ. մայրս մենակ կմնա... Միասին կգնանք։

...Ու հիմա գնում են գյուղ։ Սպիտակի շրջանում է։ Սպիտակ, ինչ էլ անուն են գտել։ Արևառատ օր է։ Կանաչ դաշտերի ու օձագալար ճանապարհի վրա ասես շուրջպար են բռնել լույսը, արևի ճառագայթներն ու սանձակոտոր քամին։ Այնպես հեշտ է շնչվում, թոքերդ աշխատում են իրենց ամբողջ կարողությամբ. ինչո՞ւ քաղաքում այսպես ազատ ու անկաշկանդ շնչել չես կարողանում, օդի անմաքրությո՞ւնն է մեղավոր թե՞ հոգսերի առատությունը... Այո, զարմանալի գարուն է, և ինչ լավ են արել, որ հարսանիքը գարնանն են կատարում, բնության ու մարդկանց ուրախության կատարյալ ներդաշնակություն։ Եթե կյանքում ամեն ինչ այդպես ներդաշնակ լիներ, համահնչուն։ Ինչո՞ւ բաղաձայնն այդքան շատ է... Եվ այդպիսի տրամադրությամբ ո՞ւր ես գնում, մարդկանց ուրախության վրա ստվեր նետե՞լ ես ուզում։ Ոչ, այդպիսի սխալ չի գործի, եթե ուրախանալ չի կարող, կաշխատի չխանգարել ուրախացողներին։ Եվ ինչո՞ւ չպետք է ուրախանաս, գրողը տանի, քեզ մտերիմ մեկն ամուսնանում

է, դու անկեղծորեն նրան երջանկություն ես ցանկանում, և քո անկեղծ ուրախության պերճախոս ապացույցը կլինի քո լավ տրամադրությունը։ Ուրեմն քացախդ թափիր ճանապարհին և Հարությունի տունը մտիր իսկական ընկերոջ ուրախությամբ. սա է մարդկայինը և քեզ սազականը։ Իսկ ի՞նչ պիտի նվիրես հարսնացուին. սպիտակ աչքով այն մատանին, որ քանի ամիս է գրպանի մի անկյունում ծվարած՝ հարմար մատի է սպասում... Աշխենի համար էր գնել, նվիրել էր ուզում, հարմար առիթ չեղավ, մինչև ջրերը պղտորվեցին և նվերը դարձավ անհարմար ու անիմաստ։ Հիմա կնվիրի Հարությունի նշանածին, շատ էլ հարմար է, թող բարով կրի։ Տեսնես ինչպիսի՞ն է այդ Աշխենը, և որքա՞ն սազ է գալիս Հարությունին։ Ախր էդ անիրավը շատ է հաղթանդամ ու առնական, իսկը Տորքի գեղեցիկ ցեղակիցը...

Հարությունի ուրախության պոռթկումն անկեղծորեն հուզեց Հրանտին։ Գրկել էր ընկերոջ ուսերն ու ականջին շշնջում էր.

— Եթե դուք չգայիք, ընկեր Ստեփանյան, իմ ուրախությունը կիսատ-պռատ կստացվեր, աստված վկա։ Շա՜տ եմ շնորհակալ։

Իսկ ինչպե՞ս է փոխվել Հարությունը։ Ախր ինքը նրան տեսել է միայն գործի մեջ, շինարարության վրա, աշխատանքային հագուստով։ Հիմա, մուգ կապույտ կոստյումի մեջ, գծավոր վերնաշապիկով ու ալ կարմիր վզկապով, կատարյալ ջենտլմեն. թամամ «Փարիզեն հոս եկած»։ Իսկ ինչո՞ւ, Սպիտակից փարիզներ գնալու արժանի, այս է ճշմարիտը։

— Սիրելի Հարություն,— հիմա էլ ինքն է փսփսում նրա ականջին,— եթե աղջիկ լինեի, չէի կարող քեզ վրա չսիրահարվել, աստված վկա։

Ծիծաղեցին անկաշկանդ։

— Այդ սխալն արդեն կատարել է իմ պստլիկ նշանածը...

Իսկ ինչո՞ւ պստլիկ։ Իսկապես որ։ Հրանտը հարսնացուին տեսնել կարողացավ կերուխումն սկսվելու պահին միայն, երբ ուրախ բացականչություններով սեղանի գլխավերևը նստեցրին «թագավորին ու թագուհուն»։ Իսկական թագուհիչ

աստված վկա, ինչ կարմրաթշիկ դեմք ու ծով աչքեր, ինչ խիտ հոնքեր ու կանոնավոր բերան։ Բնության գրկում մեծացած գեղեցկուհի, ոչ չերմոցային, այլ ազատ, անկաշկանդ, մի քիչ էլ վայրի, բայց զարմանալի առինքնող։ Միայն փոքրամարմին է, իսկապես, թե՞ Հարությունի կողքին է այդպես երևում։ Ու մի տեսակ սազում են իրար, մեկը մյուսից մի գլուխ բարձր, այդպես կարծես ավելի լավ է։

Մեկ էլ Հրանտի ականջին հասավ քեռի Սամսոնի ձայնը.

— Հարսի ու փեսայի կենացին երևի ասելիք կունենա մեր սիրելի Հրանտը։

Այնքան անսպասելի էր. ախր բոլորովին չի մտածել, ասելիք էլ չունի։ Իսկ սեղանակիցները, որ հարյուրից ավելի են, սպասում են։

Քեռի Սամսոնը, ասես Հրանտին օգնելու համար, ավելացրեց.

— Հրանտ Ստեփանյանը Երևանի մի մեծ գործարանի գլխավոր ինժեներն է, Հարությունի ու իմ լավ բարեկամը։

Հրանտը բռնեց թելի ծայրը, ու ոտքի կանգնեց շտապ։

— Սիրելի բարեկամներ, ուրախ եմ, որ գտնվում եմ ձեր գյուղում, վայելում եմ ձեր աղն ու հացը, շնորհակալ եմ ձեր լավ վերաբերմունքի համար, ձեր անկեղծ հյուրասիրության համար։ Հարությունն իմ լավ ընկերն է, ու ես նրան, Աշխենի հետ միասին այնքան ու այնպիսի երջանկություն եմ ցանկանում, որքան կուզենայի իմ եղբոր ու քրոջ համար։

— Զորանաս, Հրանտ ջան,— քեռի Սամսոնի ուրախ ռեպլիկն է։

— Հարությունը մեր գործարանի համար մանկամսուրմանկապարտեզի շենք է կառուցել, կառուցել է սիրով, ինչպես իր երեխաների համար կկառուցեր։

— Ապրի Հարությունը։

— Թող շնորհքն ավելի շատ լինի։

Լսվեցին բացականչություններ։

— Թող այսօրվա մեր նորապսակները,— շարունակեց Հրանտն ավելի ոգևորված,— մանկապարտեզում վազվզող շատ երեխաներ ունենան ու երջանիկ լինեն։

— Ամեն, ամեն,— նորից բացականչություններ։

— Մեր գործարանի կոլեկտիվի անունից շնորհավորում

եմ այս ուրախությունը, նորապսակներին ցանկանում եմ բախտավոր կյանք ու մեծ երջանկություն... Եվ թույլ տվեք, եղբոր իրավունքով, մեր հարսին նվիրել այս մատանին։

Ասաց, մոտեցավ, մատանին հագցրեց հարսի մատը. ինչ էլ հարմար նստեց՝ ասես չափսը նախօրոք գիտեր. գրկեց Հարությունին, համբուրվեցին։

Թնդաց ծափահարությունը։

— Հրանտ ջան, խոսքդ լավն էր, շատ ապրես.— քեռի Սամսոնն է, որ նորից մտել է թամադայի իրավունքների մեջ.— բայց մի խնդրանք էլ ունեմ, էս կենացին մի երգ պիտի ասես,-լսել եմ, որ լավ ձայն ունես։

Հրաժարվելու տեղ չուներ։ Երգեց, իր սիրած երգը՝ «Աշխարհս մե փանջարա է»։ Հուզված էր, բայց վատ չստացվեց։

Նորից ծափահարություն։

Ուրախությունը շարունակվում էր։ Իսկ Հրանտը իր իսկ երգի թևերով գնաց հեռու, Զանգվի ափը. մի անգամ կամաց երգել է Աշխենի համար... Այո, աշխարհս մի փանջարա է, մեկի համար՝ լուսավոր, մյուսի առաջ՝ մութ ու անհեռանկար. երբեմն՝ ապակիները ջարդված, միջանցիկ քամին է վազվզում...

Ուրախությունը շարունակվում էր։

43.

Պրոֆեսոր Գարեգին Սավոյանն ավելի գործնական գտնվեց, քան սպասում էին։ Իրենց վերջին հանդիպումից մի շաբաթ հազիվ էր անցել, ուրբաթ երեկոյան զանգահարեց Հրանտենց տուն և բավական պաշտոնական տոնով հայտնեց.

— Երեխայի հարցը լուծվում է. առավոտյան ժամը տասին լինեք ինձ մոտ։

Մի ուրախ խուճապ սկսվեց տանը։ Լուսիկ մայրիկն անընդհատ օրհնում էր Գարեգինին.

— Այ լույս դառնա նրա հոր հոգին, նա միշտ էդպես հարեհաս լինի մարդկանց, այ մոր կաթի նման հալալ լինի էն աղ ու հացը, որ ես դրել եմ նրա առջև...

Նվարդը հուզմունքից մատներն էր ջարդում, ու հանգիստ մի տեղ նստել չէր կարողանում, և խոսում էր ինքն իրեն, բայց բարձրաձայն.

— Ինչպե՞ս պիտի լուսանա էս գիշերը, տե՞ր աստված, ի՞նչ դանդաղ են անցնում ժամերը...

Հրանտը լուռ ծխում էր. և՝ ոչ մի խոսք։ Նրա ուղեղում մեղվի փեթակը նորից շուռ էր եկել, մեղուները դուրս էին թափվել ու սկսվել էր մի ահավոր հրմշտոց...

— Հրանտ, ինչի՞ չես խոսում։ Գոնե հիմա բերանդ բացիր։

— Ի՞նչ խոսեմ, Նվարդ. վաղը կգնանք, կտեսնենք։ Եթե հաջողվի...

— Իսկ ինչո՞ւ չպիտի հաջողվի, Հրանտ, դու նորից ինձ վախեցնում ես։

— Հարս ջան, վախենալու բան չկա, Գարեգինը որ ասաց, ուրեմն կանի։

— Ինչպես այն մեկն արեց,— չարությամբ նետեց Հրանտը։ Հետո ինքն էլ փոշմանեց իր պոռթկման համար. ինչ կարիք կար, մայրն ու կինն այնպիսի անհամբերությամբ են սպասել այս օրվան։ Իսկ ի՞նքը։ Զգիտի, և ուզում է, և չի ուզում. համենայնդեպս բոլորովին չէր դառնանա, եթե այս մեկն էլ ձախողվեր։ Գուցե և ուրախանա՞ր...

— Հրանտ, մենք գոնե չհարցրինք՝ տղա՞ է, թե՞ աղջիկ։

— Դա ի՞նչ կարևոր է, Նվարդ, մեզ համար միևնույն է, երեխան երեխա է։

Իսկ հոգու խորքում ուզում է, որ տղա լինի, այն մեկի փոխարեն. նրա, որին անգութ Աշխենը փախցրեց իրենից։ Իսկ կկարողանա՞ փոխարինել նրան. միևնույն է, ոչ նրան է տեսել, ոչ սրան։ Հետո՞ ինչ, որ չի տեսել, բայց հո գիտի, որ նա իր արյունն է... Սրան էլ կպահեք, կմեծացնեք և կդառնա ձեր արյունը. այդպես են ասում։ Գուցե և ճիշտ է։ Այնքան պատմություններ է լսել պատերազմական տարիների ախուր դեպքերի մասին. որբացած երեխային տեր են կանգնել օտար մարդիկ, պահել են քանի տարի, ամուսնացրել են, թոռնիկներ ունեն արդեն։ Եվ հանկարծ հայտնվել է այդ երեխայի կորած հայրը։ Պարզվում է, որ այն ժամանակ ծանր վիրավոր վիճակում գերի է ընկել թշնամու ձեռքը։ Հե-

տո, պատերազմը վերջանալուն պես սկսել է իր մենուճարի որոնումները։ Ու քսան հինգ տարի հետո միայն նրան հաջողվել է գտնել իր զավակին, որն արդեն զավակների հայր է։ Եվ տղան չի գնացել իր հարազատ հոր մոտ, գնալ չի կարողացել, այնքան է մերվել իր նոր ծնողների հետ, որ ջնջվել են հարազատ-անհարազատության սահմանները։ Արյունը մղվել է ետին պլանի վրա, հարազատ ծնող են դարձել նրանք, ովքեր պահել-շահել են նրան։ Գուցե օրինաչափն ա՞յս է. գուցե ամենազոր ժամանակն իրեն էլ կհաշտեցնի այս անխուսափելի իրողության հետ։ Աստված վկա, ինքը կուզենար այդ։ Մանավանդ ուրիշ ելք չի գտնում։ Իսկ այն մյուսի, իսկականի հույսը մի՞թե կորավ։ Ոչ, այն մեկի հույսը մնում է ու կմնա ընդմիշտ։ Առանց այդ հույսի ապրել չի լինի, ո՞չ... Ախր այնտեղ միայն երեխան չէ։ Աշխենը գրել էր «իմ բաժին Հրանտը», տեսնես անունն ի՞նչ է դրել։ Գրողը տանի, հայր ես, և երեխայիդ անունն էլ չգիտես։ Եվ այնուամենայնիվ այնտեղ երեխայից բացի կա նաև Աշխենը, որին ոչ մի օր, ոչ մի ժամ մոռանալ չի կարողանում։ Իսկ նրան որպես ի՞նչ ես հիշում, քո ի՞նչն է նա։ Չգիտի, աստված վկա, չգիտի, միայն կասկած չունի, որ առանց նրան էլ դժվար է ապրել։ Իսկ Նվա՞րդը.— բողոքում է ներքին ձայնը։ Առանց նրան՝ նույնպես, ոչ՝ բոլորովին չի կարող։ Հետո՞։ Չգիտի, չգիտի, այդ հարցի լուծմանն այդպես էլ չի հասել։ Իսկ հույս կա՞ հասնելու, նորից չգիտի։ Միայն մի բան պարզ է, որ պրոֆեսոր Սավոյանի առաջարկած երեխան պետք է որդեգրել։ Ետ կանգնելու ճանապարհ չկա այլևս, գոնե հանուն իր մայրիկի ու Նվարդի պետք է անել այդ քայլը։ Ուրիշ ելք չկա...

Առավոտյան պրոֆեսորի մոտ գնացին երեքով։ Յուրաքանչյուրի սրտում և՛ տագնապ կար, և՛ հույս։ Ասես մի սրտամոտ տոնահանդեսի էին գնում, որի բարեհաջող ավարտի համար սակայն բավարար երաշխիքներ չունեին։

Պրոֆեսորն սպասում էր նրանց։ Նրա մոտ նստած էր նաև մի երիտասարդ բժշկուհի։ Տգեղ կին էր, բայց բարի աչքեր ուներ ու շատ հաճելի ժպիտ։ Եվ այդ ժպիտը նրան այնպես էր գեղեցկացնում։

Եվ իսկապես, ինչո՞ւ ենք մենք հաճախ շեշտը դնում ար-

տաքին գեղեցկության վրա. ինչո՞ւ ենք անտեսում, կամ երկրորդ պլանի վրա մղում ներքին գեղեցկությունը, մի՞թե վճռականը սա չէ։ Իսկ ի՞նչ գիտես թե այս անհաջող արտաքինով կնոջ ներքին գեղեցկությունն ավելի կատարյալ է։ Աչքերն են ասում, աչքերի անսխալ արտահայտությունը. աչքերը՝ մարդուս հոգու հայելին. նրանք քեզ հաղվագյուտ դեպքերում կարող են խաբել. և խաբելու դեպքում էլ հայտնի չէ նրա՞նք էին մեղավոր, թե քո՝ հայացքը ճիշտ կարդալու շնորհքն էր պակաս... Հանկարծ Հրանտը զարմանքով նկատեց, որ ինքն զբաղված է այս անծանոթ բժշկուհու արտաքինի վերլուծությամբ։ Մի՞թե հիմա դրա ժամանակն է, ախր բոլորովին ուրիշ բանի համար են եկել իրենք։

— Մի ջահել, խաբված աղջկա երեխա է. մորը տեսնելու անհրաժեշտություն չկա, ինքն էլ այդ չէր ցանկանում. նա կես ժամ առաջ դուրս գրվեց հիվանդանոցից։ Կարևորն այն է, որ առողջ աղջիկ էր։

— Իսկ երեխան, պրոֆեսոր, տղա՞ է, թե աղջիկ,— Նվարդի շունչն ասես կտրվում էր։

— Տղա է. մի փարթամ ու առողջ երեխա։ Դոնարա Կարպովնա, խնդրում եմ ասեք, որ երեխային բերեն։

Դոնարա Կարպովնան ոտքի կանգնեց պատրաստակամ ու գեղեցիկ քայլվածքով գնաց մինչև դռան մոտ. մի պահ կանգնեց ու ետ շրջվեց դեպի Հրանտը.

— Շատ լավ երեխա է. համոզված եմ, նա ձեզ համար հրաշալի տղա կդառնա։ Ես և երաշխավորում և մաղթում եմ ձեզ ու նրան այդ բախտավորությունը.— ու դուրս գնաց շտապ։ Հրանտը չհասցրեց շնորհակալություն հայտնել, բայց հոգու խորքում կրկնակի գոհ էր, նախ որ լավ երեխայի են հանդիպել, հետո էլ՝ ինքը չի սխալվել, իսկապես այդ Դոնարա Կարպովնան բարի է ու գեղեցիկ հոգի ունի։ Ուրեմն գեղեցիկ մարդ է...

Լուսիկ մայրիկին ավելի շատ բան էր հետաքրքրում, մանավանդ երեխայի մոր մասին, ով է, ինչ է, որտեղից է։

— Գարեգին, օղորմի պապիդ, մի կարգին ասա տեսնենք էդ ի՞նչ աղջիկ էր, ի՞նչ ընտանիքից։ Ախր դու շատ լավ գիտես, որ դա կարևոր է։

— Երևանից է, տասնութ տարեկան, ինստիտուտի առա-

ջին կուրսում է սովորում։ Իր ասելով՝ խաբվել է, ես ի՞նչ իմանամ։

— Ծնողներն ովքե՞ր են, ի՞նչ մարդիկ են։

— Մայրը տնային տնտեսուհի է, հայրը... չգիտեմ, երևի ուղտի ականջում քնածի մեկը։

— Ի՞նչ անի հիմա ծնողը, էնպես են դուրս ընկել, դրանց կապը քաշել լինո՞ւմ է... իսկ գիտե՞ն ծնողները, թե՞ իսկապես մարդ ու կին ուղտի ականջում քնած են։

— Մայրը գիտի, եղել է ինձ մոտ, ո՞նց էր լաց լինում խեղճը, իսկապես հաճախ ծնողները շատ են մեղք... Իսկ հոր մասին տեղեկություն չունեմ. ենթադրում եմ, թե չգիտի։

— Իսկ փողի հարցն ինչպես է, Գարեգին, ի՞նչ պիտի տանք։

— Լուսիկ, ավելորդ բաներ ես խոսում, փողի հարց չկա այստեղ։

— Իբր դու չգիտե՞ս, որ էդ բաները հիմա փողով են անում...

Հրանտը հանկարծ գոնատվեց. ասես սրտի վրա ինչ-որ մի բան ծանրացավ ու ճնշում էր, սեղմում էր։ Տե՞ր-աստված, ամեն ինչ կարելի է առնել ու ծախել, բայց երեխան... Այդ ի՞նչ ահավոր դաժանություն է։ Ու ինքն էլ չիմացավ, թե ինչպես գոռաց.

— Վերջ տվեք, խնդրում եմ, այդ խոսակցությանը...

Ներս մտավ Դոնարա Կարպովնան՝ երեխայի բարուրը գրկին։

...Հիմա մեքենայով տուն են վերադառնում։ Երեք էին, չորս դարձան։ Վերջապե՞ս...

Երեխան Լուսիկ մայրիկի գրկին է։ Քնած է մուշ-մուշ։ Նվարդի աչքը երեխայի վրա է, կարծես արդեն սկսեց սիրել նրան. մի՞թե այդ հնարավոր է։

Լուսիկ մայրիկին անհանգստացնում է նորածնի խնամքի հարցը, ինչպե՞ս պիտի պահեն նրան առանց մոր կաթի, պետք է ստնտու ճարել, հարևան-բարեկամների մեջ ո՞վ կա, արհեստական կերով երեխա չի պահվի, վատառողջ կմեծանա։

Նվարդը նայում է նորածնին ու մտածում,— վաղվանից

արձակուրդ կվերցնեմ ու կնստեմ կողքիդ. դիմումս արդեն գրված է։ Քեզ էնպես պահեմ որ...

Հրանտը վարորդի կողքին է նստած ու ետ նայել չի համարձակվում։ Զարմանք բան է, այնտեղ, պրոֆեսորի մոտ էլ ոչ մի անգամ երեխային նայել չկարողացավ, ինչո՞ւ։ Եվ ինչ լավ է, որ այդ անկատ մնաց Նվարդի աչքից։

Աչքակապուկի ես խաղում, Հրանտ Ստեփանյան, մինչև ե՞րբ, և ինչի՞ համար...

44.

Տանն ամեն ինչ խառնվեց իրար։ Մի մատ երեխա, և այդքան իրարանցում։ Շատ էլ լացկան երեխա էր. գուցե մի տեղն է ցավում, կամ քաղցած է, ի՞նչ իմանաս։ Միայն չխղճալ չես կարող, փոկապես մեղք է, օտար ընտանիքում, ծնողներից հեռու... իսկ ինչո՞ւ ծնողներից հեռու, ապա դուք ինչացո՞ւ եք, մի՞թե նա արդեն ձերը չէ։ Իրավաբանորեն այո, բայց և այնպես, ինչ-որ մի բան... Գրողը տանի, ե՞րբ պետք է մոռանաս այդ ինչ-որ մի բանը, Հրանտ Ստեփանյան. դու արդեն երեխա ունես, նա ձեր տանն է, ահա, այդ տղտղացող մանչուկը քոնն է, քո տղան, հասկացիր։ Իսկ միտքը նորից ուրիշ տեղ է, որտե՞ղ, ինքն էլ չգիտի, նրա մոտ է միտքդ, որին տարավ Աշխենը, ու հիմա տառապում է մենակ, երեխա է մեծացնում։

Այնպես դժվար լուծվեց ստնտուի հարցը։ Քաղաքի մյուս ծայրում մի ծանոթ կին ճարեցին. օրական երկու անգամ մեքենայով բերում են նրան կամ երեխային են տանում՝ կերակրելու։ Նաև կաթ են ստանում պոլիկլինիկայից, մի կերպ ծայրը ծայրին են հասցնում։ Տեսնես Աշխե՞ն ինչպես է, կարողանո՞ւմ է կերակրել, թե՞ նա էլ այսպես... Սատանան տանի, մինչև ե՞րբ պետք է քո օրն անցնի համեմատությունների մեջ, տեսնես նա ինչպես է, նրանց մոտ ինչ կա, ե՞րբ պիտի դու միակողմանի դառնաս, մի հավատի գաս, թե՞ այս երկվությունը պիտի ուղեկցի քեզ քո ամբողջ կյանքում...

Նվարդն առավոտից մինչև կես գիշեր վազվզոցի մեջ է։ մեկ գնում է կաթի ետևից, մեկ՝ կերակրող մոր, երեխայի թրջած շորերն է լվանում, արդուկում։ Մոռացել է ամեն ինչ։

Տան ամբողջ հոգսը ծանրացել է Լուսիկ մայրիկի ուսերին։ Եվ, այնուամենայնիվ, նա հանգիստ է, առանց խուճապի մատնվելու կատարում է իր գործը։ Չնայած հոգսը շատացել է, բայց գոհ է իր վիճակից, վերջապես իր տանն էլ թոռան լաց լսվեց, փոր փեշերն էլ չիշիկոտվեցին...

Այդ օրերին հանկարծ երևաց Սրբուհի մորաքույրը։ Տանը երեքով էին, Լուսիկ մայրիկը, Նվարդն ու նորածինը։ Ներս խուժեց տիրոջ իրավունքով ու միանգամից վրա տվեց.

— Լսել եմ, որ երեխայի տեր եք դարձել։ Դե որ հարցն էդպես եք լուծել, լավ եք արել. գուցե ճիշտը դուք եք... Հարս ջան, չնեղանաս ինձնից.— գրկեց Նվարդին, համբուրեց ճակատը,— ինչքան չլինի, հին խասյաթի տեր պառավ եմ, միշտ չէ, որ ձեզ նման եմ մտածում։ Բայց որ ինձ չար կին համարես, ես շատ կնեղանամ... Սիրտ է, ցավում է իմ հարազատի համար, իսկ ցավը ամեն մարդ չէ, որ ճիշտ է հասկանում։ Ինչ որ է, թող բարի ժառանգ լինի, ուրախությունով լցնի էս տունը։

Նվարդը չդիմացավ, ընկավ Սրբուհի մայրիկի վզով ու լաց եղավ անզուսպ, ու լացի միջից շշնջում էր։

— Շնորհակալ եմ, մորաքույր...

— Աղջի, բա երեխի անունն ի՞նչ եք դրել, չասացիք, որ իմանանք։

— Հրանտն ուզում է հոր անունը դնի, Արշակ, ոնց որ Նվարդիս սրտովը չի, ասում է՝ հին անուն է։ Դե, էդպես էլ մնում է։

— Իհարկե հին է, հիմա ո՞վ է իր երեխայի անունը Արշակ դնում։

Լուսիկ մայրիկը զարմացած քրոջն էր նայում. իսկ ինքն ակնկալում էր նրա օգնությունը, մի՞թե լուրջ է ասում։

— Հիմա թե աղջիկ ծնվեց, անունը Դեզդեմոնա են դնում, Էմիրալդա կամ Սվետլանա։ Մեր գյուղում մեկն իր աղջկանը Սիմաֆոր է ասում... թե տղա ծնվեց, պատրաստի կանգնած են՝ Ժիլբերտն ու Ֆիլբերտը, Վալտերն ու Հերբերտը. Արշակն ի՞նչ գործ ունի հայի ընտանիքում...

Նվարդն արդեն գլխի էր ընկնում, թե դեպի ուր է թեքում մորաքույր Սրբուհին և անհանգստացած էր. հիմա ամեն ինչ կխառնի իրար. մի հարցնող լինի, թե երեխայի անունը քո

ի՞նչ գործն է, ինչո՞ւ ես խառնվում քեզ չվերաբերվող բաներ-ի մեջ։ Ախր իսկապես Արշակը շատ է հին։ Հրանտը կատաղով ասում էր՝ ոչ միայն իմ հայրն է կրել այդ անունը, այլ և հայոց անվանի թագավորներից մեկը։ Չեմ ուզում, ինձ թագավորներ պետք չեն, ես ուզում եմ, որ իմ երեխայի անունը լինի ժամանակակից, բարեհնչուն։ Իսկ կոնկրետ ի՞նչ, թեկուզ և Վիկտոր, Հենրիկ, Հեկտոր...

Սրբուհի մորաքույրն ասես պատասխանում է Նվարդի շարտահայտած առարկությանը։

— Արշակից լավ անուն մեկ էլ Արշակն է։ Թող ծննդականում Արշակ լինի, իսկ դուք ուզում եք Արկադի ասացեք. հիմա շատ է ընդունված։ Հրեն մեր կոլխոզի հաշվապահը, Արշակի տղա Արշակն է, բայց բոլորն ասում են՝ Արկադի Արկադևիչ։ Զարմանք բան է, Աշոտին էլ են Արկադի ասում։ Արշակին էլ։ Թող Արկադի լինի, էդ էլ հո ժամանակակի՞ց է...

Նվարդի շնչառությունը գնալով կանոնավորվում էր, իսկապես, Արկադին վատ չէ։ Միևնույն է, Սրբուհի մորաքրոջից փրկություն չկա։ Դե, վերջապես Հրանտը շատ է ուզում։ Իսկ Լուսիկ մայրիկը ձայն չի հանում, բայց համոզված է, որ նա էլ համաձայն է դրան. շատ անգամ է ամուսնու մասին լավ բաներ պատմել. գոհունակությամբ ու շնորհակալությամբ է հիշում նրան, իհարկե կուզենա, որ իր տանը նոր Արշակ լինի։

— Դե, ես գնացի,— Սրբուհին ոտքի կանգնեց։ Նորից մոտեցավ երեխայի օրորոցին, ուշադիր նայեց քնած մանկանը,— առողջ երեխա է երևում, լայն էլ ճակատ ունի, թող բախտավոր մեծանա։

— Մորաքույր, գոնե թեյ խմեք,— անկեղծորեն անհանդգստացավ Նվարդը,— կամ մի բաժակ սուրճ տամ։

— Չէ, հարս ջան, սուրճի հետ գլուխ չունեմ, թեյ էլ նոր եմ խմել։ Հա, Հրանտն ինձնից նեղացած է, դա նրա գործն է, բայց իմ կարծիքը նրան ասեք։ Դե, մնացեք բարով։

45.

Հրանտը նորից գործուղման պիտի գնար. արդեն երրորդ անգամն էր վերջին կես տարվա ընթացքում։ Շատ չեղա՞վ։

Բայց տարօրինակն այն է, որ հիմա հաճույքով է գնում գործուղման, նույնիսկ զարմանքով նկատել է, որ անհամբեր սպասում է այդպիսի առիթի։ Իսկ առաջ տհաճությամբ էր գնում. դժվար էր համաձայնվում, գնալուց հետո էլ աշխատում էր շուտ վերադառնալ, որքան այդ հնարավոր էր լինում։ Տունը, մայրը, կինը ձգում էին նրան։ Ինչո՞ւ հիմա այդպես չէ, գնում է հեշտությամբ, մնում է մինչև վերջ. մի տեսակ առաջվա շտապողականությունը չկա։ Ինչո՞ւ։ Հիմա մանավանդ, երբ տանը երեխա կա, մի՞թե ինքն ավելի պարտավոր չէ աչքը դեպի տունը պահելու։ Պարտավոր է, հասկանում է այդ բոլորը, բայց ինչ-որ հեռու ճամփաներ ձգում են նրան, ինչո՞ւ, դեպի ո՞ւր, ինքն էլ չգիտե...

Այս անգամ էլ Մոսկվա է գնում, հինգ օրով, մի կարևոր խորհրդակցության մասնակցելու։ Եվ անհամբեր է. ե՞րբ պիտի տեղ հասնի, տեղավորվի հյուրանոցում։ Ասենք թե արդեն Մոսկվայում ես, «Ռոսիա» հյուրանոցում, հետո՞, ի՞նչ պիտի անես։ Դուրս կգամ քաղաք ու կշափշփեմ Մոսկվայի փողոցները, գուցե, հանկարծ և հանդիպենք... միամիտ երազանք։ Նախ գիտես, որ նա Մոսկվայում չէ։ Խնդրում եմ ճիշտ արտահայտվել, ոչ թե նա, այլ՝ նրանք։ Այո, գիտեմ, համոզված եմ։ Բայց գրել է, որ Մոսկվայով է գնում, գուցե և մնացել է, ինչ իմանաս։ Իսկ եթե նույնիսկ և մնացել է, կարո՞ղ ես հանդիպել այս հսկայական քաղաքում։ Դժվար է, իհարկե, բայց հնարավոր է, այնքան տարօրինակ ու անսպասելի հանդիպումներ են լինում կյանքում։ Ու պլշած աչքերով նայում է աջ ու ձախ, նայում է բոլոր անցորդներին, մանավանդ գրկին երեխա ունեցող կանանց... Եվ այսպես, ամբողջ երեք ժամ։ Ուշ էր, երբ հոգնած ու ջարդված հյուրանոց վերադարձավ։ Ճանապարհից մնացած մի քիչ լավաշ ու պանիր կար, կերավ անտրամադիր ու պառկեց քնելու։ Հիմա էլ մի տհաճ գոտեմարտ սկսվեց քնի հետ, սա խնդրում է, նա մոտ չի գալիս... Մտածում էր, պլաններ էր մշակում։ Վաղը խորհրդակցությունը կտևի մինչև ժամը երեքը. հետո շտապ մի բան կուտի ու կսկսի նույն աննպատակ շրջագայությունը քաղաքում, գուցե և, ով գիտի, տեր աստված...

Հետո, հանկարծ, ուղեղի մի հատվածում առկայծեց մի աղոտ հույս։ Հիշում է, մի անգամ, երբ Կիևյան կամրջի մոտ

կանգնած զրուցում էին, Աշխենը պատմեց իր ուսանողական տարիների կյանքից, ասաց, որ երեք հոգի էին ապրում մի սենյակում, ինքը, Լաուրան ու Ռոզան, ինչպես՝ էլ իր հիշողության մեջ մնացել են այդ անունները։ Հիշում է նաև, որ Լաուրան Մոսկվայում է ապրում, ինչ-որ գիտական աշխատողի կին է, իսկ Ռոզայի տեղը չի հիշում, գուցե և չի ասել Աշխենը։ Հիշողության մեջ մնացել է նաև Աշխենի՝ ծիծաղով ասված խոսքը, ինչպես այդ Ռոզայի մայրը ակնարկում էր Աշխենին իր տղայի համար ուզելու... Այսքանը, և ինչպե՞ս մոռացել էր այս բոլորը։ Իսկ որ հիշեցիր, ի՞նչ։ Ոչ մեկի ազգանունը չգիտես, Մոսկվայում մի Լաուրա, փորձիր գտնել. փողոցներում թրև գալն ավելի հուսալի միջոց չէ՞...

Խորհրդակցությունն տպասածից ավելի հետաքրքիր էր անցնում։ Այ, սա բանի նման է, սովորելու բան կա։ Իսկ հաճախ ձևի համար են միայն կանչում, թռչնանշանի համար։ Երբեմն նույնիսկ զարմանում ես, թե արժե՞ր այսքան մարդ հավաքել երկրի տարբեր ծայրերից և այսքան քիչ բան տալ նրանց։ Փառք աստծո, այս անգամ լավ է, հետաքրքիր է։ Կարողացավ ստուգել իր մի քանի տեսակետները, հրաժարվեց սխալ մտքերից, նոր ուղիներ գծեց իր համար։ Պատահական խոսողներ չեն, մարդիկ իրենց տարիների փորձի մասին են խոսում և այնքան համոզիչ։ Իսկական առաջավոր փորձ։ Վաղն ինքն էլ է ելույթ ունենալու և հուզվում է, շնայած գրած տեքստ ունի։ Անպայման պետք է վերանայել այսօրվա լսածների ոգով։ Գիշերը կաշխատի դրա վրա։ Այժմ պետք է շարունակել որոնումները։ Իսկ դրանից ի՞նչ օգուտ, մինչև ե՞րբ պետք է անլուրջ քայլեր անես, ախր արդեն փոքր չես։

Այո, պետք է մեկընդմիշտ հրաժարվել այս հիմար վիճակից. վերջ։ Դու երեխա ունես, կարգին ընտանիքի հայր ես, ուրեմն քեզ պահիր արժանավայել, ձեռք քաշիր թռի-վռի բաներից։ Ոչ բարով, նաև գլխավոր ինժեներ ես, մի մեծ գործարանի գլխավոր... Ուրեմն ի՞նչ, այլևս ոչ մի որոնում ու ոչ մի հո՞ւյս։ Հույսդ կարող ես և պահել սրտիդ մի թաքուն անկյունում, շատ աղոտ հույս, եթե Աշխենն, այնուամենայնիվ, չդիմանա ու նամակ գրի, ասենք, Թամարին. դու նամակ ստանալու ակնկալություն էլ չունես... Ինչ դաժան է կյան-

քը, տե՞ր աստված։ Կյա՞նքն է դաժան, թե՞ մարդիկ, և դու ո՞ր կարգի մարդկանց մեջ ես քեզ դասում, դաժանների՞, թե՞ ոչ դաժանների...

46.

Մոսկվայում մի օր մնացին միայն, ավելի ճիշտ՝ մի գիշեր։ Երեկոյան հասան ընկերուհու՝ Լաուրայի տուն, առավոտյան արդեն գնացքի մեջ էին։

Ու հիմա եկել-տեղ են հասել. մյուս ընկերուհու՝ Ռոզայի տանն են։ Այնտեղ Լաուրան, այստեղ Ռոզան։ Ի՜նչ ընկերուհիներ էին։ Ամբողջ հինգ տարի միասին, դասերին, ինստիտուտից դուրս, հանրակացարանի նույն սենյակում։ Անբաժան եռոտանի,— ինչպես կատակով կոչում էին նրանց համակուրսեցիները։ Անբաժան։ Բայց և այնպես բաժանվեցին, ինստիտուտն ավարտելուց հետո։ Լաուրան մնաց Մոսկվայում։ Մենակ չմնաց, Սերգեյի հետ էր. նախավերջին կուրսում արդեն նրանց մտերմությունը ընտանեկան կապերի հուսալի հիմք դարձավ։

Ամուսնացան ու մնացին այն գործարանում, որտեղ նրանք պրակտիկայի էին գնում։ Սերգեյը գիտահետազոտական աշխատանքի նախասիրություններ ուներ դեռևս ուսանողական տարիներին։ Հիմա լրիվ նվիրվել էր այդ աշխատանքին, և, խնդրեմ, թեկնածուական դիսերտացիան արդեն պատրաստ է, շուտով կդրվի պաշտպանության։ Ինքը Երևան, մորաքրոջ մոտ գնալու ցանկություն հայտնեց, այնուամենայնիվ առանց հարազատի դժվար է, որքան էլ չոր կին, մորաքույր է, նեղ օրին կհասնի։ Իսկ Ռոզան նշանակում ստացավ Կույբիշև. մեքենաշինական մի գործարանում ինժեներ է աշխատում։ Ամուսինը մարզային գործադիր կոմիտեում բաժնի պետ է։ Մի երեխա ունեն, որի խնամքն ու դաստիարակությունը վստահել են Ռոզայի մորը՝ Ալլա Կուզմինիշնային։ Զարմանալի հոգատար ու սրտացավ կին է, քանի անգամ է եղել Մոսկվայում, աղջիկների հանրակացարանում, երբ նրանք դեռ ուսանող էին։ Մոր նման էր բոլորի հետ, խորթություն չկար։ Հիմա էլ Աշխենին տեսնելով Ալլա Կուզմինիշնան ավելի ուրախ էր, քան Ռոզան։ Գուցե իրեն

այդպես թվում էր, բայց և այնպես Ալլա Կուզմինիչնայի ուրախությունը շատ էր անկեղծ ու անմիջական։

Երկար ժամանակ երեքով զրուցում էին անկաշկանդ։ Տան տղամարդը՝ Վալենտին Պետրովիչը գործուղման մեջ էր. երեխան խաղում էր բակում, իսկ Աշխենի նորածինը քնել էր մուշ-մուշ։

— Դե, հիմա կարգին պատմիր, տեսնենք սա ի՞նչ բան է, ինչո՞ւ հանկարծ որոշեցիր գալ Ուրալ, այս երեխան... Ինչ-որ բա՞ն է կատարվել քեզ հետ, Աշխեն, պատմիր, սիրտդ թեթևացրու։ Մենք իրարից բան չենք թաքցրել, այն տարիներին անգամ։ Ստացել եմ քո նամակը, բայց շատ բան անհասկանալի է ինձ։ Խոսիր, լսում ենք։

Ոռզան է, ընկերուհու ուսերը կիսագրկած՝ սպասում է նրա պատասխանին։ Ալլա Կուզմինիչնան նույնպես սպասողական վիճակում է։

— Տխուր պատմություն է, ինչո՞ւ ձեր սիրտն էլ տակն ու վրա անեմ։

— Է՜, միևնույն է, մենք պետք է իմանանք։ Եվ ինչքան շուտ, այնքան լավ։

Եվ Աշխենը պատմեց ամբողջը։ Հուզվելով, շնչակտուր լինելով։ Պատմեց Հրանտի մասին, երեխային թողնելու մտադրության և իր որոշումը հանկարծակի փոխելու մասին։ Ինքնաթիռ, Մոսկվա։ Գնացք, Կույբիշև։ Բոլորը։ Ոչինչ չթաքցրեց, ոչինչ չմոռացավ։ Նույնիսկ հիշեց վարպետ Հարությունին, նրա մաքուր առաջարկությունն ու իր անամոթ մերժումը։ Լուսիկ մայրիկին։ Ու լաց եղավ անձայն։

Տիրեց մի ճնշող լռություն։ Այն առաջինը խզեց Ալլա Կուզմինիչնան։

— Իսկ ես ինչպե՞ս էի քեզ հավանել, Աշխենչիկ, տղայիս քանի անգամ փորձեցի Մոսկվա ուղարկել, որ քեզ տեսնի, ծանոթանա, մտածում էի, գուցե... Չկարողացա, բան չըստացվեց։ Արդեն ման էր գալիս մի պոչը կտրածի հետ, բաժանել չկարողացա։

— Մամա, պետք չէ, խնդրում եմ, նրանք արդեն ամուսնացել են, երեխա ունեն։

— Թռի-վռի աղջկանից ի՞նչ կին։ Արտասահման են գնա-

ցել, կարգին փող են աշխատում։ Կամ խելքի կգա, կամ եղածն էլ էնտեղ կթողնի։

— Դե, ինչ անեմ, մորաքույր Ալլա, գուցե և ես վատ հարս չէի լինի ձեզ համար, չուզեցիք...

Չգիտես կատակո՞վ, թե՞ լուրջ ասվեց այս խոսքը։

— Անցածն անցել է... Աշխենս, էդ քո տղայից ինչի՞ փախար, չէի՞ր սիրում։

— Սիրելն այն խոսքը չէ, մորաքույր, ես նրա համար հիմա էլ խելագարվում եմ...

Ու լաց եղավ՝ գլուխը դրած Ալլա Կուզմինիչնայի կրծքին։

— Անխելք աղջիկ, բա սիրուց կփախչե՞ն... Հա, ասացիր նա կին ունի. է՛, սիրում էր, թող քեզ հետ ամուսնանար։

— Մամ,— սրտնեղեց Ռոզան,— այնպես հեշտ ես ասում, կյանքն ավելի բարդ է։

— Գիտեք ինչ, աղջիկներ, կյանքում հաճախ այնքան դժվար չէ, որքան մենք ենք այն պատկերացնում։ Արհեստական դժվարություններ ենք ստեղծում, հետո սկսում ենք այն հաղթահարել։ Ո՞ւմն է պետք այդ։ Եթե այդ Գրանտը քեզ է սիրում, դու՝ նրան, և արդեն երեխա էլ ունեք, ինչո՞ւմն է բանը։

— Բայց նա սիրում է իր կնոջը,— արցունքների միջից պայթեց Աշխենը։

— Ուրեմն քեզ չի սիրում, էլ ինչո՞ւ ես դոնեդուռ ընկել։

— Ճիշտ չէ, սիրում է։ Ինձ թվում է թե...

— Այդպես չի լինում, աղջիկս, համենայնդեպս կարգին տղամարդը միաժամանակ երկուսին սիրել չի կարող։ Իսկ դու նրան ներկայացրիր չգիտեմ որպես ինչ։

— Լավն է, մորաքույր, հավատացեք, նա շատ լավն է։— Աշխենի լացը նորից բռնեց։

— Դե, ուրեմն պիտի մնայիր ու պայքարեիր քո իրավունքների համար։

— Ահ, մորաքույր, ինչպես հեշտացնում եք դուք ամեն ինչ... Ես ինչպե՛ս ինձ թույլ տայի պատճառ դառնալ նրա ընտանիքի քայքայման։ Ախր համոզված եմ, որ նա ինձ հետ էլ երջանիկ չէր լինի։

— Դե, ուրեմն թուլակամ չպետք է լիներիր, պարտավոր էին պահպանել քո աղջկական պատիվը։

Աշխենը նորից փուլ եկավ. Ալլա Կուզմինիչնան դիպել էր նրա վերքի ամենացավոտ տեղին։

— Մամա, պետք չէ, դու նրան բոլորովին չես խղճում։

— Ես որ նրան չսիրեմ, այդպես խիստ չեմ խոսի հետը. փոքր չէ արդեն։ Թող լավն ու վատն իրարից ջոկել կարողանա։

Լռեցին նորից։ Աշխենն իրեն հավաքեց, սրբեց աչքերը։

— Շնորհակալ եմ, Ալլա Կուզմինիչնա, շնորհակալ եմ ձեր ճիշտ խոսքերի համար։ Չկարծեք թե նեղանում եմ. ամենևին։ Թթու սպասը ես եփել եմ, ես էլ պիտի խմեմ...

— Ես արդեն ասել եմ մեր գլխավոր ինժեներին,— նորից խոսեց Ռոզան,— գալ շաբաթ քեզ աշխատանքի կընդունենք մեր լաբորատորիայում. մեկը ֆիզիոլոգիական արձակուրդ է գնացել, առայժմ նրան կփոխարինես, մինչև տեսնենք։ Գործարանը հանրակացարան ունի. կաշխատեմ մի սենյակ վերցնել քեզ համար։ Երեխային մսուր կտաս, միայն ազգանվան հարցը պարզիր վերջնականապես, դա կարևոր է։

— Ծննդյան վկայականը վերցրել եմ իմ ազգանունով, իրեն էլ հորս անունն եմ տվել, Գուրգեն։

— Ուրեմն Մարգարյան Գուրգեն։

— Շատ լավ է,— նորից խոսակցությանը միջամտեց Ալլա Կուզմինիչնան,— կապրես, կաշխատես, մինչև ջրերը կպարզվեն։

— Ա՛հ, այդ ջրերը պարզած տեսնելու հույս չունեմ, սիրելի մորաքույր, այս է սարսափելին։

— Եթե նա քեզ ու քո երեխային սիրում է, անպայման կգա։

— Կգա, եթե տեղս իմանա։

— Իսկ ինչո՞ւ չգիտի, նամակ գրիր։

— Ոչ մի դեպքում։

— Ես կգրեմ։

— Դուք այդ չեք անի, Ալլա մորաքույր։

— Դե, գիտես ինչ, այդ դեպքում ես քեզ բոլորովին չեմ հասկանում։

— Եթե կարողանայի գոնե ինքս ինձ հասկանալ...

Լաբորատորիայում Աշխենին լավ ընդունեցին։ Գուցե գիտեին, որ իրենց վարիչի ընկերուհին է, կամ, ինչպես ասում են, աստղը բռնեց։ Համենայնդեպս առաջին իսկ օրվանից ետին պլանի վրա մղվեց անծանոթ միջավայրում տիրապետող խորթության զգացումը։ Միայն տղաներից մեկը փորձեց կատակել, և առանձնապես համով կատակ չէր։

— Գիտե՞ք, հարգելիս, ես մի մեծ թերություն ունեմ, հարավի գեղեցկուհիներին անտարբեր նայել չեմ կարողանում։

— Իսկ ես ընդհանրապես գեղեցիկ տղամարդու տեսնել չեմ ուզում,— չոր կտրեց Աշխենը։

— Օ, այդ շափազանց խիստ էր, չնայած ձեր մեղադրանքում ինձ համար մխիթարական մի կետ կար — գեղեցիկ տղամարդկանց շարքը դասեցիք ինձ. շնորհակալ եմ, զգացված եմ, օրիորդ։— Ու տղան ռեվերանսներ արեց բավական հաջող և առիթ տվեց ընդհանուր ծիծաղի։

— Անատոլի, վերջ տուր կապկություններիդ։ Աշխենն իսկապես անլուրջ մարդկանց տանել չի կարողանում. եթե ուզում ես նրա ուշադրությանն արժանանալ, մի քիչ լրջացիր. չկարծես, թե քո գեղեցիկ արտաքինով կարող ես բոլոր կանանց գրավել։

— Շնորհակալություն, Ռոզա Պավլովնա, դուք նույնպես բարեհաճեցիք ընդգծել իմ գեղեցիկ մռութի առկայությունը։

Ծիծաղն ավելի բարձր նոտաների վրա հնչեց։

Աշխենն իր կամքից անկախ նորից նայեց Անատոլիին. անիրավն իսկապես որ լավն է. գեղեցիկ տղամարդ է, ոչինչ չես ասի, միայն երևի մի քիչ առնականությունն է պակաս... Իսկ քե՞զ ինչ, անամոթ աղջիկ,— նորից գլուխ բարձրացրեց մտքի ծանոթ հակաճառողը.— քեզնից կարծիք հարցրի՞ն։ Դե, ես պարզապես... Այո, դու պարզապես լուիր և գլուխդ կախ ուսումնասիրիր քո նոր գործը, այլևս դու իրավունք չունես հետաքրքրվելու և ոչ մի տղամարդով։ Ոչ մի՞։ Այո։ Իսկ Հրանտով կարո՞ղ եմ հետաքրքրվել։ Ասենք թե կարող ես, բայց ինչպե՞ս, և օգո՞ւտն ինչ... Յոթ սարի ետևում, իրարից կտրված, անվերադարձ բաժանված։ Իսկ ո՞վ քեզ բերեց այս

յոթ սարի ետևը, ո՞վ ձեզ բաժանեց անհեռանկար... Եվ դա ի՞նչ բաժանում է, երբ փոքրիկ Հրանտն ամբողջ գիշեր քեզ հետ է (ինչ անենք թե նրան փաստաթղթերով Գուրգեն են կոչում)։ Եվ օր-օրի վրա նա ավելի է նմանվում հորը. թե՞ իրեն թվում է միայն։ Կենդանի վկան կողքիդ՝ դու կարո՞ղ ես նրան մոռանալ, դա հնարավոր բա՞ն է. բայց դա պարտադիր է, պետք է, հասկացիր...

Իսկ մի քանի օր հետո...

Գործարանի գլխավոր ինժեները, հիսունն անց մի ծանրակշիռ մարդ, շատ հարգանքով ընդունեց իրեն։ Կարգադրեց լուծել հանրակացարանում մի սենյակ տրամադրելու և երեխային մսուրում տեղավորելու հարցը։ Աշխենն ասես փշերի վրա էր նստած, ուզում էր բացատրել, ասել երեխայի մասին, որտեղից, ինչպես։ Ախր լուրջ ու պատկառելի մարդ է, չկարծի թե փողոցից է գտնվել։ Իսկ որտեղի՞ց է, քո կարծիքով, ի՞նչ պիտի ասես։ Բայց և այնպես...

— Ես ուզում էի ձեզ ասել, Պյոտր Անդրեևիչ, որ իմ երեխան...

— Պետք չէ, Աշխեն Գուրգենովնա, դա ինձ չի վերաբերվում։ Պահեցեք, շահեցեք ձեր երեխային, միայն աշխատանքի մեջ թերացում չլինի, ահա իմ միակ խնդրանքը։

— Խոստանում եմ, կաշխատեմ...

— Ռոզա Պավլովնան հիմա ձեզ կտանի լաբորատորիա, կծանոթացնի աշխատանքին, ավելի ճիշտ՝ կհանձնարարի մեկին։ Իսկ դուք, Ռոզա Պավլովնա, կես ժամ հետո լինեք ինձ մոտ, լսում ենք ձեր հաշվետվությունը։

Հիմա իր աշխատասեղանի մոտ նստած ուշադիր լսում է Լիդա Իգնատենայի բացատրությունները։ Աշխատում է կենտրոնանալ, ոչ մի բառ բաց չթողնել։ Բայց ինչո՞ւ բոլոր ասածները չէ, որ տեղ են հասնում. ցրված է մի տեսակ, ինչո՞ւ, գուցե դիմացը նստած Անատոլիի գեղեցիկ մորո՞ւթն է մեղավոր...

Ահ, սատանան տանի, պատճառ ես գտել քո ցրվածությունը բացատրելու։ Տխուր ու անհրապույր հանրակացարան, մանկամսուրի դեռևս իրեն անծանոթ բվվոցը, Հրանտի հետապնդող հայացքը, ինչպե՞ս կենտրոնանաս...

Կատարվեց այն, որից այնքան վախենում էր Աշխենը, հիվանդացավ երեխան։ Եվ ինչպե՞ս հիվանդացավ։ Թոքերի բորբոքում՝ ամենածանր հեռանկարով։ Մուրո՞ում մրսեց, թե՞ հանրակացարանում։ Գուցե և՝ ճանապարհի՞ն։

Հիվանդության չափ ծանր էր և բժշկի մեղադրանքը։

— Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ անթույլատրելի քայլ եք կատարել, տիկին... (Առաջին անգամն էին իրեն տիկին կոչում, խորթ է, բայց և դրանից փախչել չես կարող։ Մայր ես արդեն, ուրեմն տիկնացել ես...)։

— Քսան օրական երեխային վերցնել ու հարավից, Մոսկվայի վ բայով, քարշ տալ մինչև Ուրալ. աններելի սխալ է սա։ Եվ ասենք, թե դուք չէիք հասկանում, բա մի խորհրդատու չեղա՞վ, ինչպե՞ս գնացիք այդ քայլին։

— Աստված վկա, գիտեի, որ վտանգավոր է, ուրիշներն էլ ասացին, բայց ստիպված էի...

— Վտանգել երեխայի կյանքը, և արդարանալու փորձ անել՝ ստիպված էի...

— Ես չեմ արդարանում, բժիշկ, ընդհակառակը, ինձ ամենամեծ մեղադրողը ես եմ... Եղածը եղել է, ետ չես բերի։ Ես միայն խնդրում եմ փրկել իմ երեխայի կյանքը, շա՜տ եմ խնդրում։ Եթե նրան մի բան պատահի, համոզված եղեք, որ ես էլ... Շատ եմ խնդրում, բժիշկ։

— Եվ այդպիսի զգացում ունենալով հանդերձ դուք որոշեցիք դիմել այդ վտանգավոր քայլին, շուրջերկրյա ճանապարհորդության դուրս բերել ձեր նորածնի՞ն։

— Ես ուրիշ ելք չունեի, բժիշկ, ես ինչպե՞ս բացատրեմ, որ դուք ինձ հասկանաք։

— Ես ձեզ իսկապես որ դժվարանում եմ հասկանալ... Իսկ երեխայի համար կանենք ինչ հնարավոր է, գուցե և կարողանանք փրկել։

— Աղաչում եմ ձեզ, բժիշկ։

— Այս օրերին երեխան, հասկանալի է, չի կարող օգտվել ձեր կրծքի կաթից, իսկ այն ձեզ մոտ առատ է։ Աշխատեցեք կերակրել ուրիշ երեխայի, կարիքավորներ շատ կան, թե չէ մի տխուր հիվանդություն էլ դուք կստանաք։

Աշխենը հինգ րոպեով անգամ երեխայի մոտից հեռանալ չէր կարողանում։ Ընկերուհիները, մանավանդ Ռոզան, շատ էր հորդորում՝ թող քեզ փոխարինեմ, շաբաթ օրը, կիրակի, գոնե մի ժամով, ախր մեղք ես, կեսդ է մնացել, մի տես ինչ գույն է եկել վրադ։ Չէր լսում, չէր կարող։ Պարզապես անհնարին բան էր դա։ Զգում էր, համոզված էր, որ ճիշտ չի վարվում, որ անհրաժեշտ է ուժերը պահել, բա որ ինքն էլ հիվանդանա, ո՞վ պիտի նայի երեխային։ Այո, պետք է համգստանալ, գոնե մի քիչ, ուժեր հավաքել։ Չէր ստացվում. ոչ քունն էր մոտ գալիս, ոչ հացի պատառն էր կուլ գնում։ Ու անընդհատ իր մտքերի հետ էր։ Մեղադրում էր իրեն, նաև փորձում էր արդարանալ. ոչինչ չէր ստացվում, ոչ մեղադրանքն էր համոզիչ, ոչ արդարանալն էր լիաբերան։ Այո, եթե կատարեր Հրանտի խնդրանքը, երեխան հիմա հոր մոտ կլիներ, ի՞նչ տարբերություն, հայրն էլ ծնող է, կարևորն այն է, որ չէր հիվանդանա։ Իսկ ինչո՞վ ես համոզված։ Համենայնդեպս այսպիսի բարդ ու անելանելի վիճակի առաջ չէր կանգնի։ Հրանտն այնպիսի ծանոթ պրոֆեսորներ ունի, բոլորին ոտքի կհաներ։ Իսկ ինչո՞վ են վատ այս հիվանդանոցի բժիշկները, տես ինչքան ուշադիր են, սրտացավ, լավն են, ճիշտ է, բայց և՝ ոչ մի տոկոսի բարելավում։ Աստված մի արասցե, եթե հանկարծ... Արցունքները խեղդում են. մի կերպ զսպում է իրեն ցավից չգոռալու համար։ Հիշում է Ալլա Կուզմինիչնայի խորհուրդ-մեղադրանքը,— ապրող երեխայի վրա լաց չեն լինի։ Իսկ եթե արցունքների ճանապարհը փակել չի՞ կարողանում...

Իսկ եթե, այնուամենայնիվ, փրկել չկարողանան երեխային, ի՞նչ պատասխան պիտի տա Հրանտին, իրեն որդեսպան չի՞ կոչի... իսկ դու Հրանտին որտե՞ղ ես տեսնելու, նա հնարավորություն կունենա՞ այլևս քեզ մեղադրանքի խոսքեր ասելու, մի՞թե փակ չեն հեռանկարի բոլոր ճամփաները... Ախ, տե՜ր աստված, դու իմ միակուսարին փրկես չարից-փորձանքից... Գոնե աղոթել կարողանար, ինչ-որ չափով թեկուզ մի խաբուսիկ հույս կարողանար կապել այդ աղոթքի հետ։

Աշխատանքային ընկերները մեկ-մեկ այցելության են գալիս, ամենից շատ՝ Ռոզան ու Անատոլին։ Ծաղիկներ են բերում, սիրտ են տալիս։ Շնորհակալ է, ուշադիր են։ Ինքը

կերակրում է ուրիշ երկու երեխայի, որոնց մայրերը համարյա կաթ չունեն։ Կուրծքն ուրիշ երեխայի բերանում, աչքն իր Գուրգենի վրա, խենթանա՞լ կարելի է...

Աստիճանաբար իր կաթն էլ նվազեց. առուն բարակում էր օր-օրի վրա, ասես ցամաքում էին դրան սնող աղբյուրները։ Իսկ ի՞նչ էր ուտում, որ կաթ գոյանար։ Կոկորդում ասես լռվել էր մի բան ու փակել սնունդ ընդունելու բոլոր ճամփաները։

Հոգեմաշ օրերն անցնում էին զարմանալի դանդաղ։ Երեխայի վիճակը մնում էր անմխիթարական։ Ոչ մի բարելավում։ Մազի կամրջի վրայով անցնող մի կույր մանուկ, իսկ ներքևում ահավոր անդունդ է, զարհուրելի խավար...

49.

Գործարանում նորից անհանգիստ վիճակ է ստեղծվել. պլանները չեն կատարում, վտանգի տակ է չորրորդ եռամսյակի առաջադրանքների կատարումը, ուրեմն և վտանգ է կախված տարեկան պլանի գլխին։ Եվ հիմնական պատճառը մատակարարման խափանումներն են։ Հատկապես վատ է երկրորդ կիսամյակին. անընդհատ աչքները կայարանի կողմն է, ե՞րբ վագոն կգա, ե՞րբ կտանան հումքը։ Ավելացել է պարապուրդների թիվը. ժամերով, նույնիսկ ամբողջ օրով կանգնելու առիթ է եղել, ինչպե՞ս պլան կատարեն։ Իսկ ինչո՞ւ է այդպես, ինչո՞վ են զբաղված այդ հումք առաքողները, նրա՞նք ինչպես են կատարում իրենց պլանները։ Սատանան տանի, նրանց կամ նաև երկաթուղու պատճառով, հաճախ են դանդաղում, իրենք են պարապուրդ տալիս, իրենց պատճառով էլ այն կազմակերպություններն ու ձեռնարկությունները, որոնց սպասարկում են իրենք, և ահա շղթան խախտված է, արյան շրջանառությունն անկանոն է կատարվում, այստեղից էլ անխուսափելի հիվանդությունը... Ե՞րբ պետք է հասնենք հստակ ու ամենօրյա համագործակցության, այնպես, որ ոչ մի ժամի ու րոպեի թերացում չլինի, և ոչ մի օղակում։ Աստված վկա, այն ժամանակ պլանների թերակատարման ամենամեծ վտանգը վերացված կլինի։ Իսկ հիմա... Հեռագրել են իրենց կոլեգաներին՝ Կիև, Մինսկ, հեռա-

խոսել են Թբիլիսիի ու Բաքվի հետ, որոշ օգնություն ստացել նրանցից։ Մարդ են ուղարկել մատակարարողների մոտ։ Ամեն ինչ անում են ճեղքվածքից դուրս գալու համար։ Կրստացվի՞. համոզված չեն։

Այնելացել են նաև խորհրդակցություններն ու ժողովները. մեկ իր, մեկ դիրեկտորի մոտ. հաճախ նաև՝ մինիստրությունում ու շրջկոմում։ Բոլորն էլ անհանգստացած են, ընդհանուր ուժերով ելք են փնտրում։ Եվ այս լավ է, աստված վկա, քո ցավը միայն քոնը չէ, այլ բոլորինն է։ Այսօր զանգահարում էին Կենտկոմից, հարցնում էին՝ ինչո՞վ կարող են օգնել, խոստացան զանգահարել ում պետք է, արագացնել հումքի ստացումը։

Իսկ տանը նույն խաղաղ ու անհանգիստ վիճակն է, նույն վազվզոցը։ Երեխային կերակրելու հարցը նորից է բարդացել, հիվանդացել է ստնտու տիկինը. կաթ չունի, հազիվ իր երեխային է կերակրում։ Ստիպված լրիվ անցել են արհեստական կերի։ Երեք ամսական երեխան այլևս կարոտ է մնալու մոր կաթին։ Մոր կաթին... իսկ ո՞ւր է նրա մայրը, անամոթ, անխելք, թե՞ առատաձեռն մայրը. գոնե մի կես տարի կերակրեր իր զավակին... Ախր նա արդեն քոնն է, Նվարդինն է, նա ուրիշ մայր չունի այլևս, հասկացիր։ Եվ ինչո՞վ ես համոզված, որ եթե մի քանի ամիս կերակրեր իր նորածնին, այն մեկի նման չէր հրաժարվի ձեզ տալուց...

Այսօր Թամարն ու Սմբատն էին եկել իր մոտ։ Ստացել են արդեն բնակարանը, այս երկու օրը տեղափոխվում են։ Եկել են շնորհակալություն հայտնելու ու նաև բնակարանամուտի հրավեր տալու։

— Ընկեր Ստեփանյան, մի քիչ տոն-տեղ դառնանք, կարգի գանք, հավաքվելու ենք մի լավ քեֆ անենք։ Համոզված ենք, դուք էլ կգաք։ Եթե մերժեք շատ կնեղանանք։

— Իսկ ինչո՞ւ պիտի մերժեմ, սիրով կգամ։ Գործարանին մի քանի կոմպլեկտ կահույք են տալիս, մեկն էլ դուք կստանաք և կարգին տոն-տեղ կդառնաք։

— Վա՛յ, ընկեր Ստեփանյան, այդ ի՞նչ լավ բան ասացիք,— Թամարի ուրախությանը չափ չկար։— Ազնիվ խոսք, ընկեր Ստեփանյան, դուք շատ լավ մարդ եք...

Սմբատը ծիծաղում էր, իսկ Թամարը կարմրեց իր ան-

սպասելի պոռթկումից։ Հրանտի սրտին, ընդհակառակը, տրխրության մի անտեսանելի քող իջավ. այս էլ դիտենք որպես Աշխենի երկրորդ խնդրանքի կատարում։ Ոչ, երկրորդը կատարված է, սա նոր, երրորդն է, որի կատարումից, համոզված է, նա գոհ կմնա։ Իսկ առաջին խնդրա՞նքը որն էր.— իրեն գտնելու փորձեր չանել... Անխիղճ-անաստված, իբր թե որ փորձեց, արդյունքի է հասնելու։ Եվ, այնուամենայնիվ, կատարում է նաև նրա այդ խնդրանքը...

Եվ այդպես էլ Աշխենը նամակ չգրեց։

Զարմանալի աղջիկ է այս Թամարը, հենց որ Հրանտի տեսադաշտի առաջ կանգնում է Աշխենը, սա սկսում է նրա մասին խոսել, մի՞թե զգում է...

— Նրա այդ գաղտնապահության պատճառը ես այդպես էլ չհասկացա,— Սմբատն է իր կարծիքը հայտնում,— առեղծվածի նման մի բան կա, թե ի՞նչ, սատանան գիտի։

— Ամեն մարդ իր հաշիվներն ունի, ի՞նչ իմանաս, նրա մտքում ինչ կար... Աստված նրա հետ, որտեղ էլ լինի, թող լավ մնա, ու երջանիկ լինի.— Հրանտի խոսքը և օրհնանքի է նման, և միաժամանակ ինչ-որ անտարբեր երանգ ունի։

— Միևնույն է, ես նրան երբեք չեմ ների այդ անհասկանալի գաղտնապահության համար. դա պարզապես անշնորհքություն է։

— Թամար, եկեք չմեղադրենք մարդուն, մանավանդ որ ամեն ինչ չգիտենք...

Հրանտը և փորձում էր պաշտպանել Աշխենին, և միաժամանակ խոսակցության թեման փոխել էր ուզում. այնուամենայնիվ ծանր է այդ մասին խոսելը։ Մտածել կարող է ժամերով, օրերով, իսկ խոսել՝ ուրիշների ներկայությամբ, չէր ստացվում. երևի այսպիսի դեպքերում են ասում՝ ոնց որ փշերի վրա նստած լինի...

Թամարը զարմացած Ստեփանյանին էր նայում. ինչ էլ անտարբեր է խոսում, ախր առաջ այդպիսին չէր, սրա՞ն ինչ պատահեց։ Ու հանկարծ մի տարօրինակ զգացում սողոսկեց աղջկա սիրտն ու բաց չէր թողնում։ Մի տեսակ շնչելն ասես դժվարացավ։ Աղերսող հայացքով Սմբատին էր նայում, նորից՝ Ստեփանյանին։ Այս ինչ բան է, խելագարվել կարելի է...

Ներքին հեռախոսով գործարանի դիրեկտորն իր մոտ կանչեց Ստեփանյանին։ Սա ներողություն խնդրեց ու դուրս գնաց։

— Սմբատ, մի բան ասեմ, չզայրանաս, խնդրում եմ։

— Ես քեզ վրա ե՞րբ եմ զայրացել որ։

— Հիմա կարող է զայրանաս, որովհետև շատ տարօրինակ մի բան պիտի ասեմ։

— Թամար, ի՞նչ պատահեց քեզ։

— Հիշո՞ւմ ես, Սմբատ, որ Աշխենին ճանապարհում էինք Մոսկվա, ես ասացի՝ երեխան ինչ-որ մեկի նման է, չեմ հիշում թե ում։

— Հիշում եմ. Աշխենն էլ շտապ երեխայի դեմքը ծածկեց։ Հետո՞։

— Հիմա, հենց նոր ինձ թվաց, թե Աշխենի երեխան ընկեր Ստեփանյանի նման է։

— Թամար, դու իսկապես որ անխելք բան ես ասում։

— Հանկարծ, գիտե՞ս, նմանեցրի, ոնց որ կայծակը խփի ու մութ տեղը լուսավորի։

— Հեքիա՜թ ես պատմում։

— Դե, ես էլ չեմ հավատում և մտքովս ոչ մի վատ բան էլ չի անցնում, ազնիվ խոսք, բայց ինձ թվաց...

— Ամեն թվացած չէ, որ ճիշտ է... Նա շուտ չի գա, դրանց ժողովներին վերջ չկա... արի մենք գնանք մեր գործին. ընդմիջումն էլ վերջացավ։

Ու նրանք անաղմուկ դուրս եկան գլխավոր ինքժեների առանձնասենյակից։

50.

Նվարդի հերթական արձակուրդը վաղուց էր լրացել. երկու ամիս էլ իր հաշվին էր վերցրել, էլի քիչ էր, երեխային միայն կեսուրի խնամքին թողնել չէր կարողանում. չէ՞ր վստահում, ոչ, նա այնքան ուշադիր է ու սրտացավ։ Պարզապես ինքը չի կարող տանը, երեխայի մոտ չմնալ։ Մի ժամով դուրս է գալիս, գլխապատառ տուն է վազում, կարծես իր բացակայության ժամանակ ինչ-որ բան կարող էր պատահած լինել։ Հիմնարկում էլ մի տեսակ ցրված էր դարձել. առաջ անմխալ գիտեր ամեն մի թղթի, գործի, հրամանի տե-

ղը, հիմա երբեմն ժամերով մի բան էր փնտրում, ու չէր գտնում։ Չէ, այսպես աշխատելն էլ մի բանի նման չէ։ Որոշեց տարեկետում վերցնել։ Հրանտը չառարկեց, ավելի ճիշտ՝ լռությամբ տվեց իր համաձայնությունը։ Հիմնարկի պետը դիմադրեց երկար, ի վերջո ստիպված էր տեղի տալ։

Վերջին օրն այն ցանցառ այցելուն նորից եկավ իր մոտ։ Նվարդն անկեղծորեն զարմացած էր։

— Քանի ամիս է դուք չեք երևում, և ես կարծում էի, թե արդեն աշխատանքի եք անցել։ Մի՞թե դեռ անգործ եք։

Նույնիսկ խղճահարության նման մի բան առաջացավ Նվարդի մոտ, վերջիվերջո մեղք է այս մարդը, երևի ընտանիք ունի, եթե ինքը մի քիչ ավելի ջանք թափեր, կլուծեր նրա հարցը։

— Կարող եք չանհանգստանալ, Նվարդ Օգանեսովնա։

— Իմ հոր անունը Հովհաննես էր... վերջապես դուք ձեր գործից խոսեք։

— Ես էլ այդ եմ ասում, արդեն աշխատում եմ, վերջապես կարողացա խցկվել մի տեղ, թողարկիչ եմ աշխատում հրատարակչությունում։ Ոչինչ, կարելի է ապրել...

— Աշխատավա՞րձն ինչքան է, կարողանո՞ւմ եք պահել ձեր ընտանիքը։

— Իմ գլուխը պահում եմ, բավական է. ընտանիք չունեմ, կանայք շատ դաժան են գտնվել իմ նկատմամբ...

— Ոչինչ, երբեք ուշ չէ, շարունակեցեք ձեր որոնումները։ Իսկ ինձ մոտ նորից ի՞նչ հարցով եք եկել։

— Անկեղծ ասած՝ ոչ մի հարցով, պարզապես իմացա, որ արձակուրդ եք գնում, որոշեցի մեկ անգամ ևս տեսնել ձեզ... կներեք, Նվարդ Օգա... ներեցեք, Նվարդ Հովհաննեսի։

— Դուք նորից ձեզ վատ եք պահում, երիտասարդ, քանի անգամ եմ ասել...

— Հազար անգամ ներողություն եմ խնդրում. մի նեղացեք, աղաչում եմ, ախր ես ձեզ վիրավորելու ոչ մի մտադրություն չունեմ... Լսել եմ, որ երեխա եք ունեցել. ընդունեցեք իմ շնորհավորանքները. թող բախտավոր ժառանգ լինի։ Այսքան։

Վեր կացավ, դուրս գալ էր ուզում։ Նորից շրջվեց Նվարդի կողմն ու ասաց, մի տեսակ հանդիսավոր.

— Ես նաև ոտանավորներ եմ գրում. գուցե մի օր կտպագրվեն, դրա համար եմ հրատարակչություն գնացել... Ձեր մասին մի գեղեցիկ բանաստեղծություն եմ գրել, իհարկե, իմ կարծիքով գեղեցիկ, բայց ձեզ չեմ տա, վախենում եմ չբարեհաճեք կարդալ։ Եվ ոչ մեկին չեմ տա, խնդրում եմ չանհանգստանաք։ Դե, մնացեք բարով,— ու դուրս գնաց հուշիկ քայլերով և անաղմուկ փակեց դուռը։ Նվարդը չգիտեր ջղայնանար թե ծիծաղեր, իսկական ցնդած բանաստեղծ։

Այս մասին անպայման կպատմի Հրանտին, ու երկուսով կծիծաղեն։ Բայց ոչ, երևի չպատմի, վերջերս վերջ են տվել այդ սովորությանը. այլևս իրարով չեն ապրում, ի՞նչ կա նրա մոտ, գործարանում, ինքը ոչինչ չգիտի, նա էլ չի հետաքրքրվում իր աշխատանքով, խորթությունը գնալով խորանում է, և այդ ճեղքը լցվելու հեռանկար չունի։ Հարևան Սեդրակից փմացավ, որ նրանց գործարանում գործերն այնքան էլ լավ չեն, պլանների կատարումը վտանգի տակ է։ Իսկ Հրանտը տանը ոչինչ չի ասում։ Ուշ ժամերին տուն է գալիս, առավոտյան շուտ գնում աշխատանքի։ Եթե մոր թախանձանքները չլինեն, մի բաժակ թեյն էլ չի խմի։ Իրենք կարծես այլևս ամուսիններ չեն և այս բոլորը նաև երեխայից հետո։ Մինչև ե՞րբ... իսկ երեխայի նկատմա՞մբ ինչպիսին է. անտարբեր, ուրիշ բառով չես որակի, ճիշտ է, մայրը մեկ-մեկ ստիպում է նրան գրկել, մի սենյակից մյուսը տանել, և այդ բոլորն անում է շատ նրբանկատ։

— Հրանտ ջան, երեխայի տակը երևի պիտի փոխել, մի բեր ինձ մոտ, խնդրում եմ։

— Հրանտ, երեխային տար դիր օրորոցում ու օրորի մի քիչ, ես հիմա կգամ։— Օ, այդ փորձված մայրիկները շատ են խելոք, խորամանկ...

Հրանտը լուռ կատարում է մոր կարգադրությունը, մեկ-մեկ էլ ուշադիր նայում է գրկի երեխային, բայց ոչ մի ռեակցիա, ոչ մի խոսք։ Ու Նվարդը մինչև վերջ էլ դեռ համոզված չէ, թե այդ երեխան Հրանտի սրտի ամենածածուկ անկյունում իր տեղն ունի՞, թե ոչ։ Բայց միաժամանակ ուզում է փրեն մխիթարել,— ախր ինչպե՞ս կարող է չունենալ, չէ որ դա նրա Արկադին է, ոչ, Արշակը, գոնե հոր հիշատակի համար...

Լուսիկ մայրիկի-հոգան իսկապես կրկնապատկվել էր։ Ամբողջ օրը ոտքի վրա էր, գիշերներն էլ կարգին չէր քնում, բայց, սատանի ականջը խուլ, իրեն վատ չէր զգում. առաջվա նման ոչ հոգնություն գիտի, ոչ նվնվալու սովորություն ունի։ Գլուխը կախ իր գործին է, և գոհ է իր վիճակից, շատ է գոհ։ Գուցե իսկապես նոր Արշակի մուտքն է նրան այդպես ջահելացրել, առույգացրել։ Հիշում է, իր հանգուցյալ հոր մի խոսքը, երբ, վերջապես Հրանտը ծնվեց, նա թեթևաքայլ եկավ իրենց տուն, համբուրեց իր ճակատն ու ասաց. «էսա կտեսնես ոնց եմ ջահելանում, թոռն էդպես է, ախջիկ ջան, դու էլ որ կունենաս, նոր կիմանաս դրա լազաթը, իմոնք արդեն շատ են, փառք աստծո»...

Ինչպե՞ս էր սիրում Հրանտին. որտեղ մի լավ բան տեսներ, կառներ նրա համար, ժամերով կտաներ զբոսանքի, տիկնիկային թատրոն կամ կինոնկար դիտելու։ «Ա հեր, ասում էր, կհոգնես, ո՞ւր ես էդքան քեզ շարշարում, ախր ջահել չես...»։ «Բա եղա՞վ, աղջիկ ջան, ասում էր, բա ես պառավ տղա՞ եմ, բա էսպես թոռ ունեցողը կհոգնի՞... Թող մի սրա բախտավորությունը տեսնեմ, էլ ուրիշ դարդ չունեմ։

Ափսոս, տեսնել չկարողացավ. Հրանտը նոր էր ընդունվել ինստիտուտ, պապը մի գիշեր հանգավ առանց հիվանդության։ Դեռ ութ տարեկան էլ չկար։ Հոգին լույս դառնա...

Մոտեցավ օրորոցին. երեխան քնած է հանգիստ. ի՞նչ անուշ ու հանգիստ է շնչում իր փոքրիկ Արշակը։ Տեսնես կկարողանա՞ մի քիչ գոնե իր պապին քաշել... Ախր, նա իսկապես լավ մարդ էր, նամուսով, հոգատար, վատ բաներից հեռու։ Հիշում է իր տալը, այսինքն Արշակի փոքր քույրը, ամուսնուց բաժանվել էր ուզում։ Լուրջ պատճառ չկար, ինձնից մեծ է, ասում էր, չեմ սիրում դրան, ես հո գերի չե՞մ... Արշակը համոզում էր քրոջը այդ քայլը չանել, լավ բան չէ, ասում էր, երեխաներիդ մի որբացրու։ Չլսեց, բաժանվեց։ Դրանից հետո Արշակը նրանից երես թեքեց. «դու իմ քույրը չես այսուհետև, ես քեզ տեսնել չեմ ուզում»։ Ու մինչև իր

վերջին օրն էլ չհաշտվեց հետը. «ես օշախ քանդող քույր չեմ ուզում, թող նա իմ զաղաղի ետեից էլ չգա»... Ինչքան ուշադիր էր իր նկատմամբ, մի թթու խոսք չէր ասի, եթե նույնիսկ առիթը ներկայանար, իսկ առիթ ինչո՞ւ չկար, ընտանիք է, ամեն բան կպատահի։ Շուկա ինքն էր գնում, օգնում էր տան գործերին։ «Դու միայն իմ երեխաներին լավ պահիր, քեզնից ուրիշ բան չեմ ուզում»։ Իսկ իր զգացմունքների, իր տիրո մասին՝ ոչ մի խոսք, ջահել ժամանակ էլ բան չի ասել. դրանք, ասում էր, լեզվի գործ չեն, այլ սրտի, խղճի։ Միայն մեկ-մեկ որ հերանց տուն էր գնում, Արշակն անհանգստանում էր. «Լուսիկ, շուտ կգաս, չէ՞»։ «Է, որ մի քիչ էլ ուշանամ, ի՞նչ կլինի, տաս օր է, մերոնց չեմ տեսել, կարոտել եմ» — մի անգամ դիտմամբ ասաց այս խոսքը, Արշակի հոգու հետ խաղալ էր ուզում։ «Դե, լավ, Լուսիկ, անխելք բաներ մի ասա, խնդրում եմ, գիտես, որ... Մի խոսքով, թե ասուված կսիրես, մի ուշանա»... Եվ ինքը չէր ուշանում, գիտեր, որ տանն անհանգստացող կա, որ առանց իրեն նա պարզապես շնչել չի կարող։

Իսկ ինչո՞ւ ինքն այդքան անխղճորեն ուշացավ... Գնաց էն սև ու մութ պատերազմին ու ետ եկավ ծանր վիրավոր։ Մի նամակ է մնացել միայն, կերշից է գրել։ Քանի անգամ է կարդացել, տառերը մաշվել են արդեն։ Անգիր գիտի, բայց նորից կարդում է մեկ-մեկ, այդ պահերին ասես զգում է նրա ներկայությունը...

«Լուսիկս, ինչպե՞ս եք յոլա գնում առանց ինձ, շատ եմ անհանգիստ. գոնե Հրանտը մեծ լիներ, օգներ քեզ մի բանով... Դե, ոչինչ, մի կերպ ծայրը-ծայրին հասցրու. մինչև ես կգամ, ու լավ կլինի. ասուված վկա։ Էս աննամուս կռվից որ մի կերպ դուրս գանք, ամեն ինչ լավ կլինի։ Եվ դուրս կգանք, բոլորովին չհուսահատվես։ Վերջը լավ կլինի, մենակ արյուն շատ է թափվում, դա լավ չէ։ Էս կռիվ հնարողի հերը շուն դառնա ու Հիտլերի միսը քրքրի... ոչինչ, մի կերպ համբերիր, մեր տուն գալու օրն էլ կհասնի...»։

Հասավ այդ օրը. տուն եկավ՝ արկի բեկորը թոքերի մեջ։ Մի քանի տարի տանջվեց, տառապեց, վերջը էդ անիրես բեկորն էլ նրան տարավ էս աշխարհից...

Հոր օգնությամբ պահեց, մեծացրեց երեխաներին։ Սիրուշը շուտ ամուսնացավ, տասը նոր ավարտած։ Եվ, փառք աստծո, վատ ընտանիք չի կազմել։ Իսկ ահա Հրանտի գործն այսպես դժվարացավ, և աղջկա ընտրությունը դժվար կատարեց, և ամուսնությունն ուշացավ։ Հետո էլ երեխայի հարցն այսքան ծանրացավ։

Դե, փառք աստծո, գոնե լուծվեց այս ձևով։ Մնում է, որ հոր սիրտը տաքանա երեխայի վրա։ Համոզված է, դա կլինի, դրա համար ժամանակ է պետք։

Նվարդն արդեն գժվում է Արշակի համար. դե, մոր սիրտն ավելի զգայուն է ու փափուկ, և ինքն է պահում երեխային, նրան ոչ ժամանակ է պետք, ոչ կողմնակի օգնություն, նրա հոգին արդեն էդ երեխայի բռան մեջ է... իսկ Հրանտը դեռ ճանապարհ ունի դրան հասնելու համար, չպետք է շտապեցնել, համբերություն է պետք։ Եվ Նվարդն էլ ժամանակից շուտ իզուր է խուճապի մատնվել. անհանգստանում է, որ Հրանտը մի տեսակ անտարբեր է երեխայի նկատմամբ. լաց եղավ մի անգամ, իմ օգնությունն է խնդրում։

«Նվարդ ջան, ասացի, դու ինն ամսական չե՞ս ծնվել, ո՞ւր ես առաջ վազում, դրա ժամանակն էլ կգա, մի շտապիր»։ «Իսկապե՞ս, մայրիկ, հավատա՞մ, որ կգա այդ օրը»,— ու լաց եղավ՝ գլուխը կեսուրի կրծքին սեղմած։

Հիմա գնացել է մոր մոտ, ասաց հիվանդ է։ Այնքան անհանգիստ է, որ մոր տուն հասնելուն պես զանգահարել երեխայից էր հարցնում։ Իմացավ, որ քնած է, հանգստացավ։ «Մայրիկ, հենց որ արթնանա, կամ լաց լինի, ինձ զանգ տուր, խնդրում եմ, ես իսկույն կվազեմ»։ Չէ, բարեբախտաբար շար երեխա չէ, հեշտ է պահելը։ Տեսնես էն Աշխենի երեխա՞ն ինչպիսին էր, լա՞վ էր, որ նա գլուխ չեկավ, թե՞ վատ, ինչ իմանաս, աստծո բանն է... Միայն վատ է, որ այս երեխայի ծնողները չիմացանք ովքեր են. Գարեգինն ասում էր՝ մայրը կարգին ընտանիքի աղջիկ է, իսկ հոր մասին ոչինչ չգիտի։ Հայրը պաշտոնյա է երևի, ահա և կարգին ընտանիք... Բայց իսկապե՞ս այդպես է. մի՞թե լավ ընտանիք լինելը պաշտոնով է որոշվում։ Այ, իրենց հարևան Սեդրակը, ինչպես ասում են՝ շարքային բանվոր է, կինն էլ հավաքարարուհի է, բայց տես ի՞նչ երեխաներ են դաստիարակ-

կում, այ, սա իսկական ընտանիք է։ Իսկ այն մարդը, որի Թոռն իմ Թոռն է դարձել և որի մասին ինքը ոչ մի տեղեկություն էլ չունի... Կամ այդ Աշխենի արարքը. երեխան ծնվում է, իսկ հայրը չկա. տե՞ր աստված, էս ինչ ջահելներ են. և ինչ լավ բան կարելի է սպասել այդպիսի մարդկանցից, կամ նրանց Թողած ժառանգից... Դե, բոլոր դեպքերում Արշակիս մայրը երևի կարգին ընտանիքի աղջիկ է, դա մի քիչ մխիթարական է, չնայած հոր մասին ոչինչ չիմանալն էլ մի բան չէ։ Ճիշտ է, նման հարցերում մորն իմանալը շատ ավելի կարևոր է, բայց հոր կողմն էլ չպետք է անտեսել։ Դե, ինչ կարող ենք անել, այս է մեր երեխան, մեր բախտը։ Հույսով ապրենք ու սպասենք լավ բանի։

Անսպասելի ներս մտավ տիկին Սրբուհին։ Ու անմիջապես վրա տվեց.

— Հը, քույրիկ, ի՞նչ ես զարմացած ինձ նայում, չէի՞ր սպասում... Զգիտե՞ս, որ ես ամեն ինչում էլ անսպասելի եմ։ Թե սրտովդ չէ, գնամ։

— Հիմար բաներ ես խոսում, Սրբուհի, ո՞նց Թե սրտովդ չէ. շա՞տ ունեմ, ընդամենը երկու քույր ենք մնացել մեր մեծ ու շեն գերդաստանից... Նստիր, պատմիր տեսնենք ինչ կաշկա, ինչպե՞ս եք։

— Փառք աստծո, ապրում ենք։ Թոռնի՞կդ ինչպես է, էս ո՞ւր է Նվարդը։

— Մոր մոտ է գնացել, շուտով կգա, իսկ Թոռնիկս լավ է, մի կերպ պահում ենք։

— Մեր շրջկենտրոնի խանութում սրանից կար, էս «Մալյուտկա» եք ասում, ինչ է. մի քանի հատ առա, ասում են քաղաքում դժվար է ճարվում, պետք կգա. ահա, կտաս Նվարդին։

— Ապրես, քույրիկս, Նվարդը շատ կուրախանա։ Բա որ էդ սիրտն ունես, ինչո՞ւ ես մեկ-մեկ շարություն անում, Հրանտիս էլ նեղացրիր։

— Լուսիկ, դու չգիտե՞ս, որ վատ սիրտ չունեմ. անտեր լեզուս է մի քիչ խելառ... Մի տեսնեմ փոխվե՞լ է երեխան.— մոտեցավ օրորոցին, բարձրացրեց երեսի շորը,— չէ, կարգին մեծացել է։ Անունը հո չհարամեցի՞ք։

— Չէ, Արշակ են դրել, շնորհակալ եմ Հրանտից էլ, քեզնից էլ. էս տանը որ նորից Արշակ կա, էլ մեռնեմ, ցավ չի։

— Հիմար բաներ մի խոսի, դու իսկականից հիմա պիտի ապրես, մեռնե՞ս որն է։ Դե, ես գնացի, շտապում եմ աղջկաս մոտ. էսօր գյուղ պիտի վերադառնամ։

— Այ տնաշեն, եկել ես, մի քիչ հանգիստ առ, մի բան կեր, էդքան էլ ոտքի վրա կնի՞կ կլինի, որ դու ես. մի քիչ խղճա քեզ, ախր արդեն ջահել չես։

— Իսկ ի՞նչ եմ, որ ջահել չեմ, դեռ յոթանասունգինդ էլ չկամ... Ինձ պառավել չկա, քույրիկս, քեզ լավ պահիր։ Գնացի։

52.

Հրանտ Ստեփանյանն իր սովորության համաձայն հերթական շրջագայությունն էր կատարում գործարանում, անցնում էր արտադրամասից արտադրամաս, հարցնում էր վիճակի ու հոգսերի մասին, տեղում հարցեր էր լուծում, հետագայում լուծելու խնդիրներ էր արձանագրում իր մտքի ցուցակում։ Լաբորատորիայի դուռը նոր էր բացել, երբ ետևից հասավ քարտուղարուհի Ամալյան ու շտապ վրա տվեց.

— Ընկեր Ստեփանյան, ձեզ շտապ կանչում են մինիստրություն. մինիստրի տեղակալ ընկեր Սարգսյանն անձամբ պանգահարեց և խնդրեց, որ անցնեք իր մոտ։ Ես մի քիչ շուտ գնամ ընդմիջման, կարելի՞ է. հիվանդանոց եմ շտապում, մորս այցելության։

— Գնա, մորդ էլ իմ բարևները հաղորդիր։ Հա, խնդրածդ դեղը խոստացել են։

— Շնորհակալություն, ընկեր Ստեփանյան, ինչ լավ է, որ ճարել եք, այնքան եմ փնտրել...

Հրանտի միտքը գնաց հիվանդանոց. մարդկանց բուժելու այնքան մարդկային բնագավառ։ Հրաշալի է այս ձրի բուժումը, այս բժշկական անխափան օգնությունը, բայց ինչո՞ւ երբեմն դժվար է լուծվում դեղամիջոցներ ճարելու հարցը։ Հիվանդանոցում պառկած հիվանդին անհրաժեշտ է այսինչ դեղը և հիվանդանոցը չունի, հիվանդի հարազատները պիտի ճարեն։ Հաճախ նաև դեղատներում չի լինում, և տկվում է

մի շատ անհանգիստ վիճակ. հիվանդին ու նրա հարազատներին թվում է, թե փրկությունը միայն այդ դեղի մեջ է, իսկ այդ փրկության բոլոր դռները փակ են։ Ստիպված երբեմն դիմում ես մասնավոր մարդկանց օգնությանը։ Այստեղ էլ կան գծուծ առևտրականներ, ուրիշի առողջության հաշվին փող վաստակելու սիրահարներ։ Եվ՝ մեկին տաս ես տալիս, միայն թե... դե, այդպիսի դեպքերում ո՞վ փող կխնայի։ Լավ չէ, այսպես չպետք է լիներ. ինչ, ինչ, բայց դեղատներում պետք է ճարվեն բոլոր այն դեղերը, ինչ պահանջվում է հիվանդի առողջության համար։ Համենայնդեպս դրան պետք է հասնել... Ամալյայի մոր լյարդն է հիվանդ, և անհրաժեշտ սրսկումների համար մի մեծ գումար էին խնդրում, քարտուղարուհու երկու ամսվա աշխատավարձը։ Լավ էր, ճարվեց դեղատնային վարչությունում։ Գուցե և կօգնի։ Ա՛հ, սատանան տանի, Գեղամ Հմայակովիչն է կանչել, իսկ ես մտքով ինչ որ էքսկուրսիաներ եմ կատարում...

Տեսնես ինչո՞ւ է կանչել։ Այն հանդիպումից հետո առիթ չի եղել նրան տեսնելու, խոսելու։ Ինչո՞ւ է այսպես անհանգիստ, ինքն էլ չգիտի։ Այնուամենայնիվ մինիստրությունն են կանչել, գուցե և վատ չէ, որ անհանգստանում է. առանց այդ հատկության մարդս մի տեսակ կիսատ-պռատ է դառնում։ Բայց Գեղամ Հմայակովիչը քեզ մոտ մարդ է, միասին աշխատել եք, հարևաններ եք վերջապես։ Հետո ինչ, նա մինիստրի տեղակալ է, ես՝ նրան ենթակա գործարանի գլխավոր ինժեներ. անհրաժեշտ տարածությունը երբեք չպետք է խախտել։ Այո, ոչ՝ հեռու, ոչ՝ շատ մոտ, ամեն ինչ՝ իր տեղը. խոսք լինի այդ, թե մարդկային փոխհարաբերություն, միևնույն է, տեղի ու չափի զգացումը շատ է կարևոր... Նորից սկսեցիր քո դատարկ փիլիսոփայությունը, իսկ Գեղամ Հմայակովիչն սպասում է քեզ...

Սովորական հանդիպում էր։ Իսկ ինչո՞ւ պետք է անսովոր լիներ։ Այո, կանչել է նախ գործարանի գործերի վիճակն իմանալու, հետո էլ՝ իր անձնական, իր խճճված հարցերի լուծման մասին տեղեկանալու։

Պատմեց պլանների կատարման վիճակի մասին, ամենայն մանրամասնությամբ, հումքի պակասի, ուղարկված հեռագրերի ու ստացված ոչ մխիթարական պատասխանների

մասին։ Իր անհանգստությամբ վարակեց նաև Գեղամ Հմայակովիչին։

Սա ներքին հեռախոսով կապվեց միությենական մինիստրությունն, խոսեց, բացատրեց, խնդրեց։ Խոստացան օգնել։ Այ, սա գործ էր, իսկ ինքը ծեծել է բոլոր դռները ու մոռացել է Գեղամ Հմայակովիչին։ Մոռացե՞լ է, թե՞ անհարմար է զգացել։ Ախր խոստացել էր կուրսի մեջ պահել նրան իր ընտանեկան գործերի մասին, զանգահարել գոնե։ Ու դեռ ոչինչ չի ասել։ Իսկ ասելու բան կա՞։ Ինչո՞ւ չէ, հենց միայն երեխայի հարցի լուծումը...

— Դե, Հրանտ, հիմա պատմիր տեսնեմ ի՞նչ նորություններ կան քո անձնական կյանքում, պարզեցի՞ն ջրերը, թե՞ շարունակում ես խարխափել։

Պատմեց Հրանտը. ոչինչ չթաքցրեց։ Մի տեսակ նաև թեթևանում էր դրանից, հնարավորություն կար իր արած ու անելիք քայլերի ճշտությունն ստուգելու։

— Ուրեմն կարելի է ընթացքն առայժմ նորմալ համարել,— եզրակացրեց Գեղամ Հմայակովիչը։— Բայց դեռ չլուծված հարցեր շատ կան։

— Ճիշտ է, կան։ Եվ, ամենադժվարը, երկու հարց է, մոռանալ Աշխենին ու նրա երեխային, հոր իրավունքով ու պարտավորությամբ սիրել այս երեխային։

— Լսեցի, որ հորդ անունով ես կոչել. շատ լավ ես արել։

— Դուք գիտեի՞ք, որ արդեն...

— Իսկ ինչո՞ւ չպետք է իմանայի, դու կարծում ես, թե քո մասին ես միայն քեզնի՞ց կարող եմ իմանալ։ Մի՞թե քո կարծիքով մեր հարևաններն այդքան անտարբեր ու անհետաքրքրասեր մարդիկ են...

— Մեր հարևանների մասին ես էլ վատ կարծիքի չեմ։

— Սեղրակից եմ իմացել. մեկ-մեկ գալիս է ինձ մոտ, նարդի ենք խաղում։

— Այո, առայժմ կարծեմ դժվար չէ, նեղ վիճակից դուրս գալու հեռանկար կա։

— Իսկ այդ երկու հարցի լուծո՞ւմը։

— Առաջինի լուծման, այսինքն՝ նրանց մոռանալու հույս չունեմ, իսկ այս երեխային երևի կկարողանամ սիրել. անմեղ մանչուկ է, և լավն է, աստված վկա...

— Իսկ մայրդ ու կի՞նդ, պատկերացնում եմ։

— Օ՜, նրանք յութերորդ երկնքում են։

— Ուրեմն քեզ էլ նույն երկնքում սավառնելու թեր եմ ցանկանում...

53.

Թամարի ու Սմբատի բնակարանամուտի երեկոն է։ Հրանտը խոստացել էր, ու գնաց։ Այս անգամ էլ Նվարդին տանել չկարողացավ. ինչո՞ւ, ախր առաջ մենակ չէր գնա այդպիսի տեղ, ինչո՞ւ հիմա խուսափում է։ Եվ միայն ինքը չէ, Նվարդն էլ վճռականորեն հրաժարվեց։ Դե, նա այնքան զորավոր պատճառ ունի.— երեխային թողնել չեմ կարող։ Իսկ եթե մտքում լիներ, մեկ-երկու ժամ բացակայելն ինչո՞վ կխանգարեր, մայրը տանն է, չէ՞... Պարզապես նա էլ ամուսնու հետ տեղ գնալու սիրտ չունի այլևս, սա և՛ լավ է, և՛ շատ ցավալի։ Լավ է, որովհետև համընկնում է Հրանտի ցանկությանը, վատ է, որովհետև սա էլ նպաստում է խորթացման մեծացմանը...

Մի սենյականոց բնակարանում, ինչպես ասում են, շարժվելու տեղ չկար։ Հիմնականում Թամարի ու Սմբատի աշխատանքային ընկերներն էին, Հրանտն էր, արհմիութենական կոմիտեի նախագահ Ջավենը։

Մեծի իրավունքով ամբողջ գործը ղեկավարում էին Սմբատի մայրն ու Թամարի մորաքույրը։ Շուրջ քսան հոգի էր հավաքվել երկար ու նեղ սեղանի շուրջը։

Հրանտը հաճույքով դիտում էր նոր ստացած կահույքը. լավն էր։ Եվ իր մասնակցությունը կա այդ գործին. գոհ է։ Բայց ինչո՞ւ մեր տները պետք է զարդարենք գերմանական կամ ռումինական կահույքով, ինչո՞ւ տանտիկինները վազում են դրա, այսինքն՝ արտասահմանյանի ետևից։ Մե՞րն ինչու լավը չէ, անհրաժեշտ փայտանյութն է պակաս, թե՞ վարպետների կարողությունը։ Ոչ մեկը, ոչ մյուսը։ Սրտացավ վերաբերմունքն է պակասում, լավի նկատմամբ անհրաժեշտ պահանջկոտության պակասը։ Փորձիր մասնավոր կարգով որևէ իր պատվիրել, պահարան կամ մահճակալներ, տես ինչ որակով են պատրաստում։ Եվ թող մեր խանութնե-

ռում դրանցից վաճառեն, տես դրսինի ետևից վազքն ինչպես կդանդաղի։ Այո, առայժմ անհրաժեշտ մրցակցության պակաս կա, և այն ծավալվում է ոչ մեր օգտին, այս է դատապարտելին... իսկ այս կահույքը լավն է, աչքդ շոյում է իր մաքրությամբ ու հաճելի փայլով, իր անթերի կատարմամբ։ Թամարն իրավունք ուներ ուրախանալու, այն աստիճան, որ զանգահարեց մի քանի օր առաջ ու շնչակտուր վրա տվեց.

— Հրանտ Արշակովիչ, կահույքն ստացանք, հրաշալի է, այնքան շնորհակալ ենք ձեզնից...

Երեկ էլ իրենից խորհուրդ էր հարցնում՝ գործարանի դիրեկտորին հարմա՞ր է հրավիրել, չի՞ մերժի։ Ասաց՝ ինքներդ որոշեք, ինձ հարմար չէ խառնվել այդ գործին։ Իսկ ինչո՞ւ հարմար չէ։ Կգնար դիրեկտորի մոտ, գուցե և կհամոզեր նրան, ու միասին կգային, մի՞թե վատ կլիներ։ Այնքան քիչ են լինում այսպիսի առիթները, և այնքան քիչ են շփվում կոլեկտիվի հետ, իսկ դա ինչքան անհրաժեշտ է։ Թամարը նոր մոտեցավ ու ականջին հայտնեց, թե այնուամենայնիվ ինքն ու Սմբատը ուզում չարեցին հրավիրել դիրեկտորին, հանկարծ կմերժեր, դե, զբաղված մարդ է, ու դա կծանրանար իրենց սրտի վրա...

Հյուրերը մեծ դժվարությամբ տեղավորվեցին սեղանի շուրջ։ Սմբատն առաջարկեց խմել Հրանտ Արշակովիչ Ստեփանյանի կենացը և խնդրել, որ նա բարով կառավարի իրենց սեղանը։ Հրանտն առարկեց, բանի տեղ չդրին։ Միաձայն խմեցին Թամադայի կենացը։ Ու դեռ չէին տեղավորվել, մեկ էլ թափով բացվեց մուտքի դուռը և երևաց գործարանի դիրեկտորը։ Զարմանքի և ուրախության ճիչերը հաջորդեցին միմյանց։ Թամարը շտապ ոտքի թռավ և ընդառաջ վազեց.

— Համեցեք, Սուրեն Մարտիրոսովիչ, է՜ս ինչ լավ արիք, որ եկաք։

— Ես, հույս ունեմ, որ ինձ անկոչ հյուրի տեղ չեք դնի... Մենակ-մենակ հավաքվել են, ինձ էլ լայաղ չեն արել մի սուտ հրավեր տալու, բա եղա՞վ.— ու ծիծաղելով Թամարի ձեռքն էր թափահարում,— վարպետ Սմբա՞տն ուր է,

ահա, շնորհավորում եմ, միայն մեկ-մեկ մեզ էլ հիշեք, մենք էլ, վերջապես, ձեր կոլեկտիվի անդամն ենք...

— Սուրեն Մարտիրոսովիչ, ազնիվ խոսք, թող Հրանտ Արշակովիչն ասի, ախր մենք ուզում էինք, ու ռիսկ չարեցինք, ազնիվ խոսք,— Թամարը լուրջ անհանգստացած էր։

— Ինչո՞ւ, ես այդքան սարսափելի մա՞րդ եմ... Ահա, էս էլ իմ համեստ նվերը.— ու պահարանին դրեց մի բյուրեղապակյա ծաղկաման։— Եվ դուք կարծում էիք, թե մենակ, առանց ինձ կկարողանաք քեֆ անել. Не выедет Հրանտ, ես լսեցի, որ քեզ թամադա ընտրեցին, դե, շարունակիր ղեկավարել, էսօր մի լավ քեֆ ենք անում։

Այնպիսի մի հաճելի մթնոլորտ ստեղծվեց։ Իսկ Թամարի ուրախությանը չափ չկար։ Մեկ սրա, մեկ նրա ականջին փսփսում էր.

— Վա՜խ, է՜ս ինչ լավ եղավ, է՜ս ինչ հոգի մարդ է, տեսա՞ք ինչ արեց։

Սմբատը հանկարծ ոտքի կանգնեց.

— Սուրեն Մարտիրոսովիչ, երևի այսպիսի դեպքերում են ասում՝ տասով զրո, միայն ոչ հօգուտ «Արարատի», իհարկե։

— Ոչինչ, այս անգամ այդ հաշիվը կգրանցենք հօգուտ մեր կոլեկտիվի... Դե, բաժակները լցրեք, թամադան խոսք ունի ասելու։

— Սուրեն Մարտիրոսովիչ, իսկ եթե ես խնդրեմ, որ դուք կառավարե՞ք։

— Չեղավ, այդպես հեշտ դիրքերդ մի զիջիր, Հրանտ Արշակովիչ։ Դու կոլեկտիվի ընտրյալն ես, ուրեմն արդարացրու նրա վստահությունը։

Հրանտը ոտքի կանգնեց։ Նկատելի հուզված էր։ Ի՞նչն էր պատճառը, դիրեկտորի անսպասելի մո՞ւտքը, ոչ, երևի։ Հապա ի՞նչը։ Երևի այն, որ ինքն այդպիսի գեղեցիկ քայլ Սուրեն Մարտիրոսովիչից չէր սպասում։ Վարորդից իմացել է այս հավաքույթի մասին, և առանց նեղանալու, որ իրեն չեն հրավիրել, ներխուժեց տանտիրոջ իրավունքով։ Աստված վկա, շատ լավ էր։ Եվ եթե ինքն այդ չէր սպասում, ուրեմն վատ գիտի իր դիրեկտորին, և քանի տարի է, միասին աշխատում են, ա՜յ, դա, իսկապես, որ բանի նման չէ...

— Սիրելի բարեկամներ,— սկսեց Հրանտը մի տեսակ

հանդիսավոր, չնայած ինքն ընդհանրապես դեմ էր ամեն մի հանդիսավորության,— հենց նոր տասով զրոն արձանագրեցինք մեր կոլեկտիվի օգտին, և՛ ճիշտ էր, և՛ լավ։ Առաջարկում եմ առաջին բաժակով խմել մեր հրաշալի կոլեկտիվի կենացը, որի երկու լավ անդամների տանն այսօր մենք ուրախանալու առիթն ունենք։

— Ընկեր թամադա, ախր մենք բնակարանամուտի առիթով ենք հավաքվել, գուցե նախ և առաջ...

— Սուրեն Մարտիրոսովիչ, գիտեք, որ հայկական սեղաններին թամադան անքննադատ է։ Ինձ վստահել եք այս գործը, թույլ տվեք վարել իմ ուզած ձևով։

— Հարգելի թամադա, ընդունում եմ ձեր դիտողությունը, խոստանում եմ այլևս չխանգարել...

— Եվ կոլեկտիվի կենացի առթիվ մեր հարգելի դիրեկտորը խոսք ունի ասելու։

— Սիրով։ Բայց դուք նկատո՞ւմ եք, ընկերներ, որ մեր գլխավորն իր թամադայական իրավունքները չարաշահելու փորձեր է անում, նեղում է իր խեղճ դիրեկտորին... Կատակը մի կողմ, ընկերներ, եկեք իսկապես մի լավ ուրախանանք։ Դժբախտաբար այսպիսի առիթներ շատ չեն լինում, օգտագործենք այս լավ պահը, այս բարի օջախի քաղցրությունը։ Հավատացեք իմ խոսքի անկեղծությանը, առանց կոլեկտիվի հնարավոր չէ պատկերացնել մարդուս կյանքը։ Իսկ կոլեկտիվը մի դեպքում ընտանիքն է, բակն ու հարևանությունը, բայց ամենամեծ և իսկական իմաստով· աշխատանքային կոլեկտիվն է, որտեղ մարդս անց է կացնում իր գիտակցական կյանքի մեծ մասը։ Մենք հաճախ իրար ավելի շատ ենք տեսնում, քան մեր հարազատներին։ Եվ ինչպե՞ս կարող ենք մենք չապրել մեկս մյուսի ուրախությամբ, հոգսերով ու ցավերով։ Այ, մեր լավ աշխատողներից երկուսը բնակարան են ստացել, և մեր կոլեկտիվի ճնշող մեծամասնությունն ուրախ է, շնորհավորում է։ Բոլորը չէ, իհարկե, կան և դժգոհներ, այսօր երկու հոգի ինձ մոտ էին եկել, իրենք էլ բնակարանի կարիք ունեն։ Կյանք է, այլ կերպ լինել չի կարող, եթե մի բնակարանի դիմաց տասը սպասող կա, հասկանալի է, որ դժգոհներ կլինեն։ Այս չէ կարևորը, և շատ նշանակություն չպետք է տալ դրանց խոսքին, եթե համոզված ես, որ հար-

ցերը լուծվել են խղճի մտոք... Ամեն մի կոլեկտիվ առողջ է, առաջին հերթին, իր լավ աշխատանքով։ Մենք վատ չենք աշխատում, բայց գիտեք, որ պլանների կատարման գործում թերացումներ կան, վտանգի տակ է տարեկան պլանի կատարումը։

— Ներեցեք Սուրեն Մարտիրոսովիչ,— չհամբերեց Սմբատը,— չէ՞ որ պլանի թերակատարման պատճառը հումքի անկանոն ստացումն է։

— Ճիշտ է, վարպետ Սմբատ, ես էլ այդ եմ ասում, և ուզում եմ հայտնել նաև, որ այսօր միանգամից հինգ վագոն հումք ենք ստացել։

— Ուրեմն վաղվանից կկսենք ավելի լարված աշխատել, և գուցե կարողանանք փակել ճեղքվածքը։

— Քեֆը վեր ածվեց արտադրական խորհրդակցության,— նետեց վերջին նստածներից մեկը։

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ։

— Չգիտեմ ով էր, բայց սրամիտ էր,— խոսքի տակ չմնաց դիրեկտորը։— Հասկացեք, ընկերներ, առանց սրան էլ չի լինի։ Պլանը պետական առաջադրանք է, հաջո՞ղ ենք կատարում, գոհ են մեզնից։ Մենք էլ գոհ ենք, որովհետև նաև պարգևատրվելու կա, որը հիմա մանավանդ շատ պետք է այս նորաստեղծ ընտանիքին։ Ճի՞շտ է, Թամար։

Նորից՝ ընդհանուր ծիծաղ։

Իսկ Թամարը, պատասխանի փոխարեն, սկսեց երգել.

«Դե, արի շորորա, տաղ ասեմ, սիրելիս.
Օջախս տխուր է, առանց քեզ, նազելիս...»

Ինչ էլ քաղցր ձայն ունի։

Այո, օջախում ուրախություն պիտի լինի, երգ ու ծիծաղ, սեր ու հաշտություն։ Տխրություն էլ կարող է լինել, իհարկե, առանց դրան հնարավոր չէ, բայց տխրությունը պետք է ժամանակավոր և անկոչ հյուրի իրավունքով միայն մուտք գործի կարգին օջախները, նաև՝ կարգին կոլեկտիվները...

Թամարի ու Սմբատի օջախում ուրախությունը նոր թևեր առած լուսամուտներից դուրս թռչելու փորձեր էր անում...

Գործարանն այդ օրերին նման էր սար բարձրացող մեքենայի, այն էլ՝ ծանր բեռ տանող մեքենայի։ Փնչացնում էր, դեմ առնում ինչ-որ քարերի, ու նորից առաջ էր մղվում։ Հաճախ ստիպված էին անիվների տակ քար դնելու, որպեսզի ետ չգնա։ Հոնդում էր թափով, նոր ուժ առած առաջ մղվում... Կանոնավորվել էր հումքի ստացումը, հիմա մնում էր ապահովել երեք հերթի անխափան աշխատանք, և պլանների կատարումը հնարավոր էր դառնում։

Գլխավոր ինժեները շատ երկար էր մնում գործարանում, իսկ երբեմն նաև տուն չէր գնում. աշխատում էր վերահսկել բոլոր հերթափոխությունների աշխատանքը, գիշերվա մեջ մի երկու ժամ կարողանում էր աչք փակել առանձնասենյակի բազմոցի վրա։ Նվարդի կողմից այլևս բողոքի ոչ մի նշան, հաշտվել էր արդեն, լռում էր։ Միայն մայրն էր մղկտում, այրվում իր մեջ, իսկ երբեմ նաև՝ պոռթկում.

— Հրանտ, սա բոլորովին բանի նման չէ, երեսիդ էլ գույն չի մնացել։ Այսպես չի կարելի, հո կրակը չընկա՞նք, որ գլխավոր ինժեներ դարձար։

Ստիպված էր ճառ կարդալ մոր գլխին.

— Ախր դու հասկացող կին ես, սիրելի մայրիկ, եթե դա պետք է, եթե դրանից գործը շահում է, ինչպե՞ս կարող եմ հրաժարվել, չմնալ։ Խնդրում եմ այս մասին ավելորդ խոսք ու զրույց չբացեք։

Մորն էր ասում, բայց, իհարկե, առաջին հերթին կնոջը նկատի ուներ։

Մի գիշեր, ուշ ժամի, գործարան զանգահարեց իր ընկերներից՝ Սենոն, տպարանի տաս տարվա դիրեկտորը, որին ընկերները կատակով կոչում էին՝ տպարանի Սենոն։

— Այ տղա, Հրանտ, էս ժամին ինչո՞ւ ես գործարանում, բա դու տուն-տեղ չունե՞ս, զանգահարեցի, տանը չէիր։

— Իսկ դու որտեղի՞ց ես խոսում, Սենոն։

— Տպարանից. իմ գործարանն էլ սա է։

— Իսկ ինչո՞ւ տանը չես, գիշերվա ժամը երկուսն է։

— Պլան եմ կատարում, ուրիշ ճար չունեմ։

— Դե, ուրեմն այս հարցում էլ ընկերներ ենք։

— Թղթի ստացումն ուշացավ, իսկ առանց թղթի գիրք չես տպի, նոր մի վագոն ստացել ենք, տեսնենք կկարողանա՞նք տակից դուրս գալ։ Իսկ գործերս էնպես լավ էին գնում, հիմա վտանգի տակ ենք և՛ մենք, և՛ հրատարակչությունները։

— Ուրեմն դա էլ ընդհանուր ցավ է, ընդունիր իմ ցավակցությունը։

— Այ տղա, ի՞նչ ցավակցություն, էսա հույս եմ տալու պլանս թերթ-օտիսկով կատարեմ, մնացածի հերն էլ անիծած։

— Իսկ դրանով կկատարվի նաև հրատարակչությունների պլա՞նը։

— Չէ, իհարկե, մի ցուցանիշով միայն։ Դե, ինչ անեմ, նրանք էլ թող իրենց գլխի ճարը տեսնեն... Հրանտ, ինձ ստինձ է պետք, կարծեմ ձեզ մոտ լինում է, կարո՞ղ ես օգնել։

— Մի երկու տակառ կտամ, առավոտյան մեքենա ուղարկիր։

— Այ դա լուրջ օգնություն է։ Այ տղա, զավակի տեր ես դարձել, ձայն էլ չես հանում, ես արդեն տիկին Նվարդին իմ շնորհավորանքները հաղորդեցի։ Ուրախ եմ, ախպերս։

— Շնորհակալ եմ, Սենո... մի երկու հրահանգ պիտի տպես։

— Սիրով։ Հիշո՞ւմ ես, ինստիտուտում կարգին ընկերություն էինք անում, ինչո՞ւ էսպես անպետքացանք։ Տարին մի անգամ չենք հանդիպում։

— Դե, հազար ու մի ցավ ունենք, ժամանակ մնո՞ւմ է, որ...

— Համաձայն չեմ։ Պարզապես անշնորհք ենք, որ ուզենանք, ժամանակ էլ կգտնենք։ Շաբաթը մի անգամ ֆուտբոլի եմ գնում, մի երեք ժամ կորցնո՞ւմ եմ, փսկ ընկերոջ հետ հանդիպելու համար մի՞թե ավելի շատ ժամանակ է պետք։ Չէ, ինչ ուզում ես ասա, ես սա համարում եմ շնորհքի պակասություն։ Գիտես, մենք Սահակի հետ այդպես էլ արել ենք, ֆուտբոլի աբոնեմենտ ենք վերցրել, իրար կողքի, և խնդրեմ, ամեն շաբաթ մի երկու ժամ միասին ենք։ Ի՞նչ անեմ, դու ֆուտբոլ չես սիրում, լուրջ մարդու գործ չես համարում։

— Արդեն ես էլ եմ վարակվել, հեռուստացույցից պոկվել չեմ կարողանում, մանավանդ երբ «Արարատն» է խաղում։

— «Արարատն» այս տարի մեր հոգին կերավ, տեսնենք վերջը ո՞նց կլինի։

— Դե, լավ, Սենո, ես գնում եմ արտադրամաս։

— Ես էլ եմ արտադրամաս գնում և խնդրում եմ այդքան երկար չխոսես, բավական է, ժամերով չի կարելի զբաղեցնել ղեկավար մարդկանց... Բարի գիշեր։

— Գուցե «բարի լույսն» ավելի կսազեր։

— Եվ բարի լույս, ախպերս...

Բարի լույս։ Ի՜նչ հրաշալի խոսք է, այդ նշանակում է և՛ լավ տրամադրություն, և՛ բարի ցանկություններ, և՛ պլանի կատարում... Առանց դրան ի՞նչ տրամադրություն։

Հեռախոսը հնչեց նորից։ Գործարանի դիրեկտորն էր։ Հարցնում էր գործերի վիճակից.

— Հարմար է, Սուրեն Մարտիրոսովիչ, այս ամսվա պլանը երևի ծայրը ծայրին հասցնենք։ Խորհրդակցությո՞ւն, մինիստրությունո՞ւմ, շատ լավ, ես տվյալները կպատրաստեմ, առավոտյան ձեր սեղանին կլինեն։ Միայն խնդրում եմ Գեղամ Հմայակովիչին ասեք, որ նորից զանգահարի Մոսկվա... եթե մի երկու վագոն էլ հումք ստանանք, ուրեմն լրիվ փրկված ենք։ Դե, բարի գիշեր։

Բարի գիշեր։ Ինչքան շատ գործ կարելի է անել մի գիշերվա ընթացքում, մանավանդ երբ այդ գիշերվանը պայծառ օր է սպասվում։ Լավ է ասված ծանոթ երգի մեջ.
«Ամեն մի գիշեր ունի լուսաբաց...»։

Սպասենք այդ լուսաբացին և՛ գործարանում, և՛ տանը։ Մանավանդ՝ տանը... Աստված վկա, փոքրիկ Արշակն արդեն սկսել է իրեն դուր գալ։ Անցյալ օրը նույնիսկ համբուրեց երեխային՝ թաքուն, իհարկե։ Իսկ ինչո՞ւ թաքուն, այդ ինչպե՞ս է, որ քրոջդ երեխաներին համբուրում ես կարոտած, բոլորի ներկայությամբ, իսկ քոնին՝ միայն մի անգամ, այն էլ՝ թաքուն։ Դե, ոչինչ, ինչպես ասում են, դժվարն սկիզբն է... Տեսնես որտե՞ղ է հիմա Աշխենը, ի՞նչ է անում, ինչպե՞ս է երեխան... դժվարը սկիզբն է, իսկ ինչո՞ւ սրա վերջը դժվար եղավ... Հիշում է, այն ճակատագրական երեկոն, երբ ինքն առաջին անգամ պիտի մտներ Աշխենի տուն։ Լույս

չկար տանը, և միամիտ հարցրեց՝ ո՞վ է հանգցրել լույսը։ Նա էլ տեղին ու խելոք վրա բերեց՝ լույսը հանգցնելու համար նախ պիտի վառել... Այդ գիշեր ինքը լո՞ւյս վառեց, թե՞ հանգցրեց, և ո՞ւմ լույսն էր դա։ Եվ ինչո՞ւ է երկմտում, վառեց թե հանգցրեց, ախր ինքը չար մարդ չէ, լույս հանգցնել չի կարող, ամբողջ կյանքում մտածել է ուրիշների համար լույս վառելու մասին, հիմա ինչպե՞ս պատահեց, որ մեջտեղ եկավ նաև մարելու վտանգը... Երբ Աշխենի հետ ներս մտան, մի պահ վառեցին լույսը, երևի մի երկու րոպե միայն, ինչի՞ համար էր... Հետո մարեցին լույսը, և այդպես ավելի լավ էր, իրարից չէին ամաչում։ Լույս հանգցնե՞լն է վատ, թե ամոթի զգացումը կորցնելը։ Գուցե և մեկը և մյուսը։ Այդպես էլ մինչև վերջ չկարողացավ կողմնորոշվել՝ այդ գիշեր ինքը լո՞ւյս վառեց, թե՞ հանգցրեց. և եթե, ասված մի արասցե, վերջինն է, ապա ինչքա՞ն ժամանակով, և այդ լույսը նորից վառվելու հեռանկար ունի՞, թե ոչ։

«Ամեն մի գիշեր ունի լուսաբաց...»։ Ո՞ւր է այդ լուսաբացը, գուցե եկել է արդեն, մտել իր տունը փոքրիկ Արշակի հետ։ Թե՞ նոր պիտի գա։ Գոնե իմանար ճշմարտությունը, բավարարվեր ստացած լույսով, կամ ստանալիքի ճանապարհը կարճացներ։ Ոչ մեկը կարող է, ոչ մյուսը։ Իր ձեռքին չէ, դժբախտաբար, ինքն այս հարցում զրկված է ճճռական ձայնից, այս է սարսափելին։ Եվ, այնուամենայնիվ, «Ամեն մի գիշեր ունի լուսաբաց»...

55.

Աշխենի երեխայի առողջական վիճակը մնում էր անմխիթարական։ Շարունակվում էր կյանքի և մահու պայքարը։ Կշեռքի նժարը թեքվում էր մեկ՝ մեկի, մեկ՝ մյուսի կողմը։ Մի օր վատ, մյուս օրը՝ հույսի ինչ-որ շող։ Վերջնական բարելավման հույսը շատ էր աղոտ։ Պրոֆեսորը հերթական համայցի ժամանակ ասաց, որ ուժեղ թոքաբորբ է, որին ուղեկցում է ստամոքսի լուրջ խանգարումը։

— Իսկ ի՞նչ հույս կա, պրոֆեսոր, ի՞նչ կարելի է անել։ Խնդրում եմ, Աննա Իլյինիշնա, աղաչում եմ, փրկեցեք իմ երեխային,— մղկտում էր Աշխենը։

— Տիկին, բոլորովին ավելորդ խնդրանք է,— իր սովորության համաձայն չոր կտրեց պրոֆեսորը.— մենք անում ենք, ինչ կարող ենք։

Հետո երևի զգաց, որ չափից ավելի պաշտոնական ստացվեց, թե՞ Աշխենի գութ հայցող հայացքը նրան ստիպեց փոքր-ինչ նահանջել։

— Հավատացեք, որ ուզում ենք փրկել ձեր երեխային... Միայն վատ է, որ դուք լավ չեք սնվում և կաթ չունեք երեխային տալու։ Դա բանի նման չէ, այդ ճանապարհով չեն պայքարում կյանքի համար, հասկացեք, աղջիկս, ձեր կերածն առաջին հերթին այս հիվանդ երեխայի համար է, իսկ դուք օր-օրի վրա հալվում եք։ Ո՞վ է ձեզ այդ իրավունքը տվել...

— Կուլ չի գնում, պրոֆեսոր, փ՞ինչ անեմ։

— Զոռով կերեք, այդ հո կարո՞ղ եք. դուք գիտակից մարդ եք երևում, բայց մեծ սխալ եք թույլ տալիս... Ի դեպ, ո՞ւր է այս երեխայի հայրը, ես ոչ մի անգամ նրան չեմ տեսել։

Աշխենն ավելի գունատվեց։ Նա միշտ սարսափով էր սպասում այդ հարցին, և, այնուամենայնիվ, քիչ թե շատ տանելի պատասխան չէր գտել։

— Հայրն այստեղ չէ... Երևանում է, պրոֆեսոր։

— Երևանո՞ւմ, իսկ նրա կինն ու երեխան՝ Կույբիշևում։ Ես ոչինչ չեմ հասկանում... Ասենք՝ դա մեր գործը չէ։ Այսպես։ Դուք սնվեցեք կարգին, տիկին Աշխեն։ Երբեք մի մոռացեք, որ ձեր երեխային բուժող ամենազորավոր դեղը մոր կաթն է։ Լսել եմ, որ նաև օրերով չեք քնում։ Սխալ եք անում, կաթի գոյացմանը նաև վնասում է այդ անհանգիստ վիճակը։ Ձեր երեխայի բժիշկը դուք եք, ահա իմ վերջին խոսքը։

— Կաշխատեմ, Աննա Իլյինիչնա, եթե ամեն ինչ իսկապես իմ ձեռքին լիներ...

Հերթական այցելության ժամանակ չմերժեց Ռոզայի առաջարկությունը. նրան թողեց երեխայի մոտ, իսկ ինքը գնաց նրանց տուն և քնեց ամբողջ երեք ժամ։

Ալլա Կուզմինիչնան հաճելի զարմացած էր։

Ու նորից գլխապատառ վազեց հիվանդանոց։ Այնպես էր

շտապում, կարծես իր բացակայության ժամանակ աշխարհը շուտ էր եկել...

Իսկ երեխան, քրտինքի մեջ կորած, տնքում էր անօգնական։ Լուրջ անհանգստացել էր Ռոզան, օգնության էր կանչել հերթապահ բժշկին։ Հիմա երեխայի շորերն էին փոխում։

— Քրտնելը լավ նշան է, չանհանգստանաք.— հուսադրում էր հերթապահ բժիշկը,— հետո կտեսնեք, թե ինչքան կթեթևանա երեխայի վիճակը։

Մի երկու ժամ հետո երեխան իսկապես ավելի ազատ էր շնչում, հազն այնքան չոր չէր։ Տե՛ր աստված, մի՞թե իսկապես դեպի լավն է գնում...

Քանի՞ անգամ է այս նեղ օրերին վճռական որոշումների հանգել՝ հեռագրով հայտնել Հրանտին երեխայի վիճակի մասին, նրան կանչել այստեղ։ Թող գա, տիրությունն անի իր երեխային, թող տանի թեկուզ, միայն թե կարողանա լավացնել, փրկել նրան։ Թող տանի, իսկ ո՞ւր տանի. Երևա՞ն, ի՞նքն ինչ պիտի անի։ Կամ երեխային տանի, իրենց տանն ի՞նչ պիտի ասի, որտեղի՞ց գտավ, ինչպե՞ս ետ բերեց... Իսկ հեռագիրն ի՞նչ հասցեով պիտի տա, և ինչպե՞ս. ի՞նչ գրի, ինչպե՞ս կանչի... Հակադիր հարցերը բռնցքամարտի էին բռնվում, և ելքը մնում էր նորից անորոշ, հեղհեղուկ. վճռական քայլը դառնում էր անհնարին։ Ինչպե՞ս նրան կանչի, և ինչո՞ւ. եթե պիտի կանչեիր, ինչո՞ւ փախար այսքան հեռու, որտե՞ղ մնաց քո վճռականությունը։ Եվ մի՞թե ամեն անգամ, հենց որ հիվանդանա քո Գուրգենը, դու պիտի այսպես խուճապի մատնվես ու Հրանտի դուռը գնալու փորձեր անես։ Իսկ ի՞նչ կլինի, չէ՞ որ նա այս երեխայի հայրն է։ Հայրն էր, այլևս չկա նա, հասկացիր, նույնիսկ քո երեխայի անունն էլ չգիտի նա... Բայց մի՞թե կարևորն անունն է... Տեսնես ի՞նչ արեցին նրանք իրենցից հետո. երեխա վերցրի՞ն, և ի՞նչ դրեցին անունը։ Եթե տղա է, անպայման Արշակ կլինի, Հրանտը մի անգամ ասաց, որ հոր անունն ուզում է հավերժացնել։ Բայց նա կարծեմ նաև ասաց, որ կինն աղջիկ է ուզում... Իր երեխան այստեղ, մահվան ճիրաններում, իսկ ինքն այնտեղ, անտեղյակ այս վիճակից, երևի ուրիշի երեխա է մեծացնում։ Աշխարհն է դաժան, թե՞ մարդիկ...

Իսկ այդ Անատոլին իսկապես որ տարօրինակ տղա է։

Մի ամսվա ծանոթներ են հաղիվ, այնպիսի մտերմություն է խաղում... Իսկ խաղո՞ւմ է, գուցե անկեղծ է։ Դե, ո՞ւմն է պետք նրա խաղն ու անկեղծը։ Նրա աչքին հիմա Անատոլիներ չեն երևում, թող իր Գուրգենն առողջանա, ուրիշ ոչինչ չի ուզում։ Իսկ հետո՞, ասենք երեխան առողջացել է արդեն, և Անատոլին շարունակում է իր մեղմ հետապնդումները, ինչպե՞ս կվարվես։ Ոչ մի կերպ, ոչ մի ուրիշ տղամարդ. նրանից հետո ինքը ոչ ոքի տեսնել չի ուզում։ Իսկ Անատոլին պարզապես թեթև տղա է, սիրում է քարշ գալ աղջիկների ետևից, ես երևի նրա համար հերթական օբյեկտ եմ... Բայց մտքովս նաև ահավոր բաներ են անցնում. հնարավո՞ր է, որ Անատոլին ցանկանա իմ Գուրգենի... որպեսզի իրեն ոչ ոք և ոչինչ չխանգարի։ Ատված վկա, ինչպես Հրանտը կասեր, ես նրան կատեմ ամենասոսկալի դաժանությամբ... Բայց այդպես չի երևում, երևի հոգուս մեղք եմ անում, Անատոլին այնպես անհանգստացած է երեխայի վիճակի համար, համարյա ամեն օր այցելում է իրեն, եթե տեսնել չի կարողանում, բերած ծաղիկն է ուղարկում ու երկու խոսք, ինչպես բուժքույրն է փոխանցում,— ողջույն և լավագույն ցանկություններ։ Այնուամենայնիվ հետաքրքիր տղա է, միայն մի քիչ շատախոս է, իսկ շատախոսին դժվար է տանել, մանավանդ երբ սրտիդ վրա ծանրացած է վատ տրամադրությունը...

Այսօր, երբ գնացել էր Ռոզայենց տուն, Ալլա Կուզմինիշնան նորից կարգադրեց՝ առարկություն չվերցնող տոնով։

— Կանչիր այդ Գրանտ կոչվածին, թող գա տիրություն անի իր երեխային։

— Իմ մտքով էլ է անցել, Ալլա Կուզմինիշնա, բայց չեմ կարող, խնդրում եմ այդ մասին այլևս չխոսել...

Ասենք թե չենք խոսում, իսկ չմտածե՞լ ինչպես կարող ես, ախր ուղեղիդ մեջ ցցված մեխի նման մղկտացնում է, ոչ հանել կարող ես, ոչ՝ ցավին դիմանալ...

56.

Երևանից երբ դուրս եկան, մոտը շատ փող չկար, մի ամսվա աշխատավարձ և պարգև-հավելում։ Մեծ մասը

ծախսվեց ճանապարհին։ Այստեղ էլ դեռ աշխատավարձ ստանալու օրվան չհասած՝ երեխան հիվանդացավ, և ահա քսան օր է հիվանդանոցում են։ Արհկոմն օգնել չի կարող երևի, նոր աշխատող է, և ինքը երբեք չէր ընդունի այդ օգնությունը։ Մնում են ընկերները։ Ռոզայից փոխարինաբար հարյուր ռուբլի վերցրեց, մի կերպ ծայրը ծայրին է հասցնում։ Կարևորն այն է, որ երեխան լավանալու հույսեր է ներշնչում, ջերմությունն իջել է նկատելի, հազը պակասել, ստամոքսը կանոնավորվում է։

Հերթական կիրակի օրը Անատոլին նորից այցելության եկավ, ու նորից՝ ծաղիկներով։ Զարմանալի մտահոգ էր, Աշխենը երբեք նրան այդպես չէր տեսել. քչախոս, մի տեսակ կաշկանդված, ի՞նչ էր պատահել։ Չկարողացավ չհարցնել։

— Անատոլի Գրիգորևիչ, այսօր շատ եք մտահոգ, ես կասեի՝ նաև հուզված, կարելի՞ է պատճառն իմանալ։

— Պատճառն այդ «Գրիգորևիչն է»,— կատակի տվեց Անատոլին,— ես իմ հորը շատ եմ սիրում, բայց նա այստեղ ոչ մի գործ չունի։ Եթե մեկ էլ ասել ես, կնեղանամ, հայրանունով կոչվելու համար դեռ ժամանակ կունենամ։

— Դե, ես կատակով, Անատոլի, դու էլ սրտիդ մոտ ես ընդունում... պատմիր տեսնենք լաբորատորիայում ի՞նչ կա, ինձ հիշո՞ւմ են դեռ, թե՞ մոռացան։ Ախր ես չհասցրի մարդկանց հետ կարգին ծանոթանալ, և ահա...

— Ոչինչ, դեռ կհասցնես։ Իսկ քեզ հիշում են, իհարկե, բարևում են։ Միակ տխուր նորությունն այն է, որ Կիրա Իգնատևնան բաժանվել է ամուսնուց։

— Վա՜յ, ինչո՞ւ, այդ ինչ վատ բան ասացիր, նա, իմ կարծիքով, լավ կին է։

— Վատը չէ, իհարկե, միայն մի քիչ չոր է, ոչ կանացի։ Ես արդեն սկսում եմ բամբասանքով զբաղվել, սա լավ չէ... ընդհանրապես դրական մարդ է։ Ամուսինը բանի պետք չէ, ասում են հարբեցող է, համարյա ամեն օր խմած է տուն գալիս, սկանդալներ է սարքում, նույնիսկ կնոջ վրա ձեռք բարձրացնելու տխուր փորձեր կան։ Ինչպես ասում են, հոգուն վրա է հասել, աղջկան ամուսնացնելուց հետո դիմեց դատարան և բաժանվեց։

— Այդ մի աղջի՞կն է, թե՞ էլի երեխաներ ունեն։

— Տղային վաղուց է ամուսնացրել, թոռներ ունի։ Հիմա մենակ մնաց տանը։ Հա, երեք սենյականոց բնակարան ունեին, հաջողեցրին, փոխեցին երկու մեկ սենյականոցի հետ։ Հիմա ամեն մեկն իր գլխի տերն է։

Հանկարծ Աշխենը հարցրեց.

— Անատոլի, վատ բան է, չէ՞, բաժանվելը, ընտանիք քայքայելը։

Ինչո՞ւ ասաց այդ խոսքը, ինքն էլ չգիտեր։ Անհարմար զգաց, հետո էլ զարմացավ՝ իր անհարմար զգալու վրա, իսկ ի՞նչ կա դրանում, ընկերներ՝ են, մտքեր են փոխանակում։ Բայց և այնպես...

— Ես, բարեբախտաբար, դեռ այդպիսի փորձ չունեմ, բայց համոզված եմ, որ վատ բան է։ Գիտեմ, մի ժամանակ իմ ծնողներն էլ այդպիսի մտադրություն ունեին. պատճառն ինձ հայտնի չէ, իհարկե։ Ես փոքր էի, երևի տասներկուտասներեք տարեկան։ Մայրս առանձին, հայրս առանձին ինձ փորձում էին համոզել, որ բաժանվելուց հետո ես կամ մեկի, կամ մյուսի մոտ ապրեմ։ Իսկ ես ուզում էի երկուսի մոտ մնալ։ Այդպես էլ ասացի նրանց։ Հիշում եմ՝ հայրս մի տեսակ անհարմար զգալով մորս ասաց՝ գուցե՝ ճիշտն այս մի մատ երեխան է, ինչո՞ւ ենք հիմարություն անում... Եվ չբաժանվեցին։ Ու հիմա, փառք աստծո, ապրում են խաղաղ, հաշտ։ Գուցե նաև այդ է պատճառը, որ ինձ շատ են սիրում։ Մինչև հիմա էլ շարունակում են ինձ համար կոստյում առնել ու կոշիկներ։ Եթե անհարմար չզգան, փող էլ կուղարկեն ինձ։ Ավելի ճիշտ՝ ես եմ խիստ արգելել... Մի խոսքով, լավ ընտանիքը լավ բան է։

— Բայց, մի բան ասեմ, Անատոլի, չնեղանաս, բոլորն այն կարծիքին են, որ դու թռի-վռի, ընտանիքի քաղցրությունից բան չհասկացող տղա ես, և հանկարծ այդքան հաջող ելույթ հօգուտ ընտանիքի...

— Թող ասեն, ով ինչ ուզում է, միշտ չէ, որ ասելով է... իսկ քեզ, Աշխեն, ես մի բան պիտի առաջարկեմ, եթե մերժես, շատ կնեղանամ։

— Ի՞նչ կա, Անատոլի։

Ինչո՞ւ Աշխենի շնչառությունն արագացավ։ Մի՞թե լուրջ բան էր սպասում։

— Ահա այս ծրարի մեջ հարյուր ռուբլի կա. օգտագործիր, խնդրում եմ, մինչև որ փող կունենաս, կվերադարձնես։

Աշխենի շնչառությունն սկսեց կարգավորվել։ Մի՞թե ավելի վտանգավոր առաջարկություն էիր սպասում... Երկար ծանր ու թեթև էր անում՝ ի՞նչ պատասխանի, ախր չի ուզում տղային վիրավորել և գուցե առաջարկության մեջ հետին նպատակ չկա՞։

— Շնորհակալ եմ, Անատոլի,— ինքն էլ չիմացավ ինչպես փաթաթվեց ու համբուրեց տղայի այտը։ Սա՞ ինչի համար էր, ինչո՞ւ այսպես ջրիկացավ...

— Շնորհակալ լինելու բան չկա, Աշխեն, ընկերներ ենք, իրար պիտի օգնենք։

— Ախր քո աշխատավարձն էլ մի բան չէ։

— Ես փող ունեմ, մի անհանգստանա, հավաքում եմ՝ մեքենա առնելու համար։

— Ես պատճառ կդառնամ քո այդ ցանկության իրականացումն ուշացնելու։

— Ոչինչ, Աշխեն։ Դե, ես գնացի։ Ուրախ եմ, որ երեխան ապաքինվում է։ Ու մի խնդրանք էլ, եթե որևէ բանի կարիք ունենաս, միայն ինձ ես դիմում, լա՞վ...

Նայեց ժամացույցին.

— Ընդամենը կես ժամ եմ մնացել քեզ մոտ, իսկ մի ժամի թույլտվություն ունեմ։ Ուզում եմ ընտանիքի մասին քեզ մի բան էլ պատմել։ Այսօր, իսկապես, ինքս էլ եմ զարմանում իմ լրջության վրա, բանից դուրս է գալիս, որ այնքան էլ թռի-վռի չեմ... Մեր մի հարևանի ընտանիքի պատմությունն եմ ուզում անել։ Պատերազմ է գնում ամուսինը, ու հաղթանակով տուն է դառնում շատ շատերի նման։

— Ընդհատում եմ, Անատոլի, իսկ իմ հայրն այդպես էլ պատերազմից չվերադարձավ, ես նրան այնքա՜ն աղոտ եմ հիշում։

— Իսկ ես չգիտեի, ասենք դե քեզ կարգին որտեղի՞ց գիտեմ։ Ափսոս, որ դու էլ համարյա որբ ես մեծացել... իսկ ես մի սրամիտ պատմություն էի ուզում անել, գուցե այլևս պե՞տք չէ։

— Ոչ, ինչո՞ւ, պատմիր։ Հորս կորստյան հետ ես վաղուց եմ հաշտվել։ Դու շարունակիր, Անատոլի։

— Այսպես տուն է վերադառնում հարևանս, որ երկու երեխայի հայր էր, ու նորից կանգնում է իր ընտանիքի գլուխը։ Դու մի ասա, այս ընկերը ռազմաճակատում եղած ժամանակ կապվում է մի ջահել սանիտարկայի հետ. ինչպես է լինում, այս աղջիկն էլ վերադառնում է մեր քաղաքը, և սրանք շարունակում են հանդիպել, իհարկե, թաքուն։

— Անամոթությունը շարունակում է քայլել նույն ճանապարհով,— Աշխենի բերանում մի տեսակ թունոտ հնչեց այդ խոսքը։

— Այո, շարունակում են հանդիպել։ Եվ ես ուզում եմ քեզ պատմել մի սրամիտ անեկդոտ։ Գուցե և անեկդոտ չէ... Ասում են՝ պատերազմը որ վերջանում է, ռազմաճակատում ժամանակավոր ամուսիններ գտած կանայք, նրանց ՊՊԺ— էին ասում, հատուկ համագումար են հրավիրում, որտեղ քննարկում են մի հարց — ինչպե՞ս պետք է վարվել այսուհետև։ Եվ ելույթներ են ունենում. մենք այստեղ արյոմն ենք թափել, իսկ մեր ամուսինները կարող է գնան իրենց օրինական կանանց մոտ, դա անարդար կլինի. նրանք նստել են թիկունքում, իսկ մենք հաղթանակն ենք կռել... Այսպես խոսում են երկար և ընդունում մի վճռական որոշում.— «Չենք տա արյան գնով ձեռք բերածը»։

Այս լուրը հասնում է թիկունքի կանանց։ Հիմա էլ սրանք են հավաքվում համագումարի։ Օրակարգում նույն հարցն է,— ինչպե՞ս վարվել։ Ու նորից ելույթներ, ճառեր. մենք թիկունքում լավ աշխատանքով ապահովել ենք մեր զորքերի առաջխաղացումը, առանց մեր աշխատանքի հաղթանակ չէր լինի։ Մենք դաստիարակել ենք նրանց օրինական երեխաներին, հիմա այդ կապը կտրածներն ուզում են զավթել մեր ամուսիններին, դա անարդար է։ Եվ ընդունում են մի դաժան որոշում.— «մահ զավթիչներին»։

Լուրը հասնում է ռազմաճակատից վերադարձած և այնտեղ համատեղությամբ տիկիններ պահած տղամարդկանց։ Հիմա էլ սրանք են հավաքվում համագումարի։ Օրակարգում նույն հարցն է։ Նորից ելույթներ. ընկերներ, ասում են, մեր վիճակն ավելի փափուկ է, մի կողմում՝ օրինական կանայք

ու սիրասուն զավակներ, մյուս կողմում՝ ավելի ջահել ու գեղեցիկ աղջիկներ, ոչ մեկից հրաժարվել կարող ես, ոչ մյուսից։ Եվ հնարագետ տղամարդիկ ընդունում են մի հանճարեղ որոշում,— անցնել խոր ընդհատակ և գործել երկու ճակատով...

Աշխենի ծիծաղն այնպես էր բռնել, իրեն պահել չէր կարողանում։ Ե՞րբ է այսքան անզուսպ ծիծաղել։

Հաճելի զարմացած էր նաև Անատոլին, չէր սպասում, որ իր պատմությունն այդքան ծիծաղի առիթ կարող է տալ։

— Սրամիտ է, աստված վկա... Հիմա ձեր հարևանը, երևի...

— Այո, նա էլ անցել էր խոր ընդհատակ։ Եվ, ինչպես ամեն մի բան, սա էլ բացվում է։ Կինն իմանում է, փողոցում մի լավ ծեծում է այդ «պոչը կտրած կաչաղակին», ինչպես ինքն էր ասում։ Գործը հասել էր բաժանության, տղաները մեջ ընկան, իսկ նրանք արդեն հասուն մարդիկ էին, մի կերպ հաշտեցրին ծնողներին։ Իսկ այն «կաչաղակին», որը, բարեբախտաբար երեխա չուներ, ուղղակի քաղաքից վռնդեցին։ Այսպես էլ է լինում։

— Անատոլի, ի՞նչ լավ ասացիր՝ ինչպես ամեն մի բան, սա էլ բացվում է...

Աշխենի ծիծաղից հետք չէր մնացել արդեն։

— Իսկ մի՞թե այդպես չէ, մախաթը պարկում չես թաքցնի...

— Մի անկեղծ հարց ես, քո այդ թաքցրած մախաթներից քանի՞սն է հայտնաբերվել, չնեղանաս, խնդրում եմ, կատակով եմ հարցնում։

— Լավ կատակ է, ոչինչ չես ասի... Ես ուզում եմ դու հավատաս, Աշխեն, որ անազնիվ քայլ երբեք չեմ կատարել, ամուսնացած կանանց հետ գործ չունեմ, միայն թրև եմ եկել ազատ աղջիկների հետ, թեկուզ սա էլ...

— Եվ ամեն անգամ խոստացել ես ամուսնանալ նրանց հետ։

— Ոչ, երդվում եմ, դեռ ոչ մեկին առաջարկություն չեմ արել։ Եվ կարծում ես ժամանակակից աղջիկները մտածում են ամուսնանալու մասի՞ն, նրանց ժամանակավոր հաճույք է պետք, ուրիշ ոչինչ... Իսկ դու, Աշխեն, այնուամենայնիվ

այդքան վատ մի մտածիր իմ մասին, խնդրում եմ, երևի իմ մեջ ինչ-որ լավ բան էլ կա, աշխատիր նաև այդ նկատել...

— Իսկ մի՞թե դա այդքան կարևոր է, Անատոլի։

— Ինձ համար՝ այո... Իսկ այս պատմությունն արեցի քեզ՝ տրամադրությունդ մի քիչ բարձրացնելու համար, ահա բոլորը։

— Եվ կարող ես համոզված լինել, որ քո նպատակին լրիվ հասել ես։

— Շնորհակալ եմ, Աշխեն... Չմոռանաս իմ այն հիմնական խնդրանքը,— եթե որևէ բանի կարիք ունենաս, միայն ինձ ես դիմում, լա՞վ...

Անատոլին վաղուց է գնացել, իսկ նրա մի խոսքը մեխվել է ուղեղի մեջ ու դուրս գալու միտք էլ չունի.— «ինչպես ամեն մի բան, սա էլ բացվում է»... Եվ ճիշտ է, պետք է բացել, մաքրել կեղտերը, միայն ինչպե՞ս բնութագրես, թե որն է կեղտը, որը մաքուրը, ինչպե՞ս որոշես դրանց սահմանները...

57.

Տարվա պլանը մի կերպ ծայրը-ծայրին հասցրին, կատարեցին մեծ տառապանքով, և այն էլ՝ ոչ բոլոր ցուցանիշներով։ Համենայնդեպս պարգև-հավելում տալ չկարողացան, և այդ շատ էր անհանգստացնում գործարանի ղեկավարությանը, մանավանդ՝ գլխավոր ինժեներին։ Առանձնապես թերակատարվեց նոր արտադրանքի թողարկման պլանը. սկսվեցին նույն անհանգիստ զանգերը, նույն հևիհև վազքը։ Իրեն զգացնել էր տալիս բավարար փորձի պակասը։

Վաղուց էին որոշել. երեք հոգով մեկնեցին Ուրալ՝ Կույբիշևի ու Սարատովի նույնատիպ գործարանների առաջավոր փորձին ծանոթանալու համար։ Գլխավոր ինժեներն էր, արտադրամասի պետ Բաբկեն Սիմոնյանը և վարպետ Սմբատ Ոսկանյանը։ Արտադրամասի պետը վատ էր տանում ինքնաթիռը, որոշեցին Մոսկվայից Կույբիշև գնալ գնացքով։ Ու հիմա ճանապարհին են։

Ցուրտ ձմեռ է, չորս կողմը՝ համատարած ձյուն։ Ու գնացքն ասես, ձյունե սավանը պատռելով՝ առաջ է սուրում։

Սմոատն ու Բաբկենը շախմատ են խաղում, Հրանտի հայացքը թափառում է վագոնից դուրս, անծայրածիր դաշտերով։ Հիշում է, նման ձմեռվա մասին էր պատմում հայրը նոր տարվա մի գիշեր։ Քառասուներկուսի ձմեռը Մոզդոկի տակ, ի՜նչ նմանություն։ Գուցե ընդհանուրը միայն համատարած ձյունն էր, բայց դա էլ նույնը չէր, տարբեր էր անպայման։ Նա բզկտված ու արնաշաղախ ձյուն էր, ականջ խլացնող պայթյուններով լի մահահոտ ձմեռ։ Իսկ հիմա, փառք աստծո, երանելի խաղաղություն է, ամբողջ դաշտով մեկ միայն գնացքի ծղրտոցն է լսվում ու նրա համաչափ հևքը։ Իսկ հայրը պատմում էր այդ պարզկա գիշերը իրեն մահվան ճիրաններից փրկող մի վտիտ աղջկա մասին։ Արկի բեկորը մխրճվում է հոր կոնքի մեջ, ու նա արյունաքամ լինելու վտանգի առաջ է կանգնած, ինքն իրեն օգնել չի կարող, դավաճանում են ուժերը, իսկ մոտիկ ոչ ոք չկա։ Մի՞թե սա վերջն է, մտածում է, մի՞թե փակվել են փրկության բոլոր դռները... Ու հանկարծ ձյան վրայով դեպի իր կողմը սահող մի աղջկա է տեսնում։ Ուժ չունի նրան կանչելու։ Իսկ նա, պարզվում է, նկատել է, օգնության է գալիս։ Ու աղջիկը իր տկար ուսերին առած՝ թիկունք, սանմաս է տանում տղամարդուն։ Տառապանքով է տանում, շնչակտուր, քափ ու քրտինքի մեջ կորած։ Տեղ է հասցնում։ Կապում են վերքը, աստիճանաբար հավաքում է իրեն։ Խոսել է կարողանում։ Եվ առաջին հարցը լինում է՝ ո՞վ ինձ հանեց մարտադաշտից, խնդրում եմ կանչեք իմ փրկչին։ Չկան, ասում են, աղջիկները նորից են գնացել օգնության։ Գոնե անունն ասեք, աղաչում եմ։ Ախր հինգ հոգի են նրանք, ձեզ ո՞ր մեկը բերեց, ինչ իմանանք... Այդ ցավը մնացել էր հոր սրտում, որ ոչ միայն իր փրկարարին շնորհակալություն հայտնել չկարողացավ, այլև նույնիսկ անունը չիմացավ։ Ահա այսպիսի ձմեռներ են եղել, բայց տագնապով ու մահերով լի, և մարդիկ միայն մտածել են թշնամուն հալածելու ու հաղթանակով տուն դառնալու մասին։ Իսկ ուրիշ հոգսե՞ր. ինչպե՞ս կարող էին չունենալ, մարդուս հոգսերին վերջ ու սահման կա՞։ Բայց ճնշողը, համատարածը մեկն է եղել, մահվան ու կյանքի կռիվը։ Իսկ հիմա ամեն դատարկ բան հոգս ենք դարձնում։ Իսկ ո՞րն է այդ դատարկ բանը, մի՞թե մարդուս

կյանքը հենց այդ հոգսերի և ուրախությունների գումարը չէ, ի՞նչ փոքր ու մեծ, երբ դրանց բոլորի ճանապարհն անցնում է ամենաղոր և ամենախեղճ սրտի վրայով, թե՞ միջով...

Քանի ամիս է անցել արդեն, և սրտի ականջները քաշել չի կարողանում։ Թվում է, թե հաշտվել է եղած փաստի հետ, գիտակցությունն ընդունում է, իսկ սիրտը շարունակում է ըմբոստանալ... Հիմա էլ Ուրալ են գնում, գուցե այնտեղ կհանդիպեն, ի՞նչ իմանաս։ Երբեմն նույն քաղաքում տարիներով մեկին չես հանդիպում, իսկ մի բոլորովին ուրիշ տեղ կայանում է այդ անսպասելի հանդիպումը։ Մեկին, որի կարիքը չես զգում, կարող ես ամեն օր հանդիպել, իսկ նրան, որին փնտրում ես, ճանապարհները միշտ շեղվում են...

Գրել էր, թե շատ հեռու տեղ է գնում. Ուրալը հեռո՞ւ է, թե մոտ, մի՞թե հեռուն անպայման Կամչատկան է կամ ծայրագույն Հյուսիսը։ Հայաստանից մինչև Ուրալ քանի՞ կիլոմետր կլինի, հիմար բաներ ես մտածում, դա ի՞նչ կարևոր է...

Իսկ եթե հանկարծ հանդիպեք, ասենք Կույբիշևում կամ Սարատովում, ի՞նչ պիտի անես, մտածե՞լ ես այս մասին։ Աստված վկա, չեմ մտածել, կստիպեմ տուն վերադառնալ։ Իսկ ո՞րն է նրա տունը, այն, որտեղ արդեն Թամարն ու Սմբա՞տն են ապրում։ Իսկ քո տղայի տո՞ւնը որն է։ Իսկ ո՞րնէ քո տղան, այն փոքրիկ Հրա՞նտը, թե՞ այս Արշակը... Տեսնես պատերազմի տարիներին էլ այսպիսի անլուծելի հարցեր ծագե՞լ են, թե՞ մարդկանց մտքերն զբաղված են եղել մի մեծ ու հիմնական գործով... Ինչքա՜ն պատմություններ է լսել։ Նույն այդ ահեղ տարիներին դժբախտ ու երջանիկ տվայտանքներ ինչքան ասես։ Ոչ, սիրո ճամփան փակվել չունի, մահն անգամ անզոր է նրա առաջ...

Բայց և այնպես իր որոնումները պիտի շարունակի այդ անծանոթ քաղաքներում, գուցե, ո՞վ գիտի... Գոնե տեսներ, համոզվեր, որևէ բանով օգտակար լիներ։ Ամենահետին հայրն անգամ ալիմենտ է տալիս իր երեխային, ինքը զրկված է նաև այդ տարրական պարտականությունը կատարելու հնարավորությունից...

Միտքը նորից գնաց հոր հետքերով։ Տանն են, նախապատրաստվում են քրոջ՝ Սիրուշի հարսանիքին։ Մի ամբողջ

ամիս առնել-պատրաստվելով են զբաղված։ Այս ի՞նչ հոգ-սաշատ բան է հարսանիք կոչվածը և ի՞նչ մի անհրաժեշտ բան է։ Բայց խնամիների պահանջը շատ էր վճռական՝ առանց հարսանիքի մենք աղջիկ չենք տանի, մեր միակ տղան է Համբարձումը, ինչպե՞ս կարող ենք... Դե, ճիշտն ասած իր հայրն էլ էր ուզում, ասում էր առանց աղմուկի աղջիկ տալն էլ մի բան չէ։

Եվ այդ խառը գնումների օրերին մի անգամ մայրն ասաց ամուսնուն. «Այ մարդ, դու հայրենական պատերազմի հաշմանդամ ես, ինչո՞ւ չես մի անգամ օգտվում քո իրավունքներից»։ «Չէ, Լուսիկ, խանութ գնամ, ինչքան ուզում ես, բայց անհերթ բան առնելուց ինձ ազատիր, խնդրում եմ»։ Ու պատմեց մի տխուր դեպքի մասին, որին ականատես էր եղել ինքը։ Խանութում մի հերթ է։ Մոտենում է քունքերն արդեն սպիտակած մի մարդ, ցույց է տալիս հաշմանդամի իր գրքույկը և երկու կիլոգրամ միս է խնդրում։ Հերթի սպասող կանանցից մեկը անմիջապես հարձակվում է այս մարդու վրա.— «Ինչո՞ւ պիտի դու առանց հերթի առնես, ինչ է, մեզնից ավելի շտա՞պ ես»։ Գործակատարը փորձում է պաշտպանել մարդուն.— «Նա իրավունք ունի, քույրիկ, պատերազմի հաշմանդամ է»։ «Հետո՞ ինչ, որ հաշմանդամ է. իմ ամուսինն էնտեղ է մնացել, սա գոնե վերադարձել է, թող մխիթարվի դրանով»...

Հաշմանդամը դառնում է այս կնոջը, չգիտես ինչո՞ւ մի տեսակ մեղավոր տոնով. «Քույրիկ, դաժան կռիվ էր, առանց զոհերի չի լինում. ինձ բախտ վիճակվեց տուն վերադառնալ, ձեր ամուսինը մնացել է... կարող էր և հակառակը լինել, բայց ես ի՞նչ մեղավոր եմ։ Հարամ լինի այս-պիտի արտոնությունը, որ մեզ տվել են»... Ու թողնում է հերթը, դատարկ ձեռքով դուրս է գալիս խանութից։ Եվ սարսափելին այն է, որ հերթում կանգնածներից ոչ մեկը չի դատապարտում այդ կնոջ անտակտ արարքը։

Ոչ, դեռևս բավարար չափով նրբանկատ չենք, սա տխուր փաստ է։ Նույն բանը կարող էր կատարվել հորս հետ, որը հինգ անգամ վիրավորվել է, և որի մարմնում դեռ արկի երեք բեկոր կար. կամ՝ հորս մահվան ճիրաններից փրկող այն անանուն աղջկա հետ, որին արձան կարելի է կանգնեցնել,

իսկ մենք հերթից դուրս բան վերցնելն էլ շատ ենք համարում նրանց համար։ Ոչ, հաճախ շատ ենք դաժան, անշնորհակալ, ու շատ ենք մոռացկոտ։ Իսկ այդ հաշմանդամները շա՞տ են մնացել. ամեն տարի երևի կիսվում է եղած թիվը...

Կես ժամ հետո գնացքը պիտի հասներ Կույբիշև։

58.

Հրանտենց տունը խաղաղ օրեր էր ապրում։ Երկու մայր, մի երեխա, խնամում էին հերթով ու անհերթ, կերակրում ժամանակին, քնեցնում, շորերը փոխում։ Ոչ մի դժվարություն, ոչ մի պրոբլեմ։ Երեխան առաջվա նման լալկան չէ այլևս, խելոքացել է։ Նվարդը զարմանքով նկատում էր, որ, չնայած առանց Հրանտի տունը տխուր է, բայց նաև հանգիստ է. ոչ ուշ տուն գալու կամ գործարանում մնալու մասին է մտածում, ոչ նրա արդեն սովորությունն դարձած անտարբերությունն է իրեն համբերությունից հանում։ Ոչ մի հոգս. ժամերով չի էլ հիշում Հրանտին, ուր մնաց թե կարոտի նրան... Իսկ առաջ ինչո՞ւ այդպես չէր, և ինչո՞ւ այսպես ստացվեց, ի՞ր մեղքով. ախր ի՞նչ հանցանք է կատարել ինքը... Լուսիկ մայրիկը մի քիչ տկար է այս վերջին օրերին, մեջքն է ցավում, սրտից է գանգատվում. գուցե սրան տղայի կարոտն է մաշում։ Ինչքա՞ն է անցել որ, ընդամենը մի շաբաթ, մի այդքան ևս, և տուն կդառնան, ի՞նչ է, սպասել չի՞ կարող։ Կարող է, իհարկե, մոր սիրտ է, և կկարոտի, և կդիմանա, իսկ վատ է, որ քո կարոտի ուսերին ինչ-որ ծանրություն է իջել, թե՞ լույսն է պակասել...

Իսկ մայրը դեռ լրիվ չի ապաքինվել, հիմա էլ նրանց մոտ պիտի վազի, օգնի, ճաշ պատրաստի, մինչև հարսը վերադառնա դպրոցից։ Երեխան քնել է արդեն, ուրեմն կարելի է գնալ։ Եվ հագնվում էր, երբ ներս մտավ Սրբուհի մորաքույրը։ Մրսած, ձյունոտված, շալի մեջ փաթաթված։

— Բարով տեսանք, այ ժողովուրդ.— շալը թափ տվեց դռների մոտ ու շտապ ներս մտավ.— էս ի՞նչ անամոթ ձմեռ է, մեր գյուղում էնքան ձյուն է եկել, որ ճանապարհները փակվել են, տրակտորով են բացել, զարմանալի բան է։

— Նստիր, մորաքույր, տաքացիր, հիմա քեզ տաք թե

կտամ,— Նվարդը վերարկուն մի կողմ գցեց ու թեյնիկը դրեց գազօջախի վրա։

— Էս ի՞նչ է, Նվարդ, երևի մորդ մոտ էիր գնում, իմ պատճառով մի ուշանա, Լուսիկն ինձ թեյ կտա, դու գնա քո գործին։

— Դե, որ էդպես է, խնդրում եմ ինձ ներես։ Հա, մորաքույր, շնորհակալություն այն «մալյուտկաների» համար, մեծ օգնություն էր։

— Բան չկա, հարս ջան։ Երեխա՞ն ինչպես է, նորություն, բան չկա՞։

— Ի՞նչ նորություն. երեխան լավ է, Հրանտը գործուղման է գնացել, մենք էլ ապրում ենք, փառք աստծո,— Լուսիկը միջամտեց խոսակցությանը,— իսկ էս ձյուն-ձմռան ինչի՞ ես քաղաք եկել, Սրբուհի, դու իսկի դադար չունե՞ս, հա ճամփի վրա ես։

— Կյանքն ինքն էլ ճամփա է, պիտի անցնենք... Մեծ թոռանս ուզում ենք ամուսնացնել, եկել եմ մատանի առնեմ։

— Հենց դո՞ւ պիտ գայիր, մի ջահել չկա՞ր ձեր տանը։

— Լուսիկ, դու էլի սխալ բաներ ես խոսում. բա ինձնից ջահել էլ ո՞վ կա...

Նվարդը թեյ լցրեց Սրբուհու համար, քաղցրավենիք դրեց սեղանին ու նոր միայն, ներողություն խնդրելով, դուրս եկավ տնից։

Քույրերի միջև երկար ժամանակ լռություն տիրեց։ Սրբուհին թեյ էր խմում, Լուսիկը երեխայի շորերն էր արդուկում։

— Այ, օղորմի չայ հնարողի հորը. ջանս նոր տաքացավ... Ուրիշ ի՞նչ կա, Լուսիկ, Հրանտն ինչպե՞ս է։

— Ոչինչ, քիչ-քիչ մոտ է գալիս։ Մի անգամ տեսա, երեխային թաքուն համբուրեց, տեսնենք...

— Է՜, Լուսիկ, ուզում ես ինձ չար կին համարիր, միևնույն է, ես էս բանի հետ հաշտվողը չեմ։ Սիրտս շատ է կախ։

— Դե, լավ, նորից մի սկսիր, անցած անգամ Նվարդի մոտ կարգին խելոք բաներ խոսեցիր, հիմա քեզ ի՞նչ պատահեց։

— Բա Նվարդի մոտ ուրիշ ի՞նչ պիտի ասեի, մեղք է։ Նրա սիրտն էլ կոտրել չեմ ուզում... Բա ինչի նման է, երեխային թաքուն է համբուրում, որ իրենը լիներ, կամաչե՞ր։

— Ի՞նչ անեմ, երևի մեր բախտն էլ էդքան է... Մենակ քեզ շատ եմ խնդրում, Սրբուհի, էլ բերանդ էդ մասին չբացես, ամոթ է, լավ չի։

— Բերանս մի կերպ կփակեմ, բայց սիրտս մնում է իրա խելքին, նրան բան չես հասկացնի... Մարդ ու կնիկ ինչպե՞ս են, առաջվա քաղցրությունը կա՞, թե՞ թթուն շատացել է։

— Չէ, առաջվա նման չեն, իհարկե, Հրանտս է շատ փոխվել, էն առաջին երեխայի անհաջողությունից հետո բոլորովին ուրիշ մարդ է դարձել, պատճառը չեմ հասկանում։

— Թե ասենք էն երեխայի հետ կապվել էր...

— Որտեղի՞ց, երեսը չէր տեսել։

— Հո նրա մոր հետ ծանոթ չէ՞ր։

— Աշխենի՞, չէ, ինչ ես ասում, նրան էլ չի տեսել, ի՞նչ ծանոթ։

— Դե, ուրեմն ես բան չեմ հասկանում. էդ փոխվելն ինչի՞ց է։

— Մի տեսակ շատ փակ է դարձել, ինքն իր հետ, ինքն իր մեջ, ախր առաջ բոլորովին էդպես չէր։

— Գործն է դժվարացել, կարող է դրանից է, քանի՞ մարդու պատասխան պիտի տա։ Հեշտ բա՞ն է, մի տուն է, շորս հինգ հոգի, կարգին կառավարել չենք կարողանում։ Կարո՞ղ է կնկանը թողնի, Լուսիկ։

— Չէ՛, ինչե՞ր ես ասում, այ կնիկ, դու նորից...

— Եթե առաջվա քաղցրությունը չկա, ամեն բան սպասելի է։ Եվ գիտես, էլի ուշ չի։

— Թե հորդ կսիրես, խնդրում եմ ուրիշ բանից խոսես։

— Ուրիշ բանը մեր հարսանիքն է, կգա՞ս գյուղ։

— Ես ո՞նց եմ գալիս. գուցե Հրանտին համոզենք։

— Նա չի գա, ինձ չի սիրում քո Հրանտը։

— Է, անխելք բաներ ես ասում... Հիվանդ եմ մի քիչ, առողջանամ, տեսնենք, թե կարողացա, կգամ։

Թամարը վաղուց էր առիթ փնտրում Հրանտ Ստեփանյանի կնոջ հետ ծանոթանալու։ Ինչո՞ւ, ինքն էլ չգիտեր։ Գուցե նրա գեղեցկության և լավ տանտիկին լինելու մասին շատ բան էր լսել, դրա համա՞ր էր ուզում։ Համենայնդեպս, ինչպես ասում են, նպատակը միանգամայն բարի էր։ Իսկ առի՞թ,— ավելի լավը դժվար էր պատկերացնել, Սմբատն էլ գլխավորի հետ գնացել է գործուղման, անցել է տասը օր, և ոչ մի տեղեկություն։ Մի՞թե Սմբատն այդքան անշնորհք է, չի՞ մտածում, որ կինը կանհանգստանա, մի սուտ հեռագիր չէ՞ր կարող ուղարկել։ Ամուսնանալուց հետո առաջին անգամն է տնից դուրս գնում երկար ժամանակով, սա լավ չէ, պետք է դաստիարակել նրան։ Իսկ տիկին Նվարդի մոտ գնալու մեջ ոչ մի վատ բան չկա. կգնա, կծանոթանա, կհարցնի գնացածների մասին, նրանք լուր կունենան, Հրանտ Արշակովիչն ուշադիր մարդ է, Սմբատի նման չէ... Իսկ հոգուդ մեղք չե՞ս անում, Սմբատը մի՞թե անտարբեր է, մարդ է, գուցե հեռագրել է, տեղ չի հասել, նոր տուն է, դեռ կարգին հասցե էլ չունեք։

Գնաց, կիրակի երեկոյան։ Դատարկ չէր կարող, գիտեր, որ մի քանի ամսական երեխա ունեն, հարմար բան չճարեց, խաղալիքներ վերցրեց։ Անհամարձակ սեղմեց զանգի կոճակը։ Դուռը բացեց Նվարդը։ Եվ անմիջապես Թամարի ուղեղում առկայծեց մի ուրախ միտք. լավն է, Հրանտին արժանի...

— Բարև ձեզ, տիկին Նվարդ։ Կներեք, որոշեցի ձեզ անհանգստացնել։ Ես Թամարն եմ, վարպետ Սմբատի կինը։

— Համեցեք, ներս եկեք, շատ ուրախ եմ, ձեր հարսանիքին ես ներկա լինել չկարողացա, ուշացումով շնորհավորում եմ։

— Շատ շնորհակալ եմ... Քանի օր է, գնացել են, ոչ մի տեղեկություն չունեմ։ Որոշեցի ձեզ անհանգստացնել, գուցե դուք...

— Այո, Հրանտը հեռագրել է, հետո էլ հեռախոսել է։ Լավ են, մի անհանգստացեք, բան չմնաց, մի հինգ օրից կվերադառնան։ Գիտեք, կարող է և շուտ գան, ես մի սխալ

եմ թույլ տվել. Հրանտը որ խոսեց, ասացի մոր հիվանդության մասին, ինչո՞ւ ասացի, ինքս էլ չեմ հասկանում, իզուր անհանգստացրի, իսկ մոր համար նա տիեզերք կթռչի...

Թամարին դուր չեկավ այս վերջին խոսքը, չնայած դրա մեջ ոչ չարություն կար, ոչ հեգնանք, իսկ մի՞թե դա վատ է, ինչո՞ւ ընդգծեց մոր նկատմամբ ամուսնու ունեցած անսահման սիրո փաստը. գուցե խանդո՞ւմ է։ Բայց մի՞թե դրանք հակադրելու բաներ են՝ մայր ու կին, մեկը մյուսին պետք է լրացնի՞, թե՞ խանգարի։ Սմբատը մայր չունի դժբախտաբար, և ինքն այդ փաստը կյանքով ստուգել չի կարող։

— Իսկ որտե՞ղ է Հրանտ Արշակովիչի մայրը, կարո՞ղ եմ նրան տեսնել։

— Խնդրեմ, նա պառկած է կողքի սենյակում, եկեք։

Անցան ննջարան։ Անկողնում պառկած էր բոլորովին սպիտակահեր մի տատիկ, ի՞նչ էլ համակրելի դիմագծեր ունի։ Երևում է, որ ջահել ժամանակ սիրուն է եղել։ Հիմա էլ լավն է, լավ մայրիկ, լավ տատիկ։

— Բարև ձեզ, Լուսիկ մայրիկ։

— Աղջիկ ջան, իմ անունը որտեղի՞ց գիտես։

— Առիթ է եղել, Հրանտ Արշակովիչն է ասել, մեր գլխավոր ինժեներն է, այսիքն՝ ես նրա գործարանում եմ աշխատում, ես էլ, ամուսինս էլ, վարպետ Սմբատն է։

— Էն, որի հետ միասին գործուղո՞ւմ են գնացել։ Լավ է, աղջիկ ջան, Հրանտս շատ է հավանում քո Սմբատին, բախտավոր լինեք։

— Շնորհակալ եմ, մայրիկ,— Թամարն իր հուզմունքը թաքցնել չէր կարողանում,— իսկ ինչո՞ւ եք հիվանդացել։

— Ոչինչ, աղջիկ ջան, կանցնի։ Դե, արդեն ջահել չեմ... էդ օրորոցում քնած բալիկն էլ մեր Արշակն է։

— Կարելի՞ է... Թամարն զգույշ ետ քաշեց երեխայի դեմքը ծածկող շորն ու երկար նայում էր հանգիստ քնած մանկանը։ Այնուամենայնիվ հոր նման չէ,— անցավ մտքով... իսկ մի՞թե դա պարտադիր է։ Տեսնես ինքը որ երեխա ունենա, Սմբատի նման կլինի՞... Հիմար բաներ ես մտածում, փոխանակ մի խելոք բան ասես։

— Լավն է, տատս կասեր՝ թող աստված պինդ պահի։ Մի երկու խաղալիք եմ բերել, լավ բան չճարեցի։

— Ինչի՞ համար է այդ նեղությունը, շնորհակալ ենք... Դուք մայրիկի հետ զրույց արեք, ես սուրճ պատրաստեմ։

— Նվարդ ջան, ինձ էլ թեյ կտաս։

Մնացին երկուսով. Թամարն ու Լուսիկ մայրիկը, քնած երեխան դեռ հաշվի մեջ չէր զրույցին մասնակցելու իմաստով։

— Հինգ տարի հետո վերջապես երեխայի տեր դարձանք,— Լուսիկ մայրիկն ասես ինքն իրեն էր խոսում։

— Գիտեմ, մայրիկ, ընկեր Ստեփանյանը պատմել է մի առիթով։— Ու անմիջապես, ինչպես ասում են՝ լեզուն կծեց, ախր Հրանտը նրան բան չի ասել, որքան հիշում է՝ Աշխենից է լսել։

— Հրանտը պատմե՞լ է, ի՞նչ է պատմել,— Լուսիկ մայրիկը շատ էր զարմացած, ի՞նչ է, ամբողջ գործարա՞նը գիտի...

— Գիտեմ, որ երկար ժամանակ... Հետո, վերջապես... դե, ոչինչ, մայրիկ, ինչպես ասում են՝ երբեք ուշ չէ, թող առողջ մեծանա։

— Մեր տանը հիմա կարող էր ուրիշ երեխա լինել. անպիտան մայրը խոստացավ, հետո էլ առավ ու փախավ...

Հիմա էլ տիկին Լուսիկն էր իր վրա զարմացել, ինչի՞ համար է էս անծանոթ աղջկա մոտ սիրտը բացում. Հրանտի մոտ է աշխատում, դրա՞ համար, թե՞ միանգամից դուր եկավ իրեն։ Հրանտն այնպիսի գովեստով էր խոսում սրա տանը կազմակերպված քեֆի մասին, բա վատ մարդու տանը համով հաց կուտվի՞...

Թամարի ուղեղում մեխվեց Լուսիկ մայրիկի վերջին խոսքը «խոստացավ, հետո էլ առավ ու փախավ»... Ինչո՞ւ հանկարծ Աշխենին հիշեց. նա ի՞նչ գործ ունի այստեղ...

— Ինչպե՞ս թե առավ ու փախավ, մայրիկ,— մեխանիկորեն հարցրեց, մանրամասնությունների մեջ մտնելու նպատակ չուներ, չնայած «առավ, փախավ»-ը շատ էր նման իր Աշխենին...

— Հա, լավ աղջիկ էր, լավ էլ երեխա էր, արդեն պիտի տուն բերեինք, մեկ էլ իմացանք, որ երեխային վերցրել-

փախել է... Ասում են ամուսնու մոտ է գնացել... Թե էդ ամուսինը կար, ինչո՞ւ երեխան խոստացել էր մեզ. էդպես էլ բան չհասկացանք։ Դե, ոչինչ, գուցե լավն այդ էր։ Հիմա, փառք աստծո...

Թամարի շունչը կտրվում էր։

— Մայրիկ, շատ կներեք ինձ, ի՞նչ էր էդ աղջկա անունը։

— Ինչ է, կարող է ճանաչե՞ս.— Լուսիկ մայրիկը մի կասկածամիտ հայացքով չափեց Թամարին, և ասես ստուգելու համար, նետեց անփույթ,— Աշխեն էր անունը։

Թամարն իր ճիչը թաքցնել չկարողացավ, այս ի՞նչ հանելուկ է...

— Չլինի՞ ճանաչում ես էդ աղջկան։

— Եթե նա է, ուրեմն մեր գործարանի աղջիկներից էր. սիրուն, փարթամ մազերով։

— Հենց դա է, որ կա... Ասում ես ձեր գործարանի՞ց էր. բա Հրանտն ինչի՞ ինձ բան...

Տիրեց մի ճնշող լռություն։ Խոսակիցներից յուրաքանչյուրն իր մտքերի հետ էր։

Լուսիկ մայրիկը Հրանտի գաղտնապահությունը հասկանալ չէր կարողանում. եթե իրենց գործարանից էր, անպայման ինքը ճանաչում էր, բա ինչի՞ էր թաքցնում, ավելի լավ չէ՞ր ասեր, իմանայինք ով է, ինչացու է։ Տեսնես Գարեգի՞ն ինչ գիտեր նրա մասին. նա էլ ինչ-որ բան էր թաքցնում, աստված վկա, էս ինչ տեսակ մարդիկ են, որի՞ն հավատաս...

Թամարը դատապարտում էր և՛ Աշխենին, և՛ Հրանտ Ստեփանյանին։ Իբր թե մոտ մարդիկ են, մի՞թե ինձ չէին վստահում։ Աշխենը չի ասել, որ երեխային Հրանտն է վերցնում, ինչո՞ւ, որ ասեր, ի՞նչ վատ կլիներ... Հետո, իսկապես, ինչո՞ւ փախցրեց. կիրակի օր, անսպասելի մեկնում. ումի՞ց էր փախչում... Հանկարծ հիշեց Աշխենի վերջին նամակի հանձնումը Ստեփանյանին։ Ինչպե՞ս հուզվեց, երևի նաև գունատվեց, ափսոս, որ լավ չի հիշում։ Իսկ Աշխենի երեխայի նմանությունը Հրանտի՞ն... Այս ինչ առեղծված է, ինչպե՞ս կարելի է սրանից գլուխ հանել... Եվ ինչո՞ւ Աշխենը հրաժարվեց նամակ գրելուց, ու չի գրում, ոչ մեկին։ Երկու օր առաջ նրա մորաքրոջ մոտ գնաց, նա էլ տեղեկություն

չունի։ Դուրս է գալիս, որ հետքերը Երևանից թաքցնել է ուզում, իսկ ասում էր՝ այդ երեխայի հայրն ուրիշ տեղ է... Այս ի՞նչ անհավատ աշխարհ է, ոչ մեկին վստահել չես կարող։ Ախր ինքը հավատում է երկուսին էլ՝ և՛ Աշխենին, և՛ Հրանտին, բայց թե որտեղ է թաղված շան գլուխը, գլուխ հանել չի կարողանում...

Ներս մտավ տիկին Նվարդը՝ թեյի ու սուրճի սկուտեղը ձեռքին։

60.

Հիմա տուն են գալիս ինքնաթիռով։ Շտապում են։ Նվարդը բերանից թռցրեց մոր հիվանդության մասին, երևի մի լուրջ բան կա, թե չէ չէր ասի։ Իսկ ի՞նչ է պատահել։ Դե, մեծ կին է, ինչպես ինքն է ասում՝ պատրաստի խմորին՝ մի գդալ ջուր... Իսկ ինչքա՞ն մեծ է որ, դեռ յոթանասուն էլ չկա, և ընդհանրապես առողջ կին է, միայն վերջերս ինչ-որ կոտրվել է... Կարող է երեխա՞ն է հիվանդ, Նվարդը դիտմամբ... Դժվար թե։ Հիվանդ լիներ, կասեր։ Իսկ ո՞րն է լավ, մո՞ր, թե երեխայի հիվանդությունը։ Հիմար հարցեր են ծընվում քո ուղեղում. ինչ համեմատելու, հակադրելու բան են։ Բայց անկեղծորեն կարոտել է բոլորին էլ, մորն ու Նվարդին, նաև՝ այդ մի մատ երեխային։ Ինչ լավ արեցին, որ անունն Արշակ դրեցին։ Շնորհակալ է Նվարդից, որ համաձայնվեց, չպնդեց անվան ընտրության վրա։ Մայրն ասում էր, որ այդ հարցում իր դրական դերն է խաղացել նաև մորաքույր Սըրբուհին։ Վատ չէ։ Բայց միևնույն է, նրա անկեղծությանն այլևս չի հավատում։ Նա նորից մնում է իր նահապետական տեսակետի վրա։ Դե, երևի ուրիշ կերպ էլ լինել չէր կարող։ Այստեղ, այո, ուսանելի բաներ շատ տեսան և՛ Կույբիշևում, և՛ Սարատովում։ Նրանց մոտ առանձնապես բարձր էր արտադրության կազմակերպման կուլտուրան, աշխատանքային կարգապահությունը։

Արտադրանքի որակն էլ բարձր է։ Լավ է, որ սրանց մոտ դժվարություններ չկան մատակարարման հարցերում, խափանումներ չեն լինում։ Եվ մի՞թե հնարավոր չէ այդ բանին հասնել ամբողջ երկրի մասշտաբով, ախր դրանից այնքան

կշահի ընդհանուր գործը... Այո, շատ բան տեսան ու սովորեցին։ Կգնան Երևան, կհավաքեն գործարանում ում պետք է, կպատմեն, կպահանջեն։ Բա ինչպես, եթե գնալ-տեսնելը որևէ արդյունք չպիտի տա, էլ ծախսն ու շարշարանքն ինչի՞ համար են։ Գոհ են նաև Բաբկենն ու Սմբատը, հյուրանոցում մտքեր են փոխանակել. ոչ միայն գոհ, նաև ոգևորված են. «կտեսնեք, թե ինչքան լավ բաներ կանենք մեզ մոտ»,— ասում էր արտադրամասի պետ Բաբկեն Սիմոնյանը։

«Ախր մենք ինչո՞վ ենք է պակաս նրանցից, ինչո՞ւ պետք է մեզ մոտ գործերն ավելի լավ չլինեն»,— լրացնում է վարպետ Սմբատ Ոսկանյանը։ Այս բոլորը լավ, միայն վատ է, որ ինքը տանը հիվանդ ունի։ Այս ինքնաթիռն էլ այնքան երկար է թռչում... Լավ չէ նաև այն, որ այսօր ստիպված եղավ բավական շոր խոսել Սմբատի հետ։ Պատահաբար իմացավ, որ այս երկու շաբաթվա ընթացքում ոչ մի լուր չի ուղարկել տուն, ոչ հեռագիր, ոչ նամակ, ոչ հեռախոսային զանգ։ Եվ զարմանալին նրա պատճառաբանությունն է. «Դե, հո երեխաներ չենք, տաս օրվա համար ի՞նչ անհանգստություն»... Ստիպված ճառ կարդաց նրա գլխին, չնայած շան լափ թափելն ավելի ճիշտ կլիներ... Իսկ Աշխենը՞, երեխա՞ն։ Դժբախտաբար ոչ մի լուր։ Փողոցները չափչփում էր՝ չտեսի նման անց ու դարձողներին մի լավ տնտղելով։ Հանդիպումը տեղի չունեցավ։ Կամ այդ քաղաքներում չեն, կամ, ի՞նչ իմանաս, պատահական հանդիպման վրա հույս դնել կարելի՞ է... ոչ, իր բախտը եղել և մնում է Երևանում, իրենը Նվարդն ու Արշակն են։ Այո, բավական է դու դռնե-դուռ ընկնես։ Վերջապես, ինչպես հանգուցյալ հայրը կասեր՝ «Նամուսն էլ լավ բան է. տղամարդու խոսքն էլ մեկ կլինի, կինն էլ, աննամուս, աչքը տրա-նրա վրա գցող մարդն ինչի ա պետք»... Բայց մի՞թե ինքը... իսկ ի՞նչ է ինքը, աստծո անմեղ գա՞ռ...

Հոր հետ մի անգամ գյուղ էին գնում Սրբոսի մորաքրոջ տունը։ Ինքը հաղիվ տաս-տասներկու տարեկան լիներ, բայց այնպես լավ է հիշում հոր զրույցը մի ծանոթ գյուղացու հետ։ Ինչ-որ մեկի մասին էին խոսում, որին ինքը չէր ճանաչում։ «Պատկերացնո՞ւմ ես, ասում էր հայրը, էդ աննամուսը երկու տեղ կնիկ ունի, ու երկուսից էլ՝ երեխաներ. բա

դրա նամուսը որ շանը տաս, կուտի՞...» Ուրեմն նրա մոտ շունն ավելի նամուսով է, աննամուս բանը չի ուտում, իսկ մարդը, և՛ կանի աննամուսություն, և՛ կուտի առանց քաշվելու... Մեկ-մեկ ինչո՞ւ մարդու մտքով այսքան սարսափելի բաներ են անցնում, և ինչո՞ւ այդ խելոք մտքերը հաճախ գալիս են հանցանքը կատարելուց հետո միայն...

61.

Ինքնաթիռը Երևան հասավ հինգ ժամ ուշացումով, ավելի ճիշտ, այդ ուշացումն արդեն տեղի էր ունեցել Մոսկվայում, ուշ թռան։ Այ, սա բանի նման չէ. լավ եղանակին գոնե ինքնաթիռի ուշացում չպետք է լինի, թե չէ այս հրաշալի փոխադրամիջոցը երբեմն դառնում է տանջանքի ու փորձության պատճառ։ Հիշում է, երկու տարի առաջ Նվարդի հետ Մինեռալնիե Վոդի պիտի թռչեին՝ Կիսլովոդսկում հանգստանալ էին ուզում։ Եվ մի ժամ տաս որպես թռչելու համար Երևանի օդանավակայանում սպասեցին ութ ժամ։ Ասացին ինքնաթիռը չի վերադարձել, իսկ գործը լավ կազմակերպելու դեպքում տես ինչքան ներվեր ու ժամանակ կարելի է խնայել...

Գիշերվա ժամը երկուսին միայն Հրանտը կարողացավ տուն հասնել։ Մեքենա չէր կանչել, ավտոբուս չկար, մասնավոր մեքենա՝ ինչքան ուզես։ Սա էլ բանի նման չէ... ինչ որ է, տուն հասավ, ու զանգի կոճակը սեղմել չի կարողանում։ Անհանգիստ էր ամբողջ ճանապարհին, ժամ առաջ տուն հասնել էր ուզում, իսկ հիմա վախենում է ներս մտնել. մի՞թե իսկապես լուրջ հիվանդ կա տանը։ Հանկարծ մայրը լավ չէ, կամ Արշակն է մրսել, թոքերի բորբոքում ստացել... իսկ ինչո՞ւ Նվարդի մասին չես մտածում, գուցե նա է հիվանդ։ Բայց նա երեք օր առաջ է իր հետ խոսել...

Անհանգիստ սեղմեց զանգի կոճակը, ու զանգը հնչեց երկարաձգումներով։ Դռան ետևից լսվեց Նվարդի անհանգիստ ձայնը,— Հրանտ, դո՞ւ ես։

— Ես եմ, Նվարդ, ինչպե՞ս է մայրիկը։

— Լավ է, ոչինչ,— ու դռների մեջ հասցրեց համբուրել

Հրանտի այտը.— մայրիկի ասած՝ քոռանա՞մ ես, անհանգստացրել եմ...

— Դե՛, ոչինչ, ուրեմն փառք աստծո, իսկ իմ մտքով շատ տխուր բաներ են անցել... Երեխա՞ն ինչպես է։

— Լավ է։ Մի տես ինչքան անուշ է քնում։

Հրանտը, գիշերային աղոտ լույսի տակ, նայեց Արշակի խաղաղ դեմքին ու մի անբացատրելի խանդաղատանք զգաց նրա նկատմամբ։ Կուզենար համբուրել երեխայի այտը, գոնե վերմակից դուրս թողած թաթիկը, բայց ոչիսկ չարեց։ Ախր ինչո՞ւ...

Շտապ անցավ մոր սենյակը։

— Եկա՞ր, Հրանտ ջան, ես քո եկած ճամփին մատաղ...

Կռացավ, համբուրեց մոր այտերը, մի պահ գլուխը թաղեց նրա ծնոտի տակ, կրծքի մոտ, շնչեց մոր այնքան հարազատ բուրմունքը, ու հոգնած նստեց կողքին։

— Էս ինչո՞ւ ես հիվանդացել, այ մեր։ Հենց իմ տնից դուրս գալո՞ւն էիր սպասում։

— Իմ սպասելով կամ իմ ուզելով չէ, Հրանտ ջան, էդպես եղավ։ Բա ես կուզենա՞մ հիվանդանալ, խեղճ Նվարդս մենակ տանջվում է։

— Ոչինչ, մայրիկ, ինչ տանջանք։ Դե, դու էլ արդեն լավ ես, էսօր, տաքություն չունես, հազդ պակասել է։ Տղադ էլ որ եկավ, բոլորովին առողջ մարդ ես...

— Ճիշտ ես ասում, աղջիկ ջան, էլ ինչ հիվանդ։ Առավոտը վեր եմ կենում Հրանտիս համար մի լավ տոլմա պատրաստեմ, կարոտած կլինի։

— Համաձայն եմ, մայրիկ։ Քեզ համար մի լավ շորացու եմ բերել, եթե չկարեցիր ու չհագար, շատ կնեղանամ։

— Է՛, Հրանտ ջան, շորն ի՞նչ եմ անում. իբր թե եղածը շատ եմ հագնում։

— Նվարդ, բաց արա ճամպրուկը, տես ինչ կա մեջը։ Ինձ թվում է, թե ամենալավ բաները երեխայի համար եմ բերել։

— Եվ շատ լավ ես արել։ Բա ինչպե՞ս... Հո Նվարդիս չե՞ս մոռացել, Հրանտ։

— Չէ՛, մայրիկ, դեռ էդքան անշնորհք չեմ...

— Դե, լավ է։ Մի բան կեր, պառկեք հանգստանալու, ուշ է արդեն։

...Հիմա տունը խաղաղվել է։ Մայրն ու երեխան քնած են։ Իսկ ինքն ու Նվարդը խոհանոցում նստել են կողք-կողքի, զրուցում են ցածրաձայն։ Նվարդը գիշերային շորի վրայից խալաթ է հագել, ու հիմա ամեն մի թեթև շարժումից բացվում է կուրծքը կամ ծունկը ու Հրանտին ներկայանում է նախկին Նվարդը իր բոլոր հրապույրներով։ Գրողը տանի տղամարդուն, անպայման պետք է տեսնես մարմինը, որ կարոտի զգացումը թափվի ափերից... վրա պրծավ ու խելագարի նման համբուրում է կնոջ այտերը, շրթունքները, թևերը... Այնպես հաճելի է Նվարդի համար, վաղուց Հրանտը նրան այդպես չի սիրել. կարոտի այս ի՞նչ խելառ պոռթկում է...

Գրկեց կնոջը, տարավ ննջարան, պառկեցրեց անկողնում, խալաթը մի կողմ շպրտեց ու խենթի նման նայում էր նրա կիսամերկ մարմնին։

— Պետք չէ, Հրանտ... ի՞նչ է, դու ինձ առաջին անգա՞մն ես տեսնում...

— Վաղուց քեզ չեմ տեսել, Նվարդ, շա՜տ վաղուց. կնեբես, գուցե կուրացել էի...

Գիշերը նրանց ականջին քաղցր հեքիաթ էր պատմում...

62.

Գործարանում հավաքվեցին մի բազմամարդ ժողովի։ Տեղամասերի պետերն էին, վարպետները, ենթավարպետները, ինժեներներից շատերը, գրասենյակից մի քանի հոգի։ Զարմանալին այն էր, որ այդ հանդիպմանը մասնակցելու ցանկություն էր հայտնել նաև մինիստրի տեղակալ Գեղամ Սարգսյանը։ Իսկ ինչո՞ւ էր զարմանալի. քանի տարի ղեկավարել է այդ գործարանի աշխատանքները, հիմա էլ մինիստրության մասշտաբով է գլխավորում այդ գործը, ուզում է իմանալ ինչն ինչոց է։ Գործարանի դիրեկտորի հետ նստել են նախագահությունում, իսկ գործուղումից վերադարձած ընկերները հերթով պատմում են իրենց տեսածի ու լսածի մասին։

Հրանտ Ստեփանյանի ելույթը բավական ընդարձակ ստացվեց, չնայած ինքը երկար խոսելու մտադրություն չու-

ներ։ Նա ավելի շատ պատմեց համագործարանային հարցերի մասին. աշխատանքային կարգապահություն, արտադրողականության բարձրացում, ինքնարժեքի իջեցում, հաստիքային ցուցակի ճիշտ կազմում ու խելոք օգտագործում։ Պատմեց նաև, որ իրենք էլ, ինչպես ասում են, դատարկաձեռն չէին գնացել. իրենց փորձի որոշ հաղորդումով ու նոր առաջարկություններով օգտակար ու շնորհակալ գործ են կատարել Կույբիշևում ու Սարատովում։ Ասաց, որ եկող տարի այդ գործարաններից իրենց մոտ հյուրեր են գալու, նույն նպատակով։ Մի խոսքով լավ հեռանկար կա մեր և նրանց գործարանների միջև գործնական ու բարի դրացիական կապեր հաստատելու։

Հետաքրքիր էին նաև մյուս ընկերների ելույթները։ Մանավանդ տպավորիչ էր վարպետ Սմբատի խոսքը. կոնկրետ, գործնական։ Հրանտ Ստեփանյանը հաճելի զարմացած էր։ Իսկապես՝ հետաքրքիր է. երեք մարդ, նույն գործարանում, համարյա տարբեր բաներ են տեսել, միայն ոչ թե մեկը մյուսին հակասող, այլ՝ լրացնող։

— Մենք նրանց լավ բաներ ենք պատմել մեր աշխատանքի, մեր հաջողությունների մասին,— ասում էր վարպետ Սմբատը,— Եվ կուզենայի, որ եկող տարի նրանք գային, ավելի շատ լավ բաներ տեսնեին։ Ամեն մի մրցության մեջ, իմ կարծիքով հիմնականը սա է, մեկը մյուսից լավ, մեկը մյուսից հաջող։

— Ճիշտ է, վարպետ Սմբատ,— մինիստրի տեղակալ Գեղամ Հմայակովիչն էր,— խելոք ես ասում։— Հետո կատակի տվեց։— Այ տղա, ոնց որ ամուսնանալուց հետո ավելի ես խելոքացել...

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ։

— Գեղամ Հմայակովիչ,— խոսքի տակ չմնաց Սմբատը,— իմ կարծիքով ամուսնության մեջ էլ մրցման գաղափարը պիտի լինի, ամուսինները պետք է իրարից լավ բան սովորեն, իրար լրացնեն, ընտանիքի ամրությունը դրանով է պայմանավորված։

— Ապրես, Սմբատ, խելոք ես դատում։

Թամարը տեղում հանգիստ նստել չէր կարողանում, տեսնո՞ւմ ես իր Սմբատն ինչպես է խոսում մինիստրի տեղակա-

լի հետ, խոսքի տակ էլ չի մնում... Չէ, կարելի է նկերել նրա անշնորհքությունը տունը լուր չտալու հարցում, մանավանդ, որ ընդունեց իր սխալը, ասաց, որ Ստեփանյանն էլ է դիտողություն արել և խոստացավ այլևս... Իսկ նա որ խոստացավ, կարող ես համոզված լինել, որ իր խոսքի տերը կլինի։

Վերջում խոսեց Գեղամ Սարգսյանը, չխոսեց, ինչպես ինքն էր ասում՝ մի խոսք, մի խնդրանք, մի հանձնարարություն։

— Ինձ մոտ վաղուց ցանկություն կար Կույբիշև գնալու, լսել էի, որ նրանց մոտ լավ բաներ շատ կան։ Բայց չհաջողվեց, ժամանակ չեղավ։ Հիմա լավ է, ընկերները գնացել են, ու մեզ պատմեցին իրենց տեսածների մասին։ Խելոք բաներ ասացին, տիրոջ աչքով են նայել, շատ բան են նկատել։ Ես գոհ եմ և շնորհակալություն եմ հայտնում այս օգտակար խոսակցության համար։ Եվ խնդրում եմ, Հրանտ Արշակովիչ, խոսքս առաջին հերթին ձեզ է վերաբերում, կազմել մանրամասն զեկուցագիր՝ անհրաժեշտ առաջարկություններով։ Ես ուզում եմ այդ փորձը տարածել մեր սիստեմի բոլոր գործարաններում։ Հնարավոր է, որ մի երկու-երեք տեղ էլ կազմակերպենք ընկերների ելույթները, դա կօգնի մեր ընդհանուր գործին։ Այսպես պետք է լինի, ընկերներ, գնալը, տեսնելը պետք է գործին օգնի մի բանով, թե չէ հաճախ տուրիստի նման ենք գնում։

Դիրեկտորի առանձնասենյակում մենակ մնացին երեքով, Գեղամ Հմայակովիչը, Սուրեն Մարտիրոսովիչն ու ինքը՝ Հրանտ Ստեփանյանը։ Դիրեկտորն ավելի շատ հեռախոսային խոսակցությամբ էր զբաղված, զրուցում էին Հրանտն ու Գեղամ Հմայակովիչը։

— Ուրիշ ի՞նչ կա, Հրանտ, տա՞նն ինչպես են, լսեցի, որ մայրդ հիվանդացել էր, բարևիր, խնդրում եմ։

— Հիմա լավ է, շնորհակալ եմ։ Ամեն ինչ կարգին է։

Հրանտը գիտի, թե Գեղամ Հմայակովիչն ինչ է ակնարկում, բայց խուսափում էր բաց պատասխաններից։ Ախր Սուրեն Մարտիրոսովիչը ոչինչ չգիտի, ինքը նրան չի պատմել, բան չի ասել։ Իսկ ինչո՞ւ չես ասել, քո դիրեկտորն է,

քո մեծ ընկերը, մի՞թե չես վստահում... Ոչ, իհարկե, պարզապես բոլորի մոտ չէ, որ կարող ես սիրտդ բացել։

— Կնճռոտ հարցեր կա՞ն նորից.— Գեղամ Հմայակովիչն էլ փակ է խոսում, երևի մտածում է, թե դիրեկտորը կուրսի մեջ չէ. գուցե Հրանտը նրան ոչինչ չի ասել, ինչո՞ւ մասսայականացնել։

— Համարյա լուծվում են, կարելի է ասել՝ բան չի մնացել։ Միայն որոնելու, գտնելու ձգտումը դեռ մնում է, և երևի...

— Հավանաբար դա կուղեկցի քեզ քո ամբողջ կյանքում... Այդ ոչինչ, աշխատիր հարթել սուր անկյունները...

Դե, արի ու մի զարմացիր։ Ընդհանրապես սուր անկյունները հարթեցնողին լիբերալ ու օպորտունիստ են կոչում, իսկ այսպիսի հարցերում ճշմարիտն այդ է համարվում։ Նույնիսկ Գեղամ Հմայակովիչի նման մի խիստ սկզբունքային մարդ նույն խորհուրդն է տալիս, հարթել, սվաղել, կոծկել... ծանր պարտականություն է, բայց երևի, պետք է, ուրեմն՝ նաև անհրաժեշտ։

Գեղամ Հմայակովիչն արդեն գնացել է։ Իր աշխատասենյակում է Հրանտը, բայց նրան հանգիստ չի տալիս սուր անկյունները հարթեցնելու պարտադիր պահանջը։ Եվ ճիշտ ասաց իր ավագ ընկերը՝ փնտրելու ձգտումը երևի կմնա ամբողջ կյանքում։ Իսկ օգո՞ւտն ինչ։ Գուցե և ոչինչ։ Միևնույն է, չփնտրել չես կարող, այդ հույսը քո մեջ սպանել անկարող ես գուցե և՝ պետք չէ... Երեկ ընդմիջմանը տուն վազեց, դեղ տարավ մոր համար։ Նվարդը երեխային դուրս էր բերել մաքուր օդի։

— Հրանտ, էն Աշխենից նոր խաբար չունե՞ս,— հանկարծ հարցրեց մայրը,— ո՞ւր գնաց, ի՞նչ եղավ։

— Ես ի՞նչ իմանամ, այ մեր, ինձ ասա՞ց թե ուր է գնում...

— Իսկ դու նրան ճանաչո՞ւմ էիր։

Այս ի՞նչ է, միամիտ հա՞րց է, թե՞ լուրջ հարցաքննություն է սպասվում։ Պատասխանն ուշացավ, և՛ մորը սուտ ասել չի կարող, և՛ ճշմարտությունից խուսափելն անհրաժեշտ է։ Ծամծմեց, անորոշ ու անդեմ պատասխանեց։

— Տղա ջան, ես չգիտեի, որ ինձնից էլ բան թաքցնելու

շնորհք ունես։ Բանից դուրս է գալիս, որ էդ Աշխենը ձեր գործարանի աղջիկներից է։ Էլ ո՞նց չգիտես, թե ո՞ւմ երեխան էր և ո՞ւր տարան։

Հրանտը շատ էր զարմացած, այս տեղեկությունն ո՞վ է տվել մորը։ Բայց նաև ծիծաղը զսպել չէր կարող, կարծում է, որ նույն գործարանում են, ուրեմն ամեն ինչ պետք է իմանա։

— Այ մեր, մեր գործարանում գիտե՞ս քանի հազար մարդ է աշխատում, ես ի՞նչ իմանամ ով ինչ գալաթ է անում։

— Իսկ դու իմացիր, բա ի՞նչ ղեկավար ես...

Է, իմ խեղճ ու միամիտ մայր։ Բայց և այնպես հետաքրքրիր է, թե մայրն ինչպե՞ս է իմացել, որ Աշխենն իրենց մոտ էր աշխատում։ Ու միևնույն է, նրա մտքով չի անցնում այդ գործում իր տղայի մատը խառը տեսնելու, այնքան համոզված է իր Հրանտի մաքրության մեջ... Աստված չանի նա իմանա ամբողջ ճշմարտությունը, ում-ում, բայց մորը հիասթափեցնել չէր ուզենա, այդ շատ ծանր կլիներ նրա համար, վախենում է, թե ինքն էլ չի դիմանա այդ հարվածին... «Վախկոտ»,— կնեներ Աշխենը, և ճիշտ կաներ...

Իսկ Սենոն այսօր նորից զանգահարեց ու սկսեց իր հին երգը երգել։

— Մի լավ տեղ կա, երեկոյան արի գնանք։

— Էդ ի՞նչ տեղ է, տպարանի Սենո։

— Միամիտ հարցեր չեն տալիս, ընկեր գլխավոր, թե խելք ունես, արի ինձ հետ, և դու կտեսնես, թե քո ընկերը ինչ ճաշակ ունեցող տղա է։ Խելք հավաքիր, բավական է դու փակվես ճգնավորի քո խցում։ Էս անտեր կյանքը մարդուս մի անգամ է տրվում, հասկացիր, ընդամենը մի անգամ։

— Մի անգամն էլ բավական է մարդավարի ապրելու համար։

— Հրանտ, դու նորի՞ց սկսեցիր քո անհամ ճառերը. դեռ չե՞ս համոզվել դրանց դատարկության մեջ, ափսոս։

— Սենեքերիմ, ոչ համոզվել եմ, ոչ քեզ համոզել եմ վարողանում, այս է վատը, այդ հարցում մենք մի հավատի չեկանք... Գործե՞ր դրդ ինչպես են. թուղթ ստացա՞ր։

— Քիչ-միչ ստանում ենք. մարդ եմ ուղարկել Կրաս-

նոյդարակ, կոնյակով, բանով, տեսնենք կօգնի՞... Ուրեմն հույսս կտրե՞մ քեզնից։

— Հա, ինձնից ձեռք քաշիր։ Ես խղճիս դեմ ըմբոստանալ չեմ ուզում։

— Հրանտ ջան, չնեղանաս, մնացել ես նույն միամիտը։ Այ տղա, էդ խելքով դու ո՞նց ես գլխավորի պաշտոն վարում...

Գուցե իրավացին Սենոն է, ի՞նչ գլխավոր, երբ մի գլուխ կարդին գլխավորել չի կարողանում...

63.

Ընդմիջման ժամ էր։ Հրանտը խմել էր Ամալյայի տված մի բաժակ թեյը ու օրվա թերթերն էր նայում։ Թեյի հետ նաև մի կտոր խմորեղեն կար, բայց չկերավ. չէր սիրում։ Ամալյան սրտնեղեց. ախր իր պատրաստածն է, մի՞թե այդքան վատն է, մոր համար պիտի տաներ, մի երկու կտոր էլ բերել է հիմնարկ։ Ստիպված էր զիջել աղջկան.

— Թող մնա, Ամալյա, հետո կուտեմ։ Իսկ մայրդ, ասում ես, լա՞վ է։

— Ինքը մեկ-մեկ էլի ցավեր ունի, իսկ բժշկի ասելով՝ շատ լավ է։ Էս երկու օրը տուն կտանենք։

— Մեր մեքենայով կտանես, ես արդեն Հայկազին ասել եմ։

— Շնորհակալություն, Հրանտ Արշակովիչ, եղբորս ընկերը մեքենա ունի, արդեն խոստացել է...

Թերթերում էլ կարդալու բան չկա։ Շատ են իրար նմանը, այս է վատը։ Իսկ այս ի՞նչ հոդված է բարոյախոսական թեմայով,— «Մի ընտանիք ևս փրկվեց»։ Հետաքրքիր է, ինչպե՞ս են փրկել...

Ներս մտավ Թամարը։

— Կարելի՞ է, Հրանտ Արշակովիչ։

Անմիջապես նկատեց աղջկա անտրամադիր լինելը։

— Թամար, հո վատ բան չի՞ պատահել, աչքիս մի տեսակ ես երևում։

— Չի պատահել, բայց կարող է պատահել...

— Նստիր, պատմիր տեսնենք։

— Նախ ասեմ, Հրանտ Արշակովիչ, որ ես բախտ ունեցա ձեր կնոջ հետ ծանոթանալու. լավն է, ուրախ եմ։

— Իսկ որտե՞ղ հանդիպեցիք։

— Ձեր տանը... Որ գնացել էիք գործուղման, Սմբատից տեղեկություն չունեի, գնացի մի լուր ստանալու հույսով... Ձեր մայրն էլ լավ կին է, շատ համակրելի։ Հիվանդ էր, ինչպե՞ս է հիմա։

— Լավ է, արդեն ապաքինվել է... իսկ մտքում նորից հարց ու պատասխանի շփոթ է ստացվել.— մի՞թե Թամարն է մորս ասել Աշխենի մասին, իսկ ի՞նչ առիթով, ինչպե՞ս կարող էր այդպիսի խոսակցություն ծագել...

— Դու չասացիր քեզ հուզող հարցի մասին. ի՞նչ է պատահել։

Թամարի շրթունքներին ասես փակ դրեցին։ Ինչպիսի՜ երկընտրանքից հետո է եկել Ստեփանյանի մոտ ու հիմա նորից դժվարանում է։ Նույնիսկ փոշմանեց, որ եկել է, բայց արդեն ուշ էր, նահանջի ճանապարհ չկար այլևս։ Գուցե և լավ է, որ չկա, եթե չասի, խեղդվել կարող է...

Ու շուտասելուկի նման վրա տվեց.

— Հրանտ Արշակովիչ, եթե Սմբատից բողոքեմ, ինձ շա՞տ կդատապարտեք։

— Գուցե և չդատապարտեմ, բայց, չեմ թաքցնում, շատ կզարմանամ։

— Սմբատը շատ է կոպիտ ու իր ասածի։ Եվ դա նորություն չէ ինձ համար, ես մինչև ամուսնանալը գիտեի այդ, բայց հույս ունեի, թե կփոխվի, թե կկարողանամ ազդել նրա վրա։ Բան չի ստացվում, ինձ հետ բոլորովին հաշվի չի նստում, կինն, ասում է, տանը վճռական ձայն չունի, իբր թե կատակով է ասում, բայց, իրականում... Կներեք, Հրանտ Արշակովիչ, ես ձեզ դիմում եմ քրոջ իրավունքով, եթե, իհարկե, այդ իրավունքը դուք ինձ տաք...

— Շնորհակալ եմ վստահության համար, Թամար։ Բայց ճիշտն ասած, ես չէի սպասում։

— Ես վախենում եմ խորանա, հետո ավելի դժվար կլինի։ Եթե կարող եք, ազդեք նրա վրա, նա ձեզ լսում է։ Միայն, խնդրում եմ, նա չիմանա մեր այս խոսակցության մասին, թե չէ, թարսի մեկն է...

— Հասկանում եմ, Թամար, ես կխոսեմ նրա հետ։ Միայն պայմանավորվենք այսպես. դու տոն չես տալիս նրա կոպտություններին, ոչ մի բողոքի ցույց, նրա տված առիթների ոչ մի շարաշահում։ Դու հիմա գնա...

Իր ասածի, մի քիչ էլ ինքնահավան տղա է Սմբատը, կան այդպիսի բնավորություններ, դրանց տամարը պիտի կարողանաս բռնել։ Ու հանկարծ Հրանտը ժպտաց քթի տակ. հիշեց անեկդոտանման մի պատմություն, որ լսել էր հորից։ Փնթփնթան և ամեն ինչից դժգոհ ամուսինը չի հավանում կնոջ եփած ճաշերը, մի օր աղն է պակաս, մի օր՝ աղի է, տոլմա է եփել, «ես փլավ կուզենայի», սպաս կա տանը, «ինչո՞ւ բորշչ չես եփել...» Կինը համբերատար տանում է այդ բոլորը, ամեն կերպ աշխատում կատարել ամուսնու պահանջները։ Մի օր էլ պատրաստում է մի հինգ-վեց տեսակ ճաշ, ու սպասում է ամուսնուն։ Նրա ներս մտնելու պահին տան անպիտան շնիկը կեղտոտում է խոհանոցի սեղանի տակ։ Կինը չի հասցնում մաքրել, մի ափսեով ծածկում է, որ ամուսինը չտեսնի։ Նորից նույն փնթփնթոցը.— «Ես բողբաշ չեմ ուզում, սուպ կուզենայի». «խնդրեմ, ահա սուպը», «այս փլավից հոգնեցինք, չէի՞ր կարող տոլմա պատրաստել», «համեցեք, այս էլ տոլման», «գուցե ես խորոված եմ ուզում, «կամ քամած մածուն», խնդրեմ։ Ամուսինը ճարահատյալ վրա է տալիս, «իսկ եթե իմ սիրտը շան կեղտ ուզի՞»... «խնդրեմ» ափսեն շուռ է տալիս, դնում սեղանին։

Ամուսինն այստեղ լրիվ զինաթափ է լինում, հազար ներողություն է խնդրում կնոջից՝ դու շատ ես լավը, ասում է, անպետքը ես եմ, իմ բնավորությունը, էլ քո թանին թե ես թթու ասեմ, ամոթ ինձ...

Գուցե Սմբատն էլ մի այդպիսի դասի կարիք ունի։

Իսկ ի՞նչ էր գրված այն հոդվածում «մի ընտանիք ևս փրկվեց». ինչպե՞ս։ Ամուսիններ հաշտ չեն ապրում, փնճում են ամեն մի դատարկ առիթով, խռովում ու հաշտվում են նորից, և՝ շատ հաճախակի։ Ի վերջո համոզվում են, որ միասին ապրել այլևս չեն կարող, որոշում են բաժանվել, մանավանդ միակ աղջիկն արդեն ամուսնացել է, կաշկանդող կամ խանգարող պատճառներ չկան։ Գնում են դատարան։ Դատավորը, որ կին էր, ուշադիր լսում է սրանց բացատրու-

թյունները ու զարմացած եղրակացնում,— բաժանություն անլուրջ պատճառներով։ Ամուսինները բողոքում են, ինչպե՞ս թե անլուրջ։ Այո, ասում է դատավորը, կներեք, հարգելի քաղաքացիներ, բաժանվելու, ընտանիք քայքայելու համար դուք բավարար պատճառներ չունեք, չվիրավորվեք, խնդրում եմ, իսկ այս կարևոր հարցում այդքան անլուրջ չի կարելի լինել։ Եվ խորհուրդ է տալիս նրանց գնալ ու մտածել, նորից ծանր ու թեթև անել և մեկ ամիս հետո ներկայանալ դատարան, այն ժամանակ ես առանց տատանվելու կկատարեմ ձեր խնդրանքը։

Մի ամիս չանցած ամուսինները մտնում են դատավորի առանձնասենյակը և խնդրում են ետ վերադարձնել իրենց դիմումը։ «Մենք քսան տարի ապրել ենք միասին, համաձայն ենք հաշտ ու խաղաղ շարունակել մեր համատեղ կյանքը մինչև մեր օրերի վերջը։ Շնորհակալ ենք, ընկեր դատավոր, դուք օգնեցիք մեզ իրար ավելի լավ հասկանալու»։ «Ես էլ գոհ ու շնորհակալ եմ ձեզանից, և սա համարում եմ ես իմ ամենահաջող դատավարություններից մեկը»։

Գուցե և մի քիչ միամիտ է, հեքիաթանման, բայց ֆինալը դուր է գալիս իրեն, ընտանիքի հետ խաղ չեն անում...

64.

Վերջապես երեխան լավ է։ Մի ամսվա տառապանքներից հետո այսօր տուն են գնում։ Այնքան շնորհակալ է քույրերից, դայակներից, բժիշկներից, մանավանդ Աննա Իլյինիչնայից։ Ափսոս, որ մարդ փրկելու համար բժիշկներին շնորհակալություն հայտնելու ավելի զորավոր ձև չկա. միայն խոսքով՝ շա՜տ եմ շնորհակալ։ Իսկ ինչո՞ւ, կան մարդիկ, որ խոսքի փոխարեն գործով են շնորհակալ լինում, շատ ավելի կոնկրետ միջոցներով, նվիրելով։ Մանավանդ մեզ մոտ, Կովկասում շնորհակալության այդ ձևը լայն չափեր է ընդունել։ Լա՞վ է, թե՞ վատ։ Երևի՝ վերջինը։ Ծաղիկ, կամ մի փոքրիկ նվեր, կարելի է, մնացածը շատ է տխուր. մարդ ամաչում է և՛ տվողի, և՛ վերցնողի համար...

Ռոզան ու Անատոլին պիտի գան իրենց ետևից, ժամը տասներկուսին։ Ափսոս, որ չի զգուշացրել, պետք է ծաղիկ բերեին Աննա Իլյինիչնայի համար։ Գուցե և կբերեն։

Իսկ ժամերն ինչպես դանդաղ են անցնում։ Ամեն ինչ հավաքել է, Գուրգենչիկին հագցրել, բոլորին շնորհակալություն է հայտնել, ցտեսություն ասել, իսկ ժամը տասնմեկը դեռ չկա։

Նորից մտան պալատ։ Մոտեցավ Իգորի մահճակալին. քնած է մուշ-մուշ։ Գիշերն անհանգիստ էր, մայրն էլ աչք չփակեց, հիմա երեխան քնել է հանգիստ, իսկ մայրը՝ Վարվառա Միխայլովնան, մահճակալի մի անկյունում նստած՝ ննջում է։ Աշխենը համարյա տաս օր կուրծք է տվել այս Իգորյոկին։ Թոքերի ուժեղ բորբոքում ուներ, հիմա թեթևացել է բավական, բայց դեռ պիտի մնան, երևի մի տաս օր ևս։ Մոր հինգերորդ տղան է, բայց տես ինչքան ուշադիր ու սրտացավ է Վարվառա Միխայլովնան։ Հիմար բաներ ես մտածում, հետո ինչ-որ հինգերորդն է, կարծում ես, որ դու նորից երեխաներ ունենաս, սերդ պիտի պակասի՞ նրանց նկատմամբ։ Գործարանում է աշխատում Վարվառան, տրնտեսագետ է։ Եվ հասցրել է աշխատանքի հետ նաև երեխաներ ունենալ, ինչպես ինքն է ասում՝ հասանելիք արձակուրդից ավել մի օր էլ չի մնացել տանը։ Ամեն ինչ տեղը տեղին։ Եվ երեսունհինգ տարեկան հազիվ լինի։ Ամուսինն էլ երկաթուղային է, մեծ մասամբ՝ ճանապարհի վրա։ Բայց հաշտ են ապրում և այդ դուր է գալիս Աշխենին։

Երեխայի ձայնի վրա արթնացավ Վարվառա Միխայլովնան։

— Վա՜յ, Աշխեն, ինչո՞ւ ես կանգնել։

— Ձեզ էի նայում, այնպես լավ էիք քնել... Իգորն էլ լավ է, շուտով դուք էլ տուն կգնաք։

— Եվ ես համոզված եմ, որ խոստումդ կկատարես, կհանդիպես մեզ, հասցեն տվել եմ, վերջապես, գիտես ինչ, քույրիկս, դու էլ ես կուրծք տվել այս երեխային, ինչպե՞ս կարող ես չհետաքրքրվել նրա ճակատագրով... — Գրկեցին, համբուրվեցին նորից։

— Վարվառա Միխայլովնա, ձեզ այնպես եմ սովորել այս մի ամսվա ընթացքում։ Առանց ձեզ դժվար կլինի ինձ համար...

— Նույն զգացումն էլ ես ունեմ, Աշխենչիկ, սիրելիս. այս նշանակում է, որ մեր բարեկամությունը պետք է շարու-

նակվի։ Հենց որ տեղեկություն ստանաս քո Գրանտից, ինձ անպայման տեղյակ կպահես։

— Այդ մեկը, համոզված եմ, չի լինելու։

— Դե, ով է իմանում, կյանքն այնքան բարդ է ու անակնկալներով լի... Համենայն դեպս դու պարտավոր ես նորմալ ընթացքի մեջ դնել և՛ քո, և՛ քո երեխայի կյանքը. այս անորոշությունը քեզ շատ կտանջի։

— Գիտեմ, արդեն թթուն խմում եմ... Մի խոսքով՝ տեսնենք։ Գիտեք, Վարվառա Միխայլովնա, իմ այդ Հրանտը մի երգ շատ էր սիրում, հաճախ կամաց ասում էր իմ ականջին.

«Ամեն մի գիշեր ունի լուսաբաց»։

— Ճշմարիտ խոսք է, Աշխենս, միայն իմացիր, այդ լուսաբացն էլ պասիվ սպասողին քիչ բաժին է հանում...

Վերջապես եկան Ռոզան ու Անատոլին։ Վերջինիս ձեռքին մի մեծ ծաղկեփունջ կար։ Աշխենը կրկնակի ուրախացավ.

— Այս ինչ լավ ես արել, Անատոլի, որ ծաղիկ ես բերել, ես ուզում եմ Աննա Իլյինիչնային տալ, նա այնքան լավ կին է։

— Ես ծաղիկը քեզ համար եմ բերել, իսկ դու տնօրինիր, ինչպես ուզում ես...

Հիմա մեքենայով տուն են գնում։ Ինքը, Ռոզան ու Գուրգենը՝ ետին մասում, Անատոլին՝ վարորդի կողքին։ Լուռ են, ինչո՞ւ չեն խոսում, ասելու բան չունե՞ն, թե վարորդի ներկայությունն է խանգարում, ոչ մեկը, ոչ մյուսը։ Պարզապես երեխան քնած է, արթնացնել չեն ուզում։ Հետո, հավանաբար, յուրաքանչյուրն իր մտքերի հետ է։ Ռոզային անհանգստացնում է իր ընկերուհու ու նրա երեխայի ճակատագիրը։ Անատոլին դեռ վերջնականապես չի կողմնորոշվել, բայց վճռական եզրակացությունների հանգելու հեռանկարներ է տեսնում։ Իսկ Աշխենը ցավով ու զարմանքով մտածում է, թե ինչո՞ւ ահա մեքենայում, վարորդի կողքին այս երեխայի հայրը չպետք է նստած լիներ... Հետաքրքիր է, որ Վարվառա Միխայլովնան էլ համարյա նույնն էր ասում, ինչ Ալլա Կուզմինիչնան, անպայման գրել երեխայի հորը, գոնե ընկերուհուն նամակ գրել, թող նրա միջոցով Հրանտն իմանա իրենց տեղը ու թող գա, նորից հանդիպեն, խոսեն,

գուցե ավելի խելոք եզրակացության կարող են հանգել,— «բախտի գլխին քար չեն գցի, հասկացիր»... իսկ ո՞րն է այդ բախտը, և քար գցելը կանչե՞լն է, թե՞ լրիվ հրաժարվելը... երբևէ վերջ լինելո՞ւ է այս երկվությանը, թե՞ փրկություն չկա սրանից: Նորից գործարան, երեխային՝ մսուր, հանրակացարանային կյանք, հետո՞: Իսկ անձնական կյանք չի՞ լինելու այլևս, իբր թե եղել է: Քո Գուրգենին մեծացրու, երջանկացրու, ահա քո անձնական կյանքը, քո երջանկությունը... Իսկ թերի չի՞ լինի այդ, և դա քո կյա՞նքը կլինի, թե՞ երեխայի: Այս երկուսն արդեն մի կյանք է, ուրիշը չկա, ուրիշը չի պատկերացնում: Միայն սարսափով է մտածում այն օրվա մասին, երբ իր տղան առաջին անգամ կհարցնի իրեն՝ իսկ ո՞վ է իմ հայրը և ո՞ւր է նա... Ա՜խ, ինչպես է կարոտել Հրանտին, ինչպես հիմա կփարվեր նրան ու կհամբուրեր, կհամբուրեր: Խենթանա՜լ կարելի է...

65.

Երկու օր հետո Աշխենը գնաց աշխատանքի: Լաբորատորիայում առանձին նորություններ չկային. գիտեր Կիրա Իգնատևնայի՝ ամուսնուց բաժանվելը, իր ցավակցությունը հայտնեց նրան:

— Աշխեն Գուրգենովնա, դուք ինձ կարող եք շնորհավորել, ազնիվ խոսք: Ձեք կարող պատկերացնել, թե հիմա ինչքան հանգիստ եմ քնում, իսկ ինչե՞ր եմ քաշել. սա մի աննկարագրելի երջանկություն է... Ես, ճիշտ է ուշացումով, բայց համոզվել եմ վերջնականապես, որ հազար անգամ լավ է մենակ մնալ, քան թե վատ ամուսին ունենալ...

Նորից Աշխենի գլխի փեթակում մեղուները խառնվեցին իրար, սկսվեց անխիղճ հրմշտոցը:

Իսկ եթե ամուսինդ վատը չէ, այլ, ընդհակառակը, շատ լավն է, սակայն քոնը չէ: Նորի՞ց... Վերջ, այլևս այդ մասին չես մտածում: Ավարտեցիր զրույցդ Կիրա Իգնատևնայի հետ, անցիր քո գործին, խորացիր հարցերի մեջ, դեռ այնքան բան ունես սովորելու: Դու թույլ չես տա, որ քո աշխատանքից դժգոհ մնան մարդիկ, ուրեմն, երեխայից հետո, քո ամբողջ ուշադրությունը նվիրիր աշխատանքին. խելք ու կարողու-

թյուն ունես, ընկերներդ օգնում են քեզ, ուրիշ ի՞նչ է պետք։

Բայց նորից սրտի աղբյուրը պղտորվելու առիթ ներկայացավ։ Ռոզան, համոզված է միամիտ, ասաց.

— Իսկ մեզ մոտ Երևանից ընկերներ էին եկել, ասացին՝ մեր փորձն ուսումնասիրելու համար է։

— Ի՞նչ ընկերներ, ովքե՞ր էին, Ռոզա,— Աշխենն ասես շնչակտուր էր լինում։

— Իսկ դու իզուր ես անհանգստանում, Աշխենս, մարդիկ էին, ես ինչ գիտեմ. մի անգամ տեսա գլխավոր ինժեների մոտ։ Լաբորատորիա չեն մտել. չգիտեմ էլ, թե որ գործարանից են։

— Ափսոս, ինչպե՞ս չես հարցրել...

— Միամիտ հույսեր ես փայփայում, քույրիկս, այդպիսի անսպասելի հանդիպումները միայն արկածային վեպերում են լինում։

— Երևի դու իրավացի ես, Ռոզա, բայց և այնպես դժվար է սրտին բան հասկացնելը...

Անատոլին հարկ համարեց միջամտել նրանց խոսակցությանը, ինչպես էլ լսել էր, թե ինչի մասին են խոսում։

— Ես էլ մի անգամ տեսել եմ այդ ընկերներին, ճիշտ է, վատ տղաներ չէին, մեկը նույնիսկ ինձ գեղեցիկ տղամարդ թվաց, բայց համոզված եմ, որ Աշխեն Գուրգենովնայի ճաշակը շատ ավելի բարձր որոնումների մեջ է...

— Է, Անատոլի, դու ոչինչ չգիտես, ներիր ինձ, ու ոչինչ չես հասկանում,— Աշխենի ձայնի մեջ այնքան ցավ ու ափսոսանք կար...

— Ես չեմ վիրավորվում, Աշխեն, միայն չգիտեմ, ինչո՞ւ դու այդքան վատ կարծիք ունես իմ մասին։

— Չեղավ, Անատոլի։ Ես բոլորովին էլ վատ կարծիքի չեմ, միայն ներիր, ինձ հուզող հարցերը մի քիչ շատ են հեռու քեզնից։

— Եվ, այնուամենայնիվ, դու իրավացի չես, ես հույս ունեմ, որ այդ բանը մի օր քեզ կապացուցեմ։

Եվ Անատոլին հուզված դուրս գնաց լաբորատորիայից, երևի ծխելու պահանջ զգաց։

Աշխենի սրտի վրա ինչ-որ բան ծանրացավ. լավ չստացվեց, իհարկե, նա այնքան ուշադիր էր իրենց նկատմամբ,

քանի անգամ է հիվանդանոց եկել և ինքը հենց առաջին օրը վիրավորեց նրան։ Չէր ուզում, իհարկե, բայց տխուր իրողություն է իր ասածը. նա չի հասկանում իր հոգեկան տվայտանքները, ապրումներն ու սպասումները։ Եվ չի էլ կարող հասկանալ։ Դե, ինքը հո նրանից այդ բանը չի՞ պահանջում։ Ուրեմն թող անտեղի չխառնվի իր գործերին, առանց նրան էլ այնքան խառն են, որ գլուխ հանել չի լինում...

Բայց և այնպես հետաքրքիր է թե ովքեր են եկել Երևանից. գոնե տեսներ մի աչքով, գուցե ծանոթներ էին։ Իսկ հետո՞, եթե ճանաչեին քեզ, կամ դու՝ նրանց, և նրանց միջոցով քո տեղն իմանային Երևանո՞ւմ. ա՞յդ ես ուզում։ Աստված վկա, ոչ, պետք չէ, լավ է, որ չեն հանդիպել... Բայց զարմանալի է կյանքը, շատ է զարմանալի, նրանք հենց իր հիվանդանոցում եղած օրերի՞ն պիտի գային... Ընդունեցի՞ր, որ չհանդիպելն էր ճիշտը. ուրեմն վերջ, այդ մասին այլևս ոչ մի խոսք։ Գլխավոր ինժեների մոտ գնալն էլ մտքիցդ հանիր, նրա միջոցով դու ոչինչ չես կարող պարզել։ Երևանից մարդ չի եկել, դու ոչինչ չգիտես այդ մասին, ահա քեզ անհրաժեշտ ճշմարտությունը։ Բայց և այնպես հետաքրքիր էր...

Լավ էր, այսօր կարողացավ հիվանդանոց զանգահարել, Վարվառա Միխայլովնայի հետ խոսեց։ Երեխան լավ է, երեվի դուրս կգրեն մի քանի օր հետո։ Անպայման պետք է այցելել նրանց, լավ մարդիկ են, այդպիսի բարեկամությունը հարստացնում, բազմազան է դարձնում մարդուս կյանքը։ Իբր թե կյանք է մնացել, հիմա էլ դրա բազմազանության մասին է մտածում...

Տեսնես մորաքո՞ւյրն ինչպես է... փախավ, նրան էլ լուր չտվեց, այնուամենայնիվ իր միակ հարազատն է Երևանում, նրա տանն ապրել է մոտ երկու տարի։ Ոչ, անշնորհք ու անշնորհակալ մարդ է ինքը, սա է ճշմարիտը, իսկ միամիտ Անատոլին կարծում է, թե... Ոչ, պետք է նրան հասկացնել, հնարավորություն տալ կարգին ծանոթանալու, ճանաչելու իրեն, միայն առանց վիրավորելու, իհարկե։ Թե՞ անտեղի վիրավորելն էլ արդեն վատ է բնութագրում մարդուն, իսկ Անատոլին, փոխանակ հիասթափվելու, վիրավորվում է։ Դա էլ նրա՞ անխելքությունը չի վկայում։ Իսկ ո՞րն է խելքը, ո՞ր մեկի ետևից գնաս...

Ընդմիջումը նոր էր վերջացել, Ռոզայի հետ նախաճաշել էին, ուզում էր մսուր վազել՝ երեխային կերակրելու, մեկ էլ լաբորատորիա մտավ գլխավոր ինժենների քարտուղարուհին և առանց որևէ մեկին դիմելու՝ բարձր հայտարարեց.

— Աշխեն Մարգարյանին կանչում է Պյոտր Անդրեևիչը.— ու դուրս գնաց՝ առանց արձագանքի սպասելու։

Աշխենը գունատվեց հանկարծ. ինչո՞ւ, ինչ կա որ, գլխավոր ինժենները կանչում է, երևի բան ունի ասելու, ինչո՞ւ անհանգստացավ, գուցե նրա համար, որ սա էլ գործարանի գլխավոր է...

Անհամարձակ ներս մտավ, բարևեց ու մնաց դռների մեջ կանգնած։

— Ներս եկեք, Աշխեն Գուրգենովնա, նստեցեք, խնդրում եմ։

Աշխենը դեռ իրեն հավաքել չէր կարողանում, ախր գլխավորն ի՞նչ գործ ունի իր հետ։

— Ուրախ եմ, որ ձեր երեխան առողջացել է, և դուք արդեն աշխատանքի եք գալիս. կներեք, ձեզ տեսությամբ գալ չկարողացա։

— Շնորհակալ եմ, Պյոտր Անդրեևիչ, հարցրել եք, հետաքրքրվել եք, Ռոզան ինձ հայտնել է, զգացված եմ։

— Ես հույս կարո՞ղ եմ ունենալ, որ այդ ճարահատյալ բացակայությունը վատ չի անդրադառնա ձեր աշխատանքի վրա, հասցրե՞լ եք գործին մոտիկից ծանոթանալ։

— Պյոտր Անդրեևիչ, դեռ շատ քիչ բան եմ արել, իհարկե, բայց խնդրում եմ չկասկածեք, որ ամեն ինչ կանեմ իմ պարտականություններն անթերի կատարելու համար, ինձ միայն մի փոքր ժամանակ է պետք, ուրիշ ոչինչ։

— Այդ ժամանակը ձեզ կտանք, բավարար օգնությունը կլինի։

— Շնորհակալ եմ։ Ես կարո՞ղ եմ գնալ։— Իսկ մտքում նույն տատանվող հարցն է՝ Երևանից ովքե՞ր էին եկել, հարցնե՞լ, թե ոչ։

— Կարող եք... Հա, դուք Երևանի ո՞ր գործարանում էիք աշխատում։

— Մեքենաշինական։

— Հետաքրքիր է։ Գիտեք, վերջերս ձերոնցից երեք հոգի

եկել էին մեզ մոտ, լավ տղաներ էին։ Ափսոս ձեր մասին ես նրանց ոչինչ չասացի։ Դե, ճիշտն ասած, իրենք էլ չհետաքրքրվեցին...

— Նրանք չգիտեն, որ ես այստեղ եմ, հետաքրքրվել չէին կարող։

— Դուք հո փախստական չե՞ք, Աշխեն Գուրգենովնա։

Կատակով ասվեց այս խոսքը, բայց նաև լրջություն կար հարցի մեջ։

— Համարյա փախստական... իսկ ովքե՞ր էին եկել, Պյոտր Անդրեևիչ, կարելի՞ է իմանալ։

— Ինչո՞ւ չէ, խնդրեմ, ահա այդ ընկերների ազգանունները.— ու մի թուղթ մեկնեց Աշխենին.

«Հրանտ Ստեփանյան, Սմբատ Ոսկանյան»...

Աշխենի աչքերը մթնեցին, ուշաթափության նման մի բան եկավ վրան, հազիվ էր շնչում, իսկ գույնը պատի ծեփ...

— Ձեզ ի՞նչ պատահեց, Աշխեն Գուրգենովնա, սա ի՞նչ հանելուկ է.— շտապ ջուր տվեց աղջկան։

— Ոչի՛նչ, կանցնի, կներեք...

Պյոտր Անդրեևիչը երկար ժամանակ սպասում էր Աշխենի զգաստանալուն ու նրա բացատրությանը։ Ինչո՞ւ այդպես այլայլվեց, նրա՝ նորածին երեխայի հետ այստեղ գալն էլ առեղծվածի նման էր, իսկ ինքը վատ աղջիկ չի երևում։

— Անցավ։ Կներեք, Պյոտր Անդրեևիչ... Ինձ շատ մոտ մարդիկ են եղել մեզ մոտ, և ես նրանց տեսնելու հնարավորություն չեմ ունեցել... կներեք, ցտեսություն։

Եվ արագ դուրս եկավ գլխավոր ինժեների առանձնասենյակից՝ նրան թողնելով տարակուսանքի մեջ։ Այդ ինչ «շատ մոտիկ մարդիկ» են, որ Աշխենի տեղը չգիտեն, ինչո՞ւ չհարցրին, չհետաքրքրվեցին, հիվանդանոց տեսության չգնացին... Հիշեց, որ առաջին օրը, երբ Աշխենին աշխատանքի էր ընդունում, նա ցանկացավ ինչ-որ բան պատմել երեխայի մասին, ինքն ասաց, որ դա իրեն չի վերաբերվում։ Իզուր, պարտավոր էր հետաքրքրվել, հիմա գոնե այս ռեբուսի առաջ կանգնած չէր լինի։ Գուցե այդ աղջիկն այն չէ, ինչ արտաքինն է ցույց տալիս։ Բայց Երևանից լավ բնութագիր էր բերել։ Թե՞ դա էլ այն սովորական, շաբլոն դարձած բնութագրերից է, որոնք մարդուն չեն բնութագրում, որոնց ազդա-

նունները կարող ես փոխել և ոչինչ դրանից չի փոխվի։ Բայց ոչ, այնուամենայնիվ այդ աղջկա մեջ ինչ-որ լավ բան կա, դա ժխտել չես կարող, բայց միաժամանակ ինչ-որ տեղ անհասկանալի է, ինչ որ չափով առեղծվածային...

66.

Ամբողջ գիշեր. Աշխենը աչք փակել չկարողացավ։

Այս ի՞նչ խաղեր է սարքում կյանքն իր գլխին։ Ինչպե՞ս է, որ Երևանից եկել են հենց այս գործարանը, եկել է հենց ինքը Հրանտը, և եկել է այն ժամանակ, երբ իր տղան հիվանդանոցում կռվի մեջ էր՝ հանուն կյանքի, և նախախնամության քմահաճույքով իրենք հանդիպելու առիթ չեն ունեցել։ Ոռզան ասում էր՝ այդպիսի հանդիպումները արկածային վեպերում են լինում, իսկ այս չհանդիպման մասի՞ն ինչ կասես, գուցե սա ավելի՞ սաղդական է արկածային վեպին...

Ծանր է, ճիշտ է, չխոստովանել չես կարող, բայց և այնպես գուցե լավ է, որ այդ հանդիպումը տեղի չի ունեցել. իսկ եթե լիներ, երազելն էլ հո հանցանք չէ, ի՞նչ ընթացք կստանար այդ հանդիպումը։ Ընթացք։ Նախ դու պատկերացրու հանդիպման պահը. դուք գրկել եք իրար, դարձել մի մարմին, մի հոգի, չեք էլ նկատում, որ մարդիկ ձեզ են նայում, վերջին ամիսների կարոտն եք ուզում քաղել իրար շուրթերից, այտերից, մազերից... Կաթվածահարի հայացքով ձեզ է նայում վարպետ Սմբատը։ Նա ոչինչ չի հասկանում, լեզուն կապվել է, խոսել չի կարող։ Այդ տեսարանն ավելի հասկանալի է Պյոտր Անդրեևիչին. նա ժպտում է քթի տակ, ու խոսում ինքն իրեն.— «Ահա թե ով է այս Աշխենի ամուսինը... «Ամուսի՞ն. ինչպես կուզենար Հրանտի կինը լինել, աշխարհում իրեն ուրիշ ոչինչ պետք չէր, սիրած ամուսին ու զավակ, Գուրգեն ու Հրանտ, աշխարհի ամենահարուստ մարդը կզգար իրեն, ամենաերջանիկ կինը... վերջապես, Սմբատն ուշքի է գալիս ու հարցնում է անվստահ, կցկտուր. «Մի՞թե դուք իրար... Ուրեմն այն երեխան...» Հրանտը պոկվում է Աշխենից ու դառնում Սմբատին. «Այո, մենք իրար, շատ... Ես այլևս թաքցնել չեմ կարող...» Իսկ Աշխենը վրա է բերում.— «Ես այլևս չեմ կարող առանց Հրանտի, ես փախա

նրանից, փախցրի նրա տղային, բայց տեսնում եմ, որ ճակատագրից փախչել չեմ կարող...» Ու հանկարծ հնչում է Սմբատի կոշտ հարցը. «Իսկ տիկին Նվա՞րդը... Հրանտը բաց է թողնում Աշխենի ձեռքը, ետ-ետ է գնում ու մեղավոր տոնով շշնջում է. «Ես նրան լքել չեմ կարող, դա իմ ուժերից վեր է...» Աշխենը գոռում է միջանցքով մեկ. «Եթե դու փորձես քայքայել քո ընտանիքը, ես քեզ կատեմ». ու փախչում է մարդկանցից... Իսկ ինքդ քեզնի՞ց ինչպես փախչես։ Եվ մի՞թե դու իսկապես կասեիր այս վերջին խոսքը, թե՞ Հրանտի ուսերը գրկած կգոռայիր ի լուր բոլորի. «Ես քեզ ոչ ոքի չեմ տա, դու իմն ես միայն, իմ ամուսինը, իմ երեխայի հայրը...»։

Ա՜հ, տեր աստված, լա՞վ է, որ տեղի չի ունեցել այդ հանդիպումը, թե՞ վատ. ի վերջո սպասվո՞ւմ է նման մի հանդիպում, թե՞ փակված են հույսի բոլոր դռները... Ամենածանրը կարոտի ճամփան փակելն է, ամենադժվարը և իրեն վախեցնողը։ Ամեն գիշեր համարյա Հրանտի հետ է, մտքով վայելում է նրա ներկայությունը, նրա մտերմությունը, համբուրում է նրան՝ անվերջ, անհամար անգամ, և, միևնույն է, չի հագենում... Վախենում է այդ կարոտին չդիմանալ, մեկ էլ տեսար մի խենթ պահի նամակ գրեց կամ հեռագիր տվեց։ Հետո կփոշմանի, իհարկե, բայց արդեն ուշ կլինի, շատը դրանից է վախենում, այդ խենթ քայլից։

Ու երդվում է ինքն իրեն՝ ամենախենթ պահին անգամ ոչ մի քայլի չդիմել, սպասել, թեկուզ և տառապանքի գնով, այդ խենթության խելոքանալուն, և այն ժամանակ անպայման կփոխվի որոշումը, և ճիշտը դա կլինի։ Ո՞րը. մենակ տառապելու որոշումը, Հրանտից հեռու մնալու, բայց և նրանով ապրելու վճռականությունը...

Ինչպե՞ս կուզենար հանդիպել Սմբատին, իմանալ նրա և Թամարի փոխհարաբերության մասին։ Համոզված է, ամուսնացել են, բայց ինչպե՞ս են ապրում. ախր բոլորովին տարբեր բնավորության տեր մարդիկ են. Թամարը՝ փափուկ ու քնքուշ, նրբանկատ ու նրբազգաց, Սմբատը՝ կոշտ ու իր ասածի, հոգեկան նրբերանգների հետ հաշվի չնստող։ Ինչպիսի՞ միություն կստացվի դրանից, ի՞նչ լուծույթ կստացվի քիմիական այդ երկու նյութերի միացությունից, կմիանա՞ն

կձգտեն իրա՞ր, թե՞ տարրալուծվելու, անջատվելու վտանգ կառաջանա։ Այս մասին քանի՞ անգամ են խոսել Թամարի հետ, չի թաքցրել իր կասկածները, բայց Թամարին ետ պահել չի կարողացել։ Դե, ճիշտը որ ասենք, ինքն այդպիսի նպատակ չի էլ հետապնդել, պարզապես ընկերուհու ճակատագիրն էր նրան անհանգստացնում։ Իսկ Թամարը, շատ ապրի, կայուն էր իր տեսակետի մեջ, ոչ մի տատանում, ոչ մի երկընտրանք, սիրում ենք իրար, ուրեմն ոչինչ չի կարող խանգարել մեր միությանը։ Մասնակի խոչընդոտները կըհարթվեն, ընտանեկան կյանքը կընթանա բարեկարգ ճանապարհով... Տա աստված, որ այդպես լինի, գոնե Թամարը կարողանա վայելել ընտանեկան կյանքի քաղցրությունը, գոնե՝ իր ընկերուհին...

Իսկ եկածներից երրորդն ո՞վ էր. արտադրամասի պետ Բաբկեն Սիմոնյանը։ Նրան կարգին չի ճանաչում, մի երկու անգամ են միայն հանդիպել։ Չգիտի էլ, թե նա ինչ ունի, կին, երեխա, և ինչպիսին է նրա ընտանեկան կյանքը։ Նա հիսունին մոտ մարդ է, երևի արդեն մեծ երեխաներ ունի, գուցե և թոռներ... Ասում են թոռը քաղցր բան է, տեսնես ինքը երբևէ բախտ կունենա՞... Նորի՞ց սկսեցիր քո անհամ զառանցանքները, դեռ ոչ մի բանի տեր չես, թոռան մասին ես մտածում։ Ինչո՞ւ ոչ մի բանի, իսկ Գուրգե՞նը։ Ես նրա ցավը տանեմ, թող մեծանա, տուն-տեղ դառնա, ուրիշ ոչինչ չեմ ուզում ես, աստված վկա։ Իսկապե՞ս ոչինչ չես ուզում...

Երեկոյան Ռոզան իր մոտ էր եկել։ Նստեցին, երկար խոսում էին. սկզբում՝ լաբորատորիայի աշխատանքների մասին, հետո՝ նորից ընտանիք, անձնական կյանք։ Ինչպե՞ս անակնկալի եկավ Ռոզան, երբ իմացավ Հրանտի գալ-գնալու մասին, ինչպես էր դատապարտում իրեն՝ անտարբերության համար։

— Ես ինչպես չփորձեցի տեսնել, ծանոթանալ նրանց հետ. ինչ-ինչ, բայց ես քո Գրանտի անունը հո գիտեի՞, գուցե դա ինձ ճիշտ ուղղություն կտար։ Կպարզվեր ինչն ինչոց է, և նրան ուղիղ կբերեի հիվանդանոց, քեզ մոտ, թող գոնե մի անգամ տեսներ իր տղային։ Ախր սա էլ անխղճություն է...

— Իսկ հետո՞, Ռոզա, դու պատկերացնո՞ւմ ես, թե հետո ինչ կլիներ։

— Հետո՞. եթե նա կարգին մարդ է, կամ ինքը կմնար այստեղ, կամ քեզ կտաներ Երևան, ուրիշ ճանապարհ չկա։

— Է՛հ, Ռոզա, Ռոզա, դու նորից միակողմանի ես մոտենում հարցին։

— Դե, գիտես ինչ, Աշխենս, քո բազմակողմանի մոտեցումից ես առայժմ ոչ մի կարգին բան չեմ տեսել, բավական է դու քեզ էլ սպանես, մեզ էլ, վերջապես մարդս չի կարող միայն զգացմունքով ապրել, բանականությունն էլ իր վճռական ձայնը պիտի ունենա, հասկացիր։

Ինչո՞ւ մարդ հաճախ այսքան անհասկացող է դառնում... վերջապես ի՞նչ բան է այդ ընտանիք կոչվածը, ինչո՞ւ ոմանք կառչում են ընտանիքի փեշից, ամենածանր պայմաններում անգամ ամուր պահել են ուզում այն, քայքայման, տարրալուծման հեռանկարն անգամ նրանց սարսափ է պատճառում, իսկ շատերի համար բաժանվելը մի բաժակ ջուր խմելու նման բան է. այսօր՝ միասին, վաղն՝ առանձին, կամ մի ուրիշի հետ... Երեխաների գոյությունն էլ նրանց չի կաշկանդում... Իսկ Հրանտն այնտեղ երեխա չունի, նրա իսկական ընտանիքն այստեղ է։ Նորի՞ց սկսեցիր. իսկ այնտեղ սեր կա, փոխադարձ պարտավորություններ կան, հասկացիր... Ասում են նախնադարյան հասարակարգում ընտանիք չի եղել, մարդիկ ապրել են խմբերով, հոտերով։ Ասենք, մի տղամարդ ուզել է այսինչ կնոջը. գնացել է նրա քողտիքը, իր մորթե բաճկոնը կախել է նրա դռան փայտից ու ներս է մտել։ Այդ նշանակում է կնոջ մոտ մարդ կա։ Երևի դա սիրո նման մի բան է եղել։ Համենայնդեպս տղամարդուն ձգել է այդ կինը, նրա հետ կենակցելու ցանկություն է ունեցել նա, իսկ կնոջ կարծիքը տեսնես հարցրե՞լ են, հաշվի նստե՞լ են նրա ցանկության հետ, թե՞ վճռական ձայնը նորից տղամարդուն է պատկանել... Եվ այդ տղամարդու գնալուց հետո մի ուրիշը կարող էր իր բաճկոն կոչվածը կախել նրա դռան փայտից, գուցե և երրորդը, չորրորդը... Անառակությունը հենց այստեղից չի՞ սկսվել։ Եվ ոչ մի դատապարտում, ամոթի, խանդի, անհարմարության ոչ մի զգացում. գուցե ճշմարիտն ա՞յս էր... Բայց ոչ, ինչի նման է այդ. այդտեղ սիրո

մասին խոսք անգամ լինել չի կարող, իսկ առանց սիրո ի՞նչ կյանք, ի՞նչ ընտանիք։ Հասարակությունն ահավոր կայլասերվի, եթե չլինի ընտանիքը, մանավանդ մեր օրերում։ Իսկ որոշ երկրներում ասում են ամուսնալուծությունը հասնում է բարձր տոկոսի, քայքայվում է երկուսից մեկը, ահավոր հեռանկար... իսկ դու մի ժամանակ անիծել էիր ուզում Հրանտին, եթե նա փորձեր քայքայել իր ընտանիքը։ Մի ժամանակ։ Իսկ հիմա՞։ Աստված վկա, հիմա էլ չի ուզում։ Իսկապե՞ս չի ուզում... Ա՜հ, տեր աստված, այս ինչ տանջանք է, ինչքան ծանր ու հոգեմաշ է այս երկվության զգացումը։ Այս ինչ ահավոր կաշկանդիչ ուժ ունի այդ ընտանիք կոչվածը։ Եվ լա՞վ է այդ, թե վատ, թե՞՝ նայած ում համար... Եվ ի՜նչ տարբերություն թե որ հիսուն տոկոսի մեջ կլինես, առաջի՞ն, թե՞ երկրորդ, ընտանիքը, թեկուզ և զոռով, կանգուն վիճակում պահողների՞, թե՝ հեշտությամբ քայքայողների մեջ։ Մի՞թե կարևորն այն չէ, որ դու բացառություն չես ոչ լավ, ոչ վատ իմաստով. շատերից մեկը, ահա տխուր մխիթարությունը... Միայն ինչո՞ւ բանականության այս հանգիստ չափ ու ձևի դեմ ըմբոստանում է խիղճը, և երբևէ վերջ կգտնի՞ այդ հակասությունը, սրտի ու մտքի տարաձայնությունը։ Տառապում ես չկայացած հանդիպման համար, գիշերները քունը մոտ չի գալիս քո աչքերին։ Բայց նաև ուրախ ես, որ չեք հանդիպել։ Վերջ ի վերջո դու այդ հանդիպումների ձախողման համար փախար նրանից, փախար, այլևս իրար չտեսնելու հաստատ որոշմամբ, իսկ ինչո՞ւ է հիմա խիղճդ այդպես ըմբոստացել քո այդ որոշման դեմ։ Որովհետև սարսափելի է մտածել, թե Հրանտ Ստեփանյանը երբևէ բախտ չի ունենալու իր միակ զավակին տեսնելու, որ քո Գուրգենը ամբողջ կյանքում կարող է չհանդիպել իր հորը։ Մի՞թե ահավոր դաժանություն չէ սա, և դու այդ դաժանության միակ հեղինակն ես, միակ հանցավորը։ Ինչպե՞ս կարելի է այդպես անխղճորեն երեխային բաժանել իր հորից, և այդ դաժանությունը զարդարել խելոք անհրաժեշտության սուտ դափնիներով...

Ինչպե՞ս վարվել, ո՞րն է ճիշտը։ Որի՞ն լսել, բանականությա՞ն, թե՞ խղճի ձայնին։

թվագրել է 1915.ին՝ 30 կամ

Սմբատի հետ դեռ չի խոսել Հրանտը, Թամարի խնդրանքը մնում է չկատարված։ Ժամանա՞կ չի ունեցել, թե՞ առիթ չի եղել։ Հավանաբար ոչ մեկը ոչ մյուսը։ Չի որոշել ասելիքը, խոսելիքը, դեռ չի գտել մանավանդ զրույցն սկսելու եղանակը։ Չպետք է խրտնեցնել ինքնահավան ու իրասածի տղային, ամեն ինչ բնական ու համոզիչ պիտի տացվի, թե չէ արածդ կարող է վերածվել արջի ծառայության... թե՞ ուրիշ պատճառներ էլ կան, ավելի ճիշտ՝ մի խանգարող պատճառ, գուցե՝ ամենազորավորը. խոստովանիր, գոնե՝ ինքդ քեզ։ Հաշտարարի դեր պիտի խաղաս, ամուսինների միջև մարդկային-ընկերական փոխհարաբերությունների զարգացման, կնոջ իրավունքները հարգելու դասեր պիտի տաս։ Ի՞նչ իրավունքով։ Մի՞թե դու ավելի կարիք չունես նման դասերի։ Ճիշտ է, Թամարն ու Սմբատը չգիտեն ամենամեծ ու տխուր ճշմարտությունը, հետո՞ ինչ, դու հո գիտե՞ս։ Անկարգ աշակերտը բարոյական ի՞նչ իրավունքով ճառ պիտի կարդա կարգապահության մասին, և ո՞վ կհավատա նրան։

Բայց պետք է, խոստացել է։ Գուցե այդ խոսքն օգտակար կլինի ոչ միայն Սմբատին, այլ նաև իրեն։ Գուցե կբացեր բոլոր քարտերը, և դերերը կփոխվեին, այս անգամ Սմբատն իրեն օգտակար դասեր կտար... Ո՛չ, չի կարող, այդ մեկն իր ուժերից վեր է, դեռ չի հասել այդ համարձակ շիտակությանն ու ազնվությանը։ Դեռ չի հասել, կարծես թե հեռանկա՞ր կա հասնելու...

Իսկ ինչո՞ւ չկա, գրողը տանի։ Վերջապես ո՞ւր կորան այդ հեռանկար կոչվածները, չե՞ն եղել, թե՞ կորել են անվերադարձ։ Ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով, ո՞ւմ մեղքով։ Ինչպե՞ս կարելի է ապրել առանց հեռանկարի։ Յոթանասունն անց մայրն անգամ հեռանկարի պակաս չի զգում, թոռների թիվն ավելացած տեսնելու հույսով է ապրում, նույնիսկ ծոռ ունենալու իր հեռավոր ցանկությունը թաքցնել չի կարողանում... իսկ ինքը դարձել է անհեռանկար, անդեմ ու գորշ մի արարած, չվացուցակից դուրս ընկած գնացք ասես, ավելի շատ կանգնում, քան գնում է, և հայտնի չի տեղ կհասնի՞, և ո՞րն է այդ տեղը... իսկ ինչո՞ւ, սատանան տանի. վերջապես ի՞նչ

հանցանք է կատարել ինքը։ Մի՞թե սիրելը հանցագործություն է։ Իսկ ո՞ւմ ես սիրում, Նվարդի՞ն, թե՞ Աշխենին. գուցե երկուսին միաժամանա՞կ, հնարավո՞ր է այդ, և ազնվությունը խորթ զավակ չէ՞ այդ սիրո մեջ... Իսկ, այսպես կոչված, ապօրինի զավա՞կը. գրողը տանի, սեփական զավակդ՝ ապօրինի՞...

Այնուամենայնիվ ո՞ւր գնաց Աշխենը, ո՞ւր տարավ երեխային. ինչպե՞ս են ապրում։ Սա բոլորովին բանի նման չէ. իր երեխային տեսնելու բախտը չունենալ, մի անգամ գոնե։ Կանցնեն տարիներ, կարող է դուք հանդիպեք և չճանաչեք իրար։ Դու նրա անուն-ազգանունը չգիտես, իսկ նա քոնը կիմանա՞, գուցե մայրը կթաքցնի՞, ինչ իմանաս... Ինչպե՞ս կդասավորվի նրանց կյանքը։ Երևի Աշխենը նոր ընտանիք կկազմի, և տղան խորթ հայր կունենա, իսկ դու արդեն հայր ես խորթ զավակի։ Իսկ ինչո՞ւ խորթ... Սատանան տանի, հարազատների միացումը, ավա՜ղ, տեղի չունեցավ, ու գնալով ավելի է աղոտանում այդ միացման հեռանկարը։ Գնա՜ց, տարա՜վ, մի՞թե անվերադարձ։ Հանգցրե՞ց լույսը, թե՞ նոր լույս վառելու հույսեր կան, գոնե՝ աղոտ մի հեռանկար։ Եվ ո՞ւմ համար կլինի այդ լույսը, ո՞վ պիտի վառի...

Վերջ առաջին մասի



Գյանքի ճամփաներին

ՄԱՐԴՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆԸ

Հարևանս հետաքրքիր մարդ է։ Ամեն ինչում։ Մանավանդ՝ իր անսպասելի «գյուտերով»։

...Պատշգամբում նստած նարդի ենք խաղում։ Զառը որ թարսվեց, էլ պրծավ, ոչինչ անել չես կարող։ Հարևանիս վիճակը լավ չէ։

— Ախպե՛ր, քեզ հավաքիր, հալդ հալ չի։

— Աննամուս զառի հետ գլուխ դնել չի լինի։

Հիմա էլ փակել եմ բոլոր տները, հակառակորդիս անգործության մատնել։

Իսկ ինքը, տհաճ դադարից օգտվելով՝ դիմացի շենքին է նայում։ Բարձրահարկ նորակառույց է, ընդարձակ դուռ-լուսամուտներով։ Երևում է, որ ճարտարապետին ու շինարարներին առանձնապես հետաքրքրել է լույսի առատությունը շենքում։

Մեկ էլ հարևանս թե.

— Տեսնո՞ւմ ես էդ անշնորհքներին, վերևի հարկի պատուհանները բաց են թողել, երեք մետրից ավելի բարձրություն ունեն, և գիտե՞ս, ամեն մի պատուհանը մի ապակի է։ Սիրուն է, չէ՞։

— Սիրուն է, ոչինչ չես ասի։

— Իսկ ինչո՞ւ չեն փակել, բա որ երևանյան քամին վեր կենա, կոտրվելու վտանգ չի՞ առաջանա։

— Երևի,— ասում եմ,— էդ բարձրությունից որ ընկնի, ներքևում էլ վնաս կտա, բակում մարդիկ են աշխատում։

— Բա, տեսնո՞ւմ ես, դե՛, արի, հանգիստ խաղա։

— Դե՛, լավ, հո էդ ապակու հոգսը քեզ չե՞ն տվել, հերն էլ անիծած, դու խաղդ խաղա։

Հարևանս թարս-թարս նայեց ինձ, հետո անտրամադիր նետեց զառը, «դու բիր»։

— Նորից տարվեցիր։

— Գլուխը քարը։ Քամի է բարձրանում, դա է վատը, իսկ էդ աննամուսները...

Մեկ էլ թափով վեր կացավ տեղից.

— Դու մի թեթև դասամիջոց արա, ես հիմա կգամ։

Ասելն ու գնալը մեկ եղավ։

Սկսեցի թերթ կարդալ։ Նարդին մնաց։

Այս ի՜նչ հետաքրքիր հոդված է, սիրտը մարզելու, սրտի աշխատանքը կանոնավորելու մասին է. լավ էլ վերնագիր են դրել՝ «Խնայել սիրտը, հավատալ սրտին»։

Մեկ էլ հարևանս ներս մտավ քրտինքի մեջ մտած, բայց բոլորովին ուրիշ տրամադրությամբ։

Այս ե՞րբ հասցրեց հինգ հարկ իջնել, մի հարյուր մետր գնալ, վերադառնալ, նորից բարձրանալ։ Ինչպես էլ ժպտում է։

— Դե՛, հիմա արի խաղանք,— ասում է,— թե տանե՞ս։

— Ի՞նչ եղավ քեզ, այ մարդ, թե՞ զառերը փոխեցիր։

— Տրամադրությունս փոխվեց, ուրիշ բան չկա։ Նայիր, պատուհանները փակել տվեցի։

Իսկապես։

— Մի լավ շշպռեցի։ Հինգ անգամ ներողություն խնդրեցին, տաս անգամ՝ շնորհակալություն ասացին։

— Հետաքրքիր մարդ ես, ատված վկա։

— Չէ՛, քո զառն է հետաքրքիր, ինչ պետք չի, էն է տալիս։

— Նայած խաղացողին։

— Հա՞։ Հիմա կտեսնենք։

Եվ, զարմանք բան, հարևանիս զառը փոխվեց։ Հիմա էլ նա է ինձ ձեռ առնում։

— Տարվում ես, ախպերս, քեզ հավաքիր։

Այո՛, հետաքրքիր է մարդը։

ԱՅ ՕՐՀՆՎԻ ՆՐԱ ՊԱՊԸ...

Մտամոլոր անցնում եմ փողոցով։ Ուսերիս ծանրացել է մի տխուր տրամադրություն։

Ծանր է, երբ տանը հիվանդ ունես։ Կրկնակի ծանր է, երբ հիվանդությունը համառում, չի ուզում դուրս գալ ձեր տնից. օրեր, ամիսներ, աստված հեռու տանի, երբեմն նաև՝ տարիներ։ Իսկ եթե հիվանդը մի քիչ էլ տզտզան է, իր ցավը մենակ տանելու շնորհք չունի...

Ամեն անգամ տուն ես մտնում ծանր սրտով. նորից գանգատ ու տնքոց պիտի լսես։ Ամեն օր հիվանդանոց գնացողի տխուր տրամադրությունն է քեզ հետապնդում։ Իսկ ինչպե՞ս են անում բժիշկները, հիվանդանոցի աշխատողները, ամեն օր ու ժամ, ամբողջ կյանքում՝ հիվանդների հետ են։ Թող որ իրենց հարազատը չէ հիվանդը, բայց մարդ է, տանջվում է, հաճախ էլ հիվանդությունն է հաղթող դուրս գալիս, և այդ բոլորը բժշկի, կամ քրոջ աչքի առաջ, նրանց անմիջական ներկայությամբ։ Ու մի օր չէ, երկու օր չէ. մի դեպք չէ, երկուսը չէ։ Շա՞տ է ծանր...

Հայրս է հիվանդը։ Ջահել չէ արդեն, ութսունի հետ «յախաբողազ» է եղել, ինչպես ինքն է սիրում կրկնել տխուր կատակով։ «Հայ-հայը գնացել, վայ-վայն է մնացել»,— սա էլ մայրս է լրացնում, որ ամուսնուց փոքր է մի հինգ տարով միայն, բայց զարմանալի առողջ ու կենսուրախ կին է։

Ուտող-խմող մարդ է հայրս, միայն ամեն ինչ տեղը-տեղին, առանց «չափի համը հանելու», այս էլ նրա սիրած խոսքն է։ Չեմ հիշում, թե նա ե՞րբ է առողջությունից բողոքել. ծիծաղում էր ուրիշների գանգատների վրա.

— Էդ գլխացա՞վն ինչ քար ու քացախ է, կամ՝ արյան ճնշո՞ւմս որն է, ինքդ ճնշիր դրան, բա դու տղամարդ չե՞ս...

Հիմա ցավերն իրեն ճնշում են, «տղամարդությունը» նահանջում է օր-օրի, էլ առաջվա նման չի ասում՝ մի օր եկել ենք էս աշխարհը, մի օր էլ կգնանք, առաջ հեռու էր այդ գնալու օրը, հիմա երևի շատ է մոտեցել...

Մեկ սրտից է գանգատվում, մեկ երիկամից, հաճախ էլ էդ «ոչ ու փուչ» ստամոքսից։ Լալկան մարդ չէ ընդհանրապես, բայց երևի տարիներն իրենցն առնում են. «մաղը ծրո-

վել է» հատկապես մի ծանոթ բժշկի այն զգուշացումից հետո, թե խմիչքից պետք է հեռու մնաս։ Այդ բանը շատ է ազդել նրա վրա, և խմիչքի հաճույքից զրկվելու վախը չէ, որ սարսափեցնում է նրան, այլ տղամարդկության վերջին բրոնելատեղի կորուստը։ «Մարդ օրական մի բաժակ օղի խմի, կամ երկու բաժակ գինի, էն էլ հարամ անեն գլխին, բա դա անելու բա՞ն ա, չէ՞, մեռնելը սրանից լավ ա...»։

Բողոքը բողոք, բայց բժշկի մոտ չի գնում, չի էլ հավատում նրանց. «դեղով ապրելն էլ մի մարդկություն չի»։

— Այ հեր, բա ի՞նչ անենք,— այսօր է՛լ չհամբերեցի ես,— ոչ բուժվում ես, ոչ էլ մեզ հանգիստ ես տալիս, մենք էլ մեղք ենք, չէ՞։

Մի տեսակ եղավ հայրս, երևի խոսքս դիպավ սրտին։

— Տղա ջան, դու էլ ես ճիշտ ասում, տեսնում եմ, որ ձեր գահլան էլ եմ տարել, ի՞նչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ ես...

Տնից դուրս եկա ծանր սրտով, ինչո՞ւ պոռթկացի, նրա ցավը քիչ է, մի բան էլ ես ավելացրի, ինչո՞ւ արեցի այս անշնորհքությունը։

Մտամոլոր չափչփում եմ փողոցները, ուր եմ գնում, ինքս էլ չգիտեմ։ Եթե կարողանայի մի անվանի պրոֆեսորի տուն տանել։ Անուն ունեցող մարդու նկատմամբ մի առանձին հարգանք ունի հայրս, գուցե նրան կհավատա՞ր։ Բայց ո՞ւմ դիմեմ, և ի՞նչ օգուտ դրանից, քանիսի հետ խոսել եմ, հեռակա կարգով նույն բանն են ասել՝ ծերունական հիվանդություն է, ավելի շատ կասկած ու նաև վախ մոտեցող «վայվայից»։

Ու հանկարծ կողքիս մի հացի մեքենա կանգնեց։ Վարորդը ժպտում է։ Իմ հին ընկերներից է, միասին ենք ավարտել տեխնիկումը, վաղուց չենք հանդիպել։

— Ուրախ եմ, որ քեզ տեսնում եմ, միայն ինչո՞ւ են նոթերդ այդպես կախ, հիվա՞նդ ես,— հարցնում է Հարությունը։

— Երանի չէր ե՛ս հիվանդ լինեի։

— Ուրեմն հիվանդ ունես։ Ինչո՞վ կարող եմ օգնել։

— Եթե բժիշկ լինեիր և պրոֆեսոր, գուցե և կարողանայիր օգնել, իսկ դու...

— Ընդամենը մի վարորդ,— միայն խնդրում եմ չմոռանաս՝ հացի մեքենայի վարորդ։ Սուրբ գործով եմ զբաղվում։

— Խոնարհվում եմ այդ սրբության առաջ,— կատակով էի ուզում ասել, լուրջ ստացվեց։

— Հիշո՞ւմ ես, ինչպես փախանք բժշկությունից, ափսո՞ս, հիմա հո քեզ օգտակար կլինեի... Նորաթուխ ուսանող Սահակը մեզ տարավ անատոմիկում, և սարսափելի խրտնեցինք ծանր օդից ու տխուր տեսարանից։ Հիմա էլ որ հիշում եմ, մազերս փշաքաղվում են... Սահակն արդեն բժշկական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր։

— Իսկապե՞ս, ա՛յ, նա ինձ կօգներ, ինչպե՞ս գտնենք նրան։

— Գիտական գործուղման է գնացել, Չեխոսլովակիա։

— Ափսո՞ս, բա ի՞նչ անենք։

Ու համառոտ պատմեցի Հարությունին հորս բողոքների մասին։

— Որքան հիշում եմ, ես ձեր տանը չեմ եղել,— Հարությունն ուզում է իր հիշողությո՞ւնն ստուգել։

— Իմ անշնորհքությունն է։

— Դրա համար չեմ ասում։ Հայրդ ինձ չի ճանաչում, ճի՞շտ է։

— Հետո՞,— ինչ-որ կասկած մտավ սիրտս։

— Հետո այն, որ գնում ենք ձեզ մոտ, ես փոխարինում եմ պրոֆեսոր Սահակ Սահակյանին։

Մի՞թե Հարությունը լուրջ է խոսում։

— Վերջ տուր կատակներիդ. պե՞տք է ծերուկին նոր վիշտ պատճառել։

— Իսկ ես, ընդհակառակը, ուզում եմ թեթևացնել նրա վիշտը։ Նստիր մեքենան. ամենաշատը ալրոտվել կարող ես։

— Լսի՛ր, Հարություն, որքան հիշում եմ հայրս մի անգամ հանրակացարան էր եկել, այն ժամանակ մենք դեռ գյուղում էինք ապրում, և, հավանաբար, քեզ էլ է տեսել։

— Հետո՞, քանի՞ տարի է անցել, ես որ չեմ հիշում, ինքը կհիշի՞։ Իզուր ես անհանգստանում։

— Մեծերի հիշողությունը հաճախ մերից պայծառ է մնում, հանկարծ չհիշի...

— Նստի՛ր, ասացի, պետք է լսել բժշկին և վերջ։

Ստիպված ենթարկվեցի։ Գնացինք։ Մեքենան կանգնեց։ Ինք մեր դռնից քիչ հեռու։ Մինչև ես կիջնեի աջ դռնից ու կպտտվեի մեքենայի քթամասի մոտով, տեսնեմ ձախից իջնում է մի լիքը երիտասարդ՝ ճերմակ խալաթով ու գլխարկով։

— Այ տղա, դու հո մաքուր բժիշկ ես։

— Խնդրում եմ ճիշտ արտահայտվել, հարգելիս,— սա Սահակի սիրած բառն է,— տղաս ո՞րն է, պրոֆեսոր, չմոռանաք՝ պրոֆեսոր Սահակյան։

— Այդ սպիտակ հանգամանքնե՞րը որտեղից ճարեցիր։

— Չմոռանաք, հարգելիս, որ ես հացի հետ գործ ունեմ... դե՛, ինձ առաջնորդեցեք ձեր հիվանդի մոտ։

Հայրս մի անտարբեր հայացքով չափեց մեկ «բժշկին», մեկ ինձ, բայց զգում եմ ինչ-որ լավ բանի է սպասում։

— Հայրիկ, պրոֆեսոր Սահակ Սահակյանն է,— դե՛, որ բեմ եմ բարձրացել, մտածում եմ, պետք է կարգին դերասանություն անել,— շատ է զբաղված, բայց մի կերպ ժամանակ ճարեց քեզ այցելելու։

— Շնորհակալ եմ,— նույն թերահավատ հայացքը։

— Ապա՛, հարգելիս, տեսնեմ ձեր լեզուն,— բժիշկը մտավ իր իրավունքների մեջ,— այդպես, լա՛վ է։ Բացեք բերանը, լայն, ավելի լայն, ասացեք՝ ա՛-ա՛... Մաքուր է կոկորդը, տաքությո՞ւն, ձեռքը դրեց ճակատին,— չունեք։ Հա՞զ, փոշտո՞ց։

Ես հազիվ էի ինձ պահում, որ չփոթկացնեմ, լավ է հայրս ինձ չի նայում, թե չէ գլխի կընկնի... Ուրեմն ճիշտ եմ լսել, որ էս Հարությունն իրենց ինքնագործ խմբում անվանի դերասանի համբավ ունի, անաստվածը մաքուր վաստակավոր է...

— Հազ մեկ-մեկ լինում է, պրոֆեսոր,— ինչո՞ւ այդպես մեղավոր տոնով է խոսում հայրս,— հա, հազում եմ մեկ-մեկ, դե՛, քանի տարվա ծխող եմ, բա էդքան ծխին բողազ կդիմանա՞։

— Իսկ ի՞նչ եք ծխում, երևի ծխամորճ. Շամշադինի էլ կատաղած թութուն։ Չեղավ, ա՛յ, դա լավ չէ... խմելու հե՞տ ինչպես եք, քիչ-մի՞չ, բայց ամեն օր, լավ է, լավ է։

Հայրս զարմացած բժշկին է նայում, դեռ գլխի չի ընկել, թե ինչն է լավ, քիչ-մի՞նը, թե՞ ամեն օր խմելը։

«Պրոֆեսորն» սկսեց հայրիկի ստամոքսը տնտղել։

— Չի՞ ցավում, մի քի՞չ, դատարկ բան է,— մատների օգնությամբ թիկունքին թխկ-թխկացրեց մի երկու անգամ։

— Զանգակի ձայն ունի, հայրիկ, յոթանասուն տարեկան կա՞ք։

— Վախենո՞ւմ ես ութսուն ասես, բժիշկ։

— Վախենալու հարց չկա, հարգելիս, պարզապես առողջ օրգանիզմ ունեք։

— Ջահել ժամանակ, որ իմանայիր ինչ տղամարդ էր, առողջ, զոչաղ,— մայրս է միջամտում խոսակցությանը։

— Կնիկ, բա սիրուն չէի՞, հենց հերս ձեր դուռը եկավ, աստված հոգին լուսավորի, վռազ համաձայնվեցին ձերոնք։

— Դե՛, լավ, շաշ-շաշ մի խոսա, ամոթ է։

— Եվ այսպես, հարգելիս...

Հայրս անհամբեր ընդհատեց նրան.

— Պրոֆեսոր, բա մի չես հարցնում, թե ի՞նչդ է ցավում, գոնե...

— Իսկ ինչո՞ւ հարցնեմ, երբ առանց ձեր ասելու էլ տեսնում եմ, լսում եմ, հասկանում եմ... Այսպես, հիմա կընդունեք այս դեղը, ֆրանսիական նորագույն պրեպարատ է,— ու գրպանից հանեց թղթի մեջ փաթաթած ինչ-որ սպիտակ փոշի։— Մի՞թե ալյուր է,— անցավ մտքովս... մի պտղունց խառնեց կես բաժակ սառը ջրի մեջ ու տվեց հիվանդին։— Հիմա ձեր գլխացավն ու սրտի ծակոցները կանցնեն։ Կես ժամ հետո կխմեք հիսուն գրամ օղի, լավ կլինի՝ հոնից պատրաստած, շամշադինցու տանը պետք է, որ հոնի օղի ճարվի։

— Էդ որտեղացի լինե՞ս ոնց իմացար, պրոֆեսոր,— հայրս հաճելի զարմացած է։

— Հարգելիս, մի՞թե դրա համար մեծ խելք է պետք. խոսելուց, լեզվից, բա շամշադինցին ու ղարաբաղցին կամ լենինականցին իրարից չե՞ն ջոկվում հենց խոսելով, իսկ ես գործ ունեմ ամեն տեսակ հիվանդի հետ։ Այո՛, մի բաժակ օղի կես ժամ հետո, դրանից մի տասնհինգ րոպե հետո կարդին կուտեք. այսօր ի՞նչ եք կերել, հարգելիս։

— Ախորժակ ունե՞մ, որ ուտեմ։

— Անաստվածը համարյա անոթի է,— բողոքեց մայրս։

— Ոչինչ, կբացվեն նաև ձեր ախորժակի դռները՝ կուտեք, ինչ սիրտներդ ուզի։ Հետո դուրս կգաք մաքուր օդի, մի ժամի չափ, հետո կգաք, կհանգստանաք։ Երեկոյան քնելուց առաջ էլ մի բաժակ մածուն կխմեք, մի կես ժամ էլ ման կգաք մաքուր օդում։ Այդքանն այսօր։ Իսկ ընդհանրապես ձեզ թույլատրում եմ օրական երկու բաժակ օղի խմել, մեկը՝ նախաճաշից, մեկը՝ ճաշից հետո։ Դուք ոչ մի հիվանդություն չունեք, ձեզ լավ տրամադրություն է պետք։ Եվ լավ կլինի ծխելը պակասեցնեք, չեմ ասում թողեք, դա դժվար կլինի ձեզ համար. երկուսի փոխարեն մի հատ ծխեցեք, գիշերը հո չե՞ք ծխում, լավ է։ Ես համոզված եմ, որ ամեն ինչ լավ կլինի, անհրաժեշտության դեպքում ես նորից կգամ, հաջողություն եմ ցանկանում։

Վաստակաշատ դերասանի նման գլուխ տվեց ծնողներիս ու դուրս գնաց շտապ։

Հայրս ուզում էր բան հարցնել, գուցե և շնորհակալություն հայտնել, չհացրեց։

Երբ Հարությունին ճանապարհելուց հետո տուն վերադարձա, հորս դեմքին մի զարմանալի փոփոխություն նկատեցի, վաղուց մոռացված մի լուսավոր ժպիտ։

— Այ տղա, էս աստվածային բժշկին որտեղի՞ց ճարեցիր. այ օրհնվի դրա պապը...

— Բա բժշկին հավատացող չէիր,— բողոքի առիթը բաց չթողեց մայրս։

— Կնի՛կ, սա ուրիշ բան էր, սրան ո՞նց կարաս չհավատալ։ Տեսա՞ք, չհարցրեց էլ, թե որտեղդ է ցավում, ինչ գանգատ ունես, ամեն բան հասկանում է մարդը։ Գլուխս թեթևացավ, աստված վկա, էդ ի՞նչ դեղ էր, որ տվեց ինձ, այ տղա, բա ինչո՞ւ չուզեցինք մի քիչ, հետո ի՞նչ պիտի խմեմ։

— Հոնի արաղ, բա չասա՞ց բժիշկը,— հեգնեց մայրս։

— Թագուհի՛, քեզ կարգին պահիր, բաժակս էլ լցրու, կես ժամը մոտենում է։ Շամշադին էլ խաբար արա ձերոնց, թող հատուկ պատրաստեն մի քանի լիտր...

— Հայրի՛կ,— ասացի,— իսկ դու բժշկի խորհուրդը ծխելը պակասեցնելու մասին չմոռանաս, հաղը քեզ շատ է անհանգստացնում։

— Չեմ մոռանա, էսա երդվեցի իմ ազիզ տղայի արևով, որ քիչ եմ ծխելու, շատ քիչ, բա էդպիսի մարդու խոսքը գետնին կգցե՞ն... Ա՛յ տղա, մի բան էլ ասեմ, չզարմանաս, էդ բժշկից ոնց որ բենզինի հոտ էր գալիս։

Ականջներս տաքացան միանգամից, երևի դեմքիս գույնն էլ փոխվեց։ Դե՛, փորձիր տակից դուրս գալ։

— Ե՛ս պրոֆեսորին բերեցի մի լուրջ վիրահատությունից հետո, ձեռքերը բենզինով մաքրեց...

Ի՞նչ ծանր բան է սուտ խոսելը։

— Կարող է, տղա ջան, պատահում է։

Մեկին որ հավատացիր, էլ նրա նկատմամբ կասկածի տեղ կմնա՞ քո սրտում։

Էդ օրվանից փոխվել է հորս տրամադրությունը, գույնն էլ տեղն է եկել, ախորժակից էլ բողոք չունի։

Իսկ թե ինչքան է օրհնում «պրոֆեսոր» Սահակին։

— Ա՛յ, բժիշկ, այ, իրա գործն իմացող մարդ։ Ա՛յ օրհնվի նրա պապը, հա՞...

ՍՈՎԱՓԻՆ

Ամենից շուտ նա էր գալիս լողափ։ Վերջին գնացողն էլ նա էր։ Ու միշտ՝ մոր հետ։ Եվ ինչպես նման էին իրար մայր ու աղջիկ, ասես նույն մարդուն տեսնում ես և՛ պատանի, և՛ միջին տարիքում։

Հազիվ տասնհինգ-տասնվեց տարեկան լիներ Արփիկը, չնայած նրա ծանրակշռությունն ու դեմքի լուրջ արտահայտությունը ավելի մեծ ենթադրելու հիմքեր էին տալիս։

Խոշոր ու արտահայտիչ աչքեր, սև ու լայն հոնքեր, ճակատի աջ անկյունը ծածկող փարթամ մազափունջ, կանոնավոր քիթ ու փոքրիկ բերան, փոքր-ինչ շառագունած այտեր ու զարմանալի թափանցիկ մաշկ. ասես կաթի ու վարդաջրի խառնուրդով շփել-փայլեցրել են։ Այդ դեմքին միայն ժպիտն էր պակասում, իսկ նա հազվագյուտ էր ժպտում, և ի՞նչ թախիծով էր շաղախված նրա ժպիտը...

Նստում էր անշարժ սունկ-հովանու տակ, ծնկներին՝ մոր

ծաղկավոր խալաթը, ու ժամերով կամ գիրք էր կարդում խորասուզված, կամ նայում էր ծովի անսահմանությանը։

Մեկ էլ կտեսնեիր ջուրն է նետվել արդեն ու հեռանում է ափից ձեռքերի ճարպիկ շարժումներով։ Լավ էր լողում, թեթև, անկաշկանդ։ Եվ միշտ աշխատում էր մարդկանցից հեռու գնալ, մի համեմատաբար խաղաղ անկյուն, ու նորից երկար-երկար մնում էր ինքն իր հետ։

Խուսափում էր մանավանդ իր հասակակիցներից՝ տղա թե աղջիկ, միևնույն էր։ Միշտ մենակ էր։ Մայրն անգամ չէր խանգարում նրան, չէր մոտենում, միայն հեռվից հրսկում էր մի թևաթափ հայացքով։

Արփիկի ջրից դուրս գալն էլ դժվար էր նկատել, մեկ էլ տեսար արդեն հովանու տակ է, և անպայման՝ ծաղկավոր խալաթը ծնկներին փռած։

Մի անգամ առավոտյան շուտ էի զնացել ծովափ, և ինձ հաջողվեց տեսնել աղջկա հանվելն ու ջուր մտնելը։ Երանի՜ չտեսնեի...

Հենակներով էր քայլում Արփիկը, դժվարությամբ, և ամեն մի քայլի հետ թեքվում էր մեկ աջ, մեկ ձախ։ Ծանր էր նայելը։

Երբ ես հասա ծովափ, Արփիկը մոր օգնությամբ իր հենակների կապերն էր արձակում։ Հետո հանեց հագի գծավոր խալաթը, երկնագույն լողազգեստի մեջ էր։ Գոտկատեղից վերև՝ ասես մի անթերի քանդակ, փակ ոտքերը... ոտքերը չկային։ Հենց նստած դիրքով, ձեռքերի օգնությամբ, հասավ լողափ, նետվեց ջուրը և արագ հեռացավ ափից։ Երևի միակ տեղն էր, ուր նա իրեն լավ էր զգում. ոչ ոք չէր տեսնում նրա ահավոր պակասությունը, ջուրը ծածկում էր կորած ոտքերը...

Արփիկի մայրը տառապանքով պատմեց դժբախտ պատահարի մանրամասնությունները։ Հայրը մանկապարտեզից տուն է բերում չորսամյա աղջկան։ Ճանապարհին խաչմերուկ կա և տրամվայի գիծ է անցնում։ Երեխան հեռվում մի բրդոտ շնիկ է տեսնում ու վազում է գլխապտուտ, բռնել, հետը խաղալ է ուզում։ Հայրը պոկվում է տեղից, երեխային բռնել է փորձում։

Եվ երկուսով ընկնում են տրամվայի տակ։ Հոր համար

դա կյանքի վերջին օրն է դառնում. գծերի վրա մնում են երեխայի ոտքերը...

Քանի փոքր էր Արփիկը, իր դժբախտ վիճակը չէր գիտակցում, բայց ահա երկու-երեք տարի է, օր-օրի վրա ինքնամփոփ է դառնում, խուսափում է մարդկանցից։ Նույնիսկ դպրոց այլևս չի գնում, չնայած լավ սովորող է, պարապում է տանը, և միայն քննությունների համար է դպրոց մտնում։ Մի ընկերուհի ունի, հարևանի աղջիկն է, նույն դասարանից։ Նա է գնում-գալիս։ Այսպես ապրում են մայր ու աղջիկ, մարդկանց մեջ, բայց և ինչ-որ չափով մարդկանցից կտրված։

Ես պետք է խոսեի Արփիկի հետ, բժշկի, ոչ, առաջին հերթին՝ հոր իրավունքով, գոնե մի քանի րոպեով փարատեի նրա մենակ տխրությունը։

Երբ շատերն արդեն գնացել էին ճաշի ու լողափին քիչ մարդ էր մնացել, ես, խոստովանում եմ, փոքր-ինչ անհամարձակ մոտեցա աղջկան. նա խորասուզված գիրք էր կարդում։

— Կարելի՞ է, Արփիկ։

Զարմացած նայեց ինձ, անշտապ ծալեց գիրքը։

— Խնդրեմ։

Ես նստեցի նրա դիմացը, բացակայող ոտքերի տեղը...

— Ես մասնագիտությամբ բժիշկ եմ։

— Միևնույն է, ինձ ոչնչով օգնել չեք կարող։

Այնպիսի հուսահատ համոզմունք կա նրա խոսքի մեջ։

— Ես դրա համար չեմ քեզ մոտեցել, ոչ էլ ինչ-որ հուսադրող խոսքեր պիտի ասեմ։

— Այդ դեպքում ես ձեզ պարզապես լսել չէի ցանկանա։— Աղջկա ձայնի մեջ մի զարմանալի շորություն կա։

— Ես ուզում եմ քեզ մեղադրանքի խոսքեր ասել։

— Այ, դա ինձ դուր է գալիս,— Արփիկը հաճելի զարմացած էր։

— Ինչո՞ւ ես այդպես առանձնանում մարդկանցից, մի՞թե դու նրանց ատում ես, տեսնել չես ուզում։

— Իսկ ինչո՞ւ դուք այդ եզրակացությանը եկաք։

— Քո մենակ մնալու ձգտումն է ինձ այդ բանն ասում. ինչո՞ւ չես մոտենում, խառնվում մարդկանց, ղրույցի բռնը-

վում նրանց հետ, ախր մենակությունը մարդուն սպանել կարող է։

— Ճիշտն ասած ես ավելի լուրջ մեղադրանքի էի սպասում.— Արփիկն իր հիասթափությունը թաքցնելու փորձ անգամ չէր անում։

— Իսկ իմ կարծիքով ես բավական լուրջ մեղադրանք եմ ներկայացնում քեզ. մի կողմ ես քաշվել, ոչ մեկի հետ չես խոսում, չես շփվում, և ստացվում է այն տպավորությունը, որ նպատակ ունես քո դժբախտությունն ընդգծելու, ավելի ցցուն դարձնելու, որպեսզի շրջապատիդ մարդիկ խղճան քեզ։

— Քեռի, ինչե՞ր եք ասում,— Արփիկը հուզմունքից ավելի շառագունեց,— ես ինձ ամենադժբախտ մարդն եմ զգում հատկապես այն պահերին, երբ փորձում են ցավակցել կամ մխիթարել ինձ։ Իսկ մարդկանց հետ շփվելու, ինչպես և ուրախանալու համար տրամադրություն է պետք։

— Իսկ գիտե՞ս, աղջիկս, որ տրամադրություն ունենալն էլ մարդու ձեռքին է, ոչ մի բան ինքն իրեն չի գալիս, պետք է բերել ցանկացածը՝ անկոտրում հավատով, համառությամբ։

— Այդ համառությունն է պահում ինձ, մեկ էլ՝ մորս ազնիվ տառապանքը, թե չէ հիմա վաղուց...

— Ես իմացա, որ դու լավ ես սովորում, արդեն հասել ես իններորդ դասարան, շատ ես օգնում մորդ, կարգին կար ես անում, կարդում ես շատ. այդ բոլորը լավ է, քեզ միայն մի բան է պակասում։

Արփիկն սպասողական հայացքը հառեց դեմքիս։

— Լավ տրամադրություն, իսկ դա շա՞տ է պետք, առանց դրան դժվար է ապրել։

Աղջկա դեմքով նորից սահեց հիասթափության ժպիտը։

— Ասում եք՝ միայն լավ տրամադրությունն է պակասում... Դուք շատ բարի եք, քեռի բժիշկ, կներեք, բայց դա էլ բանի նման չէ։

— Գուցե և դու իրավացի ես, աղջիկս, բայց և այնպես չափից ավելի բարին անգամ ամենափոքր չարից լավ է։

— Երևի, չգիտեմ։

— Ես քո հասակին աղջիկ ունեմ, Արփիկ, Սրբուհի է նրա անունը։

— Երևի գեղեցիկ է նա, առողջ, երջանիկ... Չկարծեք թե ես նախանձում եմ նրան, աստված վկա, ես ուրախ եմ նրա համար։

— Դու լավ սիրտ ունես, Արփիկ, իսկ դա մեր օրերում ամենամեծ հարստությունն է... Ես իմ աղջկա մասին հիշեցի, որպեսզի ասեմ, որ քեզ հետ խոսում եմ հոր իրավունքով։

Արփիկը հանկարծ այլայլվեց, շնչառությունը նկատելի արագացավ։

— Ես խնդրում եմ հոր մասին այլևս չխոսել։— Նրա ձայնի մեջ մի այնպիսի պաղատանք կար։

— Ես հասկանում եմ քեզ, Արփիկ, հայրդ փաստորեն...

— Այո՛, նա գնաց իմ պատճառով, և ես ինձ այդ բանը ներել չեմ կարողանում։

— Բայց դու փոքր ես եղել այն ժամանակ, երեխան մնում է երեխա, և նրան մեղադրել չես կարող։

— Այդ հիմար երեխան պատճառ է դարձել մի առողջ ու կենսուրախ մարդու կործանման, երեսնամյա մի հրաշալի մարդու, դժբախտացրել է նրա կնոջը... Խեղճ մայրս ի՞նչ տառապանքներ է կրել իմ ձեռքին։ Ես ապրելու իրավունք ունե՞մ... Գոնե ինձ էլ տաներ իր հետ, հորս միակ մեղքը թերևս այս է...

— Չեղավ, Արփիկ, այդ մեկը բոլորովին չեղավ, և դա քեզ չի սազում, ազնիվ խոսք։ Իր բոլոր դառնություններով հանդերձ կյանքն այնքան քաղցր է։ Դու կարող ես կարելու մեջ մասնագիտանալ, կամ տեխնիկում ավարտել և դեղագործ դառնալ։ Այնքան հարմար մասնագիտություններ կան քեզ համար։ Հիշիր Օստրովսկուն, Մերեսևին։

— Ձեռքիս գիրքը հենց այդ է, «Պատմվածք իսկական մարդու մասին». դժվար է այդպիսին լինելը, շա՞տ է դժվար, մանավանդ եթե խիղճդ հանգիստ չէ։

— Հեշտ չէ, համաձայն եմ քեզ հետ, բայց և անհնարին չէ։ Իսկ քո խիղճը մաքուր է, աստված վկա, դու իզուր ես քեզ տանջում։ Հորդ ազնիվ հիշատակն էլ պահանջում է քեզնից հավատալ և տոկալ։

— Ես այնպես եմ սիրում բժշկի մասնագիտությունը։

— Կարող ես և բժիշկ դառնալ, լաբորատորիայում աշխատել. ցանկության դեպքում անհնարին ոչինչ չկա։ Միայն, նորից եմ ասում, տրամադրություն է պետք և համառ վճռականություն։

— Ես հույս ունեմ, որ ինձ մոտ երկրորդից կճարվի...

— Մորդ համար թեկուզ դու պարտավոր ես ապրել, ուրախացնել նրան։

— Նրա համար էլ ապրում եմ ես, միայն ուրախացնել չեմ կարողանում։ Եթե իմանայիք, թե ինչեր է քաշել խեղճ մայրս։ Հաջող առաջարկություններ են եղել, նորից չի ամուսնացել, դե, ինձ ոչ հետը տանել, ոչ թողնել կարող էր. իր ամբողջ կյանքն ինձ է նվիրել, շալակած տարել է դպրոց — բերել, ես ինչպե՞ս կարող եմ... Մի անգամ, հիշում եմ, գիշերը ինչ-որ շար երազից, իսկ ես տխուր երազներ շատ եմ տեսնում, արթնացա, տեսնեմ մայրս, մոտս նստած, անթարթ հայացքով ինձ է նայում, իսկ արցունքները գլորվում են աչքերից։ Երևի նրա համար դա սովորություն է եղել, կարծես ցերեկը քիչ էր տանջվում։ Իրար փաթաթվեցինք ու երկար լաց էինք լինում...

Մոտեցավ Արփիկի մայրը, քառասունը հազիվ լրացած, բայց արդեն ականջների վրա ճերմակ խոպոպներ վաստակած տիկին Հայկանուշը։ Երևի շատ էր զարմացել, որ աղջիկն այդքան երկար զրուցում է մի անծանոթ մարդու հետ։

— Գնալու ժամանակն է, Արփիկս։

— Մա՛մ, նստիր մոտս, և արի պայմանավորվենք, գիտե՞ս ինչ։

Մայրը հնազանդ նստեց աղջկա կողքին, գրկեց նրա ուսերը, և գլորվելու պատրաստ արցունքները դուրս սրծան աչք-ակունքներից ու առվակներ կազմեցին ժամանակից շուտ թառամող այտերի վրա։

— Մամ, հենց այդ էլ ասում էի, արի այլևս լաց չլինենք, ո՛չ մի անգամ։

Մայրը, հաճելի զարմացած, թաշկինակը տարավ աչքերին։

Իսկ ես շտապեցի հեռանալ նրանցից. վտանգ կար, որ լացի վարակը կարող է ինձ փոխանցվել...

Հարսանքավորները եկան-հասան Սարոյենց տան մոտ, ու Միանգամից տիրեց մի ճնշող լռություն։

— Արտավազդ, նվագիր, խնդրում եմ։

— Ախր, ինչպե՞ս նվագեմ...

Ինչո՞ւ հաճախ այնպես է ստացվում, որ մարդուս ցանկություններն ու հնարավորությունները անխիղճ հակասության մեջ են մտնում իրար հետ, և այդ երկուսի հաշտությունը դառնում է անհնարին մի բան...

Սարոյի եղբոր տղան պիտի ամուսնանար, իր սիրելի Լեոնիկը, որի մեծանալը կատարվել էր իր աչքի առաջ, որի համար ինքը երկրորդ հայր է եղել։ Ասես իր ուսերին է մեծացել Լեոնիկը, անունն էլ հայրն է դրել, այսինքն Լեոնիկի պապը՝ հեռուներում մնացած իր հայրենի լեռների կարոտը առնելու համար։ Ամեն անգամ, երբ Լեոնիկ էր ասում, պապն իր Սիփան սարն էր հիշում, նրա կատարին թևածող շնկշնկան հովերն էր վայելում։ Քանի տարի է, չկա պապը, գնացել է այս աշխարհից՝ Երկրի կարոտը սրտում։ Իսկ Լեոնիկը... Այդ ե՞րբ մեծացավ։ Կարծես երեկ էր, որ ասում էր «Հոպար ջան, ինձ հոլ կգնե՞ս», «Հոպարս, քաղաքից ինձ համար տետր ու մատիտ բեր», կամ՝ «Հոպար, մամս աղվոր կերակուր է պատրաստել, էսօր մեր տանը ճաշին խնդրում եմ»։ Հոպարը մեռնի՞ քո ջանին... Հիմա բոյ-բուսաթով տղամարդ է դարձել Լեոնիկը. բանակից նոր է վերադարձել, և ինչ մարտական բնութագրով, ու ամուսնանա պիտի, ես քո պսակին մատաղ... Այդ ե՞րբ փեսայացավ. կյանքն այս ինչ արագ է առաջ վազում, թե՞ ինքն է ետ մնում...

Լեոնիկին հարս պիտի բերեին հարևան գյուղից, ճոխ հարսանիք էին ենթադրում։ Արդեն նշանակված էր և ամիսը. նախապատրաստվում էին։ Սարոն ինչպես է երազել ու սպասել այդ օրվան, մտքում քանի անգամ է ղեկավարել այդ մարդաշատ սեղանը, ինչպիսի բարեմաղթություններ է տվել։

Ու հանկարծ Սարոն հիվանդացավ։ Միանգամից, անսպասելի, և շա՜տ ծանր։ Ուղեղում ուռուցք էին ենթադրում։ Ինչպես ցավը մարդուն խեղճացնել կարող է, անողոք ցավը։

Սարոն տառապում էր, ահավոր գլխացավ, հիվանդանոց և վիրահատություն։ Վիճակը մնաց անմխիթարական։ Տուն տեղափոխեցին, սրտերում փրկության մի աղոտ հույս, որը մարում էր օր-օրի վրա, փրկության հեռանկարը դառնում էր անհույս ու անհավատալի։

Իսկ Լեոնիկի հարսանիքի օրը մոտենում էր։ Որոշեցին հետաձգել. դե, ինչպե՞ս կարող էին։ Թեկուզ աղոտ գիտակցությամբ, բայց Սարոն գլխի ընկավ, թե ինչն ինչոց է։ Ու իր մոտ կանչեց եղբորը.

— Եթե երեխայի հարսանիքը հետաձգես, մեր մոր գերեզմանը վկա, շատ կնեղանամ, ուրեմն ես խանգարում եմ իմ սիրելի Լեոնիկի՞ն։ Թող ես էլ հանգիստ խղճով գնամ այս աշխարհից...

— Իսկ ի՞նչ կլինի որ, հարսանիքը հո չփախավ, մի քիչ կուշացնենք, մինչև դու կլավանաս...

— Դու էլ չես հավատում քո խոսքին... Հարսանիքը կանեք, ինչպես որոշել ենք, կգաք մեր պատուհանի տակով կանցնեք ու մի լավ էլ կնվագեք, թող Արտոն նվագի, բարձր ու տևական, որ ես լսեմ, ուրախանամ, ահա իմ վերջին ցանկությունը։

Մի շաբաթ հետո հարսանիքը գլուխ եկավ։ Տխուր հարսանիք էր, աղջկա հայրն էլ Սարոյի մտերիմներից էր։ Հիվանդի անհույս վիճակը ճնշում էր բոլորին։

Հարսանքավորները եկան-հասան Սարոյենց դուռը։ Արտավազդը դժվարանում էր փչել կլարնետը։ Ախր Սարոյի հետ մանկության ընկերներ են, միասին են դպրոց գնացել, մանկավարժական ուսումնարանում սովորել։ Միասին են կռվել Կերչում ու Բալատոնի ափին։ Մի անգամ Սարոն իրեն փրկել է ստույգ մահից ու գերի ընկնելու վտանգից։ Ինչ ծանր օրեր էին, և միակ մխիթարությունը շվին էր, որ անբաժան էր Արտավազդից։ Նվագում էր խրամատի մեջ, խոնավ գետնատներում, նվագում էր հարմար առիթներով, ու նվագը թեթևացնում էր և իրեն, և իր ընկերներին։

— Արտո ջան, մի «Դլե յաման» նվագիր, չէ, երգիր։— Խնդրում էր Սարոն։

Ու Արտոն ասես այդ առաջարկին էր սպասում։

«Արև դիպավ Վանա ծովին,
Դլե յաման...»

Սարոյի աչքերում լճանում էր մի տխուր թախիծ։ Ռուս ընկերները հիացած ու մի քիչ էլ զարմացած լսում էին հոգու խորքերից եկող այդ երգը, ու Լենինգրադի կոնսերվատորիայի նախկին ուսանող Գենադի Սոկոլովն ասում էր.

— Լավն են ձեր երգերը, բայց ինչո՞ւ են այդքան տխուր...

— Արտո, սիրելիս, որ բախտներս բանեց ու հաղթանակով տուն վերադարձանք, իմ հարսանիքին դու ես նվագելու։

— Դե ես ի՞նչ նվագող եմ, Սարո ջան, հարսանիքը իմ բանը չէ։

— Ո՛չ, դու պիտի նվագես ու նաև պիտի երգես, քեզնից լավը ես չունեմ, ախպերս, դու միայն հաջողություն ասա, միայն թե տուն դառնալ կարողանանք։

Բախտը ժպտացել է, երկուսն էլ տուն են վերադարձել՝ վերք ու արյուն թողած մարտի ճամփաներին։ Մարմին է առել Սարոյի երազանքը. Արտավազդը նվագել է նրա հարսանիքին, ի՞նչ ուրախություն էր, ամբողջ գյուղն էր մասնակցում, խոսք ու ծիծաղին, երգ ու պարին վերջ չկար։

Արտոյի կլարնետն էլ այդ օրը հնչում էր արտակարգ զիլ ու քաղցր, այդ նվագի մեջ և հաղթանակի բերկրանք կար, և կարոտի թախիծ և երջանիկ սպասումի դայլայլ։

Այդ ե՞րբ էր, քսանհինգ տարի առաջ։ Ինչ արագ անցավ։

Հիմա Սարոն հիվանդ է ծանր։ Մահը պահմտոցի է խաղում նրա հետ։ Եվ իրեն ստիպում են նվագել նրա պատուհանի տակ. այն Սարոյի, որ քանի անգամ ասել է՝ Լենինիկիս հարսանիքին էլ դու ես նվագելու, ինչ քեֆ ենք անելու, ինչպես եմ պարելու...

— Արտավազդ, նվագիր, խնդրում եմ, կատարիր եղբորս ցանկությունը, ուզում էր ասել՝ վերջին ցանկությունը, լեզուն չպտտվեց։

Ծանր պարտականություն է, երբեք այսքան դժվար չի եղել նրա համար նվագելը, կլարնետն ասես այրում է շրթունքները։ Բայց պետք է նվագել. Սարոն սպասում է դրան։

Ու նվագեց Արտավազդը։ «Դլե յամանն». գուցե և հարսանիքի երգ չէ, բայց Սարոյի սիրած երգն է։ Ամեն անգամ այդ երգը լսելիս լճանում են նրա խոշոր աչքերը։ Հիմա «Դլե յամանը» զիլ հնչում է կլարնետի շուրթերին։ Երգի մեջ

ասես Վանա ծովի ջրերի քշփշոցը կա, չքաղված վարդերի բուրմունքը։

«Վարդ բացվեցավ, քաղել չկա,
Գլև յաման...»

Զիլ հնչյուններն ասես թև-թևի տված թռչում են հեռուները՝ իրենց ստվերի տակ թողնելով սար ու ձոր, դաշտ ու արոտ։

«Արևն ելավ Վանա ծովեն,
Վանա ծովեն, դարդի բովեն,
Յաման, յաման, հե՛յ...»

Երգն ալիք տալով փռվում-ծավալվում էր ու կարոտ թախիծի նման իջնում մարդկանց հոգիներին։

Նվագի ձայնը հասավ Սարոյի թույլ առկայծող գիտակցությանը, ու մի գոհունակության ժպիտ թառեց նրա գունատ դեմքին։ Շրթունքներն ինչ-որ բան էին շշնջում, ի՞նչ էր ասում.

— Թող բախտավո՛ր լինեն...

ՀԵՏՈ ՈՒՇ ԿԼԻՆԻ...

Մայրն անհամբեր սպասում է որդիներին. մի վերջին անգամ ուզում է տեսնել նրանց, կարոտն առնել։ Ինչո՞ւ են այսքան ուշանում։ Մի ամբողջ տարի չի տեսել, գոնե հիմա շտապեին, երբ գիտեն, որ մոտեցել է իրենց մոր վերջին ժամը, մի՞թե նրան մի անգամ էլ կենդանի տեսնելու ցանկություն չունեն։ Գոնե հրաժեշտի համար եռևային, ախր բան ունի նրանց ասելու։ Ինչո՞ւ ու ե՞րբ այդպես անհոգի դարձան, թե՞ հին հիվանդություն է, մոր սիրտը չի նկատել... Այդ ո՞ւմն են քաշել։ Ոչ հայրն էր այդպիսին. գնաց կռիվ, էլ տուն չեկավ, ասված հոգին լուսավորի։ Ինքն էլ ո՞ւմ է վատություն արել, կամ ո՞ւմ նեղ օրին չի հասել։ Հիմա իր նեղ օրերն են սկսվել, և տղաները տարին մի անգամ հազիվ են երևում, մեկ-երկու օրով, շտապ, հյուրի նման թևով տալիս, գնում են։ Հարսներին ե՞րբ է տեսել վերջին անգամ. վախենում է հանդիպի փողոցում ու չճանաչի հանկարծ... Գոնե թոռներին ուղարկեին, մի անգամ տեսներ, շատ է

կարոտել, մանավանդ՝ մեծին. «Տատի ջան, ասում էր, որ հիվանդանաս, ես քեզ էնպես կպահեմ որ...»։

Նեղ օրին անտեր է մնացել։ Չէ՛, ինչո՞ւ, հարևաններն ամեն օր ներս ու դուրս են անում, պակատին հասնում են. թող շեն մնան նրանց օջախները, թող նեղ օրին մենակ չմնան նրանք... Մեկ-մեկ մորաքույրն է օգնության գալիս. բայց նրա արածն ինչ է, իրենից և մեծ է, և հիվանդ, մեկն էլ լինի՝ նրան տիրություն անի։

Իսկ ջահել ժամանակ ի՞նչ ընտանիք ուներ. ամուսինը գլխին կանգնած, տղաները սիրուն-սիրուն մեծանում էին։ Ինչեր է արել նրանց համար, ինչի էր սպասում, ուր հասավ... Բայց ոչինչ, էլի փառք աստծո, տղաներն առողջ են, ամեն մեկն իր ընտանիքն ունի, կարգին ապրում են, թող տերը պինդ պահի նրանց բալաներին...

Ապակիները կապտեցին, հետո սկսեցին պարզել կամաց-կամաց։ Ուրեմն մի օր էլ լուսացավ, հույսով լի մի նոր առավոտ։ Գուցե այսո՞ր կգան, թե չէ էլ ուժ չկա, դժվար թե դիմանա մինչև նոր լուսաբաց։ Է՛հ, էլ ինչ լույս, երբ օրդ առավոտվանից սկսում է մթնել, ծանրանալ...

Վերջապես եկան տղաները։

— Ես ձեր ցա՛վը տանեմ,— շշնջաց մայրը ու երաշտից ճաքճքած շրթունքներով համբուրեց նրանց ճակատը։

— Հիմա որ հանգիստ կարող եմ մեռնել,— մտքումն էր ասում,— միայն ափսոս, որ էլի մենակ են եկել, գոնե Կարինեին բերեին, տատի հետ շատ էր կապված։

Հիվանդի վիճակն ասես թեթևացավ. մի՞թե տղաներին տեսնելուց էր։

Երեկոյան բարեկամ-հարևան գնացին, մայրն ու տղաները մենակ մնացին։ Հիվանդն անհամբեր իր վերջին ժամին էր սպասում. նրան այլևս ոչ մի բան չէր խանգարում ու չէր կաշկանդում։ Բավական է, մտածում էր, տանջեմ երեխաներիս, գնամ, ես էլ հանգստանամ, իրենք էլ...

Տղաների մտահոգությունն այլ աղբյուր ուներ. գիտեին, որ հույս չկա, մայրը պիտի գնա, բժիշկն էլ ասաց։ Թաղման հետ կապված մտահոգություններն էին նրանց անհանգստացնում, մանավանդ՝ ծախսը։ Սովորություններից խուսափել չես կարող, պարտավոր ես ենթարկվել գյուղի կարգ ու

կանոնին, և անասուն պիտի մորթես, և խմիչք դնես սեղան-ներին, և հազար ու մի... Վերջապես աշխատավարձով ապ-րող մարդիկ են։ Մեկը մի քիչ փող է ետ գցել, երեխաներին ամառանոց տանել է ուզում. Կարինեն ավարտում է դրպ-բոցը, պարապելու պիտի տան, ինստիտուտ ընդունվելու հարց կա։ Մյուսը մեքենա առնելու հեռանկարով է ապրում, և ահա, խնդրեմ...

Մայրը քնա՞ծ է. շնչառությունն անհամաչափ է, բայց աչ-քերը փակ են, ծանր հիվանդի ընդմիջվող քուն։ Տղաները քիչ հեռու նստած խոսում են ցածրաձայն.

— Ահագին ծախս ունենք,— ամառանոց գնացողն է խո-սում։

— Էլ մի ասա, էս նեղ ժամանակ, մեքենայիս հերթն էլ մոտենում է։

— Ես, գիտե՞ս, ամեն ամիս երեսուն ռուբլի էի ուղարկում, դա քիչ փող չէ։

— Դե՛, ես էլ՝ շաքար ու քաղցրավենիք, մեկ-մեկ՝ տանը հագնելու շուստ, սպիտակեղեն, որ հաշվենք, էլի...

— Շատ ենք հաշվով ապրում, լավ չէ,— երևի խղճի ձայնը գլուխ բարձրացրեց,— մայրիկը մեզ այդպես չի պահել։

— Բա՜ն ասացիր, հիմա ուրիշ ժամանակ է, ի՞նչ կարող ենք անել... Կաշխատենք էժան բռնացնել, մի թեթև սեղան, պարտադիր չէ, որ որոշ շտեսների նման...

— Բոլոր դեպքերում խայտառակվելու միտք չունեմ։ Սպասենք, տեսնենք։

Մոր մահճակալից մի խոր հառաչանք լսվեց.— հո չէ՞ր լսում,— անցավ տղաների մտքով։ Բայց ոչ, աչքերը փակ են, երևի գիտակցությունն էլ տեղը չէ։

Դժվար մոտեցավ լուսաբացը։ Մայրը դեռ շնչում էր, բայց՝ անկանոն, ընդմիջումներով։

Հայացքով մոտ կանչեց տղաներին ու երկար նայում էր նրանց՝ անթարթ աչքերով. բա՞ն էր ուզում ասել, թե՞ հրա-ժեշտ էր տալիս...

Շրթունքները շարժվեցին, իսկ ձայն չէր լսվում։ Մեկն ականջը մոտեցրեց մոր բերանին։

— Բարձիս տակ...

Ու հանգավ՝ սպառված մոմի նման։

Իսկ բարձի տակ խնայդրամարկղի գրքույկ կար. թաղման համար բավարար մի գումար։ Ամեն ամիս մի տասնոսրլի ետ է քաշել իր բերնից, և քանի՞ տարի։ Այսօրվա համար է։

Տղաներն իրար երեսի նայել չէին կարողանում։

ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉԻՄԱՅԱՎ...

Հայրը հիվանդ էր, համարյա անհույս։ Դե՛, ջահել էլ չէր, ութսունին մոտ, չորացած ծերուկ էր, ինչպես ինքն էր ասում՝ մի տխուր ժպիտ դեմքին՝ հայ-հայը գնացել է, վայ-ժայն էր մնացել...

Շնորհակալ է, երեխաներն ուշադիր են, տղան ու հարսն իրենց հերթին, աղջիկներն՝ իրենց։ Գնում-գալիս էին, խնամում, սիրտ տալիս, մխիթարում։ Առանձնապես հուզիչ էր տղայի ուշադրությունը, գուցե պատճառն այն էր, որ մայրը շուտ էր գնացել այս աշխարհից, և Վահանի համար հայրը նաև մայրություն էր արել։

— Հայրի՛կ, էսօր աչքիս ավելի լավ ես երևում. հիմա մի քիչ էս հավի մսից կուտես, լավ էլ կանաչի կա, մի քանի օր հետո բոլորովին առողջ մարդ ես, վեր ենք կենում ու գնում ենք գյուղ, քո մանկության տեղերը, սար ենք բարձրանում։ Հը, սիրտդ չի՞ ուզում, դե՛, ասա։

— Բա չի ուզում, Վահան ջան, ամա հավատս չի գալիս, ինձնից էլ սար գնացող չի լինի՞։

— Ջեղա՛վ, հայրիկ, չեղա՛վ, լավանում ես, ու գնում ենք գյուղ, պայմանը պայման է...

Իսկ մի՞շտ է, որ կարող ես տեր կանգնել քո խսկ դրած պայմանին... Վահանը հանկարծ հիվանդացավ, սրտի հետ ինչ-որ վատ բան էր կատարվում։ Իսկ նա ե՞րբ էր սրտից բողոքել։ Զարմանալի բնույթ ունի մարդուս սիրտը, պատահում է՝ կաղալով ապրում է տարիներ, տանջամյակներ անգամ, մեկ էլ տեսար անսպասելի դեմ առավ մի ապառաժի ու սսկվեց-մնաց, ու վերջ, էլ սայլը շարժվելու հույս չի մնում, ուրեմն տեղ է հասել, թե՞ կես ճանապարհին է մնա-

ցել, նրա համար դա շարժման վերջին կետն է, վերջին կայանը...

Այսպես պատահեց և Վահանի հետ. ինչպես գիշերվա կեսին լուսառատ սենյակում պտտես էլեկտրական կոճակը, սենյակը լցվեց թանձր խավարով։ Ու վերջ։ Իսկ նա հորն առողջացնել էր ուզում, իրենց սարերը տանել էր երազում...

Հորն ասել չէին կարող, որոշեցին թաքցնել նրանից, խնայել նրան, ինչպե՞ս դժվար էր։

Վահանը քանի օր է չի երևում, և հայրն անհանգիստ է, զարմացած անհանգիստ։

— Քանի օր է Վահանս չի գալիս ինձ մոտ, հո հիվա՞նդ չի։

— Ոչինչ, հայրիկ, մի թեթև մրսել է, կգա։

Ինչպես դժվար է վերքը թաքցնել, երբ այն թարմ է, բոլորովին չփակված...

— Բա ասացիք թեթև հիվանդ է, չանցա՞վ, թե՞ խռովել է հորից, աստված հեռու տանի, էդ սկի նրա նման չի։

— Չէ՛, հայրիկ... Գործուղման է գնացել, մի տաս օրով...

— Վա՛հ,— զարմանում է հայրիկը,— էդ ինչպե՞ս է պատահել, որ իմ տղան առանց ինձ տեսնելու էստեղից վեր է կացել ու Մոսկվա է գնացել, նոր-նոր բաներ եմ տեսնում, հե՛յ գիտի աշխարհ...

Կասկածը կրծում է հոր սիրտը. անպետք էլ երազներ է տեսնում, ինչպե՞ս իմանա ճշմարտությունը, մի՞թե իրեն խաբում են։

— Ա՛ խոխեք, կարգին բան ասացեք, հասկանամ, ո՞ւր է Վահանս, տաս օրն էլ անցավ, չեկա՞վ, թե ուզում եք, որ...

— Հիմա էլ Մոսկվայից նրան արտասահման են ուղարկել, մի կարևոր գործով, հեռախոսով ասել է, որ քեզ համար լավ-լավ դեղեր է բերելու։

— Չե՛մ ուզում, ինձ դեղը պետք չի, թող ինքը գա։

— Կգա, հայրիկ, համբերիր։

— Ինչքա՞ն ժամանակով է գնացել։

— Մի ամսով։

— Բա էդքան կդիմանա՞մ...

Չդիմացավ։ Օր-օրի վրա լույսի շողը նվազեց, նվազեց

ու հանգավ մի գիշեր։ Նրա չորացած շուրթերին թփրտաց մի վերջին անգամ — գնում եմ, իսկ Վահանս չեկավ...

Այդպես էլ չիմացավ, որ Վահանն իրենից շո՞ւտ է գնացել...

ՄՈՐ ՎԵՐՋԻՆ ԽՆԴՐԱՆՔԸ

Մայրիկը հիվանդ էր, բոլորովին ծանրացավ։ Առաջինից չապաքինված՝ երկրորդ կաթվածն ստացավ։ Ու հիմա պառկել է անշարժ, հայացքն առաստաղին հառած մտածում է, մտածում է, բայց ոչինչ չի ասում, չնայած առայժմ առողջ են մնացել գիտակցությունն ու լեզուն։ Ինքն իրեն յոլա տանել չի կարող, հարսն ու փոքր աղջիկն են խնամում։ Մեկ-մեկ օգնության է հասնում նաև մեծ հարսը։ Ախր մեծ չի մայրիկը, հազիվ վաթսունհինգ տարեկան է։ Եվ ինչ առողջ ու աշխատասեր կին էր, ամբողջ օրը ոտքի վրա, ձեռքը գործից անպակաս։ Ե՞րբ էր քնում, մեծ թոռնիկը կատակով թե լուրջ ասում էր՝ մեր տատիկը քնելը մոռացել է... Ու միանգամից խեղճացավ, փոքրացավ, դարձավ անկողնուն գերի։ Անաստվա՜ծ հիվանդություն...

Մի անգամ, երբ տանը միայն փոքր հարսն էր, մոտ կանչեց ու երկար խոսում էր հետը։

— Աղջիկ ջան, հալալ լինի մորդ կաթը, լավ սիրտ ունես... Ես էս աշխարհից գնալու եմ՝ քեզնից շատ գոհ։

— Մայրի՛կ, ինչո՞ւ ես էդպիսի բաներ ասում, օր-օրի դեպի լավն ես գնում, կլավանաս, ինչո՞ւ ես...

— Չէ՛, աղջիկ ջան, ես իմ բանը գիտեմ... Մենակ ափսոս, որ Սոնայիս պսակը չտեսա, ուրիշ անհանգստություն չունեմ...

— Սոնան լավ աղջիկ է, մի լավ էլ տղայի հանդիպեր։

— Տա աստված... Հարս ջան, ժողովուրդը մի խոսք ունի, ասում է՝ վերջդ բարի լինի։ Ես ո՞ւմ եմ վատություն արել, ինչո՞ւ էսպես եղավ...

— Մայրի՛կ, պետք չի, կլավանաս, իզուր ես...

— Է՛, հարս ջան... Հա՛, հիմա ինձ մենակ մի հարց է տանջում, ձեր շարշարանքը, քոռանամ ես...

— Բա եղա՞վ, մայրիկ, դա էլ ասելու բա՞ն է։

— Զորանաս, աղջիկ ջան... Ինձ մնում է աստծուց մի բան խնդրել, որ շուտ առնի հոգիս...

— Մայրի՜կ...

— Զխոսես, չառարկես։ Ես իմ հաշիվներն ունեմ աստծո հետ... Ամուսնուս տարավ, երբ նա քառասուն տարեկան էլ չկար, հիմա էլ ինձ է քարեքար գցել... Մայրը կապրի իր երեխաների համար, հիմա ես ոչ ձեզ համար եմ ապրում, ոչ ինձ համար, ո՞ւմն եմ պետք... Գոնե այս անգամ աղոթքս լսեր...

— Իսկ դու քո երեխաների մասին չե՞ս մտածում, մայրիկ, գիտես, թե նրանց ի՞նչ ցավ կպատճառի քո...

— Գիտեմ, աղջիկ ջան, ցավը կպատճառի, կանցնի... Պետք է, հասկացի՛ր... Ես կյանքում ոչ մեկին վատություն չեմ արել, ուր մնաց՝ իմ երեխաներին. ես ձեր բոլորիդ ցավը տանեմ... Եվ կտանեմ, միակ լավ գործը, որ հիմա ես կարող եմ անել...

Մայրիկն օր-օրի վրա ծանրանում էր. այլևս ոչինչ չէր ուտում, ինչպե՞ս էր ապրում... Տնեցիների անհանգստությունը հասել էր ծայր աստիճանի, բժիշկ, պրոֆեսոր, ինչ-որ նոր դեղեր։ Գիշեր-ցերեկ հերթապահում էին, տղան, աղջիկը, հարսները, մեծ թոռնիկը։ Ոչ մի բարելավում. մայրիկի ճրագը մարելու վրա էր...

Իսկ նրա դեմքին մի տեսակ երանության ժպիտ կարգոհ էր, որ գնում է այս աշխարհից, ավելորդ տառապանքից ազատում է իր երեխաներին...

Իսկ ասում են՝ ոչ ոք մեռնել չի ուզում...

Այդպես էլ հանգավ՝ գունատ այտերին մի երանության ժպիտ։

ԱՆՈՂՈՔ ՏԱՐԻՆԵՐ

— Ասում են Սաթիկը եկել է, չգնա՞նք տեսության։

— Ի՞նչ Սաթիկ։

— Չե՞ս հիշում, մեր գիժ Սաթոն։

— Գիժ Սաթո՜ն...

Այդ ե՞րբ էր։ Տարինե՞ր, տարինե՞ր...

Դպրոցական երեխաներ էինք, տասնչորս-տասնհինգ տարեկան։ Նույն բակում էինք մեծանում. ամբողջ օրը միասին էինք, դասարանում՝ նույն նստարանին նստած, բակում՝ պահմտոցի կամ գնդակ խաղալիս, մոտիկ անտառում՝ մոշ հավաքելիս և ծառ ու ժայռ մագլցելիս։ Եվ ամեն ինչում Սաթիկն առաջինն էր՝ ամենաճարպիկը, ամենասրամիտը, ամենախելոքը։ Եվ ինչո՞ւ էին նրան գիժ Սաթո ասում, ո՞վ էր տվել նրան այդ անարդար անունը, չեմ հիշում։ Միայն կասկած չկար, որ «գիժն» այստեղ գժի իմաստ չուներ, ավելի շատ սիրելուց էին ասում, և՝ մեծ ու փոքր։

Դաս պատասխանելիս առաջինն էր Սաթոն, տղաների հոգու հետ խաղալում մրցակից չուներ, վազքի մեջ անպարտելի էր։ Եվ ինչպես էր վազում. ոտաբոբիկ, քար ու փշերի միջով, երկար ծամերը քամու բերանը տված։

Քարայծ էինք ասում նաև, չնայած սա էլ ճիշտ համեմատություն չէր։ Իսկական եղնիկ էր նա, գեղեցիկ, հեզանազ, վտանգի պահին՝ զգույշ ու շրջահայաց։

Մի անգամ փորձեցի համբուրել Սաթոյին, այնպես, կատակով։ Մի շառաչուն ապտակ իջավ երեսիս. մինչև հիմա էլ ասես զգում եմ ցավի ու ամոթի կսկիծը...

Մի բանով միայն կարող էիր խեղճացնել Սաթիկին, երկար հյուսերը բռանդ մեջ հավաքելով։ Հենց որ ձգում էիր մազերից, կանգնում էր վիզը ծռած ու ժպտում խորամանկ.

— Դու խելոք տղա ես, չէ՞, գիտես քեզ ինչքան եմ սիրում... կամ.

— Դու կուզենա՞ս, որ Սաթոն լաց լինի, թող մազերս, հետո կթողնեմ, որ ինձ համբուրես,— և այնպես էր նայում քեզ իր սև-սալոր աչքերով (տատս ասում էր՝ աչքերը չախմախին են տալիս) որ անմիջապես զինաթափ էիր լինում։ Համբուրել թողնելու խոստումը սուտ էր, իհարկե, ո՞վ կհամարձակվեր նրան մոտենալ, աչքերը կհաներ...

Այսպիսին էր մեր գիժ Սաթոն, մեր սիրուն ու խելոք Սաթիկը։

Հետո կյանքը մեզ բաժանեց ու տարավ տարբեր ճամփաներով։ Ու ձգվեցին և՛ այդ ճանապարհները, և՛ տարիների շղթան։

Շուրջ հիսուն տարի է անցել այդ օրերից, մի ամբողջ կյանք։ Եվ այլևս իրար չենք հանդիպել. Մոռացե՞լ եմ նրան, բոլորովին։

Ու հիմա՝ Սաթոն եկել է, Սաթոյին կարելի է տեսնել։ Հավատս չի գալիս։ Մեր գիժ Սաթոն, քար ու մացառների միջով ոտաբոբիկ վազող, փեշերը շարաճճի քամուն վստահող Սաթոն։ Տեսնես ինչպիսի՞ն է հիմա, կճանաչե՞նք իրար...

Ներս մտա անվստահ, մի տեսակ երկյուղածությամբ։ Սիրտս այնպե՞ս էր խփում։ Երևի այդքան անհանգիստ չեմ եղել, երբ գնացել եմ առաջին ժամադրության։ Ինչո՞ւ եմ այսպես հուզվում, վերջապես ի՞նչ է պատահել, մեր Սաթոն է, չէ...

Տե՞ր իմ աստված. ինձ ընդառաջ ելավ ճերմակած գլխով ու կնճռոտ դեմքով, նիհար ու սմքած, աչքերի՝ չախմախին տվող փայլը տարիների հեռվում թողած մի կին...

Չէ՛, տարիները շա՞տ են անողոք...

ԻՆՉՔԱՆ Է ՍՊԱՍԵԼ

Բազում տառապանքներից ու սպասումներից հետո, վերջապես, երեխա պիտի ունենա։ Ինչպե՞ս է երազել, ինչպե՞ս է սպասել այս օրվան։ Վերջապես մայր պիտի դառնա, կյանքի պիտի կոչի իր լուսե երազանքների ու քաղցր սպասումների մարմնացմանը, իր մարմնի, իր հոգու, իր արյան ոսկեծամ շարունակությունը...

Ու հանկարծ նրան ասում են, թե ամեն ինչ հարցականի տակ է, թե երեխայի ծնունդը կարող է վտանգվել։ Եվ ասում է իր հին ու մտերիմ բժշկուհին, զարմանալի հոգատար ու նրբանկատ մի մարդ, որի խիղճը ընդօրինակման աղբյուր կարող է լինել։ Եվ այդպիսի անհոգի հայտարարություն, այդպիսի ահավոր անխղճություն։ Այդ տարիքում, ասում է, առաջին անգամ ծննդաբերել շատ է դժվար։ Բացի այդ խանգարող հանգամանքներ կան։ Մի խոսքով, վտանգի տակ է և՛ երեխայի, և՛ մոր կյանքը։ Երկուսին փրկել հնարավոր չէ. հասկանալի է, որ երեխան...

Մոր վիճակը ողբերգական է, լաց է լինում, բողոքում է։— Ո՛չ մի դեպքում, ոչ մի պայմանով։ Ես ամբողջ տաս տարի սպասել եմ նրան, այդ աստիճան անխիղճ մի՛ եղեք, բժշկուհի, խնդրում եմ... իսկ բժշկուհին անողոք է։— Խիղճն այստեղ գործ չունի, հասկացեք, ուրիշ ելք չկա։

Կինը շարունակում է համառել.— Ես ուրիշ ոչինչ չեմ ուզում, միայն թե կարողանամ տեսնել նրան, հետո ինձ հետ ինչ ուզում է թող լինի, միայն թե աչքի պոչով նրան տեսնել կարողանամ, գոնե մի անգամ...

— Հասկացե՛ք։

— Չեմ ուզում հասկանալ, չեմ կարող հասկանալ, հասկացե՛ք, վերջապես...

Իսկ եթե կեսարյան հատումո՞վ.— մի ըմբոստ հարցական տնկվեց բժշկուհու մտքի առաջ։ Նորից վտանգավոր է, մոր համար, արյան վիճակն էլ կարգին չէ։ Գուցե կդիմանա՞, իսկ եթե ո՞չ...

— Լավ, ես կխոսեմ ձեր ամուսնու հետ։

— Ոչ, ինձ հետ, խնդրում եմ, ես պիտի որոշեմ. ամուսինս կարող է սխալվել, թուլանալ...

— Այսպես, ուրեմն, կարելի է և կեսարյան հատումով, լսե՞լ եք այդ մասին. այո՞։ Այդ դեպքում երեխայի կյանքը համարյա լրիվ երաշխավորվում է։

— Հրաշալի է, էլ ինչի՞ եք սպասում, բժշկուհի, թանկագինս։

— Ձեր կյանքի համար լրիվ երաշխավորություն տալ չեմ կարող։

— Ես տալիս եմ, բժշկուհի, ես ձեզ արտոնում եմ այդ իրավունքը, համարձակ եղեք, խնդրում եմ, կինը մայրանալ պիտի կարողանա, ինձ մի զրկեցեք այդ բախտից...

— Վտանգավոր է ձեզ համար, հասկացեք։

— Ես հասկանալ չեմ կարող, հասկացե՛ք վերջապես։

Բարեբախտաբար վիրահատությունը հաջող անցավ, և՛ երեխան է առողջ, և՛ մոր վիճակն է բավարար։

Բժշկուհին ճակատի քրտինքն էր սրբում ու հոգնած մտորում ինքն իրեն.— տեսնես այդ մանչուկը, որ այսօր բարեհաճեց լույս աշխարհ գալ, ժամանակին կհասկանա՞ մոր

անձնազոհ քայլի իմաստը, կգնահատի՞, թե՞ իր հարևանի տղայի նման կնետի ծնողների երեսին. «ձեր հաճույքի համար ինձ աշխարհ եք բերել, հալա մուննաթ էլ գալի՞ս եք վրաս...»։

ԻՆՉՈՒ ՄԱՉԵՐՍ ՓՇԱՔԱՂՎԵՑԻՆ

Գյուղ եմ գնացել, իմ ծննդավայրը։ Հին սովորության համաձայն ընկերներով բարձրացանք գերեզմանները։ Այնքան ծանոթ ու հարազատ, բարեկամ ու ընկեր կա այստեղ։ Այս խունացած շիրմաքարերի տակ մեր ծնողներն են հանգչում, որոնց մենք այդպես էլ երախտահատույց լինել չկարողացանք։ Իսկ մի՞թե այդ հնարավոր է։ Մեր ընկերներն ու ծանոթներն են ննջում, ու քեզ թվում է, թե հիմա կլսես նրանց ձայնը...

Շրջում ենք, նայում, կարդում շիրմաքարերի մակագրությունները։ Այս մեկի հետ քո մանկությունն ես կիսել, մյուսի օգնությամբ կյանքում շիտակ քայլել ես սովորել։ Ահա սրա հետ քանի տարի նստել եք նույն նստարանին, հետո կյանքի ճամփաները ձեզ տարել են տարբեր կողմեր. դու քաղաք ես մեկնել, նա մնացել է գյուղում, հավատարիմ է մնացել գյուղին։ Մինչև վերջին շունչը։ Եվ դու քեզ մի քիչ վատ ես զգում նրա շիրմի մոտ... Այս մեկը քո հասուն տարիների ընկերն է։ Միասին եք մեկնել ռազմաճակատ։ Արյուն է թափել պատերազմում, և քանի՞ անգամ։ Բայց բախտ է ունեցել տուն վերադառնալու։ Ու տարիներ հետո, նույն սև պատերազմում ստացած վերքերը նրան գերեզման են իջեցրել անժամանակ։ Թաղվել է հայրենի գյուղում, իր գնացած հարազատների կողքին. այս է նրա վերջին բախտավորությունը։ Այո, վերջին։ Գերեզմանաքարի նկարից նայում է քեզ մի անբիծ հայացքով, ասես հարցնում է՝ հիշո՞ւմ ես, ինչպես Բալատոնի ափին փրկեցիր ինձ ստույգ մահից։ Բայց ահա հայրենի տանը այդ նույն վերքն ինձ տապալեց գետնին, և դու ոչինչ անել չէիր կարող այլևս...

Շրջում ենք գերեզմաններում։ Կանաչ է, ծաղիկ ու ծառ, և այդ ծաղկի ու ծառի մեջ քարեր, շիրմա քարե՞ր։ Եվ այդ բոլորի վրա՝ թեակոտոր թառած մի խորհրդավոր լռություն...

Մեզ հետ է և մեր ուսուցչապետ ընկեր Սուրենը, որն ամենամեծ հայրենասիրի համբավն ունի մեր գյուղում։ Մեր Գետաշենի խորհրդանիշն է ասես ընկեր Սուրենը, նրա գեղեցկության, դարավոր սովորույթների ու չխամրող տրադիցիաների անսխալ գիտակն ու ջերմ պաշտպանը։ Նրա ծանոթ ընկերներն իհարկե այստեղ ավելի շատ են։ Նրան հետաքրքրում է ամեն մի մանրուք, դարերի խորքից եկող խաչքարերից սկսած մինչև բոլորովին թարմ այս շիրմաթումբը։ Մտորում է, հուշեր է պատմում։ Որքա՜ն թախիծ ու ափսոսանք կա նրա ամեն մի խոսքի մեջ։ Բայց նաև հպարտություն՝ իրենց ապրած օրերը լավ գործերով գեղեցկացրած անցվորաց նկատմամբ։

Վերջապես հասանք իր եղբոր գերեզմանին։ Նոր է մահացել, պատկառելի տարիքում։ Գերեզմանաթմբի աջ կողքին բավական ազատ տարածություն կա. այնպես էլ կանաչ է խոտը այս հատվածում։

— Ահա՛ իմ տեղը,— հանգիստ ասաց ընկեր Սուրենը,— որտեղ էլ ես կնքեմ իմ մահկանացուն, ինձ այստեղ կբերեք, լսո՞ւմ եք...

Ընկեր Սուրենի հայացքի մեջ մի զարմանալի հանգստություն և նաև իմաստություն կա, ձեռքը մեկնել է կանաչ հողակտորին.

— Սա՛ է իմ վերջին հանգրվանը, քարն էլ արդեն պատվիրել եմ...

Հանկարծ մաղերս փշաքաղվեցին ու չգիտեմ ինչու իմ մեջ այդ խաղաղ գերեզմանատնից փախչելու ցանկություն առաջացավ...

ՄԻ ՕՐՎԱ ԿՅԱՆՔ ՄԻԱՅՆ

Մարդ արարածս զարմանալի հետաքրքրություններ ունի։ Մեկը նամականիշներ է հավաքում, և հետաքրքիր նմուշի համար կարող է Երևանից Կամչատկա հասնել, միայն թե ձեռք բերի իր ուզած նամականիշը։ Մեկը բոցհանքեր է հավաքում, տեղական ու արտասահմանյան, պատերազմական տարիների կոշտ ու կոպիտ արտադրանքից մինչև այսօրվա

հուշանվեր-խաղալիքները։ Մեկին գնդիկավոր գրիչներն են հետաքրքրում, մյուսին՝ մինչև անգամ՝ ռադիոընդունիչները, և նա իր ոչ մեծ բնակարանը վեր է ածել կատարյալ պահեստի, և զարմանալի գոհ է պահեստապետի իր վիճակից։

Իսկ իմ հարևանն ավելի թեթև գործով է զբաղված, թիթեռներ է հավաքում, շորացնում ու խնամքով դասավորում սովարածավալ գիրք-ալբոմների մեջ։ Եվ ով գիտի ամեն մի ալբոմում քանի թիթեռ կա, մոխրագույն ու կարմրաթև, սևհոն ու կապտաշուրթ, ծիածանի բոլոր գույներով ու երանգներով։ Բզեզի չափ փոքր, դաշտային մորեխի պես լայնաթև։ Թիթեռներ, թիթեռներ։ Հինգ հատոր լցվել են արդեն։ Եվ ինչպես է հպարտանում հարևանս, ինչպիսի տիրով է ցույց տալիս իր ընկեր-ծանոթ-անծանոթներին։ Անսխալ գիտե, թե որ թիթեռը երբ և որտեղ է բռնել, Ապարանի դաշտերում, թե Լոռվա ձորում, Դիլիջանի կեռմաններում, թե Արփա գետի հովտում։ Նրա հանգստյան օրերը համարյա ծայրից-ծայր լցված են թիթեռ բռնելու տենդով։ Եվ այսպես տարիներ շարունակ, համարյա քսան տարի։ Ու երազում է իր ալբոմ-հատորների թիվը տասի հասցնելու մասին։ Պատկերացնո՞ւմ եք, ավելի քան հազար թիթեռ, հազար կյանք։

Մի անգամ համարյա զոռով ինձ իր տունը տարավ։

Գնացի, քաղաքավարությունից դրդված։ Անմիջապես բացեց, փռեց իր ալբոմները, ու պատմում էր երկար, և ի՜նչ ոգևորությամբ։

— Պատկերացնո՞ւմ եք, այս թիթեռի ետևից ես գնացել եմ մինչև Սիսիան, տանջվել եմ համարյա երկու օր, և մի կերպ հաջողվել է ինձ տիրանալ այս հարստությանը...

— Այս հսկան, տեսնո՞ւմ եք, թևերի երկարությունը համարյա տաս սանտիմետր է։ Շամշադինից եմ բերել, իմ վերջին որսերից է։ Գիտե՞ք, որ աշխարհում իննսուն հազարից ավելի տեսակ թիթեռներ կան, իսկ մեր երկրում տասներկու հազարի է հասնում դրանց թիվը։ Կան խոշորները, մինչև քսանչորս սանտիմետր թևերի երկարությամբ։ Ի՜նչ գեղեցիկ գույներ ունեն որոշ տեսակներ։ Ահա այս մեկը...

— Իսկ դուք գիտե՞ք, որ թիթեռների մեծ մասը մեկ օրվա

կյանք ունի միայն,— չգիտեմ ինչու հանկարծ շատ կտրուկ ընդհատեցի իմ թիթեռահավաք հարևանին։

Նա մի տեսակ անակնկալի եկավ ու կմկմաց հազիվ լսելի.

— Դե՛, իհարկե գիտեմ. բայց դա ի՞նչ նշանակություն ունի։

— Այն, որ դուք կիսում եք թիթեռի մեկ օրվա կյանքը և այդպես՝ քանի՞ կյանք, չե՞ք գտնում, որ դա ահավոր դաժանություն է։

— Ինչե՞ր եք ասում,— խուճապի մատնվեց հարևանս,— դուք ինձ բոլորովին... Քիչ է մնում մարդասպանի տեղ դնեք, իսկ ես ընդամենը...

— Այո, ընդամենը թիթեռ եք հավաքում, ձեր հաճույքի համար, ժամանակից շուտ կտրելով այդ անմեղ արարածների կյանքի թելը։

— Ուրեմն ես... երբեք չեմ մտածել այդ մասին։

— Արժե մտածել։ Ընդամենը մեկ օրվա կյանք, և դուք չեք թողնում նրանց այդ մի օրն ապրելու։

— Մե՞ղք են։

— Շա՜տ։

— Տե՛ր աստված...

ՊԱՐՏՔԵՐԸ ՄԱՐԱԾ

Հին ծանոթներ ենք Սահակի հետ։ Քսան տարուց ավելի է, ինչ ես նրա մոտ եմ գնում վարսավիրական գործերով, համարյա ամեն շաբաթ օր։ Սկզբում նաև տղաներիս էի տանում մոտը։ Հետո, տարիների հետ, նրանք գտան իրենց վարսավիրին, ու դադարեցին վարպետ Սահակի մոտ հաճախելուց։ Ես մնացի իմ «խոսքի տերը» շարունակում եմ գլուխս «վստահել» Սահակի մկրատին...

Գրասեր մարդ է Սահակը։ Քսան տարի շարունակ ինձնից խնդրածը միայն գիրք է։ Սկզբում իր համար, հետո՝ իր երեխաների, հիմա էլ՝ թոռնիկների համար է մտահոգվում. «Դպրոցում հանձնարարել են, չճարեցինք, մի հնար արեք, խնդրում եմ»...

Ու ես ճարում եմ գիրքը, եթե ինձ մոտ տանը չկա, գրա-

գարանից եմ վերցնում։ Գիտեմ, որ մեկ կամ երկու շաբաթ հետո ետ կստանամ նույն անթերի վիճակում։

Վերջին անգամ Սահակն ինձնից երկու գիրք խնդրեց. «Վերք Հայաստանին» ու «Լալվարի որսը»։

«Տանն ունեցել ենք, ասաց, լավ հիշում եմ, բայց չգիտեմ, որ անշնորհքն է տարել ու ետ չի բերել»։

Գրադարանից վերցրի այդ գրքերը և ուղարկեցի Սահակին։ Մի տաս օր հետո գործուղման գնացի Մոսկվա, հետո մի շաբաթ էլ, գործի պահանջով, հանրապետության հեռավոր շրջաններում էի։ Սովորականից ուշ գնացի վարպետ Սահակի մոտ։ Վարսավիրանոցը փակ էր։ Ասացին, որ հիվանդ է, աշխատանքի չի գալիս։ Սկզբում բանի տեղ չդրի, մարդ է, հիվանդացել է, կառողջանա, միևնույն է, ուրիշի մոտ չեմ գնա, կսպասեմ։ Հետո հիշեցի հարևան վարպետի խոսքը. «Ասում են սիրտը լավ չի»։ Ու հիշեցի, որ ինձ մոտ էլ է բողոքել. «Վերջերս սիրտս շարությունն է անում, ոնց որ միտքը ծուռ է...»։

Մի՞թե լուրջ բան կա։

Հաջորդ շաբաթ օրը նորից գնացի, էլի փակ էր վարսավիրանոցը։ Գոնե տունն իմանայի, կգնայի, կտեղեկանայի վիճակի մասին։ Այդպես է հաճախ, տարիների ծանոթներ ենք, բայց միայն աշխատանքի տեղը գիտենք, գուցե մի բանով կարող էի օգտակար լինել...

Հասցրի հարևանին բան հարցնել.

— Է՜հ, աշխարհի բան է,— ասաց,— Սահակն էլ գնաց, օղորմի իրեն, լավ մարդ էր...

Երևի այսպիսի դեպքերի համար է ասված՝ ասես գլխիս մուրճի հարված իջավ...

Եվ գրողը տանի մարդուս տարօրինակ բնավորությունը։ Հենց որ թուլացավ հարվածի ազդեցությունը, հիշեցի Սահակի մոտ մնացած գրքերը, ախր իմը չէին, գրադարանից էի վերցրել...

Մի շաբաթ հետո իմ աշխատասենյակը մտավ բարձրահասակ մի երիտասարդ։ Տե՜ր աստված, այնքան նման էր վարպետ Սահակին. մի՞թե տղան է։

— Ներեցեք ուշացնելու համար, հայրս այս գրքերը կարծեմ ձեզանից է վերցրել, շնորհակալությամբ վերադարձ-

նում եմ։ Հորս վերջին խոսքն էր,— «գրքերը չմոռանաք»...

Վերջին շնչում անգամ ցանկացել է պարտքը մարած հեռանալ այս աշխարհից, իսկ ես, հիմարս կարծում էի թե...

Ես այնքան հուզված էի ու շփոթված, որ մինչև անգամ չկարողացա իմ ցավակցությունը հայտնել հորը կորցրած երիտասարդին...

ՉԱՐՄԱՆԱԼԻ Է, ՉԷ՞...

Մարդուս կյանքում ինչե՞ր ասես, որ չեն լինում։ Մի մասին ինքը տեղյակ է, մասնակից. մյուսը կատարվում է իր բացակայությամբ, իր կամքից անկախ, կամ նույնիսկ՝ իր կամքին հակառակ։ Երկու դեպքում էլ պատասխանատվության լուծն իր ուսերին է։

Իսկ կարո՞ղ է այնպես ստացվել, որ ուրիշները տնօրինեն քո բախտը՝ քո ծնվելուց էլ շատ առաջ, տնօրինեն քո ապագան, քո կյանքի ամբողջ ընթացքը՝ քեզ հետ բոլորովին հաշվի չնստելով։ Եվ ինչպե՞ս կարող են քեզ բանի տեղ դնել, երբ դու դեռ չես բարեհաճել այս աշխարհը ժամանել...

Պարզվում է, որ, այո, կարող են, այդպես էլ է լինում. համենայն դեպս՝ եղել է։ Եվ, պատկերացնո՞ւմ եք, այդ բանն ինձ հետ է կատարվել։ Աստված վկա...

Հորս մոտ ընկերը, Վահրամ քեռին, մեր հարևանն է, կամ, կարելի է ասել, մեր հարևան Վահրամ քեռին հորս մտերիմն է։ Անբաժան ընկերներ են։ Միասին սովորել են դպրոցում, միասին բանակ են գնացել, մասնակցել են վերջին մեծ պատերազմին, կռվել են Ստալինգրադի մոտ ու Բեռլինի մատույցներում։ Վիրավորվել են երկու անգամ։ Ու բախտ են ունեցել միասին տուն վերադառնալու։ Եվ դեռ ռազմաճակատում, մահվան դեմ-հանդիման կանգնած, նրանք մի խոստում-պայման են կապել, կես կատակ, կես լուրջ,— եթե մեզ հաջողվի ողջ-առողջ տուն վերադառնալ և ընտանիք կազմել, մեր առաջնեկներին ամուսնացնում ենք իրար հետ, հասկանալի է, եթե աղջիկ ու տղա ծնվեն։ Կարևոր չէ, թե որ մեկը հարս, որը՝ փեսա կունենա, դա էլ աստծո գիտենալիք բանն է... Տուն են դարձել հաղթանակով. ամուսնացել են, նույն

տարում։ Ու չեն մոռացել իրենց սուրբ պայմանը։ Այդ մասին ասել են իրենց կյանքի ընկերուհիներին։ Ստացել են և նրանց հավանությունը։

Մի տարի հետո ծնվել ենք ես ու Սիրանը, ես՝ ոստուցիչ Արմենակի, Սիրանը՝ վարպետ Վահրամի ընտանիքում։ Նույն թվին ենք ծնվել, միայն՝ մեկս հունվարին, մյուսը՝ հոկտեմբեր ամսին։ Այդ տաս ամսով մեծը ես չեմ, դժբախտաբար, կինս է շտապել մի քիչ, առաջ է ընկել, ինչպես լինում է հաճախ...

Վատ ընտանիք չենք կազմել, աստված վկա. իրար հասկանում ենք, կարելի է ասել՝ կես խոսքից։ Գուցե այդ նրանից է, որ մեր ամբողջ գիտակից կյանքում միասին ենք քայլել ես ու Սիրանը. հենց ոտքի կանգնելուց հետո։ Երեխա ժամանակ քույր ու եղբայր էինք։ Հետո, զարմանք բան, քանի մեծացանք, այնքան սկսեցինք իրարից քաշվել, ամաչել մի տեսակ։ Հիշում եմ, մի օր Սիրանի մայրն ինձ ասաց.— «Հայկ ջան, դու գիտես, չէ՞, որ նաև մեր տղան ես. քեզ էնքան ենք սիրում...». «Գիտեմ, ասացի, հորաքույր Անուշ, բա ո՞նց չգիտեմ։ Ես էլ ձեզ եմ շատ սիրում»։ «Ուզում եմ, ասում է, որ Սիրանին էլ շատ սիրես»։ «Բա չե՞մ սիրում;— զարմացած ձգեցի ես»։ «Չէ՛, է՞ ասում է, քրոջ նման չէ, մի ուրիշ տեսակ սիրես, ախր դու արդեն մեծ տղա ես, ասում է, էսա դպրոցն ավարտում եք»...

Բան չհասկացա, թե՞ չհասկանալուն տվի...

Մի օր էլ մայրս բռնեց Սիրանին, արդեն ինստիտուտ էինք ընդունվել, ուսանողներ էինք, ես՝ մանկավարժական, Սիրանը՝ բժշկական ինստիտուտի։ «Աղջիկ ջան, ասում է մայրս, բա ե՞րբ ես մեր տուն գալու»։ «Մորաքույր Սաթիկ,— զարմանում է Սիրանը,— բա ձեր տանը ես քի՞չ եմ լինում։ «Չէ՛, հոգիս, էդպես չեմ ասում, ուզում եմ վերջնական դաս ու դառնաս մեր աղջիկը»։ «Բա ես ձերը չե՞մ, մորաքույր»։ «Աղջի, մեր տունը հարս պիտի գա՞ս, թե չէ, աչքս ջուր կտրեց»...

Էստեղ, ինչպես ասում են, ես ու Սիրանը մեր մատը կծեցինք։ Դուրս փախանք տնից։ Ամառվա արձակուրդի ժամանակն էր։ Երեք օր իրար չտեսանք, ամաչում էինք։ Էդ օրերին էլ իմացանք մեր ծնողների բարի ու դաժան պայ-

մանի մասին։ Մինչ այդ թաքցրել էին մեզնից։ Երևի մտածել էին, թե թող իրենց հարցերը իրենք լուծեն, առանց մեր միջամտության. սա էր չմիջամտելը... Լուրջ-լուրջ ըմբոստացանք։ Խռովեցինք ես ու Սիրանը։ Ճիշտն ասած, այնքան խռով չէինք, որքան ամաչում էինք իրարից։ Տարիներ շարունակ համարյա քույր ու եղբայր, և... Ատված վկա, այդ ուղղությամբ բոլորովին չէինք մտածել, ես Սիրանին, երդվում եմ, երբեք ծուռ աչքով չէի նայել, և, հանկարծ...

Այնպես ստացվեց, որ նույն մեքենայով պիտի քաղաք վերադառնայինք. արձակուրդները վերջացան, երկրորդ կուրսի ուսանողներ էինք արդեն։ Մեքենայում էլ իրար կողքի նստեցինք. թե ինչպես եղավ, ազնիվ խոսք, չեմ հիշում։ Մեր գյուղից մինչև Երևան երկու ժամվա ճանապարհ է։ Ոչ մի խոսք այդ ամբողջ ժամանակ։ Ասես օտար, անծանոթ մարդիկ էինք։ Գյուղացիներից մի երկուսը, մեկը մեր հարևանի տղա Վանիկը, փորձեցին կատակել, ձեռ առնել.

— Հրանտ, ասում է, ի՞նչ ես բերանդ ջուր առել, թե՞ Սիրանից քաշվում ես...

Հարձակումն անպատասխան թողեցի. լռեցին, ձեռք քաշեցին ինձնից։

Այդ երկու ժամը երկու օրվա նման երկար թվաց։ Բայց մի զարմանալի զգացում էր համակել ինձ. մեքենայի թափահարումից երբ ուսս դիպչում էր Սիրանի ուսին, կամ թեվին, ասես էլեկտրական մի խենթ հոսանք էր վազում իմ երակներով...

Վերջապես տեղ հասանք։ Մեքենան կանգնեց հանրակացարանից մի երկու հարյուր մետր հեռու։ Սիրանի ճամպրուկը մեծ էր ու ծանր։ Դե, ով գիտի մայրն ինչեր ասես, որ չէր լցրել մեջը, մեղր ու մուրաբա, միրգ ու թխվածք։ Առանց երկար մտածելու ճանկեցի իմ ու իր ճամպրուկները ու արագ քայլեցի դեպի հանրակացարան։ Ինքս էլ էի զարմացել իմ համարձակության վրա, բայց, ճիշտն ասած, իմ այդ քայլը ինձ էլ դուր եկավ, մի տեսակ ինքս բարձրացա իմ աչքում...

Սիրանն անխոս հետևեց ինձ։ Գնալով բեռս ծանրանում էր։ Կես ճանապարհը հազիվ էինք անցել, Սիրանը քաշեց թևս։

— Մի քիչ կանգնենք այս ծառի տակ։

— Քիչ մնաց արդեն. գուցե կգնայի՞նք։

— Ո՛չ, ցած դիր ճամպրուկները, տես, քրտնել ես, մի քիչ հանգստանանք։

Սրտիս հեռավոր ծալքերում մի նուրբ լար ծլնգաց. այդ ինչ անուշ ձայն էր...

— Սիրան, իսկ ես կարծում էի, թե...

— Մենք անխելք բաներ շատ ենք կարծում, և այդ լավ չէ։

Լռեցինք։ Միթե այլևս ասելու բան չկա, գրողը տանի, ախր տասնութ տարի շարունակ մեր խոսք ու զրույցին վերջ չկար, ի՞նչ պատահեց։

— Սիրա՜ն։

— Ի՞նչ, Հրանտ։

— Գուցե մեր ծնողները սխալ չեն գործել...

Սիրանի պատասխանն ուշացավ.— ասես ծոծրակիս սառը ջուր լցրին. մի՞թե անարձագանք է մնալու իմ խոսքը։ Բայց ոչ։

— Այդ մասին ես էլ եմ շատ մտածել, Հրանտ. ախր նրանք խելոք մարդիկ են։ Եվ ինչ պայմաններում են այդ ուխտն արել։

— Ուրե՞մն,— շունչս կտրվում էր։

— Դիժ-դիժ բաներ մի հարցնի, խնդրում եմ, էլ ի՞նչ ուրեմն...

Ու հանկարծ, ասես խոսքներս մեկ արած, նստեցինք մեծ ճամպրուկի վրա, կողք-կողքի, համարյա իրար կպած։ Սիրանի ձեռքն իմ ափի մեջ էր։ Եվ ինչո՞ւ էր մարմինս մի անսովոր սարսուռ պատել։ Քանի անգամ եմ Սիրանի ձեռքը բռնել, մազերից քաշել, և ոչ մի անգամ այդ զգացումը չեմ ունեցել։

— Շնորհակալ եմ, Սիրան։

— Դիժ։ Ինչի՞ց, ումի՞ց։

— Իմ բախտից, վարպետ Վահրամից։ Ի՞նչ հյուսն է, իսկական պրոֆեսոր։

— Ես էլ շնորհակալ եմ քեռի Արմենակից, իմ ամենասիրելի ուսուցչից, շնորհակալ եմ իմ հորից, լավ զինվորներ են եղել, կռվել են նամուսով, հիմա էլ ապրում են արդար վաստակով։

— Եվ ի՞նչ հեռատես մարդիկ են եղել։

— Միայն հեռատե՞ս, նա՝ լավատես։

— Ճիշտ է, աստված վկա, լավ ասացիր։

— Եվ մենք իրավունք ունե՞նք նրանց սիրտը կոտրելու...

— Դե, մի՞թե մենք կարող ենք այդքան անշնորհակալ լինել...

— Նրանք ամբողջ կյանքում այդ մասին են երազել, ու սպասում են...

— Սիրան, եթե ես հանկարծ գժվեմ ու քեզ համբուրեմ։

— Դու թամամ գժվել ես...

Եվ այդպես, Սիրանն ու ես «գժվեցինք» ու խնամքով կատարեցինք մեր ծնողների մարտական առաջադրանքը։

Ու միասին ապրում ենք, ավելի քան քսան տարի։ Երկու տղա, մի աղջիկ ունենք. մեր առաջնեկն արդեն ինստիտուտի ուսանողուհի է, տղաս զինվորական ծառայության մեջ է, փոքրը դպրոցական է։ Ապրում ենք, փառք աստծո, ամեն ինչ կարգին է։ Բայց, խոստովանում եմ, միշտ չէ, որ Սիրանի հետ իրար հասկանում ենք կես խոսքից։ Երբեմն թամամ խոսքն էլ տեղ չի հասնում... Մեկ էլ տեսար պարզ առուն պղտորվեց, ասես քար նետեցին առվի բերանը. և, ջուրը երկատված, սկսում է հոսել ոչ նույն հունով։ Բայց ասում են, թե բոլոր ընտանիքներում են այդպիսի պահեր, այդպիսի պղտորումներ լինում։ Դե, մենք էլ տեսնում ենք, որ բացառություն չենք կազմում։ Ու հաշտվում, համակերպվում ենք։ Եվ ապրում ենք, ինչպես ասում են՝ ոչինչ, մի քանիսից լավ, մի քանիսից էլ վատ։ Երբեմն հաշտ, մեկ-մեկ էլ անհաշտ։ Դե՛, ընտանիք է, ամեն ինչ կպատահի։

Բայց, խոստովանում եմ, մինչև հիմա էլ չեմ կարողանում կողմնորոշվել, վերջնական գնահատական տալ մեր ծնողների որոշմանը, նրանց ժամանակավրեպ առաջադրանքին։ Արդեն հրապարակի վրա է նրանց արածի արդյունքը։ Իսկ ինչպիսի՞ն կլիներ մյուս տարբերակը, որին, ասենք, խառը չէր լինի մեր ծնողների մատը։ Չգիտեմ։ Գուցե այն ժամանակ պղտոր ջրերը պարզելու ավելի շատ առիթներ կոմենայինք, հնարավոր է։ Գուցե իսկապես ամենախելոք տարբերակն է սա, ոչ ժխտել կարող եմ, ոչ հաստատել։ Բայց, չգիտեմ ինչու, հաճախ իմ մտքում մեխվում է այն հարցը, թե ինչպե՞ս կլիներ, եթե ես աղջիկ ծնվեի, Սիրանը՝ տղա։ Մենք

իհարկե, նորից ամուսիններ կլինեինք, դա կանխորոշված էր։ Բայց ինչպիսի՞ն կլինեի ես կնոջ, իսկ Սիրանը՝ ամուսնու դերում։ Հետաքրքիր է, չէ՞։ Մի անգամ ես այս մասին խոսեցի Սիրանի հետ։ Անակնկալի եկավ.

— Իսկապես,— ասում է,— ինչպե՞ս է, որ այդ բանն իմ մտքով չի անցել։— Հետո կատակի տվեց։

— Եթե ես քո ամուսինը լինեի,— ասում է,— ավելի ուշադիր կլինեի իմ կնոջ նկատմամբ։

— Իսկ հիմա, ասում եմ, քեզ ո՞վ է խանգարում ավելի ուշադիր լինել քո ամուսնու նկատմամբ։

— Դո՛ւ, ասում է, դո՛ւ ես խանգարում...

Իսկապես, ո՞վ, ի՞նչ է խանգարում և ինձ, և նրան։

Բայց և այնպես ինձ հանգիստ չի տալիս այն միտքը, որ ես, եթե նույնիսկ աղջիկ ծնվեի, միևնույն է, կյանքի նույն ընկերը պիտի ունենայի, որոշված էր, ի վերուստ։

Զարմանալի է, չէ՞։

Ինչեր ասես, որ մարդուս հետ չի պատահում...

ՏԱՏԻԿԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Ջահել ժամանակ Սիրուն Սանամ էր։ Հիմա էլ Սիրուն տատիկ են ասում։ Բարձրահասակ, փոքր ինչ առաջ թեքված, դեմքին կնճիռների մի քանդված կծիկ, գլխին՝ ճերմակ մազերի մի նիհար խուրձ։

Դեռ առույգ էր, կենսուրախ։ Մրսել էր թեթև, ու միանգամից կոտրվեց։

Հին ու նոր հիվանդությունները, խոսքերը մեկ արած, պաշարեցին տատիկի ամրոցները ու քայլ առ քայլ նախապատրաստում են նրա կործանումը։ Իսկ տատիկը, ինն ասուն տարիների ճնշող բեռն ուսերին, շարունակում է դիմադրել։ Հեշտ հանձնվողներից չէ։ Եթե, այնուամենայնիվ, նրան հարկադրեն գնալ այս աշխարհից, միևնույն է, պարտված չի հեռանա։ Լավ ժառանգներ ունի, ինժեներ ու զինվորական տղաներ, ուսուցչուհի աղջիկներ, լավ հարսներ։ Միայն թոռներն ու ծոռները չորս տասնյակի են հասնում։ Եվ ի՞նչ հոգատարությամբ են նրանք շրջապատել սիրելի տատիկին։

Գալիս են հերթով ու առանց հերթի, մեկ-մեկ ու խմբերով։ Եվ ամեն մեկի ձեռքին ուշադրության ու սիրո մի վկայագիր՝ ծաղիկ, միրգ կամ քաղցրավենիք։

— Տա՛տ ջան, փորձիր, այնպես համով է։

— Տատիկ, կնեղանամ, եթե չուտես։

— Տա՛տ, խնդրում եմ...

Ու տատիկը, հարգելով թոռնիկների «խնդրանքը», շարունակում է իր համառ դիմադրությունը, մաքառում է մահվան դեմ։ Բայց միևնույն է, տարիների բեռը ձգում է, ձգում։ Այսօր առանձնապես դժվար է շնչում, մի՞թե մոտենում է...

Տատիկի մոտ այս անգամ Անահիտն է հերթապահում։ Մեծ թոռն է. արդեն երկու երեխայի մայր։ Սա էլ մոր նման ուսուցչությամբ է զբաղվում։ Հիմա և տեսրեր է ուղղում և հիվանդին է խնամում։

— Իմ սիրուն տատիկ, ջուր տա՞մ, թե՞ թեյ կուզեիր։

Տատիկը թույլ ժպտում է, գիտի անպիտանը, որ իրեն դուր է գալիս, երբ Սիրուն տատիկ են կոչում։ Իսկ մի ժամանակ՝ Սիրուն Սանամ էր։ Հե՜յ գիտի աշխարհ, ի՜նչ օրեր է տեսել, գնացի՜ն...

— Մո՛տ եկ, թոռ ջան, քեզ բան ունեմ ասելու։ Այդպես։ Հիմա լսիր։ Դու քաջ աղջիկ ես, ես վաղուց գիտեմ, վախենալն ի՞նչ բան է... Քեզ, գիտե՞ս ինչ եմ խնդրում... Եթե հանկարծ, մի բան պատահի ինձ, հասկանո՞ւմ ես, չվախենաս, և չմոռանաս...

— Ի՞նչ, տատիկ, ասա, չեմ մոռանա։

— Բերանս կփակես. բաց չմնա... Մարդ մինչև վերջ պետք է սիրուն մնա...

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԻԿ...

1

Տղաս գնացել է քննության։ Ընթացիկ առարկա է, երկրորդ կուրսի հերթական քննություն։ Բայց միևնույն է, անհանգստանում եմ։ Երեխան լավ է պարապել, վատ էլ սո-

վորող չէ, և, այնուամենայնիվ, անհանգիստ եմ։ Սրտիս ծակոցները նորից գլուխ են բարձրացրել, հոգիս տակն ու վրա են անում։ Իսկ տղաս չի զանգահարում, արդեն քանի ժամ է անցել, մի՞թե դեռ չի հանձնել քննությունը։

Ժամերը, իրար պոչ բռնած, գնում են անշտապ, իսկ զանգը չկա։ Ի՞նչ պատահեց, գուցե անհաջող է անցել, անհարմար է զգում հայտնել, կամ առանց զանգելու տուն կգա, կուրախացնի...

Ճաշի ժամն էլ անցավ, լռած զանգը թույլ կտա՞ բերանդ բան դնես։ Սրտիս ծակոցները բազմապատկվում են, գնալով շնչելը դժվարանում է։ Սատանան տանի, մի քննություն է վերջապես, թեկուզ և անհաջող անցնի, աշխարհը հո չի՞ քանդվելու, ի՞նչ ես դռնեդուռ ընկել, հանդարտվիր, անհարմար է։ Սրտին բան կարո՞ղ ես հասկացնել...

Պառկել եմ թախտին, նստած մնալու համար էլ ուժ է պետք, իսկ ինչո՞ւ տպառվեցին ուժերդ, ախր քառասունդ նոր է անցել։ Գուցե հիվա՞նդ ես, ո՛չ, հիվանդությունը կարգին բան է, սա ավելի վատ է։ Մոր վիճակին նայելով՝ ինձ կարելի է նախանձել...

Երեկոյան կողմ վերջապես տուն եկավ մեր ջահելը, ուրախ է, զգեստրված։

— Մի այնպիսի նկար տեսա, կինո «Մոսկվայում» է գնում, դուք էլ գնացեք, անպայման։

— Ա՛յ տղա, քննության մասին ասա,— անհամբեր հարցնում է մայրը։

— Քննությո՞ւնը,— զարմանում է,— լավ եմ ստացել, իսկ ի՞նչ կա։

— Աչքիդ լույսը կա,— պայթում եմ ես,— ու զարմանքով նկատում եմ, որ մեղմանում են սրտիս ծակոցները։— Դու ե՞րբ պիտի մարդ դառնաս, գիտես, որ անհամբեր սպասում ենք, չէի՞ր կարող զանգահարել։

— Մոռացա, հայրի՛կ, հետո տղաների հետ կինո գնացինք։— Հետո հարձակման է անցնում,— ախր ի՞նչ կա անհանգստանալու, զարմանալի մարդիկ եք։

Մեծս ընկերոջ մոտ է գնացել, ծննդյան արարողության։ Այս ջահելների մոտ այնքան շատ են ծնունդները, շաբաթը մեկ-երկու անգամ։ Ընկերական շրջապատն է մեծ, թե՞ տարվա մեջ մի քանի անգամ են ծնվում...

Երեկոյան կողմ-է գնացել. գիշերը կիսվել է վաղուց, տուն չի գալիս։ Ոչ էլ զանգ կա։ Փորձիր քնել։ Մոր հետ հերթապահում ենք, դուրս ենք գալիս պատշգամբ, նայում փողոցի կողմը, չի՞ երևում։ Մրսում ենք բավական, ախր խելառ մարտն է, քամին հանգիստ չի տալիս։ Հետո տուն ենք մտնում։ Ու՝ նորից, նորից։ Այսպես ավելի քան երկու ժամ։ Տղաս չկա ու չկա։

— Դե՛, լավ, գնա պառկիր։ Կգա, էլի՛, ի՞նչ ենք անհանգստանում, հո երեխա չի։

— Այ մարդ, ի՞նձ ես ասում, մեղք ես, դո՛ւ քնիր, վաղն աշխատանքի ես գնալու։

Էլ ինչ վաղը, ժամը երկուսն է արդեն։

Իրար հույս տալով, ժամերի ականջներից բռնած, տանում ենք։ Հերթափոխությունը շարունակվում է։ Անհանգստության բաժակը լցվելու վրա է։ Ախր ամեն բան էլ կարող է պատահել, խմած մարդու հանդիպել կա, կռվարար չէ, բայց ով գիտի... մեքենայի տակ ընկնելու վտանգ... Պապանձվի լեղուդ... վերջապես քաղաքի գիշերային փողոցներում անպիտան մարդ միշտ էլ կճարվի։

Եվ ինչո՞ւ այսպիսի դեպքերում միայն վատն ես մտածում։ Գուցե հենց հիմա դուռը կբացվի ու ներս կգա տղադ կենսուրախ, հաճելի տրամադրությամբ։

Եվ իսկապես, չխկաց դուռը։ Վերջապես տուն եկավ մոլորյալս։ Որոշել էի չխոսել, հո առաջին անգամը չի, համը դուրս է եկել։ Չհամբերեցի, նյարդերս շատ էին ձգված։

— Նորի՞ց նույն պատմությունը, որ մի քիչ շտապեիր, վա՞տ կլիներ, չե՞ս կարող չանհանգստացնել։

— Իսկ դուք չե՞ք կարող չանհանգստանալ, տեղին, անտեղի, զարմանալի մարդիկ եք, աստվա՞ծ վկա։

Ա՛յ, այս մեկը ճիշտ է, իսկապես որ ծնողները հաճախ շա՞տ են զարմանալի...

Գրականության դաս է իններորդ դասարանում։

— Սինանյան, ի՞նչ է պատահել քեզ, անցյալ օրը դասից էիր ուշացել, այսօր դասդ վատ գիտես, սա էլ նո՞ր բան է։

Բարձրահասակ ու գեղեցկադեմ աշակերտը լուռ է. ճիշտ դիտողությանն ի՞նչ պատասխան կարող ես տալ։ Գլուխը կախ նայում է նոր գնած կոշիկներին։

— Հորդ կասես վաղը գա ինձ մոտ, որ ժամին իրեն հարմար է։

Գլխով համաձայնության նշան։

Երկու օր հետո նորից գրականության դաս է։

— Սինանյան, երեկ ես ամբողջ օրը դպրոցում էի, հայրդ չեկավ, ինչո՞ւ, թե՞ չէիր հայտնել իմ հանձնարարությունը։

— Ո՛չ, ասել եմ... Երևի զբաղված էր...

Դասատուն մի զննող հայացքով նայեց աշակերտին, բայց ոչինչ չասաց։

Զանգը հնչեց երկար ու անընդմեջ, վերջին ժամն էր։ Աշակերտներն աղմուկով դուրս թռան դասարանից։ Իսկ դասատուն դեռ նստած է, մատյանում ինչ-որ գրանցումներ է անում։ Գլուխը բարձրացրեց. դասարանում ինքն էր ու Սինանյանը, որը նորից գլուխը կախ իր բարձրակրունկ ու ծանր կոշիկներին էր նայում։

— Սահակ, բա՞ն ունես ինձ ասելու։

— Ընկեր Երանյան, ես ուզում էի... Կարելի՞ է...

— Լսում եմ։

— Ես ձեզ... ճիշտ չասացի, ընկեր Երանյան։ Հորս չեմ հայտնել ձեր հանձնարարությունը, և խիղճս...

— Գիտեմ, որ ստեցիր, և, ճիշտն ասած, չէի սպասում։

— Գիտեք, որտեղի՞ց։

— Երեկոյան հայրդ ինձ տուն զանգահարեց, գիտես, որ հին ընկերներ ենք։ Քո մասին էր հարցնում։ Եվ շատ զարմացավ, որ իրեն ոչինչ չես ասել։

— Երևի այդ խոսակցությունից հետո էր, ասում է՝ Սահակ, ինչպե՞ս են գործերդ դպրոցում, բողոք-բան չկա՞։ Ասացի՝ ոչ հայրիկ, լավ է... Դժվար ասացի, երևի ականջներս էլ կարմրեցին...

— Գիտե՞ս ինչ, տղա, աշխարհում սուտ խոսելուց վատ բան երևի չկա։ Աշխատիր հեռու մնալ այդ ախտից։ Եթե սուտ ասելով կյանքդ կարող ես փրկել, էլի մի ստիր... Ուրախ եմ, որ ինքդ խոստովանեցիր։

— Ներեցեք, ընկեր Երանյան։

— Գոհ եմ, և համոզված, որ այլևս ո՛չ կուշանաս դասից, ո՛չ էլ անպատրաստ դասի կգաս։

— Խոստանում եմ։

— Ապրես։ Դե՛, գնա տուն, ծնողներիդ իմ բարևները հաղորդիր։

— Շնորհակալություն, ընկեր Երանյան։

Ու ինչպե՞ս թեթև դուրս վազեց դասարանից...

ԵՐԱՆԻ ՆՈՐԻՑ ԿԱՆՉԵԻՆ

Բանակում ծառայելու իմ բաժինը վաղուց եմ ավարտել։ Բուժվել են պատերազմի հասցրած վերքերը. փույթ չէ, թե սպիները մնում են...

Մի ժամանակ դեռ շարունակում էին կանչել զինվորական կոմիսարիատ։ Ինչ-որ թղթեր էին լրացնում, կյանքիս նորաբաց էջերն էին արձանագրում։ Կարգ է, ոչինչ չես ասի։ Բայց երբեմն դժգոհության ալիքն էր բարձրանում սրտիս ծալքերում. հիմա՞ ինչու են կանչում, փառք աստծո, խաղաղ տարիներ են, դե՛, արդեն ջահել էլ չեմ։ Ամեն անգամ մի տխուր սրտնեղություն էի ապրում կանչ ստանալիս։

Եվ արդեն մի տարի է, այլևս չեն կանչում, ու կանչի հեռանկար չկա։ Վերջին անգամ ասացին՝ հաշվառումից հանում ենք ձեզ։ Հաշվից դուրս, դավթարից ջնջված...

Այլևս չեն կանչում։ Հիմա էլ չկանչվելուց եմ սրտնեղվում։

Այնպես տխո՞ւր է...

ԽՂՃԻ ՁԱՅՆԸ

Նստել են դեմ-դիմաց ու չգիտեն ինչից սկսել խոսակցությունը։ Զրույցը չի ստացվում։ Ինչո՞ւ. ասելու բա՞ն չունենչ թե՞ ասելիքի առատությունն է խեղդում... Երեք տարի միա-

սին են սովորել մանկավարժական ուսումնարանում, երեք տարվա ընկերություն միայն։ Ավարտելուց հետո չվել են տարբեր կողմերի վրա։ Հարությունը մանկավարժական ինստիտուտ է գնացել, իսկ Ավագը «դավաճանել է» իր մասնագիտությանը. իրավաբանական ֆակուլտետը նրան վաղուց էր ձգում։ Եվ արդարանում էր ոչ առանց հիմքի,— իսկական իրավաբանը նաև մանկավարժ պիտի լինի։ Տարիներ հետո մեկն ուսուցիչ էր, մյուսը՝ դատավոր։ Եվ ամեն մեկի ուսերին փորձի պատկառելի բեռ կար արդեն։

Ու զարմանալին այն էր, որ այդ շուրջ երկու տասնյակ տարիների ընթացքում նրանք այլևս իրար չէին հանդիպել։ Ավագը մեծ մասամբ շրջաններում էր պաշտոնավարել. Հարությունը մայրաքաղաքի դպրոցներից մեկում պատմություն էր դասավանդում։ Գուցե ճշմարիտ պատճառն այն է, որ նրանք, այնուամենայնիվ, մտերիմ ընկերներ չեն եղել, թե չէ ժամանակի ու տարածության հեռավորությունն այդքան վճռական իրավունքներից դժվար թե օգտվել կարողանար...

Ու հիմա նստել են դեմ-դիմաց՝ շրջանից քաղաք տեղափոխված դատավոր Ավագ Ավագյանն ու ուսուցիչ Հարություն Հարությունյանը։ Մեկի քունքերն են ճերմակին տալիս, մյուսի գլխի կեսից ավելին «մաղապուրծ» է եղել... իսկ ինչ ջահելներ էին, կրակոտ աչքերով ու փարթամ մազափնջերով, սանր չէր դիմանում։ Հարությունի մոտ այն տարիների մի լուսանկար կա, երեքով են, Լուսիկն էլ իրենց հետ է, այն Լուսիկը, որի հետ առանձնապես մտերիմ էր Ավագը, անբաժան զույգ, ինչպես կատակով կոչում էին ընկերները։ Բայց հետո մի դատարկ առիթով գժտվեցին ու վերջ։ Լուսանկարը ցույց չի տալիս, մի տեսակ անհարմար է զգում, ինչո՞ւ, գուցե դա կբացեր զրույցի շղթան...

— Չգիտեմ, հիմա ես քեզ ինչպե՞ս պիտի դիմեմ, ընկեր Ավագյա՞ն, թե՞ քաղաքացի դատավոր։— Դժվար տրվեց այդ հարցը, և այն իր մեջ կեղծավոր նոտա չէր պարունակում։

— Ամոթ է, Հարություն, ինչե՞ր ես ասում, մենք հին ընկերներ ենք։

— Այո՛, այս դեպքում, դժբախտաբար, հին։

— Իսկ դա խանգարո՞ւմ է գործին։

— Քո դիմաց հանցագործ է նստած. դու, կարծեմ, ծանոթացել ես մեղադրական եզրակացությանը։

— Կարդացել եմ. դա դեռ ոչինչ չի նշանակում։

— Ինձ մեղադրում են համարյա գողության մեջ, կաշառք եմ վերցրել և այն էլ՝ աշակերտներից, դա իսկապես ոչինչ չի՞ նշանակում։

— Ամեն մեղադրանք չէ, որ հալած յուղի տեղ են դնում։ Ես, գոնե, դյուրահավատներից չեմ։ Եվ, գիտե՞ս, ապացույցներն էլ բավարար չեն, հակասական բացատրություններ կան։ Դու մի շտապիր։

— Իսկ ես, որքան նկատել եմ, ձեր պրակտիկայում ավելի շատ հակված են մեղադրանքը հաստատելու, քան թե հերքելու...

— Դու ավելի վատ կարծիք ունես մերոնց մասին, քան նրանք արժանի են դրան։

— Տա՜ աստված, որ այդպես լինի։ Ցավոք հաճախ այնքան վատ բան ես լսում, որ տխուր կարծիքն ինքն իրեն ամրանում է քո մեջ և դու, վատատես մարդ չլինելով հանդերձ, լավ բան չես սպասում այլևս...

— Իսկ ես քեզ խորհուրդ կտայի ամենամութ սենյակում անգամ լույսի շող փնտրել. այդ հույսը, այդ հավատն է մարդուն պահում։

— Եթե ինձ այդ խոսքն ասում է ոչ թե ընկերը, այլ ժողովրդական դատավորը, ուրեմն ես իսկապես ինձ երջանիկ զգալու հիմքեր ունեմ։

— Չէ՜, շատ ես կոտրվել, նախկին ընկեր, չէի սպասում։

— Կոտրեցին, այս է տխուր ճշմարտությունը...

— Հիշո՞ւմ ես, ուսումնարանում մի ընկերուհի ունեինք, Լուսիկ էր անունը։

— Բա չե՞մ հիշում, այդ օրերի լուսանկարն էլ մոտս է։

— Իսկապե՞ս. ա՜յ, դա հաճելի անակնկալ էր ինձ համար։ Ու երկար նայում էր ջահել օրերի անխարդախ փաստաթուղթը։ Լուսիկի դեմքին ծանոթ ժպիտն է թառել, նրան մի առանձին հմայք տվող ժպիտը. աչքերը խոշոր ու սև, ասես լուսարձակներ լինեն, ճակատը լայն, ծամերի զույգ հյուսքը կրծքին նետած։

— Լավ աղջիկ էր, ափսո՞ս, բախտը սրան էլ չժպտաց։

— Ի՞նչ է, դու հանդիպե՞լ ես նրան, որտե՞ղ է, ի՞նչ է անում։

— Մի հինգ տարի առաջ եմ տեսել, նորից տխուր գործով էր ինձ մոտ եկել, դե՛, ի՛նչ կարող ես ասել, իմ մասնագիտությունն էլ այդպիսին է. բժշկի մոտ հիվանդն է անպակաս, դատավորի մոտ էլ՝ մեղավորը, հաճախ էլ՝ անմեղ մեղավորը։

— Հուսամ, որ Լուսիկն անմեղների մեջ էր։

— Միայն այդպես։ Նա լավն էր։ Միայն ափսոս, որ հանդիպել է մի հարբեցող ու անբարոյական մարդու։ Երկու երեխայի մայր էր, երբ ինձ մոտ եկավ. ինչպես ասում են՝ դանակը ոսկորին էր հասել. խնդրում էր լուծել իրենց բաժանության հարցը։ Եվ ինձ չթողեց խիստ միջոցների դիմել։ Պետք չէ, ասում է, նա, այնուամենայնիվ, իմ երեխաների հայրն է...

— Իսկ շա՞տ էր փոխվել։

— Միայն դեպի լավը. նույն հմայիչ Լուսիկն էր, բայց այս անգամ նրա ծանոթ ժպիտի մեջ թույնի բաժին կար խառնված, ու նիհարել էր նկատելի։ Դե, հոգեկան այդ վիճակում, հասկանալի է...

— Անցյալի մասին խոսք եղա՞վ։

— Հուզված պահին մի անգամ ասաց՝ հիշո՞ւմ ես, Ավագ, մեր ուսանողական կյանքը, երանի՜ այդ օրերին... իսկ ես ուզում էի գոռալ՝ Լուսի՜կ, ե՛ս եմ մեղավորը, որ քո կյանքն այդպես վատ է դասավորվել, ե՛ս էի հիմարը, նույնիսկ ուզում էի ներողություն խնդրել, չկարողացա, դե, երևի պետք էլ չէր...

— Ափսոս, շա՞տ ափսոս։

— Հարությունն, այդ լուսանկարը կարո՞ղ ես ինձ նվիրել,

— Խնդրեմ, միայն մի պայմանով, որ այն կաշառք չդիտվի...

— Իսկապես՝ որ աչքդ շատ են վախեցրել, իսկ ես քեզ ավելի պինդ մարդ էի կարծում։ Մեր օրերում անհրաժեշտ վճռականության ու հաստատակամության պակասը մարդուն կործանել կարող են։ Արիացիր, անհարմար է։

Զիլ ու երկար հնչեց հեռախոսի զանգը։ Ավագյանը խոսում էր ինչ-որ մեկի հետ, ավելի շատ լսում էր ու մեկ-մեկ «այո» կամ «ոչ» ասում։ Եվ Հարությունն զգում էր, որ ցրված

ու անտրամադիր է խոսում Ավագը։ Ավելի շատ մտածում էր նա. տեսնես ինչի՞ և ո՞ւմ մասին։ Իսկ դատավորի մտքում իրենց պատանեկության տարիներն էին թնածում։ Միասին պիոներական ճամբար են գնացել, քանի անգամ են Զանգուլում լողացել։ Ու զարմանալի լավ է հիշում Հարությունի ազնվությունը, ամեն մի հարցում, մաքրասեր էր, զգայուն, ընկերներին աշխատում էր հեռու պահել վատ քայլերից։ Մի անգամ Լուսիկին վիրավորեցին հարևան դասարանի տղաները. Հարությունն ինչպես մեջ ընկավ, աղջկա պաշտպանությունը վերցրեց իր վրա, և այդ ավելի շատ իր, Ավագի համար էր։ Ծեծվեց կարգին, բայց գոհ էր իր քայլից։ Մի անգամ էլ իրենց տուն տարավ, մորը շատ էր դուր եկել,— լավ բալա է, ասաց, դրա հետ կարգին ընկերություն արա։ Ինչո՞ւ չստացվեց այդ կարգին ընկերությունը... Հիմա Հարությունին մեղադրում են, և այն էլ՝ կաշառակերության մեջ, իբր թե աշակերտներից փող է վերցրել բարձր գնահատական նշանակելու համար։ Հնարավո՞ր է այդ, Հարությունն ընդունա՞կ է դրան։

— Ավագ, ես քեզ խնդրում եմ հրաժարվես այս գործը վարելուց. երկու բանսարկու ուսուցիչ ունենք, իրենց առարկայից ավելի լավ զրպարտագրեր հորինել գիտեն.

— Հետո՞, ասելդ ի՞նչ է։

— Նրանք քեզ էլ կկեղտոտեն. կիմանան, որ նախկին դասընկերներ ենք, և այլևս հանգիստ չես ունենա։

— Հետո՞, ասելդ ի՞նչ է, քեզ թողեմ գայլերի երախո՞ւմ։ Եվ, կարծում ես, չի՞ կարելի նրանց հերն անիծել։

— Կներես, ընկեր դատավոր, դժբախտաբար չեմ հիշում զրպարտչին պատժելու գոնե մի դեպք, նրանք, այդ ջուր պղտորողները, ինչո՞ւ, կյանք թունավորողները միշտ անպատիժ են մնում, չգիտեմ այդ արտոնությունը նրանց ինչ օրենքով է տրված։

— Ոչ մի օրենքով, պարզապես այդպիսիները մանր ձրկների նման շատ են լպրծուն, հաճախ դժվար է լինում բռնելը։

— Կներես, մխիթարող բացատրություն չէ։

Հետո, հանկարծ, Հարությունը նոր հարձակման անցավ։

— Ախր մենք համարյա քսան տարի չենք հանդիպել, ի՞նչ

գիտես ես ով եմ հիմա, գուցե ժամանակն ինձ էլ է փչացրել. ծանր բեռ մի վերցնի քեզ վրա։

— Հարությունն, հոգուս հետ մի խաղա, խնդրում եմ, ես չեմ հավատում քո այդ հեքիաթներին, դու չէիր կարող փչանալ, դու կարգին տղա էիր։

— Շնորհակալ եմ, Ավագ։

— Ինչի՞ համար։

— Քո շիտակ խոսքի, քո անխախտ հավատի, ուրեմն դեռ ընկերություն կա, սրբություն կա, դա մեծ հարստություն է։

— Հիշո՞ւմ ես, մի անգամ մեր տուն եկար, մայրս քեզ շատ էր հավանել, ազնիվ բալա է, ասում էր, իսկ մոր սիրտն անսխալական է։

— Մինչև հիմա ասես դեռ բերանումս է մորդ եփած խառը տոլմայի համը... ինչպե՞ս է, բարևիր, խնդրում եմ. երևի մեծացել է։

— Մահացավ, երեք տարի առաջ։

— Ների՛ր, և ընդունիր իմ ուշացած ցավակցությունը...

Տիրեց մի ճնշող լռություն։ Նորից փրկեց հեռախոսի զանգը։ Ավագը խոստացավ կես ժամ հետո վերև գնալ, ավելի շուտ նրան կանչեցին խորհրդակցության։

— Եվ այսպես,— հանկարծ պաշտոնական տոնի անցավ Ավագյանը,— մեղադրյալ Հարությունյան, ես չեմ հավատում ձեր հասցեին արված մեղադրանքներին. դուք անմեղ եք, ձեզ զրպարտել են։

— Շնորհակալ եմ, Ավագ,— Հարությունը նկատելի հուզված էր, և այն թաքցնել չէր կարողանում,— ես որ գալիս էի քեզ մոտ, այդ խոսքն էի ուզում լսել, ուրիշ ոչինչ. միայն թե դու չհավատաս, որ ես կարող եմ, ընդունակ եմ նման քայլի...

— Չեմ թաքցնում, տատանվեցի մի պահ, մի խենթ կասկած մտավ սիրտս, բայց լավ էր, արագ էլ լքեց ինձ, մանավանդ երբ հիշեցի մորս խոսքը...

— Հիշում եմ, Ավագ, իմ մանկության տարիներից մի դեպք. դեռ գյուղում էինք ապրում. լսիր, խնդրում եմ։

Մեկին մեղադրում էին գողության մեջ, իբր թե հարևանի ոչխարն է գողացել։ Սա հրաժարվում էր, ասված վկա, ասում էր, ես խաբար չեմ էդ բանից։ Չէին հավատում,

տխուր կասկածներ կային։ Եվ չեմ մոռանում դատի ժամանակ նետած նրա մի խոսքը,— այ ժողովուրդ, ասաց՝ դառնալով համագյուղացիներին, ինձ մխիթարում է էն միտքը, որ էդ ոչխարի գողը գոնե հավատում է իմ անմեղությանը... Գուցե անհաջող օրինակ է, բայց այդպես է, կյանքում որ ոչ մեկը քեզ չհավատաց, ապրել չի լինի... Հիմա դու ինձ փրկեցիր կործանումից, քո հավատով, քո ազնիվ վստահությամբ, էլ դատարանի որոշումից չեմ վախենում, ինչ ուզում են, թող անեն։

— Ես չեմ թողնի, կտեսնես։

— Չես կարող, ախպերս, նրանք սուտ վկաներ ունեն, բուռ սիրտ ու շար լեզու։ Հրաժարվիր, խնդրում եմ, այս գործից, թե չէ քեզ էլ կկեղտոտեն, ու կրկնակի ծանր կլինի ինձ համար։

— Միևնույն է, ես իմ խղճի ձայնին պիտի լսեմ ու կպայքարեմ, թեկուզ և մինչև լիակատար պարտություն...

ԻՆՉ ՇՈՒՏ ԱՆՑԱՎ ՇԱԲԱԹԸ...

Գյուղ տանող ճանապարհը լայն է, խճապատ։ Եվ անցնում է ծով արտերի միջով։ Դեղնականաչ ծով։ Ու ծովի մեջքով ձգված լայնաշուրթ մի գոտի, ասես դեպի հեռուներն շտապող նավ է ճեղքել ու անցել՝ ջրերի փրփուր փեշերն իրար տալով։

Իրիկնային քամուց արտերն օրորվում են հանդարտ ու ալիք-ալիք գնում հեռուները։

Դիմացը, թվում է շատ մոտիկ, մանր ու մեծ լեռների մի շղթա է ձգվել՝ գզգզված ամպերի մալանշներն ուսներին առած։ Եվ արևի գունդն անշտապ սահում է ցած՝ լեռնապարի թիկունքում գիշերելու համար։ «Վոլգան» օրորվում է հանդարտ ու արտերի կուրծքը ճեղքելով՝ առաջ սուրում։ Ընթացքի հետ ռադիոն ձգում է՝ «Սիրուն Երևան, գարուն Երևան...»։

— Սամվել, աչքիս մի տեսակ ես երևում, շատ ես աջ ու ձախ նայում։— Դարձա ընկերոջս։

— Հիացած եմ, ուրիշ բան չկա։

— Հիացա՞ծ ես, լավ է, իսկ ինչո՞վ։

— Արտերի ծովով, ոսկեզօծ լեռնապարով, այս շնկշնկան հովով։ Մենակ...

— Էլի կասկածը սրտո՞ւմդ է։

— Հա՛, ախպերս, վախենում եմ չդիմանամ. գյուղում, մի ամբողջ շաբաթ, ի՞նչ պիտի անենք, ինչպե՞ս կանցնի օրը։ Քեզ համար հեշտ է, քո ծննդավայրն է, հարազատներ ու ընկերներ ունես, այնտեղ ամեն թուփ ու քար ծանոթ-մտերիմ է քեզ։

— Իսկ քեզ ի՞նչն է վախեցնում։

— Քաղաքում մեծացած մարդու հիմար բնավորությունը։ Ու, թե ճիշտն ասենք, նաև երես ենք առել, վատ ենք սովորել Սոչիներին ու Կիսլովոդսկներին։ Հիմա, միանգամից, աշխարհի ծերին թառած այս գյուղը... Ասացիր գետ ունեք։

— Դրա համար էլ գյուղը կոչվում է Գետաշեն։

— Լիճ էլ ունեք։

— Մեր Կապույտ լիճը Ռիցայի հետ մրցել կարող է։

— Լոպազանում ես, Վահան, համեստ մարդու էլ համբավ ունես։

— Լավ, ես քեզ հետ մի շաբաթ հետո կխոսեմ։

— Եթե այդքան դիմացա...

Գյուղի առաջին տներից փոքր-ինչ հեռու վեր է խոյացել Մեծ հայրենականում զոհված մարտիկների հիշատակ-հուշարձանը։ Հազար ութ հարյուրից-ավելի երիտասարդներ գնացել են հայրենիքը պաշտպանելու, և համարյա երկուսից մեկը մնացել է մեծ հաղթանակի դժվար ճամփաներին։ Ութ հարյուր հոգի՝ մի գյուղից, կենսուրախ, աչքը հազար մուրազի ջահելներ։ Երախտապարտ ապրողների ջանքերով կառուցված կոթողը և՛ գյուղի այդ ջահել նահատակների հիշատակն է հավերժացնում, և՛ աշխարհակործան պատերազմն է լուռ դատապարտում։ Ու նաև բարի գալուստ է մաղթում գյուղ մտնողներին...

* * *

Սովորական գյուղ է։ Տների մեծ մասը երկհարկանի, կըղմինդրածածկ, դիմացը՝ ծառ ու ծաղիկ։ Միայն գյուղի կենտրոնում, այսինքն ամենահին թաղամասերում, որտեղ տները շատ են խիտ, մեկի կտուրն ասես մյուսի բակն է, պակաս է ծառն ու կանաչը, այստեղ նկատելի չորություն կա։

Հետո գյուղը ձգվել է գետի աջ ու ձախ ափերով, դեպի վեր ու վար, ու տներն ասես թաքնվել են այգիների մեջ, պահմտոցի են խաղում ծառերի ետևում...

— Փողոցները բարեկարգ չեն, անձրև օրերին կարգին ցեխ կլինի այստեղ,— մտածում է Սամվելը,— եթե կոշիկներդ չկորցնես, ուրեմն լավ է։

Բայց այդ նույն փողոցները գեղեցկացնում են երեք-չորս հարյուր քայլը մեկ պատահող ջրառատ ծորակները. սառը և դուրեկան ջուր է։

— Կապույտ լճից է գալիս,— ասում է Վահանը.— ու չես ժխտի, որ Երևանի ջրից մի «գրադուսով» բարձր է։

— Նորի՞ց սկսեցիր գլուխ գովելը։

— Ես պարզապես սիրում եմ իրերը կոչել իրենց անուններով։

— Իսկ եթե այդ նույն չափանիշով գնահատելու լինենք ձեր փողոցների վիճա՞կը։

— Այդտեղ ես ձենս կկտրեմ, որովհետև խոսելու տեղ չունեմ։

— Դե՛, ուրեմն, լռիր և թույլ տուր մեկ անգամ ևս վայելել այս հրաշալի ջուրը։

— Գիտե՛ս, Սամվել, մենք տարիներ առաջ ջուր չունեինք, չնայած գետը կար. խոսքս խմելու ջրի մասին է։ Ամբողջ գյուղում մի քանի աղբյուր կար, գետի տակից դուրս ծորող սակավաջուր աղբյուրներ։ Կանայք ու ջահել աղջիկները հերթ էին կանգնում, փարչերով ջուր էին լցնում կժերի մեջ և շալակած տուն էին տանում։ Օրվա մեջ մի քանի անգամ։ Դա տառապալից աշխատանք էր։ Բայց այդ աղբյուրները նաև աղջիկ հավանելու տեղեր էին, հայրս այդ ճանապարհին է տեսել ու հավանել մորս. ցավոք, երկուսն էլ չկան վաղուց...

— Հայրդ, գիտեմ, որ պատերազմում է զոհվել։

— Մայրս էլ մի քանի տարի առաջ գնաց... Իսկ մորս մայրը դեռ ապրում է, ութսունի սահմանն անցել է մի երկու տարի առաջ։

— Թող ապրի, ինչքան կարող է, ո՞ւմ է խանգարում։

— Երեք տղա պատերազմում է կորցրել, երկու աղջիկ՝ այստեղ. իր բախտն անիծելով՝ ապրում է...

***

Վարդանուշ տատիկը գյուղի վերին ծայրին է ապրում, «Թենոտ» կոչված թաղամասում, համարյա գետափին։ Փոքր աղջկա՝ Սաթենիկի տանն է։ Փոքր, բայց արդեն հիսունն անց է, բանակ գնացած-վերադարձած տղաներ ունի, թոռնատեր է։ Այստեղ պիտի ապրեն տղաները, մորաքույր Սաթենիկի ու Վարդանուշ տատիկի մոտ։

Նոր էին դռան մոտի աղբյուրի ջրով լվացվել, երբ հարևան բակից լսվեց մի բամբ ձայն.

— Բարի օր ձեզ, ա՛ ջահելներ։

Համբարձում քեռին է, յոթանասունին մոտ, բայց դեռ առույգ մի ծերունի. ճիշտ է, սպիտակ, բայց մազառատ գլխով ու բեղ-մորուքով։ Վերջին կռվի մասնակից է, կերշից մի վերք է տուն բերել ու մի մեդալ։

— Ի՞նչ կա Երևանում, Վահան, թոռներիցս ի՞նչ խաբար ունես։

— Լավ են, Համբարձում քեռի, շատ-շատ բարևում են, Սարգիսն էլ մի քիչ բան-ման է ուղարկել քեզ համար։

— Ապրի, շնորհքը շատ լինի, ամա ինչի՞ ա նեղություն քաշում, փառք աստծո, ոչ մի բանի պակասություն չունենք, էս տարի կոլխոզի գործերն էլ լավ են, էնպես ենք ապրում, որ մեր գյուղի առաջվա բեկերը ղալաթ չեն արել։ Շեն մնա սովետի երկիրը։

— Առանձին նեղություն չկա, Համբարձում քեռի, ասում է, պապս սիրում է Երևանի կոնյակը։

— Էդ մեկը սուտ չի, Վահան ջան, դե, սիրելու բանը կսիրեն, բա ինչպե՞ս։

— Մեր թթի օղին կոնյակից պակաս չի։

— Դրան էլ շատ համաձայն եմ։ Հիմա կփորձենք։

Ու Համբարձում քեռին շտապ անցավ երկու բակի սահմանը, մոտեցավ տղաներին, ամուր սեղմեց նրանց ձեռքը, գրպանից մի շիշ օղի հանեց.

— Սաթենիկ, օղորմի հորդ, մի երկու բաժակ բեր։

— Համբարձում, թող տղաները մի բերան հաց ուտեն, նոր,— նեղսրտեց Վարդանուշ տատիկը։

— Բա առանց էս օրհնված ջրի հացը կուլ կգնա՞, Վարդանուշ քույրիկ, դու սեղանը գցիր։

— Կոնյակ չխմե՞նք, քեռի Համբարձում, ասացիք սիրում եք,— խոսակցությանը միջամտեց Սամվելը։

— Չէ՛, առաջ՝ իմ սարքած օղին, հետո դուք գիտեք։

Ու լցրեց բաժակները. պղպջակների շղթան գոտի կապեց բաժակի մեջքով։

— Թունդ է երևում, կվառի,— կասկած հայտնեց Սամվելը։

— Չէ, ախպոր տղա, անջախ մի հիսուն-վաթսուն գրադուս լինի, դատարկ բան է։ Դե՛, բարով եք եկել, ուր էլ գնաք, ինչ էլ անեք, փոշմանություն չլինի։ Ու եկող տարի նորից մեր գյուղը գաք, թե չէ կմտածենք, որ չհավանեցինք, կամ նեղացրինք մարդկանց, դրա համար չեկան։ Դե՛, աստված ձեզ հետ,— ու կուլ տվեց մի շնչով, վրան էլ, նույն բաժակով, մի քանի կում ջուր խմեց։— Օխա՜յ, օրհնվի սրա հնարողը, էս ջուր բերողի էլ հոգին լույս դառնա։

— Իսկ ո՞վ է բերել ձեր ջուրը, որտեղի՞ց։

— Վահան, դո՛ւ պատմիր ընկերոջդ, ես գնացի։

Ու Համբարձում քեռին ջահելավարի քայլեց դեպի իր այգին։

Վահանն անցավ ջրի պատմությանը։ Գյուղացիներից մեկը, Իսահակ անունով, պատանի հասակում դուրս է գալիս գյուղից, գնում մեծ քաղաքները տովորելու։ Գյուղի հետ կապ քիչ է ունենում, ավելի շուտ՝ նամակագրական։ Ինստիտուտ է ավարտում, ինժեներ է դառնում։ Բայց երևի գյուղի սերը պահում է հոգու խորքում։ Ու որոշում է ջուր բերել գյուղ։ Եվ բերում է, իհարկե, ամբողջ գյուղի օգնությամբ։ Ու էդ ջրի հետ ինքն էլ անմահանում է։ Վաղուց չկա նա, բայց չի կարող գյուղում ուրախության կամ տխրության առիթով որևէ հավաք լինի, որտեղ հատուկ բաժակով չհարգվի նրա հիշատակը։ «Թող մեր մեջ Իսահակներ շատ լինեն, թող նրա անունը միշտ մնա մեր սրտում, հավիտյանս հավիտենից...»։

***

Անծանոթ գյուղ, անծանոթ անկողին. քունը մոտ չի գալիս Սամվելի աչքին։ Հիմա Երևանում ինչ շոգ կլինի, մտա-

ծում է նա, իսկ այստեղ՝ ձմեռային վերմակի տակ հաճելի զով է։ Գետահայաց պատուհանից լսվում է քարեքար խփվող ջրերի ամոթխած քչքչոցը։ Ու ասես դրան արձագանքում է ծղրիդների միալար երգը։ Գիշերը շատ է խորհրդավոր։ Հո Կամսարյանի վիճակում չե՞մ, մտածում է Սամվելը. ո՛չ, Զիբուխլուն ո՞ւր, այսօրվա Գետաշենն ո՞ւր։ Բայց և այնպես գյուղ է. ըմբոստանում է մի ներքին ձայն,— իր գոմաղբի բուրմունքով, իր կովերի բառաչով ու աքլորների կանչով, դու դեռ սպասիր, լուսաբացին կլսես այդ համերգը...

Արտերի ծովում ասես փափուկ անկողին է փռված, ինքը պառկած է այդ անկողնում ու ճոճվում է ջրերի վրա՝ ոնկնդիր ալիքների անուշ երգին։ Ու երգի մեջ մի խոսք կրկնվում է անընդհատ՝ բարի օր ձեզ, ա ջահելներ... Երգը ծավալվեց, ալիքները նոր թափ առած տարան նրան հեռուհեռու...

***

Արևը բարձրացել է մի չվան, վաղուց սկսվել է գյուղի աշխատանքային եռուզեռը, իսկ տղաները նոր են ճլմկոտում անկողնու մեջ։ Սամվելը ժամացույցն է փնտրում սեղանին փռված թերթերի մեջ, գտավ, նայեց ու զարմացած ձգեց.

— Վահան, էս ինչ խորն ենք քնել, բա էս թաղում մի աքլոր չկա՞ր ժամանակին մեզ վեր կացներ։

— Սրանք հասկացող աքլորներ են, քաղաքաբնակ ջահելներին քնահարամ անել չեն ուզում։

— Վա՛յ թե դու ճիշտ ես... բայց տես, Համբարձում քեռին արդեն ոտքի վրա է, այգում գործ է անում։ Չէ՛, սա բոլորովին բանի նման չէ, էսպես կուշտ քնելով մենք կարող ենք ամբողջ գյուղում խայտառակվել։

— Այդ մի թուլությունը մեզ կներեն, դու մնացած բաներից խոսիր։

— Ուրիշ ի՞նչ կա։

— Կապրենք, կիմանաս...

Նախաճաշը պատշգամբում արեցին։

Մի-մի բաժակ թթի օղի, խաշած ձու, տապակած ճուտ, մեղր ու կարագ ու թունդ թեյ։ Բայց ի՞նչ համեղ են։

— Վահան, մի բան ասեմ, չծիծաղես, խնդրում եմ,— ընկերոջ ականջին փսփսաց Սամվելը,— որ ճտի միսը համով է, որ կարագն էլ թարմ է ու հրաշալի, հասկացա, բայց այս ձվերի համը բոլորովին ուրիշ է. մի՞թե հավի ձուն էլ կարող է տարբեր համ ունենալ։ Իսկ այս մեղրը...

Վահանն ինքնաբավական ժպտում է քթի տակ։

— Բարի լույս, տղաներ,— Համբարձում քեռին է ձայն տալիս՝ շիբուխը թութուն լցնելով.— ի՞նչ եք տանը նստել, մի իջեք գետափ, լվացվեք, թարմացեք մի լավ... Հա, էսօր լավ կինո կա, ասում են էդ անտեր կռվի մասին է։ Թե չեք տեսել, իրիկունը միասին ենք գնում, ինձ չմոռանաք, հա՞...

Հիմա ուշ երեկո է, կինոյից տուն են գալիս միասին։ Գյուղը լավ ակումբ ունի, մեծ ու լուսավոր դահլիճով։ Եվ լիքն էր դահլիճը։ Ինչպես էլ դիտում էին նկարը. «Աղատագրում» ֆիլմի երկրորդ մասն էր։ Ինչքան ճիշտ ու տեղին էր դահլիճի ռեակցիան, Սամվելը հաճելի զարմացած էր։

Հասան Վերին կամրջին։

Դիմացը երկհարկանի ու երկարավուն մի շենք է ձգվել. ասացին յոթնամյա դպրոց է։ Մեծ է գյուղը, նաև միջնակարգ դպրոց ունի, բայց այս շենքը բանի նման չէ։

— Համբարձում քեռի, թոռներդ որտե՞ղ են սովորում։

— Փոքրերն էս դպրոցում, մեծերը՝ մյուսում։ Ցարի ժամանակ էս դպրոցը հայի շկոլ է կոչվել, գետի մյուս կողմի մեծ դպրոցն էլ՝ ռուսաց շկոլն էր։ Էս շենքը երկու հարկ է երևում, բայց իսկականից երեքն է, կտուրի տակ մի երկար դահլիճ կա, ահագին մարդ է տանում։ Առաջներում ժողով ու կինո էդտեղ էր լինում։ Ամեն անգամ գնում էինք ու վախով մտածում՝ վա՜յ թե շուռ գա էս հավաքումը։ Բայց դիմացավ, նոր ակումբի լույսերն էլ տեսավ։ Իսկ դպրոցի շենքը, ճիշտ ես ասում, բանի պետք չի։ Է, հերթը դրան էլ կհասնի, ասում են Մոսկվան էլ մի տարում չի շինվել։

— Կինոնկա՞րն ինչպես էր, Համբարձում քեռի,— հարցնում եմ։

— Շատ ապրեն, լավ են սարքել։ Գիտեք ինչն է լավ, սուտ բան չկա, տեսածիդ հավատում ես։ Լավ են տվել կռվի դաժանությունը, ով կռիվ չի տեսել, կհասկանա, թե ինչ է դա. ես դրա հնարողի հերն եմ անիծել...

Երկար ժամանակ լուռ քայլում են գյուղի աղոտ լուսավորված փողոցներով. երբեմն փոսի մեջ են ընկնում, կամ ոտքն է քարի առնում։ «Ափսոս չե՞ն քաղաքի ասֆալտապատ փողոցները,— մտածում է Սամվելը,— թեկուզ աչքերդ փակ քայլիր»։

— Սա քաղաքի փողոց չի է, ախպոր տղա, մի քիչ զգույշ գնա։

Սամվելի ականջները երևի կարմրեցին. մի՞թե իր մտքերն է կարդում Համբարձումը քեռին։

— Հա՜, տղաներ, մեկ էլ որ Գյոգ-Գյոլ գնաք, ինձ էլ կտանեք, ինչքան ժամանակ է չեմ եղել, սիրտս ուզում է։

Երեք «բարի գիշեր» միաժամանակ հնչեցին։

***

Վահանն ուզում է ընկերոջը ծանոթացնել գյուղին, իր մանկության վայրերը ցույց տալ։ Քայլում են գյուղի փոշեծածկ փողոցներով։ Բայց դանդաղ են առաջ գնում, անընդհատ հանդիպում ,խոսք ու զրույց։

Եվ՝ ժամեր շարունակ։ «Բարև՛, տղաներ», «բարի օր», «Ա՛յ բարով տեսանք»...

Սկզբում Սամվելի ականջին խորթ էին հնչում այդ կրկնվող ողջույնները, հետո աստիճանաբար վարժվեց — թվում էր, թե կրկնություն չկա. ամեն մեկի ասածը մի ուրույն երանգ ուներ, մի յուրահատուկ կոլորիտ։

— Պա՜հ, էս ո՞ւմ եմ տեսնում։

— Ա՛յ, լավ ես արել, Վահան, որ ընկերոջդ էլ ես բերել։

— Այ դուք բարով եք եկել, մեր գյուղը ձեզ փեշքեշ...

Մի թոնրի մոտով անցնելիս նոր թխվող հացի զարմանալի բուրմունք հասավ Սամվելի քթին։ Մի ջահել ու սիրունատես հարս, որ խոնչայի մեջ հաց էր տանում տուն, համարձակ կտրեց տղաների ճանապարհը.

— Համեցեք, թաժա հաց կերեք։

Սամվելը փորձեց հրաժարվել։ Հարսը զարմացած էր.

— Թաժա հացից չեն հրաժարվի, եղբայր, վերցրեք։

Այրվելով կերան մի քանի բերան. ի՞նչ համ ուներ։ Սամվելը հիշեց Վահանի մի կատակ-խոսքը՝ թաժա հաց, մո-

թալ պանիր, ով ասաց կշտացել եմ, ուրեմն ստամոքսը հիվանդ է...

— Վահան, Երևանի մետրոյի հարցը ի՞նչ եղավ, էդ ինչի՞ են ուշացնում,— միջին տարիքի մի կոլտնտեսական էր, գերանդին ուսին. երևում է հանդից նոր է եկել,— անցյալ տարի քրոջս մոտ էի գնացել, ասացին սկսել են։

— Ճիշտ է, սկսել են, բայց գործը դանդաղ է առաջ գնում։ Դե, մի օր կլինի, էլի, ի՞նչ եք շտապում,— փորձեց կատակի տալ Վահանը։

— Բա դա էլ բա՞ն է, որ ասում ես, Վահան,— զարմացավ ավելի տարիքով մեկը,— Երևանի փողոցներում մեքենայի ձեռքից փրկություն չկա, մի կերպ գլուխդ ազատում ես, մեղք չի՞ ժողովուրդը։ Քրոջս աղջիկը տաս անգամ զգուշացնում էր տնից դուրս գալիս,— քեռի ջան, զգույշ եղիր, մանավանդ մեքենաներից։

— Ա՛յ, Սամվելի հայրն այդ գծով է աշխատում, թող ձեր պահանջը ներկայացնի նրան,— իր օձիքն ազատել փորձեց Վահանը։

— Մեր պահանջը չի, ախպոր տղա, խնդիրքն ասա։— Քեռի Համբարձումն էլ այստեղ է, ինչպե՞ս չէին տեսել մինչ այդ։

— Էն ո՞ր երկրում են էլի կռիվ սկսել, մի թարս էլ անուն ունի, հա մտքիցս գնում ա։

Հարցնողը փառահեղ մորուքով մի ծերունի է։

— Բանգլադեշն ես ասում, Վարդան պապ։

— Հա, թոռ ջան, հենց էդ է։ Նորից արյուն են թափում, բա հերիք չի՞, բա դրանք նամուս չունե՞ն...

— Իսկ ինձ ավելի շատ գիտեք ինչն է, որ դուր չի գալիս Երևանում,— ընդհատված թեմայի թելը բռնում է վարպետ Վարազդատը,— ջրի պակասությունը։ Թարսի նման աղջիկս հինգերորդ հարկում է ապրում։ Էն ծարաված, կլափին տալիս վախտդ, որ ջուրը չի կտրվում, ոնց որ գլխիդ ուրագով տան, բա դա բանի նմա՞ն է, բա էս լեն ու բոլ աշխարհքում մարդ չկարողանա՞ սրտի ուզածի չափ ջուր խմի, մեղք է, ասված վկա։ Էդ որ տեսնում եմ, մեր հարսների քարավանն եմ հիշում՝ կժները շալակած աղբյուրի ձորից վերև բարձրանալիս։

— Ջրի հարցը արդեն լուծվում է, քեռի Վարազդատ, մի երկու տարի, և ամեն ինչ կարգին կլինի, նոր ջրեր են բերում քաղաք։

— Բա ես ուրիշ բա՞ն եմ ուզում, Վահան ջան, օձն, ասում են, որ օձ է, մարդուն չի կծում ջուր խմելու ժամանակ, ջուրը սուրբ բան է։ Այ, մեր ջուրը, թող ընկերդ ասի, թե ինչ համ ու սառնությունն ունի, այ լույս իջնի Իսահակի գերեզմանին...

Այդու մուտքի մոտ նրանց դիմավորեց Վարդանուշ տատիկը։ Անհանգստացած էր։

— Վահան ջան, էս ի՞նչ ես անում, առավոտվա կերածն է, քոռանամ ես, գոնե ընկերոջդ խղճա։

— Իմ սիրելի տատիկ, իզուր ես անհանգստանում, երկու տեղ թաժա հաց ենք կերել, դրանից էլ լավ ճա՞շ։ Էս ի՞նչ ճտեր են, ոտքերն էլ կապած։

— Քրոջս աղջիկը՝ Արմենուհին բերեց, ասում է՝ տապակիր, թող տղաներն ուտեն։ Ասում եմ՝ աղջի, բա մեր տանը հավ չկա՞, է, նրան բա՞ն կհասկացնես։

— Էս քթոցի մե՞ջ ինչ է,— հարցնողը Վահանն է, բայց Սամվելը համոզված է, որ նա գիտի, իր համար է հարցնում։

— Էդ էլ կանաչ լոբի է, վարունգ ու պոմիդոր, մեր վերևի հարևանն է ուղարկել, Մեժլումի թոռը։ Հյուր ունեք, ասում է, մերոնց խասյաթը չգիտե՞ս։ Սարգիսն էլ մի շտոփ արաղ է բերել, ասում է՝ մաքուր հոնից եմ քաշել...

Այս գիշեր քունն ավելի է թարսվել, մոտ չի գալիս ոչ մի պայմանով. «թաժա» հա՞ցն է մեղավոր, «մետրոյի հո՞գսը», թե՞ մի «շտոփ արաղը»...

— Վահան, հո չե՞ս քնել։

— Ենթադրենք, թե արթուն եմ։

— Այսօր ականջիս մի բան հասավ, գյուղի ջահելները գնում են խոտհնձի, շաբաթօրյակի նման բան է։ Մենք նրա՞տենք տա՞նը։

— Ճիշտն ասած ես քո այդ խոսքին էի սպասում, չնայած վախենում եմ ծանր լինի քեզ համար, ախր դու կյանքումդ գերանդի չես բռնել։

— Ոչինչ, կսովորեմ։ Բա որ չգնանք, էն սիրուն հարսը «թաժա» հացը մեր գլխին հարամ չի՞ անի...

***

Ծանր աշխատանք է գերանդի քաշելը, և այդ ծանրությունը ծանրանում է քո ուսերին ժամերով, ամբողջ օրը։

Սամվելն սկզբում անիծում էր իր բախտն ու իր հիմար որոշումը, եկել է գյուղին օգնելու, օգնականի՞ս տեսեք... մեջքը եթե երկու կես չլինի, լավ է։

— Մի գերանդիդ տուր սրեմ մի քիչ, ախպերս,— ջահելներից մեկն է դիմում։

Քիչ հետո, մի ուրիշը.

— Տղերք, ուր եք վրա պրծած գնում, ետ դառնանք, մի կուշտ ջուր խմենք։

Նորից դադար, և Սամվելի մեջքը մի փոքր ուղղվում է, ցավը մեղմանում։ Համոզված է, իր համար են անում այս «դասամիջոցները», այս ի՞նչ նրբանկատություն է...

Աստիճանաբար Սամվելը մտավ հունի մեջ, և ոչինչ, առանձնապես ետ չէր մնում տղաներից, ինչ էլ հաճելի է։

Բայց գիշերը քունը վերջնականապես խռովեց նրանից. ամբողջ մարմինը մղկտում էր ցավից։ Իսկ հոգին թեթև էր, մի անգամ գոնե կարողացավ ճաշակել գյուղացու ծանր հացի քրտնահամ քաղցրությունը։

***

Կապույտ լիճ պիտի գնային։ Ձեր լինի չգնալ։ Նույնն է թե Երևանում հյուր ունենաս ու Սևան չտանես։ Կապույտ լիճը Գետաշենի աչքն է, սիրտը, թեկուզ և՝ յոթ կիլոմետր հեռու։

Գնացին, շորսով, Համբարձում քեռու թոռան՝ Սուրենի մեքենայով։ Օրը կիրակի էր, արևառատ ու հովաշունչ մի օր։ Սկզբում անցան Թթնոտով, հետո մի որոշ ժամանակ գնում էին Սպիտակ ջրի ափերով. ինչպես էլ գտել են անունը, ասես զուլալ ջրի հատակում փռված քարերը սպիտակ են ներկել, ոչ միայն ներկել, այլ նաև հղկել են, փայլեցրել, ու արևի

շողքերն իրենց ծոցում՝ բոցկլտում են, կայծակին տալիս։ Հետո մտան անտառ. կաղնի ու բոխի ծառերի մի շքեղ թագավորություն։ Ոլորապտույտ ճանապարհն ասես ճեղքում է անտառի կուրծքը, հանգիստ, հաճույքով, առանց ցավ պատճառելու։

Ու «Ժիգուլին» առաջ է վազում այդ ասֆալտապատ ճանապարհով, անընդհատ բարձրանում է։ Ու գնալով օդն ավելի է մաքրվում, շնչելը դառնում է հեշտ ու հաճելի։

Համբարձում քեռին թռուցիկ հուշեր է պատմում իր անցած օրերից, բայց զարմանալի է, որ ափսոսանք չկա նրա խոսքի մեջ, ոչ էլ բողոք՝ ջահել օրերի հուշ դառնալու համար, փաստի արձանագրում կա միայն՝ ուսերին հպարտության թիկնոց նետած...

— Ձախ կողմում Օբխանի գյուղն է։ Մի քիչ էլ որ գնաս, Օրդակածովն է. քիչ ներքև՝ Սլուկնածովը. էն դուք տզրուկ եք ասում է, օրհնված կենդանի է, մի անգամ ինձ մահից փրկել է։ Ասում էին վատ արյուն կա մեջս, մի հինգ հատ կպցրին, քաշեցին, մաքրեցին։ Ուրիշի հաշվին ապրող մարդուն էլ են տզրուկ ասում. բա մեղք չի՞ էդ օգտակար կենդանին. նամարդ մարդուն ուրիշ անուն պիտի տաս...

Վերջապես անտառից դուրս եկան։ Մի ոլորապտույտ ևս, և Կապույտ լիճը փռվեց նրանց առաջ։ Իսկապես որ հրաշք էր։ Երեք կողմից անտառաշերտով շրջափակված մի կապույտ աչք, մի զարմանալի զուլալ մաքրություն։ Ջրերի մեջ ափամերձ ծառերի, մալանչ ամպակտորների ու հրաշեկ արևի անդրադարձումն է, գույների, երանգների մի հեքիաթային խաղ, մի անմոռաց տեսարան։

— Էս ա մեր Գյոգ-Գյոլը, ախպոր տղա,— Սամվելին է դիմում քեռի Համբարձումը,— ես սրա ջրին ու օդին մատաղ, երեխայությունս ու ջահելությունս էստեղ է անցել, քանի անգամ կլինեմ էդ ջրերում լողացած... էն զահրոմար կռվի գլխակեր օրերին ոնց էի կարոտում մեր էս փոքր լճին։

— Պա՜պ, հո մեծությամբ չի՞ որոշվում կարոտը,— Սուրենն է, պապի սիրելի թոռնիկը, անհարմար զգալով է ընդհատում պապին։

— Ես էլ էդ եմ ասում էլի, բալա ջան, բա քաղցրը, հարազատը մեծությա՞մբ է որոշվում...

— Սամվել, գիտե՞ս թե Կիրակոս Գանձակեցին ինչ է ասել մեր այս լճի առաջացման մասին։

— Որ ասես, կիմանամ, Վահան։

— Միայն գրաբար պիտի ասեմ, աշակերտ ժամանակ անգիր եմ արել, ու մնում է հիշողությանս մեջ։

— Հետաքրքիր է, դե՛, քեզ տեսնեմ։

«Ի ՇՋԸ Թուականին եղև շարժ
սաստիկ և կործանեցաւ քաղաքն
Գանձակ, և տապալեցան շինուածք,
որ ի նմա, ի վերայ բնակչաց
փլուց... փլաւ և լեառն
Ալհարակ ի շարժմանէն և արգել
զձորակն, որ անցաներ ընդ
մեջ նորա, և եղև ծովակ, որ է
մինչև այսօր, լինին ի նմա
ձկունք ազնիւք»։

— Հետաքրքի՞ր է։ Իսկ այդ Ալհարակ լեռը դիմացի փաղախանման նա՞ռն է։

— Այո՛։ Եվ դու տես ինչ երկրաշարժ է եղել հարյուրամյակներ առաջ, որ այդ հսկայական լեռը կտոր-կտոր է եղել, փռվել-տարածվել մինչև այստեղ. փակել այս ձորի բերանը ու պատճառ դարձել մեր այս լճի ստեղծմանը։ Գիտես, մի տաս կիլոմետր կլինի լճից մինչև լեռան ստորոտը. և այդ ամբողջ տարածությունը, երևի մի կիլոմետր լայնությամբ, ծածկված է լեռան կրծքից պոկված քարերով։ Ի՜նչ քարեր, ամեն մեկը՝ մի հինգ-տաս հարկանի շենք։

— Հետաքրքիր է։ Ուրեմն տես ինչքան մեծ է եղել Ալհարակը երկրաշարժից առաջ։

— Դժվար է պատկերացնել։

— Իսկ հիմա՞ ինչպես է կոչվում այդ լեռը. նույն անո՞ւնն է կրում։

— Ո՛չ, հիմա Քեփազ ենք ասում, թե ինչպես է Ալհարակը Քեփազ դարձել, ոչ մեկս չգիտենք։

Հետո նավակ նստեցին ու գնացին զբոսանքի։ Ջրերն ինչպես էին քշփշում, այդ ինչ հաճելի համերգ էր։ Բարձրացան մինչև Առվի բողազը, կարմրախայտ ձուկ որսացին։

— Ասում են շատ համով ձուկ է, Վահան։

— Կուտես, նոր կասես քո կարծիքը, ախպերս։ Ախր մի շաբաթը շատ քիչ է մեր կողմերի համն ու հոտն զգալու համար... Սուրեն, դե, քեզ տեսնեմ, մի քաղցր երգ նվիրիր մեր Սամվելին։

Ու բացվեց երգի հունը։ Ինչ էլ ձա՜յն ունի անպիտանը։

Կապույտ լճի ջրերում ջինջ
Սիրո թախիծն է ննջում,
Թվում է թե կանչում է ինձ
Հեռու տեղից դեպի տուն...

Երգին ասես ձայնակցում են ջրերի քաղցր քշփշոցն ու անտառի քնքուշ սոսափյունը, և, մանավանդ՝ Սամվելի հուզված սրտի խենթ տրոփյունը...

***

Ինչպե՜ս անցավ շաբաթը, և ինչո՞ւ այսքան կարճ ժամանակով եկան։ Չհասցրին Կապույտ լճում լողանալ անգամ։ Ջուրը շատ սառն էր, Համբարձում քեռին խորհուրդ չտվեց։ Բայց ոչինչ, դա էլ մյուս անգամ, գալ տարի, և անպայման կգա ընտանիքով, կնոջ ու հնգամյա Տիգրանի հետ։ Թող տղան տեսնի, ճանաչի գյուղը, ճաշակի «Թաժա» հացի քաղցրությունը, ամբողջ կյանքում չի մոռանա...

Գյուղից դուրս եկող ճամփան արտերի միջով է անցնում։ Դեղին ծով, համատարած, աննշան ընդհատումներով։ Արտերն ասես պատիվ են անում քեզ, փեշերն իրար հավաքելով՝ ճանապարհ են բացում, որ հեշտ ու հանգիստ անցնի քո մեքենան։ Եթե ես նայում, արտերը, փեշերն իրար տալով, նորից փակում են ճանապարհը. երևի սպասում են հաջորդ մեքենային։

Ու քո ետևից, ծանրագլուխ հասկերն ասես, իրար ականջի քշփշալով, կրկնում են Համբարձում քեռու խոսքը.

— Բարին ձեզ հետ, տղաներ, Երևանին մեր բարևները տարեք։ Ու նորից համեցեք մեր գյուղը, սպասե՜լու եմ...

Վաղորդյան քամուց արտերն օրորվում են հանգիստ տալիք տալով՝ գնում հեռուները։

Ղարշումի փեղերին

ԲՐԱՏՑԸ...

Անթափանց խավար։ Մութ ամպերի ծալքերում հոգևարք ապրող լուսին։ Թփից-թուփ թռչող խենթ ու խելառ քամի։ Ու քամու թևերին թառած կրակոց-արձագանքներ։ Ճարճատյուն, որոտ, պայթյուն. անընդմեջ ոռնոց։ Ինչպե՞ս կտոր-կտոր չի լինում հողը, ինչպե՞ս չի խլանում մարդու ականջը։

Համատարած ճահիճ, ու ճահճում, խեղդվելուց խուսափելու համար, գլուխները վեր ցցած թփուտներ ու եղեգներ։ Ճահճի մեջքով ձգված մի նեղ կածան, որը գուցե և մահվան դուռն է տանում, բայց այս անգամ փրկության նիհար ճանապարհ է թվում մեզ։

Անկանոն կրակոցներին ձայնակցում են գորտերի միալար կռկռոցները։ Սիրտ խառնող մի համերգ, որից փրկվել կարող ես գուցե խլանալու գնով միայն...

Երեք կողմից սեղմվում է օղակը։ Գնդակները ոստոստում են մոտիկ ու հեռու, բայց բարեբախտաբար զուրկ են դիպուկությունից. ճահիճը խանգարում է նաև հակառակորդին, օղակը սեղմել ու խեղդամահ անել չի կարող։

Փրկության այդ նիհար ճանապարհը բռնած գնում ենք։ Դաժան ռմբակոծությունից հետո զորամասից կտրված, յուրայիններին գտնելու ակնկալությամբ, հոգնությունն ու տանջանքը ատամի տակ առած, քայլում ենք։ Մահվան օղակից դուրս գալ ենք ուզում։ Եթե հասանք Բալատոնի ափը, ուրեմն փրկված ենք։

Մեկ աջից, մեկ ձախից հրթիռներ են վերև սլանում, մի

պահ կախված մնում երկնքի թեշերից՝ լույս սփռելով չորս դին, հետո ծույլ-ծույլ իջնում են ցած, ու տեղ չհասած հանգչում՝ ավելի թանձրացնելով մահահոտ խավարը։

Շտապում ենք։ Մինչև լուսաբաց եթե դուրս չեկանք այս ճահճախցից, ամեն ինչ կորած է։ Իսկ որտե՞ղ է փրկության հանգրվանը, ինչքա՞ն պիտի քայլենք այնտեղ հասնելու համար, չգիտենք։ Մեր վիճակը նույնքան հեղհեղուկ է, որքան այս ճահճախեղդ կածանը, կարող է դուրս գալ, միանալ մի լայն ճանապարհի հետ, կարող է և ընդհատվել...

Անկանոն կրակոցները շարքից հանեցին Գերասիմին։ Կարծեմ Գանձակի կողմերից էր։ Արտաքինով ամենախոշորն էր մեր մեջ։ Եվ դժվար էր լուռ մնում, կխոսեր, հա կխոսեր։

«Ի՞նչ այգի ունեմ, ի՞նչ ծառեր։ Թթի օղի եմ քաշում, որ քարին լցնես, քարը կճաքի... է՞խ, էս անտերը վերջանար, մի հյուր գայիք ինձ մոտ։ Մեր գյուղը գետի ափին է, իսկ գետում կարմրախայտ կա. ի՞նչ ձուկ է։ Ուտում, խմում էինք, լողանում։ Նորից բախտ կունենա՞մ... Չհուսահատվեք, Բրատը. էստեղից դուրս կգանք, մի քիչ էլ որ դիմացանք...»

Խոսքն ընդհատեցին անխղճորեն. գնդացրի կրակահերթն ընդհատեց... Գերասիմն անշարժացավ մի պահ, հետո միանգամից կոտրվեց-ընկավ ոլորվող կածանի վրա։ Այլևս ոչ մի խոսք։ Գնդակն ուղիղ կրծքին էր առել...

Լուռ նստեցինք Գերասիմի կողքին։ Իսկ ժամանակ ունե՞ինք նստելու։ Լուսաբացը հեռու չէր. մենք սարսափում էինք լույսից. մութն էր մեր դաշնակիցը...

Գերասիմի գրպանում, փաստաթղթերի հետ մի լուսանկար կար, կինն է ու երկու երեխան։ Ի՞նչ աչքեր ունեն, ի՞նչ պարզ հայացքով են նայում քեզ...

Լուռ հանեցինք գլխարկներս, հարգանքի վերջին տուրքն էր, ու ոտքի ելանք։

— Կինը կարծեմ ուսուցչուհի է.— ասես ինքն իրեն խոսում է Սերգեյը։

— Տանը շատ կսպասեն նրան, իսկ մենք հողին հանձնել անգամ չկարողացանք,— լրացնում է Անդրանիկը։

— Գոնե ոտքի տակ կարգին հող ունենայինք, գրո՞ղը տանի,— ըմբոստանում է Շաքրոն։

Գլխիկոր շարունակում ենք ճանապարհը։ Անկանոն ու

կույր կրակոցները ուղեկցում են մեզ։ «Պարտքի» տակ չեն մնում և մատնիչ հրթիռներն ու բացբերան գորտերը։ Անուշադիր ենք բոլոր այդ կրակոց-աղմուկներին, ուշադրության համար էլ ժամանակ է պետք։ Լուռ քայլում ենք, նույնիսկ փորձում ենք վազել, չի ստացվում, ուժերն սպառվելու վրա են։ Ամբողջ օրը մարտի մեջ, անխիղճ ռմբակոծության ու տանկային գրոհի տակ։ Հիմա էլ մահն է հետապնդում մեզ։ Քաղցած ենք սոսկալի, ուսապարկերի մեջ թրջված պաքսիմատներ կան, բայց ուտելու համար էլ ժամանակ և ուժ է պետք...

Քայլում ենք դանդաղ, ծանր, իսկ դավաճան լուսաբացը հեռու չէ։ Մեկ էլ տղաներից մեկը մղկտաց.

— Վա՜խ, ափսոս...

Արմենակն էր, մեր հինգի մեջ ամենաջահել ու սիրուն տղան։ Ոչ մի աղջիկ չէր կարող անտարբեր անցնել նրա կողքով, իսկ սանիտարուհի Լիան ուղղակի գժվում էր նրա համար։ Ամեն անգամ հանդիպելիս այդպես էլ ասում էր.

— Արմենչի՛կ, անխի՜ղճ, ես կխենթանամ քեզ համար...

Մի խենթ գնդակ մոլորվել էր նրա կոնքի մատույցներում. հավանաբար վնասվել էր ոսկորը։ Ոտքը չէր շարժվում։

Կապեցինք վերքը, իսկ քայլել չի կարող։ Ի՞նչ անենք։ Տիրեց մի ճնշող լռություն։

— Բրատցը,— ցավից դեմքը ծամածռելով խոսեց վիրավորը,— չթողեք ինձ, խնդրում եմ...

— Հիմար բաներ ես խոսում,— փնթփնթաց Սերգեյը,— գնացինք։

Արմենակին առանք թիկնոցի վրա, չորս անկյուններից բռնած առաջ շարժվեցինք։ Քայլելն ավելի դժվարացավ, մանավանդ որ չարաբաստիկ կածանը նեղ էր, դժվար էր տեղավորում երկշարք քայլողներին։

Գնալով և՛ վիրավորի ցավերն էին սաստկանում, և՛ քայլելն էր ծանրանում։ Հերթական դադարի ժամանակ փոխեցինք վիրակապը, բայց միևնույն է, արյան հոսքը լրիվ կանգնեցնել չկարողացանք։

— Բրա՜տցը,— նորից խոսեց Արմենակը,— նրա ձայնը հազիվ էր լսվում, ցավը շատ էր խեղճացրել,— ես տեսնում

եմ, որ ինձ փրկություն չկա, վախենում եմ ձեզ էլ կրակը դցեմ... Թողե՛ք ինձ, գոնե ձեր գլուխն ազատեցեք...

— Հիմար բաներ ես խոսում, Արմեն։

— Հետո քո Լիային ի՞նչ պատասխան տանք,— լավ էր, որ դեռ կատակել կարող էինք։

— Լիան ոչինչ, մայրս է մեղք, աչքը ճամփին կմնա։

— Դե՛, ուրեմն լռիր։ Գնացինք։

Հանկարծ գիշերն սկսեց ավելի մթնել. երևի ադամամութն էր վրա հասնում։ Բայց նաև բարակ անձրև մաղեց, շատ բարակ, ասես քրտինքի մեջ կորած մեր մարմինը զովացնելու համար էր։

Ճահճի վրա քայլ առ քայլ ծանրանում է մառախուղը, իսկ կրակոցները չեն դադարում, պայթում են մոտիկ, հեռու։ Պատերազմի շունչն անընդհատ զգում ենք մեր թիկունքին։

Իսկ դիմացն ի՞նչ կա. գուցե ճահճից դուրս գալուց հետո կընկնենք թշնամու ձեռքը՞։ Չգիտենք։ Բայց գնում ենք յուրայիններին գտնելու հույսով. այդ հույսն է մեզ պահում։

Դադարները հաճախակի դարձան։ Մեր ուժերն սպառվելու վրա են, նույնիսկ զարմանում ենք, թե ինչպես չեն սպառվում։ Մահվան վտա՞նգն է նոր ուժ հաղորդում մեզ, թե՞ անտարբեր, բայց ժամանակին իջնող բարակ անձրևը...

— Բրա՜տցը, ես այլևս չեմ կարող... Այս տանջանքները... Թշնամու ձեռքն ընկնելու վտանգը... Ինձ թողեք այստեղ, ինձ մի գնդակ միայն, խնդրում եմ...

— Հիմար բաներ ես ասում, ախպերս։

— Ինձ զենք տվեք ու դուք գնացեք, ես գիտեմ... Մեղք եք, իմ պատճառով... Հետո ես ի՞նչ կանեմ...

— Լռի՛ր, խնդրում եմ։ Դու մեզ ինչի՞ տեղ ես դրել...

Մառախուղն ավելի խտացավ, անձրևը դարձավ խոնավ փոշի, ու շոյում է մեր այրվող դեմքերը։ Շոյում է, բայց հովացնել չի կարող...

Փորձեցինք պաքսիմատ ծամել՝ անձրևաջրի օգնությամբ։ Բան չստացվեց, ծամելու համար էլ ուժ է պետք։ Արմենը չէր կարող մասնակցել մեր «կեր ու խումին», նա զառանցում էր անկապ. «Բրատցը... խփիր... Մեղք է մայրս... Լիա՜, սիրելի՜ս...»։

— Հիմա, տեսնո՞ւմ եք, Լիային է հիշում, իսկ որ խելքը տեղն էր, հեռու էր փախչում աղջկանից։

— Մարդուն դժվար է հասկանալ։

— Աղջիկն այստեղ լիներ՝ լսեր այդ զառանցանքը...

Պաքսիմատը լռվել է մեր կոկորդներում՝ չի գնում։ Խոնավ մառախուղ, մոլորված կրակոցներ ու կողքիդ՝ ցավի տանջանքից զառանցող ընկեր, կուլ կգնա՞։

— Հիմա ի՞նչ ենք անելու։

— Իսկ ի՞նչ ես առաջարկում։

— Զգիտեմ, միայն, որքան տեսնում եմ, մեկին փրկելու փոխարեն հինգս ենք կործանվելու։

— Հետո՞։

— Էլ ի՞նչ հետո։ Միևնույն է, նա այլևս այս աշխարհից չէ, ո՞ւր ենք մեզ էլ տանջում, իրեն էլ։

— Հետո՞։

— Փորձենք գոնե մեր գլուխն ազատել։

— Գուցե իսկապես... Թե չէ...

— Իսկ եթե հանկարծ հաջողվի և իսկապես մեր գլուխն ազատել կարողացանք, ի՞նչ պիտի ասենք նրան։

— Ո՞ւմ։

— Մեր խղճին։

— Դու էլ...

— Այո՛, հետո ինչպե՞ս պիտի ապրենք։

— Եթե փրկություն չկա... և ինքն է խնդրում...

— Դե՛, ուրեմն կատարիր նրա խնդրանքը, զենքը ձեռքիդ է։

— Այդ մեկը չեմ կարող։

— Ոչ էլ մյուսը կարող ենք։

— Բրա՜տցը, գնացեք, խնդրում եմ,—մի՞թե լսում է մեր խոսակցությունը։

— Ինձ չթողեք, Բրա՜տցը...

Արմենակը շարունակում էր զառանցել։

Վերջին ուժերը հավաքելով շարժվեցինք առաջ։ Վիրավորն ավելի էր ծանրացել։ Սայթաքում էինք, ընկնում, մի կերպ ոտքի կանգնում։ Իսկ լուսաբացը բոլորովին մոտ էր, նրա դռների բացմանը ինչ որ չափով խանգարում էր ծանր նստած մառախուղը։

Տղաներից մեկը չոքեց հանկարծ ու մնաց այդպես։

— Ես այլևս չեմ կարող, ուժ չկա, ի՛նձ էլ թողեք...

Ստիպված ենք նստել նորից։ Շունչ առնել է պետք։ Կրակոցները հեռացել են բավական, նրանց արձագանքներն են լսվում միայն։

— Ես որքան տեսնում եմ՝ բոլորս էլ շան սատակ ենք լինելու։

— Ինձ էլ տարեք, Բրա՜տցը... Մա՜յրս...

Վիրավորի զառանցանքն արդեն անզոր հևոցի է նման։

— Կամ փրկվում ենք բոլորով, կամ մեռնում ենք միասին, այլևս ոչ մի խոսք։ Գնացինք։— Սերգեյի առարկությունը չվերցնող վճիռն է։

Շարունակում ենք առաջ սողալ։

Հանկարծ ինչ-որ ոտնաձայն հասավ մեր ականջին։ Դիմացից է, դեպի մեզ եկողներ կան։ Մի՞թե թշնամու ենք հանդիպել։ Սսկվել ենք։ Ձենքերը դիմացի խոսակցությանն ուղղած՝ սպասում ենք։ Եթե պիտի մեռնենք, ուրեմն մարդավայել ընդունենք այն։ Սպասում ենք։ Ծանր բոպեներ են։ Երևի չենք էլ շնչում... Տե՜ր աստված, ռուսերեն են խոսում, մերո՜նք են, մեր զորամասի տղաներից, հետախուզության են գնում։

— Բրա՜տցը, Բրա՜տցը,— շարունակում էր զառանցել Արմենակը,— նրա շուրթերին այլևս այդ մի հատիկ բառն էր թևածում...

Զորամասի սանմասում ուշքի ենք եկել վերջապես, հանգստացել, առաջին բուժօգնությունն ստացել։ Արմենակը նայում է մեզ ու ժպտում է թույլ, դեռ ուժ չունի խոսելու, թե՞ պարզապես խոսել չի կարող, այնպես լցված է ափեափ։

Իսկ մենք նայում ենք Արմենակին երախտագիտության մի անսահման զգացումով, այնպես թեթև ենք զգում մեզ։ Այդ նրա օգնությամբ մենք դժվարին քննություն բռնեցինք, մարդ ու ընկեր մնացինք։ Երախտապարտ ենք նրան։

Գլխապատառ ներս ընկավ Լիան, նոր էր իմացել մեր գալու մասին։ Նայեց Արմենի ժպտացող աչքերին ու նետվեց առողջներիս գիրկը։ Փաթաթվեց, համբուրում է.

— Հարազատնե՜ս, սիրելինե՜ս...

Ու լալիս է, ինչպե՜ս է լալիս։

Իսկ Արմենակի շուրթերին, լուսե ժպիտ հագած մի անուշ բառ է թառել՝ «Բրա՜տցը...»։

ԲԱՐՁՈՒՆՔԻ ՓԵՇԵՐԻՆ

Առաջադրանք է. բարձունքը պետք է գրավել, արյան գնով, կյանքի գնով։

Իսկ բարձունքի փեշերին մահն է թևածում։ Գնդացիրների անընդմեջ կրակահերթերից ու ականների պայթյուններից խլանա՜լ կարելի է։ Բայց մենք չենք խլանում, փորձում ենք պատասխան կրակոցներով հակառակորդին խլացնել։

Բարձունքի փեշերին, մեր փեշերը մաշելով, առաջ ենք սողում։ Թիզ առ թիզ, բայց սողում ենք։ Պիտի գրավենք բարձունքը, ուրիշ ելք չկա։

Եվ այդ մահահոտ թոհուբոհի մեջ հայացքս կպել է մեկին ու չի պոկվում։ Նրա համարձակ շարժումնե՞րն ինձ գրավեցին... Սողում է արագ, հաճախ նաև վազում է։ Ահա կուչ եկավ մի սպանվա՞ծ, թե՞ վիրավոր զինվորի թիկունքում. մի՞թե ապահովություն է փնտրում այդտեղ։ Ի՞նչ է անում, սպանվածի գրպանն՞ը՞ն է ստուգում. գուցե ընկերն է, փաստաթղթե՞ր՞ն է ուզում վերցնել. ո՞վ է, ովքե՞ր են. մի՞թե...

Գիշերը խրամատում։ Անթափանց խավար, լուռ արտասվող երկինք։

— Տղանե՛ր, թույլ տանք պոետին պատերազմի օխտը պորտն անիծելու։

— Անիծելով բան դուրս չի գա, զորավոր միջոցներ են պետք։

— Հիմա՝ պոետական խոսքով, առավոտյան՝ զենքով։

Առաջարկությունն ընդունված է։ Զինվորները խտացան խրամատում, սեղմվեցին իրար։ «Լսարանը» պատրաստ էր։ Բանաստեղծն անցավ խրամատի գլուխը և սկսեց կամաց, մի տեսակ խորհրդավոր ձայնով.

Քո սիրո ետևից, անգի՜նս,
Ես ինձ խենթ ծովը կնետեմ...

Դասակի բանաստեղծ. այդպես էինք մկրտել Արմենակին։

Խոշոր ու անտաշ արտաքինի տակ ծվարած մի զարմանալի քնքուշ սիրտ՝ ափեափ լցված պոեզիայով։ Երբ կանգնում էր հերթական ելույթի համար, թվում էր, թե հիմա կորոտա նրա բասը՝ «Բարձր սարերի» հանգով։ Եվ, իսկապես, այդ որոտը կար, միայն ձայնի հնչեղության իմաստով, իսկ արտադրանքը բացառապես հույզ էր, զգացմունք։

Այն գիշեր ես երկար կանգնեցի
Ձեր տխուր ու մութ պատուհանի տակ...

Ասես շվի էր մղկտում կրակոցներից հոգնած ականջիդ տակ։

Պատերազմն Արմենակին հայրենի գյուղից Հունգարիա էր հասցրել դարուփոս ճամփաներով։ Մասնագիտությամբ գյուղատնտես էր, հոգով բանաստեղծ։ Գրում էր իր համար, արտասանում էր ընկերների համար։ Ոչ մի տպագրված տող չուներ. որևէ խմբագրության դուռ չէր բացել, մտքովն անգամ չէր անցել։ Գրում էր այնպես, «հոգու մխիթարության» համար։ Ու չէր կարող չգրել։ Գրածն էլ սեր էր, սիրո կարոտ ու սպասում։

Սիրո համար փակ դուռ չկա,
Սիրո ազնիվ գերին եմ ես...

— Արմե՛նակ, առավոտյան կռվի ենք գնալու, էդ սիրուց ձեռք քաշի, մի քիչ էլ կռվի սև փեշերն իրար տուր։

Քեռի Հովսեփն է միջամտում, վաշտի ամենատարեց զինվորը։

— Չունեմ, քեռի Հովսեփ, ունեցածս էս է։

— Իսկ իմ կարծիքով՝ ամենահզոր զենքը կռվի դեմ հենց իսկական սերն է.— երիտասարդ ու պեպենոտ Սարուխանն է, որ նոր է եկել մեր վաշտը ու հենց առաջին օրվանից սիրահարվել է Արմենակին, ո՛չ, նրա բանաստեղծությանը։ Անշարժ կանգնում է Արմենակի դիմաց ու լսում նրան մի տեսակ վերացած։ Մեկ-մեկ շշնջում է հազիվ լսելի՝ լա՛վ է, շա՛տ լավ է...

Արմենակը նեղվում է նրա այդ հիացական հայացքներից, մանավանդ այդ քաղցր խոսքերից։

— Սարուխան, հոգո՛ւդ մատաղ, դու ինձ լրիվ կլասիկի տեղ ես դնում, անհարմար է։

— Չէ՛, Արմենակ, հավատա, որ ես պոեզիայից մի բան հասկանում եմ, ժամերով անգիր կասեմ մեր կլասիկներին. բայց այս մահահոտ մարտադաշտում, այս տխուր լուսնի լույսի տակ քո պարզ տողերը զարմանալի հարազատ են իմ սրտին։ Մի նորից ասա, խնդրում եմ։

Երբ ես անցնում եմ ձեր դռան մոտով
Սիրտս ձեր շեմին մորթվել է ուզում...

— Էդ մորթվելը հանիր, բանի նման չի,— նորից քեռի Հովսեփն է՝ իր անհամբեր միջամտությամբ,— սիրածիդ դրռնով անցնելիս սիրտդ պետք է փառավորվի, խենթուխելառ բաներ անի, բայց ոչ թե մորթվի...

— Քեռի Հովսեփ,— նեղսրտեց Սարուխանը,— սխր դա բանաստեղծական պատկեր է, զգացմունքի ուժգնությունը ցույց տալու համար։

— Ի՞նչ ուզում ես ասա, էդ մորթվելն ինձ դուր չի գալիս։

Երբ ես անցնում եմ ձեր դռան մոտով
Սիրտս ձեր շեմին փարվել է ուզում։

Վերախմբագրեց Արմենակը, բայց այնպես, առանց ոգևորության։

— Ա՛յ, փարվել կարելի է,— ոգևորվեց Հովսեփ քեռին,— բայց ինչո՞ւ շեմին։ Էդ շան աղջիկը հո չի՞ մերժել քեզ, Արմենակ, պապիդ օղորմի, մի ճիշտն ասա։

Արմենակն ամոթխած կախեց գլուխը։

— Ե՞րբ եմ առաջարկություն արել, որ մերժի կամ ընդունի։ Մեր հարևանի աղջիկն է...

— Ա՛յ տղա, վա՛յ թե չգիտի էլ, որ դու գժվում ես իր համար։

— Իսկ դա ի՞նչ կարևոր է։

— Լսիր, Արմենակ,— լուրջ տոնի անցավ քեռի Հովսեփը,— ես քեզ կարգին տղամարդ եմ կարծել, ինստիտուտ ես ավարտել, մի քսանհինգ տարեկան կլինես, բայց պարզվում է, որ դեռ երեխա ես։

— Է՛, քեռի Հովսեփ, զգացմունքն ապրա՞նք է, որ ցույց տաս, վաճառքի հանես. սերն ասելով չի։

— Հասկացանք, թող քո ասածը լինի։ Բայց էդ աղջիկը պիտի իմանա՞, թե քո սրտում ինչ կա։

— Եթե նրա սրտում էլ մի բան կա, կիմանա, կզգա, սերն ամենախելոք մատնիչն է, նրան պետք է վստահել ու հավատալ։

Սիրան ապրում է սիրո կանչով.
Սիրո ճամփան, ա՜խ, երկար է...

Սարուխանի դեմքին նույն հիացական-վերացած ժպիտն է թառել։

— Էս մեր Սարուխանը մաքուր սիրահարված է, արևս վկա.— նորից քեռի Հովսեփն է։— Վախենամ, թե սրա աղջիկն էլ գործին անտեղյակ է։ Անունն ի՞նչ է, ախպոր տղա։

— Քեռի Հովսեփ, շատ եք հասարակացնում, ազնիվ խոսք։ Իսկ անունը չգիտեմ...

— Ինչպե՞ս թե չգիտես։— Նույնիսկ Արմենակն իր զարմանքը թաքցնել չկարողացավ։

— Չգիտեմ, որովհետև չունեմ, չհասցրի ունենալ, պատերազմը խանգարեց։ Մեկը կար, մեր դասարանից էր, թվում էր, թե դա է։ Բայց հեռանալուց հետո օր-օրի վրա համոզվեցի, որ չէ, իմը դա՛ չէ, սխալվել եմ։ Սերն էլ քննություն պիտի բռնի, ժամանակի, տարածության, սրտի քննություն։ Գնալով պետք է ծավալվի սերը, ափերից դուրս գա։ Որ սկսեց նվազել ջուրը պակաս առվի նման, ուրեմն այն չի, սխալ են դուրս եկել սրտիդ հաշիվները։

— Ա՛յ, լավ խոսք է... Սրտի հաշիվները... Արմենակ, մի ոտանավոր գրիր էդ մասին։

— Իսկ ինձ թվում է, թե սերը ոչ մի հաշիվ էլ չպետք է ունենա։

— Հենց էդ անհաշիվությունն էլ սրտի հաշիվն է... Արմենակ, աղջկադ լուսանկարը ցույց տուր, տեսնենք, ճանաչենք, հեռվից սիրենք մեր քրոջը։

— Չունեմ, դժբախտաբար։

— Ա՛յ տղա...

— Եվ ինչի՞ս է պետք նկարը։

— Ա՛յ տղա, ինչպե՞ս թե ինչիս է պետք։

— Նրա պատկերն իմ հայացքի մեջ է, ամեն վայրկյան ինձ հետ է։ Նկարն ի՞նչ եմ անում։ Մի՞թե պիտի տեսնեմ, որ հիշեմ։

— Լավ է ասում, ես համաձայն եմ Արմենակի հետ, սերը սրտում պիտի լինի, նկարն էլ՝ հայացքի մեջ. միշտ միասին, անբաժան՝ նույնիսկ հարձակման ժամանակ։

— Վաղվա հարձակումը... էլ ի՞նչ վաղ, քիչ մնաց արդեն, չփորձե՞նք մի փոքր հանգստանալ, անամոթ բարձունք է, շատերի գլուխն է ուտելու։

— Մեզնից է՞լ հանգստացող դուրս չի գա. ավելի լավ է՝ լսենք Արմենակին։

Սիրուդ դռան մոտ ես պահակ կանգնեմ,
Զար հայացքները առնեմ իմ սրտին...

— Տղե՛րք, ո՞վ է իմանում, հանկարծ եթե մի բան պատահի, գրածներս ահա այս տետրի մեջ են, ծոցագրպանումս, նրա հասցեն էլ կա. կուղարկեք իրեն...

— Արմենա՛կ, անխիղճ բաներ մի ասա, խնդրում եմ,— լացակումած բողոքեց Սարուխանը,— դու իրավունք չունես։

— Իրավունք հարցնող չկա, բարեկա՛մս, գնդակն էլ, գիտես, շա՛տ է կույր...

Լռեցին։ Լուռ էր նաև մարտադաշտը, միայն հատուկենտ գնդակներ էին կույր-կույր թափառում՝ քաղցած շան նման վնգստալով...

Ու հիմա գնում ենք հարձակման։ Առաջադրանք է, բարձունքը պետք է գրավել, արյան գնով, կյանքի գնով։

Իսկ բարձունքի փեշերին մահն է թևածում։ Գնդացիրների անընդմեջ կրակահերթերից ու ականների վայրիվերո պայթյուններից խլանա՞լ կարելի է։ Բայց մենք չենք խլանում, փորձում ենք պատասխան կրակոցներով հակառակորդին խլացնել։

Բարձունքի փեշերին, փեշ ու ծունկ մաշելով, առաջ ենք սողում։ Եվ այդ մահաշունչ թոհուբոհի մեջ հայացքս կպել է պատանի Սարուխանին ու չի պոկվում։ Ինչո՞ւ նրան, չգիտեմ։ Իսկ ո՞ւր են մյուսները։ Տեսնում եմ բոլորին, վազում են, սողում են, բայց չեմ ջոկում, իրարից չեմ տարբերում,

նույնիսկ Արմենակի հաղթանդամ հասակը ձուլվել է ընդհանուր ֆոնին, չի ջոկվում մյուսներից։

Իսկ Սարուխանն անընդհատ աչքիս առաջ է։ Երկար շինե՞ն է մատնում... Ահա կուչ եկավ մի սպանված զինվորի թիկունքում։ Ապահովությո՞ւն է փնտրում։ Բայց շարժման մեջ է, մի՞թե խրամատ է փորում, ո՞ւմ է պետք։ Ի՞նչ է անում. սպանվածի գրպանները՞ն է ստուգում։ Երևի փաստաթղթերն է ուզում վերցնել. ո՞վ է, մի՞թե...

Հարձակումը շարունակվում է։ Գնալով նվազում է թշնամու կրակը։ Նվազում են նաև հարձակվողների շարքերը։ Ի՞նչ եղավ Սարուխանը։ Նա՛ էլ կորավ իմ տեսադաշտից։ Հայացքիս դեմ բարձունքի մարդացան փեշերն են, ծուխն ու որոտը, մարդկանց համառ առաջխաղացումը։ Իսկ ականջիս տակ «ուռան» է թևածում... Մի վերջին ճիգ ևս, և բարձունքի կատարը մեր ոտքերի տակ է։ «Ուռան», ալիք տալով, գնացհեռացավ մեզնից։ Հակառակորդը նահանջում էր խուճապահար։

Մեր վաշտը բարձունքի վրա ամրանալու առաջադրանք ստացավ։ Մի քանի հոգի իջանք վիրավորների ետևից։ Իջնելն ավելի դժվար էր. ամեն քայլափոխի՝ ծանր վիրավոր կամ սպանված։ Եվ մեծ մասը՝ ծանոթ-ընկերներ։

— Սարուխա՞նը,— հանկարծ բղավեց քեռի Հովսեփը ու կռացավ խրամատից կիսով չափ դուրս մնացած զինվորի մարմնի վրա։

Արմենակն էլ կողքին էր. մեկնվել էր հասակով մեկ՝ գլուխը հակած կրծքին։ Իսկ կուրծքն արնաշաղախ էր։ Սարուխանի մի ձեռքը Արմենակի ծոցագրպանում էր, մյուս ձեռքը հանգչում էր բանաստեղծությունների ծանոթ տետրի վրա։ Գլուխը հենել էր ընկերոջ կրծքին, ասես լսում-ստուգում էր նրա շնչառությունը...

Տետրն ուզեցել է վերցնել, ուղարկել հասցեատիրոջը։ Խանգարե՞լ են։ Արգելե՞լ են։ Ա՜խ, այդ պատերազմը...

Քամին թերթում էր Արմենակի բանաստեղծությունների տետրը. ու իմ աչքին ընկավ մի երկտող.

Ես շատ կուզենայի ճամփաներին չմնալ,
Որպեսզի ինձ վիշտ չպատճառեմ, անգի՜նս...

Բարձունքի փեշերին մղկտում էր մի մորթված քանասատեղծություն։

ՁԻՎՈՐԻ ՍԵՐԸ

Պատերազմ։ Մարտադաշտ։ Թևաթափ գիշեր։

Մի մրսած կիսալուսին ու մարդկանց դեմքերին թառած մի նիհար լույս։ Հատուկենտ կրակոցներ, և օրվա անհավասար մարտի տխուր արձագանքներ։

Առաջին անմոռաց հանդիպում։

Մի թռուցիկ հայացք, ու անցան։ Խաժաչք աղջիկը շտապում էր գնդի սանմաս, արծվաքիթ տղան նոր էր վերադարձել դաշտային հոսպիտալից, իր զորամասն էր փնտրում։ Նայեցին իրար ու անցան։ Առաջին անգամ էին հանդիպում, թե՞ զինվորին ծանոթ էր աղջկա դեմքը։ Ձիգ մարմին, լայն գոտու մեջ խեղդված բարակ մեջք, արագ քայլից շառագունած դեմք, պիլոտկայի տակից դուրս պրծած փարթամ խոպոպներ ու զարմանալի արտահայտիչ աչքեր։ Տեսե՞լ է ուրիշ անգամ, թե՞ պարզապես կուզենար նորից տեսնել։ Շրջվեց, ետ նայեց, ափսոս, թիկունքն է երևում ու բարձր ծոծրակը։ Գուցե նա՞ էլ կշրջվեր. ինչո՞ւ աղջիկները հաճախ անխիղճ են դառնում։ Տե՜ր աստված, շուտ եկավ աղջիկը, ու նրա հայացքը կայծակեց տղայի դեմքին։ Ասես մի անխոս հրահանգով շրջվեցին նորից և շարունակեցին քայլել հակառակ ուղղությամբ։ Քայլ առ քայլ հեռանում էին իրարից։ Տեսնես նորից մոտենալու հեռանկար կա՞... Բայց դրա փ՜նչ ժամանակն է, մտորում էր տղան, դու աչքդ թշնամու կողմը դարձրու, նրա անկուշտ աչքը հանելու մասին մտածիր և ոչ թե... Բայց և այնպես մարդ ես, չնայել, չհիանալ չես կարող։ Հետո միշտ չէ, որ աչքին բան է լինում հասկացնել, աչքի՞ն, թե՞ սրտին...

Մի կիսատ-պռատ լուսին, մարտադաշտի անհանգիստ լռությունը խզող հատուկենտ կրակոցներ ու իրենց պարտքի ետևից շտապող մարդիկ։ Իսկ զինվորի ականջներում ասես դեռ հնչում է հոսպիտալում լսած մի երգ.

«Երջանկությունը ընկած է քո ճանապարհին,
ու դու անցնում ես կողքով...»

***

Անթափանց գիշեր, մթան փեշերի տակ ծվարած տխուր մարտադաշտ ու դաշտի մազերը գզգզող խելառ քամի։ Օրվա կրակոց-կոտորածին փոխարինել է ցավից ատամները սեղմած լռությունը։ Եվ այդ լռության միջով դանդաղ առաջ են սողում երկու հոգի։ Բուժքույրը մարտադաշտից դուրս է հանում վիրավոր զինվորին։ Հաղթանդամ է տղան, վիրավոր ոտքը գետնին դնել չի կարող, ու ծանրացել է կրկնակի։ Նրբակազմ աղջկա բեռը շատ է ծանր։

— Հանգստացի՛ր, քույրս, մե՞ղք ես։

— Ճիշտ է, հոգնել եմ, այսօր տասնյոթերորդ վիրավորն ես դու, եղբայրս։ Բայց ոչինչ, կտանեմ, պետք է տանել, մի քիչ շունչ առնեմ։

Լռեցին։ Աղջիկը թեքվեց տղայի ոտքի վրա, վիրակապն էր ստուգում։

— Կարծես թե վատ չեմ կապել։ Ծանր չէ վերքդ, միայն արյուն շատ ես կորցրել։ Մի տաս-տասնհինգ օր կպառկես։

— Եթե դու ժամանակին չհասնեիր, ես երևի արնաքամ լինեի, քույրիկս։

— Ես իմ պարտականությունն եմ կատարում։

— Եթե ամեն մեկն իր պարտականությունը կատարեր այս նույն սրտացավությամբ։

— Դե՛, լավ, գնացինք։ Հենվիր ուսիս, սերժանտ։

— Ընկերներս ինձ Միշա են ասում։

— Մայրս ինձ Տանյուշա էր կանչում։

— Նա դեռ բախտ կունենա իր Տանյուշային առողջ ու բախտավոր տեսնելու։

— Դժբախտաբար ոչ. գյուղում, մի ռմբակոծության ժամանակ...

Երկնքի մի հատվածում ամպերը երկփեղկվեցին, ու լուսինը ծիկրակեց ամոթխած։ Եվ նրանց հայացքները հանդիպեցին իրար։ Տե՞ր աստված, նա՛ էր, նրանք էին, արծվաքիթ զինվորն ու խաժաչք քույրը։

— Բախտն ինչ-որ խաղ է խաղում մեզ հետ,— տղան հուզված էր խոսում։

— Երևի,— աղջկա ձա՞յնն ինչու անվստահ դարձավ։

— Գուցե խաղ չէ, խելոք ակնարկ է։

— Չգիտեմ։

— Ի՞նչ լավ արեցիր այն օրը, որ ետ նայեցիր։

— Ինքս էլ չհասկացա, թե ինչու շրջվեցի։ Չգնա՞նք։

— Մի քիչ էլ նստենք, Տանյա, ոտքիս ցավն ասես անցնում է։

— Չեմ հավատում, Միշա։

— Ազնի՜վ խոսք։

Լռեցին։ Խոսքի շղթան օղաթափ էր լինում, պետք էր ծայրը-ծայրին բերել, միացնել։

— Մայրիկդ, ասացիր... Ուրիշ ո՞վ կա տանը։

— Ոչ ոք։ Եղբայրս ռազմաճակատում էր, ասում են նա էլ... Բոլորովին մենակ եմ ես։

— Եթե թույլ տայիր ինձ փոխարինել եղբորդ, Տանյա։

— Շնորհակալ եմ, Միշա։

— Իսկ ես տանը մայր ունեմ, փոքր եղբայր, ամուսնացած քույր։ Էմմա է քրոջս անունը։ Նա սիրով քեզ քույրություն կաներ։

— Է՜հ, անհնարին բան է դա։

— Ցանկության դեպքում անհնարինը դառնում է հնարավոր։

— Այս ահեղ օրերին...

— Մարդս ապրել է ուզում նաև պատերազմի թոհ ու բոհի մեջ։ Սրտի վրա չպետք է բռնանալ, Տանյա։

— Չգիտեմ, Միշա, հիմա դժվար է նաև սրտի խոսքին հավատալը։

— Իսկ եթե այդ խոսքն անկե՞ղծ է։

— Դժվար է այդ անկեղծությունը որոշել։ Գիտես, հիմա տղաներն աջ ու ձախ սեր են բացատրվում, և նրանց մեղադրել չես կարող, կարոտ են քաղցր զգացման։

— Խելոք սիրտը պետք է այդ խոսքերի մեջ կեղծն անկեղծից ջոկել կարողանա։

— Իսկ եթե իմ սիրտն այդքան խելոք չէ։ Եվ հետո մենք ընդամենը երկրորդ անգամն ենք հանդիպում։

— Երբեմն իրար հասկանալու համար կես խոսքն էլ բավական է։

— Իսկ եթե ոչ միայն կես, այլ լրիվ խոսքն անգամ հավատ չի ներշնչո՞ւմ։

— Դա շատ ավելի մեծ ցավ է, Տանյա, քան ամենածանր վերքը կարող է պատճառել։

— Մի վիրավորվիր, խնդրում եմ, մենք համարյա իրար չենք ճանաչում։

— Ո՛չ, իրավացի չես,— իր համար էլ անսպասելի համարյա գոռաց Միշան։ Ոտքի ցավը սաստկանում էր, և նա աշխատում էր իր ջղաձգվող դեմքը ցույց չտալ աղջկան։

— Մի ամիս հազիվ լինի, որ առաջին անգամ մենք հանդիպեցինք, դրանից հետո դու ամեն օր ինձ հետ ես եղել, ամեն ժամ ու րոպե, հասկանո՞ւմ ես, փնտրել եմ քեզ, երազում տեսել եմ քանի անգամ... ինձ թվում է, թե ես քեզ ճանաչում եմ շատ երկար ժամանակ, ասես նույն գյուղում ենք մեծացել, մեր բարակ, բայց զարմանալի զուլալ ջուր ունեցող առվի ափին։ Իսկ դու ասում ես, դու անխիղճ բաներ ես ասում, Տանյա։

— Դու նորից նեղանում ես, իսկ դրա անհրաժեշտությունը չկա, աստված վկա։

— Չեմ նեղանում, ափսոսում եմ, որ անհավատ աղջկա եմ հանդիպել։

— Այսպիսի ժամանակներում լավ է անհավատ լինել, քան դյուրահավատ։

— Գուցե դու էլ իրավացի ես։ Մի քիչ ջուր տուր գոնե, անխիղճ։

— Այդ մեկը կարելի է, միայն՝ մի քանի կում,— ու տափաշիշը թեքեց տղայի շրթունքներին։

— Դե՛, գնացինք, արդեն քիչ է մնացել մինչև սանմաս։

Եվ աղջիկը նորից գրկեց տղայի ուսը ու ոտքի կանգնեցրեց նրան։

— Տխուր է իմ վիճակը, քույրիկս,— մի ոտքի վրա ոստոստալով ասաց տղան։

— Եթե պատճառը քեզ գրկելս է, կարող եմ բաց թողնել թևդ,— ու աղջիկը ժպտաց խորամանկ։

— Հաճելի սրամտություն է։ Տխուրն այն է, որ փոխանակ ես քեզ ձեռքերիս վրա տանեմ մեր զուլալ առվի ափը, մեր սարերը, դո՛ւ ես ինձ քարշ տալիս, և այն էլ՝ դեպի սան-

մաս... Բայց էլի շնորհակալ եմ, շա՜տ եմ շնորհակալ իմ բախտից, իմ վերջից, որ իրավունք է տալիս ինձ քո գրկում լինելու...

— Խոսում, նույնիսկ սրամտում ենք, Միշա, իսկ մեր շուրջ մարդիկ են պառկած հավիտենական քնով, մահաբեր գնդակներն էլ շարունակում են վզալ մեր ականջի տակ։

— Մարդս հենց դրանով է ուժեղ, Տանյուշա, և ինչ գիտես, թե մենք չենք հաղթելու նաև այդ պատճառով, այսինքն՝ հավատի, հավատարմության, սիրո ուժով։

— Նույնիսկ սիրո՞ ուժով։

— Այո, միայն լայն առումով, իհարկե։

— Իսկ նեղ առումով որտե՞ղ է ձեր այդ զուլալ առվակով գյուղը։

— Հայաստան լեռնաշխարհում, ոչ մեծ մի գյուղ, բայց մի ամբողջ աշխարհ։ Եվ այնտեղ մայրս սպասում է ինձ — ո՜չ, մեզ։ Է՜խ, Տանյուշա, դու չգիտես, թե ինչ մայր ունեմ ես, եթե իմանայիր, թե նա ինչպես մայրություն կաներ նաև քեզ...

Աղջկա աղատ ձեռքի մատները մտան տղայի խռիվ գանգուրների մեջ ու գզգզում էին քաղցր։

— Քո մայրը լավ տղա է տվել աշխարհին, Միշինկա, ու ես կուզենայի, որ նա ի՜նձ էլ մայրություն աներ, միայն ափսոս, որ իրար չենք հասկանա, ես ձեր լեզուն չգիտեմ, նա էլ, հավանաբար...

— Լեզուն այստեղ գործ չունի, Տանյո՜ւշա, նա քեզ սրտով կհասկանա, մոր անսխալ սրտով։

Տանյան ինքն էլ չիմացավ, թե ինչպես գրկել է տղայի գլուխը ու կարոտած համբուրում է ճակատը, այտերը, շրթունքները։ Ու շշնջում ինքնամոռաց.

— Միշինկա, հարազա՜տս...

— Ես այնպե՜ս եմ սիրում քո այդ «Միշինկան», Տանյա, թանկագի՜նս...

Ծանոթ երգն ասես շշնջում է նրա ականջի տակ.

«Երջանկությունն ընկած է քո ճանապարհին,
Մի անցիր կողքով...»

Լուսինը գաղտագողի դուրս սողաց գորշ ամպերի ծոցից

ու դաշտի վրա փռեց իր գունատ լույսի խորհրդավոր քողը։

Զարմանալի խաղաղ գիշեր էր. պատերազմ՝ առանց կրակոցի, թե՞ մահվան զենքերն էլ փոխվել էին սիրո շշնջոցի...

* * *

Անամպ երկինք։ Առատ արև։

Ու՝ թաղման արարողություն։

Գիշերային մարտն ավարտվել է հաղթանակով։ Մեր զորքերը հետապնդում են նահանջող թշնամուն։ Իսկ մի խումբ մարտիկներ մնացել են վիրավորներին օգնելու և զոհվածների աճյունները հողին հանձնելու։

Մի եղբայրական գերեզման, կողքերին՝ տասներկու հանգած կյանք, տասներկու նահատակ։ Ասես հերթի են սպասում իրենց մշտական տունն իջնելու համար...

— Դե՛, տղաներ, արագացրեք, պետք է հասնել զորամասին։

Հուղարկավոր խմբի ղեկավարն է, վաշտի ամենատարեց զինվորը, բեղ-մորուքով Թվան Սավելևը, որին բոլորը քեռի Վանյա են կոչում։

Հանկարծ մեկը բլրակի ետևից բղավելով առաջ վազեց

— Սպասեցե՛ք...

Աղջկա ձայն էր, ո՞վ է. բուժքո՞ւյր, ի՞նչ է ուզում։

Մոտ վազեց աղջիկը, պառկածների շարքի դիմաց կանգնեց մի պահ ու ողբալով նետվեց մեկի վրա։

— Միշի՜նկա...

Համբուրում էր զինվորի ճակատը, շոյում գզգզված մազերը, մղկտում անդուսպ։

— Անխի՜ղճ, ինչո՞ւ ինձ դավաճանեցիր. ինչե՞ր էիր խոստանում, հիմա ես ի՞նչ պիտի անեմ. Մի՛շա, հարգա՜տս...

Խոսում էր ինքն իրեն, նորից փարվում զինվորին, հեծկլտում սրտամաշ։

Քեռի Վանյան մոտեցավ, բարձրացրեց աղջկան, մի կողմ տարավ։

— Հանգստացի՛ր, աղջիկս, ու մի մոռացիր, որ դու զինվոր ես, ցավին դիմանալ է պետք։

Աղջկա հեծկլտոցն ավելի սաստկացավ։

— Դե՛, դե՛, քեզ հավաքիր բուռդ... Իսկ քո ի՞նչն էր Միշան, ես քեզ, կարծես թե, առաջին անգամն եմ տեսնում։

— Նա իմ... Ես նրա հարսնացուն եմ։

Քեռի Վանյան աղջկա գլուխը սեղմեց իր կրծքին.

— Աղավնյա՜կս, ուրեմն գիշերը քո մասին էր խոսում Միշան։ Է՜խ, պատերազմ, պատերազմ...

Զինվորներից մեկը Տանյային մեկնեց Միքայել Բաղալյանի փաստաթղթերը, զինվորական գրքույկի հետ կոմերիտական տոմսն էր, մեջը՝ մոր ու քրոջ լուսանկարը, ու նաև՝ մի եռածալ նամակ։ Հավանաբար մորն է գրել և ուղարկել չի հասցրել։ Ինչ գիտես, թե այդ նամակում աչքը ճամփին սպասող մորը չի ներկայացնում իր խաժաչք ու շիկավարս հարսնացուին։ Երևի գրել է՝ մայր, նախապատրաստվի՛ր, հենց վերջացավ կռիվը, գալիս ենք միասին...

Քեռի Վանյայի ձեռքը դեռ աղջկա ուսին էր, նա սովորություն ուներ, այդպես իր Կատյային էր գրկում։

— Գիշերը մի ժամանակ Միշան հրեց թևս ու ասում է՝ քեռի Վանյա, քունը մոտ չի գալիս աչքիս, գուցե կխոսեինք մի քիչ։ Ասում եմ՝ տղաս, իմ քունը էն գլխից է փախել, խոսենք, բայց ինչի՞ մասին։ Քեռի Վանյա, ասում է, էս ի՞նչ գեղեցիկ բան է կյանքը, նույնիսկ էս անամոթ կռվի ժամանակ։ Այնպես ուրախ եմ, ասում է, այնպես երջանիկ, որ երգել եմ ուզում, պարել եմ ուզում։ Տղաս, ասում եմ, դու հո սիրահարված չե՞ս։ Ինչ լավ բան է սիրելը, ասում է, քեռի Վանյա, որ իմանաս, թե ի՞նչ աղջկա եմ հանդիպել. ինչպե՞ս եմ, ասում է, մինչև հիմա ապրել առանց նրան, գլուխ չեմ հանում... Էսա կվերջանա, ասում է, էս զահրումար պատերազմը, Տանյայիս առած կգնանք մեր գյուղը, ես ուսուցչություն կանեմ, նոր էի ավարտել մանկավարժական ինստիտուտը, դասարան մտնել չհասցրի, Տանյուշաս կգնա բժշկական ինստիտուտ, ասում է, ու մի քանի տարի հետո կվերադառնա բժշկուհու դիպլոմով։ Եվ կաշխատենք, կապրենք, մորս հետ, թոռնիկներ կպարգևենք նրան, ի՞նչ կյանք կլինի դա, քեռի Վանյա, ասում է... Ես քեզ կծանոթացնեմ Տանյայի հետ, և դու անպայման կհավանես նրան, ախր նրան չի կարելի չհավանել։ Խոսում է մի տեսակ վերացած,

և ես լուսնի աղոտ լույսի տակ տեսնում եմ նրա աչքերի ճառագայթումը։

Տանյայի ուսերը դեռ շարունակում էին ցնցվել։ Քեռի Վանյան շարունակեց իր խոսքը։

— Որոշեցի մի քիչ խաղալ տղայի հոգու հետ, ասում եմ՝ իսկ դու ինչո՞վ ես համոզված, որ մայրդ կընդունի քո այդ Տանյային։ Դե՛, ես դեռ քեզ չէի ճանաչում, աղջիկս, կնեբես ինձ։

Մայրս չի՞ ընդունի, ասում է, տաքացավ Միշան, ես նույնիսկ գիտեմ, ասում է, թե մայրս ինչ խոսքերով մեզ կդիմավորի. «Վա՜խ, կասի, ես քո եկած ճամփին էլ մատաղ, քո հարսնացուի ոտի տակի հողին էլ մատաղ...»։

Տանյայի լացը նորից սաստկացավ։

— Դե՛ պետք չէ, աղջիկս, հանգստացիր։ Ես պատմում եմ այս բոլորը, որ դու իմանաս, որ դու ավելի լավ ճանաչես քո Միշային, թեկուզ և ուշացումով... Դա քեզ պետք կլինի կյանքում։ Իսկ դու, աղջիկս, երևում է լավ սիրտ ունես, դե՛, Միշան էլ աննման տղա էր. ափսո՜ս, որ իրար չարժանացաք...

Տանյան հազիվ էր կանգնում ոտքի վրա։

— Մենք կմնանք լավ բարեկամներ, ասում էր, քեռի Վանյա, կգնանք կգանք իրար մոտ։ Ու հեռու պլաններ էր մշակում։ Պատկերացնո՞ւմ ես, ասում է, անցել է մի քսան երեսուն տարի ու ես ու Տանյան մեր թոռներին առած քեզ մոտ՝ Սարատով հյուր ենք եկել... Մի՛շա, ասում եմ, էդ քո ասած երեսուն տարի հետո ասված չգիտի, թե որտեղ կլինեմ ես... Չէ՛, ասում է, քեռի Վանյա, մեր դժվարն այստեղ է, էս մուռտաո պատերազմից որ պրծանք, էլ մեզ մահ չկա։ Դու, ասում է, էն ժամանակ կլինես մի փառահեղ պապիկ։ Եվ պատկերացնո՞ւմ ես, ասում է, ես ու Տանյան էլ պապիկ ու տատիկ կլինենք...

Տանյային նորից սկսեց խեղդել հեծկլտոցը։

Իսկ քեռի Վանյան շարունակեց իր խոսքը նույն անշտապ տոնով։

— Տեսա, որ տղան շատ է հուզված ու բորբոքված, զգուշացիր, գժություններ չանես, ասացի, Մի՛շա, էսա գնում ենք մարտ, քեզ կարգին կպահես։ Ո՞չ, ասում է, քեռի Վանյա,

ես այսօր այնպես պիտի կռվեմ, որ իմ ու Տանյայիս տուն դնալը մի տաս օրով գոնե մոտենա... Լուսաբացին հարձակումն սկսվեց, աչքս Միշայի կողմն է։ Բայց հետո թեժացավ կռիվը, ամեն ինչ խառնվեց իրար, ու ես կորցրի նրան, մեղքս ի՞նչ թաքցնեմ, մի ժամանակ նույնիսկ մոռացա, դե՛, իմ տեղն էլ շատ նեղ էր... Մեկ էլ հեռվից ականջիս հասավ Միշայի ձայնը.— Առա՞ջ, տղաներ, ջարդենք անամոթի մռու... ու խոսքի կեսում խզվեց, կտրվեց ձայնը։ Սիրտս վատ բան վկայեց, մոտ վազեցի, արդեն ուշ էր...

Տանյան իր մատներն էր կրծում՝ դուրս ժայթքելու պատրաստ ցավի ճանապարհը փակելու հույսով...

Քեռի Վանյան համբուրեց աղջկա ճակատը։

— Դե՛, Տանյա, եկ զինվորին վայել զսպությամբ հրաժեշտ տանք Միշային ու նրա մարտական ընկերներին...

Լսվեց պատվո համազարկը։

Տանյայի շորացած շրթունքների վրա թպրտում էր «Միշինկան»...

Գարուն էր։ Զարմանալի պայծառ օր։

Ու՝ պատերազմ։

թվագրել է 1915.ին Կայսե

ԳՈՒՅՆ ԴԵՌ ԿԳՐԻ՞...

Խոստացավ նամակ գրել։ Ու ես սպասում եմ։ Ամբողջ Երեսուն տարի։

...Քառասունհինգի գարնանն էր, ամոթապարտ Բեռլինի հոգևարքի օրերին։ Փողոցային համառ մարտերից հետո մթան հետ մտանք մի ընդարձակ բակ։ Անմարդաբնակ ասես։ Խորհրդավոր ու դարանակալ մի լռություն է թևածում մեր գլխավերևը։

— Այ տա, գոնե մի կատու երևար էս անտեր բակում, որ իմանայինք անապատ չենք մտել, մի քաղցր մլավեր, ախր մեղք են մեր ականջները, առավոտվանից կրակոց չեն լսում։

Սերժանտ Հարությունն է՝ իր հանպատրաստից ու միամիտ խոսքով։ Մեկ էլ կտեսնեիր մի զարմանալի ու ոչ տեղին հարց տվեց.

— Տղերք, ախր ես մի բան չեմ հասկանում, թե էս ֆրի-

ցը ընչի՞ ա սաղ գիշեր կրակում։ Ցերեկը զահլաներս տանում է, հերիք չի, գոնե գիշերը թողնի մի երկու բերան աչքներս փակենք, մենք էլ ենք մեղք, ինքն էլ, չէ՞։

Դասակում նա հայտնի էր որպես «միամիտ լոռեցի»։

— Համա միամիտն ես հա, Հարություն,— չի համբերում կարճ ու գնդլիկ Արտաշեսը։

— Դու էլ բա՞ն ասացիր,— խոսքի տակ չի մնում Հարությունը,— այ տա՛, բա լոռեցուց ի՞նչ ես ուզում,— և ամենաբարձրն ինքն է ծիծաղում, ու դրանով էլ ապահովում է իր հաղթանակը խոսքակռվի մեջ։

— Հա՛, աստված վկա, կարոտել եմ, գոնե մի կատու երևար։

— Միամիտ-միամիտ մի խոսա, պապիդ օղորմի,— նեղսրտում է Արտաշեսը,— մարդուն թողած կատվին է կարոտել. էստեղ են ասել՝ խելքին աշկեցեք...

— Այ տա, հասկացի՛ր, մարդուց զահլես գնացել է. էս քանի տարի է իրար միս ենք կրծում, էլ մարդ մնա՞ց որ։

— Մեզ է՞լ խառնեցիր էդ կաթսայի մեջ։

— Չէ՛, քեզ դուրս թողեցի... Այ տա, բա որ ամբողջ ժամանակ մտածենք մարդ սպանելու մասին...

— Մարդ չեն, է՛, միամիտ ընկեր, թշնամի են, ֆաշիստ, հասկացի՛ր։

— Հասկանում եմ, պապիս արևը վկա, ամա էդ թշնամին էլ մարդ է, միայն շաշությունից եկել զոռով ինձ մարդասպան է դարձրել... Էսօր քսանութերորդին ուղարկեցի էն աշխարհը,— ու փաղաքշանքով շոյում է իր անվրեպ կրակող հրացանի փողը։

— Պատերազմը վերջանալու վրա է, Հարություն, իսկ դու շաշ-շաշ խոսում ես։

— Այ պատերազմ հնարողի հերը գյորբագյոռ լինի, պատերազմը հաղթանակով ավարտողի էլ ցավը տանեմ։

— Ամե՛ն, ամե՛ն, աղոթքդ ընդունելի լինի, Հարություն եղբայր։— Տերտերի թոռ Ծատուրն է, որին տղաները կատակով տիրացու են կոչում։

— Բա հիմա ի՞նչ ենք անելու, տղերք, էս բակում կանգնելու ենք մինչև լույսը բացվի, որ նորից շներն սկսեն մեզ վրա հաչա՞լ։

— Համա միամիտն ես, հա՞, Հարություն, և դու կարծում ես, թե էս բակում մա՞րդ չկա։

— Ես իմ, բա որ կան, ո՞ւր են։

— Թաքնվել են, խելքի պուտուկ, վախենում են։

— Ումի՞ց։

— Քեզնից։

— Ինձնի՞ց... Այ տա, վա՛յ թե ճիշտ ես ասում։ Բա կնիկս գյուղում ասում էր՝ մինչև անգամ մեր հարևանի հավերը քեզնից չեն վախենում։ Թող մի տուն վերադառնամ։ Արտաշես, վկա կկանգնես, չէ՞... Այ տա, բա որ ասում եմ շաշ եք, շաշ եք, էլի։— Ու բակով մեկ ծկլթաց Հարությունի ծիծաղը։

Առաջ գնացինք, ու հերթով սկսեցինք ծեծել դռները։ Մեկ, երկու, երեք։ Ոչ մի ձայն, ոչ մի պատասխան։

Վերջապես մի դուռ բացվեց։ Շեմքում կանգնել է մեկը և կասկածն ու ահը սրտում մեզ է նայում։ Ջահել ու սիրուն աղջիկ է. գուցե իմ աչքին է այդպես երևում, վաղուց է կնոջ երես չեմ տեսել։

— Ֆրոյլան,— ասացի ես,— մենք սովետական զինվորներ ենք։

— Ես այդ տեսնում եմ,— ասում է,— ի՞նչ եք պահանջում, ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել։

Եվ տանելի ռուսերենով է խոսում։ Սա հաճելի անակնկալ է։ Ախր մեր մեջ գերմաներեն իմացող չկա. մի քանի բառ միայն, իսկ Հարությունի ասած՝ կաղ էշով քարվան չես կտրի...

— Դուք հո ռուս չե՞ք, օրիորդ,— հարցնում եմ։

— Ո՛չ,— չոր կտրում է աղջիկը,— ես մաքուր գերմանացի եմ։

— Արիական ցեղի՞ց,— չգիտես լուրջ, թե կատակով նեղտեց Հարությունը։

— Ես պարզապես գերմանացի եմ,— աղջկա դեմքը շառագունել է ներքին լարումից։

— Սիրում էի պարզապես գերմանացիներին։

Եվ Արտաշեսը որտեղից որտեղ հիշում ու արտասանում է հայերեն Հայնեի քառատողը։

Ա՜խ, շատ ուշացան ժպիտները քո,

Էլ ինչի՞ս է պետք փայփայանքդ նոր,
Վաղուց են մեռել նույզերն իմ հոգում,
Որոնց շարությամբ ծաղրեցիր մի օր։

Աղջիկը հաճելի զարմացած է։

— Այո, Հայնեն ընդունակ է բոլոր լեզուներով և բոլոր սրտերի հետ խոսելու, նրան ինչպե՞ս չսիրես։

— Հիմա, իհարկե, ատում եք բոլոր գերմանացիներին։

— Ֆաշիստներին՝ այո, կարգին գերմանացիներին ինչո՞ւ պիտի ատենք։

— Իսկ ինչպե՞ս եք դրանց իրարից տարբերում։

— Ամենադժվարը հենց դա է։

— Իսկ իմ կարծիքով ամենադժվարը մարդուն ճանաչելն է։

— Խելոք եք դատում, ֆրոյլան, միայն չգիտեմ, թե ինչո՞ւ մեր անմեղ կանանց ու երեխաներին կոտորելիս ձեր հայրերն ու եղբայրները մոռացել էին մարդուն ու մարդկայինը,— անսպասելի տաքացավ Հարությունը։

— Իրավունք ունեք, և ես, դժբախտաբար, արդարանալու տեղ չունեմ։ Միակ արդարացումը թերևս ձեր կողմից Բեռլինի գրավումն է, որն արդեն օրերի հարց է։

— Քույրիկս բարեկամի նման է խոսում։

— Բարեկամ եմ, մանավանդ՝ բարեկամի աղջիկ։

— Իսկապե՞ս։ Դժվարանում ենք հավատալ։

— Այդ ե՞րբ բարեկամացաք մեզ հետ. մեր զորքերը Բեռլին մտնելուց հետո՞...

Անցավ հեգնանքի կողքով և հազիվ լսելի շշնջաց.

— Հորս գնդակահարեցին ֆաշիստները, երկու տարի առաջ։

Աղջիկն այդ խոսքն ասաց հանգիստ, բայց զգում էի, թե ինչ լարերի վրա է թպրտում նրա սիրտը։

— Մայրս չդիմացավ այդ ահավոր ցավին, սիրտն էլ վատ էր...

Մենք լուռ սեղմեցինք աղջկա ձեռքը՝ ի նշան հարգանքի ու ցավակցության։ Նա մի կողմ քաշվեց ու ներս հրավիրեց մեզ։ Տանը տատն էր, տաս տարեկան եղբայրը և հարևանուհին՝ իր հյուծախտով տառապող ամուսնու հետ։

Երեկոն անցավ խաղաղ զրույցի հունով։ Էռնան և զրուցակից էր, և թարգմանիչ։

— Ռուսերեն հորից եմ սովորել։ Նա ազատ խոսում էր, կարդում։ Ինչպե՞ս էր սիրում Դոստոևսկուն ու Տոլստոյին։ Գրականություն էր դասավանդում կոլեջում։

Տատը լուռ արտասվում էր։

Գիշերը կիսվել էր արդեն։ Տնեցիներն ու տղաները քնել էին վաղուց, իսկ ես, Էռնայի հետ նստած, շարունակում էինք խոսել, խոսել։

— Հետաքրքիր է և կյանքը, և մարդուս ճակատագիրը, Էռնա, ասում եմ, ուսանող էի, սովորում էի Երևանում, և երբևէ մտքովս կանցնե՞ր, որ դիվորի հագուստով կհասնեմ թշնամի Բեռլին, այնտեղ կծանոթանամ մի գերմանուհու հետ, որը կարող է մի քանի ժամվա ընթացքում ջուր լցնել գերմանացու նկատմամբ ունեցած իմ ատելության կրակին, որը կարող է ինձ այնքան հրապուրել, որ չէի առարկի նրան ինձ հետ մեր Երևանը տանել...

— Պետք չէ, լեյտենանտ, խնդրում եմ,— փոքրիկ ձեռքը դրեց շրթունքներիս, խոսքիս ճանապարհը փակել էր կամենում։— Ես ընկեր ունեմ, երկու տարի առաջ տարան բանակ։ Նամակներ էր գրում Իտալիայից, երեք ամիս է ոչ մի տեղեկություն չունեմ։ Հույսս չեմ կորցրել։

— Ես անկեղծորեն ցանկանում եմ, որ նա վերադառնա։

— Շնորհակալություն, եղբայր։

Փաթաթվեց ինձ, համբուրեց տաք-տաք,— կներեք, իմ վալտերի կարոտն եմ առնում...

— Միայն ցավալին այն է, Էռնա, որ մենք այլևս չենք հանդիպելու, իսկ ես այնպե՞ս կուզենայի։

— Աղնիվ խոսք, ես նույնպես։ Եվ, խենթի տեղ չդնեք ինձ, խնդրում եմ, կուզենայի, որ մեր հաջորդ հանդիպումը տեղի ունենար ասենք, մի երեսուն տարի հետո, և կարևոր չէ, թե որտեղ։

— Իսկ ինչո՞ւ երեսուն տարի հետո, այդ ի՞նչ երկար ժամկետ է։

— Որովհետև ես այն ժամանակ կլինեմ համարյա հիսուն տարեկան... Պատկերացնո՞ւմ եք, «Հիսուն տարեկան Էռնա, գուցե և՝ արդեն տատիկ... Հանդիպեինք, փրար պատ-

մեինք ահավոր պատերազմի վերջին օրերին վրա հասած այս խաղաղ երեկոյի մասին... Եվ եկեք պայմանավորվենք, դուք ինձ կտաք Երևանի ձեր հասցեն, ես խոստանում եմ նամակ գրել, ուղիղ երեսուն տարի հետո, հյուր կգաք մեզ մոտ ձեր կնոջ ու երեխաների հետ։ Տեսնո՞ւմ եք ինչ երազողն եմ...

Էռնայի աչքերում և թախիծ կա, և լուսավոր սպասում։

— Երեսուն տարի հետո, ասում եմ, նոր հանդիպման մասին եք երազում, իսկ չգիտենք, թե ինչ կպատահի այդ տարիներին մեզ հետ, աշխարհի հետ։ Արյունահեղության սիրահարներ միշտ կգտնվեն։

— Եվ, այնուամենայնիվ, ես հույս ունեմ, որ ձեր մեծ հաղթանակով ֆաշիստների երգը կերգվի, թող գրո՞ղը տանի նրանց բոլորին...

Լռեց մի պահ, մտքերն էր իրար բերում, հետո մի տեսակ հանդիսավոր շարունակեց.— Հայրս երկու պայծառ երազանք ուներ, Էռնա, սիրելիս, ասում էր, ուրիշ ոչինչ չեմ ուզում, միայն թե կարողանամ տեսնել մարդկայինի հաղթանակը ու հետո՝ քո երջանկությունը...

Էռնան վեր կացավ օրորվելով, զարդասեղանին դրված իր պայուսակից հանեց հոր լուսանկարը ու լուռ մեկնեց ինձ։ Հիսունին մոտ, ալեխառն մազերով, նիհար ու շոր մի մարդ էր, լայն ճակատով ու խիտ հոնքերով։ Ամբողջ դեմքի վրա իշխում էր խոշոր աչքերի զարմանալի արտահայտությունը։

— Եթե իմանայիք, թե ի՞նչ լավ մարդ էր նա...

Էռնան գլուխն առավ ափերի մեջ ու լալիս էր անձայն։

Մխիթարանքի խոսքեր չկային։

— Առաջին մեծ պատերազմի ժամանակ գերի է եղել ձեզ մոտ, մի ամբողջ տարի,— փոխված ձայնով շարունակեց Էռնան։— Այնտեղ է սովորել ռուսերենը։ Ինչպիսի՞ սիրով էր խոսում ձերոնց մասին։ Ներեցեք, դուք ասացիք Երևանից եք։

— Այո, ես Կովկասից եմ, հայ։

— Հա՞յ, լսել եմ, հայրս նաև ձեր մասին է պատմել, ձեր ժողովուրդի մեծ ողբերգության մասին։ Այդ ահավոր պատմությունը նկարագրող մի գիրք պիտի տար ինձ կարդալու, խոստացել էր, չհասցրեց...

Ընդհատվեց մեր զրույցը՝ մոտիկ պայթած մի արկի տնքոցից։

— Տե՛ր իմ աստված, դեռ կրակում են,— մղկտաց Էռնան։

— Դա հոգեարք ապրող պատերազմի վերջին կրակոցներն են։

— Դեռ էլի մարդ են սպանում։

Էռնան զույգ ափերը սեղմել էր ականջներին, ասես պայթյունի ճանապարհն էր ուզում փակել։

— Իսկ եթե ե՞ս ձեզ նամակ գրեմ, Էռնա, եղբոր, ընկերոջ իրավունքով։

— Շնորհակալ եմ այդ մաքուր առաջարկության համար, միայն ափսոս, որ գրել չեք կարող։ Ես այստեղ երկար չեմ մնալու. սա իմ հորեղբոր տղայի տունն է։ Հենց որ եկավ Վալտերը, կտեղափոխվենք Դրեզդեն, վաղուց է որոշված։ Իսկ այնտեղի հասցեն դեռ չունեմ։ Միակ հնարավորությունը իմ գրելն է։ Միայն, ինչպես արդեն պայմանավորվեցինք, կգրեմ իմ հիսնամյակի օրը։ Հույս ունեմ, որ խաղաղ տարի կլինի։ Եվ գուցե մեր թոռները շնորհք կունենան շարունակելու այս բարեկամությունը։ Այնպես որ խնդրում եմ համբերությամբ սպասեք իմ նամակին։

Էռնան կատակում էր, իհարկե։ Բայց ինչո՞ւ երբեմն ուզում ես հավատալ նաև կատակով ասված խոսքին...

Վալտերին նորից հանդիպե՞ց Էռնան, ինչպե՞ս դասավորվեց նրանց հետագա կյանքը, ապրո՞ւմ են, կա՞ն։ Չգիտեմ։

Անցել է ավելի քան երեսուն տարի։ Մի ամբողջ կյանք։ Ու ես մի աղոտ հույսով սպասում եմ Էռնայի նամակին։

Գուցե դեռ կգրի՞...

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՎԱՏՈՎ

Նրանց միշտ միասին կտեսնես, և անպայման՝ թևանցուկ։

...Նոր էին ավարտել մանկավարժական ինստիտուտը, չհասցրին դասարան մտնել, ուսուցչի աշխատանքի քաղց-

թությունը վայելել չկարողացան։ Սկսվեց ահավոր պատերազմը, և ամուսնության մեղրաշաբաթը չլրացած՝ Վախթանգը մեկնեց ռազմաճակատ։ Ինչպե՞ս բաժանվեցին կայարանում, քանի հիշում է, փշաքաղվում են մազերը, ականջներում ասես դեռ մղկտում է Մայրանուշի բառախեղդ հեծկլտոցը.— ախր ինձ ո՞ւր ես մենակ թողնում, ես ինչպե՞ս պիտի ապրեմ առանց քեզ...

Զգվեց դաժան մարտերի շղթան, Նովորոսիյսկ ու Կերչ, Բալատոն ու Ալպեր։ Երեք անգամ թեթև ու ծանր վերքով՝ հոսպիտալ։ Ու ամենածանր պահերին անգամ, մի չնչին հնարավորության դեպքում, նամակ՝ կնոջը, թեկուզ մի երկտող.— լավ եմ, քո կարոտն եմ քաշում... Ու թեթևանում էր դրանից, մարտի ահավոր ծանրությունը մղվում էր ետին պլանի վրա։ Կյանքը նորից թևածում էր իր լուսավոր ժպիտով։ Իսկ ի՞նչ ուժ էին տալիս այդ նամակները Մայրանուշին, առանց դրանց նա երևի ապրել չկարողանար... Իսկ երջանկության ի՞նչ պահեր ապրեց Վախթանգը, երբ ստացավ իրեն արու զավակ ծնվելու լուրը։ Մայրանուշն այլևս մենակ չէ, նրա հետ է և Զավենը, արևի՞ն մատաղ...

Երրորդ վերքի բուժման համար երեք ամիս պահանջվեց, հազիվ դուրս պրծավ մահվան ճիրաններից։ Եվ ուղիղ՝ Բեռլինի մատույցները։ Պատերազմն արդեն իր հոգևարքի սև օրերն էր ապրում։ Եվ այստեղ էլ, վերջին ահեղ ճակատամարտերից մեկում, մոտիկ պայթած արկի հարվածից սև հագան նրա աչքերը, ու այլևս չբացվեց օրը...

Վախթանգի մազերը վաղուց են թափվել, ճաղատը ծածկում է մի թեթև գլխարկով։

Մայրանուշն իրավունք չունի բողոքելու մազերի սակավությունից, միայն եղածը ճերմակ է...

Ամուսնու աչքերին միշտ սև ակնոցներ կան։ Ահա երեսուն տարի ապրում է նա արևի լույսին կարոտ։ Երեսուն տարի նա կնոջ խնամքին է պարտական։ Ամեն տեղ՝ միասին, ոչ մի քայլ՝ առանց նրան։

Տղան մեծացել է արդեն, իր ընտանիքն ունի, հարսն էլ լավն է։ Օգնում են, ուշադիր են։ Բայց ինչ մայրն է անում իրենց հոր համար, ոչ մեկը չի կարող...

Մայրանուշը ռազմաճակատից ստացած նամակները պա-

հում է մինչև հիմա։ Մեկ-մեկ հանում է թաքուն, թաքո՞ւն, կարծես նամակագիրը կարող է տեսնել։ Կարդում է, լաց լինում թաքուն։

«Մենակ տանջվում ես երեխայի հետ. ինչպե՞ս ես ծայրը-ծայրին հասցնում, ես գիշեր-ցերեկ էդ մասին եմ մտածում, ջա՞նս»...

«Բան չմնաց, հա՞, Բեռլինի դռներին ենք հասել։ Շուտով կվերջանա այս մղձավանջը, տուն կգամ, լավ կլինի, հոգի՞ս»...

Եկավ։ Երանի՞ այդ օրվան։ Բայց եկավ ուղեկցողի օգնությամբ...

— Շատ է մեղք իմ Մայրանուշը,— իր հոգու մեջ շշնջում է ամուսինը.— ես էլ շատ եմ անխիղճ, այսքան կարելի՞ է մեկին տանջել...

— Էլի երեսուն տարի էսպես կպահեմ իմ Վախթանգին, իմ երեխայի հորը, միայն թե նա միշտ իմ կողքին լինի,— սրտի մեջ պատասխանում է կինը։

Ու նրանք քայլում են միասին, և անպայման՝ թևանցուկ։

— Հիշո՞ւմ ես մեր ջահելությունը, ինչպես էինք պարում...

— Երեխայի մոտ անհարմար էինք զգում թևանցուկ քայլել, իսկ հիմա...

Եվ ապրում են։

ՈՒՂԵԿՑՈՒՄ ԵՆ ՄՈՐԸ...

Հինգ եղբայր, համարյա միաժամանակ ռազմաճակատ մեկնած հինգ մարտիկ։ Ու տարբեր ժամանակներում և տարբեր երկինքների տակ իրենց մահկանացուն կնքած հինգ զինվոր։

Սուրենի սև թուղթը Մոզդոկից եկավ, երբ Արարատյան դաշտում առաջին ձյունն էր նստել։ Պատերազմի սև թևերի վրա աշխարհ եկած առաջին ձմեռն էր դա։ Այդ գարնանը Սուրենի քսան տարին նոր պիտի բոլորեր. չհասավ քսանամյակի շեմին։ Դավաճա՞ն ձմեռ... իսկ ռազմաճակատ մեկնելու նախորդ օրը այգու մութ անկյունում հանդիպեց իր Սո-

նային, մի քանի բոպեով միայն։ Մի ամաչկոտ համբույր և հաղթանակով տուն դառնալու հաստատ խոստում։ Եվ ավա՜ղ, իր խոսքի տերը լինել չկարողացավ, ստիպեցին, որ դրժի իր խոստումը։

Հայկազի սպանվելու մասին ստացված անխիղճ թղթի վրա Ստալինգրադի հասցեն էր։ Թշնամուն մեծ ջարդ տալուց հետո էր գրված, բայց ինչո՞ւ ծնողներից այդ մեծ հաղթանակով ուրախանալու հնարավորությունը խլեցին, ինչո՞վ էին նրանք արժանի այդ դաժանությանը...

Վարդանը մնաց Դանուբի ափերին, Հարավսլավական հողում։ Իսկ այնտեղ ծանոթացել ու մտերմացել էր մի նախկին պարտիզանուհու՝ Դեսանկայի հետ։ Կրակ աղջիկ էր. զուսպ ու հավասարակշռված, մի կատարյալ փոթորիկ։ Բայց ի՞նչ սիրտ ուներ, ինչպե՜ս հասկացան իրար հենց առաջին հայացքից։ Մինչև անգամ հասցրին հեռավոր պլաններ մշակել, միասին Հայաստան կվերադառնան, Սանամ մայրիկի ու Համբարձում հայրիկի մոտ. կապրեն մի նոր ու երջանիկ կյանքով։ Կեսարարի անունն էր դժվար արտասանում։ Կեսրա՜ր, լինելու բա՞ն էր։ Չեղավ...

Հարությունն արժանացավ անհայտ զինվորի բախտին։ Անհայտ, երբ քսաներեք տարի շարունակ քայլել է նա իր ծնողների սրտի ճամփաներով, երբ նրա կյանքի մի օրն անգամ անհայտ չէ իր հարազատներին։ Ոչ սպանվածների ցուցակում կա, ոչ գերի ընկածների մեջ է հայտնի, ասես չի եղել Հարությունն ընդհանրապես։ Ասես նրա մասին չէ, որ ռազմաճակատային թերթը մի ամբողջ հոդված էր գրել «Հերոս հետախույզը» վերնագրով, և թերթի այդ համարը նամակի հետ չի հասել Հայաստան... Ինստիտուտի վերջին կուրսից մեկնեց ռազմաճակատ։ Երազում էր ուսուցիչ դառնալ, երեխաներ կրթել ու դաստիարակել։ Չթողեցին։ Հիմա անհայտության գիրկն է անցել նա. լինելու կամ հավատալու բա՞ն է...

Իսկ կրտսերը եղբայրների մեջ՝ Մնացականը քայլեց մինչև Բեռլինի մատույցները, բայց, ավա՜ղ, սա՜ էլ հաղթանակի առավոտը տեսնելու բախտը չունեցավ։

Հինգն էլ գնացին ու մնացին։ Ահավո՜ր անարդարություն։ Իսկ ի՞նչ նամակներ էին գրում.

«Սիրելի մայրիկ ու հայրիկ, ձեզ լավ պահեցեք, կվերջանա կռիվը, տուն կգանք, ու լավ կլինի»,— գրում էր Սուրենը, ու ծնողները հավատում էին, թե վաղը կամ մյուս օրը կվերջանա պատերազմը ու երեխաները կվերադառնան, տունը նորից կլցվի խոսք ու ծիծաղով։

Ու մայրը նոր ոգևորությամբ էր այգիները գնում, իր թեվերի տակ առած ջահել աղջիկներին ու հարսներին, մշակում էր խաղողի այգիները և ի՞նչ ջանասիրությամբ, ու խրատում էր աղջիկներին՝ հաշվեցեք թե ամեն մի վազը մի հայր է, եղբայր է, սիրած տղա է, կանաչ պահեցեք, մատա՞ղ ձեզ...

«Իմ քաղցր մամա, գիտեմ, շատ եք չարչարվում առանց մեզ, բայց ոչինչ, ժամանակավոր դժվարություններ են, կանցնեն։ Հայրիկը վատառողջ է, նրան լավ նայիր, խնդրում եմ» — Հայկազն էր մարտական առաջադրանք տալիս մորը։ Իսկ քեռի Համբարձումը, գոտկացավը մոռացած, ամեն օր դաշտ էր գնում-գալիս, իր օր-օրի վրա սպառվող քրտինքը թափում համայնական հողերի վրա։ Այնպես լավ էր հասկանում հողի լեզուն, ու ասես ուղիղ գծով կապ ուներ եղանակի հետ, գիտեր, երբ, որտեղ, ինչ։ Ու սիրով նրանից խորհուրդ էին հարցնում. «Քեռի Համբարձում, բերքահավաքը ե՞րբ ենք սկսում, կամ՝ վաղը ի՞նչ եղանակ ես սպասում. հանկարծ կարկուտ չգա՞, ծառերին վնաս տա»։ Իսկ այդ կարկուտը ռազմաճակատում էր գալիս և՝ ուղիղ նրա տան գլխին, արմատահան էր անում նրա մատղաշ ծառերը...

«Բան չմնաց, հա՞, մոտենում ենք Բեռլինին։ Էսա կգանք, հերթով հարսանիք կանենք, ամեն մեկիս՝ յոթ օր ու յոթ գիշեր, ի՞նչ ուրախություն կլինի։ Մի քիչ էլ դիմացեք, գալի՞ս ենք...»։

Մնացականն էր՝ իր կենսախինդ լավատեսությամբ, իր զարմանալի հավատով։

Սա՛ էլ մնաց։ Չեկավ։ Հինգն էլ չեկան։ Ահավոր դաժանություն։

Իսկ Սանամ մայրիկն ու Համբարձում քեռին շարունակում էին իրենց հանրօգուտ աշխատանքը դաշտում, այգում, ասես դրանով իսկ վրեժ էին լուծում անարգ ոսոխից, փակված ճամփաները բացել էին ուզում, տուն վերադառնալու

հրավեր էին ուղարկում ահով ու մահով լի հեռու-հեռուներում գտնվող բալաներին։

Վերջապես վերջացավ պատերազմը, բացվեցին բանտված ճամփաները։ Համագյուղացիներն սկսեցին տուն վերադառնալ, մեկ-մեկ, երբեմն՝ խմբերով։ Գյուղն ուրախություն էր ապրում ամեն մի եկողի հետ։ Ու նորից հրապարակ էր նետվում մաշված հարցուփորձը, իսկ իմ միտու

՞ը, վերջին անգամ ե՞րբ, որտե՞ղ, հույսն անթեղե՞նք, թե՞...

Տուն դարձողներով ուրախանում էին նաև Սանամ մայրիկն ու Համբարձում քեռին. ուրախանում էին՝ աչքն ու ականջը եկողներին։ Բայց նրանց տունը շարունակում էին գալ ուշացած նամակներ, սև բովանդակությամբ՝ սպիտակ թղթեր... Սև թղթերը պահարանում, իսկ հույսը սրտում սպասում էին՝ գուցե մի տեղից լույս կծագի, միթե քոռացած աստվածը կարող է միանգամից փակել բոլոր դռները...

Կարկտահար արտը շորանալու վրա էր։ Համբարձումն էլ լքեց Սանամ մայրիկին, շղմացավ, ժամանակից շուտ գնաց՝ աչքը ճամփին։ Իսկ ինքը, Սանամ մայրիկը քարի՞ց է, թե՞ ջիգյար չունի, ո՞նց է դիմանում և ինչի՞ է ապրում...

Միակ մխիթարությունը աղջկա երեխաներն են. գալիս են, կյանքով լցնում հոգսախեղդ տունը։ Փառք աստծո, թոռներ ունեցավ, և ինչպե՞ս են կապված տատիկի հետ։ «Տա՛տ, այս գիշեր ես քո ծոցում պիտի քնեմ», «Տատի՛կ, այս խնձորը կեր, խնդրում եմ, հատուկ քեզ համար եմ ծառից պոկել», «Տա՛տ, այսօր ինձ էլ այգի կտանե՞ս, շարությունչեմ անի, ազնիվ խոսք»։ Այո, ամեն ինչ ազնիվ է երեխաների խոսքի ու արարքների մեջ, ազնիվ, մաքուր, շիտակ, հոգեհարազատ, միայն պատերազմն է ամենաանազնիվը, ամենադաժանը, ամենաանմարդկայինը. տղա թոռ ունենալու հաճույքից զրկեց թոռների համար գժվող տատիկին...

Տարիներն անցնում էին անշտապ, Սանամ մայրիկը ծերանում էր շտապ։ Իսկ հույսի շողը չէր մարում։ Ժամերով նայում էր նա պատից կախված լուսանկարներին, լուռ զրուցում էր տղաների հետ։ «Ախր շա՞տ էիք ջահել, տասնութքսանվեց տարեկան, ոչ մեկիդ պսակը չտեսա, քոռանա՞մ ես... իսկ Մնացականս ասում էր՝ ա մեր, մեծ տղաներդ եթե ուշանան, ես առաջ եմ ընկնելու, փոքր հարսիդ նվերները

պատրաստիր։ Ես էլ նեղանում էի, լաց էլ եղա, անխե՜լք պառավ...

Ո՞նց էի նեղացել, որ Վարդանս փորձում է իր «ճիպոտն ուրիշ քոլից կտրել», մի անծանոթ աղջկա է ուզում տուն բերել։ Ես էլ գիշեր-ցերեկ տանջվում էի, բա ինչպե՞ս եմ նրա հետ խոսելու, ախր նա իմ լեզուն չի հասկանա, ես՝ նրան։ Բա մորը հասկանալու համար լեզուն պարտադի՞ր է... Իսկ Սոնան, Սուրենիս թուղթն ստանալուց հետո իմացա, ինքն ասաց մղկտալով։ Հիմա երեք երեխայի մայր է, աստված պահի նրա բալաներին...

Հիմա քանի՞ տարեկան կլինեիք, ազիզ բալաներս. հիսունն անց։ Անխիղճնե՜ր, գոնե ձեզնից մեկը գար, որ վերջին օրը փակեր աչքերս, ուղեկցեր ինձ ձեր հոր մոտ...»։

Չվերադարձան։ Ոչ մեկը։ Բոլորը մնացին հեռու ճամփաներին, օտար երկինքների տակ, իսկ մայրը համառում էր հուսալ, սպասել։ Սպասելու համար հույս կար դեռևս, բայց ուժերն ի վերջո սպառվեցին։ Ու մի գիշեր, կարոտը սրտում, Սանամ մայրիկը հանգավ սպառված մոմի պես։

Հիմա տանում են իր վերջին հանգստավայրը։ Ամբողջ գյուղն է նրան ուղեկցում։ Դագաղն ուսերին առած տանում են մի տեսակ հանդիսավոր երկյուղածությամբ, տանում են Սանամ մայրիկի տղաների ընկերներն ու սրանց տղաները։ Իսկ հուղարկավորների ձեռքերին՝ ծաղիկներ, ծաղիկներ։

Ուղեկցողների առաջին շարքերում քայլում է հինգ լուսանկար։ Քայլում են գլուխներից բարձր, հպարտ ու հանդիսավոր։

Սանամ մայրիկի տղաներն են, հանգստի են ուղարկում տառապած մորը...

ԼՈՒՐՋ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ...

Արդեն մի շաբաթվա ծանոթներ ենք։ Առողջարանի նույն սենյակում ենք ապրում, նույն սեղանի շուրջ ճաշում, օրվա մեջ երկու անգամ ծովափ ենք գնում՝ լողանալու, երեկոյան կինոնկար ենք նայում։ Համարյա ամբողջ օրը, ոչ, գիշեր-ցերեկ միասին ենք։

Հիսունն անց, նիհար ու երկարավուն մարդ է Գենադին, զարմանալի համաչափ դիմագծեր ու արտահայտիչ աչքեր ունի, քունքերին վաղուց է եղյամ իջել, իսկ գլխի կեսը հրաժեշտ է տվել նաև ճերմակ մազին։

Գիտեմ, որ ուսուցիչ է մասնագիտությամբ, կին ունի ու երկու աղջիկ։ Գիտեմ նաև, որ մասնակցել է վերջին մեծ պատերազմին, վիրավորվել է մի քանի անգամ, հաշմանդամ է, ձախ ձեռքի մատները արկի բեկորից, թե գնդակներից խեղդիրվել, համարյա չեն աշխատում։ Այսքանը միայն։ Ու նաև համոզվել եմ, որ Գենադին բարի ու սրտացավ մարդ է, և՝ զարմանալի ամաչկոտ։ Իրեն հաճախ անհարմար է զգում մինչև անգամ տղամարդկանց մոտ, իսկ կանանց ներկայությամբ ձայնը չես լսի։ Մի տեսակ անօգնական մարդու տպավորություն է թողնում Գենադին, և չգիտեմ ինչու, այդ բանը նրան ավելի է մտերմացնում ինձ հետ։ Զնայած մեկ-մեկ միամտորեն զարմանում եմ, թե այսքան անհամարձակ մարդն ինչպես է կռվի դաշտ ելել ու հալածել ոսոխին։ Եվ շքանշաններ է ստացել, ուրեմն լուրջ գործեր է կատարել այնտեղ։

Մի անգամ խնդրեցի նրան պատմել իր պատերազմական կյանքից։

Ամաչկոտ ժպտաց քթի տակ.

— Դե, ի՞նչ պատմեմ, պատերազմ էր, անցավ, գնաց։

— Անցավ, բայց չի գնացել, դժբախտաբար, վերքերդ մնում են, մանավանդ՝ ծանր հիշողությունները։

— Այո, դրանցից փրկություն չկա։

— Գոնե ձեռքիդ պատմությունն արա, արկի բեկորի՞ց այդպես...

— Ո՛չ, արկ չէր, և դա միայն ձեռքի պատմություն չէ, այլ՝ իմ ամբողջ կյանքի, իմ սիրո ու դժբախտության...

Հետաքրքրությանս աստիճանը հասավ իր լարման կետին, ինչպե՞ս թե՝ սիրո ու դժբախտության։

— Ես այն ժամանակ հազիվ քսան տարեկան էի,— ասես իր կիսատ խոսքը շարունակեց Գենադին,— սովորում էի Լենինգրադի կոնսերվատորիայում։ Վարժ նվագում էի կիթառի վրա, շատերի կարծիքով՝ վատ չէի նվագում։ Նույնիսկ մտադրություն կար ավարտելուց հետո ինձ թողնել ասպիրան-

տուրայում։ Սակայն այդ բոլորին լուրջ նշանակություն չէի տալիս. ջահել էի, անհոգ, մանավանդ՝ անտարբեր իմ ապագայի նկատմամբ։ Նվագում էի, հետն էլ երգում ոգևորված, և այդ բավականություն էր պատճառում ոչ միայն ինձ, այլ նաև իմ ուսանող ընկերներին։

Մեր կուրսում մի լավ աղջիկ կար, Վերա էր անունը։

Մի օր սարսափով համոզվեցի, որ խենթի նման սիրում եմ նրան։ Իսկ նա անտարբեր էր իմ նկատմամբ, ոչ մի ուշադրություն, ոչ մի արձագանք։ Ես ժամերով նվագում էի կիթառիս վրա, երգում էի ռոմանսներ, ուզում էի նրա մեջ փոխադարձ սեր առաջացնել, բան չէր ստացվում, աղջիկը շատ ավելի լուրջ բնավորություն ուներ, քան ես կարծում էի։

Ու հանկարծ պայթեց այդ անկոչ պատերազմը։ Կիթառի ու ռոմանսի ժամանակներն անցա՜ն... Շատերի հետ ես էլ գնացի իմ պարտքի ետևից։ Կուրսի աղջիկները եկան կայարան՝ մեզ ճանապարհելու։ Նրանց հետ էր նաև, ո՞վ զարմանք, իմ Վերան։ Ու դատարկ չէր եկել, բերել էր և իմ կիթառը։ Մոտեցավ, բոլորի ներկայությամբ փաթաթվեց ինձ, համբուրեց, ու արցունքներն աչքերին ասում է.

— Գե՜նյա, սիրելի՜ս, ես կսպասեմ քեզ, վերադարձիր անպայման։ Եկ՝ կիթառը ձեռքիդ և իմ սիրած երգը շուրթերիդ։ Իսկ մինչև քո վերադարձը կիթառիդ ձայնը ամեն օր կհնչի իմ ականջներում, քո նվագի ու երգի կարոտն իմ սրտում՝ կսպասեմ քեզ։ Միայն չհամարձակվես չվերադառնալ...

Երկար խոսում էր այսպես՝ լացն ու ծիծաղն իրար խառնած, ու պոկ չէր գալիս ինձնից։ Ես էլ, գրողը տանի իմ ամաչկոտ բնավորությունը, կարկամել եմ, խոսել չեմ կարողանում։ Ուզում եմ ասել՝ թանկագինս, բա որ քո սրտում այդքան կրակ կա, ինչո՞ւ էիր ինձ վառում անկրակ, անխիղճ, մի անգամ գոնե քեզ հետ կինոթատրոն գնալու բախտին չարժանացա, իսկ քո համբույրի մասին միայն երազել կարող էի։ Ուզում էի ասել՝ ես անպայման կվերադառնամ, ես ինչպե՞ս կարող եմ ճանապարհին մնալ, երբ դու ինձ սպասում ես, հարազատս։ Եվ եթե իմանաս, թե ես հիմա, մանավանդ հաղթանակից հետո, քեզ համար ինչպես պիտի նվագեմ։ Ես կստիպեմ, որ կիթառս խոսի քեզ հետ սիրո

ամենաջերմ ու ամենահավատարիմ հնչյուններով, սիրելի՜ս...

Շատ բան էի ուզում ասել Վերային. ափե-ափ լցված սիրտս նրա առաջ բացել էի ուզում, նրան անմնացորդ նվիրել էի ուզում։ Եվ չկարողացա, չհասցրի։ Հնչեց երրորդ զանգը. գնացքը մեկնում էր։ Ես միայն կարողացա նրա քնքուշ մատները սեղմել իմ շուրթերին ու շշնջալ կամաց.

— Շնորհակալ եմ, Վերա, հարազա՜տս...

Այստեղ Գենադին ընդհատեց իր խոսքը. ծխախոտ վառեց ու ծխում էր ագահաբար, ասես ներսում կրակ կար, հանգցրնել էր ուզում։

Իսկ ես անհամբեր սպասում էի նրա խոսքի շարունակությանը ու զարմացած մտածում էի՝ տես ի՞նչ փոթորիկներ կան արտաքինից հանգիստ թվացող այս ծովում, ինչպե՜ս դժվար է թափանցել մարդուս սրտի գաղտնարանները։

Գենադին շարունակեց փոխված ձայնով.

— Հետո գնացի պատերազմ. կռվեցի, ինձ թույլ եմ տալիս ասելու՝ նամուսով, վիրավորվեցի երեք անգամ, հասա մինչև Բեռլինի մատույցները, ու հաղթանակից հետո տուն վերադարձա, միայն՝ առանց կիթառի, դե՛, ինձ արդեն պետք չէր այն, ի՞նչ կիթառահար՝ ձախ ձեռքի խեղված մատներով... Ճիշտը որ ասենք՝ տուն չվերադարձա, տունն էլ չկար այլևս...

— Ձեռքիդ պատմությունը մնաց, Գենադի։

— Այդ է, որ ամեն անգամ և հիշելն է ծանր, և, մանավանդ, պատմելը...

Գենադիի պատմությունն այս անգամ շատ էր կցկտուր ու կտրտված, և ես հաղիվ կարողացա ծայրը ծայրին բերել, ամբողջացնել շղթան։

Լեհական Պոզնան քաղաքում Գենադին ծանր կոնտուզիա ստացած՝ ընկնում է թշնամու ձեռքը։ Ուշքի է գալիս երրորդ օրը միայն ու սարսափով համոզվում է, որ ինքը գերության մեջ է։ Բայց այստեղ էլ նախախնամությունը նրան օգնության է ուղարկում մի ջահել աղջկա. քաղաքի պարեստի՝ գնդապետ Վոլֆի տասնութամյա դստերը՝ Մարթային։ Աղջիկը հենց առաջին հանդիպումից սիրահարվում է տղային, խնամում, ոտքի է կանգնեցնում նրան։ Սկզբում հայրն ուշադրություն չի դարձնում, լուրջ վտանգ չի տեսնում դրա

մեջ։ Հետո, երբ համոզվում է, որ թեթևսոլիկ աղջիկը չափն անց է կացնում, գլուխ է բարձրացնում ազգայնամոլ հիտլերականի անզուսպ ատելությունը։ Դե, նա ինչպես կարող էր հանդուրժել, որ իր աղջիկը մտերմական կապերի մեջ մտնի թշնամի զինվորի, այն էլ՝ ռուսի հետ, որոնց նա գերի վիճակում անգամ տեսնել չի ուզում։ Իսկ Մարթան շարունակում էր իր խենթությունները։ Վատ աղջիկ չէր նա, միայն մի քիչ թռի-վռի էր, երես առած։ Իր նպատակին հասնելու ճանապարհին կանգ չէր առնի ոչ մի բանի առաջ։ Գենադիի հետ ամուսնանալ էր ուզում, այդպես էլ ասաց իր հորը. «Նա ինձ դուր է գալիս, նա իմն է և վերջ»։ Ժամերով նստում ու լսում էր Գենադիի նվագը, հետո ընկնում էր տղայի վզով, համբուրում էր, ծիծաղում, ու շշնջում ականջին.— «դու իմն ես, ես քեզ ոչ ոքի չեմ տա, ի՛մն ես, ի՛մն ես...»։

Տղան որերորդ անգամ ասում էր նրան՝ ես հարսնացու ունեմ Լենինգրադում, հասկացիր, նրան դավաճանել չեմ կարող։ Է՞, կամակոր աղջկան բան կարո՞ղ ես հասկացնել։

Մի օր էլ հայրը Մարթային, նրա վամքին հակառակ, ուղարկում է Բեռլին, մոր մոտ, իսկ ռուս գերուն շինարարության վրա աշխատելու առաջադրանք է տալիս, սպառնում է՝ ես այնպես անեմ, որ նա այլևս իր կիթառով աղջիկներին խելքահան անել չկարողանա...

Ահավոր ծանր գործ էր դա։ Լուսաբացից մինչև մայրամուտ քար ու հողի հետ, կիսաքաղց ստամոքսով։

Քաղաքի ծայրամասում, բարկ արևի տակ, ախոռ էին կառուցում ձիերի համար։ Գուցե և ուրիշ նպատակ ունեին, բայց ախոռ էին ասում, չնայած քաղաքում ձիեր չէին երևում։ Առանձնապես դժվար էին գերանները տեղափոխում ու բարձրացնում երկրորդ հարկ, և բոլորը՝ ձեռքի ուժով միայն, գերիների ջանքերով։ Երեկոներն այնքան հոգնած ու անտրամադիր էր լինում, որ կիթառին ձեռք տալ իսկ չէր ուզում։ Պառկում էր մեջքի վրա ու մտածում իր անելանելի վիճակի մասին. ո՛վ գիտի մերոնք ռազմաճակատում ինչ հերոսական գործեր են կատարում, իսկ ինքն այստեղ գոմ է կառուցում թե ախոռ՝ գրողի տարած ֆրիցի համար... Նրան միակ մխիթարողը մտքով Վերայի հետ լինելու պահերն էին. դա զբաղեցնում էր նրա ամբողջ ազատ ժամանակը, որը,

սակայն, ավա՜ղ, այնքան քիչ էր, անխղճորեն կարճատև։ Ինչպե՜ս էր երազում նոր հանդիպման մասին, ինչպիսի՜ վառ հեռանկարներ էր գծում իրենց ապագա կյանքի վերաբերյալ։

Գերության մեջ ընկերություն էր անում մի հայի ու մի ուղբեկի հետ։ Գևորգ էր հայի անունը, անասնաբույժ էր մասնագիտությամբ։ Ինչպիսի՜ հիացմունքով ու կարոտով էր խոսում իրենց սար ու ձորերի, սառնորակ աղբյուրների մասին. ինչպե՜ս էր մղկտում մենակ մնացած մոր համար... Իսկ Իլյասը Սամարղանդից էր, նորավարտ ուսուցիչ։ Տառապանքին դիմադրելու, վաղվա նկատմամբ հավատը չկորցնելու ամենահուսալի հենարանը նրանց ընկերությունն էր, երեքի անբաժան մտերմությունը։ Իրար մխիթարելով՝ ապրում էին, տառապում ու երազում ազատության մասին, կիսատ մնացած պարտքի մասին։

Սակայն մի օր կատարվում է անխուսափելին, տեղ է հասնում գնդապետ Վոլֆի «անեծքը»։ Գերմանացի վերակացուի անխիղճ գոռգոռոցի ու մտրակի հարվածների տակ հանկարծ ծանր գերանը պոկվում է պարանից ու մուրճի ուժգնությամբ իջնում Գենադիի ձախ ձեռքի թաթին։ Քարի ու գերանի արանքում մնացած մատներ, խե՜ղճ մատներ... Գնդապետ Վոլֆը, լսելով այդ մասին, գոհունակությունից ձեռքերը շփելով՝ ասում է. «Ես իմ Մարթային կուրախացնեմ այդ լուրով, հաջո՜ղ վիրահատություն է...»։

Այդ օրն էլ Գենադին վերջնականապես հրաժեշտ է տալիս և՛ կիթառին, և՛ Վերային։

— Իսկ ինչո՞ւ նաև Վերային, Գենադի։

— Ես խոստացել էի նրա մոտ վերադառնալ իմ կիթառով ու կարոտած նվագով։ Ինչպե՞ս գնայի։ Հենց որ ուշքի եկա և լրիվ գիտակցեցի վիճակիս լրջությունը, կիթառը խփեցի քարին ու ջարդուփշուր արեցի։ Այդ օրն ամեն ինչ վերջացած էր ինձ համար. Վերայի ինչի՞ն էր պետք հաշմանդամ ամուսինը։ Հետո, ճիշտն ասած ես ինձ նաև դավաճան էի համարում, ոչ իմ, իհարկե, այլ Մարթայի մեղքով, բայց դա միևնույն էր։

— Դու իրավացի չես, Գենադի, դա անխղճություն է, գուցե Վերան բոլորովին այլ կերպ էր մտածում, գուցե նա քեզ կընդուներ որպես իսկական հերոսի՞։

— Հնարավոր է։ Ախր ես նրան լրիվ ճանաչելու հնարավորություն չունեցա։ Բայց այդպես որոշեցի այն ժամանակ։ Ու մինչև հիմա էլ համոզված չեմ, թե ճիշտ եմ վարվել։

Միայն, խոստովանում եմ, որ այնուամենայնիվ խիղճս հանգիստ է, և, իմ կարծիքով, այդ է կարևորը։

— Գերությունից ինչպե՞ս ազատվեցիք։

— Փախանք։ Հինգ հոգով։ Մի մառախլապատ գիշեր։ Երկուսն սպանվեցին հետապնդող գնդակներից։ Մեկն իմ սիրելի Իլյասն էր, մենք նույնիսկ նրան հողին հանձնել չկարողացանք...

Լռեց Գենադին։ Շատ երկար։ Ինձ թվաց, թե պատմությունը վերջացած է համարում։ Մեկ էլ շարունակեց բոլորովին փոխված ձայնով։

— Պատերազմի ավարտից հետո վերադարձա իմ հայրենի քաղաքը, Նովգորոդ, ինձ հետ էր նաև Գևորգը։ Իմացա, որ մերոնք բոլորը, մի ռումբով... Լենինգրադի մասին խոսք լինել չէր կարող։

Վերային հանդիպելը որքան ցանկալի, նույնքան էլ անհնար էր թվում ինձ։ Գևորգի հետ գնացի Հայաստան։

— Եվ դու հիմա ապրում ես մեզ մո՞տ։

— Ինչո՞ւ հիմա, արդեն երեսուն տարի է, ինչ հայաստանցի եմ։

— Եվ այդ մասին ինձ ոչինչ չես ասել։

— Ի՞նչ ասեի, պարզապես ուրախ եմ ու հպարտ, որ Հայաստանը դարձել է իմ երկրորդ հայրենիքը։

— Եվ մենք հնարավոր է, որ իրար երբեք չհանդիպեինք, եթե ծովափ չգայինք։

— Հնարավոր է։

— Ցնայած իմ Հայաստանը մեծ չէ, դժբախտաբար։

— Իմ Հայաստանը փոքր էլ չէ, բարեբախտաբար։ Եվ ես այնտեղ ուսուցչություն եմ անում, ռուսաց լեզու եմ դասավանդում. և, փառք աստծո, իմ ընտանիքն ունեմ, կինս Գևորգի քրոջ աղջիկն է։ Երեխաներս մեծանում են, ապրում ենք մարդավարի։ Միայն ափսոս, որ իմ նոր հարազատների համար ես ոչ մի անգամ կիթառ նվագել չկարողացա։ Եվ ոչ էլ քեզ համար կարող եմ։

Ու Գենադին մի տխուր հայացքով չափեց իր ձախ ձեռ-

քի խեղված մատները։ Ու չգիտեմ ինչու ես ինձ այնքա՜ն մեղավոր զգացի, որ չեմ կարող որևէ բանով օգտակար լինել այդ անօգնական մատներին...

Շուտով ներկայացավ առիթը։

Մի անգամ ճաշից հետո ծանոթի հանդիպեցի և ուշ տուն եկա։ Տեսնեմ Գենադին զբաղված է ինչ-որ գործով։ Անդամալույծ ձեռքով փորձում էր կտրել առողջ մատների եղունգները. չէր ստացվում, մկրատը չէր ենթարկվում։ Քրտինքի կաթիլներ էին բողբոջել Գենադիի ճակատին։ Խղճի խայթի նման մի բան մտրակեց ինձ, ինչպե՞ս չեմ հասկացել ու իմ ծառայությունը չեմ առաջարկել։

Ինձ տեսնելով՝ Գենադին մի կողմ նետեց մկրատը, մի տեսակ շփոթված էր։

— Գենա՜դի, թույլ տուր օգնել քեզ։

— Պետք չէ, բարեկամս։

— Դու ինձ վիրավորում ես, Գենադի։

— Գիտե՞ս, տանը կինս է կտրում, մենակ չի ստացվում, մատներս չեն ենթարկվում, առողջ ձեռքս ծառայում է վիրավորին, իսկ սա անկարող է փոխհատուցել...

Խնամքով կտրեցի Գենադիի եղունգները։ Ու այնպես հպարտ էի զգում ինձ այդ օրը, ասես մի շատ լուրջ վիրահատություն էի կատարել, մա՜րդ էի փրկել մահվան ճիրաններից...

ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՍԽԱԼ

Պետյա Սոկոլովի հետ դասակի համար ճաշ ստանալու գնացինք։ Մառախլապատ գիշեր է. մութ-մութ։ Բարակ անձրև է մաղում։ Առաջավոր էլ գծում ենք, երկու հարյուր քայլի վրա հակառակորդի խրամատներն են։ Խոհանոց հասնելու համար մի քիչ աջ ու ետ պիտի քայլենք։ Գնացինք կուզեկուզ. հատ ու կենտ կրակոցները վտանգավոր են։ Ստացանք մեր բաժին բորշչն ու ձավարը, հարյուրական գրամ օղին և սև-քուսպ հացը։ Ու ետ ենք գալիս՝ թիթեղամանները շալակած։ Հա, չմոռանամ ասել, որ Ուկրաինայում ենք, Մելիտոպոլից հարավ։ Ճանապարհին մի խոր փոս պատահեց, թե՞

ձոր էր, չհասկացանք, դե բան չի երևում, որ ինչն ինչից չոկես։ Նստեցինք հանգստանալու։

— Պետյա,— ասում եմ,— էս ոնց որ մեր գնացած ճամփով չենք ետ գալիս, հո չե՞նք մոլորվել, էս փոսն էլ անծանոթ է։

Սա թե՝

— Ճամփա էստեղ որտեղի՞ց, մոտավոր հաշվով գնում ենք, երևի տեղ կհասնենք։

— Բա որ ընկանք թշնամու ձե՞ռքը,— ասում եմ։

— Հո էդքան անխելք չենք,— ասում է։

— Բա որ ընկա՞նք,— համառում եմ ես։

— Գիտես չէ՞, ես գերմաներենից լավ եմ, որ ընկանք, կբլբլացնեմ դրանց լեզվով, տակից դուրս կգանք... Բեր, ախպերս,— ասում է,— ինձ մի հարյուր գրամ զահրումար տուր, ես քեզ ուղիղ տանեմ մեր դիրքերը։

— Էդ չեղավ, Պետրո, դեռ տեղ չհասած...

— Ոչինչ, տուր տեսնեմ,— ասում է,— համ էլ ես իմ բաժինն եմ ուզում, հո անօրենք բան չե՞մ անում։

Խմեց իր հարյուր գրամը, մի կտոր հաց դրեց բերանը.

— Դե՛ հիմա թե սխալվեմ։ Գնացինք։

Էլի ճանապարհն աչքիս լավ չի երևում. կասկածը մտել է սիրտս ու կրծում է, կրծում է։

— Պետյա, էս ո՞ւր ենք գնում, թե՞ ուզում ենք շան փայ դառնալ։

— Այ տղա, լռիր,— ասում է,— ոնց որ ականջիս ուրիշ ձայն հասավ։

Պառկել ու լարել ենք մեր լսողությունը։ Խոսակցության ձայներ հասան մեզ, բան չի հասկացվում։ Մի քիչ առաջ գնացինք փորսող ու անշարժացանք։ Էլի խոսում են. տե՞ր աստված, գերմանացիներ են։

— Բա որ ասում էի։

— Սո՛ւս, տեսնենք գլուխներս ինչ է գալիս։ Լսիր, ոնց որ երկու հոգի են։ Մեկի ձայնը հեռանում է, գնա՞ց։

— Ետ դառնանք, Պետյա, քանի ուշ չէ։

— Մենա՞կ,— հարցնում է,— արի սրան էլ տանենք, մենակ տխուր կլինի նրա համար...

— Ո՞ւմ,— հարցնում եմ զարմացած։

— Էդ Ֆրիցին։

— Ո՞ւր տանենք։

— Մեր տուն...

— Դե՛, դու էլ...

— Դու կարծում ես սա ճաշից վա՞տ բեռ է, ու մերոնք գոհ չե՞ն մնա,— ու հանկարծ կանչեց բավական բարձր, գերմաներեն, իհարկե։— Ինձ մոտ եկեք, երիտասարդ։

Մարմնովս սարսուռի առվակներ հոսեցին. թամամ գրժվել է էս տղան։

Այնտեղից մի ձայն։

— Իսկ ո՞վ է հարցնում։

Ու խիստ պատասխան՝ մեր կողմից.

— Կգա՛ք, կիմանա՛ք։

Եկավ գերմանացին, թոնթորալով մոտեցավ մեզ։ Ես համարյա շունչ չեմ քաշում։

— Կանգնած վտանգավոր է, նստեցեք։— Կարգադրեց Պետրոն, ու բութ մատը խրեց կողս։ Լավ էր, չգոռացի անսպասելի հարվածից։ Դե, հասկանալի է, եթե գոռայի, կամ Հայերեն պիտի լիներ, կամ ռուսերեն, և կմատնվեինք։ Բայց, զարմանալի բան, միանգամից լուսավորվեց միտքս, ասես հուշեցին, թե ինչ պետք է անել։ Ֆրիցը փլվեց մեր դիմացը, երկու քայլի վրա։ Ու նույն վայրկյանին ես թռա նրա վրա, թաշկինակս խոթեցի բերանը։ Ձայն հանել չհաջողեց։ Պետյան իր գոտիով կապեց սրա ձեռքերը։ Դիմադրում էր, մի լավ հաջողի նրա շլինքին։ Հետո ոտքերը կապեցինք։ Ու Պետրոն շալակն առավ Ֆրիցին, ես էլ ճաշի թիթեղամաններն առա ուսիս ու հայդա։ Հիմա հաստատ գիտենք, թե ինչպես գնանք։

Մի հիսուն քայլ հաղիվ ենք անցել, Պետյան կանգնեց.

— Էս խոզն, ասում է, շատ ծանր է, պիտի օգնես։

Փոխեցինք բեռներս։ Իսկապես որ ծանր էր Ֆրիցը, երևի մի հարյուր կիլոգրամ։ Հետո իմացանք, որ կուշտ կերած սրիկա է, թիկունքից նոր է եկել։ Ինտենդանտական ծառայության սպա է։

Մի արանքում զգացի, որ մեջքս խոնավանում է, մի՞թե այս անիրավը... Տեսնեմ բեռս մի տեսակ թուլացավ. մեռելի նման է։

— Պետյա,— ասացի,— էս շաղլիկը ոնց որ խեղդվում է, գուցե թաշկինակը կհանեիր բերանից։

Ցած դրինք։ Պետյան ատրճանակի սառը փողը դեմ տվեց սրա ճակատին ու կամաց ասում է.

— Հիմա ես թաշկինակը կհանեմ քո բերանից, եթե ծպտուն ես հանել, մահդ պատրաստ է։

Հանեց թաշկինակը, սրա շունչը տեղը եկավ։ Ձայն չհանեց, էդքան խելոք էր։

Տեղ հասանք, զեկուցեցինք հրամանատարին, որ ճաշի հետ նաև «լեզու» ենք բերել, ճիշտ է, ուտելու բան չի, բայց պետք կգա... Իսկապես որ պետք եկավ, շաղ-շաղ տվյալներ ուներ էդ շաղլիկը, ինքն էլ լեղաճաք շատախոս էր, ոչինչ չթաքցրեց։

Հրամանատարության կողմից շնորհակալություն ստացանք։ Պետյան փքվեց ընկերների առաջ ու լուրջ-լուրջ ասում է.

— Ամեն ինչ տեղը-տեղին էր, բրատցը, միայն մի կոպիտ սխալ թույլ տվինք. էս անամոթը շատ ծանր էր, մեջքակոտոր եղանք, իսկ մենք կարող էինք մի ավելի նիհար ֆրիցի բերել, և թեթև կլիներ, և հեշտ։ Չէ, ասում է, տակտիկական սխալ թույլ տվինք...

ԵՍ ՄԻԱՅՆ ԱՅԴՔԱՆ ԿԱՐՈՂԱՅԱ...

Մեր հարձակումն այնքան սրընթաց էր ու անսպասելի, որ հակառակորդն անակնկալի եկավ։ Կես ժամ հետո գյուղը մեր ձեռքին էր։

Դպրոցի բակում ութ ֆաշիստներ ղենքերը նետել ու սարսափահար բարձրացրել էին իրենց արյունոտ ձեռքերը։ Նրանց մեջտեղը, կախաղանի սյան տակ, կանգնած էր դեռատի մի աղջիկ, սառնամանիքից կապտած այտերով ու սառած աչքերով, գզգզված մազերով ու ոտաբոբիկ, նորափթիթ մարմնի մերկությունը համարյա չծածկող շրջազգեստի մեջ ու չորացած արյան առվակներն անհանգիստ ելևէջող կրծքի վրա... Մահվան օղակն արդեն հագցված էր բարակ վիզը։ Կանգնել չէր կարողանում նա, այնքան խոշտանգված էր և

ուժասպառ, օրորվում էր աթոռի վրա, թվում էր, թե հիմա կընկնի, բայց «փրկարար» պարանը պահում էր նրա հավասարակշռությունը։

Երբ մենք մոտ վազեցինք, դատապարտյալը հրճվանք արտահայտող հայացքով նայեց մեզ, ձգվեց ամբողջ մարմնով, մի պահ ամուր կանգնեց ոտքերի վրա ու բղավեց թոքերի ամբողջ ուժով, սակայն հազիվ լսելի ձայնով — «Մե-ռո՞նք են» և ուշագնաց եղավ...

---

* * *

Կլավան նոր էր ընդունվել կոմերիտմիության շարքերը, երբ սկսվեց պատերազմը։ Կոմերիտական տոմս ստանալու ժամանակ, երբ կազմակերպության քարտուղար Պյոտր Անտոնովը նակազ էր տալիս նրան՝ հայրենիքի պաշտպանության և բարգավաճման համար չխնայել ոչինչ, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքը,— Կլավան ժպտում էր ամաչկոտ ու պատասխանում վստահ՝ կաշխատեմ։

Պատերազմը քայլ առ քայլ մոտենում էր և նրանց գյուղին։ Շատերը մեկնում են անտառ՝ Պյոտր Անտոնովի գլխավորությամբ պարտիզանական ջոկատ կազմակերպելու, իսկ Կլավան մնում է գյուղում՝ հիվանդ մորն ու փոքրիկ եղբորը խնամելու համար։

Սրտառուչ հրաժեշտ են տալիս ընկերները ու ցրվում տարբեր ուղղություններով։

Այդ ամբողջ գիշեր չի քնում Կլավան։ Խառը մտքերը նրան հանգիստ չեն տալիս. «Ընկերներս կգնան, պարտիզան կդառնան, կպայքարեն մեր ընդհանուր գործի համար ու կարդարացնեն կոմերիտականի իրենց կոչումը, իսկ ես պիտի նստեմ տանը... ի՞նչ պետք է ասեմ Պյոտր Պետրովիչին, երբ նորից հանդիպենք։ Թեկուզ և նա գիտի, որ ես ստիպված էի այս քայլին դիմելու, բայց և այնպես մի բան անել պետք է, ձեռքերը ծալած նստել չի լինի»... Ամբողջ գիշեր մտածում է Կլավանա։ «Իսկ այդ նոր հանդիպումը տեղի կունենա՞, ի՞նչ հույս ունես դրա համար։ Ահավոր օրեր են. մեր զորքերը նահանջում են ետ, դեպի ետ. քանի գյուղ ու քաղաք է մնացել թշնամու ձեռքին, մինչև ե՞րբ պիտի նահանջենք...»

Հետո... արագ հագնվում է մթության մեջ ու անաղմուկ դուրս գալիս տնից։ Կատվի ճարպկությամբ բարձրանում է իրենց տան դիմացը գտնվող ընթերցարանի տանիքը, գիշերային քամուց փողփողացող դրոշակն ազատում իր փայտից ու կրծքին սեղմած, գաղտագողի վերադառնում տուն։ «Միևնույն է, նրանք կհանեն, իսկ ես կպահեմ մինչև մերոնց վերադարձը»։ Մտածում է Կլավան ու հրճվում իր հնարամտությունից, կարծես թեթևանում է դրանից նրա մատաղ սիրտը, ու քնում է՝ առավոտյան պարտիզաններին նոր տեղեկություններ տանելու մտահոգությամբ։

Գերմանացիները գլխի են ընկնում Կլավայի կապերի մասին՝ պարտիզանների հետ։ Փորձում են ահաբեկել նրան, բանտարկում են մի քանի անգամ, ծեծում անխնա, հույս ունենալով նրանից իմանալ պարտիզանների տեղը, բայց ոչինչ չի ստացվում, միշտ անմեղ է ձևանում նա և խորամանկորեն դուրս պրծնում նրանց ճանկերից։ Մի քանի անգամ խուզարկում են տունը, կասկածելի ոչինչ չեն գտնում։ Զգուշության համար Կլավան որոշում է թաքցրած դրոշակը իր վրա կրել «Այսպես ավելի ապահով է, չեն գտնի» մտածում է նա և դրոշակը փաթաթում հագուստի տակից՝ իր մարմնի վրայով։ Գիշերներն անգամ չի հանում այն։

Այսպես անցնում են ամիսներ, վրա է հասնում ձմեռը։

Հրաման է ստացվում գյուղում մնացած աղջիկներին ու պատանիներին Գերմանիա ուղարկելու։ Երկու էսեսական Կլավային անսպասելի բռնում են փողոցում ու կոպիտ հրամրշտոցով հասցնում դպրոցի շենքը, որտեղ կատարվում էր գրանցումն ու բժշկական քննությունը։ Ուշ էր արդեն. Կլավան հնարավորություն չի ունենում դրոշակն ուրիշ տեղ թաքցնելու։ Մերկացնում են հերթով՝ տաժանակրության համար նրանց «պիտանիությունը» որոշելու նպատակով, ու պարզվում է ամեն ինչ։ Կլավայի հնամաշ ոտնամանի մեջ, ներբանի տակ գտնում են նրա կոմերիտական տոմսը, բարակ թղթեղի մեջ փաթաթված։ Իսկ դրոշակի ծալքերում մի քանի տասնյակ թռուցիկներ են հայտնաբերում։

Ծեծում են Կլավային՝ ռետինե մտրակով ու երկաթե շշերով, խոշտանգում նրա մատաղ մարմինը, բայց կամքը կոտրել չեն կարողանում։ Թքում է դահճապետի մռութին ու

լոում համառորեն։ Նորից են ծեծում ու բզկտում նրան, կրծքին հնգթևյա աստղ փորագրում, դարձյալ լռում է...

Մահամերձ աղջկան որոշում են կախաղան բարձրացնել։

***

Երբ մենք ազատեցինք նրա խոշտանգված, բայց տակավին գեղեցիկ գլուխը մահվան օղակից ու նստեցնելով աթոռի վրա՝ քունքերը շփեցինք ձյունով, նա ուշքի եկավ մի պահ, դանդաղ բացեց ուռուցքապատ աչքերն ու նայելով դիմացը կանգնած Պյոտր Անտոնովին, հազիվ շարժվող շրթունքների միջից դուրս թողեց իր կուտակած օդի վերջին պաշարը.

— Ես միայն այդքանը կարողացա...

Հենց այդտեղ, դպրոցի բակում, քամուց ճոճվող պարանի ներքո, իր փայփայած դրոշակի ու պատվո համազարկերի տակ հողին հանձնեցինք 18-ամյա կոմերիտուհու դին և պարտիզանների համաձայնությամբ որոշեցինք հրապարակն այդ կոչել Կլավայի անունով։

Հազար իննհարյուր քառասուներեքի հունվարին էր, սառնաշունչ մի օր։

Մեր զորամասին միացան պարտիզաններից շատերը։ Իր կոմերիտուհու փայփայած դրոշակն այս անգամ վերցրեց ինքը՝ Պյոտր Անտոնովը։

Առավոտյան մենք նորից հարձակման գնացինք։

ՍԻՐՈ ՈՒԺԸ

Գնացքը սլանում է ծովափով։ Աջից դալկադեմ այգիներն են ձգվել, որոնք ասես մերկացել են անձրևի տակ լողանալու համար, ձախից՝ ծովի անսահմանությունն է, որի հոսղված ջրերի վրա պար է բռնել տեղացող անձրևը։

1945-ի գարնանամուտն է։

Վագոնում ոչ ցուրտ է, ոչ տաք, բայց Աննան նեղվում է տոթից, դժվար է շնչում, կարծես օդը չի բավարարում։ Առանց հարցնելու մյուս ուղևորների համաձայնությունը, արագ բացում է ծովահայաց լուսամուտն ու ագահորեն ներս շնչում խոնավ օդը...

Անձրևը դադարում է նույնքան անսպասելի, ինչպես սկսել էր։ Ծովը հանդարտվելու փորձեր է անում։ Երկփեղկված ամպերի միջից ամոթխած ժպտում է արևը։ Ափից քիչ հեռու, ասես ծովի միջից, ծնվում են մի քանի նավակներ՝ զբոսնող զույգերով։

Աննան չի զգում իր մաղերի թացությունը, ինչպե՞ս լավ է, ահա, այսպես կոթնել լուսամուտին, այրվող ճակատը ծովից փչող քամուն հանդիման, նայել ջրերի անսահմանությանը, նավակներով զբոսնող զույգերին ու երազե՞լ, երազե՞լ...

Տասը տարի առաջ էր, երբ ինքն առաջին անգամ լսեց սիրած տղայի խոստովանությունը։ Սևանի ափին էին, նավակով զբոսանքի գնացին, և հենց այդտեղ, լճի վրա էլ Արամը բացեց իր սիրտը, խնդրեց իր ձեռքը։ Դե, քանի ամիս էր հանդիպում էին, լուռ համաձայնությունն արդեն կար։ Դիվանագիտական խաղերի կարիքը չէր զգացվում...

Այնուհետև ամուսնություն, երջանիկ ընտանիք, սիրասուն զավակներ։ Ամուսինն ինժեներ էր, ինքն ուսուցչուհի, Սուրիկն արդեն մանկապարտեզ էր գնում, իսկ նորածին Նաղելուն խնամում էր սկեսուրը։

Ինչքա՞ն լավ էր, ի՜նչ երջանիկ օրեր էին. և հանկարծ պատերազմ... Արամը՝ ռազմաճակատում, ինքը՝ նորից տանը, երեխաների հետ, դպրոցում՝ իր նախկին պաշտոնին։ Ծանր էր։ Մխիթարվում էր միայն ինքնամոռացության հասնող աշխատանքով ու Արամի նամակներով, իսկ նամակներ հաճախ էր ստանում, երբեմն շաբաթը երկու, երեք հատ։ Այդ, մեծ մասամբ մատիտով գրված ու եռածալ նամակներից հառնում էր հաղթանակի անխախտ հավատը, ջերմ երազանքը գալիք լավ օրերի համար։ Ինքը կարդում էր անհամբեր ու շտապ, մեկ, երկու-երեք՝ անգամ, հուզվում էր, արտասվում գաղտնի, որ երեխաները չտեսնեն, իսկ ուշ երեկոյան, երբ քնում էին տնեցիները, նստում էր Արամի գրասեղանի մոտ և հանգիստ ու անշտապ գրում էր նամակի պատասխանը։ Գրում էր այնպես խնամքով ու այնքան գեղեցիկ, որ ասես նկարում էր յուրաքանչյուր տառը։ Գրում էր ամեն ինչի մասին,— «Նաղելին արդեն խոսում է, «պապա» է կան-

ջում, Սուրիկն անգիր ոտանավորներ է ասում, և այնքան հաջող, որ զարմանալ կարելի է, մայրիկն առաջվա նման առույգ է, կենսասեր, միայն որդու կարոտն է քաշում, դե, ինքն էլ շատ լավ է, արժանացել է վաստակավոր ուսուցչուհու կոչման, և այժմ պարապում է կրկնակի եռանդով, մի խոսքով, բոլորն էլ լավ են, անհամբեր սպասում են Արամի վերադարձին։ Թող բոլորովին հանգիստ լինի մեզնից, միայն իր մասին մտածի»։ Ինչո՞ւ գրել, որ դժվարություններ են քաշում, որ ձմեռը վառելիք քիչ ունեին և Սուրիկը մրսելուց հիվանդացավ ու պառկեց երկու ամիս, որ մայրը նկատելի ծերացել է, վատ է տեսնում ու վատ է լսում։ Ինչո՞ւ թզուր անհանգստացնել նրան։ Իսկ ինքն այդպես չի՞ վարվում. «Լավ եմ, չանհանգստանաք, ջարդում ենք ֆրիցներին, տրամադրությունները բարձր է» և այսպես անընդհատ։ Իսկ դժվարությունների, վտանգի մասին ինչո՞ւ ոչինչ չի գրում։ Այո, մենք խնայում ենք միմյանց, և այդ երևի անհրաժեշտ է...

Բայց ավելի քան չորս ամիս է, ինչ նամակ չի ստանում Արամից։ Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ այդպես միանգամից ընդհատվեց կապը, և այն էլ այն ժամանակ, երբ մեր զորքերը Ռեպի Բեռլին են արշավում, երբ այնքան մոտ է բաղձալի հաղթանակը։ Մութ կասկածը կրծում էր Աննայի սիրտը, բայց ոչինչ չէր ասում տանը, հարկավոր էր սիրտ տալ սկեսրոջը, Սուրիկին, իսկ որքան ծանր է ուրիշներին մխիթարելը, երբ ինքդ մխիթարության կարիք ես զգում...

Եվ հանկարծ՝ հեռագիր Սոչիից... «Շտապ մեկնիր»։ Արամը ինչպե՞ս է հասել Սոչի, երբ նրա վերջին նամակը գրված էր Հունգարիայից։ Մի՞թե վիրավոր է, իսկ որտեղի՞ց, թեթև՞... «Շտապ մեկնիր»,— հեռագիրն ասես այրում է նրա գրպանը, ականջին շշնջում հրամայաբար՝ շտապի՛ր, շտապի՛ր։

Գնացքը ծղրտում է թափով ու սլանում ծովի ավազոտ ափերն ի վեր։ Հանդիպակաց քամին չարաճճի մանկան պես գզգզում է Աննայի մազերը, չորացնում այտերին սառած արցունքները, իսկ անիվների միալար չկչկոցն ասես Աննայի սրտի տրոփյունն է, որ հուզված մրմնջում է՝ գալի՛ս եմ, գալի՛ս եմ...

***

Աննան անհանգիստ սպասում է հերթապահ բժշկի պատասխանին, կարծես այդ պատասխանից է կախված նրա կյանքի հետագա ընթացքը։ Հուզմունքից շնչում է արագ, սառը քրտինքը դուրս է տվել ճակատին, իսկ երիտասարդ բժիշկն ասես դիտմամբ ուշացնում է պատասխանը, աներիզ ակնոցներն է սրբում, ինչ-որ ցուցակներ թերթում, հեռագիրն է կրկին ու կրկին անգամ կարդում, բայց կարդո՞ւմ է որ, կարծես ձևականության համար է նայում հիվանդների ցուցակը, չի՞ գտնում, թե՞ վարանում է պատասխանել...

— Դուք ցանկանում եք իմ համբերությունն ստուգել, բժիշկ,— հազիվ արցունքները զսպելով խոսում է Աննան,— խոստովանում եմ, որ այլևս անկարող եմ դիմանալ, ասացեք վերջապես, ինչպե՞ս է ամուսինս։

— Ասում եք նա մայոր էր, հա՞,— առաջադրված հարցից խուսափելով խոսում է բժիշկը։

— Իսկ ինչո՞ւ էր, և ոչ թե է՛,— սրտի դողով հարցնում է Աննան,— ասացեք, խնդրում եմ, գուցե մի բա՞ն է պատահել։

— Ո՛չ, ո՛չ, մայորը ոչինչ, մի քիչ վատ էր զգում իրեն, այո, ըմմ, գիտե՞ք ինչ, ավելի լավ է գնանք պրոֆեսորի մոտ, նա հենց նոր աշխատանքի եկավ, մի քանի օր հիվանդ էր, այո, գնանք Իվան Անդրեևիչի մոտ, նա ձեզ կպատմի մանրամասն,— ու մի տեսակ թեթևացած շունչ է քաշում երիտասարդ բժիշկը, ախր, անմիջապես դժվար է միանգամից, շա՜տ է դժվար։

Պրոֆեսորն իր ճերմակ մորուքը բռան մեջ հավաքած քայլում է սենյակի երկայնքով։ Աննան բազկաթոռին նստած, հայացքով հետևում է նրա ընթացքին։ Լուսամուտի մոտ կանգնած է հիվանդանոցի պետի քաղաքական գծով տեղակալ կապիտան Երմիլովը։

— Դուք խելացի և հասկացող կին եք, Աննա Միխայլովնա, չեմ կասկածում, որ նաև զուսպ ու համբերող կլինեք,— պրոֆեսորը կանգ առավ Աննայի դիմաց, նայեց ուղիղ նրա աչքերին,— ինչո՞ւ ստել և ինչո՞ւ թաքցնել, միևնույն է, պետք

է իմանաք... Ձեր ամուսինը, ինձ էլ նոր հերթապահ բժիշկը հայտնեց, այո՛, ծանր է ինձ համար, բայց...

— Ի՞նչ,— հանկարծ ամբողջ ձայնով ծղրտաց Աննան, ոտքի թռավ, բայց երերաց, և վայր կընկներ, եթե կապիտանն օգնության չհասներ։

Տիրեց տևական լռություն։

— Այո՛, հարգելիս, կյանքի բան է, հաղթանակը զոհեր է պահանջում,— կարծես ինքն իրեն խոսում է պրոֆեսորը՝ սպիտակաթել մորուքը շփելով։

Իսկ Աննան, գլուխն ափերի մեջ առած, լալիս է, զսպված հեկեկանքից ցնցվում են նրա ուսերը, երբեմն պոռթկում են խեղդված հառաչանքներն ու հեծկլտոցները։

— Մայոր Սուրենյանին հինգ օր առաջ բերեցին մեզ մոտ, ինքնաթիռով՝ Ավստրիայից։ Ասում են հերոսական բազմաթիվ գործեր է կատարել, բայց և խոցվել է կրծքից։ Առաջին վիրահատությունը կատարել են այնտեղ, դաշտային հոսպիտալում, երկրորդը՝ մեզ մոտ։ Ուժեղ մարդ էր, մաքառում էր մահվան դեմ, բարելավման ժամեր էլ եղան, բայց հնարավոր չեղավ փրկել,— պատմում է կապիտանը, իսկ Աննան կարծես չի լսում նրան, միայն ականջներում մուրճի հարվածով արձագանքում է մի ահավոր ձայն,— նա չկա՞, նա՞ չկա՞...

— Այս գիշեր ճգնաժամի վերջն էր, եթե դիմանար մինչև լուսաբաց, փրկված էր,— միջամտում է պրոֆեսորը,— բայց, երևի, վիճակված չէր...

— Մխիթարվեցեք նրանով, որ ձեր ամուսինն ազնիվ ու քաջ հայրենասեր էր և իր կյանքը զոհ է բերել մեր մեծ հայրենիքի ազատության գործին,— ու կապիտանը դարակից հանում է մի քանի շքանշաններ, քառածալ փաստաթղթեր և մեկ առ մեկ դրանք բացելով՝ ցույց է տալիս Աննային, ահավասիկ շնորհավորագրեր Գերագույն Գլխավոր Հրամանատարի անունից — կապիտան Սուրենյանին՝ Ցասնին գրավելու համար, Սոֆիան ազատագրելու համար, մայոր Սուրենյանին՝ Վիեննայի համար, ահա, Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններ, վերջին մարտական գործողությունների համար, ասում են, ներկայացված է Սովետական Միության

հերոսի կոչման։ Փառավոր մարտական ուղի է անցել ձեր ամուսինը։ Հայրենիքը երբեք չի մոռանա նրան։

Գնալով սաստկանում էր Աննայի հեծկլտոցը։

— Դե՛, հանգստացեք, բավական է ինչքան լաց եղաք,— ու ալեհեր պրոֆեսորը շոյում է Աննայի գզգզված մազերը,— ձեր երեխաներին դաստիարակեցեք իրենց հոր ոգով, և այդ կլինի նրա ազնիվ հիշատակի ամենալավ հարգումը։

Աննան հանդարտվել չի կարողանում, թեկուզ և կապիտանի գովեստներն իր ամուսնու հաստատին ու պրոֆեսորի հայրական գուրգուրանքը զովարար ցողի նման իջնում էին նրա վիրավոր սրտին... Այո՛, ծանր է, ինչպե՞ս կարելի է ապրել առանց Արամի։ Բայց պետք է ապրել, հանուն նրա սիրո, հանուն նրա երեխաների։

Ու նա դժվարությամբ ոտքի է կանգնում։ Աչքերը մթնում են մի պահ, բայց թափ է տալիս գլուխը, հավաքում իրեն ու դիմում դեպի դուռը։ Երկու քայլ շարած, կանգ է առնում։

— Պրոֆեսոր, դուք կարծեմ ասացիք, որ այս գիշեր... Գուցե ինձ ցո՞ւյց կտայիք գոնե նրա... նրան։

— Ինչո՞ւ չէ, կարելի է և պետք է, գնանք միասին։

Պրոֆեսորը թևանցում է Աննային, և նրանք շտապ անցնում են երկար միջանցքով, իջնում ներքնահարկ։ Նրանց ուղեկցող քույրը բացում է դիականոցի դուռը ու վառում լույսը։ Սառն ու խոնավ օդը միանգամից խուժում է միջանցք։ Աննան զգաստանում է ասես... մնում է դռների մեջ քարացած։

— Դուք ամուր կին եք երևում, աշխատեցեք իշխել ձեզ,— շշնջում է պրոֆեսորը։

Աննան չի լսում նրան, ավելի ճիշտ՝ չի հասկանում, բայց մեքենայորեն գլխով է անում. և անվստահ ներս մտնում։ Պրոֆեսորը քրոջ հետ մնում են դռան մոտ կանգնած։

Աննան սրտի տրոփյունով առաջ է գնում։ Քիչ հեռու, գետնին, պատգարակի մեջ պառկած է մի մարդ։ Արամը չէ, տեսնես ո՞վ է, սրա կի՞նը որտեղ է... Նայում է շրջ կողմը, ուրիշ մարդ չկա, իսկ ո՞ւր է Արամը։ Նորից է նայում պատգարակին, մոտենում է երկու քայլ ևս. նայում է կկոցված աչքերով, նիհար է, դժգույն, վաղուց չածիլված դեմքով։ Բայց ինչպես ծանոթ են դիմագծերը։ Եվս երկու քայլ, ծուն-

գի է գալիս, ձգվում դեպի պատգարակը,— նա՛ է, նա՛ է, Արա՛մ, սիրելի՛ս,— ու փարվում է դիակին, նրա մազոտ ու պաղ դեմքը ծածկում ջերմ համբույրներով.— թանկագի՛նս, մի՞թե մենք այսպես պիտի հանդիպեինք... ո՞ւր է քո քաղցր լեզուն, քո հարազատ շունչը...

Արցունքները անզուսպ հոսում են նրա աչքերից, ընկնում Արամի դեմքին ու կորչում թավ մազերի մեջ, ինչպես ջուրը կծծվի պապակ հողի մեջ։ Դեմքը հպում է նրա այտերին։ Գոշտ է, սառն է։ Այսպես կրծքիդ սեղմես սիրեցյալիդ գլուխը, գուցե կարողանաս քո սրտի ջերմ բաբախումներով կյանքի կոչել նրան, կամ հնարավոր լիներ ձուլվել նրա հետ, անէանալ ու չզգալ ոչինչ, գոնե մի վայրկյան համոզված լինել, որ նա դեռ կա, ապրում է, մի անգամ ևս լսել նրա քաղցր ձայնը, գոնե մի բառ... Բայց նա լուռ է, անշարժ ու անտարբեր իր Աննայի արցունքներին։ Նորից է հպվում, ավելի ամուր, ավելի ջերմ... Ա՜խ, Արամ, Արամ, ե՞րբ ես դու այսքան մազոտ դեմք ունեցել, ինչո՞ւ այսպես պաղ են այտերդ... Բայց ո՛չ, երևի ինձ թվաց միայն... Արա՛մ... համբուրում է նորից, հպվում նրա դեմքին, տա՛ք է, տա՛ք է, բժի՛շկ, սիրտս զգում է նրա սրտի ձայնը, շնչում է, բժի՛շկ...

Վեր է թռչում խելակորույս, վազում դեպի դուռը, նորից ետ դառնում ու ընկնում ամուսնու վրա, ու գոռում է,— տա՛ք է, շնչո՛ւմ է...

Պրոֆեսորն շտապ ներս է մտնում,— մի բան չպատահի՞ այս կնոջը։ Իսկ Աննան, արցունքախառն ժպիտը դեմքին, բղավում է ամբողջ տենչակով մեկ,— պրոֆեսոր, կենդանի՞ է, Արամս ապրո՞ւմ է...

***

Գնացքը սլանում է Սև ծովի ափերով։ Աջից կանաչահանդերձ ծառերն են ժպտում՝ ծաղկավոր թիկնոցներն ուսերին նետած, ձախից ծովի անսահմանությունն է, որի լաղուր ջրերի մեջ բոցկլտում են արևի ցոլքերը։

Գարուն է, արևով ողողված օր։

Աննան ու Արամը վագոնի լուսամուտից գլուխները հանած նայում են ծովի երերուն ջրերին ու զրուցում քաղցր։

— Հրաշալի մարդ էր պրոֆեսորը,— խոսում է Աննան՝ ձեռքն Արամի ափի մեջ դրած,— իսկական բժիշկ, հոգատար, մարդկային։

— Այո՛, լավն էր,— համաձայնվում է Արամը.— և ոչ միայն պրոֆեսորը, կապիտան Երմիլովն էլ լավ մարդ էր, քույրերն էլ, նրանք մեզ խնամում էին, ինչպես իրենց հարազատներին։ Երախտապարտ եմ նրանց։

— Բայց հետաքրքիր տղա էր Կուզնեցովը, ես կասեի՝ մի քիչ էլ տարօրինակ։

— Դու հո ոխ չունե՞ս նրա դեմ, սիրելիս,— կատակում է Արամը։

— Ես նրան վաղուց եմ ներել։ Եվ վերջապես ինչո՞վ է մեղավոր նա։

— Այո՛, նա մեղավոր չէ, բժշկության մեջ պատահում են այդպիսի դեպքեր, ճիշտ է, հազվագյուտ, բայց պատահում են։ Ամբողջ քսանչորս ժամ ինձ պահել են մեկուսացված սենյակում, կենդանության նշաններ ցույց չեմ տվել, պրոֆեսորն էլ այդ օրերին հիվանդ էր, աշխատանքի չէր գալիս, և ահա նորավարտ ու անփորձ բժիշկն ինձ համարում է մահացած և տեղափոխում ներքնահարկ...

Աննան վերհիշում է իր այցն Արամին, սատնաշունչ դիականոցը, և նրա մարմնով սարսուռ է անցնում։

— Չե՛մ ուզում, մի՛ պատմիր։

Լռում են մի պահ, սակայն Աննայի տեսադաշտում ուրվագծվում է երիտասարդ բժիշկն իր աներիզ ակնոցներով։ Ինչպե՞ս ուրախացել էր նա, երբ համոզվել էր, որ ինքը սխալվել է, արցունքներն իսկ թաքցնել չէր կարողանում։

— Հիմա տանն անհամբեր սպասում են մեզ,— խոսակցության նյութը փոխում է Արամը։

— Այո, և ինչքա՞ն կուրախանան մայրիկը, երեխաները, մեր բոլոր բարեկամներն ու ծանոթները։

Գնացքը ծղրտում է անհամբեր ու իր փնչոցներով ասես մրմնջում է՝ դեպի տո՞ւն, դեպի տո՞ւն։

Գնացքի ընթացքի հետ, ծովի միջով, կարծես վազում է նավ արևի գունդը. ջրերը բեկբեկվում են, օրորվում հան-

գիստ, իրենց հետ օրորելով նաև արևի ոսկեվարս հյուսերը։

Քամին չարաճճի մանկան պես գզգզում է Աննայի մազերը, նետում Արամի երեսին, խտուտում նրա դեմքը, բայց Աննան ասես այդ չի նկատում, Արամն էլ ետ չի քաշվում, ոչ էլ նեղվում է դրանից։ Ընդհակառակը, նրան հաճելի է այդպես մոտ, միասին։ Ինքնաբերաբար ավելի են հպվում իրար, գլուխ գլխի տալիս, ձուլվում են կարծես և նրանց երանավետ ժպիտը, և մազերը, և ջերմ շունչը...

Ծովափից ոչ հեռու, նավակով զբոսնում է երիտասարդ մի զույգ։ Տղան թիավարում է հանգիստ, իսկ աղջիկը իր խոպոպները թափահարելով, երգում է առատաձայն։

На позицию девушка провожала бойца,
Темной ночью простилися на ступеньках крыльца,
И пока за туманами видет мог паренек,
На окошке у девушки все горел огонек.

Հաճելի երաժշտությունը, վերավերող ջրերի հետ ալիք տալով, տարածվում է հեռուներում։

— Հիշո՞ւմ ես Սևանը, մեր առաջին խոստովանությունը,— կամաց հարցնում է Աննան։

Արամը, խոհերով տարված, չի պատասխանում, միայն իր առնական ափերի մեջ, ցավացնելու չափ սեղմում է Աննայի ձեռքը... Հիշո՞ւմ ես, հարցնում է, իսկ երբևէ մոռացե՞լ է նա այդ երջանիկ պահը. ավելի ճիշտ չի՞ լինի ասել, որ այդ հուշը նրան չի լքել մարտի ամենածանր պահերին անգամ և մի՞թե նա չի կռվել այն բանի համար, որ այլևս ոչ-ոք չխանգարի ահա այդ զբոսնող զույգին՝ իրենց սիրո բացատրության մեջ, որպեսզի մայրերը որդեկորույս չլինեն, կանայք չայրիանան, երեխաները չորբանան, որպեսզի հայրենիքի վրա սավառնի ազատ ու երջանիկ կյանքի ամենազոր ոգին։ Հիշո՞ւմ ես, հարցնում է, և նա լուռ շոյում է իր Աննայի, իր սիրասուն զավակների մոր ձեռքը, ու կարծես այդ փայփայանքով ասված է ամեն ինչ...

Աննան երգում է Արամի սիրած երգը, որի բառերը նա ուղարկել էր իր նամակներից մեկում.

Սպասիր ինձ, և ես կգամ,
Բայց սպասիր երկար...

Արամը ձայնակցում է նրան.

Սպասիր ինձ և ես կգամ
Ի ճեճուկս մահի...

Գնացքը շարունակում է առաջ սուրալ Սև ծովի ափով։ Վագոնի լուսամուտից մի երջանիկ զույգ, գլուխ գլխի տված, նայում են վազվզող ջրերի անսահմանությանը ու երգում։ Նրանք մտքով արդեն տանն են, հարազատների շրջապատում։ Անիվների միալար չկչկոցներն ասես նրանց սրտի տրոփյունն է՝ ձայնի վերածված, որ հրճվանքով բացականչում է.

Գալի՜ս ենք, գալի՜ս ենք, գալի՜ս ենք...

Ո՞Վ ԷՐ ՄԵՂԱՎՈՐ...

(Ընկերոջս պատմածը)

Մեր կուրսի, ո՛չ, մեր ինստիտուտի գեղեցկուհին էր Գալյան։ Ի՜նչ նրբակերտ կազմվածք ուներ, ի՜նչ համաչափ դիմագծեր, ի՜նչ անուշ շրթունքներ։ Իսկ խոշոր ու արտահայտիչ աչքերը՝ խիտ հոնքերի կիսաղեղով երիզված. այո՛, այո՛, ո՛չ այսօրվա «ղալամով քաշած», այլ մազառատ, թավ հոնքեր, որոնք մի առանձին հմայք էին տալիս նրա դեմքին։ Իսկ քայլվածքը. շիտ-շիտակ, արժանավայել, բայց առանց ցուցամոլության։ Գուցե և անհիմն չէր ինստիտուտում նկարչի համբավ ունեցող Պետրոյի կատակով ասված մի խոսքը,— եթե Գալյան համաձայնվեր բնորդուհի լինել ինձ մոտ, ես կկարողանայի աստվածային կնոջ մի հանճարեղ կերպար կերտել...

Չեմ հիշում, ինստիտուտում տղաների մեջ կա՞ր մեկը, որ անտարբեր լիներ Գալյայի նկատմամբ, իսկ սիրահարվածների թիվը մի տասնյակից անցնում էր։

Իսկ Գալյան, իր գեղեցկության արժեքն իմացողի հպարտությամբ, անխտիր մերժում էր բոլորին։ Ոչ մի հույս, նրան մոտենալ հնարավոր չէր։ Իզուր չէինք նրա անունը դրել «Անմատչելի Գալյա»։

Բայց, անհարմար չլինի ասել, ինձ միշտ թվում էր, թե Գալյան, գուցե ոչ շատ, բայց և այնպես անտարբեր չէ իմ նկատմամբ։ Մի քիչ ուրիշ տեսակ էր ինձ ժպտում. գուցե սիրահարված խենթիս այդպես թվո՞ւմ էր, գրողը տանի։ Համենայն դեպս մի անգամ չմերժեց իմ առաջարկը կինոնկար դիտելու մասին, նույնիսկ թույլ տվեց իրեն տուն ուղեկցել, ճիշտ է, առանց թևանցուկ անելու։ Ու երբ մտերիմ ընկերներիս մոտ փորձեցի հպարտանալ իմ այդ հաջողությամբ, նրանք ոչ մի կերպ հավատ չընծայեցին իմ խոսքին.— հեքիաթ ես պատմում, ասացին, կամ պարզապես երազ ես տեսել...

Օրեր անցան։ Ես նոր ժամադրության էի ձգտում. ջրերը պարզելու հեռանկարով էի ապրում։ Եվ, հանկարծ, ամեն ինչ խառնվեց իրար, տեղի ունեցավ ջրերի ահավոր պըղտորում։ Պայթեց պատերազմը...

Այլևս ի՞նչ ինստիտուտ, կամ ի՞նչ սեր ու ժամադրություն։ Մեկնեցինք ռազմաճակատ։ Սկսվեց կյանքի և մահու մի ահավոր կռիվ։ Ամեն ժամ աչքիդ առաջ մահ ու արյուն, տառապանք ու մաքառում։

Բայց իմ դասընկերներին մոռանալ չէի կարող, նրանք միշտ ինձ հետ էին, իմ սրտի ամենատաքուկ անկյունում։ Մանավանդ՝ Գալյան։ Օրերի ու ամիսների հետ աղոտանում էր նոր հանդիպման հույսը, բայց և այնպես հավատը մնում էր՝ անթեղված կրակի նման։

Ամիսներ անցան։ Սմոլենսկի մոտ վիրավորվեցի ծանր. ամբողջ երեք ամիս պառկած էի հոսպիտալում։ Ապաքինվելուց հետո նորից մեկնեցի ռազմաճակատ, այս անգամ՝ ուրիշ զորամաս։ Ու նորից ձգվեց արյամբ ու մահերով լի օրերի շղթան։ Շաբաթներ, ամիսներ անցան. վրա հասավ քառասուներեքի ձմեռը։ Ցուրտ էր, ծանր, ավելի շատ պաշտպանվում ու նահանջում էինք, քան՝ հարձակվում։ Ամենափոքրիկ հնարավորությունն աշխատում էինք օգտագործել հարազատներին նամակ գրելու, երգ ու նվագով փոքր-ինչ ուրախանալու, կամ պարզապես գոնե մի ժամով մեր տառապած ու անքուն մարմնին հանգիստ տալու համար։

Մի երեկո իմ նոր ընկերներից մեկը, լեյտենանտ Վիտալի Սուրկովը, որը, մեղմ ասած, անտարբեր չէր խմիչքի ու

կանանց նկատմամբ, ինձ մի անսպասելի առաջարկություն արեց,— գնդի սանմասում, ասում է, նոր աղջիկներ կան, երկուսն առանձնապես լավիկն են ու միասին են ապրում, և, որքան նկատել ու լսել եմ, նաև ժլատ չեն... Գնանք, մի քիչ ժամանակ անցկացնենք։

Ես, իմ սովորության համաձայն, անմիջապես ըմբոստացա, ու փորձեցի հրաժարվել։ Ճիշտն ասած, այդ կարգի արշավանքները երբեք իմ սրտով չեն եղել։ Ի՞նչ գործ ունենք, ասացի, անծանոթ աղջիկների մոտ, նրանք մեզ կարող են պարզապես դուրս վռնդել։ Ես այսօր նրանց հետ ծանոթացել ու պայմանավորվել եմ, ասում է Վիտալին, քո ընկերը չգիտե՞ս, որ թաց տեղ նստող չէ... Վերջապես՝ ասում եմ, դա շատ անպատվաբեր քայլ է. մենք հո անառակներ չենք, ինչ է, ողորմություն խնդրելո՞ւ ենք գնում։ Վիտալին զարմացած ինձ է նայում։ Լսիր, ասում է, դու հո կուսանոցից չե՞ս փախել։ Ի՞նչ անառակության մասին է խոսքը։ Քո կարծիքով, ասում է, նրանք անբարոյական աղջիկնե՞ր են, շատ ես սխալվում։ Էս անխիղճ պատերազմն է մեղավոր, ասում է, հասկացի՛ր, առավոտյան հարձակման ենք գնալու, և ի՞նչ հույս ունես, թե կենդանի ենք մնալու։ Այս խենթ ու խելառ օրերին նաև մի քիչ ապրել է պետք. ախր մենք էլ մարդ ենք, մենք էլ մեղք ենք։ Նրանք էլ, մեզ նման, սիրում են ուրախանալ, ժամանակ անցկացնել։ Մի քիչ էլ սպիրտ եմ ճարել. գնացինք...

Չկարողացա դիմանալ գայթակղությանը։ Մառախլապատ մութը լրիվ մտել էր իր իրավունքների մեջ, երբ անհամարձակ դուռը ծեծեցինք ու ներս մտանք աղջիկների գետնափոր տնակը։ Վիտալին, հին ծանոթի իրավունքով, առաջ նետվեց ու սկսեց շաղակրատել։ Ես մնացել էի դռան ետևում կանգնած. սենյակում լույսը շատ էր աղոտ, դեռ բան չէի ջոկում։ Աստիճանաբար պարզեցին աչքերս, ու ես վերջապես տեսա տանտիրուհիներին։ Ասես էլեկտրական մի խենթ հոսանք անցավ մարմնովս։ Փակեցի աչքերս ու, մի տեսակ վախենալով, նորից բացեցի։ Տե՛ր աստված, մեկը նա՛ էր,- մեր «անմատչելի Գալյան»... Մոտ երկու տարի ես նրան չեմ տեսել։ Փոխվել է նկատելի. զինվորական հագուստ, քամոց ու ցրտից կոշտացած այտեր, բայց կարո՞ղ էի չճանաչել։ Կանգ-

նել ենք դեմ-դիմաց ու սարսափահար նայում ենք իրար։ Երևի իմ հայացքում առատ էր թույնի բաժինը... Գալյան ամոթահար կախեց գլուխը, ու ՀՀնջաց կամաց.

— Վա՜նյա, ների՞ր, եթե կարող ես։

Չեմ հիշում ինչպես դուրս նետվեցի գետնափոր տնակից։ Ինձ երկար ժամանակ հետապնդում էր Գալյայի լացախառն ծղրտոցը։

— Ես մեղավոր չե՞մ...

ԿԱՐԴԱ, ՄԱՏԱՂ ՔԵԶ...

Սոնա տատիկը, իր սովորության համաձայն, նստել է թախտի ծայրին, մի ուսով հենվել պատին ու գուլպա է գործում. անխոս, անշտապ։ Մոմե շապիկ հագած մատներին չի նայում, հայացքը դիմացի դռանն է հառած։

Սամվելը, որ նոր է տուն եկել կոլտնտեսության գրասենյակից, թախտի մյուս ծայրին նստած գիրք է կարդում ու ծխում է անհամբեր։ Նրա աչքն էլ դռանն է՝ կնոջն ու երեխաներին է սպասում, դպրոցից պիտի գան, որ միասին ճաշի նստեն։

— Մի էն նամակները նորից կարդա, մատա՜ղ քեզ։

Տատիկի ձեռքերը չեն դադարեցնում աշխատանքը, հայացքն էլ շարունակում է մնալ դռանը հառած։

— Տատի՜կ, ախր այնքա՜ն եմ կարդացել, որ դու արդեն անգիր գիտես ամեն մի բառն ու տողը։

— Վնաս չունի, մատաղ քեզ. ախր դու որ կարդում ես, ես ինց որ Սմբատիս ձայն եմ լսում։ Կարդա՜։

— Ո՞ր մեկը։

— Բոլորը, առաջինից սկսած։ Է՜հ, ասես շատ լինի, եղածը երեք նամակ չի՞։ Քանդվի Հիտլերի տունը...

Սամվելն սկսեց կարդալ, դեռ խունացած ու կիսամաշ ծրարը չբացած ինքն էլ անգիր գիտեր, ո՞ր երրորդ անգամն էր կարդում, հնարավո՞ր է հաշիվը պահել։

«Մայրի՜կ, Արշալո՜ւյս, սիրելինե՜րս, գտնվում եմ Կուբանում, Կրասնոդարի մոտերքը։ Ոչինչ, ապրում ենք։ Միայն էս ֆրիցը շատ ուժեղ է, նեղում է կարդին։ Մեր էն մութ ան-

տառներում վայրի վարազներ կան է, ժանիքները դուրս ցցած, որ մի քիչ թուլանաս, փորդ կթափեն, սրանք էդ ցեղից են։ Բայց մեկ ա, բան չի ստացվի, չեն կարող, մեկ-մեկ կհանենք էդ ժանիքները։ Միայն, ափսոս, վնաս շատ են տալիս. մեր էս գեղեցիկ երկիրը քանդում են...

Դուք էլ, գիտեմ, դժվար եք ապրում։ Բայց ի՞նչ անենք, ընդհանուր ցավ է, պիտի տանենք։ Վերջը լավ կլինի, դուք ձեզ կարգին պահեցեք։ Մայրի՛կ, էդ հարսին լավ նայիր, թող ժառանգս բարով-խերով լույս աշխարհ գա։ Թե աղջիկ ծընվեց, քո անունն ես դնում, տղան հորս բաժինն է...

Արշալույս, քեզ ի՞նչ ասեմ, մայրս քո մայրն էլ է։ Դե՛, մնացեք խաղաղությամբ։ Իմ լավ բարևները հաղորդեցեք հարևան-բարեկամներին։

Ձեր որդի և ամուսին՝ ՍՄԲԱՏ»։

Ճաղերն անշարժացել են Սոնա տատիկի ձեռքերում, ինքն էլ ամեն անգամվա նման լուռ է երկար ժամանակ։ Իր հետ ու իր մեջ է խոսում, անձայն, միայն ճաք տված շրթունքներն են հազիվ նկատելի շարժվում։ Հետո դժվարությամբ բացվեցին շրթունքները, խոսքը լսելի դարձավ.

— Էն տարին, որ հորդ ամուսնացրինք... էհ, խեղճ եթիմս հարսանիք էլ չտեսավ, պապդ նոր էր գնացել էս աշխարհից, զուռնա չփչեցինք, մորդ տուն բերինք սուս ու փուս։ Լավ իսան էր, ամա...

— Դրա համար էլ թողեց իր երեխային,— պայթեց Սամվելը։

— Էդպես մի՛ խոսա, մատա՛ղ քեզ, ջահել էր, համ էլ տարին էր մեղավոր, այ գյոռբագյոռ լինի կռիվ հնարողը։ Դե՛, Սմբատս էլ...

Պատից կախված է Սմբատի մեծադիր նկարը. զինվորական հագուստով է, առողջ, ջահել։ Մենակ չի, մի շեկ ընկերոջ հետ է, ուս-ուսի տված, իրար ուս գրկած։ Ու մի այնպիսի լուսավոր ժպիտ կա նրանց դեմքին։ Լուսանկարը կախված է Սոնա տատիկի թախտի դիմացի պատից, միշտ աչքի առաջ։

— Որ իմանաս ի՞նչ տղամարդ էր Սմբատս, կոլխոզի աջ

թեն էր, ամբողջ գյուղը նրա անունով էր երդվում։ Ոչ նա քեզ տեսավ, ոչ դու՝ նրան։ Է՜խ, աշխարհ, աշխարհ...

Սոնա տատիկը գոգնոցի ծայրը չի տանում աչքերին, արցունքներ չկան, առվակը վաղուց է ցամաքել, լալիս է սրտի մեջ։

Իսկ Սամվելը ոչ մի կերպ չի կարողանում պատկերացնել իր ծնողների հարսանիքը, չնայած տատը շատ անգամ է պատմել ու նկարագրել, չի պատկերացնում մանավանդ մորը, նրա նկարը չունեն։ Ոչ հորն է տեսել, ոչ մորն է հիշում։ Իսկ ի՞նչ է հիշում, մի մենակ ու տխուր մանկություն՝ լցված Սոնա տատիկով։

Երկրորդ նամակը եռածալ չէ, ամփոփված է կարգին ծրարի մեջ, ծրարի վրա էլ մի դեղին ու սրտաբաց վարդ է բուրում։ Ցուրտ ձմեռ էր, որ էս նամակը եկավ. տեսնես էդ վա՞րդը որտեղից էր,— մտածում է Սոնա տատիկը։ Բայց ինչ տաք նամակ էր, երանի էդ օրվան։

«Սիրելի մայրիկ, Արշալույս, Սամվել, նորից հարստացել է մեր ընտանիքը. Սամվելս եկել է իր պապին փոխարինելու։ Որ իմանաք ինչքան եմ ուրախ. էս ինչ բախտավոր մարդ եմ ես, որ ժառանգի տեր էլ դարձա, էն էլ էս զուլում տարին, էս անխիղճ կրակի մեջ։

Ձեր նամակը, որ կարդացի Սամվելիս. լույս աշխարհ գալու մասին, ուրախությունից սկսեցի պարել խրամատում. տղաները կարծում էին, թե գժվեցի... Քեզնից շա՜տ շնորհակալ եմ, Սոնա մայրիկի հարս Արշալույս, ինձ թևեր տվեցիր, որ ավելի սրտով կռվեմ, որ ավելի պինդ դիմանամ էս մահ ու կրակին։ Շա՜տ եմ շնորհակալ»։

Սամվելը մի պահ լռում է՝ և շունչը տեղը բերելու և Սոնա տատիկի մրմնջոցին ընթացք տալու համար,— մատա՜ղ քեզ, Սմբա՜տ...

Հետո կիսատ ընթերցված նամակը շարունակում է իր ճանապարհը։

«Ասես իմ Սամվելի պատվին սկսել ենք էս անամոթ ֆրիցի ատամները մեկ-մեկ հաշվել։ Ի՜նչ ատամ, ժանիք, ու հերթով հանում ենք, չէ՜, ջարդում ենք։ Լավ ենք ջարդում։ Որ իմանաք ինչ աննամուսություններ են արել, մարդ էլ էսքան անխիղճ կլինի՞. կամ էլ ի՜նչ մարդ, վայրի գազանն

էս բանը չէր անի։ Լսել եք, կիմանաք սրանց դաժանության մասին, բայց աչքով տեսածն ուրիշ է։ Չէ՛, սրանց քոքը կտրվի, շան փայ դառնալու բան են։ Եվ կդառնան, աստված վկա։ Չէ՛, շա՜տ էն նամարդ... Ու էսքանից հետո տեսեք թե ինչ եղավ. երեկ գիշեր, նոր դրված դյուղի տան նկուղում, գերմանացի մի կնոջ հանդիպեցինք՝ իր երեք տարեկան տղայի հետ։ Ասացին էսեսական մի սպայի կին է, հյուր է եկել ամուսնուն։ Ու կռվի էն թեժ ժամանակ սպա ու հայր կոչված այդ անամոթը հասցրել, իր մաշկն է փրկել։

Մայրը, երեխային գրկած դողում էր ամբողջ մարմնով, ու հա երեսին խաչ էր հանում։ Տղաներից մեկը բռնեց սրա մազերից ու գոռում էր կատաղած.— տո՛, շան քած, ասում էր, որ մարդդ ծիծաղելով կրակում էր մեր կանանց ու երեխաների վրա, էն ժամանակ ինչո՞ւ երեսիդ խաչ չէիր հանում... Ուզում էր շանսատակ անի, չթողեցինք։ Բա մենք սրանց թա՞յն ենք»։

Սոնա տատիկը նորից մրմնջում է քթի տակ, Սամվելը հազիվ է լսում նրա ձայնը.— էդ քո փրկած մերն ու տղան երևի դեռ ապրում են, քեզ ինչո՞ւ չփրկեցին, մատա՜ղ քեզ...

«Գիտեմ, ձեր հոգսն ավելի է շատացել, շարչարվում եք, նեղվում եք, տանջվում եք, համ ձեզ համար, համ ինձ համար։ Մի կերպ դիմացեք, վերջը լավ կլինի»...

Ես էլ էդ հույսով էի մնում, թե վերջը լավ կլինի, մրտմրտում է ինքն իրեն Սոնա տատիկը, ամա էդ անտեր վերջը... Ու երաշտից ճաք տված այտերն է տրորում, իսկ սիրտն ինչպե՜ս է տրորվում։ Էդ ձմեռ ապրուստից շատ խեղճ էին, Արշալույսի հոր օգնությամբ յոլա գնացին։ Ավելի շատ հույսով էին ապրում։

Երրորդ նամակը գրվել էր մի տարի ուշացումով, քառասունչորսի կեսերին, երբ Սամվելն արդեն երկու տարեկան գնդլիկ էր ու տատի թելադրանքով բլբլում էր «զինվոլ հայլիկի» մասին։

«Բան չմնաց, հա՜, գաղանին էսա խեղդամահ ենք անելու իր որջում։ Մի քիչ էլ համբերություն հավաքեցեք, տուն գալու ժամանակս մոտենում է...

Հա՜, էս անգամ նամակս մի քիչ ուշացրել եմ. հնար չունեի գրելու։ Մի քանի լավ տղաների հետ «գործով» թշնամու

թիկունքն էինք գնացել, թեժ օրեր էին, ուշացանք։ Հետո մի խելառ գնդակ որտեղից-որտեղ եկավ կպավ ոտքիս։ Թեթև էր, չանհանգստանաք։ Լավացել եմ արդեն, վերադարձել իմ զորամասը։ Մի շատ լավ ընկեր ունեմ էստեղ, ուկրաինացի է, Պետրո անունով։ Կուսակցության մեջ ընդունվողներիս համար մի լուսանկարիչ էր եկել մեր գունդը, ինձ ու Պետրոյին միասին էլ նկարեց, մի հատ ուղարկում եմ ձեզ, տեսեք ձեր Սմբատը ի՞նչ զինվոր է դառել ու ինչ լավ ախպեր է ճարել կյանքում»։

Դիմացի պատին բաղմած լուսանկարից անուշ ժպտում են Սմբատն ու Պետրոն։ Սոնա տատիկի աչքերը շաղվել են նկարին երկար նայելուց։

— Կա՛րդա, մատաղ քեզ։

«Պատրաստվեցեք, սիրելիներս, էսա, որ եկա, մի լավ քեֆ ենք անում, Սամվելիս ծնունդը նշելու ենք կարգին։ Հիմա երևի իսկական տղա է դառել, ես նրա ցավը տանեմ»...

Ամեն անգամ այս տողերը կարդալիս Սամվելի կոկորդն ասես սեղմում են ինչ-որ անտես ձեռքեր, սեղմում են ցավեցնելու չափ, այնքան, մինչև աչքերում արցունքներ են լճանում։

Սոնա տատիկը սպասում է երկար, ինքն էլ կարիք ունի իրեն հավաքելու։ Հետո հաղիվ լսելի շշնջում է.

— Վե՛րջը կարդա, մատա՛ղ քեզ։

«Ախր ես հա իմ մասին եմ խոսում, սկի ձեզնից չեմ հարցնում, բա դո՞ւք ինչպես եք, սպասելու ձեր համբերությունը հո չի՞ հատել։ Զնեղանաս, Արշալույս, խոսքս քո մասին է։ Դե՛, մոր համբերությանը վերջ չկա, նրան ի՞նչ ասեմ։ Սամվելիս պահեցեք, մեծացրեք, արդեն քիչ մնաց, կգամ, միասին հեշտ կլինի»։

Անտես ձեռքերը նորից երկարեցին դեպի Սամվելի կոկորդը։ «Էսա կգամ, միասին հեշտ կլինի»,— բա ինչո՞ւ չեկար, անխի՞ղճ, ինչո՞ւ ինձ զրկեցիր կյանքում գոնե մեկ անգամ հորը տեսնելու հաճույքից։ Ոչ միայն չեկար, այլ նաև քո չգալով ստիպեցիր, որ մայրս գնա տնից։ Ինչո՞ւ ինձ լրիվ որբացրիր, ախր բոլորի պատմելով դու բարի մարդ ես եղել։ Գոնե մորդ խղճայիր, չորացել է ոտքի վրա, բայց էլի սպասում է, էլի հավատում է, որ կգաս. այդ ի՞նչ հավատ է...

— Կա՛րդա, մատա՞ղ քեզ։

— Էլ բան չմնաց տատի, էն մի ծրարն է։

— Կարդա տեսնեմ Պետրո՞ն ինչ է ասում։

Մի լուսավոր ծրարում երկու անլույս նամակ։ Պետրոյի երկտողն է,— «Սոնա մայրիկ, Սմբատի հետ պայման էինք կապել իրար թև ու թիկունք լինել ու տուն դառնալ հաղթանակով։ Ես չկարողացա իմ խոսքի տերը լինել, նույն կովում ինձ ծանր վիրավորեցին, Սմբատս... Ներիր ինձ, մայր։ Համբուրում եմ քո սգավոր ձեռքը»։

Սոնա տատիկի մատների մեջ խճճվել, անշարժացել են գուլպայի ճաղերը։ Մտքերն ինչպես են խճճվել մոր գլխում, իրար հրմշտելով ելք են փնտրում, իսկ ելքը կա՞, հնարավո՞ր է գտնել։

Մյուսը պաշտոնական գրություն է՝ զորամասի հրամանատարի ստորագրությամբ։

«Ձեր որդին, հանուն հայրենիքի, հերոսի մահով...»

Սոնա տատիկը ձեռքը թափ է տալիս թափով.

— Ձե՛մ հավատում։

— Հորս գրածներին հավատո՞ւմ ես։

— Բա ինչպե՞ս, իմ Սմբատը սուտ բան կգրե՞ր։ Պետրոն ծանր վիրավոր է եղել, կարող էր սխալվել։ Էդ թուղթն էլ... էնքա՞ն սխալ է դուրս եկել։

— Երեսուն տարի է անցել։

— Միևնույն է, չեմ հավատում։ Իմ Սմբատը տուն կգա, նա իր մորը չի թողնի աչքը ճամփին, էդպիսի տղա չէր նա։

— Իսկ մա՞յրս, ինչո՞ւ չպատեց, մի քիչ էլ նրան տայիր քո հավատից, քո համբերությունից։

Սամվելի ձայնի մեջ շորություն կա։

— Նա ջահել է, չէր կարող, դու նրան մի մեղադրիր, ե՛ս եմ թույլ տվել։

— Հորս տարեկան երեխային թողնել սկեսուրի հույսին ու գնալ մի ուրիշ Սմբատի մոտ...

— Հա՛, գնաց, հույսը շուտ ցամաքեց։ Ջահել էր։ Էդ Սմբատը կաղալով եկավ մի օր, դու տես, որ նրա անունն էլ Սմբատ էր։ Ձեռքս համբուրեց ու իրավունք խնդրեց։ Հաշվիր, ասում է, թե ես էլ քո տղան եմ... Ի՞նչ անեի, երկուսն էլ մեղք էին, նա էլ պատերազմում կնոջն էր կորցրել, ոտքն էին

վիրավորել, ասում էին կտրելու վտանգ է եղել։ Ճար չունեի։ Մենակ մի պայման դրեցի, որ գնան մեր կողմերից, էլ իմ ու քո աչքին չերևան։ Էն գնալն էր։ Ես էլ անխիղճ էի...

Ութսունամյա պառավն ասես ավելի փոքրացավ, ցամաքեց՝ հյութը քամված սերկևիլի նման։ Սամվելը նոր նկատեց, թե ինչքան ծերացել է տատիկը, ու զարմացավ նաև, ինչպե՞ս է դիմանում։ Եվ ինչո՞վ ես դու վարձահատույց եղել նրան, մտածում էր, ինչո՞վ ես քաղցրացրել նրա սպասումից հոգնած կյանքի տարիները։

Սամվելի լռության իմաստը լավ է հասկանում Սոնա տատիկը։ Ու թոռանը մխիթարելու համար չէ, որ խոսում է, ոչ, այլ ճշմարտությունը հաստատելու համար։

— Սամվել ջան, ես աշխարհից էլ, քեզնից էլ շատ գոհ եմ, ինձ տվել ես, ինչ պետք էր, լավ հարս, երկու թոռնիկ, ես նրանց ցավը տանեմ։ Էլի բախտավոր մայր եմ ես, բա ուրիշները...

Քո ամենամեծ բախտավորությունը, մտածում էր Սամվելը, հույսով սպասելդ է։ Տարիներ են անցել, քո քսանհինգամյա տղայի տղան շուտով երեսունհինգ տարեկան կդառնա. մաշվել են ռազմաճակատից եկած նամակները, իսկ քո հավատը չի մաշվում, մինուճար զավակիդ վերադարձած տեսնելու հույսը չի մարում։ Եվ դրան օգնում են հոգնած ու մաստակ դարձած այդ նամակները, որոնց միջից ամեն անգամ դու լսում ես քո Սմբատի ձայնը։

— Կա՛ր դա, մատա՛ղ քեզ...

ԱՅՆ ՕՐԵՐԻՆ...

Գիշերային համառ մարտն ավարտվեց հակառակորդի պարտությամբ։ Լուսաբացին էսէսական զորամասի նահանջը վերածվեց գլխապատառ փախուստի։ Մեր զորքերի հարձակումը շարունակվում էր։

Ես քայլում էի երկրորդ մարտակարգում։ Մեր խնդիրն էր ամրանալ գրաված դիրքերում։ Ճանապարհը գյուղական էր, արկերի ու ռումբերի պայթյուններից կարկտահար։ Աջ ու ձախ ձգվում էին եգիպտացորենի նոր կանաչած արտերը։

Ճանապարհը խեղդված էր մարդկային հոսանքի մեջ։ Հատ ու կենտ մեքենաները դժվարությամբ էին առաջ շարժվում։

Գնդի հրամանատար գնդապետ Ալեքսեևը մեզ հետ էր քայլում, զինվորավարի։ Այդպիսի սովորություն ուներ նա՝ դժվարին մարտերից հետո մտնել շարքերի մեջ և խոսք ու կատակով փարատել տղաների հոգնությունը։

Դադար տվեցին, կես ժամ՝ ծխելու և հանգիստ առնելու համար։ Խումբ-խումբ նստել, ծխում ենք։ Ճանապարհն ասես թեթևացավ։ Ու հանկարծ մեր կողքին կանգնեց գերմանական մի «Մերսեդես»։ Զարմանալու ոչինչ չկար, հակառակորդից վերցրած մեքենաներ շատ կային մեր տրամադրության տակ։ Բայց այ, զարմանք պատճառեց ղեկին նստած զինվորականը։ Գերմանացի մայոր էր, հավանաբար երեսունհերեսունհինգ տարեկան, բարձրահասակ, ընդգծված դիմագծերով։ Միայն դեմքին թառել էր մի զարմանալի գունատություն։ Մայորն անշտապ իջավ մեքենայից, մոտեցավ գնդապետ Ալեքսեևին, պատվի առավ ու տանելի ռուսերենով ասաց.

— Պարոն գնդապետ, ես որոշել եմ հանձնվել ձեր տրամադրությանը։

Գնդապետի դեմքին մի ժպիտ ճառագեց։

— Ուշացումով եք խելքի գալիս, մայոր։

— Միայն առանց վիրավորելու, խնդրում եմ։

— Տեսնո՞ւմ եք, թե ինչ համարձակն ու ինքնասերն է,— խոսակցությանը միջամտեց մի տաքարյուն կապիտան,— թույլ տվեք դրան կարգի հրավիրել, ընկեր գնդապետ։

— Հանգի՞ստ, կապիտան, թող տեսնենք ինչ է ուզում այս պարոնը։

— Ոչինչ չեմ ուզում... ես խնդրում եմ ինձ գերի վերցնել։

— Դե՛, եթե խնդրում եք... Իսկ ո՞վ կա ձեր մեքենայում, մայոր, դուք մենա՞կ եք,— ու գնդապետը քայլ արեց դեպի «Մերսեդեսը»։

Մայորի գունատությունն ավելի թանձրացավ։

— Մեքենայում իմ... կինն է։

Գնդապետը կանգ առավ։

— Հետաքրքի՞ր է։ Իսկ երեխաներ չունե՞ք, նրանց էլ բերեիք։ Թե՞ սպասում եք ֆյուրերի վերջնական հաղթանակին։

— Հեգնում եք, գնդապետ... Ես ֆյուրերի հաղթանակին երբեք չեմ հավատացել, և այն ժամանակ, երբ ուսուցիչ էի, և զինվորական դառնալուց հետո։ Իսկ կինս ձերոնցից է։— Ու ձայն տվեց,— Լաո՛ւրա, մոտեցի՛ր, խնդրում եմ։

Մեքենայի ետին մասից իջավ մի ռուս կին, հազիվ քսանհինգ տարեկան։ Բարեկազմ էր, հաճելի, բայց ոչ առանձնապես գեղեցիկ։ Ու համարձակ մոտեցավ մայորին։

Գնդապետը դարձավ կնոջը.

— Տիկին Լաուրա, դուք այդ ե՞րբ հասցրիք ամուսնանալ այս պարոնի հետ։

— Մի քանի ամիս առաջ։

— Եվ որտե՞ղ։

— Մոսթ անտառի փեշերին։

Գնալով ստվարանում էր հետաքրքրասերների շղթան։

Ետին շարքերից թավաքեղ ու տարեց մի սերժանտ համառորեն առաջ էր մղվում. խոսակիցներին մոտենալ էր ուզում։ Հասավ գնդապետի մոտ ու հարցրեց, ինքն էլ չգիտեր, թե ում։

— Ի՞նչ ասաց այդ աղջիկը, մոսթ անտա՞ռ։

Գնդապետը սաստեց նրան.

— Սպասի՛ր, սերժանտ, տեսնում ես հազիվ աղջկա բախտը բերել է, որ պատերազմ չլիներ և այս պարոնին չպատահեր, ինչպե՞ս պիտի ամուսին ճարեր։

— Ծիծաղում եք, ընկեր գնդապետ, գուցե ես արժանի՞ չեմ դրան։

— Ձե՛նդ, անպատկա՞ռ,— հանկարծ պայթեց գնդապետը,— ես գիտեմ, թե դու ինչի՞ ես արժանի, քեզ նմանները պատրաստ են շնանալ ամենահետին թշնամու հետ անդամ,— ու դարձավ բեղավոր սերժանտին.

— Սրան հեռացրու ճանապարհից և վե՛ր...

Տիրեց մի ճնշող լռություն։

— Ընկեր գնդապետ, Վալտերը կարգին մարդ է, և ես նրան սիրում եմ։ Մի՞թե դուք ընդունակ եք սերն սպանելու։

— Սիրո մասին չխոսես, անամո՞թ։

Գերմանացի մայորը մի քայլ առաջ եկավ.

— Գնդապետ, եթե դուք Լաուրային գնդակահարեք ու ինձ խնայեք, դա ահավոր անարդարություն կլինի, դուք այդ չեք անի։

— Ես գնահատում եմ ձեր ջենտլմենությունը, մայոր, բայց մի մոռացեք, որ դուք գերի եք, իսկ նա՝ դավաճան, ես ուրիշ կերպ վարվել չեմ կարող։

— Մտքովս անգամ չի անցել, որ ես երբևէ կարող եմ դավաճանի անուն վաստակել,— այնպես հանգիստ էր խոսում աղջիկը, և դա չէր կարող չզարմացնել գնդապետ Ալեքսևեին, բայց նա նահանջելու միտք չուներ։

— Փորձված աֆերիստն ես երևում, տիկին Լաուրա, ոչինչ չես ասի։

— Դուք իրավացի եք, գնդապետ, ես, իսկապես, բավական փորձ ունեմ, միայն ոչ ձեր կարծած գծով... Ախտո՞ս, որ ես իմ ով լինելը ձեզ ապացուցել չեմ կարող։ Տարե՛ք ինձ, ուր ուզում եք, գնդակահարեցեք Մոսթ անտառի Հավքին, հետո կփոշմանեք, բայց ուշ կլինի... Գնա՛նք, սերժանտ, ես պատրաստ եմ։— Ու Լաուրան համարձակ քայլեց դեպի եգիպտացորենի արտը։

Բեղավոր սերժանտը հանկարծ ծղրտաց, ասես ոչ իր ձայնով,— ինչ ասա՞ց, եղբայրներ, այդ ի՞նչ ասաց, Մոսթ անտառի Հա՞վք,— ու շարքից դուրս գալով՝ մոտեցավ աղջկան.— ներեցեք, ընկեր գնդապետ, թույլ տվեք պարզել, այդ ի՞նչ մոսթ անտառ է, տիկին, և որտե՞ղ է, կարո՞ղ եք ասել։

— Այնտեղ, որտեղ մենք ջարդում էինք ֆաշիստներին. Բելոռուսիայում է, մի ծառաշատ ու խճճված անտառ, որին Մոսթ անունն էին տվել գերմանացիները։

— Իսկ այդ ի՞նչ Հավք է։

— Իմ պարտիզանական անունն էր։

— Տե՛ր իմ աստված... իսկ ո՞ւմ աղջիկն ես դու։

— Անտառապահ Պրոխորի։

— Քրոջդ անունն ի՞նչ էր։

— Նա, որին կախեցին ֆաշիստները, ուսուցչուհի Լարի՞սան։

— Իսկ այդ անտառի Հավքն ինչպե՞ս էր կանչում։

Աղջիկը երեք անգամ կռնչաց գիշերային բուի նման, և այնքա՞ն հաջող։

— Նա՛ է, եղբայրնե՛ր, ընկեր գնդապետ, նա՛ է, մեր անվանի պարտիզանուհին։

Մոտեցավ, գրկեց Լաուրայի գլուխը, ու շշնջում էր ինքնամոռաց.

— Աղջի՛կս, հարազա՛տս, հազիվ ինձ բախտ վիճակվեց քեզ տեսնել, և ես քո արյան մեղքի տակ պիտի ընկնեի... Սա հերոսուհի՛ է, ընկեր գնդապետ, իսկական մարդ։

Գնդապետ Ալեքսեևն ասես փշերի վրա էր կանգնած, մի՞թե ինքն այդքան սխալվել կարող էր։ Բայց ի՞նչ իմանար, գրողը տանի...

Ու դարձավ աղջկան.

— Իսկ այս մայորն ո՞վ է, դուք հիմա նրան էլ կհերոսացնեք։

— Նա պարզապես ազնիվ մարդ է։

— Գուցե կոմունի՞ստ,— չէր նահանջում գնդապետը։

— Ո՛չ կոմունիստ եմ, ոչ էլ ֆաշիստ,— խոսակցությանը միջամտեց մայորը,— ես այս դաժան ու անիմաստ պատերազմում էլ աշխատում էի մարդ մնալ։

— Աղջի՛կս, մի՞թե սա մայոր «խենթն» է։

— Նա ինքն է. և այդ անունը պարտիզաններն են նրան տվել։

— Գիտեմ, իր կյանքը վտանգի ենթարկելով՝ օգնում էր մեզ... Եղբայրնե՛ր, ընկեր գնդապետ, ախր սա իսկապես քաջ մարդ է։ Այնքան կարևոր տեղեկություններ ենք իմացել նրա միջոցով, այնպիսի համարձակ գործողություններ են կատարել մեր ջոկատի պարտիզանները։ Այդ տվյալները մեզ բերում էր «Մութ անտառի Հավքը», «խենթ մայորի» օգնությամբ։ Եվ որպեսզի յուրայինները չկասկածեն նրա վրա, ամեն անգամ մեկ- երկու դավաճանի, պարտիզանի անվան տակ, պատժում էր խստագույնս։ Բայց լսեցինք մի անգամ, որ մայորի ծառայությունից դժգոհ են նրա շեֆերը և տեղափոխել, թե պատժել են ուզում նրան։ Իսկ, որ «Անտառի Հավքը» սիրում էր «խենթ մայորին» ու միասին էլ հեռացել են այդ վայրերից, ես չգիտեի, այդ ժամանակ ես վիրավորվել ու դուրս էի եկել շարքից։ Գուցե, իսկապես, այս ամբողջ պատմության մեջ սերը վճռական դե՞ր ունի, չգիտեմ։

Գնդապետ Ալեքսեևը մոտեցավ գերմանացուն ու սեղմեց ձեռքը.

— Այնուամենայնիվ, մայոր, հետաքրքիր է իմանալ, այդ ինչպե՞ս է, որ ձեզ չեն պատժել ձերոնք։

— Չհասցրին. այս անգամ էլ ինձ օգնեց ձերոնց սրընթաց հարձակումը։ Իսկ իմ Լաուրային փրկեց ահա այս լավ ու քարի սերժանտը։

— Կուզնեցով, ընկեր մայոր։

— Շնորհակալություն, Սերժանտ Կուզնեցով։

— Այդ ե՞ս եմ շնորհակալ, ատված վկա...

Ազդարարվեց դադարի ավարտը։

Գնդապետը մոտեցավ «Մերսեդեսին»։

— Տիկին Լաուրա, բարձրացեք մեքենա, խնդրում եմ։ Մայոր, նստեցեք, ղեկին, գնում ենք դիվիզիայի շտաբ։ Իսկ դուք, տղաներ, շարունակեցեք ձեր ճանապարհը, դեպի արևմո՞ւտք...

Քառասունչորսի գարնանն էր։

ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ

Հինգ ընկերներ էինք։ Հանրակացարանի նույն սենյակում ապրող, չորս տարվա համատեղ կյանքով շաղախված մի անխախտ մտերմություն։

Ուսանողական անհոգ ու հոգսաշատ կյանք, հանրակացարան ու կինո-թատրոն, գիրք ու գրադարան, հաջող քննություն ու ամոթխած ժամադրություն...

Եվ, հանկարծ, պատերազմ։ Ուսանողից՝ հետևակային ուսումնարանի կուրսանտ, հանրակացարանից՝ զորանոց, լսարանից՝ հրաձգարան։ Ինչպե՞ս փոխվեց կյանքը. անհոգ ծիծաղի տեղ՝ վաղահաս լրջություն, հաճելի ժամադրության փոխարեն՝ գիշերային հերթապահություն։ Ռազմերթ, մարտական տագնապ, զինավարժություն։ Քննություն՝ գիտելիքների, հավատի, հավատարմության։

Հետո, նորաթուխ լեյտենանտի կոչումով, Կերչ՝ կրակի առաջավոր գիծ, կյանքի ու մահվան գոտեմարտի։

Ու ձգվեց օր-շաբաթների, ամիս-տարիների շղթան։ Զրգ-

վեց-երկարեց՝ զրկանք-տառապանքներով ու արյուն-մահերով լի, մինչև հասանք մայիսյան այն երանելի առավոտին, մինչև բախտ ունեցանք համբուրելու հաղթանակի լուսե ճակատը։

Բայց քանիսի՞ն ժպտաց բախտը, ովքե՞ր հասան հաղթության բաղձալի ափը, քանի՞սը մնացին կես ճանապարհին։

Ու ռազմի դրվագները, կատարված կինոժապավենի նման, թպրտում են մտքիս լուսապատատի վրա։

...Քառասուներկուսի մարտի կեսերն են։ Թելավիի հետևակային ուսումնարանից ուղիղ գծով եկել-հասել ենք Նովորոսիյսկ։ Եվ հենց ծովափին հանդիպեցինք թշնամու ինքնաթիռներին, ճաշակեցինք դաժան ռմբակոծության առաջին «պտուղները»։ Զորս հարկանի մի շենքի մոտ էինք, կարծեմ դպրոց էր, երբ լսեցինք ինքնաթիռների առաջին ոռնոցը։ Խուճապահար պառկեցինք պատերի տակ, իսկ ռումբերի ահագնացող սուլոցը մոտենում է։ Սեղմվել ենք գետնին։ Մոտիկ ռումբեր պայթեցին։ Ասես հարևան շենքի հարկերը հերթով բարձրացան վեր ու շուռ եկան գլխներիս։ Ինչպե՞ս դիմացան մեր գլուխները։

Իսկ Հայկինը չդիմացավ. մնաց փլատակների տակ...

Առաջին մարտական մկրտություն։ Ու մինչև հիմա ականջներիս մեջ ցած սլացող ռումբերի այդ ահեղ ոռնոցն է, գլխիս փլվող շենքի ահավոր դղրդոցն ու Հայկի հրաշքով փրկված գլխարկը... Փորձի՞ր մոռանալ։

...Գիշերվա կեսին հասանք մարդաբոյ խրամատները։ Ղրիմում ենք, Վլադիսլավովկա կայարանի մոտ։ Հենց այդտեղ, խրամատներում էլ մեզ ընդունեց դիվիզիայի հրամանատար գնդապետ Զաքիյանը։ Հիշողությանս մեջ մնացել են նրա մռայլ, բայց և լավատես հայացքն ու ծանր խոսքերի հնչը. «Դե՛, տղաներ, քիթներդ չկախեք, բայց և չմոռանաք, որ հարսանիք չեք եկել։ Վերջին մարտում մեզ լավ ջարդ տվեց թշնամին, մենք էլ պարտքի տակ չմնացինք։ Առավոտյան հարձակման գնալիս կտեսնեք այդ դաժան մարտի հետքերը։ Ու ձեզ համար պետք կճարեք մարտի դաշտում... Տեսեք մեր ավերված գյուղերն ու սպանված մարդկանց, և, վրեժի ցասումով լցված, խփեցեք թշնամուն։ Հաջողություն

ձեզ...— Հետո լռեց մի պահ և ավելացրեց ուրախ.— Ջահել տղաներ եք, աչքներդ հազար մուրազի։ Ինչպե՞ս կուզենայի թամադա լինել ձեր հարսանիքներին։ Ես համոզված եմ, մենք այդ բախտին դեռ կարժանանանք...»։

Ի՞նչ իմանայինք մենք, և ինչ իմանար ինքը, գնդապետ Զաքիյանը, որ ընդամենը մի քանի օր հետո հենց այդտեղ, Ղրիմում, ընդհատվելու է երազանքներով լի նրա կյանքի շղթան։

Ինչպե՞ս մոռանաս։

... Հազար իննհարյուր քառասուներկուսի մայիս։ Ահավոր մայիս։ Թողել ենք Կերչը, պահել չկարողացանք, թշնամին ծովը նետեց մեզ... լողում ենք Թամանի մի ափից մյուսը, դեպի փրկություն։ Լողում ենք, ով ինչպես կարող է, նավ ու նավակներով, տակառ-տաշտակների մեջ, ու, պարզապես, լողալով։ Իսկ ջուրը շատ է սառը, և շատերը ծովն են նետվել հագուստով։ Գիշերվա կեսին, երբ փոքր-ինչ խլացել էին ռմբակոծության ձայները, հարևան ափերի արանքից մըղկտում էր մի կանացի ձայն.

— Օգնեցե՞ք...

Փորձեիր օգնել։ Կամ փորձեիր մոռանա՞լ այդ ձայնը...

Հետո հրաշքով փրկվածներս, քաղցած ու ջարդված, քայլում էինք Թամանի թերակղզում, Կուբանի ափերն ի վար։ Ամբողջ չորս օր։ Պահեստները մնացել էին Կերչում, ուտելիք չկար։ Ահավոր բան է քաղցը։ Ու մենք ուտելիք էինք խնդրում ձկնորսներից, վշտահար տատիկներից։ Ոմանք տալիս էին, ինչ կարող էին, դե, ո՞ր մեկին բավարարեին։ Իսկ մի ցամաքած պառավ պոռթկաց վշտով լի։

— Գրողը տանի ձեզ, մեզ ո՞ւմն եք թողնում, ո՞ւր եք փախչում գլխապատառ...

Փորձիր մոռանալ այդ հուսահատ ճիչը։

...Երկուսով միաժամանակ վիրավորվեցինք. նույն մարտում։ Ես՝ ծանր, Վահանը՝ թեթև վերքով։ Ու վերջին անգամ հանդիպեցինք դաշտային հոսպիտալում։ Նրա ապաքինման համար օրեր էին պահանջվում, ինձ պետք է տեղափոխեին թիկունք՝ վիրահատության և տևական բուժման։ Մեզ սպառնում էր բաժանվելու անխուսափելիությունը։

Վահանը, վիրավոր թևը գրկած, մոտեցավ ինձ, մի քանի

թղթադրամ դրեց ծոցագրպանս և առարկություն չվերցնող տոնով ասաց.

— Թիկունք ես գնում, կծախսես։

Փորձեցի դիմադրել, հրաժարվել.

— Ի՞նչ պիտի անեմ, թող մնա, պետք կգա քեզ։

— Ո՛չ, վերցրու... Եթե չկարողանաս ծախսել ու, հանկարծ, տուն հասնես, կտաս մերոնց։

Այլևս առարկելու տեղ չունեի։

Ինձ հաջողվեց տուն հասնել, բուժվելուց հետո տաս օրով արձակուրդ ստացա։ Գնացի Վահանենց տուն։ Հիվանդ մայր, երկու քույր ու փոքր եղբայր։ Դժվար էին ապրում։ Նրանց ուրախությանը չափ չկար, իհարկե, ոչ այնքան փողի, որքան Վահանի մասին թարմ տեղեկություններ ստանալու համար։

— Ուրեմն վերջին անգամ Վահանին ե՞րբ ես տեսել,— հարցրեց մեծ քույրը փոքր-ինչ թերահավատ։

— Շուտով երեք ամիսը կլրանա։

— Վերջին նամակը գրել է երկու ամիս առաջ, ի՞նչ իմանաս...

Դռան զանգը հնչեց երկար.

— Նամակ ունեք,— լսվեց փոստատարի ձայնը։

Անհամբեր բացեցին ծրարը, և ահավոր բոթը մղկտաց հարազատների սրտում.

«Ձեր որդին, հերոսի մահով»

Չեմ հիշում, թե ինչպես դուրս եկա Վահանենց տնից։

Հնարավո՞ր է մոռանալ։

...Վերջապես հարձակման ենք գնում։ Ու ոչ թե հարձակմանը հետևում է կորստաշատ նահանջը, այլ գնում ենք արդեն առանց ետ նայելու։ Համարյա մաքրել ենք մեր հողն անարգ ոսոխից, մոտենում ենք պետական սահմանին։ Հիմա էլ մենք պիտի խախտենք սահմանը, և՝ անառարկելի իրավունքով։ Հասել է վարձահատույց լինելու ժամը...

Համառ մարտերից հետո լուսաբացին գրավեցինք ուկրաինական մի ստանիցա։ Մեր՝ ազատագրման ենթակա վերջին հողակտորն էր այդ։ Գյուղի ծայրին մի տարեց կին, ձեռքերը պարզած, ընդառաջ էր վազում մեզ։ Հասավ հևասպառ.

— Ես ձեր եկած ճամփին մատաղ։

Փաթաթվել, համբուրում է, լալիս ու ծիծաղում.

— Իմ երկու տղաներն էլ ձեզ հետ են, նամակ չունեմ, տեղնեերը չգիտեմ... Զավակնե՞րս, ախր ես ոչինչ չունեմ ձեզ հյուրասիրելու համար, աներեսները խժռեցին, մնացածն էլ տարան իրենց հետ, բան չեն թողել։

— Ոչինչ, մայրիկ, ձեր այդ արցունքաթաց ժպիտը ամենամեծ հյուրասիրությունն է մեզ համար։

Ու հերթով համբուրում ենք տառապած մոր ձեռքը։ Կարոտներս ենք առնում։

...Հասել եմ Բուլղարիայի Ռուսե քաղաքը։ Գիշերը պետք է մնամ ակնաբույժ Անաստասովի տանը։ Ծանոթանալուց հետո, երբ իմացան իմ հայ լինելը, ընթրիքի հրավիրեցին իրենց հարևան, ազգությամբ հայ Թոդորին։ Քառասունն անց հաղթանդամ մի տղամարդ էր, վարորդ։ Կինն իրենից փոքր էր ավելի քան տաս տարով։ Երկու էլ երեխա ունեին։ Հայերեն վատ գիտեր Թոդորը, կինը՝ բոլորովին։ Եվ ինչպե՞ս էր ուրախանում, երբ ես հասկանում էի Թոդորի ասածը։ Հայաստանի մասին լսել եմ միայն, տեսած չկամ, ասում էր նա, բայց այնպես կուզենամ Հայաստան երթալ։ Հանգուցյալ մայրս շատ է պատմած, նա լավ կխոսեր հայերեն, մանավանդ կսիրեր երգել. շա՞տ տխուր էին անոր երգերը։

Իմ խնդրանքով Թոդորը երգեց իր մոր երգերից մեկը։

Սիրտս նման է էն փլած տներ,
Կոտրեր գերաններ, խախտեր է սներ,
Բուն պիտի դնեն մեջ վայրի հավքեր։
...Տո լա՜ն տնավեր։

Թոդորի կնոջ աչքերում արցունքներ էին լճացել։

— Վերջանա պատերազմը, կերթանք Հայաստան, մեր երկիրը, երեխաներս ալ հայերեն կսովրին։

— Զգիտեմ, իրականացա՞վ Թոդորի երազանքը։

...Անդրանիկը մեր ընկերների մեջ ամենահամեստ ու քչախոս տղան էր։ Ղարաբաղից եկել էր Երևան, հիմա էլ այս փորձությանն ժամին հասել էր Հունգարիա, Բալատոնի ափը։ Զարմանալի ընթերցասեր էր, ինչպես ինքն էր ասում ծիծաղելով՝ «գրքի գիժ»։ Կարդում էր՝ օգտագործելով ամեն մի ազատ պահ։ Իսկ կրակե շապիկ հագած խրամատի զինվորին ո՞վ է ազատ ժամ տվել։ Ավելի դժվար էր գիրք ճարե-

լը։ Բայց Անդրանիկը գտնում էր և՛ գիրք, և՛ ժամանակ, ու կարդում էր, ավելի շատ՝ գիշերը, լուսնի աղոտ լույսի տակ։ Ու մի շարաբաստիկ գիշեր անզգուշաբար ոտքի է կանգնում՝ ընդարմացած մարմնին հանգստություն տալու հույսով և նշանակետ է դառնում հակառակորդի անվրեպ կրակողի համար։ Ուղիղ ճակատին էր առել գնդակը... Գրական ամսագրի մի համար կիսաբաց թպրտում էր նրա մարած կրծքին։ Ամսագրում Դեմիրճյանի «Վարդանանքն» էր։ Արյունը ներկել էր ասես Վարդանի փեշերը... իսկ պատերազմն արդեն իր հոգեվարքն էր ապրում, հեռու չէր հաղթանակը։

...Ավստրիայում ենք, Զալցբուրգի հոսպիտալում։ Քառասունհինգի մայիսի առաջին օրերն են։ Արդեն կասկած չունեմ, որ պատերազմում ստացած իմ վերջին վերքն է այդ։ Եվ թեթև է բարեբախտաբար։ Բայց կան նաև ծանր վիրավորներ։

Առանձնապես տխուր է մի ուզբեկ լեյտենանտի վիճակը։ Ասում են քաջին վայել գործեր է կատարել հետախուզության մեջ ու վերջին պահին մի կույր գնդակ մոլորվել է նրա կրծքի մատույցներում։ Երրորդ օրն էր, գիտակցությունը չէր պարզվում, շնչում էր անկանոն, ընդմիջումներով։ Ու զառանցում էր անընդհատ, և այդ անկապ խոսքերի մեջ հստակ կրկնվում էր երկու բառ, երկու անուն,— Անամ, Գալիմա...

Լուսաբացին հոսպիտալով մեկ թնդաց հաղթանակի լուրը։ Ինչպե՞ս էինք սպասել այդ օրվան։ Հաղթանակ, վերջապե՞ս...

Ծանր վիրավոր լեյտենանտը բացեց աչքերը ու զարմացած դիմացն էր նայում, ուրախությունից խենթ ու խելառ թռչկոտող տղաներին։ Հետո դանդաղ, ասես ափսոսանքով, փակվեցին աչքերը ու այլևս չբացվեցին...

Մինչև հիմա էլ տանջում է ինձ մի հարց,— լեյտենանտի գիտակցությանը հասա՞վ մեծ հաղթանակի երանելի լուրը, թե՞ հանգավ՝ անհանգիստ ու անտեղյակ...

Երեսուն տարի է անցել այդ հերոսական օրերից. մի ամբողջ կյանք։ Բայց մոռանալ չես կարող, երազում անգամ այդ դրվագները քեզ հանգիստ չեն տալիս։ Օր կա՞, որ կինոժապավենի պատկերները չխառնվեն իրար։ Եվ եթե դրանք գումարես, քանի՞ կինոնկար կստեղծվի...

Երջանիկ վերադարձածներն այսօր հիսուն-վաթսուն տարեկան են, ճերմակահեր հայր ու պապիկներ, իսկ հաղթանակի ճամփին մնացածները մնացին քսան-երեսուն տարեկան, ջահել ու կենսուրախ, աչքները հազար մուրազի։ Նրանք բախտավոր էին, որ ջահել մնացին։ Նրանք բախտ չունեցան ծերության դռները ծեծելու։ Տուն դարձածները շարունակում են և նրանց կիսատ թողած գործը։ Ու մեր երթին մասնակցում են և՛ մեր այդ վաղամեռիկ նահատակները, նրանք, որոնց արյան գնով կոփվեց մեր մեծ հաղթանակը։ Նրանք էլ, թեկուզ ուշացած, բայց պատվով տուն են դարձել՝ մարտական ընկերների հուշ-պատմությունների, հուշարձան-կոթողների մեջ։ Եկել են մխիթարելու իրենց անհույս հույսից շորացած մայրերին, եկել են այսօրվա ջահելների անցնելիք ճանապարհը լուսավորելու։ Քանզի ջահել էին, բայց ծանոթ աղնվության ու քաջության ճամփաներին. ուղեկցել կարող են։

Մենք հինգն էինք, հինգ մտերիմ ընկերներ։ Երեքը տուն դառնալու բախտին չարժանացան։ Կարոն եկավ՝ ոտքի մեկն այնտեղ թողած, իսկ իմ մարմնում լռված-մնացած արկի բեկորներին թիվ չկա... Եվ, այնուամենայնիվ, ինչ որ տեղ, ինչ-որ չափով ասես մեղավոր ենք զգում վերադարձածներս, որ նրանց խնայել ու պահել չկարողացանք։ Եվ մխիթարվում ենք այն գիտակցությամբ, որ նրանք միշտ մեզ հետ են։

Ու մոռանալ չենք կարող նրանց, հաղթանակի հավատն իրենց սրտում ռազմի ճամփաներին մնացած այն բյուրավոր մարտիկներին, որոնց արյամբ է ասես բոցկլտում լուսավոր ամեն մի օր, հաղթանակի ամեն մի տոն։

Տխուր դրվագներ

ԼԱՎ ՄԱՐԴ ԼԻՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

— Քեֆս գալիս է էս մեր նոր պետից. ի՞նչ հրաշալի մարդ է։

— Ինչո՞վ է հրաշալի։

— Իր գործիմացությամբ, համեստությամբ, բարությամբ ու ազնվությամբ։ Մեկին մի վատություն չի անի։ Իսկական մարդ է։

— Նրա իսկականը չգիտեմ, բայց որ դու մարդկանց միամիտ սորտից ես, դա փաստ է։

— Ինչո՞ւ։

— Տո նրա ազնվությունն ու մաքրությունն ո՞ւմ է պետք. լա՜վ մարդ է... իսկ ո՞րն է լավի չափանիշը։

— Սրտացավ է, հոգատար է, ընդառաջող։

— Դատարկ բաներ են. և կարծում ես այդ հատկություններն առանձին արժեք ունե՞ն։ Հիմա բոունցքն ավելի հարգի է։ Ղեկավարից որ չվախեցան, հեչ։

— Ճիշտն ասած մեր բաժնի պետից վախեցողներ չկան, նրան պարզապես հարգում են։

— Իսկ գիտե՞ս, թե այդ պարզապես հարգված մարդու ամենամեծ պակասությունը որն է, այն, որ հակառակորդներ չունի։ Առանց սիրելիների, առանց ատելիների, դա ի՞նչ մարդ է։

— Իսկ նա հավասար աչքով է նայում իր աշխատողներին։

— Հավասար աչք չկա, չի լինում։

— Հետաքրքի՞ր է։

— Ի՞նչն է հետաքրքիր։

— Անցյալ օրը իմ այդ նոր պետը մի մտերմիկ զրույցի պահին զարմացած ասում է՝ պատկերացնո՞ւմ եք, գործարանի ղեկավարներից մեկն ինձ մեղադրում է, և գիտե՞ք ինչի մեջ, մի տարուց ավելի է աշխատում ես, ասում է, և քեզնից բողոքողներ չկան, ուրեմն՝ լավ չես աշխատում։

— Տեսնո՞ւմ ես, թե վերադասն ինչ չափանիշներով է առաջնորդվում։ Իսկ դու գլուխդ ես գցել՝ հա՜յ լավ մարդ է, հարգում են։

— Ուրեմն լավին վա՞տ ասեմ։

— Ո՜չ, լավն ու վատն իրարից կարգին ջոկիր։ Մի երկուսի գլխին տուր ինչպես պետքն է, մի երկուսին, թեկուզ անտեղի, նալիր, թող գնան վերադասի մոտ բողոքով, ասեն կոպիտ է, անարդար է, չար է։ Լավ աշխատող է, կասեն, ա՜յ սա ղեկավարել գիտի։ Թե չէ՝ լավ մարդ է, հարգանքով է, ուշադիր է, համեստ է, բարի է, ազնիվ է, դրանք այսօր ամենաղալը ապրանքն են, հասկացի՞ր։

ՈՒՂՂԱՄԻՏ ԿԱՐԾԻՔ

— Ասում են նոր պետ են նշանակել ձեզ մոտ։

— Այո՜, դժբախտաբար։

— Բայց լավ մարդ է, ասում են։

— Իսկ հիմա ո՞ւմ է պետք լավ մարդը։

— Մաքուր ու ազնիվ մարդ է, կարծեմ։

— Ավելի վատ մեզ համար։

— Ես քեզ չեմ հասկանում։

— Որովհետև դու էլ մարդկանց միամիտ տորտից ես... Տո նրա ազնվությունն իմ ինչի՞ն է պետք, ոչ ինքն է ուտում, ոչ մեզ է թողնում. ռուսերեն մի լավ խոսք կա՝ սաբակա նա սենե, իսկական դրանցից է, մեկն ասի՝ տո՜, հեր օրհնած՝, ասենք թե քո ախորժակը փակ է, ուրիշների կերա՞ծն ինչու ես հարամ անում... Իմ ջղայնությունն ավելի շատ նրան պաշտոն տվող վերադասի վրա է գալիս, մի հարցնող լինի, թե ի՞նչ են գտել նրա մեջ. մի պորցիա խորովածի կեսը թողնում է, խմածն էլ ջերմուկ է։ Չէ՜, ես համով պաշտոնի վրա նստած անհամ ղեկավարին տանել չեմ կարող...

Հերթական հանդիպմանը առիթ ներկայացավ անհերթ խոսակցության...

— Ինչպե՞ս են գործերը ձեր գործարանում։

— Լավ են, եռամսյակի պլանը կատարեցինք հարյուր-հինգ տոկոսով, պարգև-հավելում ունենք։ Տարվա պլանները գերակատարելու, տասներեքերորդ աշխատավարձի ստացման հեռանկարներ կան, մեր արտադրանքի մասին գրում են, գովում են, լավ չէ՞։

— Հրաշալի է, և ես ուրախ եմ քեզ համար։

Միայն իմ գործարանում, այսինքն՝ դպրոցում, որտեղ ես ուսուցիչ լինելու պատիվն ունեմ, այդ տոկոսացավն ապանել է մեզ։

— Դուք է՞լ եք գերակատարում պլանները, և դրանք ի՞նչ տոկոսներ են։

— Մեզ մոտ, բարեբախտաբար, գերակատարման առաջադրանքներ չկան, և դա հնարավոր էլ չէ։ Ուսման առաջադիմության տոկոսը հարյուրի հասցնել առայժմ անհնարին բան է։ Բայց պահանջում են ձգտել, մոտենալ դրան։

— Իսկ ի՞նչ մի սխալ պահանջ է դա։

— Սխալ չէ, իհարկե, և հաճելի բան է, անշուշտ, ամբողջ դասարանում, դպրոցում, կամ շրջանում ունենալ գերազանց առաջադիմություն, ոչ մի ետ մնացող երեխա, բոլոր դնահատականները չորս ու հինգ, հատուկենտ միջակներ և ոչ մի անբավարար, լավ է, չէ՞։

— Շատ լավ է, բայց հնարավո՞ր է։

— Խոսքն էլ այդ հնարավորության մասին է։ Մենք, ուսուցիչները, իհարկե դեռ այն չենք տալիս աշակերտներին, ինչ պետք է, թերացողներն անպակաս են մեր մեջ, բոլորը չէ, որ բավարար գիտելիքներ ունեն, որ փորում են իրենց գործը։ Բայց պահանջել անհնարին տոկոսներ, և այս պատճառաբանությամբ... Այո, բարձր տոկոս տուր, եթե ոչ իննսուն, գոնե ութսունութ, թե չէ ետ կմնանք հարևան դպրոցից կամ շրջանից, անհարմար չէ՞, ի՞նչ կասեն վերադաս կազմակերպությունները...

— Եվ, իհարկե, աշխատում եք վերադասին հանել այդ անհարմար վիճակից։

— Բա ինչպե՞ս, թողնենք, որ հարևաններն առաջ ընկնեն, էլ ո՞ր օրվա հայրենասերն ենք...

— Մեզ մոտ ամեն մի տոկոսի տակ որոշակի արտադրանք կա, որն ունի իր գումարային արտահայտությունը, երբեմն մի տոկոսը հարյուր հազարի արժեք ունի։

— Դե, հասկանալի է, որ ուսման առաջադիմության տոկոսի տակ ոչ տեսանելի ապրանք կա, ոչ որոշակի գումար։ Դա, ճիշտ հասկանալու դեպքում, անգին գանձ է, որն իր պտուղները պիտի տա հետագա տարիներին, ամեն մի դպրոցականի ողջ կյանքի ընթացքում, որտեղ էլ որ նա աշխատելու լինի։ Բայց արի տես, որ մենք այդ տոկոսի արժեքը շատ ենք իջեցրել, աններելի շատ։ Դե, մի՞թե մրցավազքը հարգի մեթոդ է ուսման առաջադիմության գործում։

— Եվ, իհարկե, նույն մրցավազքը բարգավաճում է ձեր հարևան դպրոցում ու շրջանում։

— Անպայման։

— Եվ առաջադիմության տոկոսը բարձրանում է շոգի բերանն ընկած ջերմաչափի նման։

— Չի բարձրանում, բարձրացնում ենք։

— Այդ մեկն արդեն ջեղավ, ձեզ հո չե՞ն ստիպում սուտ գնահատական նշանակել։

— Կարծում ես անհարմա՞ր են զգում։ Անցյալ օրը դիրեկտորը կանչեց և, ինչպես ասում են, պորտս տեղը դրեց. ինչո՞ւ այս ինչ աշակերտը վատ գնահատական է ստացել քո առարկայից։ Ասում եմ՝ չի սովորում, շար երեխա է, ծնողները չեն հետևում, կարգին դպրոց էլ չի հաճախում, իսկական դուրս անելու բան է։ Զայրացավ, միամիտ-միամիտ խոսում ես, ասում է, աշակերտին դուրս անելը հե՞շտ բան ես կարծում... Անհարմար է, ասում է, հայրն էլ կարգին տեղ է աշխատում... ի՞նչ է, մենք այդքան անզո՞ր ենք, ասում է։ Իսկ այդ կարգին հոր զորությո՞ւնը որտեղ մնաց, ասում եմ։ Դե՛, դա մեր գործը չէ, ասում է. չմանրանանք, մեզ չի սազում... Քեզ մոտ կանչիր, ասում է, այդ երեխային, կամ ինքդ գնա նրանց տուն, հետն առանձին պարապիր, թող հասցնի։

— Դու, իհարկե, ոչ տուն գնացիր, ոչ էլ կանչեցիր։

— Հավատա, երկուսն էլ արեցի։

— Եվ ի՞նչ։

— Էլի բան դուրս չեկավ։ Ստիպված բռնեցի զիջման ճանապարհը, թե չէ մանկավարժական խորհրդում դիրեկտորն այնքան կխոսեր...

— Իսկ հիմա, իհարկե, գոհ է։

— Ա՛յ, ճիշտ վարվեցիր, ասում է, թող փոխադրվի մյուս դասարան, եկող տարի ավելի խստապահանջ կլինենք։

— Իսկ կարողանո՞ւմ եք ձեր խոսքի տերը լինել։

— Ո՛չ, իհարկե, ամեն տարի սուտ խստապահանջության այս նույն կոչն է, որ, որպես կանոն, մոռացվում է եռամսյակը կամ տարին փակելիս։

— Եվ երեխաներից շատերը, հանգիստ ու առանց քրտինք թափելու, բարձրանում են այդ աստիճաններով։

— Բարձրանում և ավարտում են։

— Եվ, իհարկե, այդպիսի երեխաները գիտեն, որ միևնույն է, նրանց համար մտածողներ կան և մատը-մատին չեն խփում, ա՛յս է դատապարտելին։

— Եվ դասատուն է ստիպված մատը մատին խփում, որ հանկարծ, ասված մի արասցե, իր դպրոցի առաջադիմության տոկոսը ցածր չլինի հարևան դպրոցից։

— Եվ տոկոսները բարձրանում են։

— Իսկ երեխաների գիտելիքնե՞ր։

— Առայժմ, եթե չասենք՝ հակադարձ, համենայնդեպս՝ ուղիղ համեմատական չեն։

— Հետո այդ երեխան կավարտի դպրոցը, նաև՝ ինստիտուտը, կդառնա վատ մասնագետ, ինքը կպատրաստի վատ մասնագետներ, և անորակության շղթան կշարունակի իր տխուր պտույտը...

— Մինչև ե՞րբ։

— Դժբախտաբար այդ հարցին պատասխանել չեմ կարող։

— Իսկ ո՞վ պիտի պատասխանի։

— Եվ ե՞րբ...

ԳՅՈՒՂ ԷՐ ԳՆԱՑԵԼ...

— Սարգի՛ս, քանի օր է քեզ չեմ տեսնում, հո հիվանդ չե՞ս։

— Երանի հիվանդ լինեի։

— Վատ բա՞ն է պատահել։

— Գյուղ էի գնացել, իմ ծննդավայրը, իմ հարազատ գյուղը։

— Եվ ի՞նչ։

— Բարով-խերով չգնայի։

— Հարազա՞տ էր մահացել։

— Ավելի ծանր բան... Գյուղն է մահանում։

— Բան չեմ հասկանում։

— Վերջին տաս տարում երկրորդ անգամն եմ գնում, ժամանակ չի լինում։

— Եվ հիասթափեցրե՞լ է։

— Թույլ բառ է հիասթափվելը։ Թեսթափ եմ եղել, ահա թե ինչ։

— Պատճա՞ռը։

— Գյուղը ձեռքից գնում է, անհույս հիվանդը քեզ օրինակ։

— Գուցե մի քիչ ավելի հասկանալի կխոսեիր։

— Վերջին քսան տարվա ընթացքում բնակչության կեսն է մնացել գյուղում, աճի մասին այլևս չենք խոսում։ Չորս հարյուր տնտեսությունից եթե հիմա երկու հարյուր հաշվես, լավ է։

— Քաղա՞ք են տեղափոխվել։

— Չեն տեղափոխվել, փախե՞լ են տարբեր պատճառներով ու առիթներով։ Մեկը ուսանող է, մյուսը՝ տղայի մոտ է ուզում ապրել, երրորդը թոռնիկներին պահելու պարտականությունն է վերցրել իր ուսերին։ Հարյուրից ավելի տնտեսություն բնակվել է միայն Երևանում։

— Եվ, հասկանալի է, որ գյուղի կյանքի նորմալ հունն ինչ-որ տեղ խախտվել է։ Կոլտնտեսությունում աշխատող ձեռքերի պակաս է զգացվում, կաղում է կոլտուրական կյանքը։

— Դժբախտաբար այդ բոլորը ճիշտ է։ Որ հիշում եմ իմ

մանկության տարիները. ի՞նչ ուրախ ու շեն գյուղ էր մեր Սարալանջը, ի՞նչ թատերական խումբ ունեինք, ներկայացումներ էինք տալիս նաև հարևան գյուղերում։ Ֆուտբոլի մրցումներում առաջնություն շահեցինք շրջանի մասշտաբով, փողային նվագախումբ ուներ դպրոցը։ Իսկ հիմա...

— Գուցե մանկական օրերի գունագարդ ակնոցների փայլն է դեռ քո աչքերում։

— Հնարավոր է։ Բայց բոլոր դեպքերում մեր գյուղն այն ժամանակ ավելի շեն էր, քան այսօր։ Գյուղից հեռացածների տները, անտեր մնալով, ավերվել են, ու հիմա նորաշեն, հաճախ երկհարկանի տան կողքին անշուք ավերակների ես հանդիպում. բավական տխուր մի տեսարան։

— Դե՛, ինչ կարող ես անել, օրինաչափ պրոցես է, քաղաքն աստիճանաբար կուլ է տալիս գյուղին։

— Տխուր պրոցես է։ Իսկ քաղաքին պահողը գյուղն է։

— Ուրեմն մենք, քաղաքացիներս, գյուղի հաշվի՞ն ենք ապրում, և իմ արտադրած ավտոդողերը գյուղի համար որևէ արժեք չե՞ն ներկայացնում։

— Արժեք ներկայացնում են, իհարկե, բայց չես ժխտի, որ մարդս հացիվ է կենդան, նախ և առաջ, իսկ հացը գյուղից է գալիս։

— Հացը հասկացանք։ Միայն ստիպված եմ հարցնել՝ թե դո՞ւ ինչու եկար գյուղից։ Մնայիր, հաց արտադրեիր նաև քաղաքում ապրող քո ընկերոջ համար։

— Է՛, ես երբ եմ եկել, շուտով քսան տարին կլրանա։

— Գյուղին դավաճանելու տեսակետից ինչ տարբերություն, այսո՞ր կլքես, թե՞ վաղը։

— Արդեն դավաճա՞ն էլ դարձանք։

— Քո վրդովմունքի տրամաբանական եզրակացությունն է այդ։

— Իմ ժամանակ ուրիշ էր, այս վտանգը չկար։ Այդ տարին, հիշում եմ, ես ու մորաքրոջս տղան դուրս եկանք գյուղից, հիմա խմբերով են գնում։

— Ուրեմն հիմքը դնողներից մեկն էլ դու ես, հիմա բարեհաճիր վայելել դրա դառն պտուղները։

— Դու այնպես ես խոսում, կարծես թե գյուղից քաղաք տեղափոխվելը հանցագործության նման մի բան է։

— Եթե հանցանք չէ, այդ դեպքում ինչո՞ւ ես մեղադրում այսօրվա գնացողներին։ Մեղադրելը միշտ ավելի հեշտ է։

— Բայց գյուղը քայքայվում է, հասկացիր, տատիկ-պապիկներով գյուղ չես պահի, կոլտնտեսության բերքի մի մասը դպրոցականներն են հավաքում։ Հետո՞, մինչև ե՞րբ։

— Համոզիր Երևանում ապրող համագյուղացիներիդ՝ գյուղ վերադառնալ։ Գնացեք, շենացրեք։ Ես էլ խոստանում եմ հյուր գալ քեզ։

— Է՜, թող, ի սեր աստծո, իմ սրտից արյուն է կաթում, դու կատակի ես տալիս։

— Իսկ ես միանգամայն լուրջ եմ ասում։

— Ցսիրեցի քո այդ լրջությունը։

— Մեր դժբախտությունն էլ հենց դրա մեջ է, խուսափել լրջությունից, լուրջ բաները միշտ հեռացնել սեփական ոսից, այն փնտրել միայն ուրիշների մոտ։

— Ա՜յ տղա, դու ուզենաս մեր գյուղի քայքայման ամբողջ մեղքը իմ ուսերին կբարձես։

— Հաշվիր, որ արդեն բարձել եմ։

— Բարձելը միշտ հեշտ է տանելուց։

— Նայած բարձվողին։

— Շնորհակալ եմ քաղցր խոսքերիդ համար։

— Իսկ ես պարզապես ցավակցում եմ և՛ քեզ, և՛ քո գյուղին։ Եվ բոլոր նրանց, ովքեր լքում են գյուղը։

— Լքվածների պաշտպանիդ՝ իմ հարգանքների հավաստիքը։

— Աննամուս լքողներին՝ իմ խորին արհամարհանքը։

— Իա՜։

— Բա՜...

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ասում եմ՝ գործերդ ինչպե՞ս են։

Ասում է՝ գործ ա, էլի, իրա ճամփով գնում է։

— Երեխանե՞րդ ինչպես են։

— Իրենց համար մեծանում են։

— Մեծդ կարծեմ ընդունվեց համալսարան։

— Այո, մի կերպ ներս ընկավ։

— Կարծես թե ուրախ չես։

— Թող մայրն ուրախանա, գլուխս տարել էր։

— Զարմանալի՞ է։

— Իսկ ես բոլորովին էլ չեմ զարմանում։

— Երեկվա հեռուստատեսային նկարը տեսա՞ր, լավ էր, չէ՞։

— Նկար է, էլի, լավ-վատ, ի՞նձ ինչ։

— Ա՛յ տղա... էսօր էլ, տեսա՞ր մերոնք ոնց տարվեցին։

— Պատահում է։ Իսկ դա քեզ ինչո՞ւ է անհանգստացնում։

— Իսկ քեզ։

— Բոլորովին. տանել-չտանել, լավ-վատ, հաստ ու բարակ մի գին է։

— Ա՛յ տղա...

— Իմ ի՞նչ գործն է։

— Բա ի՞նչն է քո գործը։

— Ես գործ չունեմ, չգիտեմ։

— Բա քեզ ի՞նչն է հետաքրքրում։

— Ոչինչ, այսինքն՝ ոչ մի բան։

— Հետո՞։

— Հետո ջանսաղությունն։

— Այ հարամ լինի քո էդ ջանսաղությունը։

— Իա՞։

— Բա՞։

— Լսիր, ես քեզ քաղաքավարի մարդ էի կարծում։

— Իսկ ես քեզ ընդհանրապես մարդ էի կարծում։

— Իա՞։

— Այ չոռ ու ցա՞վ...

ԵՎ ՈՉԻՆՉ...

— Աչքդ լույս, ձեր դիրեկտորին փոխել են։

— Վերջապե՞ս։

— Շատ էիր բողոքում, իսկապե՞ս այդքան վատն էր։

— Գիտես, վատ մարդ չէր, աստված վկա, բայց մեր գործից բան չէր հասկանում, և գործի հերն անիծեց հիմ-

նավորապես։ Ինչպե՞ս էին նրան ձեռնարկություն վստահել, չեմ հասկանում։

— Իսկ վերադասը մի՞թե այդ չգիտեր։

— Կամ չգիտեր, կամ ձևացնում էր, թե չի տեսնում, համենայն դեպս վճռական վերաբերմունքը շատ ուշացավ։ Իսկ գործի շահը պահանջում էր...

— Հավանաբար մեջտեղը նաև ընկերոջ շահ կար, որ պակաս կարևոր չէ։

— Ճիշտ ես ասում, առարկել չեմ կարող, վերջապես ոչոք չի ժխտի, որ ընկերասիրությունը մարդկային բնավորության ամենագնահատելի հատկանիշներից է։

— Այո, իրավացի ես, գործը գործ, բայց ընկերոջ քեֆին շարժե դիպչել, անհարմա՞ր է, կնեղանա՞...

— Այդպես էլ վարվեցին։

— Այսի՞նքն։

— Զուգեցին նեղացնել։

— Նոր պաշտո՞ն տվեցին։

— Նախկինից էլ մի աստիճան բարձր։

— Ինչպե՞ս։

— Շատ հասարակ, ձևակերպեցին տեղափոխություն՝ նպատակահարմարությունից ելնելով...

— Հետո՞։

— Ոչինչ. կաշխատի մի քանի տարի, կձախողի այդ նոր գործը ևս, մինչև մեջտեղ կգա անտաղանդ շախմատիստի ձիու նոր քայլը...

— Եվ, հավանաբար, տարել են նոր տեղ առոք-փառոք։

— Թևանցո՞ւկ տարան, որ ճանապարհին հանկարծ, աստված մի արասցե, ոտքը քարին չառնի։

— Ինչպիսի՞ հոգատարություն. հետո էլ ասում են, թե մենք անուշադիր ենք մարդու նկատմամբ...

— Որ իմանաս թե ի՞նչ ճառեր ասվեցին նոր կոլեկտիվին ներկայացնելիս։ Քույրս այնտեղ է աշխատում, ես էլ էի գնացել։ Ինչպե՞ս գունազարդեցին, քիչ էր մնում գոռայի ամբողջ ձայնով. չե՞նք ուզում, ե՞տ տվեք մեր դիրեկտորին։ Լավ էր, ժամանակին ուշքի եկա։

— Եվ ի՞նչ...

— Եվ ոչինչ...

ԻՍԿԱՊԵՍ ՈՐ...

— Որ իմանաս մի երկու օր առաջ ինչպե՞ս եմ վառվել...

— Սևա՞ն էիր գնացել։

— Չէ՛, ջանըմ, երանի չէր...

— Ուրեմն բակում խորովածի կրակը թեժ ես վառել։

— Այ տղա, հասկացիր, իմ վառվելը կապ չունի ոչ արևի, ոչ էլ կրակի հետ։ Սա ուրի՞շ վառվել է։

— Ուրեմն կնոջ հաշիվ կա մեջը։

— Էլի չհասկացար։

— Բացատրիր, որ հասկանամ, այդ ի՞նչ խորհրդավոր վառվել է։

— Խանութում եմ վառվել, օրը ցերեկով, և ամբողջ ցավը նրանում է, որ վառվել եմ հիմարաբար։ Ընդմիջումից մի քանի րոպե առաջ էր, նայեմ տեսնեմ մեկը կինոապարատը ձեռքին նկարում է էս բաժինը, էն բաժինը, հաճախորդներին։ Ոչ մեկի հետ չի խոսում, սուս ու փուս նկարում է։ Մի տեսակ եղա, բայց ցույց չեմ տալիս, թե տեսնում եմ։

Զանգը տվեցի, ընդմիջման ժամ է։ Ժողովուրդը դանդաղ դուրս է գնում, սա մնաց, բայց էլ չի նկարում, ապարատը ուսովը գցած՝ աջ ու ձախ է նայում։ Մոտեցա սրան, ասում եմ՝ ընկեր ջան, էս ի՞նչ հաշիվ է։ Սա թե՝ ներեցեք, դուք ո՞վ եք։ Ասում եմ՝ խանութի վարիչն եմ։ Սա թե՝ ես հենց ձեզ էի ուզում, գնանք ձեր կաբինետը։ Գնացինք։ Սա էնպես հանգիստ է պահում իրեն, աղայավարի, լավ էլ հագնված է, ցիլինդրով, գալստուկով։ Մի երեսուն տարեկան կլինի, մեղքս ինչ թաքցնեմ՝ սիրուն էլ տղա է։ Ես, ասում է, հեռուստատեսությունից եմ։ Մի կարմիր տոմս հանեց գրպանից, պոչը ցույց տվեց ու նորից դրեց գրպանը. դե՛, հո չէի՞ ստուգելու... Ձեր խանութում, ասում է, հարգելի դիրեկտոր, թերություններ շատ կան, անմաքրություն, անուշադրություն, չարաշահումներ, այսպես չի կարելի. գնորդների հետ էլ, ասում է, անհրաժեշտ կուլտուրական վերաբերմունք չկա։

Զարմացած ասում եմ՝ ախպեր ջան, դու էդ ինչպե՞ս մի քանի րոպեում հասցրիր էդքան բան տեսնել։ Ես, ասում է, վերջին շաբաթվա ընթացքում մի քանի անգամ եմ ձեր խանութը մտել, բա ինչպե՞ս,— ասում է,— ժուռնալիստի շնորհքն

էլ հենց դրանում է... Բա ո՞նց է, ասում եմ, ես քեզ չեմ տեսել։ Ժպտում է քթի տակ, երևի ուզում է ասել՝ ինչ միամիտ մարդ ես դու, հո քեզնից թույլտվություն չպիտի՞ խնդրեի... Վերջը, ասում եմ, ի՞նչ պիտի լինի։ Թե՝ ոչինչ, վերջին լուրերում ցույց կտանք որոշ բաներ, մի քիչ կքաշենք մեղավորների ականջը...

Էստեղ ես վատ եղա։ Դե, մտածում եմ, խանութ է, էլի, որ ուզենան, թերություն չե՞ն գտնի... Ախպեր ջան, ասացի, ո՞նց անենք, որ վազն անցնես ինձնից։ Սա նորից ժպտում է քթի տակ. դժվար է, ասում է, ես իմ մի շաբաթվա աշխատանքը ո՞նց ջուրը գցեմ, հիմնարկում ի՞նչ կասեն, ահագին էլ պլյոնկա եմ ծախսել, բոլորը հաշիվ ա։ Քո էդ ծախսն ինձ վրա, ասացի, արի ախպոր նման... Համաձայնության եկանք, էդ անամոթի ախորժակը լավ էր...

— Հետո՞։

— Երանի էդ հետոն չլիներ... Էսօր խելքիս փչեց, հեռուստատեսությունում մի ծանոթ ունեմ, զանգեցի նրան, էլի անհանգիստ էի, մտածում էի, թե գուցե խաբեց, նամարդություն չանի։ Սա գնաց ստուգեց իրենց մոտ ու ինձ զանգահարեց, թե մենք մարդ չենք ուղարկել քո խանութը, քեզ խաբել են... Առևտրի ֆրոնտի քանի՞ տարվա աշխատող եմ, ես դեռ էսպես չէի վառվել։

— Իսկապես որ լա՞վ են վառել...

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵԿՈ, ՄԻ ՔԱՂՑՐ ԶՐՈՒՅՑ, ՄԻ ԽԱՂԱՂ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

— Ա՛յ մարդ, տեր կանգնիր երեխայիդ։

— Իսկ ի՞նչ է պատահել, այդ ե՞րբ անտեր մնաց։

— Չի սովորում, անգրագետ է մնալու։

— Սովորածն էլ նրա համար շատ է, անպետք լակոտ դուրս եկավ։

— Կարգին խոսիր։

— Քո դաստիարակությունն է, դեռ խոսում էլ ես։

— Իսկ ես ի՞նչ անեմ, ասում եմ մի՞ սովորիր, ամբողջ օրը կռիվս նրա հետ էդ մասին է։

— Իսկ ինչո՞վ է զբաղված, ժամանակն ինչպե՞ս է սպանում։

— Օրական երկու տեսնս կինո է գնում, կաֆեներում թրև է գալիս, էդ կաֆե հնարողի էլ հերը շուն դառնա...

— Ճիշտ ես նկատել, կաֆեն է մեղավոր... Իսկ փող որտեղի՞ց նրան, ինչպե՞ս է կաֆե կամ կինո գնում, կարելի՞ է իմանալ։

— Դե՛, գիտես, որ մերժել չեմ կարողանում, մինուճարս է, ի՞նչ անեմ։— Մոր աչքերը պատրաստ են խոնավանալու։

— Իսկ աղջիկդ հաշվից դո՞ւրս է։

— Դե՛, նա արդեն իր ընտանիքն ունի, իր երեխան։

— Տղայիդ համար նախատեսված օրվա լիմի՞տն ինչքան է, մի տաս ռուբլի կա՞։

— Չէ՛, ինչեր ես ասում, միջին հաշվով մի հինգ-վեց ռուբլի հաղիվ լինի։

— Դե, միջին հաշվով էլ սովորում է, էլ ի՞նչ ես ուզում։

— Է՛, ես լուրջ բան եմ ասում, դու ինձ վրա ծիծաղում ես։

— Իսկ ի՞նչ անեմ, ես զբաղված մարդ եմ, գիշեր-ցերեկ գործի մեջ, դու այդ գիտես, ժամանակ չունեմ երեխայի դաստիարակությամբ զբաղվելու։

— Նարդի խաղալու համար ժամանակ գտնում ես։

— Դե՛, տեսնո՞ւմ ես, ինչ չարն ես, գործից դուրս իմ միակ հաճույքն է նարդին, դա էլ աչքիդ երևում է։

— Թող մի քիչ էլ երեխադ աչքիդ երևա, մի անգամ մեծավարի հետը չես խոսում, երևի դրա համար էլ ժամանակ չունես։

— Բա ի՞նչ ես կարծում։ Օրական երկու խորհրդակցություն մեզ մոտ, երկուսը՝ վերադասի մոտ, հաշվետվություն է, բալանս է, մալանս է՞...

— Էդ մալանսի կողքին մի քիչ էլ երեխայիդ տեղ տուր, ասենք մի հաշվետվություն էլ նա է։ Հասկացիր, ձեռքից գնում է տղադ։

— Ոչ մի տեղ էլ չի գնա, դպրոցը կավարտի մի կերպ, մարդ կշինենք։ Սիրտդ լեն պահիր, սեղանն էլ հավաքիր, հիմա Զավենը գալու է, տեսնենք զառն էսօր ինչ է ասում։

— Էլի՛ նարդին, զլուխներս գնաց։

— Վա՜հ, դա էլ ասելու բա՞ն է. բա որ քո գլուխը նարդու աղմուկին չի դիմանում, մեր օրերի եռուզեռն ինչպե՞ս պիտի տանի, տիկինս։ Կոփվել է պետք, և կոփվելու այդ կարևոր գործում նարդին վճռական դեր է ստանում...

— Իսկ երեխա՞ն, նրա՞ն ինչպես կոփենք։

— Փող քիչ տուր, տնային գործերով շատ ծանրաբեռնիր, ու թող քիչ քնի, ահա իմ հանճարեղ խորհուրդը։

— Իսկ նրա գնահատականներից խաբար ունե՞ս, գոնե։

— Կարծեմ երկուսները պակասել են։

— Եղբորս, Վահանի միջոցով օտար լեզուն ուղղել տվեցի մի կերպ, էդ անտեր քիմիան ու երկրաչափությունն են մնում։

— Երկու անգամ երկու, բոլոր դեպքերում չորս է, չնայած այս անգամ ավելի ճիշտ կլինի գումարել և ոչ թե բազմապատկել։ Ստանալիքը նույնն է, դժբախտաբար, երկու հատ երկու... Սպասիր, սպասիր, բա ինչպե՞ս է, որ էդ անիրավ դասատուները իմ երեխային երկու են նշանակում, գուցե չգիտեն, թե ով եմ, որտեղ եմ աշխատում։ Զբոնե՞մ դրանց աշխատավարձը մի երկու օրով ուշացնեմ...

— Դրանից ի՞նչ օգուտ։ Դու որ հունարդ ցույց տալ կարողանայիր, էս օրին չէինք հասնի։ Ժողկրթբաժնի գլխավոր հաշվապահ ես, ոչ բարով, և շարքային դասատուն անգամ բանի տեղ չի դնում քեզ, ոչ հարգանք է մնացել, ոչ պատիվ։

— Իսկ ավելի ճիշտ չէ՞ր լինի այդ հարգանքն ու պատիվը առաջին հերթին մեր տղայից ստանայինք. թող կարգին սովորի էլի, գործի անունն ի՞նչ է։

— Է՜հ, դու էլ գնում-գալիս, երեխայիս պոչն ես տրորում, թող կարգին սովորի, գրողը տանի դրանց էթանն ու մեթանը, մի տեսնես ումն է պետք, բան են սովորեցնում։ Մեր ժամանակ...

— Դու, որքան հիշում եմ, ութերորդ դասարանում երկու տարի նստեցիր, տիկինս, կրթություն կոչվածը քո ժամանակ էլ մի բան չէր, «տասի» հերը զոռով անիծեցիր...

— Բան ասացիր, դու որ համալսարան էլ ես ավարտել, ստացա՞ծդ ինչ է, ծայրը-ծայրին հազիվ եմ հասցնում։ Հարևանդ քո կես կրթությունն էլ չունի, տե՜ս ինչպես է ապ-

րում։ Տղայի համար «Ժիդուլի» առավ, աղջկանը՝ «Տյուլպան»։

— Տյուլպանը ծաղիկ չէ՞, էդ ինչ մի թանկ բան է առել, որ աչքիդ երևում է։

— Ծաղիկ է, բա՞, միամիտ մարդ, չես տեսել, գոնե լսեիր. մեբել է, հասկացիր, արտասահմանյան, և գիտե՞ս ինչ արժե, քո կես տարվա ռոճիկը։

— Ոչինչ, այնքան էլ շատ չի, կարող էր և ամբողջ տարվանը լինել։ Ինչ կա որ, մի տարի կարելի է քաղցած նստել, հետո այդ «Տյուլպանը» քեզ հա կկերակրի...

— Է՞, թող, ի սեր աստծո։

— Թողեցինք, հետո՞։

— Տղայիս գործը մնաց, այ մարդ, հասկացիր, սա միայն երեխայի հարց չի, պատվի, նամուսի խնդիր է։

— Շիրվանզադեին կանչե՞նք։

— Հետո էլ ապրուստի, հացի խնդիր է, հասկացիր։

— Ուրեմն ընկեր Պողոշյանին խնդրենք։

— Վերջ տուր, ասում եմ։ Եվ մի կարգին մտածիր, հանկարծ մեր երեխան մնա նույն դասարանում, բա մեզ ի՞նչ կասեն, պատկերացնո՞ւմ ես, թե ինչ խայտառակություն կլինի դա, մանավանդ քեզ համար։

— Այ, այդ մեկը ճիշտ ես ասում, պարզապես ամոթ է։ Բա ի՞նչ անենք։ Մի բան հիշեցի. հանգուցյալ պապիս դու չես տեսել, աստված հոգին լուսավորի։ Վարժապետ է աշխատել մի գավառական քաղաքում։ Մի անգամ պատմում էր, թե ինչպես քաղաքագլխի երեխան իր առարկայից վատ գնահատական է ունեցել, և մի օր էս քաղաքագլուխը գնում է դպրոց ու խնդրում է պապիս՝ ամառվա ամիսներին պարապել երեխայի հետ, դուրս բերել էդ վիճակից։ Ուզո՞ւմ ես ես էլ գնամ, խնդրեմ էդ դասատուներին, որ առանձին պարապեն տղայիդ հետ, մի կաղ միջակի հասցնեն։ Ուզո՞ւմ ես։ Ես ինչո՞վ եմ պակաս մի նախասովետական քաղաքագլուխից...

— Թո՛ղ, ի սեր աստծո, քեզնից Պողոս-Պետրոս դուրս չի գա, իմ հույսն էլի Վահանն է, լայն կապեր ունի, թող գնա, նրանց հետ խոսի, ժողկոմբաժնի անունից, քեզ էլ մեջ բերի, մարդ են, երևի կհասկանան։

— Իհարկե, իհարկե, ես համոզված եմ, որ նրանք այդքան ֆայմ կունենան։ Բայց, արի դեբիտորի հետ կրեդիտորն էլ հիշենք, թե չէ բալանս չի ստացվի։ Պապս վասեր՝ մի քիչ կար, մի քիչ էլ աստված տվեց։ Արի էդ լակոտին ստիպենք, որ մի քիչ պարապի, ասելը ասել, բայց եթե ոչինչ չպատասխանի...

— Որ կարգին ասեն, պատասխանելը կարևոր չէ։ Վերջապես երեխան վերջերս ամբողջ երկու կիլո նիհարել է, ես նրան ինչպե՞ս ստիպեմ։

— Կարծեմ բժիշկն ասել է, որ տղադ չափից ավելի շատ քաշ ունի։

— Հետո՞ ինչ, հո երեխայիս չեմ զոհելու դրանց սինուսին ու կոսինուսին, հողեմ դրանց գլուխը...

— Դե, տեսնո՞ւմ ես, տիկինս, որ իմ միջամտությունն ավելորդ է, հետո էլ մեղադրում ես ինձ, թե երեխայի հետ մեծավարի չեմ խոսում։ Ծույլ ու անշնորհք երեխան մեծավարի խոսքը կհասկանա՞։

— Դե, լավ, լավ, քեզ էլ մի առիթ է պետք, որ տղայիդ հասցեին տակից-գլխից խոսես։

— Կարելի՞ է իմանալ, թե որտե՞ղ է հիմա այդ տակից-գլխից օրինակելի երեխան, ժամը տասն է արդեն։

— Կինո է գնացել, ասաց հնդկական է, երկու սերիա։

— Իհարկե, նրա բոլոր կինոնկարները իր ստացած գնահատականների նման երկսերիանոց են։

— Վերջ տուր, խնդրում եմ, դու բոլորովին...

— Հաշվապահի նման ես խոսում, քոնը թիվն է ու համրիչը։

— Իբր թե սուտ է։

— Բա դու սուտ բանը կասե՞ս, տիկինս։ Տեսնո՞ւմ ես, աղջիկդ կարգին մարդ դուրս եկավ, կրթություն ստացավ, լավ ընտանիք կազմեց։

— Հետո՞։

— Հետո այն, որ այս մեկին, մինուճար կոչելով, փչացրիր, չէ, ինվալիդ շինեցիր։

— Իհարկե, ե՛ս եմ մեղավոր, մենակ իմ տղան է։— Թաշկինակն անցավ իր հիմնական պարտականությունների կատարմանը։

— Ո՛չ, ինչո՛ւ, իմն էլ է, ես էլ եմ մեղավոր, և որպեսզի մեղքս քավեմ, մի խելոք որոշում եմ ընդունել. դու օգնիր, մի կերպ թող դպրոցն ավարտի, դրանից հետո էլ իմ գործն է։

— Ի՞նչ ես անելու։

— Ուզիղ տանելու եմ գործարան, հենց Վահանի մոտ։

— Որ ի՞նչ՝ անի,— սարսափի արտահայտություն կա հարցի մեջ։

— Որ մի արհեստ սովորի, մարդ դառնա։

— Ի՞նչ, տղայիս ուզում ես բանվոր շինե՞ս, չեմ թողնի։

— Կնիկ, հասկացիր, տղադ սովորելու հետ գլուխ չունի, իսկ բանվոր եթե ընդունեն, մեծ պատիվ է նրա համար։

— Ես շնորհակալ եմ էդ պատվից, քեզ նման անտարբեր հորից ուրիշ բան չես սպասի։

— Հորից չէ, տղայից սպասիր։

— Եվ կսպասեմ, բա ի՞նչ ես կարծում։ Ե՛վ դպրոցը կավարտի, և՛ ինստիտուտ կընդունվի, և՛ ինժեներ կդառնա Վահանի նման, չէ՞ մի, բանվոր...

— Էդ քո պրոեկտը, եթե չընդունվի, ինձ իմաց տուր, գործարան տանելու խոստումը թողնում եմ ուժի մեջ։ Բե՛ր, կնիկ, բեր տեսնեմ, Զավենի ոտնաձայնն եմ լսում։

— Ձե՛մ թողնի, լսո՞ւմ ես։

— Այ կնիկ, նարդին եմ ուզում, ի՞նչ ես հերսոտվել։

— Ա՜հ, անտեր անեմ ձեր էդ դուշեշը։

— Դուշեշը ոչինչ, դու վախեցիր անտեր հափեկից...

ՄԱ՛ՐԴ Է ՎԵՐՋԱՊԵՍ...

— Մարդու նկատմամբ պետք է ուշադիր լինել, անսահման հոգատարություն,— քանի անգամ ասել եմ ես այս խոսքը, բայց, դժբախտաբար, մեզ մոտ դեռ կան հակառակը հաստատող տխուր փաստեր։— Պետը թափով խմեց բաժակի ջուրը, կարգի հրավիրեց ճակատի պայծառությունը ծածկելու փորձ անող մազափունջը և շարունակեց,— մարդ է, չէ՞, ինչպե՞ս կարելի է։ Այսքան ասում են, թերթերում գրում են հոգատար վերաբերմունքի մասին, բայց արի տես, որ... Մարդ է, սխալական է, մի անգամ, պապիս ասած, գուցե և

դալաթ է արել, պետք է նրան հնարավորություն տալ իր սխալն ուղղելու. ով ոչինչ չի անում, նա միայն կարող է չսխալվել։ Այո՛, անսահման հոգատարություն մարդու նկատմամբ, այս է իմ անփոփոխ նշանաբանը։ Ես, անհամեստություն չհամարեք, խնդրում եմ, դրան եմ ծառայում, և կոչ եմ անում բոլորիդ...

Ծափահարողներ եղան, երկու զույգ մի կենտ. խոսքը հավա՞տ չէր ներշնչում, թե՞ շատ անգամ էին լսել։

Պետը գոհ հեռացավ ամբիոնից, թաշկինակով սրբեց քրտնած ճակատը ու հանդիսավոր նստեց իր տեղը։ Ժողովականների մեջ հայացքով փնտրում էր մեկին՝ գտավ։ Նստել էր մի անկյունում, գլուխը կախ, երևում է՝ ամոթահար։ Չէ, շատ է կոտրվել տղան, սրա հարցն էլ պետք է լուծել։ Ճիշտ է, մի լուրջ դալաթ էլ սա է արել, անամոթը մի ամբողջ տարի պրոֆմիութենական անդամավճար է հավաքել, և բոլորը մոստք է արել ձախ գոնով։ Կարիքի մեջ էի, ասում է, տղայիս համար մեքենա պիտի առնեի, լրացրի պակասը։ Դե, պարտք է, վերցրել եմ, հո չե՞մ ուրանում։ Մի ամսում պարտքս փակեմ, վերջանա, ասում է։ Քիչ էր մնում իսկապես վերջանար, բայց մի երկու ձախլիկներ, Սիմոնի գլխավորությամբ, առաջարկեցին Սերոբին ազատել աշխատանքից, գործը հանձնել դատական օրգաններին։ Զոռով պահեց։ Դե, արժե՞ հիմնարկի անունը դատարանների բերանը գցել։ Ի՞նչ պիտի շահեին՝ գումարը վերադարձնելուց բացի։ Սերոբն արդեն մուծել է դրամարկղը։ Մի՞թե սա ավելի կարճ ճանապարհ չէ։ Համարյա լաց էր լինում մարդը, տունս քանդվում է, ասում էր, ինչպե՞ս չօգնես։ Տասն անգամ շնորհակալ եղավ։ Երեխաներիս փրկեցիք, ասում է, խայտառակությունից։

Ինչքա՞ն միջնորդներ դուրս եկան, մինչև անգամ՝ իր դպրոցական ընկերներից մեկը, որի հետ չի հիշում, թե վերջին անգամ երբ է հանդիպել։ Իսկ վերադասից մի ընկեր ուղղակի հանգիստ չէր տալիս,— վազն անցիր, ասում էր, լավ տղա է, պետքական մարդ է։ Հետո իմացավ, որ նրա զոքանչի հորաքրոջ փեսան է։ Զարմանալի բան է, քանի մարդն անկարող չէ ուղիղ քայլելու, նրան օգնելու մասին չենք մտածում, հենց որ մի քիչ կաղաց, կամ սայթաքեց, ձեռք մեկնողները շատանում են. ինչո՞ւ է այդպես, սպասում ենք, մար-

դը հիվանդանում է, նոր մտածում ենք բուժելու մասին, ինչպե՞ս անենք, որ չհիվանդանա։ Իսկ եթե մարդն ինքն է իրեն հիվանդացնո՞ւմ։ Սերոբին ո՞վ վարակեց, ոչ ոք։ Ինքն է իր թշնամին, վարակն իր մեջ է... Բոլոր դեպքերում ճիշտ վարվեց, մարդս մնում է մարդ, նրան օգնել է պետք, նրան բուժել է պետք։ Սա էլ միջոց է, հրամանով նկատողություն է արել, պաշտոնն էլ փիջեցնի մի քանի ամսով։ Մարդ է, կհասկանա, կուղղվի։ Վերջապես տես քանի հոգի շնորհակալ եղան։ Դա քի՞չ բան է...

Այդ ո՞վ է նստած Սերոբի կողքին։ Ի՞նչ է, արդեն կարճատե՞ս է դարձել։ Տրորեց աչքերը, նորից նայեց։ Հա՛, կոլոտ Բենոն է. անիրավի գլուխը հազիվ է երևում նստարանների արանքից։ Բայց իր այդ կարճ բոյով տես ինչ երկար գործեր է բռնում։ Հանգիստ չի տալիս ջահել աղջիկներին։ Հենց կարճ փեշ տեսավ, արյունը գլուխն է տալիս։ Մի անգամ ընկերական դատարանը մի լավ հախից եկավ։ Զթողեց, որ դատի տան, ջահել է, մտածեց, կհասկանա, վերջապես։ Բայց արի տես, որ այդ անամոթը էլի խելոք չի մնում։ Նորից մտատանջության մեջ է, ի՞նչ անեմ, ո՞ւր քշեմ, մենք որ մեր գժին չդաստիարակենք, ուրիշը տեր կկանգնի՞...

Ասես լսում է ձախլիկ Սիմոնի կծու ռեպլիկը.

— Իսկ մարդկանց դաստիարակելու համար ի՞նչ ենք անում, ոչինչ, ներում ենք նրանց բոլոր անպետքությունները ու միամիտ երեխայի նման սպասում ենք, որ խելոքանան։ Նրանք էլ դիտմամբ շարունակում են իրենց գժությունը։ Մի հիվանդ, որ բուժվել չուզենա, բժշկի դեղը նրան կօգնի՞...

Բոլոր դեպքերում Բենոյին պաշտպանելն էլ ճիշտ էր։ Խենթ ու խելառ ջահել է, տարիների հետ խելքի կգա, իրեն կհավաքի։ Արդեն ասում են ամուսնանալ է ուզում, կփոխվի, մարդ է վերջապես...

Ամբիոնի մոտ Սիմոնն է կանգնած. այս ե՞րբ ձայն տվին։ Հիմա կսկսի իր ջարդարարությունը։ Ափսոս, որ սրանից ազատվել չի կարողանում։ Բայց միևնույն է, մի հարմար պատճառ պիտի գտնել, թե չէ սա շատ է ջուր պղտորելու։

Իսկ Սիմոնը միանգամից հարձակման անցավ։

— Մեր հիմնարկի պետի, ուրեմն նաև մեր կոլեկտիվի ամենամեծ դժբախտությունն այն է, որ շարությունը պատ-

ժել չենք կարողանում։ Շա՜տ ենք բարի, ընկերներ, իսկ ավելորդ բարությունը միշտ վնասում է գործին։

— Ամեն ինչից պրծել ենք, հիմա էլ բարության կոկորդից ենք բռնում,— դժգոհ նետեց հիմնարկի պետը։

— Լավ ասացիք, ընկեր պետ, ձեր անտեղի, անօգուտ և վնասակար բարության կոկորդից պետք է բռնել և խեղդել անխնա։ Ձեր կարծեցյալ լավությունն ամենամեծ վատությունն է, և՝ առաջին հերթին ձեր պաշտպանությանն արժանացողների համար։ Մարդ է վերջապես, այս կեղծ լոզունգը քանդում է մեր տունը։ Ներում ենք անպիտանին, նա երես է առնում և ավելի հեռուն է գնում։ Իզուր ենք կարծում, թե Սերոբն ու Բենոն կգնահատեն մեր մեծահոգի վերաբերմունքը, կխելոքանան ու կազնվանան։ Կներեք, ես դրան չեմ հավատում։

— Իսկ ի՞նչ եք առաջարկում, ընկեր Սիմոն,— պետի ձայնի մեջ չթաքցրած հեգնանք կա։

— Պահանջում եմ ամեն մեկին իր հասանելիքը տալ, ինչի արժանի է նա, առանց մնացորդի, սա է մարդկանց դաստիարակելու ամենաճիշտ միջոցը, թե չէ մա՜րդ է վերջապես։ Իսկ այդ մարդ կոչվածը թքում է բոլորիս երեսին...

Բակից աղմուկի ձայն հասավ դահլիճ։ Բոլորի հայացքները շրջվեցին դռան կողմը։ Հեհհեհ ներս ընկավ տարեց մի բանվոր։ Այնպիսի՜ մի արդար զայրույթ կար նրա դեմքին.

— Բա որ ասում էի, չէիք հավատում, էդ անամոթ Բենոն նորից... Զոռով եմ խեղճ աղջկան ձեռքից խլել, թյու, ես դրան մարդ ասողի...

Պետը զարմացած Բենոյի նստարանին է նայում, այդ ե՞րբ դուրս եկավ դահլիճից։

Սիմոնն իջավ ամբիոնից, այլևս ասելիք չուներ։

Բոլորն էլ մարդ են վերջապես։ Իսկապե՞ս բոլորն են մարդ... Եվ ինչո՞ւ մարդն ու մարդկայինը հաճախ շփոթում ենք, թացն ու չորը խառնում իրար...

ՀԱՆՈՒՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ

— Է՜, ինչպե՞ս են գործերը ձեր արտելում, ասում են շատ եք համերաշխ։

— Այո, խառը կոտորակ է, մեկ լուծում ենք, մեկ-մեկ էլ ավելի ենք խառնում։

— Բան չեմ հասկանում։

— Ինչը հոգուց բաղկացած մեր կոլեկտիվը եռանկյունու է նման, ոչ իրար հասնում են, ոչ էլ իրար տեսնել են ուզում։

— Էլի լավ չհասկացա։

— Առաջին եռյակը մատերիալ է գրում երկրորդի դեմ, կամ՝ հակառակը, երրորդ եռյակն էլ զբաղվում է այդ մատերիալի ստուգմամբ։ Այդպես, տարվա մեջ մի քանի անգամ։ Հենց որ մի մատերիալից հետո ջրերը մի քիչ պարզվում են, սկսում ենք գործով զբաղվել, ձեռնամարտի է նետվում նոր մատերիալը, և կոլեկտիվի ջերմությունը նորից քառասուներկու է դառնում։ Հիմա հասկացա՞ր։

— Կարծես թե։ Միայն չհասկացա, թե դու որ եռյակի մեջ ես։

— Երրորդ։ Բայց այդ ստուգումները արդեն շատ են ձանձրացրել։ Որոշել եմ մի աստիճան առաջ գնալ։ Վերջի-վերջո գործի մեջ նաև բազմազանություն է պետք...

ՆՈՇՊԱՅԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

— Ի՞նչ գանգատներ ունեք, հարգելիս։

— Բժի՛շկ, ասում են ավազ ունեմ...

— Հնարավոր է, և լավ է, որ ավազ է, գիտե՛ք, այսօր մեկին վիրահատեցի և յոթանասուն քար հանեցի, պատկերացնո՞ւմ եք, մի ամբողջ քարհանք։

— Բա ի՞նչ պիտի անեմ ես, բժիշկ։

— Ոչի՛նչ, կձգեք, ինչքան կարող եք։ Քանի՞ տարեկան եք, հիսունն ա՞նց, բա ի՞նչ եք ուզում, ծերունական հիվանդություն է, շատերի մոտ է լինում... Ուրիշ ի՞նչ ունեք, մի թերթենք ձեր հիվանդության քարտը, ահա՛, ուրեմն արյան ճնշում էլ ունեք, սրտի անբավարար աշխատանք, հասկանալի է, այդպես էլ պետք է լիներ։

— Ստամոքսի շրջանում էլ ինչ-որ ցավեր ունեմ։

— Կարող է խոց լինել, մեր օրերում ոչինչ բացառված չէ։

— Բա հետո՞։

— Ոչինչ, նոշպա խմեցեք, գուցե օգնի։ Հաջո՛ղը...

Ես բժշկի մոտ որ գնում էի, համարյա առողջ էի, հիմա հիվանդությունների մի խուրձ շալակած հազիվ քարշ եմ գալիս դեպի տուն։ Ու մտածում եմ ցավով, տեսնես բժշկի մի հուսադրող խո՞սքն է ավելի զորավոր, թե՞ նոշպան...

ԱՅՈ, ԴԺԲԱԽՏԱԲԱՐ...

— Ի՞նչ տեսակ մարդիկ են ձեր կոլեկտիվի անդամները։

— Բոլոր տեսակներից էլ կան, ետ մնալու իրավունք չունենք։

— Օրինակ բանսարկու ունե՞ք։

— Անպայման, առանց նրան տխո՞ւր կլիներ...

— Եվ նրանից ազատվել չե՞ք ուզում։

— Մեր ուզելը քիչ է, ինքը չի ուզում... Անեկդոտանման մի զրույց կա. մի անգամ երկու ընկեր գետափով գնալիս նկատում են, որ ջուրը մորթի է քշում։ Մեկը մտնում է, բռնում մորթուց, քաշքշում, բան չի ստացվում։ Ափի ընկերն անհանգստանում է,— Սարգիս, ի՞նչ եղավ, հարցնում է։ Էս զահրումարը, ասում է մյուսը, մորթի չի է՞։ Դե, բաց թող, գուրս արի։ Ես բաց եմ թողնում է՞, ինքը չի բաց թողնում...

Դու մի ասա էս անտերը շոգից գետը մտած արջ է...

— Հիմա ձեր բանսարկուն է։

— Հա, ինչքան բաց ենք թողնում, բան չի ստացվում, որովհետև ինքը գնալու միտք չունի, ընդհակառակը, ուրիշներին գուրս անել է ուզում։

— Գիտեմ, դիրեկտորի վրա ատամ կունենա։

— Զրպարտությամբ կարողացավ մեկի հախից գալ, հիմա էլ նորի հետ է կռվի մեջ մտել, տեսնենք ով՝ ում։

— Իսկ որպես աշխատո՞ղ ինչպիսին է։

— Անպետք արարած։ Մեկը որ մարդ չեղավ, նրա կատարած գո՞րծն ինչ պիտի լինի։

— Եվ քանի՞ տարի է դրանից ազատվել չեք կարողանում։

— Մի հինգ տարի կլինի։ Նախորդ դիրեկտորն ասում էր՝ էս անտեր կնիքն էլ տվեք իրեն, պրծնենք, էլի՞...

— Իսկապես հաճախ ղեկավարի դերը շատ ենք նսեմացնում։ Պլան պահանջում ենք, որակ՝ նույնպես, իսկ վատ աշխատողից ազատվելու իրավունք չենք տալիս։

— Տալիս ենք, միայն տեղկոմի օգնությամբ, թող քննարկեն, իրենց եզրակացությունը տան։

— Էլ դիրեկտորիս իրավունքը որտե՞ղ մնաց։

— Տեղկոմն էլ, փառք աստծո, համ նալին է խփում, համ մեխին, աշխատում է հաշտության եզր գտնել, դե, դիրեկտորին նեղացնել չի կարելի, նրա պահանջն իրավացի է, բայց աշխատողն էլ մարդ է, թեկուզ և կլյաուզնիկ, ընտանիք ունի, ո՞վ պիտի նրա երեխաներին պահի...

— Եվ դիրեկտորի խոսքը կտուրն են գցում...

— Իսկ եթե այս օղակից անցավ, հիմա էլ դատարանն է տեր կանգնում։

— Եվ ստացվում է այնպես, որ անպետք աշխատողն ավելի շատ տեր ունի, քան պետական գործի համար մտածող դիրեկտորը։

— Գուցե և խիստ է ասված, բայց ճշմարտություն կա մեջը։ Իսկ դու չե՞ս գտնում, որ եթե թույլ տան, որոշ դիրեկտորներ կարող են կորցնել չափի զգացումը։

— Հնարավոր է։ Թող կարգի հրավիրեն այդպիսիներին։ Բայց չափի զգացում չունեցող մի երկուսի պատճառով արդար իրավունքից զրկել ճնշող մեծամասնությանը, սա էլ բանի նման չէ։

— Եվ, գիտե՞ս, մի անգամ մեր այդ բանսարկուին դիրեկտորն ասաց ջղայնացած պահին՝ այլևս հնարավոր չէ հանդուրժել, ես քեզ կազատեմ աշխատանքից։ Նա էլ, շատ հանգիստ ու նաև հեգնանքով նետեց՝ չե՞ս կարող։ Ձեռքերդ կարճ են։

— Եվ, դժբախտաբար, նա իրավացի էր։

ՎԱ՛Յ ԱՇԽԱՐՀ...

— Ախր ասում էի, որ բժշկական ինստիտուտը մեր տղայի տեղը չէ, ինձ չէիր լսում։

— Իսկ ինչո՞ւ նրա տեղը չէ, իմ Վահանն ումի՞ց է պակաս։

— Իրենից, ուրիշ ոչ մեկից։ Խեղճ երեխան քանի անգամ ասաց, որ քիմիան վատ գիտի, որ ֆիզիկայից ու անատոմիայից թույլ է, որ բժշկի մասնագիտությունն իրեն չի գրավում, դու քոնն առաջ տարար, և ահա արդյունքը։ Այդպես է, երբ հաշվի չեն առնում երեխայի նախասիրությունը, նրա ընդունակությունը։

— Իսկ ես մի՞թե նրա վատն էի ուզում։ Բա բժշկի մասնագիտությունը կհամեմատե՞ս ուսուցչի աշխատանքի հետ, իսկ նա կպել էր թե գնում եմ մանկավարժական ինստիտուտ։ Բա մեղք չէ՞ իմ երեխան, գիտես չէ հիմա դպրոցում ինչքան դժվար է, իսկ բժիշկը, խնդրե՛մ, մաքուր, ապահովված։

— Իսկ եթե բժիշկ դառնալու հեռանկար չունի՞, դու նորից քոնն ես պնդում, զարմանալի մայր ես։

— Ինչ է, վա՞տ մայր եմ, դե՛, ասա, վա՞տն եմ, որ իմ երեխայի լավն եմ ուզում։

— Որ երեխադ ինստիտուտից դուրս կմնա, նոր կիմանաս լավն ու վատը։

— Ինչո՞ւ պիտի դուրս մնա, բա հայրն ինչացո՞ւ է։

— Հայրն ի՞նչ անի, նրա փոխարեն քննությունները հանձնի. արդեն երկու առարկայից կտրվել է, երրորդն էլ հերթի է սպասում...

— Դո՛ւ ես մեղավորը, որ կարգին հետևեիր, մեկը երկու չէր դառնա։

— Այ կնիկ, ես ո՛ր ջուրն ընկնեմ, տղադ չի կարողանում սովորել, ես ի՞նչ անեմ։

— Խոսիր ում հետ պետք է, էդքան ծանոթ ունես, մեծ բան չէ՝ մի երեք է, մի փոքրիկ լավություն, դրանից աշխարհը չի քանդվի։

— Աշխարհը չէ, բայց մեր տղայի տունը դու որոշակի քանդում ես։ Ախր ուրիշների օգնությամբ դիպլոմ ստացածից ի՞նչ բժիշկ դուրս կգա, դու քո հիվանդին նրան կվստահե՞ս։

— Է՛հ, դու էլ բան ասացիր, կավարտի, կամաց-կամաց փորձ ձեռք կբերի, ուրիշները կարծես դորդ ու բեշ են անում։

— Տղայիդ ինստիտուտ տալիս էլ այդպես էիր դատում.

«Համ մասնագիտությունն է լավ, համ էլ բժշկականում ծանոթ ունեմ». ահա արդյունքը։

— Ափսոս էդ ծանոթին հանեցին. բա որ մնար, ես էսպես կդժվարանայի՞։

— Հիմա ի՞նչ պիտի անենք։

— Չգիտեմ, Վահանս երկրորդ կուրս է հասել, դու պարտավոր ես նրան ավարտեցնել։ Արա՛, ինչ կարող ես, թե չէ գիտես, ինձ վրա էլ հալ չկա, մեռնում եմ սրտի ծակոցներից։

— Իսկ եթե ձեռքիցս բան չի՞ գալիս։

— Այ մարդ, ինչե՞ր ես ասում, դու հասկանո՞ւմ ես, որ հանկարծ երեխաս դուրս մնա ինստիտուտից, ես կխելագարվե՛մ...

Ներս մտավ Վահանը, մի տեսակ թեթև ու անհոգ։

— Ողբերգություն չսարքեք, խնդրում եմ, ինստիտուտից հեռացրին, գնում եմ բանակ։

— Ի՞նչ,— ծղրտաց մայրն ու բռնեց սիրտը,— վա՛յ, աշխարհ...

ՏԽՈՒՐ ԴՐՎԱԳՆԵՐ

ԿԱՄ՝ ԼԻՆՈՒՄ Է ԵՎ ԱՅՍՊԵՍ.

Դրվագ առաջին.

Երկար որոնումներից հետո գտա իմ փնտրած հիմնարկը ու թեթևացած սրտով ներս մտա մի լուսավոր շենք՝ ինձ հարկավոր տեղեկանքն ստանալու և նույն օրը գյուղ վերադառնալու հույսով։

Միջահասակ ու հաճելի դիմագծերով մի կին գրասեղանի մոտ նստած մաղերն էր հարդարում։ Բարևեցի, պատասխան չստացա, երևի չլսեց, ոչ մի ուշադրություն։ Մի փոքր հապաղելուց հետո անցա իմ խնդրի բուն նյութին, այսպես-այսպես, մի տեղեկանք է պետք ինձ առ այն, որ...

— Վաղը։ Հիմա զբաղված եմ,— առարկություն չվերցնող տոնով նետեց տիկինը։

— Ներեցե՛ք, ես շրջանից եմ եկել, պետք է այսօր տուն վերադառնամ, խնդրում եմ...

— Ասացի՝ վաղը։

Հնչեց հեռախոսի զանգը։ Հաճելի տիկինը վերցրեց լսափողը. նույն շոր պատասխանն էր, ո՛չ, փոքր ինչ փափուկ էր։

— Արդեն դուրս եմ գալիս. կհանդիպենք նորապսակների խանութի մոտ, չուշանաս, թե չէ տակը բան չի մնա...

Ու դուրս թռավ իր կազմվածքին ոչ այնքան հատուկ թեթևությամբ։

Քոռ ու փոշման դուրս եկա այդ լուսավոր հիմնարկից ու մտածում էի իմ հետագա անելիքի մասին, քաղաքում գիշերելու հարց պիտի լուծեի։ Հյուրանոցում, իհարկե, տեղ չկա։ Հեռու բարեկամ ունեմ, անհանգստացնել չէի ուզում։ Որոշեցի գյուղ վերադառնալ, շտապ տեղեկանքի ստացումն ուշացավ առնվազն մեկ շաբաթով։

Դրվագ երկրորդ

ԿԱՄ՝ ԱՅՍՊԵՍ ԷԼ Է ԼԻՆՈՒՄ

Քսան տարի առաջ կառուցված մեր շենքը նորից շինարարական հրապարակի է վերածվել. փայտից պատրաստված պատշգամբները փոխում, դարձնում են ցեմենտ-բետոնից։ Իսկապես լավ է, հին սխալն են ուղղում, և մենք անհամբեր սպասում էինք դրան։ Բայց փորձեցեք հարցնել մեր հարևաններին այդ լավ ու վատի մասին, և նրանցից կստանաք բացասական-ներվային, նույնիսկ ոչ այնքան քաղաքավարի պատասխան։ Եվ կարծում եք նրանք կոպիտ մարդիկ են, կամ մեղավո՞ր են թեկուզ մի փոքր։ Ամենևին։ Հինգ ամիս է, ինչ սկսել են այդ քանդել-թափելու աշխատանքները, իսկ վերջը չի երևում։ Այնպես արագ քանդեցին, որ ասես դրանով սպառվեց նրանց աշխատանքային եռանդը. ինչո՞ւ, ի՞նչ պատահեց։ Դե՛, ճիշտն ասած, ի՞նչ աշխատանք, մի շորս-հինգ ջահել են, երկու ժամ երևում, վեց ժամ անհետանում են, երկու օր գալիս են, երեք օր պաս պահում։ Ի՞նչ փույթ, թե բակն ու բնակարանները կեղտ ու փոշու մեջ են, թե երեխաները խաղալու տեղ չունեն, թե... Ո՛ւմ են պետք քո պատճառաբանությունները, ուզում ես տասը թվարկիր,

մեկը մյուսից զորավոր, միևնույն է՝ այդ, այսպես կոչված շինարարության ղեկավարը, լայնաթիկունք ու թավաքեղ մի քեռի, շատ հանգիստ կասի.

— Ի՞նչ է, դուք կարծում եք միայն ձեր շե՞նքն է, էլ ուրիշ գործ չունե՞նք...

Ունեն, իհարկե, դա կասկածից վեր է։ Միայն հետաքրքիր է իմանալ, թե այն մյուս օբյեկտներում ինչպիսի՞ն է վիճակը, այնտե՞ղ էլ օրական երկու ժամ, շաբաթվա մեջ երկու օր են աշխատում, թե՞... իսկ ինչո՞ւ թե, բա շինղեկը չասա՞ց, թե ձեր վիճակն անհամեմատ լավ է... Այ քար ու քացախ լցնեմ այդպիսի լավի գլխին...

Դրվագ երրորդ

ԿԱՄ՝ ԵՐԱՆԻ ԱՅՍՊԵՍ ՉԼԻՆԵՐ

Հիվանդանոց եմ գնացել՝ ընկերոջս տեսության։ Հիվանդասենյակում չորս հոգի են պառկած, երկուսի վիճակն առանձնապես մխիթարական չէ, տնքում են՝ ցավ ու քըրտինքի մեջ կորած։ Բայց, բարեբախտաբար, այնքան ծանր չեն, որ թույլ տան խնամողներ ունենալ։ Եվ, այնուամենայնիվ, օգնության կարիք ունեն. ջուր են խնդրում, բարձը հարմարեցնել է պետք, ոտքի տակի ջեռակի տեղը փոխել են ուզում։ Կանչում են բուժքրոջը, դայակին, և ի՞նչ ադաչական ձայնով, ոչ մի ուշադրություն։ Դառնացած դուրս եկա միջանցք։ Այստեղ երեք հոգի, քիթ-քթի տված, զրուցում են։ Սպիտակ խալաթավորներ են, մեկը մյուսից ջահել։ Երևի հենց սրանց են կանչում հիվանդները։ Լսում են, բայց զրույցը շատ է թեժ, անջատվել չեն կարող։

— Աղջիկնե՛ր,— չհամբերեցի ես,— ախր հիվանդները ձեզ են կանչում, ձեր օգնությունն են խնդրում, իսկ դուք անտարբեր զրուցում եք։

— Հետո՞ ինչ, որ կանչում են,— անհոգ նետեց մեկը։

— Որ ամեն կանչին ներս վազենք, մենք էլ մարդ ենք չէ՞,— լրացրեց մյուսը։

— Բայց ձեր գործն է այդպիսին, ախր դուք գթության

քույրեր եք, դայակ եք, ուրեմն քրոջ ու մոր դեր պիտի կատարեք։

— Է՜, ընկեր ջան, ճառ մի կարդացեք մեր գլխին, մենք վաղուց ենք հոգնել էդ բոլորից,— նետեց երրորդը։

Ափսո՜ս, որ հոգնել են այդ բոլորից, շա՜տ ափսոս։

Դրվագ չորրորդ

ՈՐԻ ԼԻՆԵԼԸ ՇԱ՞Տ Է ՑԱՆԿԱԼԻ

Այնպես պատահեց, որ նախորդ երեք դրվագների հերոսները իրար հանդիպեցին մի անվանի բժշկի ընդունարանում։ Նրանք, իհարկե, անծանոթ են իրար, բայց այստեղ կոլեգաներ են։ Հիմա էլ իրենց գործն է ուրիշի ձեռքին, ուրիշից բան խնդրելու կարիք ունեն։ Իսկ սպասողները շատ, ներս մտնողն էլ ուշ է դուրս գալիս։ Համբերության բաժակը լցվելու վրա է։

— Սա բոլորովին բանի նման չէ,— չհամբերեց սիրունատես տիկինը,— ես արդեն կես ժամ է սպասում եմ, ինչքա՞ն կարելի է։

— Իսկապես, մենք հո պարապ մարդիկ չենք, հազար ու մի ցավ ունենք,— լայնաթիկունք բեղավորն է, մեզ ծանոթ շինողեկը,— երևում է պրոֆեսորն շտապողներից չէ։

— Ինձ առանձնապես պայթեցնում է մարդու նկատմամբ ցուցաբերվող այս անհոգի վերաբերմունքը,— իր կոլեգաներից ետ չմնաց երիտասարդ բուժքույրը,— իսկ թողնես, ճառեր կասեն հոգատարության մասին։

— Ուշադրության մասին։

— Մարդու նկատմամբ ունեցած սրտացավ վերաբերմունքի մասին։

— Ամեն ինչ հանուն մարդու, խնդրեմ, ո՞ւր է, ամեն ինչ՝ միայն խոսքով։

— Բայց, ընկերներ, մոռանում եք, որ բժիշկը գործ ունի հիվանդ մարդու հետ, ջուրտուքշին ինչի՞ է պետք,— փորձեց իր կարծիքը հայտնել մի համբերատար այցելու։

— Հետո՞ ինչ, որ մարդու առողջության հետ գործ ունի, բա մենք մարդ չե՞նք, և իբր թե բուժվելու համար ենք եկել։

— Այսպես առողջ մարդն էլ կհիվանդանա։

— Սա պարզապես խապտառակություն է,— անհամբեր ու սրտացավ կոլեգաների ելույթները մի ընդհանուր հայտարարի բերեց սիրունատես տիկինը։

Այո՛, իսկապես որ սա խայտառակություն է...

ՏԽՈՒՐ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ

Ասում եմ՝

— Սահակյան, ինչո՞ւ եք ուշանում աշխատանքից։

Ասում է՝

— Ընկեր Սուքիասյան, դե՛, մարդ ենք, պատահում է, քնով անցնել կա, տրանսպորտի հարց կա։

— Ընդմիջման ժամն եք երկարացնում, ի՞նչ իրավունքով։ Օրվա վերջին հաճախ շուտ եք տուն գնում, կես, երբեմն մի ժամ։ Նորի՞ց տրանսպորտն է մեղավոր։

— Բա ի՞նչ,— ասում է,— օրվա վերջին գիտեք ինչ հերմըշտոց է լինում, երկու ժամում տուն չես հասնում։

— Բոլոր դեպքերում լավ չէ, ընկեր Սահակյան, դա ձեզ պատիվ չի բերում, աշխատեցեք կարգապահությունը չխախտել։

— Ներեցեք, ընկեր Սուքիասյան, անհարմար չլինի ասել՝ ուշացողը կամ շուտ գնացողը հիմնարկում միայն ե՞ս եմ։

— Դժբախտաբար ոչ, բայց ես կուզենայի, որ դուք պատասխան տայիք ձեզ համար։

— Դե՛, ես էլ մյուսների նման, ինչո՞ւ պիտի բացառություն կազմեմ։

— Իսկ մի՞թե կարգապահ մարդիկ չկան մեր հիմնարկում։

— Կան, իհարկե, բայց դրանք շատ չեն, դժբախտաբար։

— Գուցե ձեզ համար՝ բարեբախտաբար։

— Դե՛, դուք ինձ բոլորովին...

Ասում եմ՝

— Սուսաննա Վահանովնա, դո՞ւք ինչու եք ուշացել, և սա առաջին դեպքը չէ։

— Ընկեր դիրեկտոր, դուք հենց ի՞նձ եք տեսնում, կարծես մյուսները...

— Ես ձեր մասին եմ հարցնում, մյուսների հետ ի՞նչ գործ ունեք։

— Դե՛, ես էլ կոլեկտիվի անդամ եմ։

— Առայժմ՝ անկարգապահ անդամը։

— Ինչո՞ւ, մյուսներից ինչո՞վ եմ վատ։

— Մյուս անկարգապահներից՝ ոչնչով։

— Իսկ դրանց թիվն այնքան շատ է, որ ես ինձ վատ չեմ զգում այդ խմբի մեջ։

— Իսկ եթե այդ խմբի ամեն մի անդամ մտածեր լավերին նմանվելու մասին և ոչ թե օրինակ բերեր վատին։

— Է՜հ, ընկեր Սուքիասյան, լավ-վատ մի բան է, կես ժամը ոչ տուն է շինում, ոչ քանդում է, արժե՞ այդքան նշանակություն տալ։

— Գործի նկատմամբ էլ այդ նույն չափանիշն եք կիրառում, այս է դատապարտելին. նույն արատը՝ սրտացավության ու բարեխղճության պակասը։

— Է՜հ, կյանքում այնքա՜ն պակաս բաներ կան։

— Մխիթարվենք դրանո՞վ։

— Բա ինչպե՞ս։

— Տխո՞ւր մխիթարություն է...

ՀԱՐՑԻ ՃԻՇՏ ԼՈՒԾՈՒՄԸ

Քունը փախավ աչքերից, համառորեն մոտ չէր գալիս։ Փորձում էր մոռանալ, բանի տեղ չդնել։ Վերջապես ի՞նչ է եղել, ընդամենը հինգ ռուբլու տարբերություն։ Մի մեծ բան չէ, երևի մի տեղ սխալվել է։ Իսկ ինչո՞ւ պիտի սխալվեիր, բողոքում էր մի ներքին ձայն, ի՞նչ հաշվապահ ես դու, և այն էլ՝ գլխավոր, որ հաշիվներդ ճիշտ չեն դուրս գալիս։ Գոնե պակասեր, իր գրպանից կդներ տեղը և վերջ, բայց ավելացել է, և ոչ մի կերպ չի գտնում աղբյուրը, պատճառը, որտեղի՞ց լույս ընկավ այդ հինգ ռուբլին, ասես այրում է գրպանը, չնայած իր գրպանում չէ, այլ գանձարկղում։ Ինչո՞ւ պետք է ավելանար, մարդիկ ի՞նչ կմտածեն իր մասին։ Իսկ ո՞վ պիտի իմանա, հինգ ռուբլին առանձնացրու, և հաշիվդ մաքուր է... Բայց ինչպե՞ս, իսկ իր խղճի՞ն ինչ ասի։

Ուրեմն դու փո՞ղ ես յուրացնում։ Հետո ի՞նչ, որ ընդամենը հինգ ռուբլի է. վաղը կարող է հինգը դառնալ հինգ հարյուր, հինգ հազար։ Դու ինչպե՞ս կարող ես նայել քո ընկերների աչքերին, մանավանդ՝ քո երեխաների, ախր նրանք քեզ ազնիվ մարդ են կարծում։ Հետո ի՞նչ, որ նրանք չգիտեն, դու հո գիտես, որ հինգ ռուբլի ավելացել է. մի՞թե դու ընդունակ ես գողության։ Իսկ դա գողությո՞ւն է։ Բա ի՞նչ զահրումար է, ամեն մի անազնիվ քայլի մեջ գողության մասնիկը կա, գողության թունավորող շունչը։ Ահավո՞ր բան է։ Ո՛չ, պետք է ասել արտելի նախագահին, թող տնօրինի ինչպես ուզում է, թող իրեն մեղադրի անճարակության մեջ, գուցե դրանից ավելի թեթև կլգա իրեն։

Ամբողջ գիշեր չքնեց, այդ շարաբաստիկ հինգ ռուբլին հալածում էր նրան։ Առավոտյան, հենց որ հանդիպեցին, այդ մասին ասաց նախագահին, ասաց դժվարությամբ, բայց և պատմում էր ու թեթևանում։ Իսկ նախագահը զարմացած էր։ Հետո մի կուշտ ծիծաղեց։

— Վա՜յ տնաշեն, հինգ ռուբլու համար տանջվում ես, բա ամոթ չի՞, տղամա՛րդ եղիր, տղա՛մարդ, էդ փողին գնա մի շիշ արաղ առ, բեր խմենք ու վերջ, ի՞նչ ես խուճապի մատնվել...

«ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ...»

Ընդմիջման ժամ է։ Վարդազարը դուրս է եկել փողոց մաքուր օդ շնչելու։ Քայլում է անշտապ, վերև, ներքև, բայց այնպես է փոխում ոտքերը, ասես ուսերին տաս փթանոց ծանրություն կա։

— Վարդազա՞ր,— թևից բռնեց մեկը, հին ընկերներից է, մի ժամանակ միասին աշխատել են մինիստրությունում,— ինչպե՞ս են գործերդ, մի տեսակ թթված ես երևում։

— Գործերի էս վիճակում կթթվես էլ, կքացախես էլ։

Ու շարունակում են քայլել միասին, քայլում ու խոսում են։

— Իսկ ի՞նչ է պատահել, ձեզ մոտ կարծեմ նոր պետ են նշանակել, հո չի՞ նեղացնում։

— Շան գլուխը հենց էդտեղ է թաղված։

— Ինչո՞ւ, ասում են վատ մարդ չէ, միայն մի քիչ չոր է, կարծեմ։

— Ամբողջ գործը փչացնողը հենց այդ չորությունն է, փափկացնել է պետք, միայն ինչպե՞ս, ճանապարհը չեմ գտնում։

— Իսկ մի՞թե այդքան դժվարամարս ճանապարհ է դա, մոտեցիր, ասա, հասկացեք իրար։ Նախորդի հետ ինչո՞ւ այդ ճանապարհը չեիր կորցնում։

— Նախորդն ուրի՞շ էր. ափսոս չէր, քեզ ժամանակ չէր տալիս մտահոգվելու, ինքն էր ակնարկում,— երեք օր հետո Մոսկվա եմ գնում, կանչել են, կամ՝ ասում են լավ շուքաներ են ստացել, կինս գլուխս տարավ... Չէ, նա ուրիշ էր, կես խոսքից կամ մի հայացքից իրար հասկանում էինք։

— Իսկ սա՞։

— Սրան մոտենալ չի լինում. շատ է փշոտ, վախենում եմ քացի տա...

— Իսկ եթե քեզ մի լավ խորհուրդ տա՞մ։

— Շատ շնորհակալ կլինեմ։

— Անսխալ մեթոդ է պետի հետ ընդհանուր լեզու գտնելու համար։

— Թե աստված կսիրես, շուտ ասա, իմ գլուխը պայթում է անհամ պրոեկտներ մշակելուց։

— Գրազ պիտի գաս պետիդ հետ։

— Գրա՞զ,— հիասթափված ձգեց Վարդազարը,— իսկ դրանից ի՞նչ դուրս կգա։

— Դուրս կգա, որ ասում եմ, ուրեմն մի բան գիտեմ, դու լսիր մինչև վերջ։

— Մի առիթով գնում ես պետիդ տուն։ Իսկ առիթ կլինի։ Ասենք թե հիվանդացել է, դե, մարդ է, կպատահի։ Կամ բոլորովին էլ հիվանդ չէ, պարզապես այդ օրն աշխատանքի չի եկել, ակտիվի նիստում է եղել, կամ շրջան է գնացել գործով։ Երեկոյան գնում ես տուն։ Իհարկե, այնպես ես անում, որ մենակ լինեք՝ երկուսով։ Կներեք, ասում ես, ընկեր պետ, լսեցի, որ հիվանդ եք։

— Հետո՞,— Վարդազարն անհամբերության նշաններ է

ցույց տալիս, այդ բոլորի մեջ առայժմ խելքը գլխին բան չի տեսնում։

— Համբերիր, հերթով գալիս եմ։ Այսպես, գրպանումդ ջնաղ կա, հասկանալի է, որ պետք է նախապատրաստված գնալ։

— Միայն մի ջնա՞ղ։

— Այո, ուրիշ ոչինչ չես տանում, ո՛չ, գրպանումդ ասենք մի ոսկի ժամացույց էլ կա, միայն դեռ չպիտի հանես։ Նստել ես պետիդ դիմաց, ու խոսում եք դեսից-դենից։ Հարցնում ես առողջությունից, երեխաներից։ Թաշկինակի կարիք ես զգում, դե, կարող է և սենյակում շոգ լինել։ Թաշկինակի հետ գրպանիցդ ընկնում է ահա այդ ջնաղը։ Դու ծիծաղելով ասում ես՝ էս ինչպե՞ս է, որ մնացել է գրպանումս, երեկ ընկերոջս մոտ էի, ասում ես, հավ կերանք, ուզեցի գրաղ գալ, վախեցավ, չէ, ասում է քեզ՝ տանել չի լինի։

Պետդ թերահավատ քեզ է նայում։

— Իսկապե՞ս ձեզ դժվար է տանել,— հարցնում է։

— Ոչ, ընկեր պետ,— ասում ես,— ես էլ մարդ եմ, մեկ էլ տեսար հիշողությունս... Գրաղ չգա՞նք, ընկեր պետ, բախտս ուզում եմ ձեզ հետ փորձել,— ու բազմանշանակ ժպտում ես։

— Փորձենք, որ ասում եք,— մի ժամանակ ես էլ լավ էի այս հարցերում։

Ու քաշում է։

— Իսկ ինչի՞ վրա ենք գրաղ գալիս,— հարցնում է։

— Մի լավ ժամացույցի, այսօր ոսկու խանութում տեսա, լավերը կային։

Եթե պետդ խելոք ու հեռատես մարդ է, աչքն էլ կուշտ չէ, իսկ հիմա այդպիտիները քիչ են, կհամաձայնվի...

Տանտիկինն, իհարկե, ձեզ թեյ է մատուցում, գուցե նաև կոնյակ։ Դու փորձում ես հրաժարվել։

— Չեղավ,— կասի պետդ,— որ եկել եք մեր տուն, ուրեմն,— և կոնյակի բաժակը կմեկնի քեզ։ Դու, իբր թե, միամտորեն կվերցնես բաժակը ու կսկսես մի քաղցր բաժակաճառ ասել պետիդ ու նրա կնոջ, երեխաների ու զոքանչի և այլոց մասին։ Իսկ պետդ քթի տակ կժպտա ու հանգիստ կասի.

— Այդ բոլորը լավ, ընդունում եմ շնորհակալությամբ, բայց ստիպված եմ պատասխանել մի դառն խոսքով,— տարա՞ծ...

Դու կզարմանաս, խուճապի կմատնվես։

— Չէ, ընկեր պետ, կասես,— երևում է հիշողությունս էլ էն չի. բա առաջ էսքան շուտ կմոռանայի՞ գրազը։ Մի՞թե ծերանում եմ, հեյ գիդի ջահելություն, հա՞...

Իհարկե, մի փոքր էլ դերասանություն պիտի անես, այդպես է կյանքը, ճարպիկ մարդիկ իրենց ուժերը փորձում են ավելի շատ բեմից դուրս, կյանքի բեմում... Հետո հանում ես գրպանիդ ժամացույցը, որպես տարված գրազ, դնում պետիդ առաջ։ Նա անպայման մի քիչ չեմ ու չում կանի։

— Անհարմար է,— կասի,— առաջին անգամ իմ տունն եք եկել...

Չզիջես, մի փոքրիկ ճառ էլ այստեղ է պետք։

— Խնդրում եմ ինձ չվիրավորեք,— կասես,— տարվել եմ, վերջ, էլ ո՞ր օրվա տղամարդն ենք։

Ու նա կվերցնի, համոզված եմ։ Այդպես է։ Թե պետդ վերցրեց ժամացույցը, ուրեմն վտանգն անցած է, ձեր ջուրը կգտնի իր հունը։ Դրանից հետո էլ գրազի կարիք չի լինի։

«Առաջավոր փորձը» հաջողությամբ ներդրվեց։ Այդ օրվանից Վարդազարի խիստ պետը փափկեց, ու նրանց ջուրն սկսեց հոսել մի առվով...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ հանգցրեց լույսը (վիպակ) 3
Պատմվածքներ 195

ԿՅԱՆՔԻ ՃԱՄՓԱՆԵՐԻՆ

Մարդն ու մարդկայինը 197
Այ օրհնվի նրա պապը 199
Մովափին 205
Նրա վերջին ցանկությունը 211
Հետո ուշ կլինի 214
Այդպես էլ չիմացավ 217
Մոր վերջին խնդրանքը 219
Անողոք տարիներ 220
Ինչքան է սպասել 222
Ինչո՞ւ մտերս փշաքաղվեցին 224
Մի օրվա կյանք միայն 225
Պարտքերը մարած 227
Զարմանալի է, չէ՞ 229
Տատիկի խնդրանքը 234
Զարմանալի մարդիկ 235
Դպրոցում 238
Երանի նորից կանչեին 239
Խղճի ձայնը 239
Ինչ շուտ անցավ շաբաթը 245

ԲԱՐԶՈՒՆՔԻ ՓԵՇԵՐԻՆ

Բրատցը... 259
Բարձունքի փեշերին 265
Ջինվորի սերը 271
Գուցե դեռ կգրի՞... 279
Լուսավոր հավատով 285
Ուղեկցում են մորը 287
Լուրջ վիրահատություն... 291
Տակտիկական սխալ 298
Ես միայն այդքան կարողացա 301
Սիրո ուժը 304
Ո՞վ էր մեղավոր 313

Կարդա, մատաղ քեզ 316
Այն օրերին 322
Տարիների հեռվից 327

ՏԽՈՒՐ ԴՐՎԱԳՆԵՐ

Լավ մարդ լինելու գաղտնիքը 334
Ուղղամիտ կարծիք 335
Մինչև ե՞րբ 336
Գյուղ էր գնացել 339
Հետաքրքրության աստիճանը 341
Եվ ոչինչ... 342
Իսկապես որ... 344
Մի գեղեցիկ երեկո... 345
Մարդ է, վերջապես... 350
Հանուն բազմազանության 353
Նոշպայի զորությունը 354
Այո, դժբախտաբար... 355
Վայ աշխարհ... 356
Տխուր դրվագներ 358
Տխուր մխիթարություն 362
Հարցի ճիշտ լուծումը 363
Առաջավոր փորձ... 364

ИБ № 3542

Հանձնված է շարվածքի 29. 09. 80։
Ստորագրված է տպագրության 3. 03. 81։
ՎՖ 07330։
Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագրական № 2։
Տառատեսակ՝ «գրքի սովորական», տպագրություն՝ բարձր։
16,5 հրատ. մամ., 19,53 տպ. մամ.։ Գինը՝ 1 ռ. 10 կ.։
Պատվեր 1801
Տպաքանակ 15000

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.

Գրիգոր Գրիգորի Բալասանյան

Ո՞Վ ՀԱՆԳՑՐԵՑ ԼՈՒՅՍԸ

(Արձակ-վիպակ և պատմվածքներ)

Баласанян Григор Григорьевич

КТО ПОГИСИЛ СВЕТ

Повесть и рассказы

(На армянском языке)

Издательство «Советакан грох», Ереван 1981

Խմբագիր՝ Ս. Ն. Հակոբյան
Նկարիչ՝ Յ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

թվագրել է 1915-ին Կայսր